




851

L III.5







საბჭო

I სტა

საბჭო

გერმანი, ჯერმანიანი და გერმანი

საბჭო

№ 5

საბჭო

1901

საბჭო

Типография Груз. Издат. Т—ва. | საქართველოს ჟურნალის გამომცემი
1901

№ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԱՐՏԻՍՏՐ, *սրամուռածք* Շիրվանգադեի 5
2. ՄԵՆԱԿ ՄԱՐԿԻԿ, *զրամա* Գերհարս Հաուպսմանի,
Թարգմ. Ե.—Ա. 71
3. ՀԼՅՆԷՅԻՑ, *բանաստեղծ.* Թարգմ. Սիմ. Պապիեանի . 93
4. ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ, Ա. Դարբինեանի 94
5. ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԻՑ, Հրաչեայի 116
6. ՀԱՅԿՈՒՆԱ (*Դաւթատական լեզունդա*), Թարգմ. Մ. Տեր-
Դանիելեանի 126
7. ՖՐՕՄՐՆ ԿՐՏՍԵՐ, *վէպ.* Ալֆոնս Գոդիի, Թարգ. Տ.
Յովհաննիսեանի 128
8. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԻ ԴԱՐԻ ՍԿԶՐՈՒՄ, Սս.
Մալխասեանի 161
9. ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼԸ, Գ. Միրադեանի 172
10. ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ... *Բանաստեղծութիւն* Նիկի-
սիցի, Թարգմ. Ա. Ծատուրեանի 185
11. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ 1900 ԹՈՒՒՆ,
Տ. Յովհաննիսեանի 187
12. ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, *ստողնապահական էտիւզ, բժշ. վ.*
Արծրունու. 199
13. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVІІІ ԴԱՐՈՒՄ, Լեօի . . . 219
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—20) Абр. Гукасовъ. Осн. черты
Арм. наг., Լ. Ս.—21) Отчетъ комиссiи прис. пов. при
Тифлисск. Окруж. судѣ. Ծով. Սպ.—22) Լ. Մսերեանց,
Этюды по армянск. диалектологiи. Սս. Մ.—23) Аппин-
ский, Исторiя арм. церкви, Լ. 248
15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, *Հողային տուրքը և հարկերը*
Կովկասում, Ս. Զաւարեանի 267
16. ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ, «Պէպօի» *երեսնամեակը,*
Vox. 280
17. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարդկային կեանքի երկու միջնա-
վայր.—Արդի դպրոցների վերաբերմունքը գէպի ալդ
միջնավայրերը.—Դպրոցական նոր կարգերի անհրա-
ժեշտութիւնը.—Ինքնակրթութիւն՝ լուրջ ընթերցանու-
թեան միջոցով.—Ազգատ գրականութիւն.—Միակողմա-
նի հասկացողութիւն գիտութեան մասին.—Տնտեսական
և հասարակական գիտութիւնների նշանակութիւնը.—
Առտորա-արդիւնագործական շարաբերութիւնների գեր-

Նոր շրջան I տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5

Մ Ա Յ Ի Ս

1901



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերության
1901

Дозволено цензурою Тифлисъ, 17-го мая 1901 г.

№ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԱՐՏԻՍՏԸ, պատմուածք Շիրվանգադէի 5
2. ՄԵՆԱԿ ՄԱՐԻԻԿ, զրամա Գերհարս Հաուպսմանի,
Թարգմ. Ե.—Ա. 71
3. ՀԵՑՆԷՅԻՑ, բանաստեղծ. Թարգմ. Սիմ. Պապիեանի . 93
4. ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ, Ա. Դարբինեանի 94
5. ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԻՑ, Հրաչեայի 116
6. ՀԱՅԿՈՒՆԱ (Դալմատական լեզենդա), Թարգմ. Մ. Տեր-
Դանիելեանի 126
7. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, Վէպ. Ալֆոնս Գոդէի, Թարգ. Տ.
Յովհաննիսեանի 128
8. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԲՈՒՄ, ՍՏ.
Մալխասեանի 161
9. ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼԸ, Գ. Միրադեանի 172
10. ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ... Բանաստեղծութիւն Նիկի-
սիցի, Թարգմ. Ա. Ծատուրեանի 185
11. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԵՋ 1900 ԹՈՒՒՆ,
Տ. Յովհաննիսեանի 187
12. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժշ. Վ.
Արծրունու. 199
13. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի . 219
14. ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ.—20) Абр. Лукасовъ. Осн. черты
Арм. наг., Լ. Ս.—21) Отчетъ комиссія прис. пов. при
Тифлисск. Окруж. судѣ. Յով. Սպ.—22) Լ. Մսերեանց,
Этюды по армянск. диалектологии. ՍՏ. Մ.—23) Анини-
ский, История арм. церкви, Լ. 248
15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Հողային տուրքը և հարկերը
Կովկասում, Ս. Զաւարեանի 267
16. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ, «Պէպօր» երեսնամեակը,
Vox. 280
17. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարզկային կեանքի երկու միջնա-
վայր.—Սրդի դպրոցների վերաբերմունքը դէպի այդ
միջնավայրերը.—Դպրոցական նոր կարգերի անհրա-
ժեշտութիւնը.—Ինքնակրթութիւն՝ լուրջ ընթերցանու-
թեան միջոցով.—Սղքատ գրականութիւն.—Միակողմա-
նի հասկացողութիւն գիտութեան մասին.—Տնտեսական
և հասարակական գիտութիւնների նշանակութիւնը.—
Առևտրա-արդիւնագործական լարաբերութիւնների գեր-

իշխող զերը մեր դարում. — Քաղաքակրթուած գիշատող-
ներ. — Տնտեսական տագնապի բնորոշ պատկերը. — Ար-
դիւնագործական տագնապ հարաւային Ռուսաստանում.
— Մոսկուա-Վըշտըմի երկաթուղային գիծը. — Նոր փո-
խատութիւն. — Նաւթագործական կրիլիս Բագում. —
Տուժող դասակարգ. — Գաւառների թմրութեան պատ-
ճառներից մէկը. — Բանտերական անկարգութիւններ
Թիֆլիսում. — Անկարգութիւններ Օրուխովի պողպատ-
ձուլական գործարանում. — Բարձրագոյն հրովարտակ
Պետական խորհրդին, **Լեւոն Սարգսեան**

284

18. **ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵՄՆՔ.** Տնտեսական տարի. երաշտ, ժան-
տախտ, մորեխ. — Ախալքալաքի դաւառ. օգնութիւն
փնտառողներին, հասարակական նուիրատուութիւններ,
պետական նպաստ. — Ախալցխայի պալքարը. ծխական-
ների կայացրած վճիռները. — Վաղղուանի պալքարի
վերջը. — Շուշու քաղաքագլխի ընտրութիւնը. դարձեալ
ինտելիգենցիա և դաւառները. — «Էպօի» երեսնամեա-
կը դաւառներում, **Ա.**

197

19. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.** Դիպլոմատիան իբրև եւրոպական
կեանքի բացասական կողմերի արտայայտութիւն. — Եւ-
րոպական ազգերի ներքին կեանքի բնորոշող հոսան-
քը. — Արտաքին հանգամանքների մտցրած խանգա-
րումը անգլիական ներքին կեանքի մէջ. — Հիկո-Բիչի և
Բրօդրիկի ծրագիրների ընդունելութիւնը համայնքնե-
րի ժողովում. — Ազատական կուսակցութեան ճնշումը
դրութիւնը. — Աւստրալիական պարլամենտի ծնունդը. —
Արտաքին հանգամանքների ճնշումից ազատ անգլօտակ-
սօնական զաղութներ, **Լ. Ս.**

304

20. **ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** 307
21. **ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ** 314
22. **ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.** 318
23. **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ** 319
24. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** 320
25. **ՅԱՒԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՎԷՅԼ Լ. Տօլստօի, թարգմ.**
Տ. Յովնանցիսեանի 113—128

Ա Ր Տ Ի Ս Տ Ը

(Նուէր տիկ. Ե. Գ. Իւզըաշեանին)

Հինգ ամիս էր ընդամենը Օդեսսայումն էի, չորրորդ անգամ փոխեցի սենեակս: Փոքր իշատէ մեծ քաղաքում բնակուող մենակեցի համար մի առանձին հաճոյք է ստէպստէպ կացարան փոխելը: Անցնելով մի թաղից միւսը—կարծում ես մի երկրից միւսն անցար: Նոր հարեանութիւն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով:

Այս անգամ պիտի բնակուէի քաղաքի ազմկալի փողոցներից մինում, հինգյարկանի մի տան երրորդ յարկում: Տանտիրուհիս խալուհի էր, գէր, առողջ, ամրակալմ մի այրի մօտ յիսուն տարեկան: Նրա ամուսինը եղել էր խալական օպերայի յուշարար, շատ վաղուց հայրենիքից տեղափոխուած էր Ռուսաստան: Մեռնելով—կնոջ ու միակ դստեր համար թողել էր իբրև ժառանգութիւն հին նօտաների մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանօթութիւնը: Այրին, ապրելու ուրիշ միջոց չունենալով, պարապում էր սենեակներ վարձու տալով:

Հէնց առաջին օրը ես ծանօթացայ հարեւաններիս հետ: Այդ ինձ համար նոր և բաւական հետաքրքրական շրջան էր: Նա բաղկացած էր մեծ մասամբ իտալացիներից: Կար և մի ռուս ուսանող ու մի հրէուհի ատամնաբոյժ, բաւական գեղեցիկ, թէև ոչ այնքան էլ թարմ:

Կենտրոնը կազմում էր տանտիրուհու գուստրը— շիկահեր, փղոսկրի պէս փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան: Նա երգում էր, ունէր զօրեղ ու անոյշ ձայն, պատրաստուում էր բեմին նուիրուելու: Գիտէր նուագել դաշնամուր, երաժշտութեան դասեր էր տալիս, փող ժողովում, որ գնայ Խտալիա ձայնը մշակելու:

Առաջին օրը անծանօթ չըջանում զգացի սովորական անյարմարութիւն, երկրորդ օրն ընտելացայ, իսկ մի շաբաթ անցած բաւական բարեկամացայ բոլորի հետ: Մենք ճաշում էինք մի և նոյն սենեակում, միաժամանակ, մի և նոյն սեղանի ըով: Երկու ժամից սկսած մինչեւ երեկոյեան չորս-հինգ ժամը ծիծաղ, երգ, նուագում, պար ու սրախօսութիւններ խառնւում էին միմեանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դաւանութիւնների պատկանող մարդկանց բարեկամական մըթնոլորտը:

Մի օր ճաշից յետոյ Լուիզան նստեց դաշնամուրի ըով և սկսեց նուագել ինչ-որ վայլս: Բասո-կանտաշէ Չելլինին գրկեց կօնսայլսօ Լուկրեցիա Կաֆարելլին ու սկսեց պարել: Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, որովհետեւ իրաւ որ այդ մի զուարճալի զոյգ էր. Չելլինին խիստ նիհար էր և շատ բարձրահասակ, Լուկրեցիա Կաֆարելլին ընդհակառակը խիստ գէր էր և կարճահասակ: Լուիզան նուագելով հանդերձ գեղեցիկ գլուխը ձգել էր յետ և անզուսպ քրքջում էր, լքցնելով սենեակը իր անուշ ձայնի հիւթալի հնչիւններով:

Զուարճութեան տաք միջոցին դռների մէջ նկարուեց ինձ համար մի անծանօթ կերպարանք: Ոչ ոք առաջին պահ չը նկատեց նրան բացի ինձանից, որ նստած էի դռների մօտ: Անծանօթը հէնց առաջին վայրկենից գրաւեց ուշադրութիւնս: Ես գիտեցի նրան: Մօտ 16—17 տարեկան մի պատանի էր նիհար, գունատ դէմքով, կուրծքը վոքք ինչ ներս ընկած: Հագած էր մուգ-կապտադոյն գօտեւոր կարճ բաճկոն, որի կուրծքը զարդա-

րուած էր ասրեայ խաչածև ծոպերով, և նոյն գոյնի նեղ վարաիք: Ձեռին բռնած էր մի կակուղ կանանչագոյն գլխարկ փետուրով զարդարուած, նման այն գլխարկներին, որ դնում են Թափառաշրջիկ յոյն անդրիավաճառները կամ խալացի երաժիշտները: Նրա դէմքի գծերը կանոնաւոր էին ու նուրբ, աչքերն ունէին ինչ-որ մեղամաղձիկ արտայայտութիւն: Դա այն երջանիկ դէմքերից էր, որոնք հէնց առաջին հայեացքով մարդու սրբաւոր շարժում են համակրութեան զգացում:

—Բօն ջուրնօ,—ասաց նա, գլուխ տալով:

—Օհօ, արտիստը,—գոչեց ամենից առաջ բարիտօն Կավալլարօն, որ մի բարեսիրտ մարդ էր մօտ երեսուն ու հինգ տարեկան:

—Արտիստը, արտիստը,—կրկնեցին միւսները:

Նոյն վայրկենին պար, նուագում, ծիծաղ ընդհատուեցին, և բոլորի հայեացքները դարձան դէպի պատանին:

—Ո՞րտեղ էիր, այսքան ժամանակ չէիր երևում,—հարցրեց Կավալլարօն:

—Սպասեցէք, նա տխուր է,—գոչեց Լուիզան և մօտեցաւ պատանուն.—էլի ինչ է պատահել, ինչո՞ւ ներս չես մտնում:

—Ո՞րտեղ է սինեօրա Ստեֆանիան,—հարցրեց պատանին:

Նրա ձայնը յուզուած էր, դողում էր: Կար այդ ձայնի մէջ մի սրտաշարժ չեշտ, որ արտայայտում էր հեզութեան հետ և թախիժ:

—Ա՛հ, հասկացայ,—ասաց Լուիզան,—էլի մայրդ, երևի, հիւանդ է: Խեղճ պատանի. դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին...

—Սինեօրինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չը խղճալ,—գոչեց պատանին վիրաւորուած.—սինեօրա Ստեֆանիան այստեղ չէ:

—Մայրս խոհանոցումն է:

Պատանին գլուխ տուեց շնորհալի ձեռով ու հեռացաւ:

—Նա չափազանց տխուր էր,—ասաց Կալալլարօն,
—անշուշտ մայրն այս անգամ ծանր հիւանդ է:

—Ձեմ կարծում,—նկատեց Լուիզան,—այդ կինը
միշտ հիւանդանում է որդուն տանջելու համար: Խեղճ
պատանի...

—Խեղճ,—կրկնեց ռուս ուսանողը կծու հեգնութեամբ,—բայց նա չէ ուզում, որ դուք նրան խղճաք,
սինեօրինա Լուիզա: Տեսա՞ք, ինչպէս վիրաւորուեց:

—Նա հպարտ է ինչպէս սպանական գրանդ,—ասաց Կալալլարօն, իւր բարի աչքերը թանձր ունքերի տակից դարձնելով դէպի ինձ,—և հպարտութիւնը սաղում է նրա հեղութեանը: Սինեօր, նրա կերպարանքը ինձ միշտ յիշեցնում է իմ եղբօրը: Տաղանդաւոր շութակահար էր, մեռաւ քսան տարեկան հասակում թեւերիս վրայ:

—Դուք ճանաչում էք Լեոնին.—դիմեց ինձ օրիորդ Ռաիսան—հրէութի ատամնաբոյժը:—Ո՞չ: Երեւակայեցէք, հարեւաններ, պարօնը մեր արտիստին չէ ճանաչում:

—Օ՛հ, այդ աններելի է,—գոչեցին Լուիզան ու Լուկրեցիա Կաֆարելլին:

—Իմ կարծիքով,—ասաց Կալալլարօն, ով գեղարուեստասէր է, իրաւունք չունի Լեոնին չը ճանաչելու: Նա իսկական արտիստ է, այ՛ո, հոգով, սրտով, արիւնով, ամբողջ էութեամբ արտիստ:

Իմ հետաքրքրութիւնը բոլորովին դրդուեց: Ո՞վ է, վերջապէս, այդ մանուկը, որ այդքան գրաւել է հարեւաններիս համակրանքը:

—Եթէ կամենում էք, իսկոյն կը ծանօթանաք,—ասաց Լուիզան,—արժէ այցելել նրան իր ապարանքում: Գիտէ՞ք ինչ,—դարձաւ նա ընդհանուրին,—վատ չի լինի, եթէ խմբովին գնանք մեր արտիստի հիւանդ մօրը

տեսնելու: Այո՛, այո, վատ չի լինի... Ես գնում եմ, հով ուղղում է, թող հետեւէ ինձ:

Այս ասելով նա անմիջապէս դիմեց դէպի դռները: Բացի ուսանողից և երկրորդական բարիտոն Բօրեւիից, բոլորս հետեւեցինք նրան, նոյն իսկ հաստամարմին Լուկրեցիա Կաֆարելլին:

Արտիստը բնակւում էր նոյն տան վերին յարկում: Լուիզան մեզ առաջնորդեց դէպի գլխաւոր սանդուխտը, բարձրացանք չորրորդ յարկը: Այնտեղից նեղ, կեղտոտ, փայտեայ սանդխտով հասանք հինգերորդ յարկը, մտանք մի միջին անցք: Անմիջապէս խփեց մեր քրթին ճարպի մէջ տապակուող մսի անախորժ հոտը:

Լուիզան կանգ առաւ մէկ թեւանի մի ցածր դռան առջեւ:

—Սինեօր Չելլինի,—ասաց նա,—ձեզ համար պիտի առաստաղը մի ֆուտ բարձրացնել:

—Իսկ սինեօրինա Կաֆարելլի համար դռները պիտի երկու ֆուտ լայնացնել,—հեգնեց Չելլինին կօտորայլտօի մարմնի հաստութիւնը, գրկելով իր երկայն թեւով նրա իրանը:

Մենք մտանք մի սենեակ, որ մի փոքր մեծ էր, քան մի մեծ հաւաքուն: Այնտեղ, մուտք անկիւնում, պատի տակ երեւում էր ինչ-որ բան, նման անկողնակալի թէ թախտի—չը գիտեմ: սինեօրա Ստեֆանիայի յաղթանդամ մարմինը թագցնում էր նրան իմ աչքից: Մի քայլ առաջ գնալով, տեսայ հնամաշ վերմակի տակ պառկած մի կնոջ դէմք: Նրա ճակատը կապած էր սև թաշկինակով, աչքերը յառած առաստաղին: Նա տընքտընքում էր ու ծանր հառաչում: Նրա ոտների կողմում կանգնած էր «արտիստը»: Ըստ երևոյթին, նրա միտքը կլանուած էր կամ մօր հիւանդութեամբ կամ մի ուրիշ հոգսով, որովհետև մեր երևալը, կարծես, աննկատելի մնաց նրա համար:

—Դէ լաւ, քիչ տնքտնքա,—ասում էր սինեօրա Ստեֆանիան հիւանդին,—խօս չես մեռնում: Սովորա-

կան հիւանդութիւնդ է, էլի վաղը կ'անցնի: Բա, բա, բա, տես, մօտդ ինչ պատուաւոր հիւրեր են եկել: Համարեա իմ բոլոր կավալէրներն ու դամբը: Տղայ, դարձաւ նա Լեոնին, երևի, այդ դու ես անհանգստացրել մարդկանց:

Պատանին նայեց մեզ, չափազանց չփոթուեց և շտապեց սենեակի ընդամենը մի զոյգ ջարդուած անթոռներն առաջարկել եօթ հիւրերից՝ չը գիտէր ո՞ր մէկին:

—Պարօնը բժիշկ է, —հարցրեց հիւանդը, երբ տեսաւ ինձ:

—Բժիշկ չէ, —պատասխանեց սինեօրա Ստեֆանիան, բայց, երևի, ցաւդ բժշկից լաւ կը հասկանայ: Քո հայրենակիցներից է...

—Հայ, —գոչեց հիւանդը զարմանալով թէ ուրախանալով չը գիտեմ և, գլուխը դանդաղ բարձրացնելով, նստեց անկողնում:

—Հայ, —կրկնեցի ես զարմացած, որովհետեւ ինչ ազգի ասես սպասում էի այդ միջավայրում, բացի հայից:

—Այո, —ասաց օրիորդ Ռաիսան, —արտիստը ձեր հայրենակիցն է. զարմանալի է, որ չիմացաք հէնց առաջին տեսնելուց:

—Ո՞րտեղացի էք, —հարցրեց հիւանդը. —խօսմ Բեսարաբիայից չէ՞ք: Ո՞չ: Օճ, այդ շատ լաւ է, շատ լաւ: Օ՞ք օք օք, Բեսարաբիայի հայերը Աստուած չունեն, գազաններ են, չեն ուզում ցաւս հասկանալ: Տէր Աստուած, ոչ ոք ցաւս չէ հասկանում, ոչ ոք...

—Էլ մի սկսիր հին երգդ, —գոչեց սինեօրա Ստեֆանիան, —բաւական է:

—Ո՛չ, Ստեֆանիա, չեմ կարող լռել, սիրտս այրուում է: Դու մայր ես, բայց զաւակդ տղայ չէ: Օ՛հ, երանի իմն էլ աղջիկ լինէր: Չը գիտես ինչ է անում նա: Հօր նման տանջում է ինձ: Պարօն, —դարձաւ ինձ, —այդ փչացածն իմ միակ տղան է. հասկանում էք՝ միակ.

ուրիշ զաւակ չունեմ: Աստուած սիրէք, խելքի բերէք նրան: Նա հօր ճանապարհով է գնում:..

—Սովորական գանգատներ են,—չշնչաց ականջիս
 Լուիզան,—ուշագորութիւն մի դարձնէք:

Ես նայեցի Լեոնին: Ամաչելուց նա երեսը դարձրել էր պատին, մեզ չէր նայում:

Լուիզան մօտեցաւ նրան, բռնեց ձեռներին, երեսը դարձրեց իր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական,—ուշ, աւելի—սիրող քրոջ քնքոյշ հայեացքով: Ինձ թուաց, որ այդ հայեացքը թափանցեց մինչև Լեոնի հոգու խորքը: Եւ ո՞ւմ հոգու խորքը չէր թափանցիլ այն: Լեոնը զուարթացաւ և երախտագիտութեան զգացմամբ լեցուն աչքերով նայեց խտալուհու երեսին:

—Եթէ օրինաւոր որդի լինէր,—չարունակեց հիւսանգը,—ձեզ նման պատուաւոր հիւրերին այսօր այս խողաբնում կ'ընդունէր: Տեսնո՞ւմ էք, աթոռներ էլ չունենէք: Անամօթ, ինչ ես ցցուել փայտի պէս: Չէս տեսնում հիւրերիս:

Լեոնը կրկին անգամ սենեակի մի զոյգ աթոռները առաջարկեց մեզ: Նստել անկարելի էր. այդ փոքրիկ սենեակում եօթնութ հոգի կանգնել միայն կարող էին: Լուկրեցիա Կաֆարելլին երկար չը դիմացաւ օդի սակաւութեանը, դուրս գնաց: Չելլինին հետևեց նրան, ասելով, թէ «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չը կար անհանգստանալու:

Նրանց դուրս գնալուց յետոյ սենեակն այնչափ գունէ ազատուեց, որ ես կարող էի դիտել շուրջս: Այն, ինչ-որ տեսայ, ինձ հաճելի դարմացում պատճառեց: Մի անկիւնում կախած էին աշխարհիս անուանի երաժշտապետների, նուագիչների, երգիչների ու երգչուհիների լուսանկարները հովհարի ձևով միմեանց միացրած: Միւս անկիւնում դրուած էր մի փոքրիկ գրասեղան, ծանրաբեռնուած զանազան էժանագին գեղարուստական իրերով: Այնտեղ տեսայ Բեթհովէնի, Մօցարտի, Շէքսպիրի և Վագների կաւեայ կիսարձանիկները աղիւսի

գոյնով, մի հաստ խեցեղէն շուի, մի կոտրուած սրինգ և ուրիշ այդպիսի պարագաներ: Սեղանի առաջին պատին կախած էին մի կիթառ, մի մանդօլինա և մի ինչ-որ թատրոնական զգեստ նման Ռիգօլետտոյի հագուստին: Ամենահետաքրքրականը մի նկար էր պօլիտրայի վրայ, որ ներկայացնում էր երկու պատանիների մենամարտութիւնը բռնունջքներով մի փողոցային երգչուհու համար: Աղջիկն ընկել էր մէջտեղ գլղզուած մազերով և աշխատում էր բաժանել ախոյեաններին...

—Տեսնո՞ւմ եք,—չնշաց ականջիս Կապալլարօն,— երաժշտութիւն, նկարչութիւն, պօեզիա, ոչինչ չէ մոռացուած:

Այդ միջոցին հիւանդը շարունակում էր դանգաժուել:

—Ահա երեք օր է, առաւօտներն էլ երեսը չեմ տեսնում: Նա չէ քնում, Ստեֆանիա, չէ քնում: Չէ որ կարող է հիւանդանալ, յետոյ ես ի՞նչ անեմ, ո՞վ կը պահի ինձ: Գիշեր-ցերեկ թատրոններումն է: Հօր ցաւը որդուն է անցել: Մնիծուի նրա գերեզմանը, օրս սևացրեց:

—Է՛լի միւսնոյն դանգատները,—արտասանեց Լուիզան,—և ի՛նչպէս չէ յոգնում այդ կիներ: Եսամո՞լ...

Արդարև, հիւանդի աչքերի մէջ երևում էր եսամոլի հոգի, թէև գեղեցիկ էին այդ աչքերը և դեռ բաւական թարմ մօտ յիսուն տարեկան կնոջ թառամած դէմքի վրայ:

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կապալլարօն թաղուն Լեոնի ձեռի ափի մէջ սեղմում էր մի ոսկեդրամ, պատանին հրաժարւում էր ընդունել: Այն ժամանակ բարիտօնը քայլերը դանդաղացրեց, մնաց սենեակում, թոյլ տալով, որ Լեոնը մեզ ուղեկցի:

Սինեօրա Ստեֆանիան համառօտ պատմեց ինձ Լեոնի մասին հետևեալը.—Նրա հայրը եղել է թատրոնական վարսավիւր և չափազանց գեղարուեստասէր: Համեստ, գլուխը քաշ արհեստաւորը յանկարծ անձնատուր է լինում հարբեցողութեան կործանիչ ախտին, և ու ա-

ռանց պատճառի: Պարզում է, որ նա անյոյս սիրահարուած է մի երգչուհու վրայ: Կուլիսների ետեւում շուտով նա դառնում է ընդհանուր կատակների ու ծաղրի առարկայ: Արտիստներից սկսած մինչև վերջին թատրոնական ծառան ծիծաղում են նրա յանդուգն զգացման վրայ դէպի մի գեղեցկուհի, որի երկրպագուների թւում անուանում են նաև տեղեկան քաղաքագլուխը, յայտնի միլիոնատէր ու բարեգործ յոյն Մարազլիին...

Հալածանքն ու ներքին վիշտը ներգործում են վարսավիրի վրայ այնչափ, որ սրտի դառնութիւնն օգուտէջ անգամ չէ կարողանում խեղդել: Մի օր նա ծեծում է ռեժիսորին, որ ծաղրելիս է լինում նրա շինած մի կեղծամը, անուանելով նրան «սրիկայ»: Նրան զրկում են թատրոնական վարսավիրի պաշտօնից: Այդ ժամանակից նա դառնում է օգուտ և փողոցների անդառնալի սեպհականութիւն: Եւ մի երեկոյ ոստիկանները գտնում են նրան մի ծառի տակ, ձիւնի մէջ թաւալուած. բերում են տուն: Երեք օր չանցած՝ մեռնում է տիֆից, թողնելով կնոջն ու զաւակին ճակատագրի հաճոյքին:

Այրին, ամուսնու արհեստից զզուած ու տանջուած, ութ տարեկան Լեոնին յանձնում է մի ատաղձագործի և ինքը սկսում ուրիշների համար ճերմակեղէն կարել: Երկու ամիս չանցած մանուկը տրհեստանոցից փախչում է ուսումնարան: Բարի մարդիկ տալիս են նրա ուսումնավարձը: Նա սովորում է գրել-կարգալը: Այրին յանձնում է նրան հագուստեղէնի վաճառատուն: Մանուկը չէ մնում այնտեղ: Մի աներեւոյթ ձեռք մղում է նրան դէպի թատրոն: Նա դառնում է աֆիշներ բաժանող օրական յիսուն կոպէկով և թատրոնների վերնայարկը բարձրանալու իրաւունքով:

Անցնում է կուլիսների ետեւ, կամաց-կամաց ծանօթանում գերասանական աշխարհի հետ: Այժմ բոլոր արտիստները ձանաչում են նրան, բոլորին նա ծառայու-

թիւններ է անում և բոլորը սիրում են նրան իւր հեղութեան և աշխուժութեան համար: Նա ոչ մի ներկայացումբաց չէ թողնում, մանաւանդ իտալական խմբի ներկայացումները: Նա ցերեկներն էլ թատրոնումն է կամ նրա շուրջը:

— Սինեոր, կը զարմանաք եթէ ասեմ, որ այժմ նա երբեմն ստեղծում է նորեկ անծանօթ արտիստի համար փառք մեր քաղաքում, — շարունակեց մօր փոխարէն Լուիզան: — Այո՛, այո, սինեոր Չելլինի, մի հակառակէք, այս ճիշտ է: Նա ունի բազմաթիւ յոյն ու հրէայ ընկերներ, որոնք զարմանալի հաւատ ունեն զէպի նրա ճաշակը և սիրում են նրան: Դրանք կլակեօրներ չեն, ոչ, այլ թատերասէրներ: Չը գիտեմ, գուցէ նրանք կաշառում են, բայց Լեոնին — ոչ, երբէք չէ կարելի կաշառել: Սինեոր Կալալարօ, ճիշտ եմ ասում թէ ոչ:

— Նա ազնիւ է որպէս նորածին և զգայուն որպէս քնարի լար, — արտասանեց բարիտօնը: Նա իմ հանգուցեալ եղբոր տիպարն է...

— Բայց ինչպէս է ստեղծում անծանօթ արտիստի համար փառք, — հետաքրքրուեցի ես:

— Առաջին ծափահարութեամբ, — պատասխանեց Կալալարօն:

— Չեմ հասկանում, — ասացի ես:

— Սինեոր, երևի, չը գիտէք ինչ ասել է արտիստի համար առաջին ծափը անծանօթ քաղաքում: Շատ բան, երբեմն ամեն ինչ: Դուք թատերասէր էք, նկատած կը լինէք մի երևոյթ: Թատրոնական սրահում նստող հասարակութիւնը հաղիւ է վստահանում առաջին ծափը տալ անծանօթ արտիստին: Շատ անգամ հոգով հիացած երգչի երգով, նա ամաչում է իր հիացումը արտայայտել: Կարող են նրան անճաշակ համարել: Բայց ահա օգնութեան է հասնում Լեոնը: Նա ազատ է հասարակական նախապաշարումներից, չէ քաշում առաջին ծափը տալ: Խօսմբը հետևում է նրա օրինակին: Այն ժամանակ հասարակութիւնը նոյնպէս ծափահա-

րում է: Միւս օրը լրագիրները գրում են այդ ծափահարութիւնների մասին, և ահա անծանօթ արտիստի աջողութիւնը ապահով է:

—Եթէ, ի հարկէ, արտիստը շնորք ունի,—աւելացրեց Ջելլինին:

—Այո՛, ի հարկէ:

—Բայց քո Լեոնը կարող է շատ անգամ անշնորքին էլ տալ առաջին ծափը,—նկատեց Բօրելլին:

—Ներողութիւն,—պատասխանեց Կափալլարօն հեղօնօրէն ժպտալով.—մեր խմբի վերաբերմամբ դոնէ նա դեռ այդպիսի սխալ չէ գործել:

Ես գուշակեցի, որ Բօրելլին դեռ չէ արժանացել Լեոնի ծափին:

Վիճաբանութիւնը գուցէ շարունակուէր, եթէ կըրկին ներս չը մտնէր Լեոնը: Այս անգամ նրա դէմքը բաւական հանդիստ էր: Նա հրաւիրեց Կափալլարօն մի անկիւն և շնջալով ականջին, բաց թողեց նրա դրպանը մի ոսկեդրամ: Յետոյ իմացայ, որ մեր դուրս գալուց յետոյ նա իւր մօր բարձի տակ գտնում է այդ դրամը: Հասկանում է, որ Կափալլարօն պիտի դրած լինի, վերցնում է, բերում, վերադարձնում տիրոջը:

—Յամառ ես, Լեոն, յամառ,—կոչեց Կափալլարօն, չփելով պատանու գլուխը հայրական սիրով:—Դէ լաւ, մի նեղանար, նստի՛ր, մի փոքր խօսենք: Դու, ի հարկէ, երէկ թատրոնումն էիր:

—Էի:

—Հաւանացիր ինձ...

—Ի հարկէ...

—Ապա ինչո՞ւ երեսդ դարձնում ես ինձանից...

Ա՛ա, կեղծում ես...

—Սինեօր Կափալլարօ, երէկ դուք չփոթուած էիք:

—Ե՞ս: Ամենեւին: Սխալում ես:

—Ո՛չ, սինեօր, չեմ սխալում: Երբ հանդիստ էք, երբէք չէք շեղուում: Մենք ամենքս իմացանք, որ քեզ բարկացրել են:

—Ձեզ այդպէս է թուացել: Ոչ ոք ինձ չէր բարկացրել: Ահա տեսա՞ր, Լևոն, ինձ դեռ լաւ չես ճանաչում:

Լևոնը նայեց Կավալարօի աչքերին այնպիսի պարզ ու խելօք հայեացքով, որ կեղծել նրա մօտ անկարելի էր: Կավալարօն, ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

—Ձեռ սխալուում, բարեկամս, երէկ ներկայացումից մի քիչ առաջ ես խոշոր վէճ ունեցայ ռեժիսսօրի հետ:

—Ո՛չ, սինեօր Կավալարօ, ասացէ՛ք դիրիժօրի հետ, — ուղղեց Լևոնը համարձակ:

—Դու ճշտեղից իմացար:

—«Օ՛ր, Կառլօ»-ն երգելիս, սինեօր Մարտինին կէս տոն բարձր վերցրեց ձեզ շեղելու համար: Սինեօր Մարտինին բոլորի վերաբերմամբ անաչառ է, բացի իրանից: Ռեժիսսօրի պատճառով նա ձեզանից վրէժ չէր առնիլ: Նա քինախնդիր է միայն իւր անձնական հակառակորդների դէմ:

—Լսում եք, սինեօր, — դարձաւ ինձ Կավալարօն ոգևորուած, — այս պատանու բերանով խօսում է ինքը երաժշտական բնագոյումը և դիտողական ձիրքը:

Լևոնը վեր կացաւ, գլուխ տուեց, շնորհակալութիւն յայտնեց մեզ մեր այցելութեան համար և շտապեց դէպի դռները: Այլ ևս նա այնքան գրաւել էր ինձ, որ կամեցայ անպատճառ հետը խօսել:

—Հայերէն գիտե՞ք, — հարցրի ես, երևի, հայրենասիրական զգացումից դրդուած:

—Գիտեմ:

Նա, ինչպէս և իր մայրը, խօսում էր ռուսերէն լեզուով տաճկական արտասանութեամբ: Իտալացիներից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը գիտէին ռուսերէն, նաև Կավալարօն: Միւսների հետ Լևոնը խօսում էր իտալերէն:

Մի քանի հարցեր տուեցի նրան պարզ հայերէն լեզուով: Նա ապշած նայեց երեսիս և ժպտաց:

—Ձեռն հասկանում,—դարձայ ես ուսերէն լեզուի օգնութեանը:

—Այդ լեզուն եկեղեցական է,—խօսեց նա տաճկերէն լեզուով,—իմ իմացած հայերէնը ահա այս լեզուն է:

Ինձ համար նորութիւն չէր Բեսարաբիայի հայերի մայրենի լեզուն չիմանալը: Բայց առաջին անգամն էի պատահում մէկին, որ տաճկերէնը հայերէն էր համարում:

Ես խնդրեցի Լեւոնին այցելել ինձ շուտ-շուտ և իմ կողմից խոստացայ այցելել նրան:

Նա ինձ երկար սպասել չը տուեց: Հետեւեալ օրն իսկ եկաւ սենեակս և ուրախ-ուրախ յայտնեց, թէ մայրն արդէն լաւանում է: Ուղիղն ասած, ես չէի հետաքրքրւում մօր վիճակով, ինձ զբաղեցնողը որդու ճակատագիրն էր:

Երբ խօսք բաց արի թատրոնի ու երաժշտութեան մասին, պատանին կերպարանափոխուեց ինչպէս կրակոտ սիրահար, երբ խօսւում է նրա սրտի ընտրեալի վերաբերմամբ: Ոգեւորուած նկարագրեց իր լսած երեւելի երգիչների ու նուագիչների տաղանդը: Վերջին եօթ տարուայ ընթացքում նա լսել էր գրեթէ բոլոր նշանաւոր երգիչներին ու նուագիչներին, որոնք այցելել էին Ռուսաստան Օդեսսայի վրայով:

—Երեւի, դու էլ նուագում ես կամ երգում,—հարցրի ես:

—Ո՛չ, սինեօր:

—Ձեմ հասկանում:

—Երգելու համար ձայն չունեմ:

—Իսկ նուագելու համար գործիքներ չատ ունես սենեակումդ: Երէկ տեսայ:

—Այո, նուագում եմ մանդօլինա և կիթառ:

—Նօտաներ դիտե՞ս:

—Սինեօրինա Լուիզան սովորցրել է: Դուք լսել էք նրա երգեցողութիւնը: Հիանալի ձայն ունէ: Այնպէս

չէ՛: Այո՛: Հաւանե՛լ էք: Ի հարկէ, ո՛վ չի հաւանիլ: Օճ, Լուիզան մեծ ապագայ է խոստանում:..

Նա լռեց, հառաչեց, հայեացքը ձգելով դէպի անորոշ տարածութիւն: Ես նրա դէմքի վրայ նշմարեցի հոգեկան մի գաղտնի տառապանքի արտայայտութիւն: Խոստովանում եմ, այն ժամանակ նշանակութիւն չը տուեցի նրա հառաչանքին: Եւ միթէ կարող էի երեւակայել տանուէթ տարեկան պատանու հոգին որ և լուրջ վշտի ընդունակ:

—Այդ բոլորը լաւ,—ասացի ես,—բայց դու ինչո՞վ ես կերակրում քեզ ու մօրդ: Զէ՛ որ հայրդ ժառանգութիւն չէ թողել:

—Գործ չատ կայ, սինեօր: Պրօգրամներ եմ ծախում, usushush դեր եմ կատարում բեմի վրայ, պոչ եմ բռնում: Ա՛խ, սինեօր, եթէ միջոց ունենայի, կը սովորէի վեյիօնչիլ նուագելը ու կը մտնէի երաժշտական խումբը:

—Յիշում ես հօրդ, Լեւոն:

—Ի հարկէ, շատ լաւ եմ յիշում:

—Ասում են, նա բարի մարդ էր:

—Այո՛, սինեօր, շատ բարի էր, միայն...

—Հարբում էր,—լրացրի ես պատանու խօսքը:

—Նա երբէք ինձ չէր ծեծում, չէր էլ բարկանում վրաս: Բայց ո՛չ, մի անգամ բարկացաւ, յիշում եմ:..

—Երեւի, չարութիւն էիր արել:

—Այո՛: Այն ժամանակ նրա խանութը ահա այն անկիւնի կապոյտ տան ներքին յարկումն էր: Ամեն օր գընում էի այնտեղ կեղծամներ սանրում: Մի օր նա տըխուր էր շատ: Մի ժեներալ եկաւ երեսը սափրել տալու: Նրա մօտ միշտ մեծամեծներն էին դալիս: Ես վերջրի մի սանր, վրան քաշեցի թուղթ ու սկսեցի չրթօնքներովս նուագել: Ժեներալը բարկացաւ ու հօրս հրամայեց ինձ դուրս անել: Հայրս մօտեցաւ, ականջս քաշեց ու վզակիովս տալով, վռնդեց դուրս: Բայց յետոյ, երբ ժեներալը գնաց, կանչեց ինձ ներս, աչքերս սրեց,

համբուրեց ու ասաց. «Եթէ դու կ'ունենաս երաժշտական ընդունակութիւն. ինձ գրաւ կը գնեմ, բեզ չեմ թողնիլ առանց ուսման»։ Այո՛, սինեօր, շատ լաւ մարդ էր, թէև հարբում էր։ Սինեօր, ներեցէք, ո՞ր ժամն է։
— Տասնումէկը։

— Օ՛հ, ես ուշացայ։ Ներողութիւն, էլի կը գամ։ Ձեր սենեակը լաւն է։ Դուք ինձ գրքեր կը տաք կարդալու, այո՛։ Շնորհակալ եմ։ Յտեսութիւն։ Այսօր կալաֆատիի բենեֆիսն է։ Թատրոնը լիքն է լինելու։ Պէտք է գնամ, պոչ բռնեմ։

Ես կամեցայ հարցնել, ինչ ասել է «պոչ բռնել», բայց Լեոնն արդէն չքացել էր։

Կալաֆատին ընտիր երգչուհի էր։

Գնացի թատրոն տոմսակ վերցնելու։ Կասսի առջև կանգնած էր գնողների մի երկայն շարք, որ հասնում էր մինչև փողոցի կէտը։ Եղանակը սառն էր, խոնաւ, անախորժ։ Պիտի բռնէի շարքի վերջին տեղը և ամենաքիչը մի ժամ սպասէի մինչև հերթս հասնէր։ Ուզում էի վերադառնալ տուն, երբ լսեցի իմ ազգանունը։ Դա Լեոնի ձայնն էր, որ կարող էի ճանաչել հարիւրաւոր ձայների մէջ։ Նա կանգնած էր կասսից մի քանի քայլ միայն հեռու, երկու հրէաների մէջ սեղմուած։

— Տոմսակ էք ուզում գնել, — հարցրեց նա տաճկերէն։

— Այո՛։

— Եկէք, տեղս բռնեցէք, ապա թէ ոչ, շուտ չէք հասնիլ կասսին։

Ես բռնեցի նրա տեղը։ Նա գնաց կանգնեց շարքի վերջում։ Այդտեղ միայն իմացայ՝ ինչ ասել է «պոչ բռնել»։ Լեոնը կանգնում էր շարքի ետևում և, երբ բաւական մտեսնում էր կասսին, իւր հերթը ծախում էր ցանկացողին հինգ — տասը կոպէկով։ Յետոյ դարձեալ գնում էր ու շարքի ետևում կանգնում։ Նա ամեն միջոց գործ էր գնում թատրոնից չը հեռանալու համար։ Նրա օգը, կերակուրը, կեանքը, ամեն ինչ թատրոնն էր։

Իմ հետաքրքրութիւնը այդ պատանու վերաբերմամբ արդէն այնքան մեծ էր, որ աշխատում էի ամեն օր նրան տեսնել:

Մի առաւօտ նրա մօտ հանդիպեցի երկու անծանօթներին, որոնց հետ սենեակի դռների առջև կանգնած խօսակցում էր:

Մէկը իր հասակի պատանի էր հնամաշ հագուստով, բայց գլխին մի նոր գլխարկ: Դէմքի դժերը հրէական էին, աչքերը դեղնագոյն, մաղերը գրեթէ կարմիր, երեսը ինչ-որ բծերով ծածկուած, սակայն համակրելի:

Միւսին ես չառ անգամ էի տեսել քաղաքի զբօսավայրերում ու թատրոնների առջև: Դա մօտ քսան ու հինգ տարեկան երիտասարդ էր, այնքան նիհար, այնքան բարակ ու գունատ, որ, կարծես, մագաղաթից լինէր շինած: Նրա երեսը երկարաւուն էր ու նեղ, աչքերը կլոր ու փոքրիկ, կոկորդի ոսկորը դուրս ցցուած: Հարթ ու նօսր մազերը, մինչև ունքերը քաշած կակուղ գլխարկի տակից ցած իջնելով, եախուի պէս կպել էր բարակ պարանոցին և ընդգրկել կոկորդի մի մասը: Սև սիւրտուկի վրայ հագած էր թիկնոցաւոր վերարկու առանց աստառի, լայն թևերով: Մի ձեռքին բռնած էր բազկի հաստութեամբ մի դեղնագոյն փշոտ փայտ, միւս ձեռքին անկազմ գրքոյկներ և տեղական լրագիրների համարները:

— Իմ ընկերներն են, — ասաց Լևոնը, անմիջապէս ծանօթացնելով ինձ նրանց հետ: — Բանաստեղծ Չաուշէնկօ, Իցկօ Մարգուլիս:

Ես հաճոքով սեղմեցի երկուսի էլ ձեռքը:

— Չաուշէնկօն սիրում է մարդկանց հետ ծանօթանալ իր երկերի միջոցով, — ասաց լայն վերարկու հագած երիտասարդը, որ ինքը բանաստեղծն էր:

Եւ անմիջապէս, գրքոյկներից մէկը պահելով քթի առջև, հարցրեց.

— Ձէիք կամենալ արդեօք մի օրինակ վերցնել:

— Հաճոյքով:

Գրքոյկի վերնագիրն էր. Часы горя и страданій, стихотворенія Леонида Николаевича Чаушенко.

—Դուք գուցէ զարմանաք, մօսեօ,—ասաց նա, դնելով վարտիքի գրպանը գրքոյկի արժէքը, որ ես, այսպէս ասած, յանդգնեցի կապել ձեր վզին իմ երկը: Բայց մի վրդովուէք, մարդիկ իրանց խիղճն են ծախում, Չաուշէնկօն իր երկերը: Նախկին գրաշար եմ: Ինքս գրում եմ, ինքս շարում, ինքս տպում, ինքս վաճառում, ինքս էլ ուտում իմ սրտի արեան վաստակը...

—Իսկ ես նախկին և ներկայ ջհուդիկ եմ,—ընդհատեց բանաստեղծի խօսքը Իցկօ Մարգուլիս կոչուած պատանին,—երբեմն լրագիրներ եմ ծախում, երբեմն էլ թատրոններում ծառայում: Նեղ տեղն ընկնելիս փողոցներում կօշիկներ եմ սրբում:

—Եւ երևակայում է իրան ապագայ Ռուբինշտէյն, —հեղնեց Չաուշէնկօն:

—Ա՛խ, պարոն, արդեօք դուք երաժշտութեան ուսուցիչ էք: Ո՞չ: Ա՛վաստ: Ես կը կամենայի ձեզանից դաշնամուրի վրայ դասեր վերցնել: Ծիծաղիր, Չաուշէնկօ, բայց էլի ես պիտի քո Часы горя и страданій երաժշտութեան վերածեմ: Դէ լաւ, գաւազանդ մի ցոյց տար. ես երկչոտ ջհուդներից չեմ, ես հրէայ եմ: Արեւիդերչի, սինեօր... գնանք, բանաստեղծ: Զիմբա, չիմբա—չիլալա...

Նա քամու արագութեամբ թռաւ դուրս: Չաուշէնկօն հետեւեց նրան, հաստ գաւազանի ծայրը աղմուկով զարկելով փայտեայ սանդխտի աստիճաններին:

Փառք Աստուծու, այս անգամ Լեւոնի մայրը տանը չէր, գնացել էր շուկայ պաշարեղէն գնելու: Լեւոնն ասաց, թէ Չաուշէնկօն ու Իցկօ Մարգուլիսը եկել էին խորհրդակցելու իտալական խմբի առաջին երգչուհի Բարբինիի բենեֆիսի մասին: Պատրաստում են արտատաքոյ կարգի ցոյցեր: Չաուշէնկօն մտադիր է բենեֆի-

սի պատուին նուիրել երգչուհուն մի բանաստեղծութիւն. պէտք է թարգմանել իտալերէն:

Ես, Լեւոնին փորձելու համար, ասացի.

—Կը ցանկանայի իմանալ, դուք ի՞նչ գործ ունիք երգչուհիների բենեֆիսների հետ:

—Խնչպէս թէ գործ չունենք,—գուցե նա զարմացած,—երգչուհիները գեղարուեստին չէն ծառայում:

—Շատ էլ ծառայում են, յետոյ:

—Ամեն մարդ պարտաւոր է պատուել գեղարուեստը:

—Գեղարուեստը շուայլութիւն է: Նա հարուստների համար է: Իսկ դու և քո ընկերները աղքատ էք...

—Հարուստները արտիստներին նուէրներ են անում, իսկ մենք ցոյցեր...

Հազիւ մի քանի բողբէ խօսել էինք, երբ ներս մտաւ Լեւոնի մայրը: Դնելով պաշարեղէնի զամբիւղը Շէքսպիրի քթի առջև, նա իսկոյն Լեւթ յարձակուեց որդու վրայ.

—Էլի փողոցային սրիկաները այստեղ էին, հա՛: Նրեւի, խորհուրդ ունէիր: Մի շաբաթ է գլուխս ցաւեցնում էք այդ երգչուհու բենեֆիսով: Պարոն, տեսա՞ք խօմ, տեսա՞ք այս անզգամի ընկերներն ովքեր են: Ի՞նչ կարող է սովորել այդպիսիներից: Փճւշ, փուշ զաւակ...

Երբեմն մայրերը կարող են իրանց հարազատ զաւակների թշնամի լինել: Անշուշտ Լեւոնի մայրը սիրում էր որդուն, բայց չէր տեսնում իր և նրա մէջ եղած վիհը. այն ահագին վիհը, որ չէր կարելի բացնել ու հարթել անվերջ նախատինքներով: Մի անգամ այս մասին խօսում էինք մեր սեղանատանը, սինեօրա Ստեֆանիան և տենօր Բարեյլին պաշտպանեցին մօրը, իսկ միւսները—որդուն: Ռախօան ասաց.

—Մեզ հրէաներիս համարում էք նիւթապաշտ: Ես դէմ չեմ, ճիշտ է. բայց, հաւատացէք, ո՛չ մի հրէայ, մանաւանդ հրէուհի իր որդու վերաբերմամբ այդ քը-

րիստոնեայ կնոջ չափ նիւթամոլ չէր լինի: Հրէան խեղօք կերպով է հարստահարում իր որդուն: Եթէ իր որդու մէջ տեսնում է երաժշտական կամ երգելու ձիրք, աշխատում է հէնց այդ ձիրքը շահագործել: Նա չէ ստիպում նրան արհեստաւոր կամ վաճառական դառնալ:

Երկու անգամ Լեւոնն իմ ներկայութեամբ լաց եղաւ, երբ մայրը յանդիմանում էր նրան իբրեւ «անպէտք» զաւակի: Նա փաթաթուեց մօր պարանոցին, դռչելով.

—Մամա, մամա, մի բարկանար, ես բեզ սիրում եմ: Օօ, ո՛չ, այդ պատանին չէր կեղծում: Նա սիրում էր մօրն անչափ, և այս նրա դժբախտութեան պատճառներէց մէկն էր:

—Կարելի է,—լսեցի մի առաւօտ դռների ետևից Լեւոնի ձայնը, երբ դեռ անկողնից չէի վերկացել:

Ուրախութեամբ հրաւիրեցի նրան ներս: Նա գլխաբաց էր, երեսն անլուայ, աչքերի սպիտակուցները դեղնած, մաղերը դղգղուած, դէմքը մագաղաթի պէս գունատ: Կոնատակին պահած էր մանդոլինան և այնպէս ամուր սեղմած, որ, կարծես, վախենում էր ձեռքից խլեն: Նրա բաճկոնի կոճակները բաց էին, փողկապ չունէր, շապկի եզրերը բաժանուել էին և երեւան էին հանում նրա նիհար կուրծքը: Ծնկների վրայ կուչկուչուած վարտիքի ծայրերը բարձրացել էին, երեւում էին կօշիկների ականջները:

—Ներողութիւն, սինեօր,—ասաց նա, ցրուած հայեացքը պտակեցնելով չորս կողմը,—կարծում էի վեր էք կացել:

Ես շտապեցի նրան հանգստացնել, թէ հէնց վեր էի կենում, երբ եկաւ: Նա ինդրեց թոյլ տալ իրան կէս ժամ մնալու իմ սենեակում: Ոչ միայն կէս ժամ, այլ միշտ, երբ կամենար և որքան կամենար, կարող էր օգտուել իմ սենեակից: Բայց այս անգամ ինձ շփոթեցրեց նրա այլալուծած կերպարանը:

—Ի՞նչ է պատահել, — հարցրի, կարծելով, որ թագնւ-
ւում է ինչ-որ հալածողներից:

Մի քանի վայրկեան չը պատասխանեց: Ես հարցս
չը կրկնեցի, սկսեցի հագնուել: Նա մօտեցաւ դռներին,
նայեց դէպի դուրս ու յետ եկաւ, կանգնեց սենեակի
մէջտեղում, աւելի ամուր սեղմելով մանդօլինան կռան
տակ:

— Գիտէ՞ք, սինեօր, — ասաց, — կարող է մայրս գալ:

— Ի՞նչ անենք, թո՛ղ գայ:

— Ես նրանից եմ փախել: Ուզում էր մանդօլինաս
կոտրտել, վառարան գցել:

— Ինչո՞ւ:

— Մինչև լոյս չեմ թողել նրան քնելու, նուազել եմ:
Յետոյ պատմեց, թէ երէկ օպերային երաժշտական
խմբի բենեֆիսն է եղել: Ներկայացումից յետոյ բոլոր
երաժիշտները գնացել են հիւրանոց ընթրելու: Խմբա-
պետը Լեոնին էլ հրաւիրել էր: Ընթրիքի միջոցին մէ-
կը վելիօնէլով է նուազել, ի միջից այլոց, և մի
սպանական եղանակ — «Մադրիդի շրջմուրիկը»:

— Գլխիցս չէր դուրս գալիս այդ եղանակը: Ուզում
էի անպատճառ սովորել հէնց այս գիշեր, որ չը մոռա-
նամ:

— Եւ սովորեցիր:

— Այո՛:

— Ինձ համար կը նուազե՞ս:

Լեոնի բնաւորութիւնը պարզ էր: Նա կոտրատուել
չը գիտէր, ամեն բանի վերաբերւում էր հասարակ: Ես
արդէն մի քանի անգամ լսել էի նրա նուազումը: Վատ
էր նուազում թէ լաւ, չը գիտեմ, միայն զգացւում էր
և զգացնել տալիս լսողին:

Նա նստեց աթոռի վրայ, գրկեց մանդօլինան: Ա-
ռաւօտեան արեգակի կիտրոնագոյն շողերը սփռուել էին
ներս: Լեոնի աչքերը անգիտակցաբար դարձան դէպի
այդ շողերը, կարծես, ինչ-որ գաղտնի մագնիսի զօրու-
թեամբ: Ա՛խ, այդպիսի վեր ուղղւած աչքերը, այդ հեզ

դէմքը: Անցել է ընդամենը երկու տարի, բայց կ'անցնեն շատ տարիներ, դարձեալ այդ օրը վառ կը մնայ յիշողութեանս մէջ:

Ի՞նչ էր Լևոնի նուագածը—բացատրել չեմ կարող: Յիշում եմ միայն ինձ վրայ գործած տպաւորութիւնը: Կիսամերկ բեւռուել էի սենեակի մէջտեղում և լսում բռն զգացումների վիժումը: Վիշտ և բերկրութիւն, փոթորիկ ու մեղմ թախիծ խառնուել էին «Մադրիդի չրլմոլիկի» մէջ—գոնէ այսպէս էր թւում ինձ: Գուցէ դա մի կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուլին էր, փոքր ինչ կանոնաւորուած ինձ անյայտ մի հանճարի ստեղծագործ ուժով: Բայց հետաքրքրականն ինձ համար նուագողն էր: Կարծես, նիւթեղէն պատանին չքացել էր, մնացել էր միայն նրա ստուերը: Նա չէր նկատում իմ ներկայութիւնը, քաղցր հնչիւնների հեղեղով կ'անուած նետրդերը չէին զգում աշխարհի նիւթականը: Կարծես, հոգին ամբողջովին ձուլուել էր նուագած եղանակի հետ ու սլացել հեռու մի աշխարհ: Ընտիր հոգիների կախարդական աշխարհը:

Երբ աւարտեց, քանի մի վայրկեան լուռ էր, անշարժ, աչքերը տակաւին յառած արեգակի շողերին, որոնք հետզհետէ գունատուում էին:

Ես չը կարողացայ ինձ զսպել, ոգեւորուած դուչեցի.

—Կեցցես, Լևոն, կեցցես...

Բայց նա չը լսեց: Անշարժ էր. նուրբ շրթունքները, որոնք միշտ սեղմուած էին, դողում էին նկատելի: Յանկարծ նրա ձեռները թուլացան, գլուխը մի փոքր թեքուեց ուսին, մանգօլինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկաւ նիհարիկ ծնկների վրայ: Եւ նրա դէպի շողերը յառուած աչքերի մէջ նշմարեցի արցունք:

—Մանուկ, ինչո՞ւ ես լալիս,—գոչեցի կարեկցութեամբ:

Նա ոտքի կանգնեց, ճակատից հեռացնելով թանձր մազերը և տարօրինակ ձայնով արտասանեց.

—Վերիօնչէլիստն ինձ ասաց, Մադրիդի շրջմովիկը գժբախտ է եղել: Յուրա գիշերները երգել է դրանդի աղջկայ լուսամուտի տակ և լաց եղել... Նրա հայրը աղքատութիւնից մի օր կախուել է ծառի վրայ, խեղդուել:

Այդ ժամանակ ես չը հասկացայ նրա խօսքերի խորքերում թագնուած բուն վիշաը և կարծեցի զառանցում էր: Արդարեւ, զառանցում էր նա, բայց ինչո՞ւ և ի՞նչ...

—Ա՛խ, ներողութիւն,—գոչեց նա յանկարծ ուշքի գալով,—ես... անքնութիւնից...

—Այո՛, Լեւոն, անքուն ես: Եթէ կամենում ես—հանգստացիր սենեակումս:

—Շնորհակալ եմ, սինեօր: Թո՛ղ տուէք միայն մանդօլինա թողնեմ այստեղ: Մայրս կարող է նրան վառարան գցել: Երէկ լուսամուտով փողոց շարանց կիթառս ու մի քանի լուսանկարներ:

—Լեւոն, մայրդ չար կ'ին է,—գոչեցի ես մինչեւ հոգոյս խորքը վրդովուած այրիի վայրենի արարմունքից:

Լեւոնը չափազանց վշտացաւ և սկսեց պաշտպանել մօրը: Ո՛չ, ոչ, չար կ'ին չէ նրա մայրը, ընդհակառակը՝ շատ բարի է: Նա սիրում է Լեւոնին: Երբեմն քնած ժամանակ Լեւոնը զգում է, որ իրան թագուն համբուրում է: Նա սիրում է, բայց սէրը ցոյց չէ տալիս, վախենում է, որ Լեւոնը երես առնի, աւելի փչանայ:

—Աւելի փչանաս,—գոչեցի ես.—բայց մի՛թէ դու փչացած ես:

—Ի՛նչ գիտեմ, սինեօր, մայրս ասում է՝ «նվ իր ծնողների կամքը չէ կատարում—փուչ որդի է»:

—Է՛հ, ուրեմն ինչո՞ւ չես կատարում մօրդ կամքը, —հարցրի դիտմամբ, կամենալով փորձել նրան:

Նա մի տխուր հայեացք դցեց երեսիս, ոչինչ չասաց: Ես այդ հայեացքի մէջ կարդացի նրա անզօրութիւնը—զառնալ մօր կամքի հըս զաւակ: Անվիճելի էր, որ նա չուտով կը հրաժարուէր կեանքի բոլոր բարիքներից, քան թատրոնից:

ձաշի միջոցին պատմեցի նրա տարօրինակ տրամադրութեան մասին: Լուիզան լսեց լարուած ուշադրութեամբ: Նրան նկատելու չափ շփոթեցրեց այն, ինչ-որ Լեւոնն ասել էր «Մադրիդի շրջմուխիկի» մասին: Կալալարօն խորհրդաւոր ժպտում էր և գլխով յանդիմանական շարժումներ անում Լուիզայի աչքերին նայելով: Ուսանողը նկատեց, թէ Լեւոնն անօրմալ էակ է, մի տեսակ հոգեկան հիւանդ: Նրա հասակի ու զգացումների մէջ չը կայ համերայնութիւն: Իսկ ուղեղը զարգանում է անկանոն: Այս նկատողութիւնը չափազանց վրդովեցրեց Կալալարօին: Չը խնայելով ուռւ լեզուի քերականական կանոնները, նա սկսեց հակաճառել.

—Հոգեկան հիւանդ, հոգեկան հիւանդ. վերջին ժամանակ, կարծես, գիտութիւնները հէնց նրա համար են սովորում, որ բոլոր տաղանդաւոր մարդկանց հիւանդ համարեն: Ո՛չ, պարոններ, իսկական հոգեկան առողջները հէնց Լեւոններն են: Միայն նրանք դժբախտ են, սինեօր ստուգենտ, հասկանում էք, դժբախտ, որ չեն ծընուած կեանքի բարեյաջող պայմաններում: Փոխանակ դիտնականօրէն բացատրելու այդ պատանիների հոգին, օգնեցէք նրանց—ահա ինչ: Մի թույնէք աղամանդը փողոցի ցեխի մէջ: Ասիտոս է Լեւոնը:

—Նա օրից օր հալւում է մոմի պէս,—շարունակեց Կալալարօն կարեկցաբար,—նրա կազմը նուրբ է, չէ կարող դիմանալ այդ տեսակ ապրուստի: Երբեմն գիշերը հազիւ անկողին պառկած, վեր է կենում, գնում կանգնում է կասսի առջև, առանց վերարկուի, մի քանի կոպէկ վաստակելու համար: Վաստակածի մի մասն էլ թատրոնի վրայ է ծախսում: Ահա վաղը սինեօրա Բարբինիի բենեֆիսն է: Դա նրա ամենասիրելի երդչունն է: Համոզուած եմ, որ այժմ իրան տանջում է, որպէս զի կարողանայ որ և է կերպ վաղուայ ցոյցերը գեղեցկացնել...

Հետեւեալ երեկոյ ես թատրոնումն էի: Նստած մի բարեկամ ընտանիքի հետ օթեակներից մէկում, նայում

էի դէպի վերնայարկ: Բազմաթիւ գլուխների մէջ, վերջապէս, տեսայ Լեոնին: Արմունկները պատնէշին յենած, գլուխն ափերի մէջ բռնած, աչքերը յառել էր բեմին: Նրա մի կողմում կանգնած էր բանաստեղծ Չաուչէնկօն, միւս կողմում Իցկօ Մարգուլիսը: Երբ բեմի վրայ երևաց երգչուհի Բարբինին, Լեոնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց: Նրան հետևեցին Չաուչէնկօն և Իցկօն, յետոյ վերնայարկի մի մասը: Նոյն վայրկենին մի քանի տասնեակ ձեռներ ձգեցին բեմի վրայ ինչ-որ սպիտակ ու կարմիր ծաղիկներ, նաև գոյնըգ-գոյն բարակ թղթի թերթիկներ: Գոյացաւ մի փանթաս-թիք անձրև: Պարտերը ակամայ յափշտակուեց, և ամբողջ հինգ րոպէ թատրոնը լծնդում էր բուռն ծափահարութիւններից: Վերցնելով իր գլխին տեղացող անձրեւից մի կաթիլ—մի ծաղիկ, երգչուհին սեղմեց սրբաին, անդադար գլուխ տալով աջ ու ձախ, յետոյ աչքերը բարձրացրեց դէպի վերնայարկ և օգային համբոյրներ ուղղեց պատանի երկրպագուներին: Այս աւելի ոգևորեց նրանց և աւելի զօրացրեց աղաղակներն ու ծափերը:

Լեոնն իր մարմնի կիսով դուրս էր եկել պատնէշի ետնից: Կարծես, ձգտում էր ծաղիկների հետ ընկնել երգչուհու ոտների տակ իբրև կենդանի զոհ դարուեստի:

Անցաւ առաջին գործողութիւնը, երկրորդը, երրորդը: Լեոնի օգևորութիւնը սաստկանում էր երգչուհու աջողութեան հետ զուգընթաց: Նա մերթ ծափահարում էր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում. «Էվիլ վա, բրավօ, բրավիսսիմօ»...

Վերջին գործողութեան կիսում յանկարծ չբացաւ Չաուչէնկօի և Իցկօի հետ, և մինչև ներկայացման վերջը չերևաց այլ ևս:

Դուրս գալով խուռն բազմութեան հետ փողոց, տեսայ հետևեալը.—Թուով երեսուն-քառասուն աստիկաններ կազմել էին մի ընդարձակ չրջան հեղեղուած

էլէքտրական ահագին լապտերների առատ լուսով: Թատ-
րոնից դուրս եկողները հաւաքւում էին շրջանի ետե-
ւում: Մուտքի մօտ մի կողմում խմբուած էին հարիւրի
չափ համալսարանական ուսանողներ, միւս կողմում կան-
գնած էին երկու կանոնաւոր շարքերի բաժանուած մի
խումբ պատանիներ տասնուհինգից մինչև քսան տարե-
կան: Միակ չափահասը նրանց մէջ Չաուչէնկօն էր: Նա
ձեռին պահած էր մի թերթ թուղթ:

Ուսանողներից մի տասը հոգի ձեռքերում բռնած
էին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկների, իսկ պատանի-
ները մի-մի վառ կերոն:

Տեսարանը գեղեցիկ էր, հետաքրքրական: Գիտէի
որ Լեոնը յետին դեր չէ կատարում նրա մէջ: Փաշուեցի
մի կողմ և աչքերով որոնեցի նրան: Դժուար չէր դու-
նելը: Նա կանգնած էր պատանիների շարքերից մէկի
գլխին, ձեռքին մի երկայն ձող, որի ծայրում վառւում
էր հաստ մոմի կտորը: Յուրա չէր զգում նա առանց
վերարկուի, նոյն իսկ առանց կրկնակօշիկների իր բա-
րակ պիջակում: Երևի, չէր զգում, թէ և եղանակը բա-
ւական ցուրտ էր: Նա յափշտակուած էր իր դերով, աշ-
խատում էր կարգ պահել պատանիների շարքում: Կե-
րոնների հրեղէն լեզուակները էլէքտրական ահագին
լապտերների լոյսի ներքոյ ներկայացնում էին դեղնա-
գոյն ազօտ բծեր, տկար որպէս աստղերը լուսնեակ
երեկոյ:

Լեոնի նիհար գէմքը ստացել էր մի տեսակ բաց-
մանիչակադոյն երանգ: Նա յիշեցնում էր դեկադենդ-
նկարչի քմահաճ վրձինի տարօրինակ ստեղծագործու-
թիւն: Սակայն այդ հիւանդոտ դէմքի վրայ աչքերը
փայլում էին յղկած պողպատի պէս: Չորս կողմից էլէք-
տրականութեամբ հեղեղուած—նրա մարմինը գետնի
վրայ չէր ձգում ստուեր. նա ինքը, կարծես, ստուեր
լինէր: Նրա շարժումները արագ էին, չղաճափական, լի
աւելանով: Երբ խօսում էր, նոյն իսկ հեռուից ինձ թը-
ւում էր, որ խօսում են նրա բոլոր նետրդերը, սրտի

բոլոր թելերը: Ահագին բազմութեան մէջ ձայնն ինձ չէր հասնում, բայց դրազ կը գայի, որ այդ ձայնը դողում էր հոգեկան բարձր հաճոյքից իր բոլոր ելեէջներով: Լեւոնը երջանիկ էր:

Երբ երգչուհին դուրս եկաւ թատրոնից երկրպագուններով շրջապատուած, Իցկօ Մարդուլիսը ամենից առաջ աղաղակեց. «ուռւն»: Չաուշէնկօն, դաւազանով յետ մղելով նրան, մօտեցաւ երգչուհուն ու տուեց նըրան իր ձեռքի թուղթը: Անշուշտ, այդ նրա ոտանաւորն էր յատկապէս օրուայ առիթով գրուած:

Լեւոնը գլխով վերցրեց և օգը դրեց: Նրա թանձր մաղերից երկու շերտ ընկան նուրբ ճակատի վրայ: Նրա օրինակին հետեւեց պատանիների ամբողջ խումբը: Երեւան եկաւ Չաուշէնկօի նեղ, երկայնաձեւ դլուխը հարթ, նօսր մաղերով: Եւ կիսամերկ, կիսաքաղցած պատանիների տհաս ձայները «բրավօ, բրավիսսիմօ» խառնուելով միմեանց, կարծես, սառան ձմերային ցուրտ օդում: Այդ վայրկենին ես անիծեցի մտքումս երջանիկ երգչուհուն, որ թէկուզ ակամայ խելքից հանել էր այդ մտադահաս էակներին և վտանգի էր ենթարկում նըրանք կեանքը. ո՞վ գիտէ, գուցէ և՛ հոգին: Միթէ, արդարեւ, գեղարուեստն այնքան անողոր է իր բարձրութեան վրայ, որ իր առջև ծունկ է չորեցնել տալիս նոյն իսկ անմեղութեանը:

Երբ երգչուհին մօտեցաւ թատրոնի առջեւ սպասող փառահեղ կարգին, մի քանի զոյգ ձեռներ սկսեցին արձակել ձիերը: Կարծեցի, թէ Լեւոնն է սկզբնապատճառը և շտապեցի մտքումս հայհոյել բարեկամիս: Սակայն ես դեռ լաւ չէի ճանաչում նրան: Նայեցի—չը կար ոչ լծուողների և ոչ լծողների մէջ: Դրանք բացառապէս ուսանողներ էին, որոնց թեթեւամտութիւնը, երեւի, անասնութեան էր հասնում:

Լեւոնի խումբը աջ ու ահեակ ուղեկցում էր կառքը վառ կերօններով: Երգչուհին մէկ-մէկ ընդունում էր ուսանողներից փնջերը, փետտում ու ծաղիկնե-

ըը սփռում պատանիների վրայ, իսկ ուսանողներին վարձատրում օգային համբոյրներով:

Ճեղքելով ամբոխը, ես մտեցայ բարեկամիս:

— Ան, դուք էլ այստեղ էք, — դռնից նա հեւալով — լսեցիք, ինչպէս երգեց, լսեցիք...

— Այո, Լեւոն, հիանալի երգեց: Բայց այդ ուսանողները... Ի՞նչ են անում... Միթէ դու հաւանում ես...

— Աստուած մի արասցէ:

— Մենք անասուններ չենք, — ասաց Իցկօ Մարգուլիսը:

— Այո, մենք մարդիկ ենք, — դռնից Չաուշէնկօն վրդովուած. — էյ, պարոնայք ստուգենաներ, մի ձգէք ծեր մունդիլի վարկը. էյ, պարոններ, ամօթ է...

— Մտիկ արէք, մտիկ արէք, — դռնից Լեւոնը, — ինքըն էլ չէ հաւանում, ուղում է ի՞նչել կառքից... բայց ո՛չ, չէ ի՞նչում... Աս... Վիտեա, Պեդրօ, Մերգէլ. Խոյս, հանգցրէք կերոնները... Ո՛չ, ո՛չ, ո՛չ, պաասեցէք... Նա ի՞նչում է կառքից... Ի՛ջաւ, ի՛ջաւ... Ձիերը լծում են... Կարճսսիմօ, կեցցէ Բարբինի. էվի՛վա, բրա՛վօ, բրավիսսիմօ, առա՛ջ, առա՛ջ...

Եւ, կերոնը բարձրացրած, աղաղակներով, չքացաւ ամբոխի մէջ իր հրէայ ու յոյն ընկերների հետ... Նրանց հետեւեց Չաուշէնկօն, լայն վերակուլի փէշերը օդի մէջ փռւաւացնելով պատառոտուած առաջաստների պէս...

Ես տուն վերադարձայ ծանր տպաւորութեան տակ: Այդ գիշեր երազումս տեսայ Լեւոնի հօրը: Թշուառ վարսավիր: Նա հարբած, կեղտոտ ու պատառոտուած հագուստում շնթռկել էր թատրոնի մուտքի առջեւ: Անցորդները հեգնում ու ծիծաղում էին նրա անյոյս սէրը, որ, ո՛վ գիտէ, դուցէ առաջացել էր գեղարուեստի սիրուց: Այսպէս էի ես միշտ պատկերացնում վարսավիրին, այսպէս էլ տեսայ նրան երազումս...

Զարթնելով, փափագ դգացի Լեւոնին տեսնելու: Բարձրացայ վերեւ ծանր չէր: Մայրն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և գանգատուեց, թէ գիշերը տուն

է վերադարձել երեք ժամին: Այսօր զարթնել է թէ չէ, իսկոյն անկից դուրս է եկել:

—Պարոն,—աղերսեց այրին,—դուք կարող էք նրան խելքի բերել: Նա սիրում է ձեզ, կը լսէ ձեր խօսքը: Նա գնում է հօր ճանապարհով: Վերջը իրան հարբեցողութեան կը տայ և շան պէս կը թաւալուի փողոցներում:

—Նա այդ չի անիլ, խելօք է:

—Ա՛խ, պարոն, կարծում էք հայրը յիմար էր: Ո՛չ, նա էլ խելօք էր: Բայց խելքից հանեցին, օրս սևացրին: Ամուսնուս ձեռքիցս խլեցին, չեմ ուզում որդուս էլ խըլեն... Պարոն, օգնեցէք, ես մայր եմ: հասկանո՞ւմ էք, մայր...

Այո, մայր էր այդ կինը, գիտէի, որ սիրում է որդուն ու տանջւում նրա պատճառով: Այժմ խղճում ու մինչև անգամ ցաւակցում էի նրան. բայց դարձեալ անախորժ էին ինձ համար նրա անվերջ դանդառները, նրա ետամիջ հոգացողութիւնը որդու համար:

Կէսօրից յետոյ կրկին բարձրացայ վերև: Այս անգամ Լևոնը տանն էր, բայց անկողնում պառկած: Նրա վտիտ այտերի վրայ նշմարեցի անսովոր կարմրութիւն: Բռնեցի բազուկը, երակը զարկում էր ուժգին: Անշուշտ երէկ մրսել էր: Բայց չէր յանձն առնում հիւանդութիւնը: Նա ուրախ էր. օգտուելով մօր բացակայութիւնից, յայտնեց իր ուրախութեան պատճառը: Բարձի տակից հանեց մի լուսանկար և, ցոյց տալով, հարցրեց.

—Ճանաչո՞ւմ էք:

Այդ երեկուայ երջանիկ երգչուհու լուսանկարն էր: «Իմ սիրելի արտիստին», կարդացի լուսանկարի ճակատին:

—Ամենքն էլ ինձ արտիստ են կոչում,—ասաց Լևոնը,—չը գիտեմ ինչո՞ւ: Այսօր գնացել էի նրան շնորհաւորելու երեկուայ աշողութեան համար...

Ծաղիկներ էի տարել: Հրաւիրեց ներս, կաֆէով հիւրասիրեց: Բաւական խօսեցինք... հարցնում էր, ինչ-

բան եմ վաստակում: Խաբեցի, ասացի հայրս ժառանգութիւն է թողել: Վախենում էի, որ փող առաջարկի ինձ: Նա նուիրեց ինձ իր լուսանկարը: Ես համբուրեցի նրա ձեռք, նա էլ իմ ճակատը: Օ՛հ, սինեօր, ես շատ երգչուհիներից ունիմ այդպիսի նուէրներ, ահա, այն այլբօմը լիքն է...

Եւ այս վարձատրութեամբ նա գոհ ու երջանիկ էր: —Բայց ես մի լուսանկար ունեմ,—շարունակեց նա,—այլբօմում չեմ պահում: Մայրս սպառնում է բոլորն այրել, վախենում եմ այս մէկն էլ այրի... Իսկոյն ցոյց կը տամ...

Նա բարձրացաւ տեղից, պիջակի դրպանից հանեց մի ծրար, ծրարի միջից թանկագին լուսանկարը: Ես կարդացի հետեւեալ մակագիրը. «Իմ ապագայ երկրպագուին—Լուիզա»:

—Օ՛հ, ճիշտ է, բոլորովին ճիշտ, սինեօր: Ես նրա ապագայ երկրպագուն կը լինեմ: Լուիզան փայլուն ապագայ ունի. կը տեսնէք, սինեօր, կը տեսնէք... Բայց այս ի՞նչ է, գլուխս պտտեց, պառկեմ...

Երբ Թիկին Ալմաստը—Լեոնի մայրը—ներս մտաւ, խորհուրդ տուեցի բժիշկ հրաւիրել: Լեոնը գլուխը բարձրացրեց, նստեց անկողնում: Ի՞նչ բժիշկ, ո՞վ է հիւանդ, հարկաւոր չէ բժիշկ... Ես հասկացայ նրա միտքը. վախենում էր, որ բժիշկն արգելի նրան տնից դուրս գալ: Նա չէր ուզում զրկուել թատրոնից նոյն իսկ մի երեկոյ:

Երեկոյեան եօթ ժամին երրորդ անգամ բարձրացայ վերեւ և նրան չը տեսայ: Տիկին Ալմաստն ասաց, թէ իմ դուրս գալուց յետոյ թագուն հագնուել է ու փախել...

Անմիտ պատանի. նա վտանգի էր ենթարկում իր կեանքը: Ես իսկոյն դուրս եկայ փողոց. գիտէի ուր կալող է լինել: Հանդիպեցի նրան թատրոնի մուտքի առջև:

—Պարոններ, չէ՞ք կամենում պրօգրամ գնել,—դի-

մում էր նա անցորդներին, առաջարկելով նոյն օրուայ ներկայացման ծրագիրը:

Մարդիկ անցնում էին անտառեր, անգամ չը նայելով նրան, իսկ ոմանք կոպտութեամբ գոռում էին. «Գնա՛, կորիր»: Եւ Լեոնի հպարտ հոգին կրում էր այդ վիրաւորանքները համբերութեամբ: Իմ սիրտը մորմորուեց, երբ նայեցի նրա կապտած դէմքին:

— Գնա՛ տուն, գնա — խնդրեցի ես, — դու բոլորովին հիւանդ ես...

— Ո՞վ ասաց հիւանդ եմ: Մայրս: Նա միշտ կամ իրան է հիւանդ երեւակայում կամ ինձ: Այս երեկոյ նոր օպերա է ներկայացւում, ես տո՛ւն գնամ: Ո՛չ, սի-նեօր, ահա՛ իմ տունը...

Նա ցոյց տուեց թատրոնը և ժպտալով հեռացաւ: Հեռուից լսում էի նրա ձայնը:

— Պարո՛ն, պրօգրամ, պրօգրամ: չէ՞ք կամենում, նոր օպերա է, հետաքրքրական, պրօգրամ, հատը տասը կոպէկ...

Միւս օրը առաւօտեան դարձեալ բարձրացայ վերև և էլի նրան անկողնում տեսայ: Մի և նոյն տանը բնակւում էր մի հրէայ բժիշկ: Շտապեցի նրան հրաւիրել: Քննեց հիւանդին, գրեց ինչ-որ դեղ: Երկու օր հաղիւ կարողացանք Լեւոնին տանը պահել, երկրորդ երեկոյ լաց եղաւ, երբ արգելեցինք թատրոն դնալ: Բարեբախտաբար երրորդ օրը տաքութիւնն անցաւ:

Ձմերային սեզօնը վերջացաւ: Իմ հարեւան արտիստները հէնց մեծ պատի առաջին օրը ուղեւորուեցին իրանց հայրենիքը: Այդ օրը տխուր օր էր ոչ միայն Լեւոնի, այլ և ինձ համար. այնքան արդէն վարժուել էի հարեւաններին շրջանին:

Մենք մինչև կայարան ուղեկցեցինք իտալացիներին: Հրաժեշտ տալիս Կալալարօն երեք անգամ բարեկամաբար համբուրուեց Լեւոնի հետ...

Հէնց նոյն օրը Լուիզան ինձ ասաց, թէ ինքն էլ ամենաուշը մի ամսից ուղեւորուելու է Իտալիա: Հարցր

վճռուած էր. սինեորա Ստեֆանիան վաղուց էր հաշտուել աղջկանից բաժանուելու մտքի հետ:

Երբ յայտնեցի Լեւոնին Լուիզայի ուղեւորութեան մօտալուստ ժամանակը, ինձ այնպէս թուաց, որ լուրը նրա վրայ առանձին տպաւորութիւն չը գործեց: Գուցէ այդ նրանից էր, որ նոյն օրերը նա առհասարակ շատ տխուր էր տրամադրուած: Մեծ պասի առաջին շաբաթըն էր, թատրոնները փակ էին: Լեւոնն ամեն օր գրնում էր քաղաքային թատրոնի շուրջը գտնուող գեղեցիկ պարտէզը, նստում այնտեղ ու նայում հսկայական շինութեանը: Յետոյ, գլուխը կրծքին թեքած, ով գիտէ ինչ խորհրդածութիւնների մէջ, վերադառնում էր տուն: Նա նորսգել էր տուել մօր ձեռքով լուսամտից փողոց չպրտուած կիթառը, նուագում էր: Երբեմն գալիս էր ինձ մօտ և իմ առաջարկութեամբ մանդօլինա նուագում: Մի անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադրիդի շրջմուլիկը» — մերժեց:

Օպերային փոխարինեց դրաման: Մեծ պասի առաջին կերակիւից սկսուեցին ներկայացումները: Լեւոնը մշտաւ իր դերի մէջ, բայց ոչ նախկին սիրով. դրաման օպերայի չափ չէր սիրում, մանաւանդ որ եկուոր խմբի մէջ չը կային գրաւիչ ոյժեր: Սակայն պատանուն պաշարել էր ուրիշ տեսակի աշխոյժ, որ ինձ անհանգստացնում էր: Նա ամեն օր գալիս էր ինձ մօտ, վերցնում մանդօլինան, նստում լուսամտի մօտ, նուագում «Մադրիդի շրջմուլիկը»: Երբեմն յանկարծ ընդհատում էր նուագումը, մանդօլինան շտապով դնում սեղանիս վրայ ու դուրս վաղում: Նա գնում էր Լուիզայի մօտ, նստում և երկար ու երկար հարց ու փոք ճանում առաջիկայ ճամբորդութեան մասին: Եւ բարեսիրտ Լուիզան երբէք չէր ձանձրանում նրա հարցերից, որովհետեւ նրա համար հաճելի էր խօսել իր ապագայի մասին:

— Գիտէ՞ք, — դարձաւ ինձ մի անգամ Ռախսոն, — նա ուղղակի սիրահարուած է Լուիզայի վրայ: Այո՛, կարող եմ երգուել, որ սիրահարուած է:

—Ձգոյ՛ջ եղէք, օրիորդ,—ասացի ես,—Լեոնը կը լսի ու կը վշտանայ:

Ես յիշեցի թշուառ վարսավիրին և վախեցայ, մի գուցէ որդին ենթարկուի հօր վիճակին: Բայց, բարեւ բախտաբար, Լուիզայի շրջապատողները աւելի խելացի էին, քան այն երգչուհու շրջանը, որի վրայ սիրահարուած էր եղել վարսավիրը: Ռաիսան խօսք տուեց ինձ այլ ևս չը խօսել Լեոնի նուիրական զգացումների մասին...

Հասաւ, վերջապէս, օրիորդի ուղևորութեան օրը: Մի շաբաթ էր Լեոնն անճանաչելի էր դարձել. նա ուրախ էր ու զուարթ: Կարծես, ինքն էր պատրաստուում ճանապարհորդելու: Գնում էր, դալիս, խօսում, զուարթ ճախօտում: Չը գիտէր ինչ անէր Լուիզայի սիրալը շահելու համար: Ուղևորութեան նախընթաց երեկոյ Լուիզան, ցոյց տալով մի արծաթէ դրչակով, ասաց.

—Տեսէք ինչ խելագարութիւն է արել ձեր հայրենակիցը: Չէ՞ որ այս նրա մի շաբաթուայ աշխատանքի վարձն է:

—Նա նուիրել է ձեզ այդ գրիչը, որ նամակներ գրէք իրան,—ասացի ես:

—Այո՛, և ես կը դրեմ նրան: Խնդրեցի նրան յետ վերցնել նուէրը—վիրաւորուեց, քիչ մնաց լաց լինի:

Գնացքն ուղևորւում էր առաւօտեան տասը ժամին: Մենք, սինեօրա Ստեֆանիայի բոլոր կենողներս, գնացինք կայարան Լուիզային ճանապարհ դնելու: Կարծում էի, Լեոնն ամենից առաջ եկած կը լինի այնտեղ: Սակայն նա չը կար և չերևաց երկար ժամանակ: Այս անպատելի էր. ինչը կարող էր խանգարել նրան վերջին անգամ տեսնելու Լուիզային:

Սինեօրա Ստեֆանիան ինձ հաղորդեց, թէ Կալալ-լարօից մի շատ սիրալիր նամակ է ստացել: Երգիչը ուրախութեամբ յանձն է առնում հոգալ Իտալիայում Լուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը:

—Նա շատ աղնիւ մարդ է,—աւելացրեց տանտիրուհին ուրախ-ուրախ,—հարազատ եղբօր պէս կը նայի

Լուիզային: Ես աղջկանս բաց չէի թողնիլ, եթէ չը լինէր
Կավալլարօն...

Երբէք Լուիզային այնչափ զուարթ ու զուարճախօս
չէի տեսել, որչափ այդ օրը, չը նայելով որ մինչև
կայարան գալը երկու անգամ արտասուել էր մօրից բա-
ժանուելու պատճառով: Մի վայրկեան անգամ չէր հան-
գըստանում, թռչկոտում էր, ինչպէս եօթ տարեկան
աղջիկ, քրքրում էր, ճրճուում իր ճամբորդութեամբ: Ա-
մենքիս հետ կատակներ էր անում և բոլորին խոստա-
նում առանձին-առանձին նամակ գրել: Նա լի էր ա-
պագայի վերաբերմամբ քաղցր յոյսերով և այդ յոյսերը
չէր թագցնում մեզանից: Մի երկու տարուց յետոյ կը
վերադառնայ մշակուած, կատարելագործուած ձայնով,
կը սկսի երգել օպերայում: Տեսէք, ինչպիսի աշուղութիւն
կ'ունենայ, ճրքան երկրպագուներ:

«Իսկ նա, անցաւ մտքովս ակամայ. նրա մասին չեմ
մտածում»:

— Բայց ուր է Լեօնը, — հարցրեց Լուիզան յանկարծ,
կարծես, գուշակելով իմ միտքը. — ահ, իմացայ ինչո՞ւ
համար է ուշանում: Ռիշիլէի փողոցով անցնելիս տեսայ
նրան ծաղկավաճառի խանութում: Այդ պատանու սիր-
տը ովկիանոս է, ընդարձակ... Ահա նա, գալիս է...
Տեսէք ինչ է բերում, չէի ասում... Անուղղելի...

Ճեղքելով կայարանի ամբօխը, Լեօնը մօտեցաւ մեզ
մի գեղեցիկ փունջ ձեռին: Շատ վաղելուց քրտնել էր
ու սաստիկ հեղում էր: Դիմելով ուղղակի Լուիզային,
գդակը վերցրեց և գլուխ տալով, փունջը ներկայացրեց:

Արդէն լաւ ճանաչելով նրան, ես վախեցայ միայն
մի բանից — Լուիզայի յանդիմանութիւնից: Եթէ օրիոր-
դը ամենաթեթեւ ակնարկ անգամ անէր, թէ այդպիսի
մի նուէր բոլորովին չէ համապատասխանում Լեօնի աղ-
քատ գրպանին, գիտէի, պիտի չարաչար վիրաւորէր
նրան: Բայց նա նրբազգաց գտնուեց. իսկոյն ըմբռնեց
Լեօնի հոգեբանութիւնը և այնպէս յայտնեց իր շնոր-

հակալուծիւնը, այնպէս ժպտաց հօտ քաշելով փնջից, այնպէս գոլեց նուէրը, որ պատանու այտերը կարմրեցին ներքին հաճոյքից:

Այդչափ սրտագէտ չը գտնուեց Ռախսան. նա հարցրեց Լուիզային.

— Կավալլարօն քեզ դիմաւորուելո՞ւ է Միլանում:

— Այո՛, — պատասխանեց սինեօրա Ստեֆանիան:

— Մի՞թէ նա այնտեղ է, — հարցրեց Լեօնը յուզուած դողդոջուն ձայնով:

— Նա եկել է Միլան յատկապէս Լուիզային դիմաւորելու համար, — պատասխանեց սինեօրա Ստեֆանիան մի առանձին հաճոյքով:

Այն հոգեկան հաճոյքը, որ մի ժպտով Լուիզան պատճառել էր Լեօնին, վայրկենաբար չքացաւ, տեղի տալով գաղտնի նախանձի կրծող կրքին: Բայց Լեօնը գիտէր զսպել իրան չափահաս տղամարդու պէս: Նա սասաց.

— Այդ լաւ է: Սինեօր Կավալլարօն կ'օգնի սինեօրինա Լուիզային:

Երկրորդ զանգակի միջոցին Լուիզան սկսեց վերջին հրաժեշտը տալ: Նա արաւ աւելի, քան կարելի էր սպասել նոյն իսկ նրա նման մի բարի, հասարակ և պարզասիրտ օրիորդից, որ վարակուած չէր նախապաշարումներով: Ազատուելով մօր գրկից, ամենից առաջ Լեօնի ձեռն առաւ և... համբուրուեց նրա հետ պարզ ընկերական կերպով: Յետոյ, շտապ-շտապ սեղմելով մեր ձեռները, փունջը ձեռին բարձրացաւ կառախումբ:

Նա դիտում էի Լեօնին: Նա բեկուտել էր նոյն տեղում, ուր արժանացաւ Լուիզայի հրաժեշտի համբոյրին և նայում էր այն լուսամտին, ուր պիտի երեւար օրիորդը: Բնազդաբար բռնեցի նրա թեւից և մի փոքր հեռացրի կառախմբից...

Ահա երեւաց Լուիզայի զուարթ գէմքը լուսամտից: Նա օգային համբոյրներ էր ուղարկում մեզ: Մի քանի րոպէ ևս, լսուեց երկրորդ զանգակը, և կառա-

խումբը կամացուկ շարժուեց, այնպէս անաղմուկ որ կարծես նաւ էր լողում: Այն ժամանակ միայն Լեւոնը սթափուեց և, գլխարկը բարձրացնելով, գոչեց իտալերէն.

—Բարի ճանապարհ... Յտեսութիւն... Շուտով...

Տուն վերադարձանք երկուսս միասին ձիաքարշով: Ճանապարհին Լեւոնը մի բառ անգամ չարտասանեց: Լուռ էի և ես. չէի կամենում ընդհատել նրա մտքերի թելը: Թէ նա տանջւում էր, այդ պարզ էր ինձ համար, թէ նա երջանիկ էր Լուիզայի համբոյրով—այդ էլ երեւում էր: Բայց թէ ինչ էր մտածում, այդ չիմացայ. երեւում էր միայն, որ նրան զբաղեցնողը սովորական մի միտք չէ...

Ես հրաւիրեցի նրան սենեակս: Ինչ-որ պատճառով հրաժարուեց գալ: Արագ-արագ բարձրանալով վերեւ, չբացաւ հինգերորդ յարկի բարձրութեան մէջ:

Այդ օրից աւելի քան մի շաբաթ անցաւ, ես նրան չը տեսայ: Ինքը չէր գալիս սենեակս, իսկ ես բարձրանում էի վերեւ և միայն մօրը հանդիպում:

—Ուշ գիշերին տուն է գալիս, երբ ես քնած եմ, առաւօտը գնում է, երբ քնած եմ: Բայց լաւ սրտի է, ամեն օր սեղանի վրայ թողնում է յիսուն կոպէկ ողորմութիւն... Անիծուի՛ նա...

—Տիկին,—գոչեցի ես բարկացած, բոլորովին համբերութիւնից դուրս գալով այրիի անվերջ անէծքներից. —նա ձեր ծախքը տալիս է, հերիք է, էլ ի՞նչ էր ուզում...

Խեղճ կինը ապշած նայեց երեսիս ու մի քայլ յետ դրեց: Երեւի, շատ էի բարկացած և նա չէր սպասում իմ կողմից այդչափ կոպտութիւն: Ես զղջացի. ինչ և լինէր—նա դժբախտ էր, գոնէ այդպէս էր համարում իրան:

—Հետաքրքրուե՛լ էք, արդեօք, ուր է գնում ամեն օր,—հարցրի ես, ձայնս մեղմացնելով:

—Շատ էլ հետաքրքրւում եմ, որ չէ ասում: Կի-

Թառն էլ ամեն օր հետը տանում է: Բայց ես կ'իմանամ, ուր է գնում, կ'իմանամ: չեմ թողնիլ որ կորչի հօր պէս...

Ջարմանալին այն էր, որ թատրոնների շուրջն էլ չէի հանգիպում Լեւոնին: Ես կատարելապէս տխրում էի առանց նրան, մանաւանդ որ սինեօրա Ստեֆանիայի սեղանատունը զրկուել էր իր հրապոյրից: Սյնտեղ այլ ևս չէին հնչում Լուիզայի մետաղային ձայնն ու վարակիչ ծիծաղը: Սինեօրա Ստեֆանիան նրա ուղեւորութեամբ հէնց երկրորդ օրը գաշնամուրը վերադարձրել էր երաժշտական խանութ, ուսկից վերցրած էր ամսավարձով: Չը կար ոչ նուագող, ոչ երգող, ոչ ծիծաղող: Ռաիսան և ուսանողը մտերմացել էին ու զբաղուած էին իրանց մտերմութեամբ: Աւարտելով ճաշը, նրանք շտապում էին հեռանալ իրանց սենեակները:

Ես ուրախութեամբ կը տեղափոխուէի մի ուրիշ բնակարան, եթէ չը խանդարէր Ստեֆանիայի դրութիւնը: Նրա սենեակների մեծ մասը դատարկ էր, եթէ ես էլ դուրս գայի, խեղճ կ'ինը պիտի փնտռէր:

Մի անգամ ճաշից յետոյ բուլվարումն էի: Այստեղից բացւում է Օդեսայի գեղեցիկ տեսարաններից մինը: Մօտ երկու հարիւր ոտնաչափ բարձրութիւնից երեւում են ամբողջ նաւահանգիստն ու ծովածոցը իրանց հազարաւոր նաւերով: Ես վաղուց էի կշտացել այդ տեսարանից: Նստած ամբոխից հեռու մի առանձնակի նստարանի վրայ, երաժշտութիւն էի լսում: Ակամայ յիշում էի Լեւոնի մանգօլինան, որ տասն օր էր որբացել էր սեղանիս վրայ: «Ո՛ւր է նա այժմ», հարցնում էի ինքս ինձ, և հարցը մնում էր հարց:

Բօն ժուր, մօսեօ,—լսեցի մի թոյլ թոքախտաւոր ձայն:

Գլուխս բարձրացրի և իմ առջև տեսայ Չաուչէնկօին, Իցկօ Մարգուլիսի հետ: Այս հանդիպումը ինձ ուրախացրեց: Ես սեղմեցի նրանց ձեռքը և իսկոյն հարցրի Լեւոնի մասին:

Չառչէնկօն հաստ գաւազանը բարձրացրեց լայն վերարկուի տակից և ցոյց տալով նաւահանգիստը, թատրոնական եղանակով ասաց.

—Այնտեղ է:

—Չառչէնկօ, ինչո՞ւ այսօր ձեւերդ տրագիքական են,—ասաց Իցկօն:

—Որովհետեւ, սիրելի ջհուգիկս, այնտեղ է կատարուում կեանքի տրագետիան: Մարդիկ տանջուում են ու մեռնում խաւարի մէջ: Գնանք, տար ինձ այնտեղ, Իցկօ: Չառչէնկօն արիստօկրատ բանաստեղծներից չէ, որոնք խորշում են ամբօխից: Մաքսիմ Գօրգիլի գրածները չես կարդացել, Չառչէնկօյինը կը կարդաս: Ութ տարի ուսումնասիրել եմ արճիճային աշխարհը. այժմ ուզում եմ ուսումնասիրել նաւահանգստի ամբօխը: Գընանք, պարոն,—դարձաւ նա ինձ.—դուք էլ գրող էք, դնանք, մի ամաչէք:

—Գնանք, ուր որ ուզում էք, միայն թէ Լեւոնին ցոյց տուէք:

—Իցկօն մեզ կ'առաջնորդէ: Նա խաւարի ծնունդ է: Հայրը նաւահանգստում հին լաթեր ու երկաթ է ժողովում, պիտի իմանայ խաւար աշխարհի բոլոր խորշերը... Իր ձեռքի ափի պէս:

—Իսկ դու պիտի լուսաւորես այդ խաւար աշխարհը ահա դրանցով,—ասաց Իցկօն, զարկելով բանաստեղծի ձեռքի գրքոյկներին:—Քանի՞ օրինակ ես վերցրել: Տասը: Կը խարջենք, միամիտ կաց: Նո՛ւ, չիմբա-չիմբա, չիլալա... Չառչէնկօ, չիլալա...

Նա ձախ ոտը բարձրացրեց և, աջ ոտի վրայ ոստ ոստալով, վազեց առաջ:

Օդեսսայի նաւահանգիստը քաղաքի հետ միացրած է մի հսկայական քարէ սանդխտով, որի բարձրութեան վրայ բուլվարի մէջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիչիլիէի արձանը, իսկ ստորոտում կառուցուած է մի փոքրիկ եկեղեցի նաւահանգստի բնակչութեան համար: Մենք իջանք այդ սանդխտով, մտանք մի աղեղ-

նաձև լայն փողոց: Այդ վերջին փողոցն է դէպի ծովափը, այնուհետև ամբողջ նաւահանգստի երկայնութեամբ բարձրանում է «էսթակադան» — երկաթուղու բեռնակիր գծացքների համար կառուցուած կամուրջը: Գիշերօթերեկ այս հսկայական կամրջի վրայով սուլելով անցնում են շոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկայն շարքերը, իսկ ներքև, բաղմաթիւ կամարների տակով անց ու դարձ են անում բեռնակիր սայլեր, նաւաստիներ, բանուորներ: Այդ — մի աղմկալի վայր է, մի բարդ հանգոյց ծովային և ցամաքային կեանքերի միջև: Շոգենաւերի թանձր ծովից, նաւաստիների կոշտ ձայները, էսթակադայի խուլ թնդիւնները գնացքների ծանրութիւնից, կայարաններում կուտուած քարածխի փոշին — այս բոլորը ընդհանուր առմամբ անսովոր մարդու վրայ ճնշող տպաւորութիւն են գործում:

Իցկօ Մարգուլիսը մեզ առաջնորդեց քարածխի փոշիով ծածկուած փողոցի խորքը: Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարիւր քայլ դէպի աջ, մեր առջև բացուեց օղետների, ստորին տեսակի թէյատների ու պանդոկների մի ամբողջ աւան: Այստեղ էր վխտում նաւահանգստի բնակչութեան մեծ մասը: Պանդոկներից լսում էին հարմօնիայի և ռուսական ողորմելի «բալալայկա»-ի հընչիւնները ամբօխի աղաղակների, երգերի, գոռումգոչիւնների, յիշոցների ու անէծքների հետ: Նրանք, որոնք ժամանակ ու միջոց ունէին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում, վայելելով էփանադին հուրիւների ընկերութեան հաճոյքը: Իսկ նրանք, որոնք միայն խմելու համար փող ունէին, մտնում էին Մօնօպօլի» կրպակները: Այստեղ վերցնելով կնքուած շիշերը, դուրս էին գալիս փողոց և բովանդակութիւնը դատարդում իրանց բերանները: Օղին արգելւում է խմել «Մօնօպօլի» կրպակներում, ուստի հարբեցողութիւնը, որ առաջ քիչ թէ շատ ամօթ ունէր, թագնւում էր օղետների պատերի մէջ, այժմ թագաւորում էր փողոցում ամենայն համարձակութեամբ: Եւ ահա նրա ողորմելի

ղոհները թաւալուած էին կրպակների առջև, մայթերի վրայ, փողոցի մէջտեղում—սայլերի ու կառքերի տակ շարդուելու վտանգին ենթակայ:

Իցկօն կանգ առաւ մի մեծ պանդուկի առջև, որի դռների ճակատին դրուած էր. «Արքայական Եախտա»:

—Ահա այստեղ է Լեւոնը,—ասաց նա.—անցեալ շաբաթ «Ոսկէ խարխուլումն» էր նուագում:

—Հը՞մ,—արտասանեց Չաուչէնօն, դառնալով ինձ, —տատանւում էր: Վախենում էք մտնել: Քիչ եղէք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա գաւազանը բարձրացրեց և յաղթական քայլերով մտաւ Իցկօի հետ պանդուկ: Ես մի քիչ նրանից լաւ էի հագնուած: «Աղա» չը համարուելու համար, վերարկուիս օձիքը բարձրացրի, գլխարկիս եզրը քաշեցի աչքերիս, յուսալով, որ ամենաշատը յոյն որմնագիր կը համարեն ինձ:

Պանդուկը լի էր յաճախորդներով: Առաջին պահ ոչինչ չը կարողացայ որոշել, այնքան մթնոլորտը տոգորուած էր ծխով, փոշիով ու կերակուրների շոգիով: Դըժուար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչիւնների ու հայհոյանքների մէջ մի բան հասկանալ: Այցելուների մի մասը խմուել էր բուֆէթի առջև, որ դտնուում էր ուղիղ մուտքի դիմաց: Մենք հրհրուում էինք այս ու այն կողմ: Չաուչէնկօի նիհար մարմինը պնդակազմ նաւաստիների ուսերի հարուածներից տաշեղի պէս թռչկոտում էր: Երբեմն նա իրան դիմող մէջքերին դէմ էր տալիս գաւազանի կոթը, ինքը յետ կանգնում: Իցկօն, իր փոքրութեան շնորհով, կատուի ճարպկութեամբ սլկւում էր առաջ մարդկանց արանքով: Ես հազիւ էի կարողանում քիթ ու պոտնդս ազատ պահել օդի մէջ անխմստ շարժուող ձեռների ու արմունկների պատահական հարուածներից:

Մենք անցանք երկու շարք կեղտոտ ու մերկ սեղանների միջով, որոնց շուրջը նստած էին նաւաստիներ

և երկաթուղու ծառայողներ: Մի բիթը ուռած, կարմրած, աչքերի տակերը կապտած կին, ինձ տեսնելով, գոչեց.

— Էյ, բասուրման, արի միասին «տրեպակա» պարենք:

Ես հազիւ կարողացայ աղատուել նրա սիրալիր թեւերից, որ բացուել էին ինձ գրկելու համար: Չառչէնկօն, գլուխը փիլիսոփայօրէն շարժելով, արտասանեց.

— Թռչուն, ուր է քո փետուրը:

— Քեռի Սիդօրի կատուն պոկոտել է,—ասաց Իցկօն ծիծաղելով:

Քեռի Սիդօրը «Արքայական Եախտայի» տէրն էր, կատուն—օղին:

Վերջապէս, հասանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկիւն, ուր մեր կողերը ջարդուելու վտանգից աղատուեցին: Այստեղ մի երկայն սեղանի քով նստած էին տասնի չափ նաւաստիներ: Սեղանը ծածկուած էր կեղտոտ ամաններով, հացի կտորներով, ուտելիքների ու ծխախոտի ֆնացորդներով, գարեջրի և օղու շիշերով ու բաժակներով:

— Ահա և ձեր արտիստը,—ասաց Իցկօն, ցոյց տալով սեղանի ծայրը:

Այնտեղ նստած էր Լևոնը: Նա կիթառ էր նուագում և զուարճացնում սեղանակիցներին: Չը նայելով իր չքաւորութեանը, ես մինչև այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել: Գոնէ չապիկը միշտ անարատ էր, ձեռներն ու երեսը մաքուր, կօշիկները վաքսած, փայլուն: Իսկ այժմ նա նմանում էր գործարանական բանուորի:

Իմ երևալը նրան զարմացրեց: Նա չընդհատեց նուագումը, բայց չափազանց շփոթուեց, կարմրեց: Նաւաստիները նրան լսում էին ուշադիր, թէև արդէն բոլորն էլ հարբած էին: Իրանց հիացմունքը արտայայտում էին գոռում-գոչիւններով: Երբեմն մէկը կամ միւսը վեր էր կենում, գրկւում ու համբուրւում նրա հետ կամ, մէջքին զարկելով, արտասանում էր.

—Մալադեց, Լեվա, մալադեց...

Ձառուչէնկօն մեզ հրաւիրեց նստել մի դատարկ սեղանի քով, ասելով թէ Լեոնին չէ կարելի խանգարել, նաւաստիները կը կատաղեն։ Մի շիշ գարեջրի պատրուակով կարելի էր նստել, և մենք նստեցինք։ Լեոնը շարունակ մեզ էր նայում ու ժպտում։ Այդ տասն օրուայ ընթացքում նա աւելի նիհարել էր ու թորչումել։ Առաջին անգամ այդ օրը նրա բերանի անկիւններում նկատեցի թեթեւ խորշեր։

Սեղանի մօտից վերկացաւ լայն թիկունքով ու մեծ միրուքով մի նաւաստի և օրօրուելով մօտեցաւ Լեոնին։ Ձեռք դնելով պատանու նիհարիկ ուսի վրայ, գոչեց.

—էյ, ճպուռ, նուագելո՛ւ ես ինձ համար՝ «Ո՛հ, իմ վիշտ» թէ չէ. ես ուզում եմ՝ «Ո՛հ, իմ վիշտ» լսել։

—Տեղդ նստիր, էյ, Սիբիրի Ռեխ, —գոչեցին ընկերները, —մի խանգարիր Լեվային։

—Ձեմ նստիլ, մինչև որ չը լսեմ՝ «Ո՛հ, իմ վիշտ»։ «Ո՛հ, իմ վիշտ», Լեվա, Լեվա, «Ո՛հ, իմ վիշտ»։

—Յիմարի գլուխ, —նկատեց մէկը, —Լեվան հէնց «Ո՛հ, իմ վիշտ» է նուագում։ Ձե՛ս լսում, անճառ...

—Լեվա, սուտ չէ՞ ասում։

Լիվան գլխով հաստատեց, թէ նուագածը հէնց «Ո՛հ, իմ վիշտն» է։

—Սատանան տանի, —գոռաց Սիբիրի Ռեխը, —ինչ լաւ էիր նուագում։ Լսեցինք, լսեցինք. հիմա նուագիր «Դունայի գեղեցկուհի»։ Լեվա, Լեվա, «Դունայի գեղեցկուհի»։

—Այ բեզ «Դունայի գեղեցկուհի», —ասաց մի յաղթանդամ և ետեւից ձեռները գցելով Սիբիրի Ռեխի կռների միջով, փորը դէմ տուեց մէջքին, բարձրացրեց ու բերեց, նստացրեց իր տեղը։

—է՛յ դու Կալուգայի Արջ, ինչպէս համարձակուեցիր, —գոռաց Սիբիրի Ռեխը, —թաթերդ կը փչրեմ...

Եւ բռունցքը այնպիսի ոյժով զարկեց սեղանին, որ շիշերն ու բաժակները միմեանց դիպչելով փչրուեցին։

Բարձրացաւ աղմուկ, վէճ, իրարանցում: Օդի մէջ երեւացին մի քանի սպառնալի բռունցքներ: Գուցէ «Սիբիրի Ռեխը» և «Կալուգայի Սըլը» միմեանց քիթ ու պռունգը ջարդէին, եթէ չը լինէր մի ալեւոր նաւաստի, որին ընկերները «Դեադուշկա» էին անուանում: Նա մէջ մտաւ նրանց բաժանելու: Օգնութեան հասաւ Լեւոնը: Նա նուագումը ընդհատեց և տեղից վերկենալով, ասաց.

—Պարոններ, թոյլ տուէք ինձ գնալ «Խերսօնցիների» մօտ:

Վէճն իսկոյն դադարեց, բոլորը շրջապատեցին երաժշտին:

—Լեվա, աղանեակ, մի անիր, Լեվա, հոգեակ, նուագիր. ինչպէս կարելի է,—խնդրեցին բոլորը:

—Նուագիր... ինչպէս նուագեմ, պարոններ, քանի որ չէք լսում, կուռում էք անկիրթ «բօսեակների» պէս: Միթէ վայել է «Ռուսաց Ընկերութեան» նաւաստիներին:

—Վայել չէ, ի հարկէ, վայել չէ,—գոչեց «Դեադուշկան»:

—Դուք ինձ «Տիրասպօլցիների» մօտից բերեցիք այստեղ, որ ձեր կռիւը տեսնեմ: Դուք լաւ չէք գնահատում երաժշտութիւնը...

«Խերսօն», «Տիրասպօլ» նաւեր էին և նաւաստիները կրում էին իրանց նաւերի անունները:

—Կը գնահատենք, կը գնահատենք, Լեվա, յիմարներ չենք...

—Ինչ է, փող է ուզում այդ ճպուռը,—գոչեց Սիբիրի Ռեխը և վարտիբի գրպանից հանելով արծաթէ դրամներով լի քսակը, գցեց Լեւոնի գիրկը,—ահա, վերցրու, խեղդուիր...

—Մենք էլ կը տանք, մենք էլ կը տանք, աղա՛ղակեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրպանները:

—Տեսէք, տեսէք, Լեւոնը հարստանալու է,—գո-

չեց Իցկօն, հրճուանքից ձեռները միմեանց զարկելով, երբ տեսաւ փողի քսակները:

—Ապա, կը տեսնենք թէ ինչպէս,—արտասանեց Չաուչէնկօն, որ արմունկները սեղանին յենած, դիտում էր կատարուող տեսարանը:

Լեւոնը հանգիստ վերցրեց իր գիրկն ընկած քսակները և, դնելով սեղանի վրայ, ասաց.

—Ես իմ գնից մի կոպէկ էլ աւելի չեմ վերցնիլ: Համարը 10 կոպէկ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Դրէք ձեր գրպանները, նստեցէք, նուագում եմ...

—Բրա՛վօ, Լեւոն, բրա՛վօ, դու մեր երեսը սե չարիր,—գոչեց Չաուչէնկօն ոգեւորուած և նաւաստիների ուշադրութիւնը գրաւեց մեր վրայ:

—Այդ ինչ կատու է,—գոչեց Սիբիրի Ռեխը.— ա՛հ, տիրացո՛ւ: Ձէ, ուխտաւոր է, արեղայ է... Է՛յ, երեւի, Խօքազամայի տաճարի համար լուծմա ժողովելու ես եկել: Արի, արի, մենք էլ կը տանք մեր հոգու փրկութեան համար:

Չաուչէնկօն վերցրեց սեղանի վրայից իր գրքոյկները և հանդիսաւոր քայլերով մօտեցաւ նաւաստիներին:

—Պարոններ, ես ո՛չ տիրացու եմ, ո՛չ տաճարի համար լուծմա ժողովող: Ես երգիչ եմ...

—Երգիչ, երգիչ, այդ շատ լաւ է,—ասացին ոմանք.—գէ՛հ, երգիր տեսնենք:

—Երգիր՝ «Ո՛հ, իմ վիշտ»,—պահանջեց Սիբիրի Ռեխը.—«Ո՛հ, իմ վիշտ»:

—Ո՛հ, խաւար—ահա իմ վիշտը,—արտասանեց բանաստեղծը:—Պարոններ, ես ձայնով չեմ երգում, այլ գրչով: Գնեցէք մի-մի օրինակ ահա այս գրքոյկներից: Դուք, պարոններ, ինչպէս տեսնում եմ, երաժշտութիւնը սիրում էք. մի մոռանաք, որ բանաստեղծութիւնն էլ նրա քոյրն է:

—Քոյրն է,—ասաց Սիբիրի Ռեխը,—ապա տո՛ւր ինձ այդ գեղեցկուհուն...

Նա խլեց գրքոյկներից մէկը, դրեց դատարկ ամանի մէջ, վրան օղի թափեց և, լուցկին վառելով, ասաց.

—Ապա, տեսնենք քոյրը ինչպէս է երգում:

Օղին այնքան թունդ չէր, որ վառուէր:

—Քեռի Սիդօր,—գոչեց Սիբիրի Ռեխը,—կատուիդ մագիլները հանել ես... խի խի խի՛, սպիրտ բեր...

—Է՛յ, Սիբիրի Ռեխ,—ասաց «Դեադուչկան»,—այսօր դու մեզ ուղղում ես խայտառակել: Գրքերը սուրբ են, յանցանք է նրանց այրելը... Գնե՛նք մի-մի օրինակ...

Նաւաստիները գնեցին մի-մի օրինակ «Վշտի և տանջանքների ժամերից», իսկ անհանգիստ Սիբիրի Ռեխը մի մեծ բաժակ օղի ձեռքում մօտեցաւ հեղինակին:

—Կոնծիր, դնչիցդ երեւում է, որ սիրում ես...

Չառչէնկօն խմող չէր: Երկու ձեռները դէմ տուեց բաժակին, գոչելով.

—Հեռու ինձանից համառութիւնս թոյն...

Այն ժամանակ Սիբիրի Ռեխը կպաւ Լեոնին.

—Խմիր, դու մինչեւ այսօր դեռ չես հաղորդուել...

Թէ քրիստոնեայ ես, պիտի խմես...

—Լեվա, Լեվա, մի բաժակ մեր խաթրու,—խընդրեցին միւսները:

Լեոնը հրաժարուեց, ասելով, թէ խմելուց յետոյ չէ կարող նուագել: «Դեադուչկան» նրան պաշտպանեց:

Օրն արդէն մթնել էր: «Դեադուչկան» յայտնեց, թէ շոգենաւ վերադառնալու ժամանակ է: Խումբը վճարելով կերած-խմածի գինը, նաև Լեոնի վարձը, դուրս եկաւ աղմուկով, գոռում-գոչիւններով, միմեանց բռնելով ու հարուածելով:

Փողոցում Չառչէնկօի գլուխը պտըտեց այնպէս, որ անշուշտ կ'ընգնէր, եթէ չը յենուէր պատին: Խմիչքների հոտը և ծխախոտի ծուխը չչմեցրել էին նրան: Բայց նա կրկնում էր.

—Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն օր պիտի գամ: Ո՛րքան նիւթ, որքան նիւթ գրողի համար:

Իցկօն ոստոստում էր Լեոնի շուրջը՝ Վերջապէս, ձեռքը գցելով նրա թեւին, հարցրեց.

—Այսօր ինձ համար շօկօլաթ ես առնելու, թէ՞ ծըխախոտ:

—Երկուսն էլ:

—Փիամ ֆիամ, ուրեմն այսօր երկու ուռլուց աւելի ես հաւաքել... Կեցցէ տրիօ: Ես այսօր ոչինչ չեմ վաստակել: Բանաստեղծ, պիտի ինձ համար մի սրինգ գնես: Ես էլ ուզում եմ սրինգ նուագել:

—Կը գնեմ, ինչո՞ւ չեմ գնիլ, —ասաց Չառլէէնկօն բարեւորտաբար:

—Ձիմբա-չիմբա—չիլալա, Չառլէէնկօ, չիլալա...

Երբ ընկերները բաժանուեցին, ես հետաքրքրուեցի իմանալ՝ ինչո՞ւ է Լեոնը փոխել իր արհեստը: Ձէի ուզում հաւատալ, որ առանց վերին աստիճանի ստիպողական մի պատճառի կարող է նա ցերեկներն անգամ ապրել թատրոնից հեռու:

—Կարիքն է ստիպում, սինեօր, —պատասխանեց նա:

—Բայց չէ՞ որ դու առաջ էլ կարիք ունէիր:

—Ես ուզում եմ մօրս կամքը կատարել:

—Այսինքն:

—Ուզեմ եմ նրան ապահովել:

Ես նայեցի նրա աչքերի միջին և հասկացայ, որ կեղծում է: Փողոցային լապտերի լոյսը մատնեց նրա այլայլուելու:

—Է՛հ, շատ գովելի է, —ասացի ես, —որ ուզում ես մօրդ ապահովել: Բայց, ներիր Լեոն, այս անգամ շատ էլ չեմ հաւատում քեզ: Կարծում եմ, ուրիշ նպատակ էլ ունես:

Նա ոչինչ չասաց, միայն քայլերն արագացրեց:

—Ո՛ւր ես շտապում, —հարցրի ես:

—Թատրոն:

—Է՞լի թատրոն:

—Այո՛, սինեօր... Այսօր լաւ դրամա են ներկայա-
ցնում...

Եւ, երևի, իմ հարց ու փորձերից ազատուելու համար, շտապով հեռացաւ: Ես արդէն դուշակել էի նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական Եախտա»-ն: Լեոնին այնտեղ սիրում էին: Նաւաստիները խլում էին նրան միմեանց ձեռքից: Նա գիտէր նուագել մալաուսական եղանակներ ու պարեր: Անցնում էր մի խմբից միւսը, բոլորին զուարճացնում, հաւաքելով իր տասնական կողէկները: Զուարճութեան տաք միջոցներին սեղանակիցները երբեմն խնդրում էին նրան խըմել մի-մի բաժակ օղի կամ դարե՛՛նուր: Նա չէր ուզում խմել և չէր էլ կարողանում:

Մի անգամ իմ ներկայութեամբ, երբ զգուանքով յետ դրեց օղու բաժակը, նրա համար պահանջեցին ինչ որ բաղցր ըմպելիք: Նա մի բաժակ խմեց, յետոյ երկրորդը, և զուարթացաւ...

Ցաւալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ ստորին վայրերը: Բայց իրաւունք չէի համարում համոզել նրան թողնել այդ տեղերը: Ուրիշ ինչ միջոց ունէր նա ապրելու, բացի նախկին օղորմելի պարապմունքից:

Մի օր նա ասաց.

— Սինեօր, երկու ամիս չը կայ, արդէն երեսուն ուռլի եմ յետաձգել: Բայց մօրս չասէք:

— Ինչօւ:

— Որովհետեւ այդ փողերը ինձ հարկաւոր են...

— Իտալիա գնալու համար, — լրացրի ես նրա խօսքը՝ խնդիրը միանգամից պարզելու համար. — մի դարմանար, Լեոն, ես այդ վաղուց գիտէի:

— Օ՛, սինեօր, իրաւ է. ես ուզում եմ տեսնել Իտալիան...

— Եւ Լուիդային...

Նա ամօթից երեսը դարձրեց ինձանից: Ես հաղորդեցի նրան, թէ սինեօրա Ստեֆանիան Կապալարօից նոր նամակ է ստացել: Բարիտօնը գրում է, թէ երգե-

ցողութեան ուսուցիչները փորձել են օրիորդի ձայնը և հիացել նրա ուժով ու «տեմբրով»: Մի յայտնի պրօֆեսսոր խոստանում է երեք տարուայ ընթացքում Լուիզային այնչափ պատրաստել, որ կարողանայ օպերաներում առաջին «դրամատիկ-սօպրանո»-ի դերերը երգել:

Հաղորդածս նորութիւն չէր նրա համար: Նա ասաց, թէ հէնց նոյն օրը ինքը նամակ է ստացել Լուիզայից: Բարի օրիորդը իր խոստումը կատարել էր: Սակայն այդ եղաւ առաջին և վերջին նամակը...

Ամբողջ դարունը և ամառը պատանին այցելեց նաւահանգստի պանդոկները: Երբեմն գալիս էր սենեակս և ինձ հաշիւ տալիս: Նրան դեռ սիրում են նաւաստիները, հաճոյքով լսում և միմեանց ձեռքից խլում: Ամառական միջին թուով քսան ուսուցիչ աւելի է յետաձգում: Շուտով, շուտով կը կատարի իր փափագը, կ'ուղևորուի Իտալիա...

Այն ինչ՝ պանդոկների մթնոլորտը արդէն դրել էր իր դրոշմը նրա վրայ: Ձեւերը նկատելու չափ գոհակացել էին: Ժամանակ առ ժամանակ արտասանում էր տգեղ բառեր, որ առաջ չը կային նրա բառարանում: Արտասանում էր և իսկոյն զղջում, կարմրում: Միքանի անգամ զգացի, որ բերանից խմիչքների հոտ է գալիս: Իսկ մի երեկոյ մեր տան դարպասի առջև տեսայ նրան սաստիկ հարբած դրութեան մէջ: Կիթառը կոնատակին բռնած, օրօրուելով, տուն էր գնում, մի քայլ առաջ դնելով, մի քայլ կոշք: Օգնեցի սանդխտով բարձրանալ:

Աւմաստը տեսաւ նրան թէ չէ, ձեռները զարկեց իր երեսին, գոչելով.

— Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չէր: Խնդրեցի վշտացած մօրը— զսպել առայժմ իր սրտի թոյնը:

Լեւոնը թաւալուեց երեսնիվայր անկողնում, մի ոտը թողնելով յատակի վրայ: Տեսարանը եղկելի էր: Լեւոնը, այն պատանին, որին երեւակայութիւնս գրե-

Թէ հրեշտակացրել էր, ընկնում էր աչքումս: Եւ այս ինձ համար դառն էր, շատ դառը: Նա ոչինչ չէր զգում, ընկած էր կեղտոտ լաթի պէս, ոտից մինչեւ գլուխ ցեխոտ: Միայն երբեմն ձեռք դուրս էր բերում փորի տակից և շօշափում ձախ կօշիկը...

Ես թողեցի տխուր տեսարանը և հեռացայ: Մի՞թէ այս է բարեկամիս վերջը: Մի՞թէ Ալմաստի չար գուշակութիւնը իրագործւում է:

Առաւօտը երբ բարձրացայ վերև, Ալմաստն արդէն թեթեւացրել էր իր սիրտը և աչքունքը կիտած լուռ նստած էր մի անկիւնում: Լեւոնը փնտրում էր կիթառը, որ գնայ իր գործին, չէր գտնում: Ալմաստը թագցրել էր, չէր ուզում տալ: Տեսնելով ինձ, խեղճ կինը լաց եղաւ: Այս անգամ խօսքեր չը գտայ Լեւոնին արդարացնելու:

—Ձէի ասում, որ վերջը իր անիծուած հօր օրին է հասնելու: Ահա չորրորդ անգամն է, տուն է գալիս շան օրում...

Ես բարեռք համարեցի Լեւոնի հետ խօսել առանձին, հրաւիրելով սենեակս: Յիշում էր երեկուայ իր խայտառակ դրութիւնը և սաստիկ ամաչում: Լուռ էր, սպասում էր որ ես խօսեմ: Ի՞նչ պիտի ասէի. նախատելը կը լինէր աւելորդ. Լեւոնը յիմար գլուխ չէր և ոչ էլ երեխայ—շուտով պիտի լրանար տասնութ տարին: Ես ընկերաբար բացատրեցի հարբեցողութեան կորստաբեր հետեւանքները: Նա լսեց մինչեւ վերջը համբերութեամբ և, երբ վերջացրի, ասաց.

—Այդ բոլորը գիտեմ: հայրս հէնց հարբեցողութիւնից մեռաւ:

—Գիտես և էլի խմում ես:

—Ստիպում են:

—Ո՞վքեր:

—Նաւաստիները:

—Տեղափոխուիր ուրիշ պանդոկ:

—Ամեն տեղ ստիպում են:

—Մի՞թէ չեա կարող մերժել:

—Առաջ մերժում էի, հիմա չեն թողնում:

—Ի՞նչ ասել է չեն թողնում: ամեն մարդ իր կամք
քի տէրն է:

—Այո, սինեօր, բայց երբ կէս փթանոց բռունցքը
պահում են քթիդ տակ, մոռանում ես կամքդ:

—Խօս նրանք քեզ չեն ծեծում:

—Կը ծեծեն, եթէ շատ յամառութիւն անեմ:

—Բայց ի՞նչ օգուտ ունեն քեզ հարբեցնելուց:

—Հարբածներն ատում են՝ արթուն մարդուն: Երբ
չեմ խմում, ասում են՝ «դու մտքումդ ծաղրում ես մեզ:
Դու էլ խմիր, հաւասարուիր մեզ հետ»:

—Դո՛նէ քիչ խմիր:

—Շատ չեմ խմում, բայց քիչն էլ ինձ հարբեցնում է:

—Ի՞նչ են խմեցնում:

—Առաջ քաղցր խմիչքներ էին տալիս: Հիմա ասում
են՝ «թանգ է նստում», և ստիպում են խմել գարեջուր
էլ, օղի էլ...

Ես լռեցի: Բայց հարկաւոր էր մի հետևանքի հաս-
ցնել մեր խօսակցութիւնը:

—Լեւոն, թո՛ղ այդ պանդոկները, էլի թատրոն-
ներով զբաղուիր...

—Ի հարկէ, թողնելու եմ, սինեօր, շուտով, շուտով
կը գնամ Իտալիա... Արդէն հարիւր յիսուն ռուբլի
ունեմ:

—Իսկ մայրդ:

—Նրան էլ հետս տանելու եմ:

—Հարիւր յիսուն ռուբլով:

—Ի՞նչ կայ, քիչ է: Ես շատերից եմ հարցրել. ա-
սում են՝ ամսական երեսուն ռուբլով կարող ինքապրել
այնպէս, ինչպէս այստեղ:

—Դուցէ կարելի է, բայց մի քանի ամիս, իսկ յե-
տոյ:

—Յետոյ... յետոյ... մի գործ կը գտնեմ:

Մայիս, 1901.

— Լեոն, ճշմարիտն ասա, ի՞նչն է քեզ ստիպում իտալիա գնալ,— հարցրի ես, նայելով ուղիղ նրա աչքերի միջին։

— Ուզում եմ վերլծնել նուագելը սովորել ու գալ այստեղի օրկեստրը մտնել։

«Կեղծում ես, բարեկամս, մտածեցի ես, այդ չէ գլխաւոր պատճառը»։

Նայեցի նրան ուշադիր, սիրտս մորմոքուեց։ Նա ոտքի վրայ ցամաքել էր, ինչպէս արմատից փնասուած ծառիկ։ Խնդրեց ինձ համոզել մօրը, որ կիթառը տայ իրան։ Միւսնոյն է, եթէ չը տայ, պիտի նորը գնել. ինչո՞ւ աւելորդ ծախսի մէջ ընկնել։

Հաղիւ այդ օրից անցել էր մի շաբաթ, երբ մի երեկոյ, մօտ տասը ժամին, յանկարծ սենեակս մտաւ Ալմաստը շփոթուած։

— Պարոն, նեղութիւն քաշեցէք, վերև բարձրացէք՝ Աստուծոյ սիրոյն։

Տարօրինակ դրութեան մէջ տեսայ ես Լեոնին այդ երեկոյ։ Հեղ պատանին կատարելապէս կատաղել էր։ Առանց պաճկոնի ու կօշիկների թաւալուել էր դռների առջև և մռնչում էր ինչպէս մատաղ գազան, կրծոտելով իր ձեռների միւսը։ Նրա նիհար պարանոցի երակներն ուռել, փքուել էին, կարծես, ահա, ահա պիտի տրաքուեն ձգուած լարերի պէս։ Նա ոտները զարկում էր յատակին ինչպէս դիւահար։

Պատահել էր մի շատ սովորական դէպք, որի նմանները պատահում էին Օդեսսայի խուլ անկիւններում գրեթէ ամեն երեկոյ։ Նաւահանգստից վերադառնալիս Լեոնի վրայ յարձակուել են ինչոր քաղցած սրիկաներ, խլել ձեռքից կիթառը, հանել բաճկոնն ու կօշիկները և բաց թողել։

— Եւ դրա համար քեզ սպանում ես,— գոչեցի ես, բռնելով Լեոնի թեւը,— ամօթ։

— Ես էլ այդ եմ ասում, որդի, խօսմ չեմ նախատում։ Տանը մի հատ պիջակ էլ ունես, կօշիկներ էլ...

Վայ, Տէր Աստուած, ինչպէս է գլուխը պատին խփում։ Այս ի՞նչ պատիժ է, Երկնային Թագաւոր...

Կասկածելի էր, որ Լեոնը կիթառի, մանաւանդ ու զորմելի պիջակի ու կօշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացնէր։ Անշուշտ կորուստն աւելի մեծ էր։ Խնդրեցի Ալմաստին միքանի բոպէ թողնել մեզ առանձին։ Այրին դուրս գնաց։ Ճանաչելով Լեոնի բնաւորութիւնը, գիտէի ինչպէս պիտի խօսել այսպիսի հանգամանքներում նրա հետ։ Նա սիրում էր զգալ, որ մարդիկ իրան չափահաս են համարում։

—Ամօթ է, Լեոն,—ասացի,—փառք Աստուծու, դու երեխայ չես, իեւբի եկ... Չարժէ այդպէս գոռալ...

—Չարժէ, չարժէ, սինեօր, դուք էլ էք ասում։ Բայց չը գիտէր ինչ եմ կորցրել, ի՞նչ։ Չախ կօշիկս... այո... ձախը... Գիտէ՞ք... Իտալիա, վելիօնչէլ, երգ, եւրաժանութիւն, կորաւ, կորաւ ամեն ինչ... բուլվարի ներքնումն էր, այն մեծ սանդիստի մօտ։ Երկու հոգի էին —մէկը բարձրահասակ, միւսը թիկնաւէտ։ Բարձրահասակը բռնեց ետեւից ձեռներս, միւսը խուզարկեց դրոպաններս։ Երբ մի ուրբուց աւելի չը գտաւ—բարկացաւ։ Կարծում էի կիթառս կը խլեն—կը հեռանան։ Ձեզան։ Պիջակս էլ հանեցին... Տէրը նրանց հետ, թող շապիկս էլ հանէին—չէի խօսիլ... Բայց կօշիկներս, ձախ կօշիկս... «Հանիր, ասաց ձեռներս բռնողը, դոնէ երկու բաժակ օղի արժեն»։ Երբ թիկնաւէտը կռացաւ կօշիկներս հանելու, կատաղեցի, սկսեցի կծոտել նրա ուսերը, գլուխը... Նա ինձ ապտակեց։ Աչքերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղատել... Չը լսեցին անաստուածները... Տարան, տարան...

—Ուրեմն կօշիկներդ համար ես լալիս,—ասացի ես, մօտաւորապէս հասկանալով բանի էութիւնը...

—Հարիւր յիսուն ուրբի, սինեօր, հարիւր յիսուն ուրբի կար կօշիկս մէջ, ձախ կօշիկս... Այնտեղ էի պահում հաւաքած փողերս...

Եւ նա սկսեց դառնադին հեկեկալ...

Այսպէս, ուրեմն, տարել էին նրա վեց-եօթ ամսուայ աշխատանքի վարձը. նրա Խտալիա գնալու, Լուիզային տեսնելու յոյսը... Նա աւելի ապահով տեղ չէր գտել իր փողերի համար: Տանը պահել վախեցել էր: Մայրը կը գտնէր—չէր վերադարձնի: Այդ կինը ամեն առաւօտ որդու գրպանները խուզարկում էր, մօտը փող չէր թողնում:

—Փաթաթել էի թղթում, դրել կրունդիս կողմում, վրէժն կաշի խփել, ծայրերը գամել... Շատ գիշերներ կօշիկներով եմ քնել... Տարան սրիկաները: Ով գիտէ հիմա ծախում են մի բաժակ օղիով կամ մի ֆունտ հացով... Տէր Աստուած, Տէր Աստուած, ի՞նչ պիտի անեմ...

Ես խօսքեր չէի գտնում թշուառին մխիթարելու: Խտուրթիւն համարեցի նախատել նրան իր անդգուշութեան համար: Հարկաւոր էր միայն ցոյց տալ կորուստը գտնելու գէթ մի թոյլ յոյս: Արդէն վիշտը շատ մեծ էր:

—Ան,—գոչեց նա յանկարծ, ձեռը զարկելով ճակատին,—յոյս կայ, կայ յոյս գտնելու:

—Այո՞,—ուրախացայ ես երեխայի պէս:

—Այո, սինեօր: Դուք ճանաչում էք Իցկօի հօրը, «Մօշկա սելեօդկա» են կոչում նրան: Ճարպիկ մարդ է, ճանաչում է փողոցի սրիկաներին: Հին հագուստեղէն ու կօշիկներ է գնում—վաճառում: Ա՛հ, իսկոյն կը գընամ նրա մօտ, իսկոյն: Մ՛ամա, մն՛մա, ներս եկ, տ՛ուր ինձ միւս կօշիկներս, պիջակս, գնում եմ կիթառս փնտրելու...

Հակառակ մօր կամքին, նա շուտով հագնուեց ու վազեց դուրս:

Ես, ի հարկէ, Ալմաստին չը յայտնեցի, թէ Լեւոնը ինչ է կորցրել: Երեւակայում էի ինչ ողբ պիտի բարձրացնէր և ճրջան անիծէր որդուն:

Վերադարձայ սենեակս, հոգով նախանձելով հարուստներին: Ինչո՞ւ ես էլ հարուստ չեի...

Լոյսը նոր բացուած գնացի Լեւոնին տեսնելու։ Արդէն դուրս էր եկել տնից։ Ամբողջ գիշեր, Ալմաստի ասելով, չէր քնել, պտըտել էր անկիւնից անկիւն։ Ուշ երեկոյ էր, երբ Լեւոնը մտաւ սենեակս յոգնած, քըրտնած, փոշոտ։ Նա խօսելու անգամ ոյժ չունէր։ Մինչեւ կէսօր թափառել էր Իցկօի հօր, իսկ կէսօրից յետոյ — Չաուչէնկօի ու Իցկօի հետ։ Եղել էին գրեթէ բոլոր այն շուկաներում, ուր հին հազուատեղէնի առուտոր է կատարւում։ Փնտրել էին միայն կօշիկները, առանց ում և է ասելու ինչ գանձ են փնտրում։ Եւ իզո՛ւր։ Իցկօի հայրը խորհուրդ էր տուել Լեւոնին «մոռանալ, թէ երբ և է փող է ունեցել»։ Չաուչէնկօն յայտնել էր ոստիկանութեանը։ Պիւստաւը ծաղրել էր՝ «՞ր յիմարն է կօշիկի մէջ փող պահում»։

Լեւոնն ամբողջ օրն անց էր կացրել անօթի։ Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մերժեց. դուրս եկաւ ու ժասպառ, յոսահատուած, հարբածի պէս օրօրուելով։

Միւս օրը ես նրան հանդիպեցի փողոցում մի փոքրահասակ, նիհար, կեղտոտ հրէայի հետ խօսելիս։ Դա ինքը «Մօշկա սելեօդկան» էր, Իցկօի հայրը։

— Մօսեօ, — դարձաւ նա ինձ, երբ իմացաւ, որ Լեւոնի բարեկամն եմ, — միրուքս վկայ, աղքատը երբէք չը պիտի փող ունենայ։ Փողը շատ դոռող է, սիրում է թանկագին պալատներ։ Յիմար աղքատը կարծում է, թէ կարելի է նրան պահել դարչապարի տակ, կօշիկում, խի խի խի... Մանո՛ւկ, դու պիտի կուրծքդ պատռէիր ու ասէիր այդ հարիւրանոցին. «պատուելի, սիրելի, համեցէք, սյ քօ բնակարանը»։ Երանի եմ տալիս այն հնավաճառին, որ այդ կօշիկը կը գնի։ Երդւում եմ միրուքովս, Սողոմոն արքան էլ այնպիսի թանկագին կօշիկներ չէ հագել։

Մի շաբաթ շարունակ Լեւոնը վաղ առաւօտից սկսած մինչեւ ուշ երեկոյ փնտրում էր իր կորուստը։ Չաուչէնկօն և Իցկօն յոսահատուել էին, այլ ևս չէին օգնում նրան, իսկ նա դեռ փնտրում էր։ Նա զրկուել

էր քնից, հանգստութիւնից, ախորժակից: Տուն էր վերադառնում երեկոները, պառկում հագուստով անկողնում, հեկեկում ու հեկեկում: Աւմաստը յուսահատութիւնից չը գիտէր ինչ անէր, տառջւում էր որդու հետ հաւասար: Նա պնդում էր, թէ Լեւոնը կը խելագարուի, եթէ այդ դրութեան մէջ մնայ: Ամեն ինչ մոռացել է, ոչնչով չէ հետաքրքրւում, նոյն իսկ թատրոններով:

Խոստովանում եմ, ես այլ ևս քաջութիւն չունէի Լեւոնի վիշտը տեսնելու: Նրա ծանր հառաչանքները, ողբը, հեծկլտանքը կտրատում էին սիրտս: Այն ինչ այժմ նա աւելի էր այցելւում ինձ, քան առաջ: Գալիս էր նըստում սեղանիս քով և խօսում իր կորստի մասին: Նա դեռ պահում էր իր սրտում մի թոյլ յոյս փողերը գրտնելու: Ով գիտէ, անկարելի ոչինչ չը կայ. կարող են այդ կօշիկները պտտել ամբողջ քաղաքը և դարձեալ յետ դալ, իրանց տիրոջ ձեռքն ընկնել... Բայց շուտով այդ թոյլ յոյսն էլ մեռաւ նրա մէջ, և Լեւոնի միտքը սկսեց փոքր առ փոքր սթափուել: Ծանօթ նաւաստիները խնդրում էին նրան շարունակել յաճախել պանդոկները, խոստանալով նրա համար նոր կիթառ գնել: Ես խորհուրդ տուեցի նրան ընդունել այդ առաջարկութիւնը և նորից սկսել փող ժողովել: Մի օր, վերջապէս, նա գնաց «Արքայական Նախտա» մի նոր կիթառ ձեռին: Երեկոյեաննա պատմեց ինձ, թէ նաւաստիները ինչպիսի ուրախութեամբ են ընդունել նրան, ինչպէս գրկուել ու համբուրուել նրա հետ: Նրա բերանից դարձեալ օղու հոտ էր գալիս: Երեւի, այս անգամ խմել էր վիշտը մոռացութեան տալու համար. ես քաջութիւն չունեցայ նրան յանդիմանելու:

Մի չնչին դումար, որ կարողացաւ նա ինչայել առաջին ամիսը, նորից վերակենդանացրեց նրա յոյսերը: Այս անգամ նա անկեղծ խոստովանեց ինձ, որ Իսաւրիա գնալու գլխաւոր նպատակը Լուիզային տեսնելն է: Գրեթէ օր չէր անցնում, որ նա չը հարցնէր.

—Սինեօր, ի՞նչ լուր կայ Լուիզայից: Նա ինքն ամաչում էր անմիջապէս սինեօրա Ստեֆանիային դիմել այս հարցով: Ես հաղորդում էի նրան բոլորը, ինչ որ լսում էի տանտիրուհուցս: Միշտ Լուիզան բարեւ էր ուղարկում Լեոնին: Եւ Լեոնը երջանիկ էր այդ ուշադրութեամբ: Չը գիտեմ, կա՞ր արդեօք մի ուրիշը, որ այնքան ուրախանար Լուիզայի ամեն մի նոր յաջողութեան համար, որքան այդ սիրահարը: Նա ասում էր, թէ ամենից աւելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ էլ ինքն է ուզում ծափահարել նրան բեմի վրայ, ոչ այստեղ—Օդեսսայում, այլ այնտեղ—Իտալիայում:

Մի անգամ նա ասաց.

—Եթէ մինչև առաջիկայ գարուն չը կարողանամ ճանապարհ ընկնել—կը խելագարուեմ:

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հարցով.

—Ի՞նչ էք կարծում, սինեօր, Լուիզան նշանաւոր երգչուհի դառնալով, կը գոռոզանայ:

Հասկացայ, թէ իսկապէս ինչ է ուզում իմանալ: Հոգու խորքում նա ինքն իրան արժանի չէր համարում Լուիզային, բայց հպարտութիւնը չէր թոյլ տալիս նրան խոստովանել այդ: Նա ուզում էր իմ միտքն իմանալ, արժանի եմ համարում իրան Լուիզային թէ ոչ:

Կամենալով դէթ մի փոքր սթափեցնել այդ օրից օր աւելի ու աւելի կուրացող հոգին, պատասխանեցի.

—Այո, կը գոռոզանայ: Նա հէնց այժմ էլ, երբ դեռ շատ հեռու է նշանաւոր երգչուհի համարուելու պատուից, գոռոզացել է...

—Ո՞վ ասաց,--գոչեց Լեոնը վշտացած:

—Նրա վարմունքը: Նա քեզ մոռացել է:

—Ի՞նչ: Ինչո՞ւ. նա միշտ բարեւներ է ուղարկում, խօսմ ինքներդ էք ասում:

—Այո, բարեկամս, ուղարկում է. բայց, ներքի, այդ բարեւների նպատակը ես ուրիշ կերպ եմ հասկանում: Լուիզան դեռ երգչուհի չը դարձած, արախտների խորամանկութիւնն է իւրացնում: Ես ճանաչում եմ նոյնիսկ

տաղանդաւոր երգչուհիներ ու դերասանուհիներ, որոնք շողոքորթում են համալսարանական քաղաքներում ուսանողներին, գաւառական քաղաքներում—գիմնազիստներին միմիայն նրանց ցոյցերին արժանանալու համար: Իսկ դու քո խմբով աւելի գեղեցիկ ցոյցեր գիտես անել: Լուիզան այս գիտէ և քեզ հետ հեռաւոր բարեկամութիւն է պահպանում իր ապագայի համար, թէև գիտէ միևնոյն ժամանակ որ դու կաշառուող չես: Ախ, բարեկամս, մի յափշտակուիր այն ուսանողի պէս. յիշում ես, որ անցեալ տարի ինքնասպանութիւն գործեց մի երգչուհու պատճառով: Լուիզան քեզ չէ սիրում, եթէ սիրէր—նամակ կը գրէր: Ինչո՞ւ մէկը գրեց ու լռեց:

Գուցէ ես զրպարտում էի Լուիզային, բայց ասածիս մէջ զգում էի ճշմարտութեան մաս: Լեոնին փրկելու համար պատրաստ էի աւելի վատ գոյներով պատկերացնել Լուիզային նրա առջև:

—Նա ժամանակ չունէ ինձ նամակ գրելու, զբաղուած է,—ասաց Լեոնը ոչ այնքան Լուիզային արդարացնելու, որքան իր անձնասիրութիւնը պաշտպանելու մտքով:

—Գուցէ... թող այդպէս լինի... ասացի ես անորոշ եղանակով Լեոնին աւելի չը վշտացնելու համար:

Որքան յիշում եմ, հէնց այդ օրն էր, որ սինեօրա Ստեֆանիան մտաւ սենեակս անսովոր ուրախ տրամադրութեան մէջ և ասաց.

—Սինեօր, հիմա կարող եք ինձ շնորհաւորել:

—Ի՞նչ է պատահել...

—Պատահել է այն, ինչ որ վաղուց սպասում էի անհամբեր. Լուիզան երէկ պսակուել է Կալալարօի հետ... հէնց այս րոպէիս հեռագիր ստացայ... ահա...

Եւ նա ծոցից հանելով հեռագիրը, ցոյց տուեց ինձ:

—Այդպէս անսպասելի,—գոչեցի ես, թէև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում էր, թէ կայ ինչ-որ մտերմութիւն Լուիզայի և Կալալարօի միջև:

— Անսպասելի չէր, սինեօր, ոչ. այդ դժուար չը գիտէիք, իսկ ես գիտէի որ նրանք նշանուած են վաղուց։ Նշանուելն ինձ համար կարեւոր չէր, պսակուելն է կարեւոր։ Ես լռում էի, վախենալով որ գործը չը փչանայ։ Ա՛խ, վերջապէս ճրքան ուրախ, ճրքան ուրախ եմ։ Կա՛վալլարօն հէնց իմ ուղած փեսան է. բարի, քաղաքավարի, լաւ երգիչ, լաւ էլ փող է ստանում։ Այո, Լուիզան աւելի լաւ ընտրութիւն անել չէր կարող։ Երէկ պսակուել են, այսօր պիտի ուղեւորուեն Պարիզ։ Կա՛վալլարօն պիտի մի տարի մնայ այնտեղ։ Լուիզան, ի հարկէ, նրա հետ կը լինի...

Ես շնորհաւորեցի երջանիկ մօրը. բայց մի ներքին ձայն շնչաց, թէ շատ էլ անկեղծ չեն վարւում։ Ի՞նչ պէս կ'ընդունի այդ լուրը Լեւոնը, որին սիրում եմ աւելի քան Կա՛վալլարօին ու Լուիզային։

Այդ օրը ես վերադարձայ դրսից տուն ու զիշերին, որպէս զի չը հանգիպեմ Լեւոնին։ Սակայն հետեւեալ օրը նա եկաւ սենեակս երեկոյեան սովորական ժամից առաջ։ Սինեօրա Ստեֆանիան ճաշի միջոցին ինձ ցոյց էր տուել երկրորդ հռազիւրը, որով յայտնւում էր, թէ նորապսակներն արդէն ուղեւորուել են Պարիզ։

Տխուր, անմոռանալի երեկոյ. առաջին անգամ կողոպտուելուց յետոյ Լեւոնի դէմքի վրայ տեսայ այդ երեկոյ ուրախ ժպիտ։ Նա իսկոյն պատմեց իր ուրախութեան պատճառը։ Երկու օր է նրան կանչում են «Խերսօն» շոգենաւը։ Այնտեղ նա նուագում է նաւապետի և իր օգնականների համար։ Այսօր օգնականներից մէկը տալով նրան իր մանգօլինան, առաջարկել է նուագել։ Լեւոնը կատարել է նրա ցանկութիւնը։ Նաւապետին առանձնապէս դուր է եկել «Մադրիդի չրմիլիկը»։ Նա մի շատ բարի մարդ է. իմանալով որ Լեւոնը ձգտում է գնալ Իտալիա, այսօր խոստացաւ օգնել նրան։ Երկու օրից յետոյ «Խերսօնը» գնում է Կրօնշտատդ։ Այնտեղից յետ է գալու և ուղեւորուելու է Միջերկրական ծովը, յետոյ Հռօաւոր Արեւելք։ Ահա այդ ժամա-

նակ նա կը վերցնի Լեւոնին իր մօր հետ և կը տանի մինչեւ Իտալիայի սահմանները...

—Օ՛ր, սինօր, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ թռչկոտել: Ես նաւապետի պարտքի տակ չեմ մնալ: Կը նուազեմ նրա համար ամբողջ ճանապարհին, դիշեր-ցերեկ կը նուազեմ: Իտալիա, Իտալիա անպատճառ պիտի տեսնեմ: Որքան կը զարմանայ Լուիզան ու ինչպէս կ'ուրախանայ...

Ծանր էր ինձ համար այս անկեղծ խօսքերից յետոյ թագցնել իրողութիւնը Լեւոնից, որ այդ պահին մարմնացած ոգեւորութիւն էր:

—Լեւոն,—ասացի,—չա՛տ ես փափագում տեսնել Լուիզային:

—Այո՛, ի հարկէ:

—Եթէ չը տեսնես, չա՛տ կը տխրես:

—Բայց ես կը տեսնեմ նրան, սինեօր, կը տեսնեմ Միլանում,—դռչեց Լեւոնը հաւատով լի, միւսին ժամանակ, մի տեսակ երկիւղով նայելով երեսիս:

—Լուիզան այժմ Միլանում չէ:

—Ո՞վ ասաց:

—Սինեօրա Ստեֆանիայի ստացած հեռագիրը:

—Բաս ո՞րտեղ է:

—Պարիզում:

—Ո՞ւր հետ...

Կավալարօյի...

—Կավալարօ, —դռչեց պատանին գրեթէ շնչասպառ:

—Ամուսնացել է Լուիզայի հետ և երէկ ուղեւորուել Պարիզ մի տարի ժամանակով,—ասացի ես միանգամից, սրտիս ծանրութիւնից օղատուելու համար:

Լեւոնը ցնցուեց, երեսի մկանունքները դողացին: Մի վայրկեանում կարմրեց, կապտեց, յետոյ սպրդնեց կտաւի պէս:

—Տեսա՞ր, որ քեզ չէ սիրում Լուիզան, որ դու եւրազի մէջ ես...

Լեւոնը ճիգն արաւ զսպել յուզմունքը: Այդ տասնըութ տարեկան պատանին, որի զգացումներն այդքան անժամանակ հասունացել էին, ունէր նաև կամքի ոյժ: Սակայն հարուածն աւելի զօրեղ էր: Նա թուլացած ընկղմուեց աթոռի վրայ, արտասանելով.

—Այ, նորութիւն... պէտք է շնորհաւորել...

—Այո, պէտք է շնորհաւորել, — կրկնեցի ես, ձեռանալով իբր թէ չեմ նկատում նրա յուզմունքը:

—Կավալարօն լաւ մարդ է, ազնիւ է, — ասաց նա, չրթունքները կրծոտելով դողդողուն ձայնով:

—Այնքան ազնիւ, որ Լուիզան չարժէ նրան...

—Սինեօր...

—Չարժէ, չարժէ, չարժէ, — կրկնեցի ես, վրդովուելով անմեղ իտալուհու դէմ:

—Լուիզան բարձր է... Լուիզան... հրեշտակ է...

Այլևս նա չը կարողացաւ իրան պահել. գլուխը դրեց սեղանին ու սկսեց հեկեկալ այնպէս ուժգին, որ թուում էր, թէ նրա մարմինը կտոր-կտոր է լինում:

Ես զգացի անզուսպ ատելութիւն դէպի Լուիզան. կարծես, նա ինձ հասցրել էր բարոյական ծանր վիրաւորանք: Սկսեցի անխնայ և միանգամայն անարդար պախարակել մի էակի, որ իսկապէս արժանի էր սիրոյ և յարգանքի: Նկարագրեցի նրա աննշան թերութիւնները խոշորացոյցով մեծացրած, հնարեցի չեղած թերութիւններ: Լսելով ինձ, կարելի էր կարծել, թէ չը կայ աշխարհի երեսին և չի եղել աւելի անբարտաւան, աւելի յիմար և նոյնիսկ աւելի տգեղ ու հակաիրելի աղջիկ, քան Լուիզան: Եւ այս բոլորը — Լեւոնին հիասթափեցնելու համար: Ես ջախջախում էի նրա կուռքը, ձեռքում նրա ոտների տակ, որպէս զի ոչնչացնեմ նրա սրբատու խորին հաւատը: Այն ինչ գիտէի որ այդ կուռքը ոչնչով մեղաւոր չէ իր մոլեռանդ երկրպագուի առջև: Նա գուցէ չէր էլ երեւակայել, որ իր պարզ, ընկերական վարմունքը կարող է մի պատանու սրտում առա-

ջաղհեղ աղբիւրն հասուն, աղբիւրն խորը և ջերմ զգացում...

Սակայն Լեոնն աւելի մեծահոգի և վեհանձն էր, քան կարող էի երեւակայել: Նրա կեղեքուող կրծքից դառն հեծկլտանքի հետ դուրս էին գալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասութիւն չունէ... Լուիզան հրեշտակ է»...

Եղել են մոլեռանդներ, որոնք կրակի միջից իրանց այրուող ձեռները պարզել են գէպի վեր ու աղօթել Աստծուն, Որի անունով նրանք դատապարտուել են այրման: Այսպէս էր և՛ Լեոնը: Անհուն տանջանքների բովից նա դեռ պաշտում էր իր իդէալին, որովհետեւ դա նրա միակ աստուածուհին էր:

Նա զսպեց հեծկլտանքը, սրբեց արցունքը, օտքի կանգնեց, գդակը վերցնելով՝

—Պէտք է շնորհաւորել սինեօրա Ստեֆանիային,— ասաց:—Բայց այժմ ուշ է... վաղը... Ներողութիւն, սինեօր, Լուիզայի համար չէի լալիս... Յոգնած եմ... Գիտէք... գիտէք... Լուիզան իզուր է ամուսնու հետ գընում Պարիզ... Կապալարօն գնում է իր ձայնը աւելի մշակելու... Լուիզան իր ապագան կը զոհի նրան... Բայց ինձ ի՞նչ... ինձ ի՞նչ...

Քանի մի բռնէ նրան պաշարեց անձնասիրութեան և ամօթի զգացումը: Նա շփոթուեց իր թուլութիւնից, արտասուքից: Շփոթուեց այնպէս, որ երեսիս չէր ուզում նայել: Վերցրեց միքանի անգամ մանդօլինան աննպատակ, յետ դրեց, գլխարկը ձեռքին, սկսեց վնասել նրան, ծիծաղեց, կեղծ, անբնական ծիծաղով: Վերջապէս ճանկեց իր թանձր մազերը, կանգնեց սեղանի մօտ և կարմրած աչքերը յառեց լամպայի լոյսին: Չը գիտեմ ինչո՞ւ, միշտ նրա աչքերը ձգտում էին դէպի լոյս: Նա սիրում էր նայել արեղակի շողերին, լամպայի լոյսին, վառարանի կրակին... Եւ այդ լինում էր մանաւանդ

այն միջոցներին, երբ նրա մտքերը պղտորուած էին, նրա հոգին խռովուած...

Ես տանջուում էի իմ անզօրութիւնից, որովհետեւ չը գիտէի ինչով մխիթարել մարմնացած տանջանքը:

Լռութիւնը տեւեց երկար: Ես անցուդարձ էի ա-
նում: Նա շարունակ կանգնած էր: Յանկարծ շրթունք-
ները կրծելով, գլխարկը մի ձեռով խփեց միւս ձեռի
ափին, շուռ եկաւ և, առանց ինձ հրաժեշտ տալու, ա-
րագ բայելով դուրս գնաց...

Մանգօլինան մնաց սեղանիս վրայ, կարծես, վշտա-
ցած, որ դարձեալ իրան մոռացան... Ձէ որ Լեւոնը ե-
կել էր նրան տանելու, որ վաղը նուագէ շոգենաւի վը-
րայ...

Ինձ պաշարեց զղջման զգացումը. ինչո՞ւ այդպէս
շուտ և անզգոյշ յայտնեցի նրան լուրը: Ով գիտէ, ուր
վազեց և ինչ կտրող է անել: Երկու անգամ բարձրա-
ցայ վերև և, դրսից լսելով նրա ձայնը, հանդստացայ,
յետ եկայ: Սկսեցի ինձ մխիթարել այն մտքով, որ կա-
տարել եմ անկեղծ բարեկամի պարտք, բանալով Լեւոնի
աչքերը: Մտածեցի նաև, որ, էհ, ինչ և լինի, տասնութ
տարեկան պատանի է, հազիւ թէ վիշտը նրա սրտում
երկար ապրի: Լաց կը լինի, լաց կը լինի Լեւոնը—կը
հանգստանայ... Մտածում էի այսպէս և միևնոյն ժա-
մանակ զգում որ սխալուած եմ...

Առաւօտեան զարթնեցի մի անսովոր ծանրութիւն
սրտիս վրայ: Շտապով խմելով մի բաժակ թէյ, գնացի
վերև: Լեւոնը տանը չէր: Ալմաստն ասաց, թէ գիշերը,
անկողին պառկելուց առաջ տուել է իրան յիսուն ուրբ-
լի և համբուրուել հետը, թէ գրեթէ ամբողջ գիշեր նըս-
տած է եղել գրասեղանի քով. գրել է, ջնջել, պատուել:
Առաւօտը կրկին համբուրուել է նրա հետ և դուրս գնա-
ցել, տանը թողնելով կիթառը, որ ամեն օր հետը տա-
նում էր:

—Նա տխուր էր,—հարցրի ես:

—Ոչ տխուր, ոչ ուրախ. այնպէս էր, ինչպէս միշտ:

Կիթառը տանն է, մանդօլինան սենեակումն, պարզ է, որ նա հչ պանդոկ է գնացել, ոչ շոգենաւ: Ուր կարող է լինել: Ես փափագեցի տեսնել նրան անպատճառ, հէնց նոյն ժամին. ես սաստիկ անհանգիստ էի: Դուրս եկայ, պտըտեցի թատրոնների շուրջը, անցայ երկու անգամ Դերիբասեան փողոցը, ուր երբեմն Լեւոնը զբօսնում էր: Չը կար: Օրը կիրակի էր. մտածեցի, գուցէ հայոց եկեղեցումն է. կիրակի օրերը երբեմն գնում էր պատարագ լսելու: Այնտեղ էլ չէր:

Աւելի բան երկու ժամ թափառելուց յետոյ վերադարձայ տուն մտամոլոր: Թւում էր ինձ, որ մի բան եմ կորցնում, մի շատ թանկագին բան:

Դարբասի առջև հանդիպեցի Չաուչէնկօին: Նա Լեւոնի սենեակից էր գալից: Նա էլ էր փնտրում ընկերոջը, չը գիտեմ ինչ-որ «կարեւոր» գործի համար: Եղել էր պանդոկներում, «Խերսօն» շոգենաւի վրայ, հարցրել էր. նաւաստիները այսօր նրան չեն տեսել:

Պատմեցի Չաուչէնկօին պատահածը:

—Օ, ունայնութիւն,—գոչեց բանաստեղծը իր սովորական ոգեւորութեամբ.—ես միշտ ասել եմ, թէ սէրը դէպի կինը հոգու հիւանդութիւն է: Լեւոնը վաղուց է ինձ խոստովանել, թէ սիրահարուած է այդ աղջկայ վրայ: Օհ, ի՜նչքան էր խօսում նրա մասին, ի՜նչպէս հառաչում... Պէտք է գտնել նրան, հէնց իսկոյն... Նա տաքարիւն է...

Խնդրեցի նրան մի քանի րոպէ սպասել ինձ դըրսում: Գնացի սինեօրա Ստեֆանիայի մօտ: Անշուշտ Լեւոնն այսօր եղել է նրա մօտ. չէ որ ուզում էր շնորհաւորել նրան:

Երջանիկ տրամագրութեան մէջ գտայ Ստեֆանիային: Նա ուրախութիւնից երգում էր ու պարում Ռախսայի մօտ այն րոպէին, երբ մտայ սեղանատուն: Նա ասաց, թէ այսօր «փառահեղ խնճոյք» ունի Լուիզայի ամուսնութեան առիթով, թէ հրաւիրել է մի քա-

նի բարեկամներ ու ծանօթներ, թէ պէտք է մի լաւ զուարճանալ:

—Ա՛խ, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ բոլորին գրկել ու համբուրել:

«Մի գուցէ և ինձ»,—ականայ մտածեցի ես, գրեթէ երկիւղով նայելով նրա սիւնների պէս հաստ և ուժեղ կռներին:

Լեւոնի մասին ասաց, թէ առաւօտը եղել է իր մօտ, շնորհաւորել է, ձեռքը համբուրել է:

—Նա քաղաքավարի պատանի է, իսկ և իսկ արտիստ: Կարծես հայրը վարսավիր չէ եղել, այլ ջենտլմէն: Բայց ծիծաղելի էր, չէր հաւատում Լուիզայի ամուսնութեանը: Հեռագիրները տուեցի, ինքը կարդաց, մէկ էլ շնորհաւորեց, բայց այնպէս մոտիկ արաւ աչքերիս խեթ-խեթ, ապշած, որ կարծես նոր էր տեսնում ինձ: Յետոյ առանց դէս, առանց դէն ասաց. «Սինեօրա Ստեֆանիա, մօրս սիրեցէք, նա խեղճ կնիկ է»: Առհասարակ շատ օտարոտի էր...

Այսքանը բաւական էր, որպէս զի իմ մէջ ծագէր վատ նախազգացում: Դուրս գալով փողոց, Չաուչէնկօին հաղորդեցի իմ երկիւղը: Նա առաջարկեց գնալ քաղաքային թատրոնի կողմերը: Իցկօն այժմ պիտի այնտեղ լինի. նա կարող է գտնել Լեւոնին:

Իցկօին հանդիպեցինք իր հասակի մի յոյնի հետ սաստիկ վէճի բռնուած: Յոյնը կատաղել էր, հայհոյում էր Իցկօին, անուանելով նրան «քոսոտ ջհուդ», «սատկած առնէտ» և այլն: Իսկ Իցկօն միայն կրկնում էր. «Դու ինքդ, դու ինքդ»:

Չաուչէնկօն սպառնալով յոյնին դաւադանով ջախջախել նրա գլուխը, ստիպեց նրան լռել: Յայտնուեց, որ վէճը Լեւոնի պատճառով էր: Յոյնը Լեւոնի մրցակիցն էր թատրոնի վերնայարկում և շուաջնում էր այն երգիչներին, որոնց նա ծափահարում էր: Նա Իցկօի մօտ Լեւոնին հայհոյել էր. Իցկօն պաշտպանել էր բացառկայ ընկերօրը և վէճի բռնուել:

Երբ Չառլէնկօն պատմեց ինձանից լսածը, Իցկօն վերուվեր թռչկոտելով, գոչեց.

— Իհէ, իհէ, խեղճ Լեւոն...

Նա ևս գիտէր, որ Լեւոնը միշտ երազում էր Լուիզայի մասին և պատմեց մեզ մի քանի մանրամասներ: Ի միջի այլոց ասաց, թէ շատ տխրելիս Լեւոնը գնում է «Ալէքսանդրեան պառկ» կոչուած զբօսավայրն ու այնտեղ ծովափի կողմում, մի հեռաւոր նստարանի վրայ նստում, կիթառը ծկները վրայ դրած և մոտիկ անում նաւահանգստից դուրս եկող շոգենաւերին: Քանի-քանի անգամ Իցկօն հանդիպել էր նրան այդ դրութեան մէջ, և նա ասել է. «Իցկօ, երբ մոտիկ եմ անում մի հեռացող շոգենաւի, ինձ թւում է, որ ես էլ նրա վրայ ուրիշների հետ գնում եմ հեռու, հեռու երկիրներ»...

— Գնանք «Ալէքսանդրեան պառկ», այնտեղ է, երեւի, — առաջարկեցի ես:

Տասը ըոպէում հասանք զբօսավայրը, անցանք այդ ընդարձակ այգին երկայնութեամբ ու լայնութեամբ. նայեցինք բոլոր ծառուղիները — չը կար ու չը կար Լեւոնը...

Ես վերադարձայ տուն յոգնած և՛ ֆիզիկապէս և հոգեպէս, թողնելով Չառլէնկօին և Իցկօին որոնել իրանց կորած ընկերոջը...

Վատ նախազգացումն ինձ այնքան չարացրել էր, որ ես առանց որ և է պատրուակի հրաժարուեցի մասնակցել սինեօրա Ստեֆանիայի այդ օրուայ ուրախ խնճոյքին: Ես պառկած էի հագուստով անկողնակալիս վրայ և մտածում էի Լեւոնի և միմիայն Լեւոնի մասին: Նրա տխուր, յուսահատութեամբ լի աչքերն էի յիշում վերջին ըոպէին և նրանց մէջ կարդում մի փոքրիկ, բայց սքանչելի հերոսի հոգու անհուն տուայտանքը: Երևակայում էի նրան իր թշուառ հօր դրութեան մէջ, հարբած, կեղտոտ, վեր ընկած թատրոնի դռների առջև,

անցորդներին ծաղրին ու սրախօսութիւններին ենթարկուած...

Նայում էի նրա մանդօլինային, սիրտս մորմաքւում էր: Անշունչ գործիքը, կարծես, լեզու էր ստացել, ողբում էր իր տիրոջը: Ես վերցրի նրան սեղանիս վրայից, քարշ արի պատի մի անկիւնում, որ այլ ևս աչքիս չընկնի... Միքանի անգամ մատներս դիպան նրա լարերին, և նրանց թոյլ հնչիւնները յիշեցրին ինձ այն նշանաւոր առաւօտը, երբ Լեոնը առաջին անգամ նուագեց «Մագրիդի չրճուլիկը»: Թշուառ չրճուլիկ, ուր ես դու այժմ...

Իսկ այնտեղ, հարեան սենեակում ուտում, խմում, զուարճանում էին հրաւիրուածները: Լսում էի Ռախայի ձայնը և սինեօրա Ստեֆանիայի բարձրաձայն ուրախ ծիծաղը, որ առատառատ բղխում էր նրա լայն, առողջ կրծքից... Փոքր առ փոքր նեարդերս թմրեցին. ես նիրհեցի, որովհետև գրեթէ ամբողջ գիշեր չէի քնել... Կէսըուն և կէսարթուն դրութեան մէջ լսեցի ինչ-որ դղրդոց: Վեր թռայ տեղիցս... դա Լեոնի մանդօլիան էր, որ ընկել էր պատից յատակի վրայ: Նոյն ըոպէին, երբ գործիքը նորից քաշ էի անում պատին, դրսից լսեցի անսովոր աղմուկ: Շտապեցի նախասենեակ և այնտեղ հանդիպեցի սինեօրա Ստեֆանիային իր հիւրերի հետ: Նրանց դէմքերն արտայայտում էին զարմացում և երկիւղ:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, — հարցնում էին միմեանց:

Մեր բնակարանի մուտքի առջև, կանգնած էր այրի Ալմաստը և ձեռները տարածած դէպի ներքև, գոռում էր հրդեհում այրուողի պէս: Երկու ոստիկան և մեր գաւթապահը բարձրացնում էին սանդխտով... Լեոնին: Նրանց ետևից բարձրանում էին Չաուշէնկօն և Իցկօն:

Նայելով Լեոնի թրջուած հագուստին, կապտած Մայիս, 1901.

դէմքին, ամեն ինչ հասկանալի էր... Մնացեալը երկու
խօսքով պատմեցին Չառլէնկոն և Իցկոն:

Լեւոնին հանել էին ջրից նաւաստիները «Խերսոն»
շոգենաւի տակից, որ երկու շաբաթից յետոյ պիտի տա-
նէր նրան Իտալիա...

ՇԻՐՎԱՆՁԱԴԷ

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ^{*)}

Դ Ր Ա Մ Ա

Գերհարս Հաուպսմանի

Ե Ր Կ Բ Ո Ր Դ Գ Ո Ր Ե Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գեղեցիկ աշնանային առաւօտ է: Տիկին Ֆօկերատը տնային հագուստում, դողնոցով և բանալիների կապոցով, պատրաստում է սեղան՝ նախաճաշի համար: Լսում է մի քանի տղամարդկանց ձայներ, որոնք երգում են. «Ու՛մ Աստուած լաւ շնորհք կամի յայտներ... Մի երգեցիկ միութիւն անցնում է տան մօտով: Օրիորդ Աննա Մառ, խաղողով լի մի կողով կռնից կախ, բարձրանում է պարտիզից պատշկամբը: Նա կանգ է առնում, աւկանջ է դնում երգեցողութեանը և չետոյ, ձեռքով աչքերը արեգակի լոյսից պաշտպանելով, նայում է լճի վրայից դէպի հեռուն: Երգեցողութիւնը քանի դնում, նուազ է լսում: Աննան ներս է մտնում: Նա հագած է կարճ թեւերով առաւօտեան սև զգեստ, իսկ գլխին ու վրին դցած է ասեղնադործ թաշկինակ, Կրծքին՝ մի փնջիկ աշնանային գոյնզգոյն տերեւներից:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Բարի լոյս, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Կողովը մի կողմ ե դնում, շապով մօտեցնում է տիկին Ֆօկերատին եւ համբուրում նրա ձեռքը): Բարի լոյս, մայրիկ Ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այսպէս կանուխ արդէն ոտքի վրայ, սիրելի օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Մենք խաղող էինք քաղում, պ. Յոհաննէսը և ես:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Հէնց ամենալաւ ժամանակն է: (Կողովից խաղողի մի փանի հասալսուղների համը տեսնելով): Էլ աւելի քաղցրանալու է:—Իսկ ձեզ համար յուրտ չէ, օրիորդ: (Մաս-

^{*)} «Մուրճ», №№ 3, 4.

ներով շօշափում ե Աննայի մերկ ձեռքը): Այդպէս թեթև... Ինձ թւում է, որ այսօր բաւականին զով է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Խօսակցութեան ժամանակ խնամով հանում ե ողկոյզները եւ դնում փայտի ավաքի վրայ): Այո, զով է:—Բայց ինձ համար այդ ոչինչ:—Ես ցրտին սովոր եմ:—Օրն աննման է:—Լճի մէջ այն ցիցերը—գիտէ՞ք այն ցիցերը, որոնցից կապում են նաւակները—այսօր վաղ առաւօտեան բոլորովին սպիտակել էին եղեամից:—Այդ շատ տարօրինակ էր թւում: Առհասարակ այստեղ հիանալի է:—Կարող եմ ձեզ այժմ մի քիչ օգնել, մայրիկ Ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Տուէք ինձ, խնդրեմ, շաքարաման:

ՕՐ. ԱՆՆԱ. (Դնում ե շաքարամանը սեղանի վրայ: Տակաւին կորացած սեղանի վրայ եւ մի կողմ նայելով): Դուք ինձ վրայ չէք բարկանում, որ ես ձեզ՝ մայրիկ Ֆօկերատ եմ կանչում:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Ծիծաղում ե): Ա՛հ, ինչո՞ւ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ինչպէս բախտաւոր եմ, որ դուք ինձ թոյլ էք տալիս այդ: (Յանկարծ եւ ջերմ համբուրում ե սիկին Ֆօկերատին): Ա՛խ, ես ձեզնից առհասարակ այնքան շնորհակալ եմ, որ դուք ինձ թոյլ էք տալիս՝ այստեղ լինելու:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ ինչ ասելու բան է, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ինձ շատ երջանիկ եմ զգում ձեր ընտանիքում: Դուք բոլորդ այնպէս սիրալիր էք դէպի ինձ: Դուք առհասարակ բոլորդ էլ լաւ մարդիկ էք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչպէս չէ... Դուք ձեր շորերի վրայ ամառնաթել էք բերել: (Նա վերցնում ե Աննայի շօշերից կպած սարդոսայնները):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չը գիտէի, որ մարդ կարող է այդքան երջանիկ լինել ընտանիքի մէջ: Մինչև այժմ այդ ամենը ինձ անծանօթ էր:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Դեռ եւս շարունակելով վերցնել սարդոսայնները): Այդ տեսակ բան չեն ասիլ, աչքով կը տաք, օրիորդ:—Սպասեցէք ահա այստեղ ես... Կարծես իսկական թելեր լինեն:

ՕՐ. ԱՆՆԱ. Միթէ դուք հաւատա չունէք, մայրիկ Ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, ոչ, սիրելիս: Դուք ճշմարիտ էք ասում. ողորմած Աստուած շատ գթառատ է դէպի մեզ: Բայց այնուամենայնիւ ամենը ուղիղ այնպէս չէ, ինչպէս կարող էր լինել:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես այդ չեմ հասկանում... Խիս դուք բոլորդ... Ախ ոչ, այդ տեսակ բան չը պէտք է ասէք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, ո՛չ: Դուք իրաւացի էք: Հարկաւոր չէ տրտնջալ: (Փոխելով խօսքը): Այժմ շատ լաւ է, որ դուք մեզ մօտ էք: (Խորհրդաւոր): Յոհաննէսի համար էլ դուք մի բարի ոգի էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շփոթուած. գոյնը փոխւում է: Յանկարծ եւ կրակոյ): Ուրեմն իրաւ դուք ինձ մի քիչ համակրում էք:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ես ձեզ մինչև անգամ շատ եմ սիրում, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ո՛չ այնպէս, ինչպէս ես ձեզ: Ինչպէս հարազատ մօրս եմ ես ձեզ սիրում: (Դաւարկ կողովը վերցնելով, կրկին պարտեզ գնալու դիտարկութեամբ): Պարոն Յոհաննէսը նոյնպէս բարի սիրտ ունի, խիստ փափուկ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչպէս թէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հէնց ընդհանրապէս:—Երէկ փողոցում օրինակ, հանդիպեցինք մի հարբած մարդու: Այդ ժամանակ երեւիսները վերադառնում էին ուսումնարանից: Չափահաս մարդիկ էլ ասենք հանգիստ չէին տալիս նրան: Միւզգէլեան ամբողջիկ մօտ հաւաքուել էր իրուն ամբոխ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, այո. նա այդ տանել չէ կարող: Այն ժամանակ արդէն նրան դժուար է պահել: Այդ բնաւորութիւնը նրան շատ անախորժութիւնների պատճառ է եղել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ դուք լաւ չէք համարում, մայրիկ Ֆօկերատ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Լժււ:—Ախ... ի հարկէ, ինչո՛ւ չէ: Այո, նա շատ բարի տղայ է:—Բայց եթէ լաւ մտածենք, ինչ օգուտ այդ ամենից: Ի՞նչ օգուտ այդ բոլոր բարութիւնից: Բացի այդ, որքան էլ բարի լինի, այնուամենայնիւ Աստուծուց երես է դարձրել... Այդ բոլորովին հեշտ չէ: Այդ կարող էք անշուշտ հաւատալ, օրիորդ, մի մօր համար... Ծնողների համար—որոնք, կարող եմ ասել, իրանց սրտի արիւնը չեն ինայել՝ իրանց որդուց մի բարեպաշտ քրիստոնեայ կը թելու համար: (Խնջում է, որպէս զի իր վրդովմունքը ծածկի): Անպիտան հարբուխ: Ամբողջ օրը ինձ տանջում է... (Զբաղուելով, փոփ սրբելով, քիչ լուսփիւնից յետոյ): Նա բարի է, այո: Այդ բոլորը շատ լաւ է և գեղեցիկ, բայց հէնց այդ է կրկնապատկում ցաւս: Եւ տեսնում էք, թէ ինչպէս նա տուժում է. նրա գործունէութեան մէջ բնաւ աջողութիւն չը կայ: Միշտ և յաւիտեան անհանգստութիւն և շտապութիւն: Միշտ մի կատարեալ որսորդական տագնապ: Գէթ մի բան էլ է դուրս գար այդ բոլորից: Բայց մարդ տեսնում է, որ նա առաջ չէ գնում:—Սակայն ինչպէս էր նա առաջ: Մի երեխայ... մի զարմանալի երեխայ էր նա: Դեռ յի-

դուժ եմ, պատուօր Շմիդէլը... ամենքը միայն զարմանում էին: Տասներեք տարեկան հասակում երկրորդ դասարանում էր: Տասնութ տարեկանում աւարտեց գիմնազիան—իսկ հիմա: Հիմա համարեա բոլորը նրա առաջն են տուել, որոնք նրա կէսի չափ ընդունակ չէին, պաշտօններում շատ առաջ են գնացել:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց իսկապէս այդ շատ բնական է—Այդ միայն ապացուցանում է, որ պ. Յոհաննէսը մինչև հիմա եղածից տարբերուել է ուզում: Նա չէ ցանկանում հարթած ճանապարհով գնալ: Պարոն Յոհաննէսը պատկանում է այն մարդկանց թուին, որոնք և՛ ճանապարհներ են որոնում:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց դրա համար ոչ մի մարդ բան չէ տալիս, օրիորդ Աննա: Ի՞նչ օգուտ որ նա այնքան իրան մաշում է: Հարիւրապատիկ աւելի ես կ'ուզեմայի որ նա մի հասարակ գիւղացի լինէր—կամ այգեպան, կամ թէկուզ մի որ և է պաշտօնեայ, կամ մի այլ բան—միայն թէ չը լինէին նրա այդ անվերջ մանրակրկիտ որոնումները... հա, օրորդ: Ներեցէք որ փչացնում եմ ձեր զուարթ տրամադրութիւնը: Ինձ երբեմն այդպիսի մոլեր են պաշարում: Երբեմն այնպէս է լինում որ թւում է, թէ այլևս անկարող ես տանել այդ բոլորը: Իսկ յետոյ դարդ ես անում, դարդ անում ու ասում. «Աստուած ողորմած է»։—Այո, այո: Ծիծաղեցէք, ծիծաղեցէք: Այդպէս անա հին կարծիքների մարդ եմ ես և զրանցից ես յետ չեմ կանգնիլ: Նրանից, որ վերստին է—Նրանից ոչ մի ոյժ աշխարհում չէ կարող ինձ բաժանել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ես էլ չեմ ուզում: Եւ ես չեմ էլ ծիծաղում, մայրիկ Ֆօկերատ: Բայց տեսնում էք. դուք ինքներդ էլ արդէն նորից ուրախացաք: Գնանք: Չէք ուզում: Պատշկամբի վրայ հրաշալի է:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ, Ո՛չ, ոչ: Ես կը մրսեմ: Գործ էլ ունեմ: Գնացէք մենակ—և բերէք ձեզ հետ Յոհաննէսին: Նախաճաշը պատրաստ է: (Օր. Աննան գնում է):

Մինչդեռ տիկ. Ֆօկերատը սրբում է կահ-կարասիքի փողին, լսում է թմբուկների և սրինգների ձայներ: Տիկ. Ֆօկերատը շտապում է դէպի պատուհանը: Գործիքների ձայները թուլանում են և լռում: Տիկին Կէթէն դուրս է դալիս ննջարանից առաւօտեան զգեստով:

ՏԻԿ. Կէթէ. (Յոգնած): Շատ աղմկալի է կիրակի օրերը:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ մարմնամարզների մի լսումը է Բերլինից, սիրելի Կէթէ: Փառաւոր մարդիկ են: Բարի լոյս, հոգիս: Նո՛ւ... Ընչպէս հանդստացար, զաւակս: Լա՛ւ: Ուղիղն ասած՝ այնքան էլ լաւ չէ տեսքդ:

ՏԻԿ. Կէթէ. Փոքրիկը երկու անգամ զարթեց: Եւ ես երկար չը կարողացայ քնել: Սպասիր, մայրիկ: Ես պէտք է լաւ կշռադատեմ... և պէտք է մտածեմ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Չաւակս, դու պէտք է արդէն վերջ դնես և թողնես որ ծծմայրը մենակ քնի Ֆիլիպպի հետ:

ՏԻԿ. Կէթէ. (Թեքել յանդիմանութեամբ): Ախ, մայրիկ, դու գիտես որ...

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Բայց ինչո՞ւ չը լինի այդպէս:

ՏԻԿ. Կէթէ. Դու գիտես որ ես այդ չեմ անիլ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Դու վերջ ի վերջոյ ստիպուած չես լինի այդպէս անել, Կէթիսէն:

ՏԻԿ. Կէթէ. (Գրգռուելով): Ինչ էլ լինի, ես նրանից չեմ բաժանուի: Ֆիլիպպիկը իմ երեխան է: Այդպիսի փոքրիկ երեխային առանց մօր...

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Բայց, զաւակս, հողիս, քան լիցի, ո՞վ է այդպիսի բան ասում: Կայ ես... քեզ համար մի բան կը բերեմ... սուրճ... մի կտոր հաց իւղով... կամ...

ՏԻԿ. Կէթէ. (Սեղանի առաջ վստակաբեկ նստած): Ախ, հա, խնդրում եմ: (Փոքր լուրժիւնից յետոյ, երբ տիկ. Ֆոկերասը հացիկ իւղ ե քսում, Կեքեկն շարունակում է): Իսկ Յոհաննէսը ո՞ւր է:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Նրանք խաղող են քաղում—նա և օրինորդը:

ՏԻԿ. Կէթէ. (Ծնօք ափի վրայ դնելով ծոր տալով ասում է): Օրինորդը շատ սիրելի է: Այդպէս չէ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Պէտք է ասեմ, որ ես էլ եմ նրան հաւանում:

ՏԻԿ. Կէթէ. Տեսնո՞ւմ ես, մայրիկ. իսկ դու միշտ այնպէս վատ էիր խօսում աղատադրուած կանանց մասին:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Ճիշտ ես ասում: Իսկապէս ես պէտք է խոստովանուեմ...

ՏԻԿ. Կէթէ. (Ձգձգելով): Այնպէս պարզ և կանացի: Չանձրալիութեան հետքն անգամ չը կայ:—Չը նայած որ նա այնքան շատ գիտէ և շատ խելօք է: Այդ ես շատ վայելուչ եմ գտնում: Այդպէս չէ, մայրիկ: Նա բնաւ չէ ուղում փայլել իր գիտութեամբ:—Յոհաննէսի տեղ ես այժմ շատ ուրախ եմ:—Դու չես գտնում, մայրիկ. նա այժմ միշտ այնպէս ուրախ է:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. (Զարմացած): Այն, այն: Ճիշտ ես ասում: Արդարեւ նա այժմ մի քիչ փոխուել է:

ՏԻԿ. Կէթէ. Ուղիղ չէ, մայրիկ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍՏ. Գիտես ինչու, որովհետեւ նա այժմ ունի մէկը, որի առաջ նա կարող է իր ուսած բաները երեան հանել:

ՏԻԿ. ԿԵԹԷ. Այդ շատ կարևոր է նրա համար:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, այո. շատ կարելի է:

Դադար

ՏԻԿ. ԿԵԹԷ. Շատ բաներում ես պէտք է համաձայնում եմ օր. Աննայի հետ: Նա այս օրերին ասում էր. մենք կանաչքա գտնւում էինք ստորացած դրութեան մէջ: Եւ նա բոլորովին արդարացի է: Այդ ես հարիւր անգամ զգացել եմ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Էհ, այդ ինձ չէ անհանգստացնում: Գիտեմ—առհասարակ այդ բաներից նա չը պէտք է ինձ նման հին և փորձուած կնոջ հետ խօսի: Եւ այդ նա լաւ հասկացաւ, որ այդպիսի հասկացողութիւնների համար ես շատ եմ պառաւել և շատ բան է գլխովս անցել:

ՏԻԿ. ԿԵԹԷ. Բայց նա այնուամենայնիւ ուղիղ է ասում, մայր: Արևի պէս պարզ է, որ նա իրաւացի է:—Մենք իսկապէս իրօք մի անարգուած ցեղ ենք:—Մտածիր հէնց այն որ մեր օրէնքներում կայ մի յօդուած—այդ նա երէկ պատմեց—որով տղամարդը դեռ այժմ էլ իրաւունք ունի իր կնկան չափաւոր կերպով մարմնական պատժի ենթարկել:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ ես չը դիտեմ: Դրա մասին ես չեմ կարող ոչինչ ասել: Թէև այդ այնքան էլ վատ չէր լինի: Բայց, սիրելի Կէթէ, եթէ ինձ սիրում ես, թող դու այդ նոր պատմութիւնները, Դրանք մարդկանց միայն չփոթում են: Այդ խըլում է միայն հանգստութիւնը և խաղաղութիւնը: Սպասիր, զաւակս, ես իսկոյն սուրճ կը բերեմ քեզ համար: Հա, սիրելիս, այդ է իմ կարծիքը: (Գնում է):

ՏԻԿ. ԿԵԹԷՆ նստած է նախաճաշի սեղանի առաջ, ծնօտը ձեռքի վրայ դրած, արմունկները սեղանի տախտակի վրայ: Յանկարծ տան մօտով անցնում են Յոհաննէսը և օր. Աննան բարձր խօսելով և ծիծաղելով: ՏԻԿ. ԿԵԹԷՆ սարսափահար է լինում, դողդողում և բարձրանում է տեղից, որպէս զի կարողանայ աչքերով հետեւել զոյգին: Նրա հայեացքը լի է երկիւղով, նա շնչում է ծանր: Ապա լսում է ինչպէս տիկ. Ֆօկերատը աղմկում է սրճամանով: Դրանից յետոյ իսկոյն երևում է նա և գտնում է Կէթէին դեռ նոյն դիրքի մէջ սեղանի առաջ, ինչ դրութեան մէջ նրան թողել էր:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Սուրհը ձեռից): Այ այսպէս:—Հիմա խմիր և կազդուրուիր:

Օր. Աննան և Յովհաննէսը մտնում են պատշկամբից:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Լաւ արիք որ եկաք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դուռը բաց քողմելով): Թողնեմք բաց: Արևը արդէն սաստիկ տաքացնում է:—Օրիորդ, դուք ձեզ սաստիկ վերաւորեցիք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Դուրս հանելով խաղողի մի փանի երկարորբեր): Օ՛, ոչ, չնչին բան է: Շատ թաց էր, ես էլ, մկրատը ձեռքիս սահեցի և ընկայ: (Շապով մոտենում է Կեքեին, վերցնում է նրա երկու ձեռները եւ համբուրում հակասք): Բարի լոյս, տիկին Կէթէ:—Ո՛ւու, ինչպէս սառն են ձեռները... ինչո՞ւ են սառը ձեր ձեռները: (Շփելով ճափացնում է նրա ձեռները):

ՅՈՂԱՆՆԷՍ. (Յեհելից մոտենալով համբուրում է Կեքեի քուրը): Բարի լոյս, Կէթէ: (Կովիկական զարմանքով): Ահ, Տէր Աստուած, այս ի՞նչ է դարձեալ քո դէմքը: Սարսափելի է: Բոլորովին ինչպէս մի հիւանդ ճտիկ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց դուք ցուրտ բերիք ներս: Իսկապէս պէտք է շուտով սկսել վառել:—Դէ այժմ նստեցէք: (Բոլորի համար էլ սուրճ է ածում):

ՕՐ. ԱՆՆԱ. (Սեղանը զարդարելով խաղողի վազերով):—Մի փաթը էլ զարդարանք:

ՏԻԿ. ԿԷԹԷ. Հրաշալի է:

ՅՈՂԱՆՆԷՍ. (Նայելով): Այժմ ինքներդ դատէք. ինչպիսի տեսք ունի օրիորդ Աննան այսօր, և ինչպէս էր նա մի եօթ օր առաջ, երբ նա եկաւ այստեղ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այստեղ ինձ շատ լաւ է դալիս: Ես պէտք է շուտով գնամ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Իսկոյն երևում է զիւղական օդի աղդեցութիւնը:

ՅՈՂԱՆՆԷՍ. Իսկ նա ո՞վ էր որ այն ժամանակ հակառակում էր ու հակառակում...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Տեսնես հիմա ի՞նչ է անում հայրիկը:

ՅՈՂԱՆՆԷՍ. Երեւի սաստիկ տխրում է առանց քեզ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Էհ, նա գործ ունի: Չմեռնացանք թէև վերջացել է, բայց նա գրում է ինձ թէ կարող ես մնալ, մինչև որ հարկաւոր կը լինես այդտեղ:

ՅՈՂԱՆՆԷՍ. Նա է գալու քեզ տանի, մայրիկ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, երբ ես նրան դրեմ, կը գայ: (Օր. ԱճճԻՃ): Նա ուրախութեամբ օգտւում է ամեն մի առիթից, երեխաներին նորից տեսնելու համար, իսկ այժմ էլ նաև իր թոռնիկին: Ոչ, պէտք է տեսնէիք, թէ ի՞նչ էր անում նա, երբ ստացուեց ձեր հեռագիրը՝ թէ առողջ տղայ է ծնուել: Նա ուրախութիւնից ուղղակի գծւում էր:

ՏԻԿ. ԿԷԹԷ. Բարի հայրիկ: Իսկապէս դու պէտք է շուտով շտապես վերադառնալ նրա մօտ: Մեր կողմից շատ եսական կը լինէր...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ լաւ, թէ Աստուած սիրես... նախ
և առաջ դեռ քո թշերը մի լքցուեն:

ՕՐ. ԱՆՆԱ. Չէ որ ես էլ դեռ այստեղ եմ: Ի՞նչ էք կար-
ծում: Ես տնտեսութիւն էլ գիտեմ: Եւ ի՞նչպիսի կերակուրներ
կը պատրաստէի ձեզ համար: Բձն ուսական: Բօրչ կամ փլաւ:

Բոլորն էլ ծիծաղում են:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Ակամայ փութկոտութեամբ): Ո՛չ, ոչ: Ի՞նչ
էլ լինի, ես չեմ գնալ:

ՏԻԿ. ԿԷԹԷ. Եթէ իսկապէս քեզ համար ոչինչ, սիրելի
մայրիկ...

Դադար:

ՅՈՀԱՆՆԷՍ. Հապա մեղրը տաս, Կէթիկ:

ՏԻԿ. ԿԷԹԷ. Ահա գալիս է Բրաունը:

Բրաունը վերարկուով, գլխարկով, հովանոցով և ճանապարհորդա-
կան պաշտակով, կռան տակին գիրք: Դէմքի վրայ ձանձրոյթի արտա-
յայտութիւն: Յոգնած և թուլ քայլուածք:

ԲՐԱՈՒՆ. Բձրեւ:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ո՛ւր և այդքան վաղ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Անձեռոցիկով մի բան է փռում):

ՅՈՀԱՆՆԷՍ. Մեղու է, մայրիկ: Մի խփիր, մի խփիր:

ԲՐԱՈՒՆ. Ուզում էի Բերլին գնալ՝ ներկեր գնելու: Դժ-
բախտաբար ուշացայ գնացքին:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ի՛հ, այդ քեզ յաճախ է պատահում:

ԲՐԱՈՒՆ. Ի՞նչ կայ, վաղը կը գնամ, մէկ չէ:

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Բարձրացնում է ձեռնեքը, կարծես մեղուն
պսոսում լինէր նրա պնակի վրայ): Մեղրի հոտ է առել:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրիշ գնացք չը կայ: (Նայում է իր կրծքի
վրայ եւ սպառնալով ասում): Մեղուիկ, մեղուիկ:

ԲՐԱՈՒՆ. Այդ գնացքները ինձ համար շատ թանգ են: Ես
գնում եմ միայն բանուորական գնացքով:

ՅՈՀԱՆՆԷՍ. Իսկ դրանք շատ կանուխ են մեկնում:—Ասա
ինձ: Դու դեռ կարողանում ես նկարել:

ԲՐԱՈՒՆ. Առանց ներկերի: Ո՛չ:

ՅՈՀԱՆՆԷՍ. Բրէօ, Բրէօ: Էլի դու ծուլացար:

ԲՐԱՈՒՆ. Մի օր աւելի վաղ կամ աւելի ուշ հռչակուած,
մէկ չէ... Ի՛հ, այդ ամբողջ նկարչութիւնն էլ առհասարակ...

ՅՈՀԱՆՆԷՍ. Աւելի լաւ է շահմատ խաղալ, այդպէս չէ:

ԲՐԱՈՒՆ. Դու այդ չես հասկանում: Գո ծովը նաւահան-
գիստ չունի, սիրելիս: Դու ապրում ես առանց պաուզների:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ա՛հ, միթէ այդ կարելի բան է...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Վեր է բռնում եւ նշում): Պիծակ,
պիծակ:

Բոլորն էլ անձեռոցիկներով խփում են տիկին ֆոկերատի կողմը:

ՅՈՀԱՆՆԷՍ. Թռաւ դնաց:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Կրկին նստելով սեղը): Անպիտան ա-
րարած:

Բոլորն էլ նստում են:

ՅՈՀԱՆՆԷՍ. Մօտեցիր, նստիր:—Այդ ի՞նչ կայ մօտդ:

ԲՐԱՌԻՆ. Ուզում ես իմանալ: Հետաքրքրական բան է:

ՅՈՀԱՆՆԷՍ. Լաւ, նստիր և դեռ մի քիչ նախաճաշիր:

ԲՐԱՌԻՆ. (Նստում է եւ Յոհաննեսին ցալիս գիրքը: Յոհան-
նեսը քերթում է): Մեծ ուրախութեամբ: Ես հազիւ հազ կարո-
ղացայ մի բան ուտել... Բաց արա այդտեղ—Գարշինի «Նկա-
րիչները»...

ՅՈՀԱՆՆԷՍ. (Թերթելով): Էլ ի՞նչ բան ես գտել:

ԲՐԱՌԻՆ. Հանս, քեզ համար մի բան:

ՕՐ. ԱՆՆԱ. Այո, այդ մի շատ լաւ պատմուածք է: Դուք
դեռ ծանօթ չէք նրա հետ:

ԲՐԱՌԻՆ. Ո՛չ: Միայն այսօր առաւօտեան անկողնումս
սկսեցի կարդալ: Հէնց այդ պատճառով էր, որ չը հասայ գը-
նացքին:

ՕՐ. ԱՆՆԱ. Հիմա դուք Բեաբլինինի թէ Դէդօվի կող-
մըն էք:

ՅՈՀԱՆՆԷՍ. Յամենայն դէպս այժմ դու աւելի կարդալու
կողմն ես քան նկարելու:

ԲՐԱՌԻՆ. Աւելի լաւ է ասես ներկայ վայրկեանում ոչ
կարդալու, ոչ էլ նկարելու կողմը: Կարգա Գարշինի այդ պատ-
մուածքը, մի լաւ գլուխդ կոտրիր վրան և կը տեսնես, որ այժմ
աւելի կարեւոր բաներ կան, քան աշխարհիս բոլոր նկարչու-
թիւնները և շարահիւսութիւնները:

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրեմն դուք Բեաբլինինի կողմն էք:

ԲՐԱՌԻՆ. Բեաբլինինի: Օ՛ո—գիտէք... այդ ես չեմ կարող
այդպէս բացորոշ ասել:

ՅՈՀԱՆՆԷՍ. Իսկապէս ի՞նչ է այդ պատմուածքի իմաստը:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուքս ես բերուած երկու նկարիչներ. մէկը
պարզամիտ, միւսը, այսպէս կոչուած, խորհող նկարիչ: Պարզամի-
տը ինժեներ էր և դառել է նկարիչ: Խորհողը թողնում է նը-
կարչութիւնը և դառնում ուսուցիչ:

ՅՈՂԱՆՆԵՍ. Ինչո՞ւ:

ՕՐ. ԱՆՆԱ. Նրան թւում է որ ներկայումս աւելի կարևոր է ուսուցիչ լինել:

ՅՈՂԱՆՆԵՍ. Ինչպէ՞ս է նա դալիս այդ եղբայրացութեան:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վերցնում է գիրք, քերթում): Սպասէք:—Աւելի լաւ է ես ձեզ կարդամ այդ տեղը.—Ահա. Դէդովը, նախկին ինժեները, տանում է Ռեաբինին շոգեկաթսաների գործարանը: Կաթսաների մէջ աշխատող մարդիկ մի քանի ժամանակից յետոյ սովորաբար խլանում են մուրճի հարուածների սոսկալի աղմուկից: Այդ պատճառով Ռեաբանտանում ուրիշ բանուորները դրանց անուանում են խուլալուորներ: Ահա մի այդպիսի խուլին ցոյց է տալիս նրան Դէդովը աշխատանք կատարելիս: (Նա կարդում է): «Ահա նա նստած է իմ առջև կաթնայի մութ անկիւնում, ամբողջապէս կծկուած, ցնցոտիներով ծածկուած, յոգնածութիւնից շնչասպառ... նրա կապտակարմիր դէմքի վրայ... քրտինքը հոսում է, թափուկով... նրա տանջուած, լայն և ներս ընկած կրծքի վրայ»...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց ինչո՞ւ են նկարագրում առաւելապէս այդպիսի սարսափելի բաներ: Ոչ ոքի այդ չի ուրախացնի:

ՅՈՂԱՆՆԵՍ. (Ժպտալով ու քննադատաբար շոյելով իր մօր գլուխը): Մայրիկ, սիրելի մայրիկ. միթէ միշտ պէտք է ուրախանալ:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ ես չեմ ասում: Բայց արուեստը չէ որ պէտք է զուարճութիւն պատճառի:

ՅՈՂԱՆՆԵՍ. Արուեստը շատ աւելին պէտք է տայ, քան զուարճութիւն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ռեաբինինը ես չեմ զուարճանում: Նա իր հոգու խորքերում ցնցուած է և տալնուկրայ եղած:

ՅՈՂԱՆՆԵՍ. Մտաբերիր հէնց գիւղատնտեսութիւնը, սիրելի մայրիկ: Այնտեղ էլ պէտք է իւրաքանչիւր տարի արօրով տալնուկրայ անել գետինը, որպէս զի այնտեղ նոր հունձ բռնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Ռեաբինինի մէջ էլ, օրինակ, աճում է ինչ-որ նոր բան: Նա ասում է իրան. քանի որ գոյութիւն ունին դեռ այդպիսի տանջանքներ, յանցանք է անել մի այնպիսի բան, ինչ որ անմիջապէս նպատակ չունի նուազեցնել այդ տանջանքները:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Տանջանքը միշտ եղել է:

ՅՈՂԱՆՆԵՍ. Բայց ուսուցիչ դառնալու միտքը այդ դէպքում բաւական անաջող է:

ԲՐԱՌԻՆ. Ինչո՞ւ: Միթէ այդ աւելի օգտակար չէ քան պատկերներ նկարելը կամ գրքեր գրելը:

ՅՈՂԱՆՆԵՍ. Թէ որքան բարձր ես գնահատում քո աշխա-

տանքը, այդ քո գիտենալու բանն է: Ինչ վերաբերում է ինձ, ես բնաւ մտադիր չեմ նսեմանցել իմ դործունէութիւնը:

ԲՐԱՌԻՆ. Դու չես ուզում խոստովանուել այդ բանում, իսկ ես խոստովանում եմ:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ի՞նչ բանում: Ինչո՞ւ ես չեմ խոստովանում:

ԲՐԱՌԻՆ. Հէնց այն:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ի՞նչ:

ԲՐԱՌԻՆ. Որ քո բոլոր գրութիւնները նոյնքան աննպատակ են, ինչպէս...

ՅՈՀԱՆՆԷՍ. Ի՞նչ գրութիւններա:

ԲՐԱՌԻՆ. Հէնց քո այդ փախօֆիդիօլօգիականները:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Բարկացած): Դրանց մէջ դու բան չես հասկանում:

ԲՐԱՌԻՆ. Իսկի չեմ էլ հետաքրքրւում:

ՅՈՀԱՆՆԷՍ. Լսիր. եթէ այդպէս է, դու ողորմելի անուամբ մէկն ես, և կանգնած ես զարգացման այն աստիճանի վրայ...

ԲՐԱՌԻՆ. Այո, այո, դարձեալ պարծեցիր քո դպրոցական իմաստութեամբ:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ես թքում եմ դպրոցական իմաստութեան վրայ. դու այդ շատ լաւ գիտես: Բայց յամենայն դէպս պարզ է...

ԲՐԱՌԻՆ. Այդ դու հարիւր անգամ ես ասել, բայց այնուամենայնիւ գիտական մեծամտութիւնը ցցւում էր քո բոլոր ճեղքերից: Ե՛հ, լաւ է առհասարակ չը խօսենք դրա մասին: Դրանք փափուկ խնդիրներ են, թողնենք ամեն մէկը վճռի ինքն ու ինքը:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ինչո՞ւ են փափուկ:

ԲՐԱՌԻՆ. Աւելորդ է վիճել: Դու միշտ իսկոյն այնպէս բորբոքւում ես, բարկանում ե...

ՅՈՀԱՆՆԷՍ. Ձէ, չէ. արտայայտիր, սիրելիս, արտայայտիր պարզ:

ԲՐԱՌԻՆ. Ա՛խ, անմիտ բան է: Իսկապէս աննպատակ է: Ամեն մէկը թող մտածի և վարուի, ինչպէս ուզում է:

ՅՈՀԱՆՆԷՍ. Այո, ուրեմն քո կարծիքով ես վատ եմ վարւում:

ԲՐԱՌԻՆ. Ո՛չ աւելի վատ, քան բոլոր ուրիշները: Դու էլ կօմպրօմիսի մարդ ես:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ներիր, եթէ ես ասածիդ ոչինչ չը պատասխանեմ:—Այդ բանը ինձ ուղղակի ձանձրացրել է: (Ընդհատելով զրգուռած): Բանն ահա ինչու՞ն է: Դուք, բարեկամներ, արմատական փրագներ էք վեր թակում, իսկ ես մի անգամ ընդ միշտ ասել եմ, որ այդ բանում ես ձեզ հետ չը կամ. հէնց այդ պատճառով էլ ես կօմպրօմիսի մարդ եմ համարւում:

ԲՐԱՈՒՆ. Այդ դու ես այդպէս ասում, իսկ բանը այլ կերպ է. երբ մենք ուրիշներս մեր գաղափարներով համարձակ առաջ էինք քայլում, դու մեր գէմ էիր և սլաշտպանում էիր բոլորը, ինչ որ հին է և անցրած իր կեանքը: Եւ այդ պատճառով էլ քեզինից հեռացրիր քո բարեկամներիդ և մնացիր առանձնացած:

ՏԻԿ. Կէթէ. (Հանգստացնելով): Յոհանէս:

ՅՈՀԱՆՆԷՍ. Բարեկամներին, որոնց ես հեռացրի ինձ-նից... այդ բարեկամների վրայ, անկեղծ ասած... թքում եմ:

ԲՐԱՈՒՆ. (Բարձրանում է սեղից): Դու թքում ես նրանց վրայ: (Նայելով Աննային): Այդ ո՞ր ժամանակից, Հանս:

ՏԻԿ. Կէթէ. (Ինչ լուսիւնից յետո): Դուք ուղում էք գնալ, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. (Վիրաւորում, անտարբեր տոնով): Այո, ես դեռ գործ ունեմ:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Բարեստութեամբ): Յիմարութիւն մի՛ անիր:

ԲՐԱՈՒՆ. Ո՛չ, լուրջ եմ ասում:

ՅՈՀԱՆՆԷՍ. Եթէ այդպէս է, գնա արա, ինչ որ անկարող ես յետաձգել:

ԲՐԱՈՒՆ. Յետաւթիւն: (Գնում է):

Դադար:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Սկսում է հաւաքել ամաններ): Ձեւ հասկանում... միշտ ձեր բանն ու գործը այդ Բրաունն էք չի-նել: Պէտք է խոստովանուեմ. ես նրան շատ էլ չեմ հաւանում:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Բարկացած): Մայր: Ի սէր Աստուծոյ...

ՏԻԿ. Կէթէ. Բայց իսկապէս Բրաունը քեզ հետ աղնուա-բար չէ վարում, Հանսէս:

ՅՈՀԱՆՆԷՍ. Տիկիններ. խնդրում եմ մի խառնուէք իմ մասնաւոր գործերում:

Կրկին լուսիւն: ՏԻԿ. Ֆոկերատը հաւաքում է սեղանը, Տիկին Կէթէն վեր է կենում:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Կեքիին): Ո՞ւր ես գնում:

ՏԻԿ. Կէթէ. Երեխային լողացնեմ: (Բռնի ժպտալով գլուխ է տալիս օր. Աննային եւ գնում ննջարանը):

ՏԻԿ. Ֆոկերատը ամանների մի մասը գնելով մատուցարանի վրայ, ուղում է գնալ: Մյդ ժամանակ դրսի դուռը մի քիչ բացում է և երևում է մի մանրավաճառ կին, որ կանչում է.

«Կանաչի կամլիք»:

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Պատասխանում է): Գալիս եմ: (Գնում է դրսի դուռով):

Մի քիչ դադարից յետոյ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեր է կենում, լարում է իր ժամացոյցը): Այժմ—ճիշտը ժամի քանիսը կը լինի: (Դիմում է Յոհաննէսին, որ նստած է մոայլ տախտակի վրայ): Հիմա, պարոն դօկտօր:— Կամացուկ երգում է «Brüderlein fein» եղանակը չարաննիւթեամբ նայում է Յոհաննէսի վրայ: Նրկունն էլ չեն կարողանում ծիծաղները պահել):

ՅՈՂԱՆՆԷՍ. (Կրկին լուրջ, հառաչում է): Ա՛խ, օրիորդ Աննա: Դժբախտաբար այդ ամենը շատ լուրջ բան է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Չարաննիւթեամբ մատով նրան սաստելով): Իսկ դուք մի ծիծաղէք:

ՅՈՂԱՆՆԷՍ. (Կրկին ծիծաղում է, յետոյ լուրջ): Ոչ իրօք: Դուք չը գիտէք թէ ի՞նչ է ծածկուած Բրաունի յայտնածներին տակ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք դեռ չէք լսել ինչպէս եմ ես նուագում դաշնամուրի վրայ:

ՅՈՂԱՆՆԷՍ. Ո՛չ, օրիորդ:— Բայց ես կարծում եմ որ դուք առհասարակ չէք նուագում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՛չ, ի հարկէ: Ես միայն կատակ էի անում: — Իսկ այսօր առաւօտ դօստներդ եք նաւակոյլ:

ՅՈՂԱՆՆԷՍ. Իսկն ասած ես ոչ մի բանի հաճոյք չեմ զգում:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարեկամաբար սաստելով): Պարոն դօկտօր, պարոն դօկտօր. միթէ կարելի է այդպէս անձնատուր լինել տրամուլեան:

ՅՈՂԱՆՆԷՍ. Ես չեմ հասկանում, թէ ինչպէս Բրաունի պէս մի մարդ...

ՕՐ. ԱՆՆԱ. Ուրեմն դեռ ես Բրաունը: Միթէ արդարեւ նրա խօսքերը այդպիսի խոր տպաւորութիւն են թողել ձեզ վրայ:

ՅՈՂԱՆՆԷՍ. Օրիորդ: Այդ հին պատմութիւններ են, նա իր խօսքերով նորից շարժեց իմ մէջ և...

ՕՐ. ԱՆՆԱ. Պէտք է հանգիստ թողնել, պարոն դօկտօր, հին պատմութիւնները: Քանի յետ նայես, առաջ չես գնալ:

ՅՈՂԱՆՆԷՍ. Դուք կատարելապէս իրաւացի էք: Ուրեմն թողնե՛ք այդ:— Բայց եւ այնպէս հետաքրքիր է, թէ այդ ինչո՞ւ սովորաբար խելօք մարդիկ միշտ նոյն սխալն են կրկնում ամբողջ տարիներին ընթացքում: Չէ որ նա բոլորովին լուրջ էր խօսում: Նրա աչքում իմ փիլիսոփայական աշխատանքը մի ոչ ինչ ու անպէտք բան է: Կարճ էք այդ երևակայել:

ՕՐ. ԱՆՆԱ. Պատահում են այդպիսի մարդիկ:

ՅՈՂԱՆՆԵՍ. Պէտք է հասարակական գործիչ լինել, աղ-
մուկ հանել, իրան արմատական ձևացնել: Չէ կարելի պսակ-
ուել եկեղեցում, նոյն իսկ յարգելով հարսնացուիդ, որ դաս-
տիարակուած է եկեղեցական հոգով: Առհասարակ ոչինչ չը պէտք
է ուշադրութեան առնել, իսկ եթէ մէկը ինձ նման փակուած
չորս պատերի մէջ գիտնական խնդիրներով է ապրում, նա իր
բարեկամների աչքում մի մարդ է, որ իր իդէալներին դաւա-
ճանել է: Միթի այդ տարօրինակ չէ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ա՛հ, պարոն դօկտօր, այդքան մեծ նշանա-
կութիւն մի տուէք այն բանին, ինչ որ ձեր բարեկամները ա-
սում են: Եթէ ձեր հայեացքները կարող են ձեզ բաւականու-
թիւն տալ,—էլ մի վրդովուէք, որ ուրիշներին նրանք չեն գո-
հացնում: Ընդհարումները սպառում են մարդկանց ոյժերը:

ՅՈՂԱՆՆԵՍ. Ախ, ո՛չ, ո՛չ: Ի հարկէ ոչ: Ես անշուշտ այլ
ևս ուշադրութիւն չեմ դարձնի և ինձ չեմ տանջի այդ բաներով:
Ով չէ հաւանում,—ինքը գիտէ: Ես ոչնչով չեմ կարող նրան օգ-
նել: Թէ և այնքան էլ հեշտ բան չէ միշտ անտարբեր մնալ: Մե-
ծանում ես ընկերներիդ հետ. սովորում ես որ քեզ դոնէ մի քիչ
գնահատեն ու յարգեն:—Եւ երբ այլ ևս չես զգում այդ յարգան-
քը, կարծես յանկարծ ստիպուած լինես չնչել մի օղազուրկ տա-
րածութեան մէջ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց դուք, պ. դօկտօր, չէ որ ընտանիք ու-
նէք:

ՅՈՂ. Իրօք: Ի հարկէ: Այսինքն... Ո՛չ, օրիորդ Աննա:—
Ես գիտեմ որ դուք ինձ կը հասկանաք: Դրա մասին մինչև այժմ
ես դեռ ոչ դիմ բան չեմ ասել: Դուք ի հարկէ գիտէք ինչպէս
ես կապուած եմ իմ ընտանիքի հետ: Բայց ինչ վերաբերում է
իմ աշխատանքին՝ ընտանիքս բնաւ չէ հետաքրքրւում նրանով:
Կէթխէնը դեռ մի քիչ համակրում է:—Այդ ի հարկէ շարժում է
ինձ: Ինչ որ ես գրում եմ, նրան միշտ հիանալի է թւում: Բայց
և այնպէս ես գիտեմ որ նա չէ կարող ոչ մի դատողութիւն
տալ: Նրա կարծիքները չեն կարող ինձ համար օգտակար լինել:
Այդ պատճառով ես ուղղակի կարծես երկնքում եմ ինձ զգում
այն օրից, երբ դուք, օրիորդ Աննա, այստեղ էք: Այդ առաջին
անգամն է կեանքումս պատահում որ մէկը անկեղծօրէն հետա-
քրքրուի իմ աշխատանքով, նրանով, ինչ որ ես ընդունակ եմ
ստեղծել: Եւ այդ ինձ կրկին ոյժ և եռանդ է տալիս: Կարծես
անապատի վրայ անձրևում լինէր, կարծես...

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք բանաստեղծ էք եղել, պ. դօկտօր:

ՅՈՂ. Եւ կայ պատճառ բանաստեղծական լինելու: Բայց

դուք սխալուում էք: Իմ մայրս ուղղակի ասում է իմ խեղճ ձեռագիրը և մեծ ուրախութեամբ նրան վառարանը կը նետէր: Իմ բարի հօրս համար էլ պակաս անհաճոյ չէ: Ուրեմն այդ կողմից ես սպասելիք չունեմ: Ինչ վերաբերում է ընտանիքիս, ես նրանից կարող եմ միայն արգելքներ սպասել: Ասե՛ք այդ ինձ չէ էլ զարմացնում: Բայց երբ և բարեկամներս մի հնչին ուշադրութիւն էլ չեն դարձնում իմ գործունէութեան վրայ, երբ այնպիսի մի մարդ ինչպէս Բրաունը...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ զարմացնում է որ հէնց Բրաունն է ձեզ այդպիսի վիշտ պատճառում:

ՅՈՀ. Այո, Բրաունը... բանը այն է որ մենք իրար ճանաչում ենք մանկութիւնից:

ՕՐ. ԱՆՆԱ. Այսինքն. դուք ճանաչում էք նրան մանկութիւնից:

ՅՈՀ. Այո, նա էլ ինձ...

ՕՐ. ԱՆՆԱ. Նա, ձեզ: Ախ, իրաւ:

ՅՈՀ. Այո... այսինքն յայտնի աստիճան:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ սակայն թւում է որ դուք հիմնովին տարբեր մարդիկ էք:

ՅՈՀ. Դուք կարծում էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Մի փոքր լուրջանքով): Պարոն Բրաունը ամեն կողմից դեռ այնպէս չը կազմակերպուած մարդ է, այնպէս... Ես չեմ ուզում ասել որ նա ձեզ նախանձում է, բայց նրան զայրացնում է... նրան հաճելի չէ որ դուք ունէք անկախ ու ինքնուրոյն մտածողութեան եղանակ, որ յամառութեամբ պաշտպանում էք: Այդ նրան նոյն իսկ վախեցնում է:—Նրա մէջ կան ղանազան սօցիալ-էթիկական կամ չը գիտեմ ինչպէս են կոչում՝ գաղափարներ, դրանցից նա պինդ բռնել է, էլ պոկ չէ գալիս, որովհետեւ առանց դրանց նա չէ կարող քայլ անել: Նա իբրեւ մարդ՝ չունի ուժեղ անհատականութիւն, ինչպէս նկարիչներից շատերը: Նա չէ վստահանում մենակ կանգնել: Նա պէտք է զգայ իր յետեից ամբողջ ներկայութիւնը:

ՅՈՀ. Օ, եթէ մէկը ինձ այդ ասէր մի քանի տարի առաջ, երբ ես քիչ էր մնում կորչէի, ճնշուած բարեկամներիս զատապարտութիւններից: Օ, եթէ մէկը ինձ այդ ասէր այն ժամանակ, երբ ես այնչափ սարսափելի ջախջախուած էի, երբ ես ինձ տանջում էի, կշտամբելով որ ես ապրում եմ լաւ բնակարանում, որ ես լաւ ուտում եմ ու խմում, երբ ես վեհերոտութեամբ քաշուում էի ամեն մի բանուորից և միայն սրտի բարակումով էի անցնում այն չինութիւնների մօտից, ուր նրանք

աշխատում են... Այն ժամանակ ես կնոջս էլ շատ տանջեցի: Ես ուզում էի ունեցած-չունեցածս բաժանել և նրա հետ միասին ապրել ինքնայոժար չքաւորութեան մէջ: Ի հարկէ, եթէ հարկ լինէր կրկին այդպիսի ժամանակներ անցկացնել, աւելի լաւ... Այո, ճիշտ եմ ասում... աւելի լաւ կը լինէր Միւզգէլեան լիճը... բայց այժմ ես այնուամենայնիւ (վերցնում ե իր գլխարկը) ուզում եմ այդ յիմար տղային՝ Բրաունին խելքի բերել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նայում ե նրա վրայ մի առանձին ժպիտով):

ՅՈՂ. Ձեր կարծիքով աւելորդ է:

ՕՐ. ԱՆՆԱ. Արէք, ինչ հարկաւոր էք դռնում: Ախ, դուք մեծ երեխայ:

ՅՈՂ. Օրբորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ձեր սիրտը, պարոն դօկտօր, ձեր թշնամին է:

ՅՈՂ. Գիտէք, երբ միտս է դալիս, որ նա այժմ յետ ու առաջ է վազվզում ու բարկանում, չեմ կարողանում հանգստանալ:

ՕՐ. ԱՆՆԱ. Միթէ լաւ է այդչափ զիջող լինել:

ՅՈՂ. (վնդողաբար): Ո՛չ—այդ լաւ չէ: Թէ և նա ինքը առաջինը չի գալ. նա երբէք առաջի քայլը չէ արել, բայց այդ մի և նոյն է: Դուք իրաւացի էք: Եւ այդ պատճառով ես էլ նոյնպէս չեմ դնալ... այս անգամ... Բրաունի մօտ—Ուրեմն զննեք լճում նաւարկելու:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց դուք ուզում էիք ինձ կարգաւ երրորդ գլուխը:

ՅՈՂ. Ձեռագիրը մենք կարող ենք վերցնել մեղ հետ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այո, լաւ: Ես իսկոյն կը հաղնուեմ: (Դնում է):

ՅՈՂ. (Մօտենում ե գրքերի պահարանին, հանում ե իր ձեռագիրը եւ խորասուզում քնքերցանութեան մէջ):

Տիկ. Ֆօկերատը մտնում է դրսի դռնից, ձեռին ոսկէ կտրուածքաւոր երկու զրքոյկներ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հիմա կը վերցնեմ ձեր յարմար աթոռներից մէկը, կը դնեմ ակնոյներս և կը կարդամ առաւօտեան աղօթքներս: Դուրսը պատշաճաբո՞ւմ տո՞ք է:

ՅՈՂ. Ի հարկէ, մայրիկ: (Աչքերը բարձրացնելով ձեռագրից): Այդ ինչ է մօտը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. «Արտի խօսքեր»: Դու խօսք գիտես իմ սիրելի Լաֆաւէրին: Իսկ այս մէկը—Գերօկի՝ «Արմաւենու տերիները» է:—Ինչպիսի մարդ էր նա:—Տեղ-տեղ նա լաւ չչպրում է պարոն գիտնականներին: Աւաղ: (Դրկում ե Յովաննէսին եւ

դնում նրա գլուխը իր կրծքին, ֆեֆեութեամբ): Այ դու մեծ երեխայ, էլի նորից մտախոհութեան մէջ ընկնար: (Ոչ առանց հուսօրի): Ախ դու երիտասարդ հայր:

ՅՈՂ. (Յրուածութեամբ հեռացնելով հայեացքը ձեռագրից): Ո՛հ, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչպէս ես զգում քեզ քո նոր զրութեան մէջ, իբրեւ հայր:

ՅՈՂ. Ա՛հ, մայրիկ, ոչինչ առանձին:—Ինչպէս միշտ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ էլի ի՞նչ պատահեց: Սկզբում դու ուրախութիւնից թռչկոտում էիր, իսկ այժմ... կրկին մի քանից զրծողո՞հ ես:

ՅՈՂ. (Նայելով ցրուած): Ախ, շատ դո՛հ եմ, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Լսիր, դու այժմ միշտ հագնում ես լաւ զգեստդ: Օրիորդ Աննան անշուշտ չի նեղանայ, եթէ դու այստեղ շարունակես հագնել ու մաշել քո հին շորերը:

ՅՈՂ. Մայր, թող խնդրեմ, ես խօ փոքր երեխայ չեմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հէնց իսկոյն բարկացար: (Աւելի պինդ զրկելով նրան, շողմոմբ եւ ֆեֆեութեամբ): Մի քիչ էլ կրօնասէր եղիր, տղաս: Արա այդ ի սէր քո ծեր մօր: Այդ ծեր Հէկելն ու յիմար Դարվինը—զրանք քեզ միայն դժբախտութիւն են պատճառում: Լսում ես: Կատարիր այդ քո ծեր մօրդ ուրախացնելու համար:

ՅՈՂ. (Դեպ երկինք նայելով): Ա՛հ, բարի մարդուկներ: Ձեր մասին իսկապէս կարելի է ասել՝ ներքի զրանց, Հայր, որովհետեւ չը դիտեն... Միթէ դու ճշմարիտ հաւատում ես որ շատ հեշտ բան է հէնց վերցնել և իսկոյն կրօնասէր դառնալ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Հեռանալով): Շատ հեշտ է, շատ հեշտ: Միայն պէտք է ցանկալ, Հաննէս: Միայն փորձիր, Հաննէս: Գոնէ մի անգամ էլ է փորձիր, Հաննէս: (Գնում է պատշկամբ, նստում է այնտեղ արողի վրայ եւ սկսում է կարդալ):

Յոհաննէս կրկին խորատուգում է իր ձեռագրի մէջ: Մտնում է տիկին Կէթէն նամակներով:

Տ. Կէթէ. (Կարդալով, ասլա բարձրացնելով աչքերը): Հաննէս: Նամակ կայ և մեր բանկիւրից:

ՅՈՂ. Խնդրեմ թող, Կէթէ: Այս բոլորիս իմ միտքս բոլորովին այլ բանով է զրադուած:

Տ. Կէթէ. Նա հարցնում է արդեօք ծախի...

ՅՈՂ. Ի սէր Աստուծոյ, թող ինձ, ես անկարող եմ դրա մասին հիմա մտածել:

Տ. Կէթէ. Բայց շտապ բան է, Հաննէս:

ՅՈՀ. (Բռնկելով): Ահա այստեղ, այստեղ, (Չլսածգուրեամբ խփում է ցուցամատով ձեռագրին) իմ գործս աւելի է շտապում:

Տ. Կէթէ. Ինձ համար թէկուզ մնայ էլ, ոչինչ: Միայն թէ վաղը առանց փողի կը լինենք:

ՅՈՀ. (Աւելի եւս գրգռուած):—Ո՛չ, Կէթէ,—մենք իսկապէս իրար համապատասխան չենք: Եւ դեռ դուք միշտ զարմանում էք, ինչու ես երբէք հանդարտ չեմ: Հէնց որ իմ մէջ ամեն բան սկսում է կարգի գալ,—իսկոյն յայտնւում ես և կոպտութեամբ խոթում, ինչպէս կառապանը իր ձեռները...

Տ. Կէթէ. Ամենեին: Հէնց նոր եկաւ նամակատարը և ես քեզ միայն այդ ասացի:

ՅՈՀ. Այո՛, հէնց այդպէս: Հէնց այդ էլ ցոյց է տալիս ձեր՝ բացարձակապէս հասկանալու անկարողութիւնը: Կարծես այդ նոյնը լինէր՝ ինչ մի կօշիկ կարելը: Նամակատարը գալիս է և դու ինձ միայն այդ ես ասում: Բնականաբար: Ինչո՞ւ չէ: Իսկ թէ դրանով խզում ես ահադին ջանքերով կապակցուած մարերի մի ամբողջ շղթայ, դրա մասին դու չես էլ մտածում:

Տ. Կէթէ. Բայց պէտք է մտածել և գործնական կեանքի մասին:

ՅՈՀ. Իսկ ես ասում եմ քեզ, իմ աշխատանքը՝ նախ և առաջ: Առաջինն էլ է նա, երկրորդն էլ է նա, երրորդն էլ է նա, իսկ յետոյ միայն հասնում է հերթը և գործնականին: Աշխատիր գէթ մի անգամ այդ բանը հասկանալ, Կէթէ: Գոնէ մի քիչ ինձ օգնիր կամ բնաւ ոչինչ ինձ մի ասիր գործնականի մասին: Հոգ տար առօրեայ գործերի մասին ինչպէս կամիս: Մի գցիր ինձ վրայ...

Տ. Կէթէ. Բայց ես չեմ կարող ինձ վրայ վերցնել պատասխանատուութիւնը, Հաննէս:

ՅՈՀ. Տեսնում ես, դու դարձեալ նոյնը: Միայն թէ չը լինի ոչ մի ինքնուրոյն որոշում: Այդ ինչո՞ւ դուք աշխատում էք ձեզ ամեն կերպ մէկից կախուած դարձնել: Այդ ինչո՞ւ անողատճառ ուղում էք անչափահաս լինել:

Տ. Կէթէ. (Ուզում է յանձնել նրան նստակը): Ա՛խ, Հաննէս: Դէ մի բան պատասխանիր:

ՅՈՀ. Բայց ես հիմա անկարող եմ, Կէթէ:

Տ. Կէթէ. Ուրեմն երբ դամ դրա համար, Հաննէս: Չէ՛ որ, երբ օրիորդը այստեղ է, ես չեմ կարող...

ՅՈՀ. Այդ ուղղակի այնպէս մանր ու տխմար բան է... Ձը գիտեմ ինչո՞ւ քաշուել: Ձեմ հասկանում... Այդ հոգու մանրութեան նշան է,—էհ:

Տ. Կէթէ. Տեսնեմ թէ ի՞նչ կ'անէիր, եթէ ես այդ բանի մասին սխալի խօսել օրիորդի մօտ:

ՅՈՂ. Միշտ օրիորդը, օրիորդը: Հանգիստ թող օրիորդ Աննային: Նա մեզ բնաւ չէ խանգարում:

Տ. Կէթէ. Ես չեմ էլ ասում որ նա մեզ խանգարում է: Բայց չէ կարող նրա համար չատ էլ հետաքրքրական լինել:

ՅՈՂ. Ախ, Կէթէ, Կէթէ... Այդ տանջանք է: Միշտ փողային հաշիւներ, միշտ երկիւղ, կարծես վաղը արդէն մենք պէտք է սուլած մնանք: Այդ սարսափելի է: Իսկապէս այդ բոլորը այնպիսի տպաւորութիւն է թողնում որ կարծես քո զըլուկը և քո սիրտը ամբողջապէս և միմիայն փողային հոգսերով լինէին լքցուած: Ահա և կնոջ մասին ստեղծած իդէալը... Ի՞նչը կարելի է վերջապէս սիրել նրանում:

Տ. Կէթէ. Իմ մասին ես չեմ էլ հոգում: Բայց ի՞նչ կը լինի Ֆիլիպպիկի հետ, եթէ... Եւ դեռ դու ինքդ ասացիր որ դու չես կարող յոյս դնել վաստակի վրայ: Ուրեմն հարկաւոր է խընայողութիւն անել:

ՅՈՂ. Ի հարկէ: Դու միշտ ի նկատի ունես քո ընտանիքի շահերը, իսկ ես ընդհանուրի շահերի մասին եմ մտածում: Ես առհասարակ ընտանիքի լաւ հայր չեմ: Ինձ համար գլխաւորը այն է որ ես արտայայտեմ, ինչ որ կայ իմ մէջ: Ինչպէս մի Պեգաս լծի տակ, այդպէս եմ ես ինքս ինձ թւում: Եւ այդ երևի ինձ մի ժամանակ կործանելու է:

Տ. Կէթէ. Յոհաննէս: Ինձ համար զարհուրելի է այդպիսի բաներ լսել քեզնից:

ՅՈՂ. Օրիորդ Աննան բոլորովին իրաւացի է: Խոհանոցն ու մանկանոցը ահա ամենալաւ դէպքում ձեր հորիզոնը: Այդ ռահմաններից դուքս գերմանուհու համար ոչինչ գոյութիւն չունի:

Տ. Կէթէ. Բայց և այնպէս մէկն ու մէկը պէտք է կերակուր պատրաստի և երեխաներին պահի: Օրիորդի համար լաւ է այդպէս խօսել: Ես էլ աւելի մեծ ուրախութեամբ կը նստէի և զրքեր կը կարդայի:

ՅՈՂ. Կէթէ: Դու չը պէտք է դիտմամբ ինքդ քեզ ստորացնես: Այդպէս խօսել մի էակի մասին, որ այնքան բարձր է կանգնած, ինչպէս օրիորդ Աննան...

Տ. Կէթէ. Բայց եթէ նա այդպիսի բաներ է ասում:

ՅՈՂ. Ինչպիսի բաներ:

Տ. Կէթէ. Մեր գերմանուհիներին մասին—այդպիսի յիմար բաներ:

ՅՈՂ. Նա ոչ մի յիմար բան չասաց: Ընդհակառակը: Այս վարկեանում ես նոյն իսկ չէի էլ ուզենալ կրկնել թէ ինչպէս

լաւ էր նա քո մասին խօսում: Ես չեմ ուզում այդպիսով քեզ ամաչացնել:

Տ. Կէթէ. Այնուամենայնիւ նա խօսմ ասաց գերմանուհի-ներին մտաւոր նեղ հորիզոնի մասին:

ՅՈՂ. Ապացուցիր որ նա սխալուած է:

Տ. Կէթէ. (Արտասուելով⁸ եւ խանդոս): Ո՛չ, Հաննէս... դու թէն բարի ես—բայց երբեմն... երբեմն այնպէս սառն ես լի-նում, այնպէս դաժան—այնպէս անսիրտ:

ՅՈՂ. (Մի քիչ աւելի հանգիստ): Դէ հիմա էլ անսիրտ տա-ռայ: Ինչո՞վ, Կէթէ:

Տ. Կէթէ. (Հեկեկալով): Որովհետեւ դու ինձ... սանջում ես... դու չատ լաւ գիտես որ...

ՅՈՂ. Ի՞նչ ես գիտեմ, սիրելի Կէթէ:

Տ. Կէթէ. Դու գիտես որքան քիչ եմ ես ինձնից բաւական: Դու այդ գիտես—բայց... Բայց դու բնաւ չես խղճում ինձ: Միշտ ամեն բանով ինձ խայթում ես:

ՅՈՂ. Բայց Կէթէն ինչո՞վ, ինչպէ՞ս թէ:

Տ. Կէթէ. Փոխանակ ներողամիտ լինելու դէպի ինձ, փոխանակ մի քիչ ամբասնելու իմ հաւատը դէպի ինքս ինձ... Ոչ, դու ինձ միշտ նուաստացնում ես, միշտ նուաստացնում... միշտ ստորացնում: Ես ամենևին չեմ երեակայում թէ մի երեկ-լի բան եմ և լայն հորիզոններ ունեմ: Բայց ես խօսմ զուրկ չեմ զգացմունքներից:—Ի հարկէ ես մի լուսատու չեմ: Ընդհանրա-պէս ես արդէն վաղուց է նկատում եմ որ ես համարեա աւե-լորդ եմ:

ՅՈՂ. (Ուզում է բռնել նրա ձեռք, Կեքեմ խլում է ձեռքը նրանից): Դու աւելորդ չես: Այդ երբէք ես չեմ ասել:

Տ. Կէթէ. Դու հէնց նոր այդ ասացիր: Բայց նոյն իսկ եթէ դու այդ չասէիր, ես այդ ինքս զգում եմ:—Ես քո ինչի՞դ եմ, քանի որ չեմ հասկանում քո աշխատութիւնը: Իսկ երեխան... հա ի հարկէ: Նրան ես կաթ եմ տալիս, պահում եմ մաքուր... բայց այդ կարող է մի աղախին էլ անել, և յետոյ... յետոյ այլ ես ոչնչով չեմ կարող ես նրան օգնել: (Կրկին սասիկ լալով): Նա օրիորդ Աննայի մօտ շատ աւելի լաւ կը դաստիարակուէր:

ՅՈՂ. Դու էլ լաւ... բայց, բայց սիրելի Կէթէն:

Տ. Կէթէ. Ես միայն այնպէս եմ ասում: Բայց այդ ճշմա-րիտ է: Օրիորդը շատ է ուսել, շատ գիտէ: Իսկ մենք, մենք ո-ղորմելի հաշմանդամներ ենք: Ի՞նչպէս կարելի է ուրիշի համար նեցուկ լինել, երբ ինքդ երբէք...

ՅՈՂ. (Լի քնքովեամբ եւ սիրով, ուզում է գրկել Կեքեմ): Կէթէն, ոսկէ, ոսկէ դու ստեղծուածք: Դու այնպիսի մի սիրտ

ունես, ինչպէս հէքիաթներ ըստի հոգիները, խորունկ, շատ խորունկ սիրտ ունես, իմ աննմանս: Օ՛, դու իմ քաղցրիկ, իմ հրեշտակ: (Կէքէն հռում է նրան իրանից, իսկ նա քոթովում է): Ես անպիտանի մէկը կը լինեմ, եթէ... երբեմն ես լինում եմ կոպիտ և չար: Ես քեզ արժանի չեմ, Կէթէ:

Տ. Կէթէ. Ա՛հ, ո՛չ—ո՛չ Հաննէս: Այդ դու այնպէս ասում ես միայն այժմ...

ՅՈՀ. Ուղիղ եմ ասում Կէթիսէն:—Թո՛ղ սրիկայի մէկը լի-
նեմ, եթէ ես...

Տ. Կէթէ. Թո՛ղ ինձ Հաննէս: Ես պէտք է մտածեմ—իսկ
նամակը, նամակը:

ՅՈՀ. Ա՛խ, յիմար Կէթիսէն, ինչի՛ մասին պէտք է մտածես:

Տ. Կէթէ. Շատ բաների մասին: Թո՛ղ, թո՛ղ ինձ:

ՅՈՀ. (Ձեռնագիրն): Ա՛հ, դէն գցիր այդ նամակը: Դու իմ
քաղցրիկ, իմ անուշիկ կինս, դու իմ նաղելիս:

Տ. Կէթէ. Ո՛չ, Հաննէս, ո՛չ: (Իրանից հեռացնում է նրան):

ՅՈՀ. Բայց այդ ի՞նչ է պատահել քեզ:

Տ. Կէթէ. Կո՛ց, Հաննէս, նայիր, տես: (Յոյց է ցալիս նը-
րան նամակը): Նա հարցնում է, ծախել արդեօք:

ՅՈՀ. Ո՞ր թղթերը:

Տ. Կէթէ. Մանարանի ակցիաները:

ՅՈՀ. Միթէ տոկոսները հերիք չեն անում:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես խօսում. մենք այս ամիս դարձեալ մօտ
հաղար մարկ աւել ենք ծախսել:

ՅՈՀ. Ի՞նչ ես ասում, Կէթէ: Այդ ուղղակի անհաւատալի
է թւում: Սիրելիք, մի քիչ էլ խնայող եղէք:

Տ. Կէթէ. Ինձ մօտ բոլորը նշանակուած է, Հաննէս:

ՅՈՀ. Այդ մի և նոյն է, ես բան չեմ հասկանում հաշիւ-
ներից:

Տ. Կէթէ. Դու շատ ես բաժանում, Հաննէս: Եւ այդպէս
ահա հաշւում է մեր զրամագլուխը: Ուրեմն ծախի՛ նա ակցիա-
ները:

ՅՈՀ. Այո՛, այո՛—բնականաբար.—բայց սպասիր: Առհասա-
րակ այդ բոլորը չնչին բաներ են. ուր ես գնում:

Տ. Կէթէ. Պատասխան գրելու:

ՅՈՀ. Կէթէ:

Տ. Կէթէ. (Շուռ գալով դուռն մէջ): Ի՞նչ է, Հաննէս:

ՅՈՀ. Եւ դու ուզում ես այդպէս դնալ:

Տ. Կէթէ. Ի՞նչ կայ որ:

ՅՈՀ. Ես ինքս էլ չը գիտեմ ինչ:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես ուզում:

ՅՈՂ. Կէթխէն, ես չը գիտեմ, ինչ պատահեց քեզ հետ:

Տ. Կէթի. Ոչինչ, Հաննէս, ոչինչ:

ՅՈՂ. Դու ինձ այլ ես չես սիրում:

Տ. Կէթի. (հոնարհում ե գլուխը եւ բացասական կերպով շարժում):

ՅՈՂ. (Դրկելով Կեթիին): Ձեռ յիշում, Կէթի, մենք քեզ հետ միանգամ ընդ միշտ պայմանաւորուել ենք իրարից պաշտօնիք չունենալ: Ամենաչնչին պաշտօնիք անգամ: (Աւելի պինդ գրկելով նրան): Դէ ասա տեսնեմ—Դու ինձ այլ ես չես սիրում, Կէթիսէն:

Տ. Կէթի. Ախ, Հաննէս, դու այդ արդէն գիտես:

ՅՈՂ. Եթէ այդպէս է, ինչ է պատահել քեզ:

Տ. Կէթի. Ինքդ այդ գիտես:

ՅՈՂ. Ի՞նչ բան է: Ես ոչինչ չը գիտեմ: Գաղափար անգամ չունեմ:

Տ. Կէթի. Եթէ ես կարողանայի մի նշանակութիւն ունենալ քեզ համար:

ՅՈՂ. Բայց դու հէնց ունես այդ:

Տ. Կէթի. Ո՛չ, ո՛չ:

ՅՈՂ. Ուրեմն, ասա տեսնեմ...

Տ. Կէթի. Այդ հարցում ոչինչ չես կարող անել, Հաննէս, բայց... Ես քեզ չեմ գոհացնում:

ՅՈՂ. Դու ինձ գոհացնում ես: Դու լիովին ինձ գոհացնում ես:

Տ. Կէթի. Այժմ ես այդպէս ասում:

ՅՈՂ. Այդ իմ խորին համոզմունքն է:

Տ. Կէթի. Հիմա, այս վայրկեանում:

ՅՈՂ. Բայց ինչո՞ւ ես եզրակացնում որ...

Տ. Կէթի. Այդ ես տեսնում եմ:

ՅՈՂ. Կէթխէն, միթէ ես առիթ եմ տուել քեզ...

Տ. Կէթի. Ո՛չ, երբէք:

ՅՈՂ. Հիմա տեսնում ես: (Աւելի եւս ցնցուկեամբ գրկելով նրան): Այդ բոլորը անմիտ ցնորքներ են: Վատ մտածմունքներ, Կէթխէն, որոնց պէտք է քեզնից հեռու քշես, հոգիս: (Չեմ համբուրում ե նրան):

Տ. Կէթի. Ախ, եթէ այդ միայն անմիտ ցնորքներ լինէին:

ՅՈՂ. Հաւատա՞ ինձ:

Տ. Կէթի. Իսկ ես, Հաննէս, այնպէս սաստիկ եմ քեզ սիրում: Խօսքերով արտայայտել չեմ կարող թէ ինչպէս չատ: Ինձ թւում է որ աւելի շուտ ես Ֆիլիպպիի կը բաժանուէի...

ՅՈՂ. Բայց, Կէթխէն:

Տ. ԿԷԹԷ. Աստուած իմ, ներիր ինձ այդ:—Փոքրիկ, սիրուն, դուարձալի զաւակս: (Փաթաթում է Յոհաննէսի վզով): Դու իմ սիրելի, իմ բարի...

Լուռ գրկախառնութիւններ:

Օր. Աննան հաղնուած՝ նաւով դրօսնելու համար, բայց է անում սլա-տշկամբի դուռը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Կանչում է): Պարոն դօկտօր: Ախ, ներեցէք: (Յէս է փաշում գլուխը):

ՅՈՀ. Իսկոյն, իսկոյն, օրիորդ: (Վերցնում է իր ձեռա-գիրը): Մենք գնում ենք նաւարկելու, Կէթիէն:—Այլ ևս ոչ մի վատ ժտածմունք. խօսք տուր ինձ: (Համբուրում է հրաժեշտի համար, վերցնում գլխարկը, շուռ է գալիս գնալու): Գուցէ դձ-էլ մեզ հետ կը գաս, Կէթիէն:

Տ. ԿԷԹԷ. Ես չեմ կարող տնից դուրս գալ, Հաննէս:

ՅՈՀ. Ուրեմն ցտեսութիւն: (Գնում է):

Տ. ԿԷԹԷ. (Սեւեռած նայում է նրա յետեւից նման մի մարդու, որ տեսնում է թէ ինչպէս չքանում է հրաշալի մի տեսիլ: Նրա աչքերը լցւում են արտասուքով):

Ե.—Ա.

(Կը շարունակուի)

Հ Ե Յ Ն Ե Ի Ց

Ո՛րսեղ պի՛ս՝ զսնեմ, ո՛վ օսարական,
Իմ ոսկորներին հանգիստ զերեզման.
Հռենոսի սիրուն կակղիի՞՞ սակին,
Արմաւենո՞ւ՝ սակ կիզող հարաւին.

Խույ անապատո՞ւմ արդեօք հեռաւոր
Օսարի ձեռքով պի՛ս՝ հանգչեմ անդորր.
Արդեօք ծովի մօտ՝ աւազի միջի՞ն
Անգարք պի՛ս՝ քնէ իմ անեունչ մարմին:

Է՛հ, ի՞նչ եմ ասում: Զե՞ որ միշտ, յաւէս
Տիրոջ երկինքը կը լինի ինձ հետ,
Եւ գլխիս վերեւ աստղեր անհամար,
Ինչպէս կերոններ, կը վառուեն պայծառ...

ՍԻՄ. ՊԱՊԻԵԱՆ

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Ա.

Առաջաբան. — Սալմաստի սահմանները, դիրքն ու տարածութիւնը. — Նլիման. — Ոռոգումն. — Բուսականութիւնը. — Բուսականութեան փաստող հիւանդութիւններն ու պատահարները. — Երկրաբանական երևոյթները՝ ջրի բաձրանալը և շարժը:

Սալմաստի անունը մեզ բոլորովին անծանօթ չէ. դա մեր անդուդական վիպասան Րաֆֆիի հայրենիքը, Ատրպատականի թեմի ամենահայաչափ գաւառը, Պարսկաստանի խոշ ու մութ անկիւններից մէկն է, որ բռնում է մի փոքր տարածութիւն Պարսկաստանի հիւսիս-արևմտեան անկիւնում, Տաճկաստանի սահմանագծի վրայ, սկսած Ուրմիոյ լճի արևմտեան-հիւսիսային ափերից մինչև Վանի վիլայէթը:

Որքան էլ այս գաւառի անունը մեզ անծանօթ չէ, բայց պէտք է ասել որ այստեղ ապրող մեր մի բուռն արիւնակիցների ներկայ վիճակի մասին՝ մեր ունեցած տեղեկութիւնները չափ մակերևոյթային և անբաւարար են:

Սալմաստի հայերը տասնեակ տարիներից ի վեր ջանք են ցոյց տալիս իրանց դարևոր թմրութիւնից դուրս գալու, իրանց կեանքի պայմանները ժամանակի պահանջներին յարմարեցնելու, բայց հանգիպելով անսպասելի, նորանոր խոչընդոտների, պարբերական անյաջող հանգամանքների, փոխանակ առաջադիմելու, յետ-յետ են գնում թէ նիւթապէս և թէ բարոյապէս....

Սալմաստի սահմաններն են արևելքից՝ Ուրմիոյ լիճը, հիւսիսից՝ իւրի գաւառը, արևմուտքից՝ Բաշկալէ և Աղբակ գաւառակները (Վանի վիլայէթը), հարաւից՝ Սոմայի և մասամբ Ուրմի գաւառը: Հայելանման հարթ դաշտային մի երկիր է Սալմաստը, մօտ 800 քառ. վերստ տարածութեամբ, արևմտեան և հարաւային կողմից շրջապատուած լեռներով: Գաւառի մի փոքր մասը տարածւում է այդ լեռների արևելեան փէշերի վրայ, որ յայտնի է Քիզանի մուլք անունով, ուր ներկայումս ապրում են բացառապէս քրդերը:

Կլիման բարեխառն է: Եթէ համեմատենք Սալմաստի կլիման հարեան Վանի և Ուրմիի կլիմաների հետ, կը գտնենք որ Վանի կլիմայից փոքր-ինչ տաք է, իսկ Ուրմիից՝ ցուրտ: Օրինակ՝ Սալմաստի խաղողը աւելի լաւ է համեմատ, հետեւաբար գինին աւելի քաղցր է լինում քան Վանինը. Սալմաստում նուազ չափով աճող նոննին և թղենին Վանում չեն կարող աճել. իսկ Ուրմիում մշակուող բամբակն ու բրինձը Սալմաստում չեն աճում. խաղողը և միւս պտուղներն առհասարակ Ուրմիում ճոխ, փարթամ և բազմատեսակ են: Սալմաստում տարուայ չորս կղանակները համարեա թէ համաչափ տեղութիւն ունին, ձմեռը երբեմն խիստ ցուրտ է լինում, բայց ոչ երկարատև:

Սալմաստը հարուստ է ջրերով, որոնք ընդհանրապէս բղիւում են արեմտահարաւում փռուած լեռների փեշերից: Զրերի հոսանքի ուղղութիւնը արեմուտքից—արևելքն է: Գաւառին ջուր մատակարարողը՝ գլխաւորապէս Զօլա կոչուած գետակն է, որ ոլոր-մոլոր գալարումներով անցնում է գաւառի կենտրոնով, բաժանելով նրան երկու մասի (հիւսիսային և հարաւային) և թափւում է Ուրմիոյ լիճք: Բացի Զօլայից կան բազմաթիւ մեծ ու փոքր առուներ և աղբիւրներ, որոնք բղիւնով զանազան կողմերից և բարձրութիւններից, ամբողջ գաւառը ոռոգում են օձապտոյտ դժերով: Սալմաստի ջրերը անուշահամ են, սառն և վճիտ, սակաւաթիւ չեն նաև հանքային տաք և սառն աղբիւրներ: Խմելու և անային գործածութեան համար գաւառի մեծ մասը գործ է ածում գետի ջուրը:

Սալմաստի հողն ընդհանրապէս սև գոյն ունի, տեղ-տեղ կաւային է և կարծր: Արդաւանդութեան կողմից աւելի քան բաւարար է: Հողի այդ յատկութեան հետ միանալով ջրերի առատութիւնը, կլիմայի բարեխառնութիւնը՝ Սալմաստը դարձրել են բուսականութեան համար բաւական յարմար մի տարածութիւն: Այդ հանգամանքի չնորհիւ Սալմաստում, ուր բնակութիւն կայ հաստատուած, չը կայ մի թիզ անպէտք և անմշակ հող, այլ ամբողջապէս ծածկուած է հացաբոյսերի արտերով, արհեստական անտառներով, պտղատու ծառերի և խաղողի այգիներով, պարտէզներով, բանջարանոցներով, սեխատաններով և մարգագետիններով:

Գարնանը մի գիւթիչ և հրաշալի տեսարան է ներկայացնում Սալմաստը: Փոքր ինչ հեռուից դիտողին նա ներկայանում է ինչպէս մի գորգ, զարդարուած այնպիսի գոյներով, որոնց ստեղծագործութիւնը միայն բնութեան ճարտարարուեստ վրձինն է յատուկ:

Հացաբոյսերից, հունդեղէններից և բանջարեղէններից

Սալմաստում գլխաւորապէս մշակւում են ցորեն, գարի, կորեկ, եգիպտացորեն, արեածաղիկ, գետնախնձոր, ճակընդեղ, կաղամբ, գազար, լոբի, գնջութ, սոխ և այլն:

Պտղատու ծառերից՝ սալորենի, ծիրանենի, խնձորենի, տանձենի, ընկուզենի, փշատենի, սերկիլի, դեղձի ծառ և այն: Իսկ անպտուղ ծառերից գլխաւորապէս՝ բարդի, ուռի և կաղամախի:

Հողի ամենամեծ մասը յատկացրած է հացաբոյսերի համար, ապա այգիների, իսկ հետզհետէ աւելի մեծ ծաւալ են ստանում արհեստական անտառները:

Յորենի բերքը ջրաբեր մասերում տալիս է 1-ին՝ 8—10, աւելի յաջող պայմաններում էլ աւելի: Դէմերում (լեռնային անջրդի մասերում) 1-ին 15—20 և էլ աւելի:

Խաղողի բերքը կարելի է բաւարար համարել, բայց տարէց տարի զգալի կերպով նուազում է:

Անտառներում բացառապէս սնկում են բարդիներ: Հազիւ թէ 10—15 տարի լինի, ինչ Սալմաստում սկսել են անտառներ պատրաստել, փայտի թանգուծեան պատճառով:

Սալմաստում բուսականութեան վեառող հիւանդութիւններ և պատահարներ հազուադէպ չեն: Հացաբոյսերին գլխաւորապէս վնասում են ցուրտը (գարնան սկզբում շատ անգամ է պատահում), կարկուտը, ինչպէս նաև երաշտը (քիչ է պատահում) և ժանգը, որ առաջ է գալիս անձրևների առատութիւնից: Թրթուրը, որ երբեմն-երբեմն պատահում է առուոյտի արտերում և պտղատու ծառերի վրայ, չուտով ջնջւում է առատ անձրևների և սարեալների շնորհիւ: Սարեալները, որ մեծ բազմութեամբ են գտնւում Սալմաստում, սաստիկ թշնամի են համարւում ինչպէս թրթուռների, նոյնպէս և մորեխների համար:

Սալմաստեցիները չեն յիշում, որ երբեք է մորեխը մուտք գործած լինի Սալմաստ: Խաղողը Սալմաստում վնասւում է յաճախ կարկուտից և երբեմն-երբեմն ցրտից: Ծառերի մէջ պատահող հիւանդութիւններից յիշենք այստեղ այն վարակիչ հիւանդութիւնը, որ 1897 թուին պատահեց Սալմաստի մի քանի գիւղերի անտառներում, որ համարեա մինչև այժմ չարունակւում է հարիւր հազարաւոր 10—15 տարուայ բարդիներ չորայնելով:

Գիւղացիներից ոմանց ասածին նայելով, այդ հիւանդութիւնը առաջ է եկել հարաւից փչող մի քամուց: Յայտնի իրողութիւնը սա է, որ 1897 թուի աշնան գլխաւորապէս Ղաթասարի, փայաջուկի, Դիլիմանի անտառների ծառերի ծայրերի

Թուրքերը սկսեցին չորանալ, յաջորդ գարնան թէև նորից կանաչեցին. իսկ հետեւեալ աշնան արդէն ծառերը սկսեցին չորանալ վերեւից դէպի դաժ: Չորացած ծառերի կճեպի վրայ նկատուում էին անթիւ կտրմրագոյն բծերի կուտակումներ: Ծառերի սաստիկ խիտ-խիտ տնկուած լինելու պատճառով վարակումն էլ արագ չափով ծաւալ ստացաւ, այնպէս որ անտառների տէրերը մինչև այժմ կտրտում են չորացածները և դեռ չեն կարող վերջացնել: Վարակուելուց ազատուեցին 5—9 ամնայ և նրանցից աւելի քիչ տարիք ունեցող բարդիները:

Երկրաբանական երևոյթներից յիշենք այստեղ այն տարօրինակ երևոյթը, որ պատահեց Սալմաստում 1894 թուին, և որի հետքերը դեռ մինչև այժմ մնում են մի քանի գիւղերում:

Յիշեալ թուին դաւառի կենտրոնական մասում և յատկապէս Հաֆթուան գիւղում, անսպասելի կերպով գետնի տակից սկսում է ջուր բարձրանալ: Հետեւեալ գարնան արդէն բազմաթիւ աղբիւրներ են գոյանում և սկսում են առատութեամբ ջուր դուրս ժայթքել: Հիմնայատակ են դառնում շատ ամրապինդ տներ, արտերը ճահիճի կերպարանք են ստանում: Մինչև այժմ էլի մի քանի գիւղերում արտերը ճահճային դրութեան մէջ էլ մնում են: Ոմանք այդ երևոյթը վերագրում են Ուրմիոյ լճակին. ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յիշեալ թուին Ուրմիոյ լճակի ափերը մօտ 5 վերստաչափ բարձրանում են: Գաւառի մի քանի կէտերում ջրերը առատանում են: Նաւապետների ասելով Ուրմիոյ լճակի ջուրը բարձրացած ժամանակ բազմաթիւ աղբիւրներ էին գոյացել լճի մէջ, ինչպէս կարելի է նկատել դիտելով նրա մակերևոյթը:

Երկրաշարժի երևոյթները երբեմն և յաճախ պատահում են Սալմաստում, բայց թեթեւ են և անվնաս: Անցեալ 1900 թուին երկրաշարժի ցնցումը նկատուեց երկու անգամ, յունուարի և ապրիլի ընթացքում: Այդ ցնցումները միաժամանակ նկատուելի եղան խոյում և Ուրմիում:

Հանքերի կողմից թէ որքան հարուստ է Սալմաստը, դա միայն մասնագէտների հետազոտութիւնը կարող է ցոյց տալ: Իբրև դաշտային հարթութիւն, պէտք է ենթադրել, որ—հանքերով շատ հարուստ չէ կարող լինել Սալմաստը, իսկ արևմտեան-հարաւային մասի լեռներում անշուշտ կը լինեն հանքեր, որոնցից, մինչև այժմ յայտնի եղածներից, յիշենք հետեւեալները՝ քարածուխ, բորաքս, մարմարիտ, որոնք մեծ քանակութեամբ գտնւում են Զնդաշի, Քէօհնէ-չըհէրի, Շարայի, Դէրիկի լեռներում: Խիստ սահմանափակ չափով գործ է ածւում բորաքս (երկրադործները և պղնձագործները գործ են ածում

պղինձ կամ երկաթ եռայնելիս)։ Մարմարիոնը նոյնպէս շատ թոյլ չափով է գործածուում գերեզմանների համար։ Փոխադրուում է Ատրպատականի մի քանի մասերում*) , քարածուխի հանքը աւելորդ է սսել, որ անձնանմիսելի է մնում։

Հանքային բաղադրութիւն ունեցող, այսինքն՝ ծծմբային, երկաթային, կրային աղբիւրներ կան Զնգաշտում և Դէրիկում։ Դէրիկում կայ նոյնպէս մի ուրիշ աղբիւր, որ զարբերից ի վեր հանդարտ կերպով իր շուրջն է կուտել և կուտակում է մարմարիոնի ահագին լեռնաբլուրը։ Ինչպէս մարմարիոնի վրայ գոյացող չրջանաձև կարմիր գծերից պէտք է ենթադրել, այդ աղբիւրի ջուրը պարունակում է իր մէջ նաև երկաթի բաղադրութիւն։

Բ

Գիւղերի և բնակիչների թիւը.—Վառապարտեան ձեւը.—Սալմաստի հաքիւմը.—Հողատիրութեան սխտեմը և հողային հարկը.—Գիւղատէրերի աղղեցութիւնը.—Բնակիչների զբաղմունքը.—Երկրագործութիւնը, անասնապահութիւնը, այգեգործութիւնը.—Արհեստները.—Սոււտուրն ու վաճառականութիւնը.—Վաճառականութեան առաջադիմութեան գլխաւոր արգելքերը.—Հաղորդակցութեան ճանապարհները.—Ճանապարհների անապահովութիւնը.—Պոստային հաղորդակցութեան դժերը և ձեւը.—Փութերը.—Փութերը.—Հրէաները.—Աղգարնակութեան տնտեսական վիճակը։

Սալմաստի գաւառն ունի մօտաւորապէս 60 գիւղ **), Դաշտային հարթութեան վրայ գիւղերը շինուած են միմեանց մօտ, իսկ լեռնային մասում ցրտուցան։

Երբ դժուար է գիւղերի ճիշտ թիւը իմանալ, հասկանալի է որ աւելի դժուար է որոշել այդ գիւղերում ապրող բնակիչների թիւը։ Ընդունուած է հաշուել 35—40,000 բնակիչ, որոնց մեծամասնութիւնը կաղմում են թիւրքերը։ Բացի թուրքերից, Սալմաստում ապրում են նաև հայեր, քրդեր, ասորիներ, հրէա-

*) Մակար կաթողիկոսի տապանաքարը, եթէ չեմ սխալում, այս հանքից է բերուած։

**) Ճիշտ կերպով որոշել Սալմաստի գիւղերի թիւը դժուար է, որովհետեւ Սալմաստում (չափապէս լեռնային մասում) կան այնպիսի գիւղեր, որոնք այսօր գոյութիւն ունին, իսկ վաղը՝ ոչ։ Դրա պատճառներն են ա. քրդական տապաւորութիւնները, բ. գիւղատէր աղաների կամայականութիւնը, ճեմում է ք լանկարծ այս ինչ աղալի հողի վրայ 2—3 կամ աւելի տարիներից ի վեր բնակութիւն հաստատող շինականները (մրքաները), որոնք շինել են իրանց համար բնակարաններ, լանկարծ թողնում են հեռանում կամ տղալի հրամանով, կամ թէ իրանք կամով են ընտրում այդ ճանապարհը, աղաների անխիղճ զրկանքներին դիմանալ չը կարողանալով։

ներ, չնչին քանակութեամբ էլ օսմանցի թուրքեր (սիւննիներ)։

Սալմաստի ներկայ կենտրոնական քաղաքն է Դիլման, որ ունի աւելի քան 1000 տուն բնակիչ թուրքեր, որոնք ապրում են քաղաքին կից համանուն աւանում։ Դիլմանումն է դսնւում Սալմաստի դատաւոր-կառավարչի բնակարանը և դատարանը (հիւքիմէթ)։ Այստեղ է նստում նոյնպէս քրիստոնեաների դատաւորը—սարփարաստը։ Դիլմանումն է գաւառական պոստ-հեռագրատունը, մաքսատունը, բանտը, շուկան և արհեստանոցը։ Ամեն կիրակի օր այստեղ լինում է տօնավաճառ, ուր վաճառ են հանւում և փոխանակւում գլխաւորապէս Սալմաստի զանազան բերքերը և աղգաբնակութեան արդիւնագործութեան արդիւնքը։

Սալմաստի ընդհանուր կառավարիչ-դատաւորը կոչւում է հաքիմ։ Սա Խոյի դատաւորի-հաքիմի փոխանորդն է համարւում և ենթարկւում նրա անմիջական իրաւասութեան։

Սալմաստի հաքիմը ընտրւում է Թաւրիզի կամ ուրիշ խօսքով Ատրպատականի նահանգապետի կողմից։ Դատաւորն իր պաշտօնի համար ոռճիկ չէ ստանում, ընդհակառակն նա է վճարում որոշ քանակութեամբ մի գումար նահանգապետին, որով դառնում է մի տեսակ կապալառու։ Ստանձնելով իր պաշտօնը հաքիմը պէտք է իր խնամքին յանձնուած ժողովրդից գոյացնի այնպիսի մի գումար, որով կարողանայ թէ՛ նահանգապետին վճարելիք տուրքը հայթայթել և թէ՛ իր ծախքը հոգալ ու փող աւելացնել։ Պաշտօնավարութեան այդ ձևը հաքիմին հնարաւորութիւն է տալիս ժողովրդին կեղեքելու, հարստանարելու և ամեն տեսակ զեղծումներ գործելու։

Հաքիմը այսպէս ասած բազմակողմանի իրաւունքի տէր է. և՛ կառավարիչ է, և՛ դատաւոր է, և՛ զինուորական հրամանատար, եթէ կամենում էք՝ և՛ ֆինանսների մինիստրութեան գործակալ է, և՛ երկրագործութեան մինիստրի ներկայացուցիչ է և այլն և այլն։ Իսկ այս բոլոր իրաւունքները վայելող հաքիմի միակ գործն է առաւօտից մինչև երեկոյ նստել և սպասել դանգատաւորներին։ Դատաւորը իր ամբողջ պաշտօնավարութեան ընթացքում միայն մի ձգտում ունի, այն է շատ փող կորզել ժողովրդից։

Հաքիմը ժողովրդի համերաշխ բողբոջով անմիջապէս պաշտօնանկ կարող է լինել, թէկուզ նա հազիւ իր պաշտօնավայրը հասած լինի։

Ամուսնական ժառանգական խնդիրները, լուծւում են շարքով։

Շարժն պարսից կրօնական ատենան է, որի վարիչները հոգևորականներն են:

Ինչպէս ամբողջ Պարսկաստանում, նոյնպէս և նրա հեռաւոր ծայրերից մէկում—Սալմաստում հողատիրութեան սիստեմը, հողային հարկերի համար սահմանուած օրէնքը զանազանակերպ է: Այդ տեսակէտից Սալմաստի գիւղերը կարելի է երկու խմբի բաժանել—խալիսէ և աղալը:

Խալիսէ կոչւում են այն գիւղերը, որոնք արքունի սեփականութիւն են համարւում: Սալմաստի գիւղերի մեծադոյն մասը խալիսէ է: Սրանք էլ երկու խմբի են բաժանւում. ա. այն գիւղերը, որոնք արքունիքից գնուած են գիւղում ապրող գիւղացիների կողմից. այդ կարգի գիւղերի բնակիչները հողի հարկը—բերքի $\frac{1}{10}$ ուղղակի տէրութեան զանձարանին են վճարում. բ. այն գիւղերը, որոնք արքունիքից գնուած են ոչ թէ գիւղացիների կողմից, այլ մի կամ մի քանի փողատէրերի կողմից: Գիւղացիները այդ դէպքում հարկը վճարում են այդ գիւղատէր կոչուած ազաններին: Այդ կարգի գիւղերի բնակիչները իբրև հարկ վճարում են ոչ թէ բերքի $\frac{1}{10}$, այլ $\frac{1}{9}$, $\frac{1}{8}$ և աւելի շատ:

Աղալը կոչւում են այն գիւղեր, որոնք աղաների սեփականութիւն են կազմում: Աղան իր սեփական հողը տալիս է գիւղացիներին, որոնք այդ հողի վրայ բնակութիւն են հաստատում, բնակարաններ շինում, հողը մշակում և իրանց աշխատութեան արդիւնքի $\frac{1}{3}$, նոյնիսկ $\frac{1}{2}$ մասը աղաներն են վերցնում: Այդ կարգի գիւղերի բնակիչները կատարեալ ճորտեր են: Բացի նրանից որ գիւղացիներից աղաները վերցնում են գոռքեգեառ, նրանց քրտնքի արդիւնքի կէս մասը, նրանք գիւղացիներին ձրի ծառայացնում են, իսկ իրանց ցանկացած ժամանակն էլ գիւղացիներին գիւղից հանում քցում են դուրս:

Թէ գիւղատէր աղաները, թէ նրանց ներկայացուցիչները և թէ հարկ հաւաքող զանազան կապալառուներ ամենաանխիղճ կերպով գիւղացիներին ճնշում, կողոպտում, հարստահարում են:

Հաւաքում են գիւղացիներից հարկ, արքունի տուրքի կրկնապատիկը, նոյնիսկ եռապատիկը, և որովհետև փողատէր են, նրանք ամեն տեսակ կամայականութիւն կարող են դործ դնել ժողովրդի բողոքը ճնշելու համար: Շատ հազուագիւտ դէպքերում ժողովուրդը կարողանում է կապալառուի ապօրինի պահանջների դէմը՝ բողոքել:

Կան այնպիսի փողատէր գիւղատէրեր, որոնց ազդեցութիւնը գիւղում աւելի մեծ է քան թէ գաւառի հաքիմինը: Ինքը գիւղատէրը կամ նրա ներկայացուցիչն է կարգադրում գիւղում ծագած վէճերը, կոիւնները: Շատ անգամ է պատահում, որ հա-

քիմի ոտորագրեալները (ֆարրաջները), որոնք զատաւորի կողմից գալիս են գիւղացիներին մի որ և է հրահանգ տալու, կամ առաջարկութիւն անելու, ծեծուում են գիւղացիներից և գիւղից վռնուում: Դատաւորը լուծեամբ է տանում այդ անարդգանքը, երբ տեսնում է որ գիւղատէրը փողատէր է: Ամենակենսական խնդիրներն անգամ Պարսկաստանում փողով են լուծուում:

Սալմաստի ազգաբնակչութեան գլխաւոր զբաղմունքն է երկրագործութիւն, անասնապահութիւն, այգեգործութիւն:

Երկրագործութեան համար Սալմաստի հողը, ինչպէս մենք տեսանք, բաւական մեծ յարմարութիւն ունի: Բայց երկրագործութիւնից ժողովուրդը շատ քիչ արդիւնք է ստանում: Նախ՝ ինչպէս իմացանք, երկրագործի աշխատանքի մինչև իսկ $\frac{1}{3}$ մասը անցնում է գիւղատէր կամ կապալառու աղաների ձեռքը: Երկրորդ՝ հողը տարէց տարի անցնում է մի քանի վաշխառուների ձեռքը: Երրորդ՝ ժողովուրդը տարէց տարի բազմանում է, իսկ հողը թուլանում: Թէև Սալմաստում մշակելու յարմար հողի քանակութիւնը շատ մեծ է և կարելի է տարէց տարի ընդարձակել մշակելի հողերի քանակը, բայց դա՝ Սալմաստում ներկայումս հնարաւոր չէ գլխաւորապէս քրդերի պատճառով: Նոյն իսկ շատ գիւղեր քրդերի ասպատակութիւնների ենթակայ լինելով, վերջին տարիները աւերակ են դառնում, իսկ հողերը մնում են անմշակ:

Որքան Սալմաստի դաշտային մասը յարմար է երկրագործութեան համար, նոյնքան և էլ աւելի լեռնային մասը իր ճոխ և ընդարձակ արօտատեղիներով յարմար է անասնապահութեան համար: Չը նայած դրան, անասնապահութիւնը Սալմաստում զարգացած չէ, դա էլ նոյնպէս քրդերի պատճառով, որովհետև լեռները իրանց անսպասելի արօտամարգերով անմասնելի են մնում Սալմաստի ընդհանուր ազգաբնակչութեան. քուրդն է միայն համարձակուում աներկիւղ այդ լեռների վրայ արածացնել իր ոչխարն ու տաւարը, այն էլ շատ չնչին քանակութեամբ, համեմատելով արօտատեղերի ընդարձակութեան հետ: Քուրդի սարսափը չէ թողնում որ Սալմաստի ընդհանուր ազգաբնակչութիւնը օգտուի լեռների վրայ տարածուող արօտատեղերից, իսկ դաշտային մասը, որ ամբողջապէս ծածկուած է հացաբոյսերի արտերով, անտառներով և այգիներով, շատ աննշան քանակութեամբ խոտաւէտ արօտամարդեր ունի: Միջին հաշուով իւրաքանչիւր տուն հազիւ թէ կարողանայ մի ոչխար պահել: Կաթնատու անասուններից Սալմաստում պահում են գոմէշ, կով և ոչխար: Մսացուի համար ոչխար ու տաւար բերում են քրդերը զանազան կողմերից:

Այգեգործութիւնից էլ շատ մեծ արդիւնք չէ ստացուած: Խաղողի բերքը տարէց տարի նուազում է, այդ պատճառով էլ խաղողի այգիների թիւը տարէց տարի պակասում է: Այգիները քանդում են և դարձնում անտառ կամ արփ: Ինչպէս խաղող, այնպէս և միւս պտուղները չեն արտահանում Սալմաստից դուրս, այլ փոխադրւում են գաւառի զանազան մասերը:

Գինու համար Սալմաստի խաղողը չէ բաւականանում, բերում են նաև Սալմաստի շրջակայքից: Միայն Սալմաստի խաղողից տարեկան հազիւ թէ 40,000 վեղրօ գինի ստացուի ներկայումս:

Արհեստը, որ բացառապէս թիւրքերի ձեռքումն է, խիստ ողորմելի և հաճապետական վիճակի մէջ է գտնուում: Յիշենք այստեղ գոյութիւն ունեցող արհեստներից մի քանիսը, որոնց գործութիւն, կօշկակարութիւն, համեսագործութիւն, երկաթագործութիւն, պղնձագործութիւն, հիւսնութիւն և այլն:

Առևտուրն ու վաճառականութիւնն էլ նախանձելի վիճակի մէջ չեն գտնուում, թէև տարէց տարի կրիայի քայքայում առաջ են գնում: Առևտուրի նիւթերն են տեղական (պարսկական) արդիւնագործութիւնն ու բերքերը, ինչպէս նաև արտասահմանից ներմուծուած ճոթեղէնները, անային կահ-կարասիքը, թէյ, շաքար, նաւթ և այլն:

Մինչև վերջին ժամանակները Սալմաստի սոսևտրական հրապարակի վրայ գլխաւոր տեղը զբաւում էին ֆրանսիական ապրանքները (որոնք Սալմաստ մտնում էին Պօլսի-Տրապիզոնի վրայով), իսկ այժմ հետզհետէ ֆրանսիականը տեղի է տալիս ռուսականին, մասնաւորապէս այն զիջումի չնորհիւ, որ Ռուսաստանն անում է Պարսկաստան մտնող մի քանի տեսակ ապրանքների՝ օր. չիթի, չայի, շաքարի, նաւթի համար:

Սալմաստի վաճառականութեան առաջադիմութեան մեծապէս արդեւք է լինում հաղորդակցութեան ճանապարհների տուած անյարմարութիւնը:

Հաղորդակցութեան ճանապարհներ կան Սալմաստից—Թաւրիզ, Շահթախտ, Զուլֆա, Խոյ, Ոււրմի, Վան, բայց բոլոր այդ ճանապարհները բնութեան ձեռքով են չինուած, չը կան խճուղիներ զոնէ ապրանք փոխադրող կառքերի համար, հէնց այդ պատճառով էլ ինչպէս ճանապարհորդների երթևեկութիւնը, նոյնպէս և ապրանքների փոխադրութիւնը կատարւում է ուղտերի, ձիերի, և էշերի միջոցով: Աւելացրէք դրա վրայ և ճանապարհների անապահովութիւնը:

Չը նայած որ Պարսկաստանը խիստ և կոպիտ պատիժներ է նշանակել աւաղակութեան մէջ բռնուողներին, այնուամենայ-

նիւ աւագակութիւնը չատ սովորական զբաղմունք է իրանց կեանքից ձեռք վերցրած քուրդերի և թուրքերի համար *):

Սալմաստից պոստային հաղորդակցութիւնը, ինչպէս Ատըրպատականից գուրա Պարսկաստանի միւս մասերի, նոյնպէս և արտասահմանի հետ լինում է Թաւրիզի վրայով: Թաւրիզ-Սալմաստ պոստային գիծը շարունակուում է մինչև Ուրմի: Պոստային երթեկութիւնը Սալմաստում լինում է շաբաթը մի անգամ միայն: Երթեկութիւնը կատարւում է ձիերի միջոցով, նեղն ընկած դէպքում ձիերին օգնում են էշերը:

Սալմաստի թուրքերը աշխատասէր են, սակաւապէտ, տոկուն, քշով դոնացող **) և բնաւորութեամբ հանդարտաբարոյ են, համեմատելով Ատրպատականի միւս մասերում, օր. Ուրմիում, Թաւրիզում ապրող թուրքերի հետ: Չը նայած դրան, թուրքերը համեմատաբար ամենաաղքատ ժողովուրդն են Սալմաստում: Թուրք ժողովուրդը սաստիկ հարստահարւում է աղաների, թուրք վաշխառուների ձեռքով:

Չը նայած կրօնական խիստ ատելութեան, Սալմաստի թուրքերը իրանց դրացի քրիստոնեայ հայերի հետ լաւ յարաբերութեան մէջ են: Թուրքերը խոստովանում են, որ եթէ հայերը չը լինեն, իրանք չեն կարող ապրել: Հայերն են որ նրանց դործ են տալիս, նրանց աշխատանքը բաւարար կերպով գնահատում: Իրանց մէջ փոխադարձ վստահութիւն չը գտնելով, հայերին վստահելի ազգ են ճանաչում:

Քուրդերը, որ ապրում են Սալմաստի արեւմտեան և հարաւային կողմերում փոռող լեռների վրայ, Սալմաստի ամենաանհանգիստ, և վեհասակար տարրն են: Իբրև լեռնական ժողովուրդ, նրանք գրաւել են Սալմաստի գեղեցիկ լեռները և զբաղւում են անասնապահութեամբ: Չը նայած որ նրանց հողերը մեծամեծ յարմարութիւններ են ներկայացնում նաև երկրագործութեան համար, բայց քուրդը սովոր չէ հանգիստ մի տեղ նստելու և իր աշխատանքով ապրելու: Քուրդի ամենասիրելի և հոգեկան բաւականութիւն պատճառող զբաղմունքն է աւագակութիւն, արլւնհեղութիւն: Սալմաստեցի քուրդը կողոպտում է և՛ թուրքին, և՛ հրէային, և՛ ասորուն, բայց առանձին հաճոյք է զգում հայ-

*) Զարմանալին այն է որ ճանապարհների ապահովութեան համար նշանակուած պահապանները — զարասօրաններն են աւագակութեամբ զբաղուողները կամ աւագակներին զիւրութիւն տուողները:

**) Ամառուայ շոք և երկար օրերին սալմաստեցի թուրքը իր մէկ էշի հետ առաւօտից մինչև երեկոյ չարաչար աշխատում է՝ աղբ, հող, քար կրելով, իսկ իր և իր էշի օրավարձը ո՞րքան լինի որ նա գոհ մնալ—ընդամենը 15—20 կոպէկ: Թէև 10 կոպէկով էլ նա Ալլահին փառք է տալիս:

քրիստոնեայի հետ գործ ունենալ: Վերջին 5—6 տարիներում 5—6 հայաբնակ գիւղ աւերակ դարձրին, բնակիչներին ստիպեցին գաղթել: Քրդերը չեն վախենում Սալմաստի կառավարութիւնից, հէնց այդ պատճառով էլ գործում են, ինչ որ իրանց համար ցանկալի է: Անշուշտ Սալմաստն էլ սահմանակից վանի վիլայէթի հայ գիւղերի վիճակին վաղուց ենթարկուած կը լինէր, եթէ Սալմաստի ժողովուրդը մի ուրիշ բաւական զօրաւոր միջոցով քրդերի ասպատակութիւնը չը սանձահարէր: Դա ինքնապաշտպանութեան միջոցն է: Սալմաստում չը կայ զինուորական—մշտական ոյժ, դրա փոխարէն ժողովրդին, ինչպէս ամբողջ Պարսկաստանում, նոյնպէս և այստեղ իրաւունք է տրուած զէնք պահել՝ վտանգաւոր դէպքերում պաշտպանուելու համար:

Ասորիները, որոնք ապրում են Խոսրովա, Իւլա գիւղերում, նախանձելի դիրք չունեն. տղամարդկանց մեծագոյն տոկոսը Եւրոպայում և Ամերիկայում խաչագողութեամբ է պարապում, իսկ իգական սեռը շնորհիւ այդ հանգամանքին անձնաւոր է եղել անբարոյականութեան:

Հրէաներն ապրում են Քէօհնէ-չըհէրում, զբաղւում են առևտրով, հարուստ են, ղեկավարւում են միեւնոյն հրէական սկզբունքներով, հասկացողութիւններով և կենցաղավարական պայմաններով:

Գ.

Հայաբնակ գիւղերը և հայերի թիւը.—Գաղթականութիւնը զէպի դուրսը և զէպի ներքը.—Հայերի կառավարութեան ձևը.—Սարփարաստութիւնը և ներկայ սարփարաստները.—Հայերի զբաղմունքը.—Երկրագործութիւն.—Վաճառականութիւնը.—Շիլա ներկելու արհեստը մօտիկ անցեալումը.—Պանդխտութիւն.—Պանդուխտների թիւը.—Նրանց զբաղմունքը և պանդխտավայրը.—Պանդխտութեան օգուտները և վնասները.—Ժողովրդի տնտեսական վիճակը.—Տնտեսական յետադիմութիւնը և նրա պատճառները.—Տուգանքը.—Վաշխառութիւնը.—Վեոսական մթերքի թանգանալը.—Վեանքի բարդանալը.—Հայի թանգութիւնը և արհեստական սովը 1897—1900 թ.—Քրդական ասպատակութիւնը:

Մասնաւորները այժմ մեր խօսքը Սալմաստում ապրող հայերի մասին:

Սալմաստի ազգաբնակչութեան $\frac{1}{4}$ մասը մօտաւորապէս կազմում են հայերը, որոնց թիւը հասնում է մօտ 10,000-ի: Ներկայումս հայերն ապրում են հետեւեալ գիւղերում. Հաֆթուան, Փայաջուկ, Մահլամ, Սառնա, Սանամէրիկ, Դալասար, Սաւրա, Հին-քաղսը, Ախտախանէ, Դզլջա, Քալաչան, Այան, Դրիչկ,

Շէյթանավա, Վառդան, Քէօջամիշ, Խոսրովա, Իւլա, Ճարա, Զավաջիւկ, Աղիսմայէլ:

Հայաբնակ գիւղերի և հայերի թիւն անցեալ դարի առաջին քառորդում աւելի մեծ է եղել քան այժմ: Բաղմաթիւ քրդաբնակ, թիւրքաբնակ գիւղեր, ուր այժմ մի տուն անգամ հայ չը կայ, մինչև 1828 թուի ուսուպարսկական պատերազմը հայերի ձեռքումն էին: Յիշեալ պատերազմին անմիջապէս յաջորդող գաղթականութիւնը դատարկեց ինչպէս Խոյի և Նոյնպէս և Սալմաստի հայաբնակ գիւղերը, նրանց բնակիչներին քչեց գէպի Եւրասիի միւս ափը—Երևանի նահանգը: Այժմ այդ գիւղերից չատերը միայն իրանց անուաններով, կիսաքանդ եկեղեցիներով, մատուռներով, դերեզմանոցներով մեղ յիշեցնում են, որ մի ժամանակ հայաբնակ են եղել (Աչնակ, Համբաւանաւա, Սօֆիաւա, Վերին-Դէրիկ և այլն):

Գաղթականական հոսանք Սալմաստից գէպի Ռուսաստան լիշեալ պատերազմից յետոյ մինչև այժմ համարեա թէ շարունակւում է, բայց դանդաղ կերպով. իսկ 1896—97 թուերից սկսած այդ հոսանքն աւելի և աւելի ընդարձակ ծաւալ է ստանում:

Ամեն անգամ և ամեն տեղ, հայը երբ ենթարկուել է անխիղճ բռնակալների բարոյական ճնշման կամ մանաւանդ Փիղիկական կոպիտ ուժին, ստիպուած է եղել, հնարաւոր գէպքերում, թողնել իր մայր հայրենիքը և բնակութիւն հաստատել մի այնպիսի միջավայրում, ուր չը կայ ճնշումն, ուր նա հնարաւորութիւն կ'ունենայ իր արդար քրտինքի արդիւնքը վայելել: Հէնց այդ հանգամանքով էլ բացատրւում է Սալմաստի հայի գաղթականութեան պատճառը: Նրա յանցանքը կամ մեղքը նրանումն է կայանում միայն, որ նա գժբախտութիւն է ունեցել ապրելու իրանից տարբեր հասկացողութիւն, տարբեր կրօն ունեցող և տարբեր սկզբունքներով ղեկավարուող մոլեռանդ, աւաղակարարոյ և բարբարոս ժողովուրդների հետ: Ընկալա, Շիւղան, Հովադար, Փաքիկ, Հախվերան, Վառդան և այլ գիւղերը, որոնք այսօր կամ բոլորովին դատարկ կամ հազիւ 2—3 տուն հայ բնակիչ ունենան, միայն վերջին 4—5 տարիների ընթացքում ենթարկուեցին քրդական աւերածութեան: Լեռնաբնակ հայերը կամայ-կամայ տեղափոխւում են դաշտային գիւղերը, իսկ դաշտավայրի գիւղացիները գէպի Եւրասիի միւս ափը, Իւրաքանչիւր տարի աւելի քան 50 տուն հայ ընտանիք գաղթում է Ռուսաստան: Բայց զարմանալին այն է որ այդ գաղթականութիւնը վերսկսուեց ներկայ Մուղաֆէր-էգդէն շահի օրով, որ ըստ երևութիւն ջանք է ցոյց տալիս իր հաւատարիմ հայ հպատակներ-

րին ապահովել, պաշտպանել նրանց և ամեն կերպ օգնել նրանց առաջադիմութեան ասպարիզում:

Սալմաստը թէև իր աննպաստ պայմաններով բնիկ հայերից դատարկուում է, բայց միւս կողմից մենք տեսնում ենք, որ նա գաղթավայր է հանդիսանում աւելի բարբարոս հալածանքի ենթարկուող մի ուրիշ միջավայրում ապրող հայերի համար:

1877—78 թուի արեւելեան պատերազմի ժամանակ, երբ ամբողջ Վասպուրականը քրդական սանձարձակ ասպատակութեան, աւերածութեան էր մատնուած, Սալմաստի սահմանակից Աղբակ գաւառից հազարաւոր հայեր թողին իրանց հողն ու ջուրը և Սալմաստ ապաստանեցին:

1895—97 թ. Տաճկաստանի յայտնի արհաւիրքների ժամանակ կրկին անգամ Վասպուրականից դէպի Սալմաստ գաղթականութեան ճանապարհ բացուեց, որ և մինչև այսօր շարունակուում է: Աւելի քան 3000 գաղթականների շատ հնչին մասը հայրենիք վերադարձաւ, կամ Կովկաս անցաւ, իսկ մեծագոյն մասը Սալմաստում տեղաւորուեց *):

Այսպէս մենք տեսնում ենք որ Սալմաստը իր ներկայ պայմաններով մի կողմից բնիկ հայերին ստիպում է հեռանալ, իսկ միւս կողմից դրսից գաղթողներին ապաստան տալով, մի կերպ պատսպարում է նրանց, և մասամբ այդ հանգամանքին վերագրելու է այն, որ այսօր Սալմաստը մնում է դարձեալ՝ իբրև Ատրպատականի ամենահայաշատ գաւառը:

Վերոյիշեալ հայաբնակ գիւղերից առաջին վեց գիւղերը Հաֆթուան, Փայաջուկ, Մահլամ, Սառնա, Սանամէրիկ և Ղաւասար՝ զուտ հայաբնակ են: Հայերի մեծամասնութիւնը այդ վեց գիւղերումն է տեղաւորուած: Ամենամեծ գիւղն է Հաֆթուանը, որ մօտ 300 տուն բնակիչ ունի, Փայաջուկը՝ 240 տ. բ., Մահլամը՝ 200 տ. բ. և այլն: Թիւրքախանն գիւղերից Սաւրան ունի մօտ 100 տ. բ. հայ, Հին-Քաղաքը՝ 85 տ. բ. հայ, Ախտախանան՝ 60 տ. հայ, իսկ մնացածները՝ 4—40 տ.:

Մինչև 80-ական թուականները Սալմաստի հայերը են-

*) 1897—98 թուի գաղթականները, որոնց թիւը 2000-ի էր հասնում, սոսկալի տանջանքների ենթարկուեցին Թաւրիզի իշխանութեան հրամանով (այն ժամանակուայ Ատրպատականի նահանգապետի—Սմիր-նիզամի հրահանգով). գաղթականները ձմեռուայ խիստ ցուրտ ու բուքին երկար ժամանակ դէս ու դէն—Թաւրիզ, Ղարաղաղ, Խոյ—մերկ ու քաղցած թափառելուց չիտոյ հաղիւ 1898 թուին իրաւունք ստացան Թէհրանից՝ Սալմաստում տեղաւորուելու Փաստերով ապացուցուած է որ Խոյի տաճկական հիւպատոս Րիզա-բէյի կաղմած ծրագրովն էր որ գաղթականները Պարսկաստանում այդ օրինակ անգթութեան ենթարկուեցին:

Թարկուում էին Սալմաստի հաքիմի իրաւասութեան, բայց որովհետեւ քրիստոնեաները՝ իբրեւ ոչ ուղղափառներ՝ համարձակ չէին կարող ցանկացած ժամանակ պարսիկ պաշտօնեաների մօտ գնալ, մտնել, դուրս գալ, յիշեալ թուականների սկզբներին խնդրեցին կառավարութիւնից՝ որ իրանց համար առանձին քրիստոնեայ կառավարիչ նշանակուի։ Քրիստոնեաների խնդիրը կատարուեց և այդ օրուանից սկսած Սալմաստի քրիստոնեաները ունեցան իրանց քրիստոնեայ կառավարիչը, որ կոչուում է սարփարաստ։ Սկզբում ժողովուրդն ինքն էր ընտրում սարփարաստին և իւրաքանչիւր տուն իբրեւ ոռճիկ վճարում էր սարփարաստին տարեկան 1 զրան (1 զրանի արժէքը այն ժամանակ հաւասար էր ոռսական 14 կոպէկի)։ Բայց այդ կարգը ժամանակի ընթացքում կամաց-կամաց փոփոխութեան երթարկուեց։ Քրիստոնեաների ձեռքից սարփարաստութեան պաշտօնը անցաւ պարսիկների ձեռքը, ապա ընտրութեան իրաւունքն էլ մնաց Թաւրիզի իշխանութեան—արտաքին գործոց նախարարութեան Թաւրիզի գործակալին—Քարգիւզարին։ Իսկ վերջին 5—6 տարիներում սարփարաստութիւնը այնքան արդիւնաւոր պաշտօն համարուեց, որ շահամու պարսիկները սկսեցին միմեանց ձեռքից խլել այդ պաշտօնը՝ 1000—2000 թուման վճարելով քարգիւզարին, որով սարփարաստի ընտրութիւնը նոյն ձևն ստացաւ, ինչ ձևով որ ընտրւում են միւս պաշտօնեաները ամբողջ Պարսկաստանում։ Շնորհիւ այդ հանգամանքին վերջին ժամանակները՝ սարփարաստները սկսեցին ամենածայրայեղ կերպով հայերին հարստահարել և կեղեքել։ Ներկայումս գոնէ սարփարաստները բացի ժողովրդին հարստահարելուց ոչ մի օտուտ չեն տալիս քրիստոնեաներին՝ իբրեւ կառավարիչներ։ Ժողովուրդն իր հաւատը և վստահութիւնը կորցրել է դէպի սարփարաստի արդարամտութիւնը, այդ պատճառով էլ շատ հաղուսագիւտ դէպքերում Սալմաստի քրիստոնեան զիմում է սարփարաստին մի որեիցէ դատական խնդրի առիթով։ Նրանք տեսնելով որ սարփարաստները միայն իրանց կաշառքի քանակութեամբ են վճռում խնդրի այս կամ այն կերպ լուծումը, գիմում են գիւղական հոգաբարձութեան կամ հոգ. իշխանութեան։

Թէև ժողովրդի բողոքով Թաւրիզի հոգ. իշխանութիւնը կարող է սարփարաստին անմիջապէս պաշտօնանկ անել տալ (ինչպէս որ 1899 թ. սրբ. Այվատեանը 3 սարփարաստի պաշտօնից հեռացրեց), բայց դրանով հնարաւոր չէ չարիքի առաջն առնել։ Մի շահամու սարփարաստին չէ որ յաջորդում է մի ուրիշ աւելի սրիկան։ Միակ միջոցը՝ սարփարաստների ոտնձգութիւնից ազատուելու համար մնում է կրկին վերցնել սարփարաս-

տուութիւնը և ենթարկուել հաջիմի իրաւասութեան: Փոխանակ երկու գրպանների մի գրպան լեցնել «Երկու չարեաց փոքրագոյնը» դա է, այդպէս էլ ցանկանում են Սալմաստի հայերը: Դժուար չէ այդ ցանկութիւնն իրագործել—հարկաւոր է մի հանրագիր: Իսկ դժուարութիւնը հէնց այդ հանրագիրը պատրաստելու մէջն է, որովհետև մի փոքր համերաշխութիւն է հարկաւոր, որ ներկայումս Սալմաստում հեշտութեամբ չէ կարելի ձեռք բերել *):

Սալմաստի հայերը ներկայումս զբաղւում են երկրագործութեամբ, այգեգործութեամբ, անտառապահութեամբ, անասնապահութեամբ և մասամբ նաև վաճառականութեամբ:

Երկրագործութեան վրայ սկզբում այնքան մեծ ուշադրութիւն չէին դարձնում ցորենի սաստիկ աժանութեան պատճառով. բայց վերջին տարիների թանգութիւնը հողի գինը բարձրացրեց և ժողովուրդը սկսեց առանձին կարեորութիւն տալ երկրագործութեան: Հողը ուժեղացնելու համար մի քանի տարիներէ ի վեր սկսել են արտերը աղբել: Իրանք սալմաստեցի հայերը շատ հմտութիւն չունեն երկրագործութեան մէջ: 1978 թուին՝ Աղբակից Սալմաստ զաղթող հայերը աւելի ծանօթ են երկրագործութեան արհեստին և Սալմաստի հայերը իրանց արտերի հերկելը, ցանելը, ջրելը ընդհանրապէս դրանց են յանձնում:

Հայ գիւղերի մեծամասնութիւնը թէև խալիսէ է, բայց յանձնուած է գիւղատէր անհատների, որոնք հետզհետէ աւելացնում են հարկի քանակութիւնը, փոխ. տասանորդը (0,1) վերցնելու, ստանում են $\frac{1}{8}$ — $\frac{1}{3}$: Զուտ հայաբնակ գիւղերից Ղաւասարը և Հաֆթուանը գիւղացիների սեփականութիւնն է: Յիշեալ գիւղացիները առանց մի ու է երկրորդական միջնորդի կամ գիւղատէր աղայի երեսը տեսնելու, իրանք հարկը հաւաքում են և Թաւրիդի առաջնորդարանի միջոցով յանձնում են կառարարութեան **): Սառնա գիւղը՝ բառի բուն նշանակու-

*) 1899 թուին այդ նպատակով կազմուեց մի խնդրագիր բարձրագոյն իշխանութեան ներկայացնելու նպատակով Գիւղերի մեծամասնութիւնը յանձին իրանց ներկայացուցիչների ստորագրեց այդ խնդրագիրը, բայց երբ հերթը հասաւ մի քանի վաճառականների (որոնց ձայնը խիստ ազդու է), դործը խանգարուեց: Նրանք չը ստորագրեցին, որովհետև չը կամեցան այդ ժամանակուայ սարկարաստի—Միրզա-Ալի Խանի—որ ի գէպ է ասել Սալմաստի ամենաարիկայ, աւագակ, անկուշտ սարկարաստն է եղել—խաթիրն կպչել...

**) Հաֆթուան գիւղը մինչև 1894 թիւը զանազան գիւղատէրերի ձեռքով հարստահարւում էր: Բայց յիշեալ թուի լունիսին, երբ գիւղատէր Ղալարային մտաւ Հաֆթուան և իւր անտանելի պահանջներով գիւղացիներին զոռեցրեց, ամբողջ հաֆթուանցիների կողմից խիստ ընդդիմութեան

թեամբ աղալըդ է, այսինքն 2—3 աղաների սեփականութիւն է և գիւղացիները հարկը նրանց են տալիս, բացի զանազան գոռեւէպեառից, հողից ստացած բերքի $\frac{1}{3}$ աղաներն են ստանում:

Շնորհիւ այն հանգամանքին որ հայ գիւղերն ընդհանրապէս կապալառուների ձեռքումն են, հայերը երկրագործութիւնից այնքան էլ մեծ արդիւնք չեն ստանում:

Երկրագործութիւնից յետոյ հայերի սիրելի զբաղումն է այգեգործութիւնը, որից ստացած արդիւնքը հազիւ թէ իրանց տնային գործածութեան համար բաւականայ: Միայն խաղողից ստացած գինին է ծախուում, նա էլ հէնց գիւղի մէջ: 12 հայաբնակ գիւղերը միայն այգի ունեն:

Անասնապահութիւնը շատ չնչին տեղ է բռնում Սալմաստի հայի զբաղմունքների մէջ: Վերս մենք արդէն ցոյց տուինք որ այդ զբաղմունքը Սալմաստում ընդհանրապէս զարգացած չէ քրդերի պատճառով, հայերն արանձնապէս աւելի ենթակայ են քրդական այդ ասպատակութիւններին և աւելի անկարող են և անոյժ:

Անտառաբանութիւնը հետզհետէ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում Սալմաստի հայերի զբաղմունքների մէջ: Ապագայում այդ անտառները Սալմաստի հայերին տնտեսական մեծ օգուտներ կարող են տալ, եթէ միայն նորանոր հիւանդութիւններ չը վնասեն դրանց, ինչպէս 1897 թուի հիւանդութիւնը, որ մինչև այժմ վնասել է հարիւր հազարաւոր բարդիներ:

Մինչև 90-ական թուականները Սալմաստի հայաբնակ գիւղերից յատկապէս Հաֆթուան, Փայաշուկ և Ղալասար ունէլին բաւական արդիւնաւոր մի զբաղմունք: Նրանք բամբակի թելից գործում էին կտաւ, ներկում, դարձնում էին չիլա և արտահանում էին Պարսկաստանի զանազան կողմերը, ինչպէս նաև դէպի Երևանեան նահանգը: 1894—95 թուերին այդ զբաղմունքը վերջնականապէս դատարեց Սալմաստում, երբ ռուսական նուրբ ու ճաշակաւոր չիթն ընդհանուր գործածութեան մէջ մտաւ ինչպէս Երևանի նահանգում, նոյնպէս և Պարսկաստանում: Դա մի մեծ հարուած էր այդ արհեստով զբաղողների

ենթարկուեց: Ներկայ և ականատես էի այն տեսարանին, երբ հաֆթուանցի երիտասարդ պատանի, ծերունի, մանուկ և պառաւ քար ու փայտով յարձակում գործեցին աղաչի տան վրայ և նրան ստիպեցին ամենակարճ ժամանակում իր ծառաների հետ փախչել Հաֆթուանից դուրս և միւս անգամ այնտեղ չը մտնել: Թէև այդ ընդդիմութիւնը բաւական նիւթական զոհողութիւն պահանջեց գիւղացիներից, բայց զբանով յաջողեցան նրանք գիւղն ընդմիշտ ազատել գիւղատիրոջ կամայականութիւնից և իրանց փողով դնելով իրանց սեփականացնել:

համար Շիրաչիների մի փոքր մասը՝ զալասարյիք, ինչպէս նաև փայաջուկցիներից ոմանք, որոնք չիլան արտահանում էին դէպի Ռուսաստան իբրև վաճառականներ, ինչպէս նաև արտահանութեան օրէնքներին ու պայմաններին բաւական ծանօթ անձնաւորութիւններ, շարունակեցին պարսկական ապրանքների արտահանութեան դործը Պարսկաստանից—Ռուսաստան. չիլայի փոխարէն սկսեցին արտահանել Ուրմիի, Մարաղայի և Թաւրիզի մրդեղէններից յատկապէս սաբզան ու նուշը։ Որքան էլ հաղորդակցութեան ճանապարհների տուած դժուարութիւնները խիստ աննպաստ պայմաններ են ներկայացնում մրդեղէնների փոխադրութեան Պարսկաստանից—Ռուսաստան (գլխաւորապէս Աստրախան), այնու ամենայնիւ այդ զբաղմունքով պարապող վաճառականները մինչև այժմ չօշափելի չափով օգտուել են և առաջագիմել։

Բայց ինչպէս վերին ասացինք, չիլաչիների միայն մի շատ չնչին մասը կարողացաւ վաճառականական ասպարէզի վրայ մնալ, իսկ ընդհանրութիւնը մնաց անդործ և ճարահատած՝ ընտրեց մի նոր ճանապարհ—դա պանդխտութիւնն էր։

Օտարութիւն գնալու սովորութիւնը թէև վաղուց յայտնի էր սալմաստեցի հային, բայց դա ընդհանուր և անհրաժեշտ պահանջ դարձաւ չիլաղործութեան արհեստի դադարումից յետոյ և այն օրումանից սկսած մինչև այժմ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում։

Ներկայումս Սալմաստի հայերի 35⁰/₀ պանդխտութեան մէջ է. իսկ եթէ հաշուենք միայն աշխատելու ընդունակ տղամարդկանց թիւը, կը տեսնենք որ նրանց 75⁰/₀ պանդխտ է։ (Սաւրան տալիս է ամենաբարձր ⁰/₀, այսինքն 90⁰/₀, փայաջուկը՝ 83⁰/₀, Մահլամը նոյնքան, Հաֆթումանը նոյնպէս, մնացեալ գիւղերը համեմատաբար քիչ)։

Սալմաստեցու պանդխտալայրը Անդրկովկասն է և Սև-ծովի ափի վրայ գտնուած նաւահանգիստները (ա. տեղը բռնում է Թիֆլիզ, ապա՝ Բաթում, Փոթի, Բաղու, Ռոստով, Նովորոսիյսկ, Կերչ, Թէոդոսիա, Եալտա, Սևաստապոլ և այլն և այլն)։ Սալմաստեցի պանդուխտների զբաղմունքն է մշակութիւն, բեռնակրութիւն, գոնապանութիւն, սայլապանութիւն և այլն և այլն։ Արհեստ սովորողների տոկոսը շատ չնչին է։ Արհեստ չը սովորելու պատճառներն են նախ՝ միջոցների սղութիւնը, ապա այն հանգամանքը, որ Կովկասում ձեռք բերուած արհեստը Սալմաստում չէ քաջալերում։

Սալմաստեցի հայ պանդուխտները իւրաքանչիւր տարի հայրենիք կարող են փոխադրել մօտաւորապէս տարեկան 200,000

ռուբլի: Միջին հաշուով իւրաքանչիւր պանդխտին ընկնում է տարեկան 100 ռուբլի: Հայրենիք փոխադրած այդ գումարը սալմաստեցին ձեռք է բերում իր կեանքի գնով: Նա յանձն է առնում ամեն տեսակ զրկանքներ ֆիզիկական թէ բարոյական: Աշխատութիւնը՝ ծանր, վարձատրութիւնը՝ քիչ, անուշադն՝ անբաւարար, բնակարանը՝ մութ ու խոնավ—ահա այն դժոխային պայմանները, որոնց մէջ ապրում է պանդուխտ սալմաստեցին—պայմաններ, որոնք մի քանի տարուայ ընթացքում նրա ամուր կազմուածքը խորտակում, առողջութիւնը քայքայում են: Աւելացրէք դրա վրայ և այն՝ բարոյապէս փչացած շրջանից իւրացրած ակտերն ու մոլութիւնները, որ սալմաստեցին, ինչպէս նաև ամեն մի տգէտ, ռամիկ գիւղացի պանդուխտ, իւրացնում է օտարութեան մէջ իր անհասկացողութեան շնորհիւ: Սալմաստեցի պանդուխտներից սակաւաթիւ չեն նրանք, որոնք զոհ են գնում անառակութեան, հարբեցողութեան և ուրիշ մոլութիւններին:

Ոչ մի ժամանակ սալմաստեցի հայը տնտեսապէս չէ եղել թարկուել այնպիսի տաղնապալի վիճակի, որպիսին այժմ է: 90-ական թուականների սկզբներից սալմաստեցիները սկսում են տարէջ տարի դէպի յետ գնալ: Այդ հանգամանքն ունի իր բաղմաթիւ զօրաւոր պատճառները, որոնցից ամենապաշտօններն են տուգանք վճարելու նորամուտ անիրաւ կարգադրութիւնը, վաշխառութիւնը, կենսական մթերքի թանգանալը, կեանքի պահանջների բարդանալը, հացի անսովոր թանգուլութիւնը, 1897—1900 թ. քրդական ասպատակութիւնները և այլն և այլն:

Այժմ մենք կանգ առնենք իւրաքանչիւր այդ պատճառների վրայ առանձին-առանձին:

Ա. Տուգանք վճարելու նորամուտ անիրաւ կարգադրութիւնը.—Մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու պարսիկ պաշտօնեաների ծայրայեղ չահամուլութեան մասին: Այդ անկուշտ տղրուկները սալմաստեցի հայերին կողոպտելու համար 1894 թուականից սկսած գտան մի շատ զօրաւոր պատրուակ—«Սալմաստում կան հայ յեղափոխականներ—ղաչաղներ»: Սալմաստի ամենամեծ պաշտօնեայից սկսած մինչև ամենափոքրը—հաքիմ, սարիարաստ, թէլէզրաֆ-րէիսի, շահադա, գիւղատէր խան կամ աղա ֆարրաշ, սարբադ—բոլորն էլ այդ միակ պատրուակով *) 4—5 տարուայ ընթացքում յատկապէս Փայաշուկ, Հաֆ-

*) Պարսիկ պաշտօնեաների այդ արարքը մենք բացարձակապէս պատրուակ ենք համարում, որովհետև հարիւրաւոր փաստերը մեզ ցոյց են տալիս, որ նրանք այդ անխիղճ միջոցները գործ էին դնում միմիայն փող

թուան, Մահլամ. Ղալասար, Սարա գիւղերից ստացել են աւելի քան 100,000 թիւման (մօտ 200,000 ռուբլի) տուգանք: Սարսափելի չէ՞ դա: Երկրագործ, պանդուխտ գիւղացին իր չգործած յանցանքի համար այդքան խոշոր պումար միայն իբրև տուգանք տայ... Մենք երկար կանգ չենք առնում պարսիկ պաշտօնեաների այդ անխիղճ հարստահարութեան մանրամասնութիւնների վրայ—քանի որ դրա մասին Կովկասի հայ օրաթերթերից յատկապէս «Մշակ»-ի մէջ ժամանակին միշտ գրուել է:

Բ. Վաչխառութիւն.—Անակնկալ տուգանքները Սալմաստեցիներին զցցելն այս ու ալն վաչխառուների ճանկը:—Մի ծերունի գաղթականի դիակ է գտնուել ջրի մէջ. Ղալասար և Փայաջուկ գիւղացիները մեղաւոր են: Վճռում է բացի զանազան նեղութիւններից, 7,000 ռուբլի վճարել իբրև տուգանք: Գիւղացին ձրտեղից գտնի այդքան փող: Պէտք է նորից նամակ գրէ պանդուխտ զաւակին, փող ինչդրի: Բայց սպասել անկարելի է: Վճռուած է, անմիջապէս պէտք է դործադրել: Ահա այդ աւելի անխիղճ միջոցը ստիպում է գիւղացուն դնալ վաչխառուի ոտքն ընկնել, որպէսզի նա վճարի իրան բաժին ընկած տուգանքը, մինչև որ փող ստանայ ղարիբից: Տոկոսի սովորական չափը հարիւրին քսանհինգ է (250/0) Սալմաստում. բայց նեղն ընկած ժամանակը ձր պարտականն է համարձակուում վաչխառուի հետ խօսք անել 0/0-ի մասին: Վաչխառուն ինքն է գրել տալիս մուրհակը, ինքն է վկաներին ստորագրել տալիս, տարուայ մէջն էլ 3—4 անգամ մուրհակը փոխում է: Չը կայ որ և իցէ միջոց վաչխառուներին զսպելու համար, (չը նայած որ չէրիով տոկոսով փող տալն արգելուում է): Օրէնքը, իրաւունքը, դատաստանը—բոլորն էլ փողի—վաչխառուի կողմն են: Պարպեղով ապրող գիւղացին ի՞նչպէս կարող է բողոքել վաչխառուի դէմ *):

կողմէն համար Նրանց մեծամասնութիւնը՝ գաղափար անգամ չունի, թէ ինչ է լեղափոխութիւն, ինչ էին անում հայ լեղափոխական կոշտածները Սալմաստում: Նրանք աշօմ սաստիկ ափսոսում են, տեսնելով որ գաղթականական հոսանքը դրսից դէպի Սալմաստ կանգ է առել. որովհետեւ գաղթականներն էին նրանց անսպասելի փաստեր տուողները: Վերջին մէկերկու տարիների ընթացքում պարսիկ պաշտօնեաներից ոմանք իրանց ծառաներին ուղարկում են այս ու ալն գիւղը, որպէս զի նրանք ընկերանան, հարբացնեն մի քանի փչացած, սրիկայացած գաղթականներին և մի անկարգութիւն ծաղեցնեն՝ տուգանքի աղբիւր բանալու համար:

*) 1899 թուին Նորպատականի առաջնորդ Ալվատեան եպ.՝ը պատժի ենթարկեց վաչխառուական մեղքի համար Սալմաստի Փայաջուկ գիւղի չալտնի վաչխառու Մ. Մկրտիչ Մ. Գալստեանին. այդ խնդիրը, սակայն, առաջնորդին հասաւ ո՛չ թէ պարտապանի միջոցով, ոչ, այլ կողմնակի մարդկանց միջոցով, որոնցից լիշեալ վաչխառուն իր վրէժը չետոյ լուծեց:

Չը կայ մի գիւղ, որի բնակիչների մեծամասնութիւնը առանց պարտքի ապրել կարողանան: Օր. Փայաջուկ գիւղը, որ Սալմաստի առաջնակարգ գիւղերից մէկն է, բնակիչների 70⁰/₀ ներկայումս պարտքով է ապրում, իսկ սրանից 10 տարի առաջ հազիւ թէ 10⁰/₀:

Գ. Կենսական պիտոյքի թանգանալը.—Մինչև 80-ական թուականների վերջերը համարեա թէ Սալմաստում ամեն բան ձրի էր: 5 անդամից բաղկացած մի ընտանիք, եթէ ունէր մի բեռան տեղ արտ, նա տարեկան հազիւ թէ 25—35 ռուբլու կարիք ունենար: Իսկ այժմ այդ միւսնոյն ընտանիքը՝ միւսնոյն պայմաններով էլ եթէ ապրի, առնուազն կարիք կ'ունենայ 100—150 ռուբլու: Թէ որքան է թանգացել կենսական պիտոյքը վերջին 10 տարուայ ընթացքում, դա ցոյց կը տայ հետեւեալ փոքրիկ ցուցակը.

10 տարի առաջ արժէր.

այժմ արժէ.

	ռուբլի կոպէկ.	ռուբլի կոպ.
Յորենի բեռը.	3—4 —	9—10 *). —
Գինու վեդրօն.	— 30—35	1 ¹ / ₂ —2. —
Խոտի սալը.	1—1 ¹ / ₂ —	5—6. —
Իւղի ֆունտը.	— 6—8	— 18—22
Ոչխարի մսի ֆունտը.	— 2 ¹ / ₂ —3	— 5—6
Գործաւորի օրավարձը —	10—12	— 24—30
Հողի բեռան տեղը *)	15—20 —	50—100 —

Յիշեալ պիտոյքների համեմատութեամբ թանգացել են և միւս բոլոր իրեղէնները:

Դ. Կեանքի պահանջների բարդանալը.—Մինչև 90-ական թուականները Սալմաստի հայերը համարեա թէ կղզիացած կեանք էին վարում. կեանքը նահապետական էր, սնային կահ-կարասիքը, հագուստը պարզ էին և իրանք սալմաստեցիներն էին մեծ մասամբ պատրաստում: Կանանց թէ աղամարդկանց հագուստի գլխաւոր նիւթը իրանց պատրաստած կտաւ կամ չիւլան էր, որոնց հետքն անգամ գտնել այժմ դժուար է: Տրեխ, քաղախին, փօլօղը, շիւա շապիկը, զաղաքէ շալվարը այժմ փոխուել են, նրբացել, ազնուացել. այդ հագուստեղէնների փոխարէն գործ են ածւում՝ չիթ, շալ, մահուդ, մետաքսեղէն-

*) Յորենի բեռը, որ մօտաւորապէս ռուս. 10 պուլին է հաւասար, 1897—1900 թ. բարձրացու մինչև 9—11 թիւմանի (18—22 ռուբլու), իսկ այժմ իջել է 4—5 թիւման:

**) Հողի չափը Սալմաստում՝ բեռն է, որ հաւասար է ռուսական 1,096 քառ. արշինի:

ներ և այլն և այլն: Իսկ ուսման անհրաժեշտութիւնը նոր ծախսերի դռներ է բացել:

Ե. Հայի թանգութիւնը.—Սալմաստեցու տնտեսական վիճակի վրայ մեծապէս ազդեց հայի արտակարգ թանգութիւնը և արհեստական սովը 1897 թուից սկսած մինչև անցեալ 1900 թուի ամառը: Յանկարծ ցորենի գինը քառապատկուում, հնգապատկուում է և դա պատահեց մի այնպիսի ժամանակուամ, երբ մէկ կողմից սալմաստեցուն հարստահարում էին պարսիկ պաշտօնեաները, իսկ միւս կողմից՝ Սալմաստ էին թափուել աւելի քան 2000 սովալլուկ գաղթականներ: Շատ ընտանիքներ այդ ժամանակը իրանց հողերը ծախեցին, շատերը իրանց տները, տնային անհրաժեշտ կահ-կարասիները:

Զ. Քրդական սապատակութիւնը.—Շատերը՝ Սալմաստի հայերի քրդերից կրած վնասը ոչինչ են համարում, իսկ մենք ընդհակառակն կարծում ենք որ նրանց տուած վնասը շատ մեծ է: Մինչև 90-ական թուականները հողի պակասութիւն զգալիս կաբող էին մի քանի ընտանիքով դուրս գալ իրանց գիւղից և գալ «Բիղանի մուլք» կոչուած մասում բնակութիւն հաստատել, ընդարձակ հողեր վերցնելով. նոյնը կարողանում էին անել և Տաճկաստանից եկող գաղթականները, բայց քրդերի 90-ական թուականներից ասպատակութիւնները ոչ միայն խանգարեցին այդ, այլ մի քանի գիւղերի հայ բնակիչներին ստիպեցին թողնել իրանց տները, հողերն ու գնալ անհող և անտուն ապրել միւս դաշտային գիւղերում:

Սալմաստի հայերի տնտեսական վիճակը քաջբայող վերոյիշեալ պատճառների վրայ եթէ աւելացնենք սալմաստեցու միակ արդիւնաւոր զբաղմունքի—չիլագործութեան անկումը (1894—95), ջրի բարձրանալու պատճառով հասած վնասները, (1894—95) որ տասնեակ հազարներից անցաւ, անտառների չորանալը (1897 թուից սկսած), որոնցից առաջ եկած վնասը հարիւր հազարների հասաւ, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչո՞ւ սալմաստեցի հայը վերջին տասնամեակում տնտեսապէս յետադիմել է: Ի նկատի ունեցէք որ այդ բոլոր խիստ աննպաստ պայմանների դէմ մաքառելու համար Սալմաստի հայերը չը կարողացան մի ընդդիմադիր ոյժ ստեղծել. գոնէ հաւասարակշռութիւն պահպանելու համար միակ միջոց, որին նրանք դիմեցին, դա պանդխտութիւնն էր, որ հետզհետէ գաղթականութեան կերպարանք է ստանում:

Ա. ԴԱՐՔԻՆԵԱՆ

(Վերջը հետեւեալ համարում)

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

Այժմ մեզ մնում է ստուգել, ճշտել, թէ ներկայ Զէյթուն գաւառը որ մասն էր հայոց Կիլիկիայի, ինչպէս էր կոչուում Միջին-դարում, և այդ գաւառում ինչ քաղաք, բերդ կամ եկեղեցական հաստատութիւններ գոյութիւն ունէին: Երկիրը քար ու քանդ է եղած, ամեն կողմ տեսնւում են քաղաքների, բերդերի, վանքերի ընդարձակ աւերակներն ու մնացորդները, և դրանք էլ չրջապատուել, ծածկուել են անտառներով, որոնք հագիւ. 4—5 դարերի ընթացքում կարող էին բուսած կամ մեծացած լինել: Այդ բոլորի՝ վանքերի, բերդերի, քաղաքների անունները մենք կարդում ենք Ռուբինեանց ամբողջ չրջանի պատմութեան մէջ, բազմաթիւ պատմական կարևոր դէպքերի հետ միասին, մինչդեռ նրանց տեղերը կամ սահմանները մեզ անծանօթ են, մենք չը գիտենք ոչինչ: Հարկաւոր էր ուսումնասիրել պատմութիւնը, դէպքերը, մանաւանդ օտար պատմիչների գրած, ուսումնասիրել նաև երկիրը, նրա գլխաւոր անկիւնները, դիրքերը և դրանց բաղդատութիւնից կարելի էր վեր հանել մոռացուած հնութիւնների եթէ ոչ ամբողջը, գէթ որոշ մասը:

Կիլիկիայում, ինչպէս նաև Միջին-դարի եւրոպական և բիւզանդական երկրներում, քաղաքական-վարչական շրջաններ (rayon) և կենտրոններ էին ներկայացնում բերդերը և դղեակները, ուր բնակւում էին իշխանները: Բերդերի շուրջը կամ քիչ հեռու հաստատուած էին քաղաքներ կամ գիւղաքաղաքներ, որոնց բնակիչները էնվադիօնների կամ վտանդի ժամանակ ապաստանում և պաշտպանւում էին բերդերում: Բացի սրանից, ինչպէս Վ. Լանդուան դատում է իրաւացի կերպով *), Ռուբինեանց ժամանակ, մանաւանդ 12 և 13-րդ դարերում, եպիսկոպոսական թեմերը շատ անգամ էին և՛ եկեղեցական, և՛ քաղական շրջաններ, մի կէտ, որ որոշ չափով նպաստում է ուսումնասիրութեան:

*) St'w Extrait de la chronique de Sempad.

Նկատի ունենալով աշխարհագրական և տեղագրական տեղեկությունները, որոնք տարբեր ժամանակներ հաղորդել են հայ պատմագիրներից Սմբատ, Հեթում I-ի եղբայրը, Կիրակոս, Մատթէոս Ուրհայեցի, ճանապարհորդներ Willebrand, դերմանացի, որ այցելեց Սիս և Կիլիկիա 1211 թվին, Maundeville, անգլիացի, 14-րդ դարու երկրորդ քառորդում, և բաղմաթիւ ձեռագիր յիշատակարաններ, ներկայ Ջէյթուն գաւառը Ռուբինեանց ժամանակ բաժանուած էր 6 շրջանների կամ գաւառակների.— Արեգնի, Փոնուզ, Կապան, Կանչի, Կոկիսօն, Յախուս. Ռուբինեանների հէնց սկզբում սրանք կազմում էին հայոց իշխանութեան մասերը և ներկայացնում էին լեռնային Կիլիկիայի արևելեան գաւառակները կամ բերդատիրութիւնները *): Արեգնին էր կենտրոն այդ բոլորի թւում և ամենակարեւոր շրջանը թէ՛ քաղաքական և թէ՛ եկեղեցական: Այդտեղ էր հաստատուած նշանաւոր Արեգնի վանքը, որ XII-րդ դարում Կապանի արքեպիսկոպոսութեան աթոռն էր, իսկ աւելի վերջերը զարգացաւ դպրոցական կրթութիւնը:

Արեգին, սակայն, Ռուբինեան քաղաքական պատմութեան մէջ ունեցաւ մեծ դեր, որ մնում է անձանօթ: Այդ գաւառակի մէջ էր գտնուում XIII դարու ընթացքում և յետոյ յաճախ յիշուած նշանաւոր «Դղեակն կամ բերդն կոչեցեալ Բարձր», որ հ. Ղ. Ալիշանի և ուրիշների կողմից սխալմամբ կարծուում է լինել Կիլիկիայի արևմտեան կողմը և չփոթւում է Սաի արևմտեան մասում գտնուած Բարձրբերդի հետ: Մենք հաստատ կերպով կարծում ենք, որ ներկայումս Ջէյթունի գաւառի Արեգնու շրջանում գտնուած Կիւրեքիճի բերդն է հայ պատմագիրների յիշատակած բերդ կամ Դղեակ Բարձրը և կամ յոյն, լատին պատմիչների և կամ ճանապարհորդ Maundeville-ի հաղորդած Pharsipee-ն: Միջին դարում այդ բերդն էր քաղաքական կենտրոնը Ջէյթուն գաւառի և շատ հաւանական է՝ վերջինս Ռուբինեանների ժամանակ անուանուում էր Արեգնու կամ Բարձրբերդի գաւառ անունով: Անհրաժեշտ զանազանութիւնը Բարձր բերդի և Բերդ կամ Դղեակ բարձր-ի մէջ, որ անտես է առնուած հ. Ալիշանի և ժամանակակից ուսումնասիրողների կողմից, առիթ է տալիս սխալ ըմբռնելու նաև մի քանի գաւառների աշխարհագրական դիրքը այնպէս, ինչպէս էր Ռուբինեանների ժամա-

*) Այժմս էլ զրեթէ իրանց նախկին սահմաններով մնում են և կաղմում մի-մի միլիարդութիւն կամ քէհեայութիւն Ջէյթունի գաղմաղամութեան մէջ:

նակ, և չլիթելու բաղմամբիւ բերդերի, վանքերի տեղերը և դրանց հետ միասին պատմական մի շարք կարեւոր եղելութիւններ: Բարձրբերդը և այդ անունով գաւառը գտնուում էին Սաի արեւմտեան կողմը Մոլեւոնի գաւառին մերձակից և նրա տէրն էր XII-րդ դարի վերջերը ինչ-որ Գէորգ իշխան, բայց դա մինեոյն բերդը չէ, ինչ աւելի վերջ հանդիպում ենք յաճախ, պատմական կարեւոր դէպքերի հետ միասին յիշուած մասնաւոր կերպով շեշտուած Դղեակն կամ Բերդն Բարձր և կամ Pharsipee-ն: Անգլիացի ճանապարհագիրը պատմում է նաև, Դղեակի մօտերը կար մի քաղաք *), որ շատ հաւանական է լինել Զէյթունի հարաւ-արեւելեան կողմը Զերմուկի-դաշտի Շեֆեքշիկը (թուրքերէն բառ է և նշանակում է քաղաք), մի ընդարձակ քաղաքի փլատակները ծածկուած հողի տակ, և կամ մինեոյն է, ինչ որ 1280 թուին մի ձեռագիր աւետարանի յիշատակարանում մասնանիչ եղած **) Կոստանդնույ անունով գիւղաքաղաքը:

Որ Բարձր Դղեակը կամ Բերդը գտնուում է Զէյթունի գաւառում և որ ներկայ Կիւրէտինի բերդն է, առաջ ենք բերում հետեւեալ պատմական ապացոյցները:—Լեոն II-ի առաջին դործը եղաւ (1210—15 թ.), իր թագաւորութիւնից անմիջապէս յետոյ, հաստատել աղնուական պարոններին որպէս տէր այս կամ այն բերդին և չնորհել նրանց կալուածներ և աստիճաններ իր գերիշխանութեան տակ: Այստի, Լամօսի և այլն պարոնները նշանակուեցին որպէս միսսիօն ծովեղերքի պահպանութեան. իսկ արեւելեան գաւառների և բերդերի պաշտպանութիւնը յանձնուեց (յիշելով տեղի անունները իրանց աշխարհագրական կարգով) Ալբրատանի, Բարձր-Բերդի, Վահկայի և Մարաշի պարոններին ***):

Շատ որոշ է, որ այդտեղ յիշուած Բարձր բերդը երկրի արեւմտեան հեռաւոր սահմաններում գտնուած բերդը չէ, այլ դա գտնուում է Ալբրատանի, Մարաշի և Վահկայի մէջտեղ, այժմեան Զէյթունի կամ հնուց Արեգնի գաւառում:

Մէկ ուրիշ զբրի, Աստուածաշուռչի, յիշատակարանում գրուած Գուներ վանքի մէջ, համառօտ կերպով նկարագրուում է

*) Այժմ մեր ձեռքի տակ չունենք Maundeville-ի կամ ուրիշ պատմիչների գրուածքները, որոնց միջոցով կարելի կը լինէր աւելի որոշ և աւելի մանրամասն կերպով լուսարանել Զէյթունի անցեալը, Ռուբինեանների ժամանակ գտնուած քաղաքների կամ այս ու այն հաստատութիւնների տեղերը և այլն:

**) Տեսնել Սիսուանի 146 երես:

***) Տեսնել Վ. Լանգլուայի Le tresor des chartes d' Armenie-ի երկրորդ գլուխ երրորդ մասը:

սոյն բերդի տեղը.—«Գրեցաւ սա ՉՄԳ (1304) յերկիրս Կիլիկիոյ, մերձ ի բերդս Բարձր, յանապատ Խաչատրոյ, որ ի վերայ գետոյս Շորկայ, ի քարանձաւ և ի նեղ տեղիս...»։ Զեռագիրը ընդհատուած է այստեղ և Հ. Ալիշանը աւելացնում է իր կողմից, թէ համաձայն տեղագրութեանը՝ դա մերձ է Անդրեասանց ուխտին։ Եթէ ամբողջ յիշատակարանը լինէր մեր առաջ, աւելի որոշ կերպով կարող էինք կարծիք յայտնել։ Յամենայն դէպս Արեգնի շրջանում են Անդրէասանց գիւղը և վանքի աւերակները. բայց ինչ վերաբերում է Շորկ գետակին, դա սկիզբն է առնում Բերդի լեռներից, ցածր է դալիս Զէյթունի արևմտեան եզերքով և աւելի վարը Կիւրէտինի բերդի կողքերը քերկրով անցնում է։

XII-րդ դարու երկրորդ քառորդում Թորոս II խոյս է տալիս Կ. Պօլսից և անցնում, Կիպրոսի գծով, Կիլիկիա. նա հետը հետէ զրաւում է արևելեան և հիւսիս-արևելեան բերդերը, ինչպէս Ամուտան, Սիմանակլան, Վահկան, Բարձր Դղեակը և այլն։ Միևնոյն ժամանակ արևմտեան գաւառների բերդատէրերը, ի միջի այլոց նաև Բարձրբերդի (Ասի արևմտեան կողմը) տէրը, Թորոսի ազդականներից, միացած էին յոյների հետ ընդդէմ Թորոսի։ 1157—8 թուին Թորոսը պաշարուեց յունական մեծ բանակի կողմից, որի թւում էին Լամբրոնի, Պապիոնի, Բարձրբերդի իշխանները, արևմտեան գաւառներից։ «Պաշարեալ զնա ի Դղեակն Բարձր բերդ կոչեցեալ. յարձակեալ ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն յունաց, զբազումս եսպան և զյոյով սևաւաստիոսս զերի տարեալ ի Դղեակն՝ վաճառեաց ընդ ոսկւոյ կայսերն Էմմանուէլի *)»... Նմանապէս Վահրամ ժամանակագիրը հաղորդում է...

«Թորոսի ի Դղեակն ելեալ
որ Բարձր բերդ էր ասացեալ,
և ըզ լեւանց զկիրճն առեալ,
հետևակն զօրօք լցեալ»...

Թորոսը գերի վերցրեց այս կռուում նաև յունաց հետ միացած հայ իշխաններից, որոնց թւում էր և՛ Վասիլ իշխանը, Բարձրբերդի տէրը։ Շատ պարզ է, որ Կիլիկիայում կային երկու բերդեր, որոնցից մին կոչւում էր Բարձրբերդ, երկրի արևմտեան սահմանում, իսկ երկրորդը՝ Դղեակ կամ բերդ Բարձր անունով, հիւսիս-արևելեան լեռնադաւառում, Զէյթունում։

*) Տե՛ս Սիսուան 148 երես։

Այս միևնույն ընդդէմ XIII-րդ դարի սկզբներում պատկանում էր «Թագաւորահայր Կոստանդին» (Հեթում I-ի հայրը *): 1254 թուին Հեթումը ճանապարհորդեց Թաթարաց երկիրը և մի ընդարձակ շրջան կատարելով Կասպից ծովի շուրջը՝ 1256 թուին վերադարձաւ Կիլիկիա հիւսիսարևելեան ճանապարհով, իր բարեկամ Հուլաղուի հետ դաշնակցելուց յետոյ. «անդը չղթաւ ի բերդըս այս Բարձր և արքայն Հեթում՝ յայն ինչ դարձին ի Թաթարաց, ուր էր հայրն իւր Կոստանդին և ուստերը և զստերը իւր, և ուրախացաւ յոյժ»։ Հեթում այցելեց Բարձր բերդը և իր հօրը՝ նախ քան անց կենալը Սիս կամ երկրի արևմտեան մասերը։

Սոյն բերդը, Բարձր անունով, գտնւում էր ընդհանրապէս Մարաշախաների կամ բանակի հրամանատարների ձեռքում։ Նա էր արևելեան և հիւսիսարևելեան սահմանների պահապանը, երբ մասնաւոր Բերդուսը անցնում էր թշնամիների ձեռքը։ Ինչպէս նկատում է Հ. Ալիշան, թէ և ակնարկելով արևմտեան սահմանը. «Թուի թէ վասն ամրութեան տեղւոյն իբրև զմի ի դրանց տշխարհին պահէր զայն խորսդէտ ծերունին» (Կոստանդին)։ Նրկար ժամանակ, մինչև իսկ Ռուբինեան իշխանութեան վերջանալուց յետոյ էլ, այս բերդը մնում էր հայոց ձեռքում, որոնք ոչ միայն ազատ ապրում էին, այլ և նեղում էին օտար ճանապարհորդներին, ինչպէս հաղորդում են օսմանցի պատմիչները։ Գրեթէ ամբողջ Կիլիկիան, բացի Ջէյթունի լեռնավանդակը, զբաղւած էր XV-րդ դարի վերջերս օսմանցիներից կամ զիւլզաղերցիներից և կամ ուրիշ թիւրքմէն ցեղերից. իսկ Ջէյթուն գաւառը պահպանում էր իր անկախութիւնը, և դա սոյն բերդի և գաւառի ամրութեան շնորհիւ էր։

Ջէյթունի գաւառում և սոյն բերդի շուրջը գտնւում էին XI և XII դարերում և յետոյ երկար ժամանակ Ակնեք, Մեծ-Քաք, Անդրեասանց ուխտ, Դոնեք, Թիւրքթիմ վանքերն ու եկեղեցական հաստատութիւնները, որոնք իր ժամանակի դպրական կրթութեան մէջ գլխաւոր տեղ են դրաւել։ Հ. Ալիշանը սխալմամբ ենթադրում է նմանապէս, որ սոյն եկեղեցական հաստատութիւններից մի քանիսը գտնւում էին Կիլիկիայի արևմտեան գաւառներում, և յարգելի գիտնականի այդ ենթադրութիւնը առաջանում է նրանից, որ նա կարծում է Բարձր Դղեակը գտնւում է արևմտեան սահմաններում, որի շուրջը կամ այդ շրջանում էին այդ հաստատութիւնները։

Ակնեք վանքի մասին Հ. Ալիշան գրում է **). «դոր ստէսլ

*) Տե՛ս Սիսուան 148 երես։

**) Տե՛ս Սիսուան 153 երես։

յիշեալ բազմաց, ոչ նշանակին զգիրսն, սակայն մի ոմն ի յետնոց յամի 1326, աստ լինել ի գաւառին Յախուճ կոչեցեալ. զայս գաւառ յիշէ և պատմիչն Կիլիկիոյ յասելն վասն Ալեքսի կայսեր յամի 1137 նուաճեալ «զԱնադարբա, զՎահկայն, զԱմայքն, զՅախուճն և զայլ ամրոցսն» (Թուոմ է արեւմտից դէպի արեւելք), որով գուշակի յարեւմտակողմն Ալիներոյ լինել առ ստորոտով Բարձր բերդոյ. յայտ է ուրեմն զի և Յախուճ գաւառ սահմանորդ է նմին». Լեոն I շատ էր սիրում այս վանքը. նա կտակեց, որ մեռնելուց յետոյ իր մարմինը Թաղեն այդտեղ. հասնելով Մովսէսայ գիւղը, քիչ հեռու Ալիներ վանքից, (աւելացնում է պատմիչը), նա տկարացաւ և վախճանուեց: Կոստանդին կաթողիկոսը XII-րդ դարում ծնուած էր այս գիւղում, որ հաստատուած էր «ի ստորն Դղիկն (Բարձր բերդի)»... այլ զի յոմանց Մալուեանցի կոչի սա, ի դէպ է խնդրել և յայս անուն չէն մի հուպ ի Դղեակն անուանի: Առանձին իմն խնամք սորա (կաթողիկոսին) ի վերայ հայրենի կողմանցս՝ յայտնեն և յուխտն Անդրէասանց... մերձ յանառիկս Դղեակ Բարձր անուն կոչեցեալ» **): Կիւրէտիկն բերդից քիչ հեռու, որ ինչպէս ասացինք, կարծում ենք լինի Բարձր Դղեակը կամ Բերդը, բաժանուած գետակով, գտնուում մի գիւղ, որ այժմ կոչւում է Մալիլա. (ի դէպ է ասել տեղացիք բառերը արտասանում են աղաւաղուած): Այս գիւղի մօտը, էլի բերդից ոչ շատ հեռու, կայ նաև Անդրէասանց անունով մի գիւղ և այդ շրջանում նկատելի են եկեղեցու և վանքի աւերակներ:

1266 թուին Եգիպտոսի սուլթանը բազմաթիւ զինուորսներով արշաւեց Կիլիկիա. Հեթում I զօրաժողով կազմեց և որոշուեց զիմադրել և միևնոյն ժամանակ օգնութիւն խնդրել Թաթարաց խանից, Եղեսիայի շրջանում, որի հետ նա դաշնակցութիւն ունէր: Դաշնակից Հուլաղուն վախճանուել էր և նրա յաջորդներին համոզելու համար Հեթում ճանապարհուեց նրա երկիրը Ալբիստանի և Կօկիսօնի կիրճով *) (այսինքն Զէյթունի Դսուխով, որ միակ անցքն է): Իսկ իր որդիներին, Լեոն և Թորոս, երկու զօրաբաժնով կամ 15,000 զինուորներով, ուղարկեց Մառի կապանը, որ Դուռ էր անուանուում հայոց կողմից և որի անմիջապէս շրջակայքում տեղի ունեցաւ Ալեքսանդր Մեծի և Դարեհի պատմական ճակատամարտը, որոշելով Ասիայի և Եւրոպայի ճակատագիրը: Սակայն այս երկրորդ կուում, զրեթէ միևնոյն տեղի վրայ կամ մօտերը, հայերը պարտուեցին և եգիպ-

*) ՏՃԻԱ Սխտան 148—9.

**) Տեանել Սխտան 401 երես:

տական զինուորները դրեթէ առաջին անգամ ասպատակեցին և աւերեցին հայկական Կիլիկիան մինչև Սիս, և սրանով հետզհետէ վերջացան Սիւրիայի և Պալիստինի քրիստոնեայ փոքրիկ պետութիւնները և վերջնական կերպով յաղթուեցին խաչակիրների դարաւոր գործողութիւնները:

Մինչդեռ եղիպտական բանակը հրգեհում էր Սիսը, թագաւորանիստ քաղաքը, Հեթումը վերադարձաւ թաթարներից առանց որ և է օգնութեան. նա անկարող էր անցնել երկրի արևմտեան դաւառները, Սիս և այլն, և հետևաբար սպասեց Կիլիկիայի հիւսարեկեան մասում, ուր թշնամին չէր ասպատակել, շատ հաւանական է՝ երկիւղ կրելով լեռնային ամուր զիրքերից: Եւ իր ժամանակի պատմիչը, Մաղաքիա արեղան, գրում է *). «բեկաւ սիրտն ի կարի և յանհնարին տրտմութենէն՝ որ յանկարծահաս դիպեցան, և ոչ կարէր կանգնել զսիրտ իւր, մինչև եկն ի սուրբ և ի գերահռչակ ուխտն միանձանց, յԱկանց անապատն, և աստ կեցեալ աւուրս ինչ, մինչ ելաւ թուրքն յերկէս»: Որոշ է, որ Ակներ վանքը գտնւում էր Կիլիկիայի հիւսարեկեան կողմը՝ Ալբիստանի ճանապարհի վրայ, Զէյթունի գաւառում և հակառակ դէպքում եթէ այդ վանքը գտնւում լինէր Մուսոն գաւառի սահմանակից, Սսի կամ Կիլիկիայի արևմտեան կողմը, ինչպէս կարծւում է, Հեթումը անկարող կը լինէր անց կենալ ապահով կերպով երկրի արևելքից արևմտեան ծայրը, երբ թշնամու բազմութիւնը զրաւել էր երկրի ամեն անցքերը, ինչպէս և գլխաւոր քաղաքները:

Նոյնպէս կարևոր է իմանալ նաև թէ Զէյթունի բերդը կամ գիւղաքաղաքը ինչ անունով ծանօթ էր Ռուբինեանների ժամանակ: Մենք կարծում ենք, և դա շատ հաւանական է, որ Զէյթունի կենտրոնում գտնուած բերդը, այժմ Սուրէնեան իշխանների ձեռքում, միննոյն է, ինչ XII-րդ դարում անուանւում էր Աճե բերդ և որի բերդատէրն էր ինչ-որ Հեռի անուն իշխան: Լևոն թագաւորի օծման հանդէսին ներկայ էին այն բոլոր բերդատէրերն ու իշխանները, որոնք հպատակւում էին թագաւորին և նրանց բերդերը կամ կալուածները (fiefs) կազմում էին պետութեան մասերը: Նոյն ժամանակի պալատական պատմիչը, Սմբատ, որ հէնց ինքը ներկայ էր այդ դէպքերին, կանոնաւոր ճշտութեամբ և աշխարհադրական կարգով թւում է բերդերի և նրանց տէրերի անունները՝ սկսելով նախ հարաւարեկեան և արևելեան բերդերից, Զրհանի ձախ հովտում, յետոյ, բարձրանալով լեռնային կողմերը, արձանագրում է Զէյթունի

*) Տեսնել Սխտան 153 էրես:

գաւառում գտնուածները, աւելի վերջ տեղագրական ճշտութեամբ անցնում է Կապանի հովտով դէպի արեւմուտք, դէպի Լամբրոն, չեղուկով դէպի ծովեզրեայ գաւառները: Զէյթունի գաւառում նա յիշում է, Սիմանակլայից յետոյ, Աճե, Կուսաֆ, Ընկուզուս, Թոռնկայ, Բերդուս, Կանչի, Ֆոնուս, Կապան, Ճաննի և այլն: Վերջին հինգը և եօթերորդը ներկայումս էլ յայտնի են և նոյն անուններն են կրում և՛ նրանց գաւառակները. սակայն առաջին երեքի տեղերը անծանօթ են: Սիմանակլան, որ յիշում է Սարվանդիփարից յետոյ, շատ հաւանական է գտնել Զէյթուն գաւառի հարաւը, այժմ Նադիր և Քիւրքիւ կոչուած փոքրիկ գաւառակում, ուր բնակուած են բաղառապէս թիւրքեր: Կուսաֆը պէտք է լինի ներկայումս Կավա կոչուած հսկայ սարը, Կիւրէտինի բերդի հանդէպ, բաղմաթիւ ընդարձակ քարայրներով. իսկ Անէն է հէնց Զէյթունի կենտրոնում հաստատուած բերդը: Զէյթունի և Արեգնու մէջ ձգուած է նմանապէս Աճե-ձորը, որ յիշում է աւանդաբար տեղացիների կողմից մինչև այժմ: Անէի բերդատիրոջ անունը Հեռի Ֆրանսերէն է և կրճատուած Henri-ից: Եւ զա բաղառութիւն չէ. հայոց թագաւորները քաղաքական և կամ կրօնական յարաբերութիւնների չնորհիւ շատ անգամ բերդեր կամ ամրոցներ և կամ ամբողջ գաւառ նուիրում էին օտար իշխաններին *), և այդ ցանկում մենք հանդիպում ենք նաև գերմանական և յուսական անուններին:

XIV-րդ դարի վերջերը Կիլիկիան շրջապատուել էր մահմեդական ցեղերով: Արաբ, եգիպտացի, հեռաւոր Ասիայից հեղեղի նման թափուող թիւրքմէններն ու թաթարները արշաւում էին դէպի այդ երկիրները, ուր նրանք կարողանում էին հայթայթել առատ աւար, կողոպուտ: Կիլիկիան էլ, Միջին-դարի հարուստ, բարգաւաճ այդ երկիրը, չը կարողացաւ խուսափել կիսավայրենի ցեղերի աւերող հոսանքից:

Հայոց գինուորական ոյժը անկարող էր լինում մաքառելու և պաշտպանելու երկիրը սպառնացող վտանգի դէմ: Եգիպտացին, արաբը, դարամանի խանը այլ ևս անարգել արշաւում էին մինչև Տարսոն, Ատանա, Անադարիա, Սիս հայկական քաղաքները, որոնք Ռուբինեանների յաղթական և ապահով ժամանա-

*) Տեսնել Լեոնի և Հեթումի հրովարտականքը, որոնք օրինակուած են հէնց նոյնութեամբ լատիններէն լեզուով Վ. Լանդլուպի Le tresor des chartes d' Armenie-ի մէջ և որոնց բնագիրը գտնուում են երոսդական այս կամ այն թանգարանում:

կաշրջանում բազմապատկուել, շէնացել էին դաշտային մասերում ձգուած մինչև Միջերկրականի ափերը, և դեռ իշխանութիւնը չը վերջացած արդէն զգալի կերպով նուազել էր նրանց թիւը:

XIV-րդ դարի վերջերը, երբ թագաւորական գահը վերջնական կերպով թափուր մնաց և երկիրը մատնուել էր անիշխանութեան, բացի լեռնային գաւառներից, որոնց թւում էր Զէյթունը կամ հին Արեգնու գաւառը, Սիհոնի և Զիհանի ընդարձակ դետահովիտները, ամայացել, մեռելութեան էին ենթարկուել: Այդ բոլորից յետոյ, սովն էլ վրայ հասաւ, որ ճարակում էր և սոսկալի կոտորած սփռում երկրի ամեն կողմերը:

Հէնց այդ տիուր շրջանում, Կիլիկիայի հայոց մէջ գաղթականութիւնն ստացաւ աւելի ու աւելի լայն ծաւալ: Ազգաբնակչութեան մի մասը գաղթեց հեռաւոր երկիրներ—Կիպրոս, Հնդկաստան, Արշիպելագոսի կղզիները, Միջերկրականի արևելեան և եւրոպական ափերը, ուր գտաւ կեանքի ապահովութիւն: Մի մասն էլ անկարող եղաւ մաքառելու և գոյութիւնը պահպանելու կեանքի փոփոխուող ծանր պայմանների հանդէպ, ձուլուեց, կլանուեց տիրապետող և հարստահարող տարրերի հետ. ինչպէս Քիւրդ-Դաղի մի մասը, Բեդուեր, Անդրունց ու շրջակաները, Դեալուր-Դաղի և Բալարշըզի դաշտի թիւրքական զիւղերից շատերը, որոնք զանազանում են հէնց այժմ հարեան իսլամ ցեղերից՝ իրանց Ֆիղիքական կաղմութեամբ, ներքին սովորութիւններով, նիստ ու կացով և բարքերով: Իսկ մէկ ուրիշ մասը, աղգաբնակչութեան ամենաառողջ գասը, առաջնորդուած բերդատէր իշխանների և զինուորական պաշտօնեաների կողմից, խումբ-խումբ հեռացաւ և ապաստանեց անմատչելի գահաւանդների վրայ կամ անտառապատ և դժուարանցանելի լեռնաձորերում:

Ամբողջ դաշտային և ծովային ծաղկած, բազմամարդ գաւառները աւերակ էին, մինչդեռ նորանոր բազմութիւն աւելանում էր լեռնային գաւառների բնակիչների վրայ, ուր կեանքը վայրենանում էր, գոյութեան պայմանները դժուարանում ու նախնական դառնում:

Ապաստանութեան գլխաւոր վայրեր եղան երկրի սրտի վրայ սև կիսաշրջաններով երկարած Տարոսեան և Ամառոսեան (Սև-լիս կամ Գեաւուր-Դաղի) ընդարձակ լեռնագոտիները: Հայերը հաւաքուեցին և կենտրոնացան գլխաւորապէս չորս կարևոր կէտերի վրայ.—ա) երկրի հիւսարևելեան կողմը, Բերդի լեռնալանդակի շուրջը, ուր կային Զէյթունը կամ հին Արեգին և Բարձր-բերդը: Վերջինս միայն 16 կամ 17-րդ դա-

ըստ գրաւուած է թիւքերի կողմից և Կիւրէտիւնի բերդ անու-
նը ստացած. բ) Տաւրոսի հիւսիսային կողմը, Քօչանի լեռների
ստորոտը՝ Հաջին. գ) Հարաւ-արեւմուտք՝ Գեաւուր-Դաղի լեռնե-
րի մէջ բաղմաթիւ մեծ ու փոքր գիւղեր. դ) Հարաւային կող-
մը, Միջերկրականի եղերքը՝ Պայաս, Զոֆ-Մարգվան (Զորք
Մարդպան), Բելան, Սուեդիա և Քեսարի: Վերջիններս էլ ունին
պատմական և ազգային ոչ-նուաղ կարևոր և հետաքրքիր դէպ-
քեր, անցուղարձեր, որոնց մասին առայժմ այստեղ չենք խօսի:
Ինչպէս որանց անցեալը թաղուած է անորոշութեան և մթու-
թեան մէջ, նոյնպէս նրանց ժամանակակից պատմութիւնն ու
ներկայ դրութիւնը, իր բաղմակողմանի երևոյթներով, անուշա-
ղիր ու անտես են առնուած:

ՀՐԱՁԵԱՅ

Հ Ա Յ Կ Ո Ի Ն Ա

(Դավանաստիան լեզենդա)

Ընկա՛ւ Բաղօյցան, ընկա՛ւ հայդուկը.
Ընկա՛ւ վերջապէս Դավանսիոյ ոգին.
Բայց դիակն անգամ, քաջի դիակը՝
Դեռ սարսեցնում է թուլասիւրս սանկին:

Նրանք մտածում են.— Դավանսիոյ հսկան
Գուցէ լոկ վէ՛րք է ստացել կրծքից.
Գուցէ կեղծո՞ւմ է, որ յետոյ արեան
Վըրէժը լուծէ թեմամի սանկից:

Մահն ստուգեցէք, վառեցէ՛ք կրծքին —
Բա՛ց արէ՛ք կուրծքը, խարոյկ վառեցէ՛ք,
Կրակի ցաւերը կը փայլեն դէմքին,
Եթէ մեռած չէ դեռ մեր թեմամին:

Եւ ահա՛ կարմիր բոցը կըրակի
Թանձր ծըխի հետ վեր է բարձրանում,
Հուրը խանձում է լանջը հայդուկի,
Բայց նա մեռած է. տեղից չէ շարժում...:

— Բերէ՛ք ժանտադէմ մի օձ թունալից,
Տափաքէ՛ք նրան, ու փաթթէ՛ք վրդին.
Եւ նա կը շարժուի օձի հրպումից,
Եթէ մեռած չէ դեռ մեր թեմամին:

Եւ սարսափելի օձը տափաքած՝
Նրա շլնքին ծալում, գալարում.
Սակայն հայդուկի դէմքին դալկացած՝
Կեանքի մի նրբոյլ դեռ չէ երեւում:

Ու հրնարագէտ անա՛ մի սանիկ
Առաջ է անցնում, ժրպիտ Երբունիին.
«Չարայումը կայ մի չֆնաղ աղջիկ,
Կանչեցէ՛ք նրան. դիակի կողֆին
Թո՛ղ նա իւր ազգի երգէ վերֆերից,
Եւ եթէ ողջ է դեռ եւս Րադօյցան,
Անուես կը շարժուի աղջկայ երգերից»:

Ահա՛ դիակի կանգնել է կողֆին
Դուստր Չարայի, չֆնաղ Հայկունան,
Եւ աչքը յառել սոսկալի վերֆին,
Որից ընկել է փաշըն Րադօյցան:
Թախծի փոխարէն բոցեր են ցայտում
Հրպարտ աչքերից, այրում թեմամուն.
Դիզում է անգուսպ յուզմունքը արտում...
Ի՛նչպէս, Րադօյցան թեմամու ձեռնում...:
Եւ Հայկունայի Երբունիներ կապած՝
Յետ-յետ են գրնում մեհաֆսի նրման,
Եւ նրա կրծքից բղխում են յանկարծ՝
Ազգային երգի ձայներն աննրման:
Եւ բաղխումների տակ երգին կրֆոս,
Սկսում է պարել սիրուն Հայկունան,
Քաջ Րադօյցայի վերֆն է արիւնոտ
Դովում իւր երգով, գովում բարձրաձայն:
Եւ անա՛ կրակոտ երգի ձայներից
Հայդուկը կամաց աչքերն է բանում...
Անգուսպ բերկրութեան մի նիչ բոցելից՝
Ամբողջ դաւոյն է շարժում թնդացնում:
Ծովի ալեաց պէս շարֆերը տանկաց
Դէպի առաջ են նետում սասկազֆին,
Սակայն Հայկունան թեմամու դիմաց
Արդէն գրկել է սիրած հայդուկին,
Եւ իւր կենսատու երգի ձայներով՝
Նրբան նոր կեանք է տալիս վերսիին:

Մ. ՏԷՐ-ԴԱՆԻԷԼԵԱՆՅ

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԵՐ ԱԻԱԳ

IV

Սավինիում:

Մեծ դժբախտութիւն էր այն բանը, որ այդ երկու ընտանիքները մի ամիս միասին մնացին Սավինիում:

Երկու տարի անցնելուց յետոյ ժօրժն ու Սիդօնին նորից հանդիպեցին միմեանց այդ հինաւուրց, հետևաբար միշտ միևնոյնը մնացող կալուածքում, ուր խճաքարերը, լճակները և ծառերը, անշարժ ու յարասե, կարծէք ծաղր լինէին այն ամենի վերաբերմամբ, ինչ անցողական է ու փոփոխական: Շատ աւելի հաստատուն ու ազնիւ բնաւորութիւններ էին պէտք, որպէս զի չարաբաստիկ չը լինէր այդ հանդիպումը:

Ինչ վերաբերում է Կլէրին, երբէք նա այդքան երջանիկ չէր զգացել իրան, երբէք Սավինին այդքան գեղեցիկ չէր թւուացել նրան: Ինչ հրճուանք էր զբօսեցնել երեխային այն սիւզամարդերում, ուր ինքն էլ քայլել էր փոքրիկ ժամանակը, իբր ջահել մայր նստել ծառերի ստուերում այն նոյն նստարանների վրայ, ուր երբեմն նստած դիտում էր իր երեխայական խաղերը իր մայրը, կամ ժօրժի հետ թևանցուկ գնալ տեսնելու այն բոլոր ամենամանր խորշերը, ուր իրանք մի ժամանակ խաղ էին արել միասին: Նա զգում էր մի տեսակ անդորր բաւարարութիւն, զգում էր այն լիովի երջանկութիւնը, որ մեղմ բնաւորութիւնները վայելում են լռութեան մէջ, և ամբողջ օրը զբօսում էր ծառուղիներում տանու լայն հագուստով և գանդաղ քայլուածքով, ոտը երեխայի ոտի հետ փոխելով և շարունակ կանգ առնելով նրա ճիչերի ու պահանջների չնորհիւ:

Շատ քիչ էր սլատահում, որ Սիդօնին էլ մասնակցէր այդ

մայրական զբօսանքներին: Նա ասում էր, թէ երեխաների աղմուկը իրան յոգնեցնում է և այդ բանում համերաշխ էր ծեր Գարդինուայի հետ, որ ամեն պատրուակից օգտուում էր իր թոռին անախորժութիւն պատճառելու համար: Իր նպատակին լաւ հասած լինելու համար ծերուկը զբաղւում էր միմիայն Սիդօնիով և աւելի ևս սիրալիր ուշադրութեամբ էր վերաբերւում նրան, քան վերջին անգամ: Բոլոր կառքերը, որ երկու տարուց ի վեր փակած էին պահում դրախտի սրահում և ամեն չաբաթ սրբութեամբ էին, որովհետև սարդերը ոստայն էին հիւսում նրանց մետաքսէ բարձերի վրայ,—նա դրեց Սիդօնիի տրամադրութեան տակ: Օրը երեք անգամ կառքերը լծում էին և վանդակապատ դարպասը շարունակ բաց ու խուփ էր լինում: Ամբողջ տունը իր սարք ու կարգով, իր նիստ ու կացով համակերպուեց այդ աշխարհիկ ընթացքին: Պարտիզպանը սկսեց աւելի լաւ ինքնաձեռնադրութեամբ ծաղիկներին, որովհետև տիկին Ռիսլէրը ամենագեղեցիկներն էր ընտրում ճաշի ժամանակ իր մազերի մէջ խրելու համար և բացի այդ հիւրեր էին գալիս այժմ: Նախընթրիքներ ու զբօսանքներ էին կազմակերպում, ուր տանտիկնութիւնը Ծրօմօն կրտսերն էր անում, բայց ուր Սիդօնին իր վառվռուն բնաւորութեամբ փայլում էր անմրցակից: Բացի այդ, Կլէրը յաճախ ասպարէզը ամբողջ նրան էր թողնում: Երեխան ունէր քնի ու զբօսանքի ժամեր, որ Կլէրը երբէք չէր նուիրում իր անձնական զուարճութիւններին: Այդ միջոցներին նա անհրաժեշտաբար գնում էր երեխայի մօտ և նոյն իսկ երեկոնները նա շատ անգամ չէր կարողանում Սիդօնիի հետ գնալ Պարիզից վերադարձող ժօրժին ու Ռիսլէրին ընդառաջ:

—Կը ներես ինձ, ասում էր նա Սիդօնիին, բարձրանալով իր սենեակը:

Տիկին Ռիսլէրի ցնծութեանը չափ չը կար: Գողտրիկ ու անգործ՝ նա սլանում էր ընդառաջ, առանց նշմարելու կառքի արագ ընթացքը և առանց մտածելու որ և է բանի մասին:

Նրան թմրութիւնից հանում էր միայն զով քամին, փչելով նրա երեսին քօղքի տակից: Անորոշ կերպով, կիսախուփ աչքերով նա նշմարում էր այն ժամանակ մի պանդուկ ճանապարհի պտուտանքում կամ թէ անուահետքերի կողքի խոտի վրայով ոտով գնացող վատ հագնուած երեխաներ: Այդ յիշեցնում էր նրան այն զբօսանքները, որ ինքը մի ժամանակ Ռիսլէրի և իր ծնողների հետ կատարում էր կիրակի օրերը, և այդ յիշելիս նա մի թեթեւ դող էր զգում, որ ստիպում էր նրան չիտկուել իր փափուկ ու նոր հագուստի մէջ և աւելի հաստատ նստիլ օրօ-

բուռը կառքի մէջ, ուր նրա միաբը նորից թմրում էր՝ երջանիկ ու ապահով:

Կայարանում ուրիշ կառքեր էլ էին լինում: Շատ էին ուշադրութիւն դարձնում նրա վրայ: Երկու երեք անգամ նա լսել էր, թէ ինչպէս փափսում էին նրա կողքին՝ «Տիկին Պրոմօն կրտսերն է...», և յիշաւի մարդ շատ հեշտութեամբ կարող էր սխալուել, տեսնելով նրանց կայարանից վերադառնալիս, երբ Սիդօնին ու Ժօրժը կողք կողքի բաղմած կառքի խորքումը խօսում ու ծիծաղում էին իրար հետ, իսկ Ռիպէրը նրանց դիմացը նստարանի վրայ ժպտում էր մեղմօրէն, լայն ձեռքերը տափակ դրած ծնկների վրայ և մի քիչ քաշուելով այն բանից, որ ինքը այդպիսի գեղեցիկ կառք է նստել: Այն բանը, որ իրան տիկին Պրոմօնի տեղն են դնում, սաստիկ հպարտացնում էր Սիդօնին, և նա օրէցօր աւելի ու աւելի էր ընտելանում այդ մաքին: Տուն գալուց յետոյ Պրոմօններն ու Ռիպէրները զատոււմ էին մինչև ճաշի ժամանակը, բայց Ժօրժ Պրոմօնը շատ երիտասարդ էր, որպէս զի կարողանար համակուել իր ընտանեկան երջանկութեամբ, և նայելով իր կնոջը, որ հանգիստ նստած էր լինում քնած երեխայի կողքին, նա շարունակ մտածում էր փայլուն Սիդօնի մասին, որի ձայնը ջնձալից գեղգեղանքներով թնկում էր պարտէզի նշարբիներէ տակ:

Մինչդեռ իր գղեակը կերպարանափոխում էր մի ջահէլ կնոջ քմահաճոյքով, ծեր Գարդինուան շարունակում էր ապրել տաղտկացող, անգործ ու դառամեալ հարուստի սահմանափակ կեանքով: Ամենալաւ բանը, որ նա գտել էր իր ձանձրոյթը փարատելու համար, լրտեսութիւնն էր: Ծառաների դուրս ու տուն անելը, այն բաները, ինչ որ խօսում էին իր մասին խոհանոցում, կանաչեղէնով ու պտուղներով լի կողովը, որ ամեն առաւօտ բերում էին բանջարանոցից մատանը, առիթ էին տալիս անընդհատ հետախուզութիւնների: Նրա համար չը կար աւելի մեծ գուարճութիւն, քան մէկին բռնել յանցանքի մէջ: Այդ զբաղեցնում էր նրան, բարձրացնում էր նրա նշանակութիւնը և հայի ժամանակ նա երկար ու բարակ պատմում էր լուռ հիւրերին կատարուած յանցանքը, այն խորամանկ հնարքները, որ ինքը գործ էր դրել յանցաւորին բռնելու համար, յանցաւորի կերպարանքը, սարսափը, աղաչանքները:

Այդ մշտական հսկողութեան համար ծերուկը մի քարէ նստարան էր ընտրել, որ պնդացրած էր աւազի մէջ մի ահադին պաւլօնիայի յետնում: Ամբողջ օրերով նա նստում էր այնտեղ առանց կարդալու, առանց նոյն իսկ մտածելու, աչքերը սրած նայելով, թէ ով է դուրս ու տուն անում: Գիշերուայ հա-

մար նա ուրիշ բան էր հնարել: Ծաղկազարդ սանդուխների գլխին գտնուող գաւիթի յատակում նա մի ծակ էր շինել տուել ուղիղ իր սենեակի տակին, որ գտնւում էր մի յարկ վերև: Այդ տեղով մի կատարելագործուած լողակաւն խողովակ հասցնւում էր նրա ականջին ներքի յարկի բոլոր շշուկները և նոյն իսկ երեկոյեան պատշգամբում մարութ օդ ծծող սպասաւորների խօսակցութիւնները:

Դժբախտաբար, գործիքը, շատ նուրբ լինելով, չափազանցեցնում էր, երկարացնում ու իրար խառնում բոլոր հնչիւնները, և երբ պ. Գարդինուան ականջը դնում էր խողովակին, կարողանում էր լսել միմիայն պատի ժամացոյցի մշտական ու կանոնաւոր տեղադրոյցը, ներքեւում վանդակի մէջ թառած թուփակի ճիչը, կամ մի կողքրած հատիկ փնտռող հաւի կշկշոյցը: Իսկ մարդկային ձայները հասնում էին նրա ականջին միայն իբր մի անորոշ բոբոոյ կամ ամբոխի մոռնչ, որի մէջ անկարելի էր որոշել որ և է խօսք: Այդ էր եղել նրա ամբողջ օգուտը այդ հրաշալի գործիքից, որ նա թագցնում էր իր անկողնի առագաստի ծակքի մէջ:

Մի գիշեր ծերուկը նոր էր աչքերը փակել, որ յանկարծ վեր թռաւ տեղիցը ինչ որ դռան ճռոցից: Այդպէս ուշ՝ այդ բաւական արտատուր բան էր: Ամբողջ տունը քնած էր: Լսւում էր միայն, թէ ինչպէս պահապան շները քայլում էին աւաղի վրայ կամ կանգ էին առնում մի ծառի տակ, որի կատարին բուր բուռց էր հնչում: Շատ լաւ առիթ էր լողակաւն գործիքից օգտուելու համար: Խողովակը մօտեցնելով ականջին, պ. Գարդինուան համոզուեց, որ չէր սխալուել: Աղմուկը շարունակւում էր: Մի դուռ բաց արեցին, յետոյ մի ուրիշը: Պատշգամբի նիզը յետ քաշեցին՝ ճիգ դործ դնելով: Բայց ոչ Պերամը, ոչ Թիսքէն, ոչ նոյն իսկ ահռելի նիւֆաուենդլէնդեան շունը, Կիսսը, իրար չեկան: Ծերուկը կամաց տեղիցը վեր կացաւ տեսնելու համար, թէ ովքեր են այդ տարօրինակ դողերը, որոնք ներս մտնելու փոխարէն դուրս էին գալիս, և ահա թէ ինչ նկատեց նա իր պատուհանի վանդակափեղկի արանքից:

Բարակ ու բարձրահասակ մի պարոն, Ժօրժի շէնք ու շորհրդով, թեանցուկ գնում էր ժանեակէ գլխանոցով մի կնոջ հետ: Նրանք առաջ դադար առան պ. Գարդինուայի լրտեսական նստարանի վրայ, ծաղկափթիթ պաւլօնիայի տակին:

Հրաշալի, ճիւնափայլ գիշեր էր: Ծառերի կատարները չօշափելով՝ լուսինը շողշողուն փաթիլներ էր կազմում խիտ տերեւների մէջ: Լուսնի ճառագայթների տակ սպիտակին տուող դարատափերը, ուր գանգրամորթ նիւֆաուենդլէնդեան շները գնում

զալիս էին՝ դարանելով գիշերային թիթեռներ, և լայնածառալ լճակների խոր ու միապաղաղ ջրերը՝ չողում էին անձայն ու անդորր ցոլքով, կարծես արտափայլելով մի մեծ արծաթէ հայելիի մէջ։ Սիզամարգերի ափերին տեղ-տեղ փայլիլում էին լուսատըտ-նիկներ։

Զբօսնող զոյգը մի փոքր ժամանակ լուռ նստած մնաց պալւօնիայի ստուերի տակ, խորասուզուած այն թանձր խաւարի մէջ, որ լուսնկայ գիշերները տիրում է շուաք տեղերում։ Յետոյ, յանկարծ նրանք երեսցին լուսնի-չողքերի մէջ և, հեշտասիրաբար իրար փարուած, դանդաղ անցկացան գաւիթը ու անհետացան նշգարիների ծառուղիում։

— Ես հաւատացած էի, ինքն իրան ասաց ծեր Գարդինուսն, ճանաչելով նրանց։

Ասեմք, ինչ հարկ կար նրանց ճանաչելու։ Միթէ չների հանգստութիւնը և քուն մտած տան տեւքը բաւական չէին, որպէս զի նա ամենահաստատ կերպով իմանար, թէ ինչ անամօթ, անպատիժ և զաղտազողի յանցանք էր կատարւում գիշերները իր գղեակի ծառուղիներում։ Բայց և այնպէս ծեր վեղջուկը հիացած էր իր արած գիւտից։ Առանց ճրագը կսցնելու նա, ինքն իրան ժպտալով, վերադարձաւ իր անկողինը և որսորդական զէնքերով լի փոքրիկ առանձնասենեակում,— որտեղից նա զարանամուտ գիտում էր, սկզբում գողի տեղ ընդունելով նրանց,— լուսնի չողքը այլ ևս ոչինչ չէր լուսաւորում բացի պատից կախկախուած հրացանների շարքից և ամեն չափի փամփուշաների արկղիկներից։

Ժօրժն ու Սիզօնին վերսկսել էին իրանց սիրային յարաբերութիւնները նոյն ծառուղիի ծայրում։ Մի ամբողջ տարի, որ անցել էր տատանումների, անվճռական մաքառման և դիմադրութիւնների մէջ, կարծես ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նախապատրաստութիւն վերահանդիպման համար։ Եւ ի հարկէ, աւելորդ էր ասել, որ յանցանքը մի անգամ կատարելուց յետոյ, նրանք միմիայն զարմանք էին զգում, թէ ինչու էին այսքան ուշ սկսել... Մանաւանդ ժօրժ Ֆրօմօնը, որ համակուել էր մի մոլեգին կրքով։ Նա խաբում էր իր կնոջը, իր լաւագոյն մտերմին, նա խաբում էր Ռիպլերին, իր սուստրակցին, իր կեանքի բոլոր բոպէսների հաւատարիմ ընկերոջը։

Այդ մի լիառատ, մի յարատե կրկնուող խղճահարութիւն էր, որից նրա սէրը ընդհակառակը աւելի սաստիկանում էր չնորհիւ կատարած յանցանքի անհունութեան։ Սիզօնին նրա մտածութեան մշտական առարկան դարձաւ և նա սկսեց նկատել, որ ինքը մինչև այդ ժամանակ ամենեւին չէր ապրել։ Ինչ վերաբերում է

Սիրգօնիին, նրա սէրը բաղկացած էր անապատութիւնից և ոխակալութիւնից: Նրան ամենից շատ հաճոյք պատճառողը Կլէրի ստորացումն էր: Ա՛խ, եթէ կարողանար նրան ասել՝ «Քո ամուսինը ինձ սիրում է... նա դաւաճանում է քեզ ինձ հետ...», այն ժամանակ սրտի բերկրութիւնը աւելի ևս մեծ կը լինէր: Իսկ Ռիսլէրը, Սիրգօնիի կարծիքով, բոլորովին արժանի էր դաւաճանուած լինելու: Արհեստանոցի աշակերտուհու ոճով, որով Սիրգօնին մտածում էր դեռ, եթէ չէր էլ խօսում, Ռիսլէրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի «ծերուկ», որին նա կին էր դարձել հարստանալու նպատակով: Իսկ «ծերուկները» հէնց նրա համար են ստեղծուած, որ ամուսինները խաբեն նրանց:

Ցերեկը Սալինին պատկանում էր Կլէրին և երեխային, որ մեծանում էր, վազվզում էր աւազի վրայ, ծիծաղում էր, նայելով թռչուններին և ամպերին: Մայր ու զաւակ իրանց տրամադրութեան տակ ունէին ցերեկուայ լոյսը, արևով լի ծառուղիները: Բայց պարզ զիշերները պատկանում էին չնութեան, այդ հաստատ հիմնաւորուած յանցանքին, որ ցած ձայնով խօսում էր և անաղմուկ քայլում փակ վանդակափեղկերի տակ և որի առաջ նիրհող տունը կուրանում ու համրանում էր և նորից ընկղմւում իր քարային անդգայութեան մէջ, կարծես թէ ամօթ էր զգում այդ բոլորը տեսնելուց ու լսելուց:

V

Սիրգօնուհի Պլանուսը գտնւում է դրամաբկի համար:

— Կանգ, իմ բարեկամ Շօրշ... Ի՞նչ համար կառք: Ինչիս է պէտք:

— Հաւատացնում եմ ձեզ, սիրելի Ռիսլէր, որ այդ անհրաժեշտ է ձեզ: Օրէցօր մեր յարաբերութիւնները, մեր դործերը ընդարձակւում են. մի կառքը մեզ բաւական չէ այլ ևս: Վերջապէս, վայելուչ չէ, որ ընկերակիցներիցս մէկին միշտ կառքով տեսնեն, իսկ միւսին ոտով: Հաւատացէք ինձ, անհրաժեշտ ծախս է այդ, որ, աւելորդ է ասել, կը մտնի առևտրական տան ընդհանուր ծախսերի մէջ: Դէ, դէ, զիջեցէք անհրաժեշտութեանը:

Կատարեալ զիջումն էր այդ:

Ռիսլէրին թւում էր, թէ ինքը գողութիւն է անում փող ծախսելով այնպիսի անասելի շուսյութեան համար, ինչպէս էր

ոեփական կառք ունենալը. սակայն վերջ ի վերջոյ նա տեղի տուեց ժօրժի պնդումներին, մտածելով ինքն իր մէջ.

—Այ թէ կ'ուրախանայ Սիդօնին:

Ինչ կարող էր կարծել խեղճ մարդը, թէ արդէն մի ամիս առաջ Սիդօնին ինքն էր ընտրել Բինդէրի մօտ այն կառքը, որ ժօրժ Ծրօմօնը ուզում էր ընծայել նրան և որ իբր թէ ընդհանուր ծախսերի մէջ էին գցելու, որպէս ղի չը խրտնեցնէին Ռիսէրին:

Կարծես իր ամբողջ կեանքում այդպէս խաբուած լինելու համար էր ստեղծուած այդ բարեհոգի Ռիսէրը: Բաւական չէին նրա բնածին աղնութիւնը և նրա յստակ բնաւորութեան հիմքը կազմող զիւրահաւատութիւնը, որով նա վերաբերում էր բոլոր մարդկանց և ամեն բանի, վերջերքն էլ մի ուրիշ պատճառ էր աւելացել, որի շնորհիւ նրան հեշտ էր խաբել,—այդ այն հոգսերն էին, որ պատճառում էին նրան նրա ջանքերը Ռիսէրեան Տպագրիչ մեքենան գտնելու համար, որ յեղափոխութիւն էր մտցնելու որմաթղթերի արդիւնազտութեան մէջ և, նրա կարծիքով, իր բաժին վճարն էր լինելու առևտրական տան հիմնադրամի մէջ: Երբ նա թողնում էր իր նախածրագիրները և դուրս գալիս առաջին յարկում գտնուող արհեստանոցից, շարունակ մտամիտի կերպարանք էր ունենում, ինչպէս առհասարակ այն մարդիկ, որոնց կեանքը և զբաղմունքները զատ-զատ ճանապարհներով են ընթանում: Ուստի կարելի է երևակայել, թէ ինչ երջանկութիւն էր նրա համար, որ այժմ արհեստանոցից վերադառնալիս տունը հանգարտ էր գտնում, կնոջը՝ լաւ տրամադրութեան մէջ և միշտ զուգուած ու ժպտերես: Առանց ինքն իրան բացատրելու այդ փոփոխութեան պատճառը, նա նկատում էր, որ «փոքրիկը» մի ժամանակից ի վեր էլ առաջուանը չէր իր վերաբերմամբ: Այժմ Սիդօնին թոյլ էր տալիս նրան հետեւել իր հին սովորութիւններին, չիբուխ ծխել հացի վրայ քաղցրեղէն ուտելիս, մի քիչ քնել ճաշերից յետոյ և տեսակցել պ. Շէբի ու Դըլօբէլի հետ գարեջրատանը: Տան սարքն ու կարգն էլ կերպարանափոխութեան էր ենթարկուել, սիրունացել էր: Օրէցօր չռայլութիւնը տեղի էր տալիս կօնֆօրտին: Ծաղկաշատ ծաղկարանների ու ալ կարմիր հիւրասենեակի հեշտ ու թեթեւ կահաւորութիւնից Սիդօնին այժմ անցել էր մօզայի նրբութիւններին և ակսել էր արդէն գրաւուել հինաւորաց կահ-կարասիքով և հազուադէպ փայտակերպչանոցի նրա սենեակի պատուանները մեղմ կապտագոյն մետաքսից էին և երկզուած էին ինչպէս մի գոհարեղէնի արկղիկ ներսից: Հին դաշնամուրի տեղ դրած էր մի հռչակաւոր վարպետի շինած դաշնամուր և ար-

դէն ոչ թէ չարաթը երկու անգամ, այլ ամեն օր էր գալիս նրա երգեցողութեան վարժուհին, տիկին Դօբսօնը, ձեռքին բերելով գլխահան փաթաթած մի որ և է ուսմանս:

Շատ տարօրինակ տիպ էր այդ ամերիկական ծագում ունեցող կինը, որի՝ լիմօնի միջուկի նման չէկ մազերը շաղ էին անցած խիզախ ճակատի և պողպատագոյն աչքերի վերևում: Ուրովհետև ամուսինը չէր թողնում, որ թատրոն մտնի, նա էլ երգեցողութեան դասեր էր տալիս և երգում էր մի քանի բուրժուական դահլիճներում: Միշտ ապրելով դաշնամուրի և երգեցողութեան համար յօրինուած մեղօղիաների շինծու մթնոլորտում, նա իր համար սովորական էր դարձրել մի տեսակ սանտիմենտալ զայրացածութիւն:

Նա ինքը մարմնացած ուսման էր: Նրա բերնում «սէր և կիրք» խօսքերը կարծես քսանչորս վանկից բաղկացած լինէին, այնքան արտայայտիչ եղանակով էր նա արտասանում այդ բառերը: Օ՛, արտայայտիչ եղանակ: Հէնց այդ էր, որ տիկին Դօբսօնը ամեն բանից վեր էր դասում և որ ապարդիւն կերպով աշխատում էր հաղորդել իր աշակերտուհուն:

Այն ժամանակ ամենքը գրաււում էին «Ay Chiquita» ուսմանսով, որ ամբողջ Պարիզը կլկլացնում էր մի քանի սէզօն շարունակ: Սիդօնին ամենայն աշխատասիրութեամբ ուսումնասիրում էր այդ ուսմանը և ամբողջ առաւօտները լսում էր, ինչպէս նա երգում էր.

On dit que tu te maries,
Tu sais que j'en puis mourir...

(Ասում են, ուղում ես պսակուել,
Դիտես, որ կարող եմ դարդից մեռնել...)

—Mouriiiiir! (մեռնենենենէլ), ընդհատում էր արտայայտիկ տիկին Դօբսօնը, սիրահալ դիրքով հակուելով դաշնամուրի վրայ, և ճիշտ որ պայծառ աչքերը այնպէս էր բարձրացնում դէպի առաստաղը և վրէժը այնպէս յուսահատօրէն դէպի յետ նստում, որ կարծես թէ իսկապէս մեռնում էր: Սիդօնին, ինչ անում էր, չէր կարողանում յաջողացնել այդ բանը: Նրա սատանայ աչքերը և կենսալից չթուլնքները այդպիսի էօլեան տաւիղի*) սանտիմենտալութիւնների համար չէին ստեղծուած: Նրան աւելի յարմար կը գային Օֆֆէնբախի կամ Էռլէյի օպերէաների եղա-

*) Տաւիղ (սանթուր), որի լարերը այնպէս են լարուած, որ ներդաշնակ հնչիւններ են հանում, երբ կախուած տեղը քամին դարկում է նրանց: Եօլ—հին յոյների դիցարանութեան մէջ քամու աստուածն էր:

նակները, իրանց անակնկալ նօտաներով, որոնց արտայայտելիքը կարելի է լրացնել ձեռքի, գլխի կամ մէջքի շարժումներով, բայց նա չէր համարձակում խոստովանել այդ՝ իր սիրահալ ուսուցչուհուն: Սակայն պէտք է ասել, որ, թէև օրիորդ Լը Միւրի արհեստանոցում շատ էին երգել տուել նրան, նրա ձայնը դեռևս մատղաշ էր և բաւական սիրուն:

Շատ քիչ ծանօթութիւններ ունենալով, նա վերջ ի վերջոյ մտերմացաւ իր երգեցողութեան ուսուցչուհու հետ: Նա պահում էր նրան նախաճաշին, իրանց նոր կառքով զբօսնելու էր տանում, նրա հետ էր գնում զգեստեղէն ու զուգսեղէն անելու: Տիկին Դօբսօնի սանտիմէնտալ և կարեկից բնավորութիւնը տրամադրում էր դադարնասացութեան: Նրա մշտական արտունջները իր բախտից կարծես ուղղում էին նոյնպիսի տրտունջներ դուրս քաշել նաև ուրիշների բերնից: Եւ Սիդօնին պատմեց նրան ժօրժի և իր սիրոյ մասին, մեղմացնելով իր մեղքը իր ծնողների անզխելիութեամբ, ասելով, իբր թէ նրանք բռնի կերպով ամուսնացրել էին իրան իրանից շատ աւելի տարիքով մարդու հետ, նրա հարստութեան պատճառով: Դօբսօնը իսկոյն և եթ պատրաստականութիւն ցոյց տուեց օգնելու նրան ու ժօրժին: Իր ծառայութիւնները ծախելու ընդունակ չէր այդ փոքրիկ ամերիկուհին, բայց նա մի տեսակ սէր էր տածում դէպի սիրահարութիւնը, մեծ հաճոյք էր զգում սիրային ոռմաններից: Դժբախտ լինելով իր ընտանեկան կեանքում, որովհետև ամուսնացել էր մի ատամնաբոյժի հետ, որ նրան ծեծում էր յաճախ, նա այնպիսի կարծիք էր կազմել, թէ բոլոր կնատէր աղամարդիկ մի մի հրէշներ են, և մանաւանդ զարհուրելի բռնակալ էր թւում նրան խեղճ Ռիսէրը, սրին, նրա համոզմունքով, Սիդօնին կատարեալ իրաւունք ունէր ատելու և դաւաճանելու:

Եռանդուն և վերին աստիճանի օգտակար արբանեակ էր նա: Շաբաթը երկու, երեք անգամ օթեակի տոմսակ էր բերում գնալու օպերա կամ խալաիկան խմբի ներկայացումներին և կամ այն փոքրիկ յաջողակ թատրոններից մէկը, որոնք մի սէզօնի ընթացքում գրաւում են ամբողջ Պարիզը: Ռիսէրը կարծում էր, թէ Թիկին Դօբսօնը ինչքան տոմսակ ուղէր՝ կարող էր ճարել երգեցիկ թատրոններում և ուրեմն նա էր հրաւիրողը: Թշուառականը չէր խմանում, որ մօդային պիէսների այդ առաջնեկ ներկայացումների օթևակներից ամենաէփանը յաճախ տառը, տասնհինգ լուիդօր*) էր նստում իր առևտրակցին: Ճիշտ որ շատ հեշտ էր խաբել այդպիսի մի ամուսնու: Նրա անսպառ

*) Լուիդօր=20 ֆրանկ=7 ռ. 50 կ.

դերահաւաստութիւնը հալած իւղի տեղ էր ընդունում բոլոր սուտերը. բայց այդ էլ խեղճը ամենեւին չէր ճանաչում այն շրջանի շինծու կեանքը, ուր իր կիւնը արդէն սկսել էր աչքի ընկնել: Նա ոչ մի տեղ չէր գնում կնոջ հետ: Ամուսնութեան սկզբի ժամանակները մի քանի անգամ նա գնացել էր հետը թատրոն, բայց այնտեղ խայտառակ կերպով քնել էր, չափազանց պարզ լինելով հանդիսատեսներով զբաղուելու համար և չափազանց դանդաղորդի լինելով ներկայացմամբ հետաքրքրուելու համար: Ուստի, նա անհունապէս շնորհակալ էր տիկին Դօրսօնից, որ նա փոխարինում էր իրան Սիդօնի կողքին: Եւ որքան պատրաստակամութեամբ էր այդ անում տիկին Դօրսօնը:

Երեկոյեան, երբ Սիդօնին դուրս էր գնում տանից, միշտ չքեղ պճնուած, Ռիսլըրը զմայլուած դիտում էր նրան, չիմանալով, թէ ուրքան արժէն այդ հագուստները, ոչ էլ մանաւանդ այն, թէ ով է եղել այդ արժէքը վճարողը, ու ազատ որ և է կասկածից, նա հանգիստ սպասում էր նրան, բուխարու մօտ նստած զճաղրութեամբ պարապելով և զո՞հ սրտով ինքն իրան ասելով «Ի՞նչ ուրախ ժամանակ է անցկացնում երևի Սիդօնիս»:

Մի ցարկ ներքեւ, Ֆրօմօնների մօտ, նոյն կատակերգութիւնն էր տեղի ունենում, բայց դերերը թարած: Այդտեղ կինն էր բուխարու մօտ նստած սպասում: Ամեն երեկոյ, Սիդօնի գնալուց կէս ժամ յետոյ, մեծ դարպասը նորից բացւում էր ճանապարհ տալու համար Ֆրօմօնների կառքին, որով պ. Ֆրօմօնը գնում էր իր ժողովարանը: Ի՞նչ արած: Առևտուրը իր պահանջներն ունի: Խոշոր գործերը ժողովարանումն են սարքւում, թղթախաղի սեղանի շուրջը, և ով չի ուղում իր առևտրական տան նշանակութիւնը վսյր գցել, պէտք է անպատճառ գնաց այնտեղ: Կլէրը միամտաբար հաւատում էր այդ հէքեաթներին: Ամուսնու գնալուց յետ նա մի րոպէ տխրութիւն էր զգում: Որքան ուրախ կը լինէր նա, եթէ ժօրժը տանը մնար կամ թե թեւի տուած միասին դուրս գային զբօսնելու, զուարճանալու: Բայց հէնց որ աչքը ընկնում էր երեխայի վրայ, որ ճլվում էր կրակի առաջ և ոտները խաղացնում շորերը հանելիս, սիրտը իսկոյն հանգստանում էր: Վերջապէս առևտրականների բերնում պետական շահերի կշիռ ունեցող «գործեր» բառը միշտ պատրաստ էր նրան համոզելու համար, որ պէտք է հպատակուել անհրաժեշտութեան:

Ժօրժն ու Սիդօնին հանդիպում էին իրար թատրոնում: Եւ այդտեղ ամենից առաջ յաղուրդ էր ստանում նրանց անափառութիւնը: Շատ էին դիտում նրանց: Սիդօնին այժմ յիշուի գեղեցիկ էր և նրա սիրուն կերպարանքը, որ կատարեալ

տպաւորութիւն գործելու համար պէտք է անպատճառ զարդարուած լինէր բոլոր տարօրինակ մօզային պճնանքներով, այն աստիճան ներդաշնակում էր այդ պճնանքներին, որ կարծես յատկապէս նրա համար հնարուած լինէին նրանք: Մի քիչ անցած նրանք գնում էին և օթեակում մնում էր մենակ տիկին Դօբսօնը: Ավրնիւ Գաբրիէլում, Champs—Elysées-ի կտր հրապարակի վրայ, նրանք վարձել էին մի փոքրիկ բնակարան,—ինչպէս երազում էին օրիորդ լը Միլի արհեստանոցի աղջիկները,—բաղկացած երկու չքեղ և հանգիստ սենեակներից, ուր հարուստ թաղերի լուսթիւնը, որ խանդարում են միմիայն հազուադէպ կառքերը, պրանչելի մթնոլորտ էր կազմում նրանց սիրոյ համար: Քիչ քիչ, վարժուելով իր յանցանքին, Սիդօնին սկսեց յանդուգն և օտարոտի բաներ անել: Իր աշխատաւոր օրերից նա պահել էր մըտքումը հռչակաւոր ճաշարանների և պարերկոյթների անուններ, և այժմ հետաքրքրւում էր գնալ այդ տեղերը, ինչպէս նաև մեծ զուարճութիւն էր զգում, երբ նրա սուսը կրունկի վրա բաց էին անում գոները զգեստեղէնի մեծ արհեստանոցները, որոնց մասին իր ամբողջ կեանքում նա գաղափար ունէր միմիայն յուշանակներից: Որովհետեւ նա ամենից առաջ այդ սիրոյ մէջ ուզում էր դանել մի միջոց իր պատանեկութեան ստորացումների ու նեղութիւնների տեղը հանելու: Ոչ մի բան, օրինակ, նրան այնքան զուարճութիւն չէր պատճառում Բուլօնեան անտառում կատարած գիշերային զբօսանքից կամ թատրոնից վերադառնալիս, որքան մի ընթրիք Անգլիական սրճարանում, չորջապատուած անբարոյական զննութեան աղմուկով: Այդ մշտական չրջագայութիւններից նա տուն էր բերում խօսելու և իրան պահելու նոր ձևեր, անվայել տաղեր և հազուադէպ ձևեր, որոնք այդ հին առևտրական տան բուրժուա մթնոլորտի մէջ մտցնում էին այդ ժամանակուայ պարիզեան կօկօսների իսկական և օտարոտի դիմաստուերը:

Գործարանում արդէն սկսել էին կասկածներ տանել: Հասարակ կանայք, նոյն իսկ ամենից աղքատները, երեւիլի քննադատներ են, երբ հարցը գալիս է հագուստին... Երբ տիկին Ռիսլէրը ժամի երեքին մօտ դուրս էր գալիս տանից, յիսուն զոյգ պայծառ ու նախանձոտ աչքեր, դարան մտած արհեստանոցի պատուհաններում, դիտում էին նրան անցնելիս, թափանցելով նրա յանցաւոր խղճի խորքը, նրա սև թաւիչէ գօմանի և չողչողուն սև սաթերով զարդարուած իրանոցքի միջով:

Նա չէր նկատում, որ իր խննթ գլխի բոլոր գաղտնիքները թրվում էին նրա շուրջը, ինչպէս այն ժապաւէնները, որոնք սաւառնում էին նրա բաց ծործորակի վրայ, և տասը կոճակաւոր

բրօնզադոյն նուրբ կօշիկները ման գալիս զանազան պատմութիւններ էին անում, նկարագրելով նրանց կատարած տեսակ տեսակ գաղտնի շրջագայութիւնները, այն գորգազարդ սանդուխները, որոնցով նրանք անցնում էին գիշերները ընթրիքի գնալու համար, և այն տաք մուշտակները, որոնց մէջ նրանք փաթաթւում էին, երբ կառքը պտոյտ էր դործում լճի շուրջը լապտերների շողքով ընդմիջուած ստուերի մէջ:

Բանուորուհիները քրքշուք էին ու քչփչում՝ «Մէկ նայեցէք այս նարմանազուկին... Տեսէք, թէ ինչ տեսակ է հագնւում տանից դուրս գալու համար... Ինչ ասել կուզի, որ եկեղեցի գնալու համար չէ, որ այդպէս զուգուել է... Ո՛վ կը հաւատայ, որ երեք տարի էլ չը կայ, որ ամեն առաւօտ արհեստանոց էր գնում վատէրալուֆը հագին և երկու սույի խորոված շագանակ լցրած գրպանները ձեռքերը տաք պահելու համար... Հիմի մտիկ արէք, թէ ինչպէս է բազմել սեփական կառքի մէջ...» Եւ մագնէզիախառն կայծքարի փոշու և ամառ ձմեռ հրաշէկ վառանքների փոնչոցի մէջ աշխատող խեղճ աղջիկներից շատերը մտածում էին բախտի այն խաղերի մասին, որոնց շնորհիւ այգալիսի յանկարծական փոփոխութիւններ են մտնում մի կնոջ կեանքի մէջ, և սկսում էին երազել մի անորոշ չնաշխարհիկ ապագայի մասին, որ թերևս նրանց ևս սպասում էր, առանց իրանց իմանալու:

Ամենքն էլ այն կարծիքին էին, որ Սիդօնին դաւաճանում է Ռիսէրին: Տպագրական արհեստանոցում բանող երկու բանուորներ, Folies Dramatiques-ի երկու մշտական յաճախորդներ, ասում էին, թէ իրանք մի քանի անգամ տեսել էին տիկին Ռիսէրին այդ թատրոնում մի պարոնի հետ, որ թագնւում էր օթեակի խորքում: Աշիլ քեռին էլ զարմանալի բաներ էր պատմում... Որ Սիդօնին սիրական ունէր, նոյն իսկ մի քանի սիրականներ, այդ անկասկած էր ամենքի համար: Միայն թէ դեռ ոչ ոքի մտքով չէր անցնում, թէ այդ սիրականը կարող է ժօրժօրամօնը լինել:

Սակայն Սիդօնին ամենեկին խոհեմութիւն չէր պահպանում նրա հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Ընդհակառակը, կարծես նա մի տեսակ ցուցամոլութիւն էր մտցնում այդ բանի մէջ, և գուցէ հէնց այդ էր նրանց փրկողը: Քանի՜քանի անգամ էր պատահել, որ նա յանդգնաբար կանգնեցրել էր ժօրժին պատշգամբի վրայ՝ երեկոյեան ժամադրութեան մասին պայմանաւորուելու համար: Քանի՜քանի անգամ էր պատահել, որ նա դող էր ազդել ժօրժին, երես առ երես խօսելով նրա հետ բոլորի աչքի առաջ: Ապշութեան առաջին ըսպէից յետոյ ժօրժը նոյն իսկ շնորհակալ սրտով էր վերաբերւում նրան այդ յան-

դուզն վարժունքի համար, որ վերագրում էր նրա սիրոյ սաստկութեանը: Սակայն նա սխալուում էր:

Սիգօնիի ուղածը իսկապէս, թէև ինքն էլ այդ լաւ չէր գիտակցում, այն էր, որ Կլէրը նրանց նկատէր, որ նա իր պատուհանի վարագոյրի արանքից նայէր նրանց վրայ և նրա սըրտում մի կասկած ծագէր իրանց յարաբերութիւնների մասին: Իր ախոյեանի սրտի անհանգստութիւնն էր միայն պակաս, որպէս զի Սիգօնին լիովին երջանիկ զգար իրան: Բայց նրա աշխատանքը զուր էր, Կլէր Ֆրօմօնը ոչինչ չէր նկատում և Ռիսլէրի սրտի նման նրա սիրտն էլ անդորր էր ու անվրդով:

Միմիայն ծերունի գանձապահ Սիգիզմունդն էր արդարև անհանգիստ: Սակայն նրա մտահոգութեան առարկան էլ Սիգօնին չէր, երբ, գրիչը ականջի յետևը իրած, նա մի բոլէ կանգ էր առնում իր հաշիւների ժամանակ և իր վանդակապատի միջով աչքերը յառում փոքրիկ պարտէզի թրջած դեռնին: Նա մտածում էր միայն իր պատրօնի, պ. Շօրլի մասին, որ այժմ շատ փող էր վերցնում դրամարկդից իր ընթացիկ ծախսերի համար և խառնաշփոթութիւն էր քցում նրա բոլոր հաշուեգրքերի մէջ: Ամեն անգամ մի նոր պատրուակ էր գտնում ժօրժը: Նա մօտենում էր դրամարկդի պատրհանին անհող կերպարանքով:

«Մի քիչ փող կը գտնուի մօտերդ, սիրելի Պլանուս... Երէկ երեկոյ դարձեալ ինձ քսպլեցին թղթախաղում. չեմ ուզում այդպիսի մի չնչին գումարի համար բանկը ուղարկել»...

Սիգիզմունդ Պլանուսը, կարծես ավստալով, բանում էր դրամարկդը ժօրժի ուղած գումարը ապուլ համար և սարսափով մտաբերում էր այն օրը, երբ ժօրժը, որ այն ժամանակ դեռ քսան տարեկան էր միայն, եկաւ խոստովանուելու իր հօրեղբօրը, որ պարսքով մի քանի հազար ֆրանկ էր տարուել թղթախաղում: Այդ բաւական էր, որպէս զի ծերունի գանձապահը տեսելութիւն զգար դէպի ժողովարանը և արհամարհանք դէպի նրա բոլոր սնդամները: Եւ երբ մի օր այդ անդամներից մէկը, մի հարուստ վաճառական, եկել էր գործարան, նա ասաց նրան բիրտ միամտութեամբ.

—Թող ջհաննամը գնայ ձեր Շասօ-դ'Օյի ժողովարանը... Պ. Ժօրժը այս երկու ամսուայ մէջ երեսուն հազար ֆրանկից աւելի փող է տարուել ձեզնում:

Վաճառականը սկսեց ծիծաղել.

—Սխալ էք, սխալ, քեռի Պլանուս... ամենաքիչը երեք ամիս կը լինի, որ ձեր պատրօնի երեսն էլ չենք տեսել մեր ժողովարանում:

Գանձապահը լռեց, բայց նրա մէջ ծաղեց մի սարսափելի միտք, որ ամբողջ օրը հանգիստ չէր տալիս նրան:

Եթէ Ժօրժը ժողովարան չէր գնում, հապա զրտեղ էր լինում նա երեկոները, զրտեղ էր ծախսում այդքան փող:

Անկասկած էր, որ ինչ որ կին կար խառը այդ բանում:

Հէնց որ այդ կասկածը զարթնեց նրա մէջ, նրա սիրտը դող ընկաւ իր զրամարկի համար: Այդ Բէրն կանտօնից եկած ծեր արջը, որ ամուրի էր մնացել իր ամբողջ կեանքում, սարսափելի ահ էր զգում կանանցից ընդհանրապէս և պարիզուհիներից մասնաւորապէս: Առաջ ու առաջ, խիղճը հանգստացնելու համար, նա իր պարտականութիւնը համարեց նախազգուշացնել Ռիսէրին: Սկզբում անորոշ կերպով խօսեց.

— Շատ փող է ծախսում պ. Ծօրչը, ասաց նա մի օր Ռիսէրին:

Ռիսէրի վրայ այդ ոչ մի ազդեցութիւն չարեց:

— Ի՞նչ ինչ, սիրելի Սիգիզմունդ: Իր փողն է:

Եւ այդ նրա անկեղծ համոզմունքն էր: Նրա աչքում Ֆրօմօն կրտսերը առևտրատան բացարձակ տէրն էր: Ինչի՞ նման կը լինէր, եթէ ինքը, Ֆրօմօնների նախկին գծադրիչը, թոյլ տար իրան նկատողութիւններ անելու նրան: Գանձապահը այլ ևս սիրտ չէր անում խօսել այդ հարցի մասին, մինչև որ մի օր մի շալավաճառ մեծ առևտրական տնից վեց հազար Ֆրանկի մի հաշիւ բերեցին նրան մի քաշմիրի շալի համար:

Նա գնաց Ժօրժի գրասենեակը:

— Պէտք է վճարել, պարոն:

Ժօրժ Ֆրօմօնը մի քիչ այլայլուեց: Սիգօնին մոռացել էր նախազգուշացնել նրան այդ նոր առքի մասին. նա այլ ևս չէր քաշւում Ժօրժից:

«Վճարեցէք, վճարեցէք, քեռի Պլանուս...», ասաց նա մի քիչ շփոթուելով և յետոյ աւելացրեց՝ «Ֆրօմօն կրտսերի հաշուի մէջ մացրէք այդ... Ինչ ինչու ելին կատարել այդ յանձնարարութիւնը...»:

Այդ երկուց գանձապահ Սիգիզմունդը, իր փոքրիկ լամպը վառելիս, տեսաւ, որ Ռիսէրն անցնում է պարտէզով, և, լուսամուտը թխթխկացնելով, կանչեց նրան իր մօտ:

— Պատճառը մի կին է, ասաց նա նրան ցած ձայնով... Այժմ ևս ապացոյց ունեմ...

Երբ խեղճ մարդը արտասանում էր այդ «կին» սարսափելի խօսքը, նրա ձայնը դողդողում էր երկիւղից, կորչելով դորձարանի՝ ժխորի մէջ: Շրջապատող աշխատանքի աղմուկը այդ բոլորին չարագուշակ էր թւում թշուառ գանձապահին: Նրան

թուում էր, թէ այդ բոլոր շարժուն մեքենաները, փաթիլ-փաթիլ գոլորշի ժայթքող ահագին ծխնեկոյղը, հազար ու մի տեսակ աղմկալից աշխատանքով զբաղուած բանուորները, այդ բոլորը դղրդում էին, ճգնում էին և յողնում միմիայն մի թաւշապատ ու գոհարազարդ խորհրդաւոր կանացի էակի համար:

Ռիսէրը ծիծաղեց նրա վրայ, հաւատ չընծայելով նրա կասկածներին: Նա վաղուց ի վեր գիտէր իր հայրենակցի հիւանդութիւնը—կնոջ կորստաբեր ազդեցութիւն տեսնել ամեն բանի մէջ: Բայց և այնպէս Պլանուսի խօսքերը երբեմն-երբեմն նրա միտքն էին գալիս, մանաւանդ երեկոնները, այն միայնակութեան րոպէներին, երբ Սիդօնին տիկին Դօբսօնի հետ թատրոն էր գնում, նախապէս ահագին աղմուկ բարձրացնելով զուգուելու-զարդարուելու ժամանակ և յետոյ բոլորովին ամայացած թողնելով բնակարանը, հէնց որ նրա զգեստի երկար սուտը անցնում էր շէմքի այն կողմը: Մոմերը վառում էին հայելիներէ առաջ և զգեստեղէնի մանր մունր պարագաները, ցիր ու ցան թափուած այստեղ ու այնտեղ, պատմութիւններ էին անում օտարոտի քմահաճոյքների և չափազանց մեծ ծախսերի մասին: Ռիսէրը ոչինչ չէր տեսնում այդ բոլոր բաներից. միմիայն, երբ նա լըսում էր Ժօրժի կառքի գոռոցը բակում, մի տեսակ սրտնեղութիւն և տառնութիւն էր զգում, մտածելով, որ ներքեի յարկում տիկին Ֆրօմօնը երեկոնները մէն-մենակ է մնում: Խնդճ կին: Իսկ եթէ յանկարծ ճիշտ լինէր Պլանուսի ասածը... Եթէ ղո՛ւրս դար, որ Ժօրժը մի ուրիշ ընտանիք ունի քաղաքում... Օ՛, սոսկալի բան կը լինէր այդ:

Այն ժամանակ, փոխանակ նստելու աշխատելու, նա, կամացուկ իջնելով ներքե, հարցնում էր, արդեօք կարելի էր տեսնել տիկնոջը, և իր պարտականութիւնն էր համարում ժամանակ անցկացնել նրա հետ:

Երեխան արդէն քնած էր լինում, բայց նրա փոքրիկ զըլխանոցն ու կապոյտ մաշիկները ընկած էին լինում կրակարանի առջև զանազան խաղալիքների հետ: Կլէրը կարգում էր կամ աշխատում, իսկ մայրը, կողքին լուռ նստած, շարունակ եռանդուն կերպով պոստում ու սրբում էր զանազան բաներ, չնչասպառ փչելով իր ժամացոյցի տուփի վրայ և տաա անգամ միենոյն բանը ջղային շարժումով դնելով միենոյն տեղը, սկսուող մտւութեան յատուկ յամառութեամբ: Խնդճ Ռիսէրն էլ մի երեւելի ուրախ խօսակից չէր, բայց այդ չէր խանգարում տիկին Կլէրին սրտագին կերպով ընդունելու նրան: Նա գիտէր, թէ ինչեր էին խօսում Սիդօնի մասին գործարանում, և թէպէտ նա իր լսածի կէսին էր միայն հաւատում, այնուամենայնիւ նրա սիրտը ճմըլ-

ւում էր, երբ տեսնում էր այդ խեղճ մարդուն, որին այնքան յաճախ մենակ էր թողնում իր կիներ։ Այդ փոխադարձ կարեկցութիւնն էր կազմում նրանց յարաբերութիւնների հիմքը և չափից վեր սրտաշարժ տեսարան էին ներկայացնում այդ երկու բարձիթող արուած էակները, որոնք փոխադարձաբար խղճում էին միմեանց և աշխատում էին սփոփել իրար։

Նստելով հիւրասենեակի մէջ տեղը դրուած այդ պայծառ լուսաւորուած փայլիկ սեղանի մօտ, Ռիսլէրը փայլ առ փայլ սկսում էր համակուել ընտանեկան միջնորդութի ջերմութեամբ, չրջապատող իրերի ներդաշնակութեամբ։ Նա տեսնում էր այնտեղ այն կահկարասիքը, որ ճանաչում էր քսան տարուց ի վեր, տեսնում էր իր նախկին պատրօնի պատկերը, և իր սիրելի տիկին «Ծօրչը», որ նրա կողքին կուացած ինչ-որ մանրակար էր անում, նրան աւելի ևս ջահէլ և սիրասուն էր թւում այդ հինաւուրց յիշատակների մէջ։ Երբեմն-երբեմն տիկինը վեր էր կենում գնում ակն տալու կողքի սենեակում քնած երեխային, որի թեթև շնչառութիւնը լսում էր լուրթեան բուլկներում։ Առանց ինքն իրան հաշիւ տալու այդ բանում, Ռիսլէրը իրան աւելի լաւ, աւելի ջերմ էր զգում այդտեղ, քան իր բնակարանում, որովհետև լինում էին օրեր, երբ իր սիրուն կացարանը, որի դուռը ամեն ժամ բաց ու խուփ էր լինում շտապ-շտապ դուրս գնացող ու տուն եկող Սիդօնիի համար, նրա վրայ այնպիսի տպաւորութիւն էր գործում, ինչպէս մի ծածկաւոր, բայց անդուռ ու անպատուհան շուկայ, մասնուած աշխարհիս չորս ծագի քամիներին։ Նրա կացարանը բանակի տեղ էր, այստեղ՝ բնակութեան։ Մի հոգատար ձեռք կարգ ու շնորհք էր մտցնում այս կացարանի բոլոր մասերում։ Շրջանաձև շարուած աթոռները կարծես յաճ ձայնով զրոյց էին անում իրար հետ, կրակը սքանչելի կերպով ճտճտում էր վառուելիս և կլէրի աղջկայ փայլիկ գլխանոցը իր կապոյտ ժապաւենների բոլոր հանգոյցներում պահպանած էր լինում երեխայական քաղցր ժպիտների ու անմեղ հայեացքների նշոյլներ։

Եւ այն ժամանակ, մինչ կլէրը մտածում էր, որ այդպիսի մի հիանալի մարդ արժանի էր մի աւելի լաւ կին ունենալու, Ռիսլէրը, տեսնելով իր կողմը դարձած այդ մեղմ ու գեղեցիկ դէմքը, այդ ներողամիտ ու խելացի աչքերը, հարցնում էր մըտքումը, թէ որ փուչ-փչանալու կնոջ համար էր ժօրժ Զրօմօնը մենակ թողնում այս պաշտելի էակին։

VI

Հաշուեկշիռը

Ծեր Պլանուսը բնակուում էր Մօնոուժում մի տան մէջ, որ գտնուում էր այն տան կողքին, ուր մի ժամանակ ապրում էին Շէքերը: Այդ տունն էլ բաղկացած էր երեք պատուհանաւոր գետնայարկի վրայ շինուած մի հատ վերնայարկից և նոյնպէս ունէր ցանցաձև ցանկապատով մի փոքրիկ պարտէզ, եզերուած դալար տօսախներով: Ծերուկ գանձապահը կենում էր այնտեղ իր քրոջ հետ: Առաւօտեան նա գնում էր քաղաք առաջին հանրակաքով, ճաշին վերադառնում էր տուն և կիրակիրները մնում էր տանը ու զբաղւում իր ծաղիկներով ու հաւերով: Պառաւած քոյրը կառավարում էր տունը, եփում-թափում էր, կար ու կարկատան էր անում: Դժուար էր գտնել աւելի բախտաւոր զոյգ:

Երկուսն էլ անպսակ, նրանք կապուած էին իրար հետ միատեսակ ատելութեամբ դէպի ամուսնութիւնը: Քոյրը դարձում էր բոլոր տղամարդիկներից, եղբայրը կասկածով էր վերաբերւում դէպի բոլոր կանայք: Բայց և այնպէս նրանք պաշտում էին միմեանց, մէկը միւսին բացառութիւն համարելով իր սեռի ընդհանուր փշութեան մէջ:

Եղբոր մասին խօսելիս քոյրը միշտ ասում էր՝ «իմ եղբայր պարոն Պլանուսը», եղբայրն էլ նոյն հանդիսաւոր եղանակով ամեն նախադասութեան սկզբին կամ վերջին կաշնում էր՝ «իմ քոյր օրիորդ Պլանուսը»: Այդ երկու ամաչկոտ ու միամիտ էակներին աչքում Պարիզը,—որ նրանք չէին ճանաչում, չը նայած որ ամեն օր անց էին կենում միջովը,—մի որջ էր երկու սեռի հրէշների, որոնք ամեն ջանք թափում էին, որպէս զի որքան կարելի է շատ չարիք հասցնեն իրար, և երբ նրանց ականջին հասնում էր մի լուր ընտանեկան որ և է զրամայի մասին, մի պառաւական բամբասանք, նրանք, իրանց հայեացքների տարբերութեան համաձայն, տարբեր անձանց էին մեղաւոր համարում:

—Մեղքը մարդունն է, ասում էր «իմ քոյր օրիորդ Պլանուսը»:

—Մեղքը կնոջն է, առարկում էր «իմ եղբայր պարոն Պլանուսը»:

—Օ՛, տղամարդիկ...

—Օ՛, կինարմասներ...

Եւ այդ էր նրանց վէճերի մշտական նիւթը պարապուժեան

այն հազուադէպ ժամերին, երբ ծեր Սիգիզմունդը հանգստանում էր աշխատանքով լի և իր հաշուեգրքերի նման կանոնաւոր դասաւորուած օրուայ ընթացքում: Մի ժամանակից ի վեր քոյր ու եղբայր սկսել էին առանձնապէս տաք վիճել: Գործարանում անցած դարձածը սաստիկ զբաղեցնում էր նրանց: Քոյրը խղճում էր տիկին Յրոմօնին և վերին աստիճանի անարդէր գտնում նրա ամուսնու վարմունքը. ինչ վերաբերում է Սիգիզմունդին, նա բաւականաչափ կծու խօսք չէր գտնում ընտրուելու համար այն անյայտ անպիտան կնոջը, որ վեց հազար փրանկանոց շաւերի հաշիւ էր ուղարկում իրան՝ զրամարկից վճարելու: Նրա համար գլխաւոր հարցը նրանումն էր, որ վտանգւում էր այդ հին առտորական տան փառքն ու պատիւը, ուր ինքը ծառայում էր երիտասարդութիւնից ի վեր:

— Ի՞նչ է լինելու մեր դրութիւնը... ասում էր նա շարունակ... Օ՛, կինարմատներ...

Մի օր օրիորդ Պլանուսը բուխարու առոյժ նստած դուլպա էր գործում, սպասելով իր եղբորը:

Կէս ժամ կը լինէր արդէն, որ հացը քցած էր, և պառաւ. օրիորդը սկսում էր անհանգստանալ այդպիսի չը տեսնուած ուշացումից, երբ Սիգիզմունդը ներս մտաւ, այլայլուած կերպարանքով և առանց մի խօսք ասելու, որ նրա կողմից բոլորովին անսովոր բան էր:

Նա սպասեց, մինչև որ դուռը լաւ փակուեց, ու յետոյ, նայելով քրոջ անհանգիստ ու հարցական դէմքին, ասաց ցած ձայնով.

— Նոր լուր ունեմ: Այժմ ես գիտեմ, թէ ով է այն կինը, որ մեր տունն աւերում է:

Եւ, փոքրիկ սեղանատան համը կահ-կարասիքին աչք ածելուց յետոյ, աւելի ևս ցած ձայնով արտասանեց մի այնպիսի տարօրինակ ու անսպասելի անուն, որ օրիորդ Պլանուսը երկու անգամ կրկնել տուեց նրան:

— Կարելի բան է միթէ:

— Կասկած չը կայ:

Եւ, չը նայելով իր անկեղծ վշտին, Սիգիզմունդը զրեթէ յաղթական կերպարանք ունէր:

Պառաւ օրիորդը չէր կարողանում հաւատալ լսածին... Այնքան բարեկիրթ, այնքան քաղաքավարի մի տիկին, որ այն առտիճան սրտազին ընդունելութիւն էր ցոյց տուել իրան... Միթէ կարելի էր ենթադրել այդպիսի բան նրա կողմից:

— Ապացոյցներ ունեմ... ասաց Սիգիզմունդը:

Ու պատմեց, թէ ինչպէս Աշիլլ քեռին մի օր, երեկոյեան

Ժամի տասն ու մէկին, պատահել էր Ժօրժին ու Սիդօնիին այն վայրկեանին, երբ նրանք մտնում էին Մօնմարտը թաղի փող-
րիկ հիւրանոցներից մէկը: Իսկ քեռի Աշիլին վաղուց էին ձա-
նաչում. նա սուտ ասող մարդ չէր: Բացի այդ, ուրիշներն էլ
նրանց տեսել էին այդպիսի տեղերում: Գործարանում այլ ևս
խօսակցութեան ուրիշ առարկայ չունէին: Միայն Ռիսլէրն էր,
որ ոչնչի մասին կասկած չէր տանում:

— Եթէ այդպէս է, ձեր պարտականութիւնն է նախազգու-
շացնել նրան, յայտարարեց օրիորդ Պլանուսը:

Գանձապահը մտահոգ կերպարանք ստացաւ:

— Շատ փափուկ խնդիր է... Նախ և առաջ, ո՞վ գիտի, կը
հաւատայ արդեօք ասածիս: Այն աստիճան կուրացած կոյրեր
կան, որ... Եւ վերջապէս, երկու առևտրական ընկերների մէջ
խցկուկով, ես կարող եմ շատ հեշտ զրկուել պաշտօնիցս... Օ՛,
կանայք... կանայք... Եւ սակայն ճշման բախտաւոր կարող էր
լինել Ռիսլէրը: Երբ եղբօր հետ բերել տուեցի Շվէյցարիայից,
մի սու չը կար գրպանումը, իսկ այսօր Պարիզի ամենաառաջին
առևտրական տան տէրերից մէկն է... Կարծում էիք, հանգիստ
կը նստի... Ի՞նչպէս չէ... Պէտք է որ պարոնս ամուսնանայ...
Կարծես թէ մարդ կը մեռնի, եթէ չամուսնանայ... Եւ այն էլ
ամուսնանում է մի պարիզուհու հետ, այն աջ ու ձախ շաղ
տուող կանանցից մէկի հետ, որոնք տնայնագութիւն են մի ազ-
նիւ առևտրական տան համար, մինչդեռ նա ձեռքի տակ ունէր
մի արի ազջիկ, զրեթէ հասակակից իրան, մի հայրենակից, աշ-
խատանքի սովոր և ամուր կազմուածքով...

«Իմ քոյր օրիորդ Պլանուսը», որի կազմուածքին էր վե-
րաբերում այդ ակնարկը, հիանալի առիթ ունէր բացականչե-
լու, «Օ՛, տղամարդիկ... տղամարդիկ...», բայց լուռ մնաց: Շատ
փափուկ հարց էր այդ, և ո՞վ գիտի, գուցէ արդարև, եթէ Ռիս-
լէրը այն Ժամանակ ուզած լինէր, միակ տղամարդը կը լինէր...

Ծեր Սիգիզմունդը շարունակեց.

— Եւ տեսէք թէ ինչ դրութեան ենք հասել... Երեք ամսից
ի վեր, որմաթղթերի առաջին գործարանը Պարիզում կախուած
է այդ չնչին արարածի փէշերից: Պէտք է տեսնել, թէ ինչպէս են
հալւում փողերը: Ամբողջ օրը բան ու գործս այն է որ դրա-
մարկը բաց եմ անում պ. Ժօրժի պահանջած գումարները տա-
լու համար: Միշտ ինձ է դիմում, որովհետեւ եթէ իր բանկիւրից
վերցնէր, շատ աչքի կ'ընկնէր, միչդեռ դրամարկում փողը շա-
րունակ դալիս գնում, աւելանում, պակասում է... Բայց հա-
շուեկիշիւր գլխներիս կանգնած է... Ի՞նչ եմ ասել, հիանալի բան
կը լինեն դրանց հաշիւները տարուայ վերջին... Ամենասարսափե-

լին այն է, որ Ռիսլէր աւագը խօսք անգամ չի ուղղում լսել: Քանի քանի անգամ նախազգուշացրել եմ իրան. «Ձգնչ կաց, պարոն Ժօրժը խենթութիւններ է անում այդ կնոջ համար...»: Կամ հեռանում է ուսերը թափ տալով կամ թէ ասում է, թէ այդ իրան բանը չէ, որովհետև դործարանի տէրը Ծրօմօն կրտսերն է... Խնայք, քիչ է մնում մարդ կարծի... քիչ է մնում մարդ կարծի...»

Դանձապահը չը վերջացրեց նախադասութիւնը, բայց նրա լռութեան տակ շատ թաղուն մտքեր էին զգացւում:

Պառաւ օրիորդի սիրտը այրւում էր կսկծից, բայց, ինչպէս առհասարակ անում է կանանց մեծամասնութիւնը այդպիսի դէպքերում, փոխանակ չարիքին մի դարման փնտռելու, նա մոլորում էր հազար ու մի յետանկատ ափսոսանքների, ենթադրութիւնների և ախ ու վախերի մէջ... Ափսոս, որ աւելի շուտ չէին իմացել այդ, երբ Շէբերը դեռ նրանց հարեաններն էին: Տիկին Շէբը շատ պատուական կին էր: Կարելի էր համոզել նրան, որ հսկէր Սիդնիին, հետը լուրջ կերպով խօսէր:

— Զիշտ ուր, լաւ միտք է այդ, ընդհատեց նրա խօսքը Սիդնիին... Լաւ կը լինի գնաք Մայլ փողոցը նրա ծնողներին նախազգուշացնելու: Սկզբում մտքովս անցաւ նամակ գրել Յարանյին... Նա մեծ ազդեցութիւն ունէր եղբօր վրայ և կան բաներ, որ միայն նա կարող է ասել նրան... Բայց Յարանյը շատ հեռու է... Եւ բացի այդ, սարսափելի բան կը լինէր, եթէ անհրաժեշտ լինէր դիմել այդ միջոցին... Խեղճ Ռիսլէր, սիրտս այնուամենայնիւ ցաւում է նրա համար... Ձէ, էլի լաւն այն է, որ իմաց տանք տիկին Շէբին... Դուք յանձն կ'առնէք այդ բանը: Քոյրիկ...

Վտանգաւոր յանձնարարութիւն էր: Օրիորդ Պլանուսը մի քանի առարկութիւններ արեց, բայց նա սովոր չէր երբէք հակառակել իր եղբօր կամքին, իսկ այն միտքը, որ նա կարող էր օգտակար լինել իրանց հինաւուրց բարեկամ Ռիսլէրին, վերջնականապէս կակղեցրեց նրան:

Իր փեսայի բարեհոգութեան չնորհիւ, պ. Շէբին յաջողել էր իրագործել իր նոր քմահաճ ծրագիրը: Երեք ամիս էր արդէն, որ նա բնակում էր իր հռչակաւոր վաճառանոցում, Մայլ փողոցում, և ամբողջ թաղը մնացել էր զարմացած, տեսնելով այդ խանութը, որի մէջ ապրանք չը կար, բայց որի փեղկերը բացւում էին առաւօտեան և փակւում գիշերը, ինչպէս առհասարակ խոշորավաճառ խանութներում: Չորս կողմը դարակներ էր սարքել, նոր հաշուասեղան էր չինել տուել և մի զաղսնափակ զրամարիզ ու մի մեծ կշեռք: Մի խօսքով, պ. Շէբը ունէր

առևտրի համար անհրաժեշտ բոլոր տարրերը, առանց դեռ որոշակի իմանալու, թէ ինչ առևտուր է ընտրելու:

Նա մտածում էր այդ բանի մասին ամբողջ օրը, անվերջ յետ ու առաջ չափափակելով խանութը, որի մէջ թափթփուած էին ննջարանի մի քանի խոշոր կահ-կարասիներ, որոնք չէին տեղադրուել խանութի յետերի սենեակում: Նա մտածում էր այդ հարցի մասին նաև իր դռան շէմքի վրայ, երբ, գրիչը ականջի յետեր խրած, մեծ ախորժանքով խորասուզւում էր պարիզեան առևտրի ժխորի մէջ: Վաճառատունների գործակալները գնում գալիս էին նմուշների տետրակները կոնստակներին, իրար յետևից անցնում էին ապրանքներ տեղափոխող սայլերը, հանրակառքեր, բեռնակիր մշակներ ու ձեռնասայլակներ, հարեան դռների առաջ վայր էին բերում ու բայ անում ապրանքների բեռները և ճութեղէնների ու հիւսազարդերի ծրարները քաշ էին տրւում առուի ցեխում նախ քան մանկը ներքնայարկ նկուղները, այդ գանձերով լի մութ հորերը, ուր ծլում է առևտրական տների հարստութիւնը,—և պ. Շէքը այդ բոլորը դիտում էր և հիանում, զմայլում:

Նա զուարճութիւն էր չինել իր համար գուշակել, թէ ինչ կայ հակերի մէջ, և առաջինն էր հասնում իրարանցումի տեղը, երբ մի որ և է բեռ ընկնում էր անցորդներից մէկի ոտքին կամ որ և է բեռնասայլի տաք ու անհամբեր ձիերը երկարուկ կառքը ծռում էին և, փողոցի երկայնութեամբ կանգնեցնելով, խափանում էին անց ու դարձը: Բացի այդ, իբր անյաճախորդ մանրավաճառ, նա հաղար ու մի ուրիշ միջոցներ ունէր ժամանակը ուրախ անցկացնելու համար,—տեղատարափ անձրև, զանազան պատահարներ, գողութիւններ, կոխներ...

Երեկոյեան դէմ պ. Շէքը, ուրիշների աշխատանքից չլմած, խլայած ու յոգնած, մեկնում էր իր բազկաթուռի մէջ ու, ճակատի քրտինքը սրբելով, ասում կնոջը.

—Այ այսպիսի կեանք է հարկաւոր ինձ... գործունեայ կեանք:

Տիկին Շէքը մեղմ ժպտում էր, առանց ոչինչ պատասխանելու: Վարժուած իր ամուսնու բոլոր քմահաճոյքներին, նա կարողացածին սլէս սարքուել էր խանութի յետերի սենեակում, —որ նայում էր մի մութ բակի,—մխիթարւում էր յիշելով իր ծնողների նախկին բարօրութիւնն ու աղջկայ հարստութիւնը և, միշտ մաքուր հագնուած, արդէն կարողացել էր չահել հայթայթիչների և հարեանների յարգանքը:

Խնդճի ուղածն էլ միայն այնքանն էր, որ իրան չը խառնեն բանուորների կանանց հետ, որոնցից շատերը իրանից պակաս

աղքատ էին, և որ ինքը կարողանար, չը նայելով բոլոր անըպաստ պայմաններին, պահպանել իր փոքրիկ բուրժուական դիրքը: Այդ նրա մշտական հոգսն էր, և նրա կացած սենեակը, ուր ժամի երեքին զիշերուայ նման մութն էր լինում, փայլում էր իր կարգ ու սարքով և մաքրութեամբ: Յերեկը մահճակալը ծալուում, բազմոց էր դառնում, մի հին շալ քցւում էր սեղանի վրայ իբրև ծածկոց, հողմարգելքով ծածկուած բուխարին ափսոսելի պահարանի տեղ էր ծառայում և ոտնաջնողիկի մեծութիւն ունեցող մի կրակարանի վրայ կամաց-կամաց եփւում էին կերակուրները: Հանգստութիւնն էր միակ բաղձանքը այդ խեղճ կնոջ, որի գլխից ցաւն անպակաս էր շնորհիւ իր անհանգիստ ամուսնու:

Հէնց սկզբի օրերից պ. Շէքը մի ոտնաչափ տառերով գրել էր տուել իր խանութի ճակատի թարմ ներկի վրայ.

ԿՕՄԻՍԻՈՆԵՐՈՒՔԻՆ-ԱՐՏԱՏԱՆՈՒՔԻՆ

Ինչի՞ կօմիսիօնէրութիւն, ինչի՞ արտահանութիւն,—այդ չէր ասուած: Նրա հարևանները չղարշ, մահուդ կամ կտաւ էին ծախում, իսկ նա տրամադիր էր ծախել ամեն ինչ, առանց հաստատ իմանալու, թէ իսկապէս ինչ էր ծախելու: Ի՞նչքան դատողութիւններ էր ստիպուած լսել խեղճ կինը այդ հարցի մասին երեկոյեան պարապութեան ժամերին:

—Կտաւեղէնից ոչինչ չեմ հասկանում, բայց մահուդէնի համար կարող եմ երաշխաւորել: Սակայն եթէ մահուդի գործ սկսեմ, մի չըջիկ գործակատար հարկաւոր կը լինի ինձ, որովհետեւ լաւ տեսակները Սէդանից ու Էլքեօֆից են բերում: Նկարէն չթերի մասին չեմ խօսում. այդ ամառուայ բան է: Շղարշ ծախելն էլ անկարելի է, որովհետեւ սէզօնն անցնելու վրայ է:

Սովորաբար նա վերջ էր տալիս իր անվճռականութեանը, ասելով.

—Առաւօտուայ մտածածը իսելօք կը լինի... գնանք քնելու:

Եւ նա գնում էր քնելու ի մեծ մխիթարութիւն իր կնոջ:

Երեք, չորս ամիս այդպէս ապրելուց յետոյ, պ. Շէքը սկսեց ձանձրանալ: Քիչ-քիչ վերսկսուեցին գլխացաւերը, աչքերի շաղուելը: Դուրս էր գալիս, որ քաղաքի այդ մասը աղմկալից էր ու անառողջ: Գործերն էլ լաւ չէին գնում: Ոչինչ չէր աշողւում, ոչ մահուդէնը, ոչ ճոթեղէնը:

Այդ նոր ճգնաժամի միջոցին էր, որ «իմ քոյր օրիորդ Պլանուսը» նրանց այցելութեան եկաւ Սիդօնի հարցի առիթով:

Պառաւ օրիորդը ճանապարհին ինքն իրան ասում էր.

«Պէտք է զգուշութեամբ խօսել...»: Բայց, ինչպէս բոլոր ամաչ-

Մայիս, 1901.

կոտ մարդիկ, նա ամբողջ տոպրակը միանգամից թափ տուեց հէնց մտնելու րոպէին, հէնց առաջին խօսքերով:

Բեմական էֆֆէկտ ստացուեց: Լսելով, որ իր աղջկան մեղադրում են, տիկին Շէբը ոտքի կանգնեց, սարսափելի վրդովուած: Նա երբեք չէր կարող հաւատալ այդպիսի բանի: Նրա խնդ Սիդօնին զոհ էր դարձել մի ստոր զրպարտութեան:

Պ. Շէբը շատ բարձրից սկսեց խօսել նրա հետ, ճոճաւն խօսքերով, գլխի թափահարումներով, և, իր սովորութեան համեմատ, ամեն ինչ կապելով իր սեփական անձի հետ: Խնչպէս կարող էին ենթադրել, որ նրա զաւակը, նախկին օրիորդ Շէբը, երեսուն տարուց ի վեր վաճառանոցում յայտնի պատկանելի մի առևտրականի աղջիկը, ընդունակ կը լինի այդպիսի մի... Ինչեր էք ասում, ում էք ուզում հաւատացնել:

Օրիորդ Պլանուսը պնդեց իր ասածի վրայ, որովհետև նրա համար ծանր էր չատախօսի, թեթեւօրիկութեամբ վատ համբաւներ տանող-բերողի տեղ դրուել: Նա ասաց, որ հաստատ ապացոյցներ կան, ասաց, որ այդ այլ ես գաղտնիք չէր ոչ ոքի համար:

— Թէկուղ հէնց այդպէս լինի, բացականչեց պ. Շէբը, կատաղած այդ յամառութիւնից... Մեր լինչ բանն է դրանով դրադուել: Մեր աղջիկը ամուսնացած է: Մեզնից հետո է ապրում... Թող ամուսինը, որ տարիքով շատ աւելի մեծ է նրանից, խորհուրդներ տար, ղեկավարէր նրան... Բայց իսկի հոգն էր այդ:

Եւ պ. Շէբը սկսեց վնասել իր վնասային, այդ ծանրարիւն չգէշյարացուն, որ ամբողջ կեանքը անց էր կացնում արհեստանոցում, աշխատելով ինչ որ մեքենայ հնարել, չէր ուզում կնոջը ուղեկցել հիւր գնալիս և ամեն բանից բարձր էր դասում իր ծեր-ամուրիական սովորութիւնները, չիրուսը, գարեջրատունը:

Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի արխտօկրատական արհամարհանքի արտայայտութեամբ էր արտասանում պ. Շէբը այդ «գարեջրատուն...» խօսքը: Եւ սակայն, գրեթէ ամեն երեկոյ նա գնում էր այնտեղ Ռիպլերի հետ գարեջուր խմելու և յանդիմանութիւններ էր թափում նրա գլխին, եթէ նա գէթ մի անգամ չէր գալիս ժամադրութեան:

Իբրև հիմք այդ բոլոր դատարկաբանութեան՝ Մայլ փողոցի վաճառականը, — Վոմիսիօնեբուքիւն, արահանուքիւն, — մի բոլորովին սրու միտք ունէր գլխումը: Նա ուզում էր թողնել իր խանութը ու քաշուել գործից, և բաւական ժամանակից ի վեր միտքը դրել էր գնալ Սիդօնին տեսնելու, որպէս զի նրան չահէր իր նոր ծրագրի կողմը: Ուրեմն ամենեւին յաբմար բոլէ չէր այդ՝ անախորժ խօսակցութիւններ ունենալու և հայրական իշխանութեան ու ընտանեկան պատուի մասին խօսելու համար:

Ինչ վերաբերում է տիկին Շէբին, որի համոզմունքը իր աղջկայ անմեղանչականութեան վերաբերմամբ մի քիչ թուլացել էր օրիորդ Պլանուսի բերած ապացոյցներից յետոյ,—նա խորասուզուել էր խորին լռութեան մէջ: Խեղճ կինը ուրախ կը լինէր, որ խուլ լինէր, կոյր լինէր, երբէք ճանաչած չը լինէր օրիորդ Պլանուսին:

Ինչպէս այն բոլոր մարդիկ, որոնք շատ անբախտ են եղել, նա սիրում էր քարանալ հանգստութեան նմանութիւն ունեցող մի վիճակի մէջ, և անգիտութիւնը ամեն բանից գերադաս էր թուում նրան: Միթէ նրանց կեանքը առանց այն էլ բաւական տխուր չէր, Տէր Աստուած: Եւ վերջապէս Սիդօնին միշտ կարգին աղջիկ էր եղել, ինչո՞ւ չը պէտք է նա կարգին կին լինէր:

Մութն ընկնում էր:

Պ. Շէբը ծանրօրէն վերկացաւ տեղիցը, փակեց խանութի տախտակափեղկերը ու վառեց գազի ճրագը, որ լուսաւորեց պատերի մերկութիւնը, դարակների փայլուն դատարկութիւնը և սոհասարակ խանութի մէջի ամբողջ տեսարանը, որ բաւական նման էր սնանկութեան հետեւող օրուայ մի տեսարանի: Անխօս և՛ լռութիւն պահպանելու վճռականութեամբ բերանը արհամարհոտ կերպով սղմած, նա կարծես ուզում էր ասել պառաւ օրիորդին. «Արդէն երեկոյ է... տուն գնալու ժամանակ է...» Իսկ այդ միջոցին չետի սենեակից լսւում էր տիկին Շէբի ձայնը, որ հեկեկում էր այնտեղ ընթրիքի պատրաստութիւններ տեսնելով:

Դրանով վերջացաւ օրիորդ Պլանուսի այցելութիւնը:

—Չը, ինչպէս եղաւ, հարցրեց նրանից ծեր Սիդիզմունդը, որ անհամբերութեամբ սպասում էր նրան:

—Չուղեցին հաւատալ ասածիս և քաղաքավարի կերպով դուրս արեցին ինձ տանից:

Խեղճ աղջկայ աչքերը արտասուեակալեցին, երբ յիշեց այդ ստորացումը:

Ծերուկը սաստիկ կարմրեց և, մեծ ակնածութեամբ բռնելով նրա ձեռքը, ծանրօրէն ասաց.

—Իմ քոյր օրիորդ Պլանուս, ներողութիւն եմ խնդրում ձեզից, որ այդ քայլն անել տուեցի ձեզ. բայց հարցը Ֆրոմօնների առևտրական տան պատուին էր վերաբերում:

Այդ բոլորից սկսած Սիդիզմունդը քանի դնում աւելի ու աւելի տխրում էր: Դրամարկդը այլ ևս ամուր ու ապահով չէր թւում նրան: Նոյն իսկ երբ Ֆրոմօն կրտսերը նրանից փող չէր պահանջում, նա այնուամենայնիւ երկիւղ էր կրում և

իր բոլոր երկիւղները ամփոփում էր երեք խօսքի մէջ, որոնք միշտ նրա բերանն էին զալիս, քրոջ հետ խօսելիս:

—Chai bas confiance!...*) ասում էր նա գերմանախօս չվէյցարացու աղաւաղ ոճով և արտասանութեամբ:

Միշտ մտառանջուելով գրամարկդի համար, գիշերները նա երբեմն երազում տեսնում էր, թէ արկղը խախտւալու էր ամեն կողմից և բաց էր մնում, չը նայելով բանալիով կարգին փակուած լինելուն, կամ թէ սաստիկ քամի էր բարձրանում և ցիրուցան անում բոլոր թղթերը, տոմսերը, չէքերը ու արժէ-թղթերը և ինքը վազվզում էր նրանց յետևից գործարանի մի ծայրից միւսը, ուժասպառ աշխատելով հաւաքել գետնից:

Յերեկը, իր վանդակապատի յետևում, նրան թւում էր, թէ մի փոքրիկ սպիտակ մուկ մտել է արկղը ու շարունակ կրծում ու փչացնում է ամեն ինչ, հետզհետէ գիրանալով ու սիրունանալով աղէտի սաստկացման չափով:

Ուստի, երբ կէսօրից յետոյ Սիդօնին երևում էր պատշգամբում, կօկօտի նման զուգուած զարդարուած, ծեր Սիգիզմունդը դողդողում էր կատաղութիւնից: Նրան թւում էր, թէ իր առջևով անցնում է դէպի դռան մօտ սպասող կառքը ինքը տնա-քանդութիւնը, բախտաւոր կօքէտ կնոջ հանգիստ կերպարանքով:

Տիկին Ռիպէրը չը գիտէր, որ այնտեղ, այդ գետնայարկի պատուհանի յետևին, գտնւում է մի թշնամի, որ ամեն բոպէ դարանամուտ դիտում է նրա ամենաջնչին արարքները, նրա կեանքի ամենաաննշան մանրամասնութիւնները, դաշնամուրի վարժուհու գնալ գալը, առաւօտները եկող նշանաւոր դերձակուհուն, տուն բերուող բոլոր կարտօնները և «Լուվր» մագաղինի գործակատարների երիզաւոր գլխարկները ու ծանր կառքը, որ կանգ է առնում բոժոժների գնդղնդոցով, ինչպէս հուժկու ձիերով լծուած մի հանրակառք, որ փրօմօնների առևտրական տունը արագ-արագ տանում էր դէպի անանկութիւն:

Սիգիզմունդը համարում էր ծրարները, աչքով կշռում էր նրանց և բաց պատուհանների միջով հետաքրքրութեամբ թափանցում էր Ռիպէրների բնակարանի ներսը: Նրա աչքից ոչինչ չէր խուսափում, ոչ գորգերը, որ թափ էին տալիս մեծ աղմուկով, ոչ ծաղկարանները, որ դուրս էին դնում արևի առաջ, լի հիւանդոտ, ջերմոցային, թանկագին ու հազուադիւտ ծաղիկներով, և ոչ շրացուցիչ պաստառները:

Նա իսկոյն նկատում էր նոր առնուած բաները, որոնցից

*) Je n'ai pas confiance—վստահ չեմ:

իւրաքանչիւրը համապատասխանում էր իրանից պահանջուած մի որոշ խոշոր գումարի:

Բայց ամենից շատ նա ուսումնասիրում էր Ռիպլերի երեսօնագրերը:

Նրա կարծիքով, իր բարեկամը, այդ լաւագոյն, ազնուագոյն մարդը աշխարհում, կնոջ ազդեցութեան չնորհիւ սկսել էր դառնալ մի անամօթ սրիկայ: Նրա համար ոչ մի կասկած չը կար այդ բանում: Ռիպլերը անշուշտ գիտէր, որ իր պատիւը խայտառակում է, և հաշտուել էր այդ բանի հետ: Նա լռութիւն էր պահպանում, որովհետեւ վճար էր ստանում դրա համար:

Անկասկած, Սիգիզմունդի կողմից մի տեսակ հրէշային բան էր այդ ենթադրութիւնը: Բայց չը պէտք է մոռանալ, որ անբիծ բնաւորութիւններին, որոնք երբեք ճանաչած չը լինելով անառակութիւնը՝ նոր են սկսում ճանաչել, յատուկ է իսկոյն և եթ երևեկայութեամբ դնալ չափազանց հեռու, եղածիցն էլ դէնը: Մի անգամ Սիգիզմունդի ու Ժօրժի դաւաճանութեան մէջ համոզուելուց յետոյ՝ էլ այնուհետեւ նա շատ անհաւանական չէր համարում Ռիպլերի ստորութիւնը: Եւ, վերջապէս, էլ ուրիշ ինչպէս կարելի էր բացատրել Ռիպլերի անհոգութիւնը իր առետրակցի ծախսերի վերաբերմամբ:

Իր գծով և բուտիկական ազնւութեամբ ծերունի Սիգիզմունդը անկարող էր հասկանալ Ռիպլերի սրտի փափկանկատութիւնը: Բայց այդ, ահագին տարբերութիւն կար նրա պէս վաճառականի սուր խելք և հաշուապահի մեթօդիկական սովորութիւններ ունեցողի և Ռիպլերի նման մտքամոլոր, քշուած կէսգնդարուեստագէտի, կէս-հնարչի միջև: Նա իր չափովն էր չափում այդ բոլորը, անընդունակ լինելով հասկանալու, թէ ինչ տեսակ վիճակի մէջ է լինում հնարեղացաւով բռնուած, մենագաղափարով զբաւուած մի մարդ: Լուսնոտների նման ևն այդ մարդիկ: Նրանք նայում են, բայց չեն տեսնում, որովհետեւ նրանց հայեացքը ուղղուած է դէպի իրանց ներսը:

Սիգիզմունդի կարծիքով, Ռիպլերը լաւ տեսնում էր ամեն ինչ:

Այդ մտածմունքը ահագին դժբախտութիւն էր պատճառում ծեր գանձապահին: Սկզբում նա ուշի ուշով նայում էր Ռիպլերի երեսին ամեն անգամ, երբ նա մտնում էր իր սենեակը, յետոյ, երբ յուսահատուեց, տեսնելով իր բարեկամի անզգայ անտարբերութիւնը, որ նրան նախամտածութեամբ ու զիտմամբ հագած զիմակ էր թւում, նա սկսեց երեսը շուռ տալ նրանից և կամ թղթերն էր քրքրում, որպէս զի չը հանդիպէր նրա կեղծ հայեացքներին, կամ, եթէ պէտք էր լինում հետը խօսելու, աչքը

յառում էր պարտեզի ծառուղիներին կամ վանդակապատի ցանցին: Ասածներն էլ այնպէս անորոշ և ձախ ու ծուռ էին լինում, ինչպէս և հայեացքները: Դժուար էր իմանալ, թէ ում էին ուղղուած լինում նրանք:

Էլ չը կային առաջուան մտերմական ժպիտները, էլ ծերուկը առաջուան պէս Ռիսլէրի միտքը չէր քցում հին յիշողութիւնները, թերթելով գործարանի հաշուեգրքերը:

«Ահա քո մտած տարին... ռոճկիդ առաջին աւելացումը... Միտքդ է: Այդ օրը ճաշեցինք Դուլի ճաշարանում... երեկոյան էլ գնացինք Կոյրերի սրճարանը... Հը՞, յիշում ես: Լաւ քէֆ էր, չէ՞»:

Վերջ ի վերջոյ Ռիսլէրը նկատեց իր բարեկամի ու իր մէջ սկսուած տարօրինակ սառնութիւնը և կնոջը յայտնեց այդ բանը:

Սիդօնին էլ մի ժամանակից ի վեր զգում էր այդ հակակրութիւնը իր շուրջը պտոյտ դալիս: Երբեմն, բակովն անցնելիս, նա իրան մի տեսակ վատ էր զգում իր վրայ ուղղուած չարակամ հայեացքներից, որոնք ստիպում էին նրան ջղայնաբար շուռ գալ դէպի ծերունի գանձապահի պատուհանը: Ուստի երկու բարեկամների մէջ տեղի ունեցած այդ գժտութիւնը անփայտ նրա սիրտը և նա իսկոյն միջոցներ ձեռք առաւ նախազգուշացնելու իր ամուսնուն Պլանուտի չարախօսութիւններից:

—Միթէ չէք տեսնում, որ նա նախանձում է ձեզ, ձեր դիրքին... Քիչ է մնում տրաքուի, տեսնելով, որ իր նախկին հաւասար ծառայակիցը այժմ իր իշխանաւորն է դարձել... Բայց միթէ արժէ ուշք դարձնել այդպիսի բաների... Գիտէք, որ... այստեղ ամենքն էլ չարակամութեամբ են վերաբերուում ինձ:

Բարեհոգի Ռիսլէրը չուեց իր խոշոր աչքերը.—«Ի՞նչպէս, քեզ»:

—Ի հարկէ, ակնյայտնի երևում է, որ այստեղ ամենքն էլ ինձ ատում են: Տրաքում են, տեսնելով, որ փոքրիկ Շէբը դարձել է տիկին Ռիսլէր աւագ... Ասածուն է միայն յայտնի, թէ ինչպիսի խայտառակ բաներ են տարածում իմ մասին... Եւ կարող եմ ձեզ հաւատացնել, որ ձեր գանձապահը շատ կարճ չէ պահում լեզուն... Օ՛ֆ, սաստիկ օձ մարդ է:

Սիդօնին իր նպատակին հասաւ: Ռիսլէրը վրդովուեց և չափազանց հպարտ լինելով, որպէս զի գանդատուէր, սկսեց ինքն էլ սառնութեամբ պատասխանել իր նախկին բարեկամի սառնութեանը: Այդ ագնիւ մարդիկ, լի անվստահութեամբ մէկը դէպի միւսը, այլիս չէին կարողանում հանդիպել իրար առանց վերին աստիճանի անախորժ զգացմունքի, այնպէս որ մի ժա-

մանակից յետոյ Ռիսլէր աւագը ոտքը բոլորովին կտրեց գանձապահի սենեակից: Այդ, ասենք, հեշտ էր նրա համար այն պատճառով, որ բոլոր փողային հարցերը Ֆրոմօն կրտսերը վերցրել էր իր վրայ: Ամեն ամսի երեսունին Ռիսլէրի ամսականը ուղարկում էին նրա բնակարանը: Այդ աւելի ևս հեշտացնում էր ժօրժի ու Սիդօնի բանը և հնարաւորութիւն էր տալիս նրանց հազար ու մի խայտառակութիւններ կատարել ամենայն ապահովութեամբ:

Սիդօնին ղրաղուած էր այդ ժամանակ լրացնելով իր չքեղ կեանքի ծրագիրը: Սեփական ամարանոց էր պակասում նրան: Իսկապէս ասած, նրան առելի էին ծառերը, դաշտերը և մարդու աչք ու բերան փռելով լցնող ճանապարհները:

— Աշխարհումս դրանից աւելի տխուր բան չը կայ, ասում էր նա յաճախ:

Բայց կէր Ֆրոմօնը ամառը անց էր կացնում Սալինիում: Հէնց որ օրերը տաքանում էին, ներքևի յարկում սկսում էին պայտասակները կապել, վարագոյրները վայր բերել, և տնափոխութեան մի ահազին կառք, որի մէջ ճօճւում էր երեխայի կապտադոյն օրօրոցը, ճանապարհ էր ընկնում դէպի պապի դղեակը: Յետոյ մի առաւօտ մայրը, տատը, երեխան ու ծծմայրը, փաթաթւած սպիտակ ճոթերի և թեթեւ շղարչների մէջ, երկձի կառքով սլանում էին դէպի արևառ սիդամարգերը և նշդարենիների մեղմ ստուերը:

Այդ միջոցին Պարիզը տգեղացած, ամայացած էր լինում. և թէպէտ Սիդօնին սիրում էր Պարիզը նոյն իսկ այդ ամառային եղանակին, երբ նա տաքանում է հնոցի պէս, այնուամենայնիւ նրան ծանր էր մտածել, որ այդ ժամանակ բոլոր հարուստ ու գողտրիկ պարիզուհիները զրօնում են ծովափերում իրանց բաղդոյն հովանոցների ստուերում և իրանց ճանապարհորդութիւնը մի տեսակ պատրուակ են դարձնում հազար ու մի նոր ու մտացածին բաների և տարօրինակ ու համարձակ մօզանների համար, որոնք կանանց հնարաւորութիւն են տալիս ցոյց տալու, որ իրանք գեղեցիկ աղղր ունեն և սեփական, ոչ կեղծ երկար ու դանդուր շաքանակագոյն մազեր:

Ծովային լողարաններ: Այդ անկարելի էր: Ռիսլէրը չէր կարող բացակայել:

Ամարանոց առնել. Դևո միջոցներ չունէին:

Սիրականը պատրաստ էր ի հարկէ ամենամեծ ուրախութեամբ կատարել Սիդօնի այդ նոր քմահաճոյքը, բայց ամառանոցը չէ կարելի թագցնել մի ապարանջանի, մի քաշմիրի շալի նման: Պէտք էր այնպէս անել, որ ամուսինը ընդունէր այդ ըն-

ծան: Հեշտ բան չէր այդ, սակայն Ռիսլէրի հետ կարելի էր փորձել:

Հողը պատրաստելու համար Սիդօնին անընդհատ խօսում էր, թէ վատ չէր լինի մի փոքրիկ, ոչ շատ թանկ ամառանոց ունենալ Պարիզի մօտերքը: Ռիսլէրը լսում էր ժպտով: Նա արդէն տանջւում էր սեփականատիրութեան պահանջով, որ սկըսւում և զարգանում է մարդու մէջ հարստութեան հետ միասին, և նրա երևակայութեան մէջ պատկերանում էին բարձրահասակ խոտեր և գեղեցիկ պտուղներով լի այգիներ, սակայն, խոհեմ լինելով, նա ասում էր.

— Կը տեսնենք... կը տեսնենք... Սպասենք տարեվերջին: Տարեվերջին, այսինքն հաշուեկշիռին:

Հաշուեկշիռ:

Մոզական խօսք է այդ: Ամբողջ տարին մարդիկ զլիսապատառ առաջ են ընթանում գործերի մրրիկի մէջ: Փողը ներս է մտնում, դուրս է գալիս, ձեռքէ ձեռք է անցնում, նոր փող է ներս բերւում, շաղ է անցնում, և առտրական տան հարստութիւնը, իբրեւ մի փայլուն ու անկաշնելի յարաշարժ օձ, երկարանում է, կարճանում, մեծանում, փոքրանում, այնպէս որ անկարելի է գաղափար կազմել նրա վիճակի մասին նախ քան հանգստի բոլէն: Միայն հաշուեկշիռի միջոցին կարելի է իմանալ գործերի դրութիւնը և այն թէ արդեօք այդ տարին, որ յաջողակ էր թւում, յաջողակ է իսկապէս:

Ընդհանրապէս, հաշուեկշիռը պատրաստւում է գեկտեմբերի վերջերքին, Ծննդեան տօնի *) կամ Նոր տարուայ օրից մի քիչ առաջ: Այդ ժամանակ գործարանի ծառայողները շատ ուշ են վերջացնում պարապմունքները, որովհետեւ հաշուեկշիռը աւելորդ աշխատանք է պահանջում: Ամբողջ առտրական տունը ոտքի վրայ է լինում: Լամպերը, որոնք դրասենեակներում վառուած են մնում նրանց փակուելուց երկար ժամանակ անցած, կարծես նոյնպէս մասնակցում են տօնային տրամադրութեանը, որով համակուած է լինում տարուայ այդ վերջին շաբաթը, երբ այնքան պատուհաններ լուսաւորւում են ընտանեկան երեկոյթների միջոցին: Մինչև ամենամանչան ծառայողը, ամենքը հետաքրքրւում են հաշուեկշիռի հետևանքներով: Նոր տարուայ պարգևատրութիւնները և ռոճիկ աւելացումը կախուած են լինելու այդ երանելի թուանշանից: Այնպէս որ այն միջոցին, երբ քննւում են հարուստ գործարանի ահագին շահերը, հինգերորդ

*) Եւրոպական երկիրներում Քրիստոսի ծնունդը տօնում են գեկտեմբերի 25-ին:

յարկերում կամ քաղաքի շրջակայքում գտնուող մանր բնակարաններում՝ ծառայողների կանայք, երեխաները, ծեր ծնողները իրար հետ խօսում են հաշուեկշռի մասին, որի հետևանքը զգալիք տայ իրան կամ տնտեսած փողերի կրկնապատկութեամբ կամ թէ որ և է աղքտով, որ երկար ժամանակ յետաձգւում էր և այժմ վերջապէս հնարաւոր է դառնում պարզեցատրութեան չնորհիւ:

Ֆրոմօն կրտսերի և Ռիսլէր աւագի գործարանում այդ ժամանակ Սիգիզմունդ Պլանուսը կատարեալ աստուած է ամենքի համար և նրա փոքրիկ վանդակապատը՝ սրբութիւն սրբոց, ուր տքնում են բոլոր գործակատարները: Նիրհած գործարանի լուծութեան մէջ շխշխալով դառնում են ահագին հաշուեկշռերի ծանր էջերը. բարձրաձայն արտասանւում են զանազան անուններ և առիթ են տալիս քրքրելու ուրիշ գրքեր: Գրիչները ճոճում են: Ծերունի գանձապահը, շրջապատուած իր օգնականներով, բազմադրազ և ահարկու կերպարանք է ստացել ժամանակ առ ժամանակ Ֆրոմօն կրտսերը, կապը նստելուց առաջ, մտնում է ներս, սիգարը՝ բերնին, ձեռնոցները հագին, բոլորովին պատրաստ: Նա կամայ-կամայ, ոտների ծայրի վրայ դալիս է և, կռանալով վանդակապատի վրայով, հարցնում.

— Հը... աջո՞ղ է գնում:

Սիգիզմունդը մրմնթում է և երիտասարդ գործարանատէրը հեռանում է, չը համարձակուելով այլ ևս հարց տալ: Գանձապահի դէմքից նա իսկոյն գուշակում է, որ բարի համբաւ չի ասելու:

Արդարև, յեղափոխութեան տարիներից ի վեր, երբ մարդիկ իրար կոտորում էին գործարանի բակերում, երբէք Ֆրոմօնների առևտրական տանը չէր տեսնուած այդպիսի ողորմելի հաշուեկշիռ: Մուտքը և ելքը հաւասար էին գալիս: Ընդհանուր ծախսերը կլանել էին բոլոր եկամուտները, և դեռ Ֆրոմօն կրտսերը մեծ գումարներ էր պարտք մնում դրամարկդին: Պէտք էր տեսնել ծեր Պլանուսի վհատ կերպարանքը, երբ դեկտեմբերի 31-ին նա բարձրանում էր վերև ներկայացնելու Ժօրժին իր հաշիւները:

Ժօրժը շատ ուրախ լսեց հաշիւների հետևանքը: Բան չը կայ, ապագայում գործը աւելի յաջողակ կ'երթայ: Եւ գանձապահի տրամադրութիւնը տեղը բերելու համար, արտակարգ պարզեցատրութիւն տուեց նրան, հազար ֆրանկ, մինչդեռ առաջ հինգ հարիւր ֆրանկ էր տալիս հօրեղբայրը: Բոլորին էլ բաժին հասաւ այդ մեծահոգութիւնից, և ընդհանուր զոհուանակութեան մէջ չուտով մոռացուեց տարեկան ողորմելի հաշուեկշիռը: Ինչ վերաբերում է Ռիսլէրին, Ժօրժը իր վրայ վերցրեց նրան

գործերի դրուժեան հետ ծանօթացնելու պարտականութիւնը:

Մտնելով իր առևտրակցի փոքրիկ առանձնասենեակը, ուր, ինչպէս առհասարակ արհեստանոցներում, պատուհանը վերևից էր և լոյսը ուղղահայեաց ընկնում էր հնարիչի ծրագիրների վրայ, Ֆրոմօն կրտսերը մի րոպէ տատանումն, ամօթ և խղճահարուժիւն զգաց այն բանից, ինչ որ անելու էր:

Ռիսկէրը, զոան ձայնը լսելով երեսը շուռ տուեց և ուրախ-ուրախ բացականչեց.

— Ծօրչ, Ծօրչ, սիրելի բարեկամս... Համարեա գտած վերջացած է մեր Տպագրիչը... Մի քանի մանր մուշր բաներ են մնացել... Բայց այդ ոչինչ, այժմ ես վստահ եմ յաջողութեան վրայ... կը տեսնէք... կը տեսնէք... էլ այժմ որքան ուղում են, թող մրցեն մեզ հետ Պրօշասօնները... Ռիսկէրեան տպագրիչով մենք կը յաղթենք բոլոր մրցորդներին...

— Կեցցէք, ընկերս, պատասխանեց Ֆրոմօն կրտսերը... Այդ տպագայի բան է. իսկ ներկայի մասին չէք էլ մտածում: Հապա մեր հաշուեկշիւը...

— Ճիշտ է՛: Մտքիցս բոլորովին ընկել էր... Շատ էլ փայլուն չի, չէ՛:

Նա ստում էր այդ, նայելով փոքր ինչ յուզուած ու չիտթուած Ժօրժի երեսին:

Ժօրժը պատասխանեց.

— Ոչ, ոչ, չատ փայլուն է, ընդհակառակը: Մենք տեղիք ունենք գոհ լինելու, մանաւանդ առաջին տարուայ համար... Իւրաքանչիւրս քառասուն հազար ֆրանկ չա՛հ ենք ստացել: Եւ որովհետեւ մտածեցի, թէ գուցէ փողի կարիք ունենաք ձեր կնոջ համար կաշանդէք առնելու...

Չը համարձակելով նայել այդ աղնիւ մարդու երեսին, որին նա խաբում էր այդպէս, Ֆրոմօն կրտսերը մի կապոյ չէքեր ու արժէտոմանք դրեց սեղանի վրայ:

Ռիսկէր աւագը յուզուեց մի րոպէ: Այդքան փող միմիայն իրան: Նա իսկոյն մտածեց Ֆրոմօնների մեծահոգութեան մասին, որոնք իրան մարդ էին չինել, և յետոյ փոքրիկ Սիդօնի մասին և նրա այն ցանկութեան մասին, որ նա այնքան յաճախ յայտնում էր և որ ինքը այժմ կարող էր կատարել:

Արտասուէքն աչքերին և բարի Ժպիտը չրթունքներին նա մեկնեց երկու ձեռքը իր ընկերակցին.

— Ո՛րքան գոհ եմ ես... Ո՛րքան գոհ եմ ես...

Այդ նրա սովորական խօսքն էր հանդիսաւոր դէպքերում: Յետոյ ցոյց տալով իր առաջը դրուած կապոյը ու թեթեւ կեր-

պով թերթելով արժէտոմսերը, որոնք այնքան հեշտութեամբ թե
են անուում ու թռչում մարդու ձեռքից.

—Գիտէ՞ք ինչ բան է այս, ասաց նա ժօրժին յաղթական
դէմքով... Սիգօնիի ամարանոցն է այս:

Ա՛յ թէ այ:

VII

Մ Ի Ն Ա Մ Ա Կ

Ֆրանսիական Ընկերութեան ինժեներ պ. Ֆրանց Ռիպերին:
Իսմայիլիա (Եգիպտոս)

Ֆրանց, որդեակա, ծերունի Սիգիզմունդն է քեզ նամակ
գրողը: Եթէ աւելի լաւ կարողանայի արտայայտել մտքերս
թղթի վրայ, շատ երկար բաներ պէտք է պատմէի քեզ: Բայց
այս անիծած ֆրանսերէնը շատ դժուար լեզու է և թուանշան-
ների աշխարհից դուրս ոչինչ չարժի Սիգիզմունդ Պլանուսը:
Ուստի, իսկոյն եեթ կ'ասեմ քեզ, թէ ինչու՞մն է բանը:

Եզրօրդ տանը շատ վատ բաներ են անց կենում: Կինը
նրան դաւաճանում է նրա ընկերակցի հետ: Նա ծիծաղելի է
դարձրել իր մարդուն, և, եթէ այսպէս շարունակուի, այն-
տեղ կը հասցնի, որ կը սկսեն սրիկայ համարել նրան... Լսիր, իմ
փոքրիկ Ֆրանց, պէտք է իսկոյն եեթ վեր կենաս գաս: Միայն
դու կարող ես խօսել Ռիպերի հետ ու աչքերը բանալ այդ Սի-
գօնիի վերաբերմամբ: Մեզնից ոչ ոքի նա չի հաւատալ: Շուտով
արձակուրդ խնդրիր ու եկ:

Գիտեմ, որ հաց վատտակելու, ապագայ յաջողացնելու վրայ
ես այգտեղ. բայց սղնիւ մարդս ամեն բանից վեր պէտք է դա-
սի իր ծնողներից ժառանգած անուան պատիւը: Ուրեմն լաւ ի-
մացիր, որ եթէ իսկոյն եեթ չը գաս, չուտով այնպիսի բոլէ
կը հասնի, երբ Ռիպէր անունը այն աստիճան խայտառակուած
կը լինի, որ դու այլ ես չես համարձակիլ կրել նրան:

Սիգիզմունդ Պլանուս,

զանձապահ:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Նը ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԵՈՒՄ

Ե

Մենք համառօտ բացատրեցինք մատենագրական-պատմական մի քանի էական եղրակացութիւններ, որոնց հասաւ բանասիրութիւնը 19-րդ դարում՝ ուսումնասիրելով հայոց հին գրականութիւնը: Քննադատութիւնը, ի հարկէ, բացառաբար չէր զբաղուած միայն յիշուած հեղինակներով ու հարցերով. կատարուած են նաև ուրիշ շատ ուսումնասիրութիւններ մեր հին գրականութեան մասին (օր. Եգնիկ Կողբացու, Դաւիթ Անյաղթի, Յովհան Մանդակունու և այլն և այլն). սակայն սրանք այնքան կարևորութիւն չունեն հայոց մատենագրութեան ոգին ճանաչելու նկատմամբ և աւելի նեղ, մասնագիտական նպատակներ ունեն, որոնց մասին խօսելը մեր յօդուածի չրջանից դուրս է: Այժմ հարկ ենք համարում մի քանի խօսք ասել և ուրիշ տեսակի աշխատութիւնների մասին, որոնք կատարուեցին 19-րդ դարում՝ հայոց հին մատենագրութեան վերաբերմամբ:

Նախ և առաջ հարկաւոր է յիշել, որ անցեալ դարում գըլխաւորապէս հրատարակուեցին մեր հին հեղինակների գործերը: Մինչև 19-րդ դարը քիչ բան ունէինք սրանցից տպագրուած: Ինչպէս որ գրերի դիւտը մեղանում նախ և առաջ կրօնական պիտոյքների համար և զաւ, այնպէս էլ հայկական տպագրութիւնը նախ և առաջ կրօնական պիտոյքների ծառայեց: 16—18-րդ դարերում բաղմաթիւ գրքեր են հրատարակուած հայերէն լեզուով, բայց նրանց ամենամեծ մասը ժամասացութեան վերաբերեալ գրքեր են, կամ կրօնական մեկնութիւններ, խորհրդածութիւններ, վիճաբանութիւններ: Զուտ եկեղեցական—կրօնական գրքերից դուրս, մատենագրական բովանդակութիւն ունեցող գրքերի մէջ ամենից բախտաւոր են եղել Շնորհալու Յիսուս որդին և Գր. Նարեկացու աղօթամատոյցը (Նարեկ), որոնք մի քանի տպագրութիւնների արժանացան, դարձեալ չնորհիւ իրանց կրօնական-բարեպաշտական բովանդակութեան, որին հարկաւ նըպաստեց և այս գրուածների բանաստեղծական ոգին: Սրանցից

դուրս հազիւ թէ կարելի լինի գտնել 7—8 հեղինակ, որոնք, տպագրութիւնը հայոց մէջ սկսուելուց մինչև 18-րդ դարի վերջը, այսինքն մօտ 300 տարուայ ընթացքում, տպագրուած են ցիրուցան զանազան տեղեր, և այս տպագրութիւնները ընդհանրապէս չատ անկատար են եղել թէ արտաքինով և թէ մանաւանդ ներքինով, առանց բաղդատութեան, աղաւաղուած ընթերցուածքներով: Իսկապէս 19-րդ դարը պէտք է համարել հայոց հին մատենագրութեան վերածնութեան դար, որ իր կողմից ծնունդ տուեց հայագիտութեան: Հին մատենագրութեան վերածնութիւնը հետեանք էր գլխաւորապէս վենետիկ Մխիթարեան միաբանութեան գործունէութեան: Այս միաբանութիւնը իր գործակալների միջոցով աշխարհի զանազան ծայրերից հաւաքեց բազմաթիւ հայերէն ձեռագիրներ, թօթափեց նրանց վրայից հնութեան փոշին, հնարաւոր չափով բաղդատեց, ուղղագրեց և լոյս ընծայեց քառասունից աւելի հին հայ հեղինակներ, ընդարձակները առանձին հատորներով, «Մատենագրութիւնը նախնեաց» վերնագրի տակ, իսկ համառօտները հաւաքելով փոքրիկ հատորների մէջ, որոնք «Սոփերը հայկականք» ընդհանուր վերնագրին են կրում: Մխիթարեանների այս գործունէութիւնը մանաւանդ աչքի է զարնում 19-րդ դարի առաջին կէսում, երբ նրանք, կարելի է համարձակ ասել, հայոց ազգի ուսուցիչները հանդիսացան և ինչպէս հայերէն տպագրութեան, նոյնպէս հայագիտութեան ասպարէզում մրցակիցներ չունէին: Դժբախտաբար այս շրջանում էլ նրանց հրատարակչական գործունէութիւնը սահմանափակուում էր քաղաքական և կրօնական արգելափոխներով: Շատ հին և միջնադարեան հեղինակների գրուածքներ պարունակում են քատապարտութիւն Քաղկեդոնի ժողովի դէմ և պարսաւանք Մահմէտի դէմ, այսպիսի գրուածքների տպագրութիւնը հակառակ կը լինէր կաթոլիկ եկեղեցուն և Թիւրքիային, որոնց երկուսի հետ էլ կապուած էին վենետիկցիք: Մնում էր երկուսից մէկը—կամ աղաւաղել հին հեղինակները, նրանցից դուրս ձգելով կաթոլիկութեան ու մահմետականութեան աննպաստ կրտորները, կամ իսպառ չը տպագրել նրանց երկերը: Մխիթարեանները ընտրեցին վերջինը, իբրև չարիքներից փոքրագոյնը, և այս պատճառով նրանց հրատարակութիւնների շարքում չը կան այնպիսի հեղինակներ, ինչպէս են Սեբէոս, Ղևոնդ, Յովնանէս կաթողիկոս, Թովմայ Արծրունի, Ուխտանէս, Մ. Կաղանկատուացի, Ասողիկ և այլն:

Տասնիններորդ դարի երկրորդ կէսից հրատարակչական գործունէութեամբ հանդէս են գալիս և ուրիշ այնպիսի քաղաքներ, որտեղ կամ ձեռագիրների հաւաքածու կայ, կամ կենտրո-

նացած են լինում մտաւոր սյօեր: Այս քաղաքներն են Պարիզ (7) հրատարակութիւն), Մոսկովայ (9), Պետերբուրգ (10), Եւրոսաղէմ (7) և Էջմիածին (11). Կ. Պօլսը թէ անցեալ և թէ 19-րդ դարում շարունակ ցոյց է տալիս գործունէութիւն, թէն թոյլ չափով. Էջմիածնում այս գործունէութիւնը սկսուեց Եօթնամեակի թուականներից և աւելի առաջագիմեց վերջին տասնամեակում: Իսկ Թիֆլիսը, Կովկասի մայրաքաղաքը և հայ բնակիչների բազմութեան կողմից երկրորդ քաղաքը Պօլսից յետոյ՝ այս գործունէութեան մէջ աչքի ընկնող բացառութիւն է կազմում (3 արտատպութիւն): Փարիզում հին հայ հեղինակները հրատարակութեան գործը կատարեց Կար. Վ. Շահնազարեան, ձեռնարկելով տպագրել «Շար պատմագրաց հայոց», որի մէջ մտան 7 հեղինակ. նոյն ուղղութեամբ գործեց և հայագէտ Դիւլօրիէն, տպագրելով մի-երկու հեղինակ՝ գլխաւորապէս խաչակրաց արշաւանքի պատմութեան վերաբերեալ: Մոսկովայում հայ հեղինակների գլխաւոր հրատարակիչն եղաւ Մ. Էմինը, իսկ Պետերբուրգում՝ Ք. Պատկանեանը: Էջմիածնում և Եւրոսաղէմում, հայ ձեռագիրների հարուստ պահեստներում, հրատարակութեան գործը կատարում էին այստեղի վանքերի միաբանները, իսկ Պօլսում՝ զանազան բանասէրներ: Աւելի փոքր քանակութեամբ տպուած են հին հեղինակներ Կալկաթայում ու Մադրասում (երկ-երկու), Զմիւռնիայում, Թեոդոսիայում և Շուշում (մի-մի): Այս հեղինակներից մի քանիսը վաղուց կորսուած էին համարւում և միայն 19-րդ դարում գտնուեցին ու հրատարակուեցին, ինչպէս Սերէոս, Թովմայ Արծրունի, Մ. Կազանկատուացի, Ուխտանէս և այլն: Նոյն-իսկ գտնուեց, լոյս աշխարհ հանուեց մի հին հեղինակ, որի աշխատութիւնը թէն կար ու տըպագրուած էր, բայց վերադրւում էր ուրիշ անձերի: Այս հեղինակն է՝ քարոզիչ-ճգնաւոր Վարդան Այգեկցին, հայոց Եղորտը, (13-րդ դար), որի կենսագրութիւնն ու առականը մանրամասն բաղդատութեամբ ու լիակատար ուսումնասիրութեամբ հրատարակեց Ն. Մառ երեք հատորում (1895—1899). այսպիսով նորագիւտ հեղինակը մի անգամից այնպիսի բախտի արժանացաւ, որին իրաւամբ կը նախանձեն հայոց բոլոր հին և նոր հեղինակները: Նոյնպէս գտնուեց ու երեք անգամ տպագրուեց Ղազար Փարպեցու մի անյայտ նշանաւոր թուղթը, որ այնքան լոյս է սփռւում թէ այս հեղինակի վրայ և թէ հինգերորդ դարի երկրորդ կէսում տիրող անմխիթարական սղու վրայ:

Բացի առանձին գրքերով հրատարակութիւններից՝ մեր հին հեղինակների չափ մանր աշխատութիւններ տպագրուած են

բանասիրական ամսագիրներում, գլխավորապես «Բազմալեզու»
և «Արարատում»:

Այս բոլոր հրատարակութիւնները, զանազան տեղերում ու
ժամանակներում, զանազան անձերի ձեռքով կատարուելով՝ հար-
կաւ շատ տարբերում են միմեանցից իրանց թէ՛ ներքինով և
թէ՛ արտաքինով: Մի քանիսը ունին առաջաբաններ, ծանօթու-
թիւններ, յատուկ անունների ցանկեր, միւսները գուրկ են սրան-
ցից. ոմանք տպագրուած են մի քանի ձեռագիրների բազդա-
տութեամբ, միւսները՝ առանց բազդատութեան, հէնց պատա-
հած (կամ գոյութիւն ունեցող միակ) ձեռագրից. վերջապէս ո-
մանք տպագրուած են հմուտ ու փորձուած հրատարակիչների
ձեռքով, խնամքով, իսկ միւսները գործին անտեղեակ անձերի
ձեռքով, անխնամ կերպով: Կան և այնպիսի հրատարակութիւն-
ներ, որոնց մէջ վրտում են անթիւ տպարանական սխալներ,
և ակն յայտնի աղաւաղութիւններն էլ չեն ուղղուած: Եթէ այս
հանգամանքների վրայ աւելացնենք և այն, որ այս հրատարա-
կութիւններից շատերը բոլորովին սպառուած են և չեն ծար-
ւում՝ ինքն իրան մեր առաջը կ'ենէ մի անհրաժեշտ պահանջ,
որին պէտք է շուտով բաւարարութիւն տրուի: Այս պահանջն
է—հօրի է արդեօք ասել—մեր բոլոր հին հեղինակները նորից
տպագրել միևնույն ուղղութեամբ ու դիրքով, խնամքով համեմա-
տած բնագիրներով, անհրաժեշտ բացատրութիւններով և ցան-
կերով, մի քանի ընդարձակ հատորների մէջ ամփոփած, ժամա-
նակագրական կարգով, այսինքն ունենալ մի Corpus scripto-
rum armenorum (Ժողովածու հայ մատենագիրների): Այսպիսի
ժողովածուներ արդէն գոյութիւն ունին յոյն, հռոմայեցի, բիւ-
զանդական և այլ մատենագրութիւնների համար, շատ աւելի
ընդարձակ ծաւալով: Նոյն պահանջը հասունացել է և մեր մէջ.
ամեն մի բանասէր ներկայումս զգում է, որ արդէն գոյութիւն
ունեցող հրատարակութիւնները համապատասխան չեն գիտու-
թեան արդի պահանջներին և թէ կարիք կայ լաւագոյն, քննա-
կան հրատարակութեան: Ուրեմն սպասելու և ցանկալու է, որ
մեր յիշած Հայոց մատենագիրների ժողովածուն, գոնէ միայն
Պատմագիրներինը օր առաջ լոյս տեսնէր:

Հայերէն հրատարակութիւնների հետ միասին անցեալ դա-
րում երեան և կան և հայ հեղինակների, մանաւանդ պատմագիր-
ների թարգմանութիւնները զանազան եւրոպական լեզուներով:
Պատմական ուսումը այս դարում հսկայական առաջադիմութիւն
արաւ Եւրոպայում, ձգտելով գիտութիւնների շարքն անցնել
սկսեցին ի միջի այլոց որոնել պատմական աղբիւրներ: Եզրիպ-
տական հիէրոգլիֆները, սեպագիր արձանագրութիւնները, գետ-

նի տակ թաղուած աւերակները իրանց հազարաւոր տարիներէից ի վեր պապանձած բերանները բացին և սկսեցին խօսել անցեալ դարերի մասին: Ի՞նչ զարմանք, որ ուշագրութիւն պէտք է դարձնուէր և մեր աղջային պատմական գրականութեան վրայ, որ անհամեմատ աւելի մատչելի էր, քան անվերծանելի սեպագիրները և մաշուած դրամները: Հայերէն լեզուն, որով գրուած էր այս մատենագրութիւնը՝ դեռ կենդանի էր գրականութեան մէջ և շատերին հասկանալի. Վենետիկում հիմնուած մի գիտնական միաբանութիւն շարունակ տպագրում էր նրանց բնագիրները ու լուսաբանում, միևնոյն ժամանակ սիրայօժար կերպով նպաստում էր այն եւրոպացի գիտնականներին, որոնք Ս. Ղազարի վանքը կը դիմէին՝ արեւելեան այդ հին լեզուն սովորելու և նրա մատենագրութիւնն ուսումնասիրելու նպատակով: Թարգմանութիւնների գործին շատ նպաստեց և այն հանգամանքը, որ Պարիզում, Մոսկվայում և Պետերբուրգում հիմնուեցին հայոց լեզուի ամբիոններ բարձրագոյն դպրոցներում, որոնց մէջ հայերէնի պրոֆէսորները գլխաւոր աշխատողներն եղան նաև թարգմանութեան մէջ:

Հայ հեղինակների թարգմանութիւնները այս պատճառով կատարուել են գլխաւորապէս Փրանսիայում և Ռուսաստանում, Ֆրանսերէն և ռուսերէն լեզուներով: Ուրիշ լեզուներով (գերմաներէն, անգլիերէն, իտալերէն և այլն) եղած թարգմանութիւնները համեմատաբար շատ աննշան են և պատահական բնուորութիւն են կրում, այն-ինչ Փրանսիականը և ռուսականը որոշ դպրոցի գործունէութեան հետեանք է եղել:

Փրանսիայում դեռ 1809 թուին միտք ծագեց՝ Վենետիկ Մխիթարեանների օգնութեամբ բոլոր հայ հեղինակները Փրանսերէն թարգմանելու, բայց քաղաքական խառն դրութեան պատճառով այս գիտաւորութիւնը չիրագործուեց: Նոյն միտքը, Շ. Ջրպետեանի թելադրութեամբ, գործադրել կամեցել են վենետիկցիք, և բազմաշխատ Մկրտիչ վ. Աւգերեանը ձեռնարկել է բոլոր հայ հեղինակները հայերէն թարգմանելու «Bibliotheca Patrum Armenorum» (Մատենադարան Հարց Հայոց) վերնագրով, որի չորս մեծ հատորները մնում են անտիպ: Միայն հայ պատմագիրները իտալերէն թարգմանելու խորհուրդ ունեցել են դարձեալ վենետիկցիք, բայց տպագրել են միայն Խորենացին ու Աղաթանգեղոսը: (Տես Ուսումնասիրութիւնը հայ լեզուի և մատենագրութեան յարմուտս, եր. 139—143): Փրանսերէն սիստեմական թարգմանութեան միտքը յիսնական թուականներին նորից արծարծեց հայագէտ պրոֆ. Դիւլօրիէն, որին պէտք է աշխատակցէին Գաբր. վարդ. Այվազեանը և հայագէտ վ. Լան-

գլուհան: Այս գործին իբրև նախապատրաստութիւն նա տպագրեց իւր ուսումնասիրութիւնը հայոց ժամանակագրութեան մասին (1859-ին): 1858-ին դուրս եկաւ նրա ծրագրած մատենադարանի առաջին հատորը, որ պարունակում էր երկու հեղինակ: Բայց այս հատորը նրա ձեռնարկած գործի վերջինն էլ եղաւ: Նոյն հայագէտը Ֆրանսիական Ակադեմիայի առաջարկութեամբ ժողովեց ու հայերէն քնագրով ու ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակեց (1869-ին) բոլոր այն պատմական տեղեկութիւնները, որ գոյութիւն ունին հին հայ հեղինակների մօտ՝ խաչակիրների արշաւանքի մասին: Գործը դուրս եկաւ մի մեծադիր չքեղ հատոր և պարունակում է ընդարձակ ու համառօտ քաղուածքներ 19 հայ հեղինակներից:

Սակայն Դիւլօրիէի և նախորդների արծարծած, բայց չիրագործած միտքը չը խափանուեց: Վաթնական թուականներին նոյն վ. Լանգլուան վերանորոգեց նոյն միտքը և զանելով Նուբար-փաշայի կողմից դրամական օժանդակութիւն և զանազան գիտնականների կողմից աշխատակցութեան խոստում՝ սկսեց իւր գործը, որ, ըստ ծրագրի, պէտք է բաղկանար հինգ ընդարձակ հատորներից և պիտի պարունակէր մօտ 30 հայ հեղինակների թարգմանութիւնը՝ առաջաբաններով ու գիտական ծանօթութիւններով: Գործի երկու հատորը լոյս տեսան 1867 և 1869 թուին «Collection des historiens anciens et modernes de l' Arménie» (Ժողովածու հին և նոր հայ պատմագիրների) վերնագրով և պարունակում են հինգերորդ դարի 11 հեղինակի (որոնց մէջ նաև Զենոբի ու Յոհան Մամիկոնեանի) գրուածքները: Դժբախտաբար այս լուրջ գործն էլ անկատար մնաց՝ Լանգլուայի մեռնելով:

Նրա գործը շարունակել մտադրուեց Պետերբուրգի Ակադեմիայի անդամ բազմաշխատ վրացագէտ և հայագէտ Մ. Բրօսսէն, որ դարձեալ «Collection d' historiens arméniens» վերնագրով Պետերբուրգում, Ակադեմիայի հաշուով, տպագրեց երկու հատոր (1874—1876), որոնք պարունակում են 7 հեղինակի գրուածքների թարգմանութիւններ, մէկը 10-րդ դարի, երկրորդը 12-րդի, մնացածները 17—18 դարերի: Բրօսսէի այս գործն էլ, որ գիտական արժէքի կողմից ստոր է Լանգլուայի ժողովածուից, կիսատ մնաց՝ ձեռնարկողի մահուան պատճառով:

Ռուսերէն լեզուով հայ հեղինակների թարգմանութիւններ կատարուած են զանազան հայերի ձեռքով պատահաբար (Յովսէփ սարկաւազ, Պոռաբաբաշեան, Շանշեան և այլն). բայց ինչպէս ասացինք՝ սիստեմական թարգմանութիւնները կատարուած

են Մոսկովայի Լազարեան ձեմարանի և Պետերբուրգի համալսարանի հայագէտ պրոֆէսորների ձեռքով: Աշխատողներն եղել են հայերիս ծանօթ, այժմ հանգուցեալ, զիտնականներն Մկրտիչ Էմին և Քերորէ Պատկանեան: Բուն ուսաներից ոչ ոք չէ պարագել հայերէնով, և Ք. Պատկանեանը իրաւացի գանգատուում էր, թէ «Ռուսաստանում ընթերցող հասարակութիւնը մի առանձին անտարբերութեամբ է նայում այն ամենի վրայ՝ ինչ վերաբերում է հայոց լեզուին, պատմութեան և գրականութեան... Նոյն-իսկ զիտութեան մարդիկն ու մասնագէտները, որոնցից կարելի էր սպասել աւելի մեծ հետաքրքրութիւն՝ այնպիսի անտարբերութեամբ են նայում այս տեսակ հետադադուութիւնների վրայ, որ ուսն հայագէտը կամքի մեծ ոյժ, աշխատանքի մեծ սէր պէտք է ունենայ՝ որպէս զի այսպիսի աշխատութիւններից չը սառչի»: (Библиографический очеркъ армянской исторической литературы, եր. 15—16): Այս խօսքերը, որ առուած են սրանից 22 տարի առաջ՝ դժբախտաբար ճիշտ են և այսօրուայ համար:—Մ. Էմինը, բացի Շարականից և ուրիշ կրօնական բովանդակութեան գրուածքներից՝ ուսներէն թարգմանեց երեք հայ պատմագիր (Խորենացի, Ասողիկ, Վարդան Բարձրբերդցի), իսկ Ք. Պատկանեանը՝ հինգ (Սեբէոս, Ղևոնդ, Մ. Կաղանկատուացի, Մաղաքիա, Մխիթար Այրիվանեցի):

Բոլոր այս թարգմանութիւնները միասին վերցրած՝ կը տեսնենք, որ 19-րդ դարում եւրոպական լեզուներով թարգմանուել են մեր հին և նոր կարևոր պատմագիրները և շատերը աննշաններից, նոյնպէս և բազմաթիւ ուրիշ գրուածքներ կրօնական-եկեղեցական բովանդակութեամբ: Ի հարկէ, այս թարգմանութիւններն էլ, նայելով թարգմանիչների հմտութեան, աւելի կամ պակաս չափով գոհացուցիչ են, և որչափ մեղ յայտնի է՝ չը կայ նրանցից մէկը, որ կատարեալ լինի. բայց մի առաւելութիւն նրանք անպայման ունին—նրանք ընդհանրապէս լուսաբանուած են առաջաբաններով ու ծանօթութիւններով, որոնք պարունակում են կարևոր տեղեկութիւններ թէ թարգմանուած հեղինակի ու նրա գործի մասին և թէ ընդհանրապէս հայոց պատմութեան, լեզուի ու գրականութեան մասին: Այս առաւելութիւնից ընդհանրապէս զուրկ են նոյն հեղինակների հայերէն բնագիրների տպագրութիւնները:

Եւրոպական թարգմանութիւնների մասին խօսելիս՝ յիշենք նաև, որ եղել է փորձ մեր հին պատմագիրները թարգմանելու և հայերէն աշխարհաբար լեզուով. այս փորձը կատարուել է բացառապէս Կովկասեան հայերի մէջ: Մինչև հիմա եղած ձեռնարկութիւնները պատահական են եղել և թարգմանուած են, որ-

չափ գիտենք՝ միայն չորս հեղինակ (Նզդիչ, Խորենացի, Փարպեցի, Լաստիվերտյի)։ Ամբողջական թարգմանություն ընդարձակ ծրագիրն ունէր Հրատարակչական ընկերությունը, բայց մնաց անիրագործելի։ Պէտք է յուսալ, որ այս խիստ օգտակար գործն էլ, որ հերթական է դարձել, շուտով գլուխ կը բերուի, և հայ ընթերցողների ստուար մեծամասնությունը, որ զրաբար լեզուին անծանօթ է, միջոց կ'ունենայ իր կենդանի լեզուով կարդալու մեր նախնեաց մտքի ու սրտի արգասիքը, մեր պատմությունը։

Որքան որ հայ մատենագրությունն ընագիրներն ու թարգմանություններն սկսեցին լոյս տեսնել՝ այնքան էլ սկսեցին երևան գալ հետազոտություններ թէ՛ այդ մատենագրության մատակարարած նիւթերի հիման վրայ, և թէ՛ նոյն մատենագրությունն մասին։ Մի առ մի յիշել այս աշխատություններից թէ՛ կուզ գլխաւորները՝ անկարելի է այս մեր թռուցիկ տեսությունն մէջ. ուստի պէտք է բաւականաճառք ամենից կարեւորներով։ Հին և նոր Հայաստանի աշխարհագրության մասին տպագրուեցին լուրջ երկասիրություններ, Ինճիճեանի, Սէն-Մարտէնի, Պատկանեանի... աշխատութեամբ։ Այս մասում գլուխ գործոց կազմում են ծերունի Ղ. Ալիշանի Սիսուան, Այրարատ և Սիսական փառահեղ ընդարձակ հատորները, որոնք նուիրուած են այս նոյն անունները կրող նահանգների համագրության, չը խօսելով նոյն հեղինակի միւս լուրջ աշխարհագրական երկերի մասին, ինչպէս են Շիրակը և նոր Հայաստանի աշխարհագրությունը։ Մեր հին հեղինակների տուած նիւթերից նոյն Ղ. Ինճիճեանը հիւսեց իր Հնախօսութիւն հին Հայաստանի եռահատոր ընդարձակ գործը, որ պարունակում է, բայց աշխարհագրությունից՝ նաև ամփոփ տեսություններ հին Հայոց կառավարություն, լեզուի, կրօնի, մատենագրություն, զինուորականություն, բարքերի և այլն մասին և մինչև այսօր էլ (տպուած է 1835 թուին) ծառայում է իբրև տեղեկատու գիրք այս խնդիրներով զբաղուողներին։ Հայոց հին հեթանոսական կրօնի ուսումնասիրութեանը մենագրություններ նուիրեցին Ալիշան, Բ. Սարգսեան, Գր. Խալաթեան, Կարրիէր և այլն, աշխատելով հայ պանթէօնի աստուածություններն ու նրանց պաշտամունքը համեմատել չրջակայ ազգերի պանթէօնի հետ։ Հին Հայոց անգիր բանաստեղծությունը (Գողթան երգերը) շատ չնորհալի հետազոտողներ ունեցաւ, ինչպէս և Մ. Էմին, Գաթըրճեան, Դիւլօրիէ, Յէատէր, Խալաթեան, Արեղեան։ Հայոց հին պատմության զանազան չրջաններն ու հարցերն ուսումնասիրեցին Սէն-Մարտէն, Գաթըրճեան, Ալիշան, Պատկանեան, Էմին, Գեյցեր, իսկ Գարագաշեան գրեց քառահատոր «Քրնական պատմութիւն հայոց», որ հասնում է

մինչև հինգերորդ դարի վերջը:—Մատենադրական հարցերի ուսումնասիրութիւնը, որի համար հարկաւոր է նախընթաց բազմակողմանի պատրաստութիւն՝ աւելի նոր ժամանակի արդիւնք է, թէև դեռ քսանական թուականներին էլ հանդէս եկաւ տաղանդաւոր քննադատ Սէն-Մարտէնը, որ իրաւամբ կարող է կոչուել ժամանակակից հայագիտութեան հիմնադիրը: Յիշելու համար մեր հին գրականութեան այս ճիւղը մշակողներին՝ պէտք էր լինէր թուել բոլոր հայագէտների անունները յիմնական թուականներից այս կողմը, որովհետև բոլորն զբաղուել են մատենադրական քննութիւններով: Այսքան ասել հարկաւոր է, որ այս մասում առաջին տեղը բռնում են եւրոպացի գիտնականները, որոնց շաւղով դնացիւ են հայ բանասէրները, այն-ինչ հին մատենագիրների հիման վրայ ուսումնասիրութիւններ մեծ մասամբ կատարել են հայ գիտնականներ, առաւելապէս Վենետիկ Մխիթարեանները: Մատենադրական ուսումնասիրութիւններին բաւական նպաստեցին և ամսագիրները—«Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ» և «Արարատ»: «Հանդէս ամսօրեան» յատկապէս հայագիտութեան է նուիրուած. նա զետեղում է ոչ միայն Վիեննայի Մխիթարեանների (գլխաւորապէս Յ. Վ. Տաշեանի), այլ և կողմնակի բանասէրների ինքնուրոյն աշխատութիւնները, և միևնոյն ժամանակ տպագրում է ամբողջական թարգմանութիւններ, կամ քաղուածներ ու զեկուցումներ եւրոպական լեզուներով լոյս տեսած աշխատութիւններից՝ հայագիտութեան վերաբերեալ: Այս կերպով նա դարձել է մի կենտրոնական օրգան հայագիտութեամբ զբաղողների համար: Սակայն վերջին երկու տարիներս չէ նկատուում նրա մէջ նախկին կենդանութիւնն ու թարմութիւնը, որովհետև մշտական աշխատակից միաբաններից մի երկուսը հեռացան Վիեննայից՝ Կ. Պօլսում մանկավարժական գործունէութեամբ զբաղուելու համար: «Արարատն» էլ վերջին տասն տարիներս բանասիրական լուրջ թերթ դառնալու ապացոյցներ տալիս է շարունակ: Վերջապէս երկու տարի առաջ Պարիզում հիմնուեց մասնագիտական-բանասիրական մի հանդէս էլ, «Բանասէր» անունով, որ առայժմ հրատարակւում է երեք ամիսը մի անգամ և պարունակում է խնամքով գրուած ուսումնասիրութիւններ և յօդուածներ բնագրական, լեզուագիտական, մատենադրական և հնախօսական բովանդակութեամբ:

Մատենադրական ուսումնասիրութիւնների շարքում չէ կարելի մոռանալ մեր հին գրականութեան պատմութիւնը, որ պէտք է բովանդակէ դանազան գիտնականների հետազոտութիւնների արդիւնքը՝ որոշ սխտեմի վերածուած և որոշ հայեցակէտով առաջնորդուած. նա պէտք է լինի հայելի, որի մէջ կա-

րելի լինի տեսնել մեր անցեալ դարերի մտաւոր գործունէութեան պատկերը: Այս գաւառում աշխատողների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում նորերս վախճանուած Վենետիկի Մխիթարեան միաբան Գար. Վ. Զարբհանալեանը, որի կազմած երկհատոր «Հայերէն դպրութեանց պատմութիւնը» մինչև այժմ միակ դասագիրքն է մեր հին մատենագրութեան համար: Այս աշխատութիւնը, որի առաջին հատորը (մինչև ԺԳ. դարը) երկը տպագրութեան արժանացաւ՝ աւելի պահպանում է հին աւանդական հայեացքները և տեղ չէ տալիս նորագոյն ժամանակների եզրակացութիւններին մեր մատենագրութեան զանազան հարցերի մասին, բայց և այնպէս իր պարունակած բազմաթիւ տեղեկութիւններով անփոխարինելի մի ձեռնարկ է մեր հին գրականութեամբ զբաղուողների համար: Ժամանակի պահանջ է՝ ունենալ մի նոր պատմութիւն հայոց գրականութեան՝ նոր ուղղութեամբ ու հայեացքներով կազմուած:

Հայագիտութեան նպաստող առարկաների շարքում պէտք է մասամբ դասել և սեպագիր արձանագրութիւնները, որոնց գիւտը և ընթերցումը դարձեալ 19-րդ դարի արդիւնքն են կազմում: Սեպագիր կոչւում են այն տեսակ տառերը, որոնք սեպի (ЕЛИПЪ, չիւլի) ձև ունին, վերևը հաստ, ներքևը բարակ. այսպիսի սեպեր մէկը միւսի կողքին կամ վրայ որոշ կերպով տեղադրուելով կամ կապակցուելով նշանակում են հնչիւններ, վանկեր ու նշանագիրներ: Այսպիսի սեպագիր տառերով քարերի կամ աղիւնների վրայ արձանագրութիւններ են թողել Ասորեստանի, Պարսկաստանի և Նախնի Հայաստանի տիրողները: Ամենից հին են ասորականները, որոնք սկսւում են Քրիստոսից մօտ 1500 տարի առաջ. այնուհետև գալիս են հայկական արձանագրութիւնները, որոնք սկսւում են 9-րդ դարում Ք. ա., վերջապէս պարսկականները, որոնք սկսւում են 6-րդ դարում Ք. ա.: Ամենից հեշտ ընթերցանելի դուրս եկան պարսկական արձանագրութիւնները, որովհետև նրանց սեպաձև նշանները այբուբենի տառեր էին նշանակում, ձայնաւորներով ու բաղաձայններով. մէկ էլ որ նրանց լեզուն, հին պարսկերէնը, հասկացւում էր չնորհիւ այն հանգամանքի, որ շատ նման է մի կողմից սանսկրիտ և միւս կողմից միջին պարսկերէն լեզուներին: Աւելի դժուար էր ասուերական արձանագրութիւնների ընթերցումը, որովհետև այստեղ սեպախմբերը ոչ թէ տառեր էին նշանակում, այլ վանկեր և միևնույն ժամանակ նշանագիրներ. լեզուն էլ, որով զրուած են նրանք, սեմական ծագում ունի և այնքան մատչելի չէ: Ամենից դժուար էր հայկական արձանագրութիւնների ընթերցումը, որոնց սեպախմբերի մեծ մասն ան-

ծանօթ վանկեր ու նշանագիրներ է ներկայացնում, իսկ նրանց լեզուն էլ միայնգամայն անծանօթ է: Թէ ի՞նչ հսկայական ճիգեր թափեցին շատ գիտնական մարդիկ, անծանօթ գրերով և անծանօթ լեզուով այդ տարօրինակ արձանագրութիւնները կարդալու և հասկանալու համար—այդ մասին գրել մեր նիւթից դուրս է. մարդկային մտքի հնարագիտութեան, տոկուն աշխատասիրութեան անջնջելի յիշատակ է այս արձանագրութիւնների ընթերցումը: Բազմաթիւ աշխատութիւնների մէջ յիշենք Բօտտի, Լայարտի և Շուլցի անունները, որոնք մեծ դժուարութիւնների յաղթելով այս արձանագրութիւնները հազարաւոր տարիների փլատակների տակից հանեցին, կամ ժայռերի վրայից ընդօրինակեցին. սրանցից վերջինը, Շուլցը, որ 1828 թուին Հայաստան ճանապարհորդեց Վանի արձանագրութիւնները առաջին անգամ ընդօրինակելու՝ գիտութեան նահապետ դարձաւ, քուրդերից սպանուելով: Իսկ Վեստերգարտ, Բաուլիսըն, Բէնֆէյ, Օպպէրտ, Շպիգէլ, Մէնան, Լասսէն, Լընօրման, Սէյս, Բէլկ, Նիկոլսկի և ուրիշները մեծամեծ ջանքեր գործ դնելով յաջողեցան, քառասնական թուականներից այս կողմը, հետզհետէ կարդալ ու բացատրել նախ՝ պարսկական (Բիսութունի) արձանագրութիւնները, ապա ասուրականը, որ ահագին քանակութեամբ հանուեց Նինուէի և Բաբելոնի փլատակներից և փոխադրուեց զըլխաւորապէս Լօնդօնի Բրիտանական թանգարանը, և վերջապէս հայկականը, որ փորագրուած է Վանի բերդի ժայռի վրայ և, բացի զրանից, ցրուած է Տաճկա-և Ռուսա-Հայաստանի զանազան տեղերում: Պարսկական արձանագրութիւնները վերջնականապէս կարդացուած և ուսումնասիրուած են արդէն. ասուրականները կարդալու դժուարութիւնը յաղթուած է և հետքահետէ կարգի են բերուած ու կարդացուած են հազարաւոր ազիւնների վրայ զրուածներն և ուսումնասիրուած: Հայկական արձանագրութիւնների ընթերցման բանալին էլ դոնուել է և հետզհետէ հարթուած են դժուարութիւնները: Այս երեք տեսակի արձանագրութիւններն էլ մեծ կարեւորութիւն ունեն մեր հնագոյն պատմութեան համար, որովհետեւ, ինչպէս երևում է ասուրական ու պարսկական արձանագրութիւններից, այդ աշխարհների տիրապետողները զարերի ընթացքում անընդհատ պատերազմական յարաբերութիւններ են ունեցել հին Հայաստանի հետ. իսկ հայկական արձանագրութիւնները պատկերացնում են այս երկրի իշխողների քաղաքական ու քաղաքակրթական ձեռնարկութիւնները: Այնպէս որ ներկայ քսաներորդ դարին է մնում, այս բոլոր արձանագրութիւնների ուսումնասիրութեան միջոցով, ստեղծել Առաջաւոր Ասիայի, որի մէջ և

նախնական Հայաստանի պատմութիւնը. ստեղծել ենք ասում, որովհետև այս հնադոյն ժամանակի մասին ուրիշ գրաւոր աղբիւրներ չեն հասել մեզ, կամ շատ կցկտուր են: Արդէն մինչև այժմ կասարուած ուսումնասիրութիւնները, որչափ և անկատար լինին, այնու ամենայնիւ այնպիսի յոյս են սփռում Հայաստանի պատմութեան նախահայկական շրջանի վրայ, որի մասին գաղափար անգամ չունէին մեր հայրերը:

Մինչև այժմ ասածներս ամփոփելով՝ տեսնում ենք, որ անցած տասնեկններորդ դարը շատ արդիւնաւոր է եղել հայագիտութեան պատմական-մատենագրական ճիւղի համար. բոլոր նախընթաց դարերը միասին առած՝ չեն տուել այս մասում այն ինչ որ տուել է 19-րդ դարը, որ իրաւամբ կարող է կոչուել հայագիտութեան ծնունդի դար: Այս դարում գլխաւորապէս տպագրուեցին մեր հին մատենադիրները, թարգմանուեցին ու հետազօտուեցին: Հաւաքուեցին ու հրատարակուեցին բազմաթիւ արձանագրութիւններ, սեպագիր և տառագիր, աղագին անդիր մատենագրութեան ստեղծադործութիւններ ու հնութիւններ: Այս նպատակով կատարուեցին բազմաթիւ գիտական ճանապարհորդութիւններ, հայ և օտար ազգի անձերի կողմից: Հաւաքուած առատ նիւթը ենթարկուեց կարող գիտնականների ուսումնասիրութեան ու քննադատութեան, և ստացուած եզրակացութիւնները գրեթէ յեղափոխեցին մեր հայեացքները, որ ունէինք մեր գրականութեան, կրօնի, բարքերի և ընդհանրապէս պատմութեան մասին: Քննադատական աշխատանքի և ուսումնասիրութիւնների մէջ առաջաւոր մշակներն եղան եւրոպացի գիտնականները. նրանց ընթացքին հետևեցին և հայ գիտնականները, որոնք հայագիտութեան բոլոր ճիւղերում էլ ունեցան և ունին պատուաւոր ներկայացուցիչներ: Այսքան յաջողութեամբ սկսւում ու առաջ տարուած գործը յոյս է տալիս, որ քսաներորդ դարը, այնքան նախապատրաստական նիւթերի ու կատարուած աշխատութիւնների վրայ յենուած, հայագիտութեան համար էլ շատ աւելի արդիւնաւոր կը լինի քան իւր նախորդը. ոչ միայն կը լրացնէ այն պակասորդները, որ մենք զգում ենք այժմ, այլ և նորանոր հորիզոններ կը բանայ, նորանոր գաւառներ կը նուաճէ՝ որոնց մասին ներկայումս հասկացողութիւն էլ չունենք:

Մի ուրիշ անգամ մենք կը դառնանք հայագիտութեան երկրորդ մեծ ճիւղի, այսինքն լեզուադիտական հետազօտութիւնների մասին խօսելու, և կ'աշխատենք ամփոփել այն արդիւնքները, որոնց հառաւ 19-րդ դարը այս գաւառում:

Վ Ր Ա Ց Մ Ա Մ ՈՒ Լ Ը

(Վ Ե Ր Զ)

Նոր արժարժուող հարցերը գրաւեցին հասարակութեան ուշադրութիւնը. այդ հարցերի մէջ առաջին տեղը բռնեց արհեստագործութեան և վաճառականութեան զարգացումը: Կեանքի այդ նոր հոսանքի շնորհիւ, վրաց վաճառականը ընդհարում ունեցաւ օտար վաճառականի հետ, վրաց մշակը օտար մշակի հետ. այստեղից ծագեց հարց օտար ազգութիւնների վերաբերեալ: Այդ ազգութիւնների մէջ առաջին տեղը բռնում են հայերը, որոնք դարերից ի վեր բնակուել են Վրաստանում և զարգացել վաճառականութեան մէջ:

Երբ Վրաստանը միացաւ Ռուսաստանին, Կովկասի զանազան ազգութիւններն էլ՝ հայերը, վրացիները և թուրքերը իրար մօտեցան, հարեան դարձան և լծուեցան կեանքի ընդհանուր լծի տակ: Այդ ազգերից կուլտուրապէս առաջնակարգ դեր էին խաղում հայերը և վրացիները: Հայ վաճառականներն առանձնապէս տեղ գտան վրացիների մէջ և ամբողջ Վրաստանի ու Կախէթի առևտուրը իրանց ձեռքն առան: Այս հանգամանքի վրայ ուշադրութիւն դարձրեց այն ժամանակ «Դրօշբան» և հարցը առաջին անգամ, ինչպէս յայտնի է, զարթեցրեց բանաստեղծ Ակակի Ծերեթելին: Ահա թէ ինչ էր գրում իշխանը 1874 թ. «Դրօշբայի» 450 №-ի մէջ. «Մեր մայրաքաղաք Թիֆլիսը խլեցին, ձեռք գցեցին հայերը: Այդ դեռ ոչինչ. Վրաստանի լաւագոյն կալուածքները նրանք սեփականացրին» և այլն: Այսպիսի տրտունջ է լսում յաճախ սիրտն այրուած վրացիներից, բայց այդ տրտունջը ունի՞ որ և իցէ միտք: Ո՛չ. եթէ մտաբերենք մեր առածը՝ թիքան վայր ընկնի—քեղանը ընկնի. ինչ որ մեր թուլութեամբ մեղանից կորչի, լաւ է որ բայտը հայերի ձեռքը գցի: Ասպետութեան ժամանակը վաղուց անցաւ, բայց մենք վրացիներս, դեռ էլի չենք թողնում մեր ասպետութիւնը. աշխատանքից փախչում ենք և չենք ուզում, որ ուրիշները մեր կորածը ձեռք բերեն. միթէ սա տղայութիւն չէ. միթէ յանդի-

մանութեան արժանի են հայերը այն բանի համար, որ այսպիսի դրութեան մէջ միմեանց եղբայրաբար ձեռք ձեռքի տան, օգնեն և մեր կորածը որոնեն և իրանցն էլ չը կորցնեն»:

Այստեղից երևում է, որ Ակակին հայերի առաջադիմութիւնը բացատրում է վրացիների ծուլութեամբ, յետամնացութեամբ: Նրա կարծիքով բոլոր հայերը, ընդհանրապէս վեր առած, հալածող են, իսկ վրացիները հալածուած: Այս կարծիքի հետ չէ յամաձայնում Ս. Մեսխիի կարծիքը. նա առում է, որ երկու ազգութեան մէջ էլ կան հալածողներ: Այդ ժամանակ «Դրօշբաճ» մի ինչ-որ յօդուած էր գրել քաղաքային վարչութեան և մի «փողրատչիկի» մասին: Այդ բանը առիթ էր տուել թիւրիմացութեան և վէճ էր բացուել հայ և վրաց լրագրիւնների մէջ: Մեսխին պատասխանում է. «Մենք ոչ մի ազգութեան թշնամի չենք, մանաւանդ հայերին, որովհետեւ լաւ ենք հասկանում, որ ժողովուրդը անմեղ է այն բանի մէջ, որտեղ մեղանշում է ազգութեան ներկայացուցիչներից մէկը. լաւ ենք հասկանում, որ Կովկասի բնակիչներս, տիրութեան և ուրախութեան ընդհանուր ճակատագրի տակն ենք. հասկանում ենք, որ միատեղ բնակուողներս մէկ լուծ պէտք է քաշենք, միայն մենք թշնամի ենք նրանց, որոնք ժողովուրդն են հալածում և ոտի տակ են տալիս անհատի մարդկային արժանաւորութիւնը»:

«Իվերիան» հէնց առաջին տարին յայտնեց իր ցաւակցութիւնը հայերի և վրացիների իրարից հեռանալու մասին և յիշում է սիրոյ և միութեան այն երջանիկ ժամանակը, երբ վրաց կալուածատէրերը հանգուցեալ Ներսէս կաթողիկոսի ժամանակ ընծայում էին իրանց կալուածները Ներսիսեան դպրոցին (1877 № 13): Մի խօսքով «Իվերիան» հաստատում է, որ հարկաւոր է միութիւն և ոչ անջատում:

Այս հարցը բաղմալողմանի քննուած ենք տեսնում հանգուցեալ Գ. Մերեթելիի գրուածների մէջ *). «Մենք և մեր ժամանակը» մի մեծ ծրագիր էր վրաց գործիչների համար և այս ծրագրին հաւատարիմ մնաց հեղինակը մինչև վերջը: Նա գըրում էր. «Հին ժամանակներից մենք մի պակասութիւն ունենք, մինչև հիմա չենք իմանում ո՞վ է մեր իսկական բարեկամը և հարևանը. ո՞վքեր են նրանք, որոնք ամբողջ պատմութեան ընթացքում այրուել են մեզ հետ մէկ ամանի մէջ. Կովկասում ապրում են երեք ազգութիւն՝ վրացիք, հայեր և թուրքեր. սըրանք միմեանց օգնելով կը հարստանան—թշնամանալով կ'աղքատանան: Կարծում եմ երկրագնդի վրայ չի գտնուի երկու ազ-

*) «Դրօշբաճ», 1879 թ. №№ 13—16.

գութիւն, այնպիսի պատմական բարեկամութիւն, քաղաքական յարաբերութիւն և անտեսական կախումն ունեցող, ինչպէս են վրացիները և հայերը. բայց ի սկզբանէ այս երկու աղղութիւնները փոխադարձ թշնամութիւնից և կռուից դուրս ոչինչ չեն չինել... Պատմութիւնից յայտնի է, որ արաբների և թուրքերի արշաւանքները աւերեցին Հայաստանը, ոչնչացրին թագաւորութիւնը, իսկ ժողովուրդը ստիպուած էր ապաստարան գտնել հայրենիքից դուրս. ահա այսպիսի դժբախտ հանգամանքների չնորհիւ էր, որ հայերը գաղթեցին Կովկաս և հաստատեցին իրանց մշտական կացութիւնը զանազան քաղաքներում: Օտար երկրում ապաստան գտնող անտէր և աղքատ մնացած ժողովուրդը ինչ պէտք է անէր, որ քաղցից չը մեռնէր. անպատճառ պիտի պարապէր վաճառականութեամբ. և իսկապէս հայերը դառնում են վաճառականներ, էժան գնով ձեռք են բերում խեղճ դիւղացուց նրա աշխատածը և ծախում հարուստի վրայ մեծ գնով: Նա օգտուում էր հարստից և աղքատից. նա միատեսակ ծանրացաւ Վրաստանի թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ դասակարգի վրայ. և ահա ամեն կողմից լսում են տրտունջ, անբաւականութիւն՝ թէ հայերը մեզ կերան, նրանք ամեն բան թանգացրին: Եթէ ենթադրենք, որ այսօր Վրաստանում հայերը չը լինէին, պէտք է հաւատացած լինենք, որ սրանց տեղը վրացի վաճառականներ կը լինէին, որոնք նոյն ձևով կը տանէին առևտուրը, նոյն ձևով կ'օգտուէին հարստից ու աղքատից, նոյն ձևով կը շահեցնէին փողը: Բանը նրանումն է, որ վաճառականութեան էութիւնը այդպէս է և ամեն վաճառական այդպիսի անկանոն շահով է ապրում: Այդ չարիքի մէջ հայութիւնը և հայ ժողովրդի յատկութիւնը չէ մեղաւոր, այլ վաճառականութեան վատ յատկութիւնն է մեղաւոր: Այն վաճառականութեան մէջ, որ այսօր օգտուում է մեր երկրի մեծի ու փոքրի քրտինքով, կան և՛ հայեր, և՛ վրացիներ, և՛ ռուսներ, և՛ թուրքեր. սրանք դաշըն ունեն կապած, սրանք փող ունեն հաւաքած և դրանով են օգտուում ամենքից: Ուրեմն մեր վաճառականութեան անկանոնութիւնը մեր ընտանեկան բիծն է. մենք պէտք է մաքրուենք դրանց դէմ, մենք պէտք է օգնենք աշխատող ժողովրդին, որ իր արդիւնաբերածը ինքն եւթ վաճառի, փողի կարիք չը զգայ, չընկնի վաշխառուների ձեռքը: Անխիղճ և խաբեբայ վաճառականներ կան և՛ հայերի, և՛ վրացիների, և՛ թուրքերի մէջ»:

«Ի՞նչ կ'ասեք ընթերցող, հարցնում է Գ. Մերեթելին, եթէ ձեզ ասէին, որ Տաոօ Յուլուկիձէն մարդասպան, աւազակ է այն պատճառով, որ վրացի է. ինչ կ'ասէիք, եթէ տէրութիւնը նրա փոխարէն կախաղան հանէր նրա եղբայրներին ու բա-

րեկամներին: Ահա հէնց այդպէս են վարւում այն վրացի գրողները, այն լուսաւորուած մարդիկ, որոնք աղաղակում են, թէ վաճառականութեան անխղճութիւնը հայութեան մէջն է: Ժողովուրդը, ինչ ազգութեան էլ պատկանի, անմեղ է, ազնիւ է, խղճմտանքով է, բայց սրանց մէջ կը գտնուի մէկ, երկու անաղնիւ, փչացած, աւաղակ, նոյն իսկ ամբողջ խումբ, ամբողջ դասակարգ, ինչպէս վաճառականութիւնն է, որ պախարակելու արժանի է: Վաճառական դասակարգը, որ ազգութեանն էլ պատկանի, ամեն տեղ անկանոն է հարստանում: Այստեղ ինչ մեղաւոր է ժողովուրդը: Հայ լուսաւորուած, ազնիւ, դործող երիտասարդութիւնը նոյն աչքով է նայում իր վաճառականի վրայ, ինչպէս և մենք: Հայ վաճառականութիւնը միեւնոյն ձևով անողորմ կողոպտում է և հայ աշխատաւորին, և՛ հայ ժողովրդին: Ինչ որ ասացի հայ վաճառականութեան մասին, նոյնը պէտք է ասել և՛ վրաց, և՛ թուրք վաճառականութեան մասին. ինչ որ լաւ բան կարելի է ասել հայ լուսաւորուած երիտասարդութեան, ազնիւ, աշխատող ժողովրդի մասին, նոյնը կարելի է ասել և մեր մահմեդական լուսաւորուած երիտասարդ և աշխատող ժողովրդի մասին: Մեր Վրաստանի առաջնակարգ մարդիկ և ժողովուրդը իրանց դրօշակի վրայ այսպիսի մակագրութիւն պէտք է ունենան. «Միմեանց օգնել, պատուել, միատեղ հոգալ երեք ազգութեան վրայ, եղբայրական դաշնակցութիւն ունենալ և միացած ոյժերով աշխատել հեռացնել և արմատախիլ անել վատութիւնը, որ խոչընդոտ է հանդիսանում մեր զարգացմանը»...

Ինչպէս տեսնում էք, «Դրօշբայի» առաջնորդները քարոզում են վրացիների և հայերի միութիւն՝ ընդհանուր ուժով պատմական լուծը տանելու համար. այդ է նրանց քաղաքակրթութեան ծրագիրը:

Բայց միաժամանակ սրանք ազգութեան մէջ տեսնում են կողոպտուածների մեծամասնութիւնը և կողոպտողների փոքրամասնութիւնը և այս վերջինների հետ մաքառելու համար հրաւիրում են ամենքին, լինին նրանք հայ, վրացի թէ թուրք. սա է նրանց տնտեսական-հասարակական ծրագիրը. ինչպէս տեսնում էք, ալատեղ չը կայ այն միտքը, որ անպատճառ հայը պէտք է լինի կողոպտողը, իսկ վրացին կողոպտուած, ինչ որ Ա. Ծերերեկեթեւին յայտնեց իր առաջին գրութեան մէջ:

«Ի վերին» սկսուելու օրից հայերի մասին խօսելուց խուսափում էր, իսկ եթէ հարկանցօրէն դէպքն ստիպում էր, նա կողմնակից էր հայերի և վրացիների միութեան: Նա ոչ միայն հաւանութիւն էր տալի «Դրօշբայի» ծրագրին, այլ յաճախ պաշտպանում էր և հանդիսանում էր հայութեան սրտակից բարեկամ

(տես 1887 թ. № 83—88, № 259, 1888 թ. № 241, 1889 թ. № 79, 121, 123 և այլն):

«Իվերիան», ինչպէս յայտնի է, տանում էր վրացիներին միշտ դէպի գիւղ, որովհետև այնտեղ էր գտնուում հիւքը. այսպիսի քարոզներով «Իվերիան» նպաստում էր վրացիների թուլութեանը տնտեսականապէս, բայց բանից երևաց, որ վրացիները չեն լսում դրա քարոզները և կամաց-կամաց բնակութիւն են հաստատում թիֆլիսում և դրա հետեանքը եղաւ այն, որ 1890 թ. քաղաքային իրաւասուների ընտրութեան ժամանակ վրացիներից ընտրուեցան քսան հոգի: Այժմ իշխ. Ճավճավաձէն փոխեց իր հայեացքը և նայեց գործին «Դրօշբայի» տեսակէտից և այս առթիւ գրեց մի առաջնորդող, թէ ցաւում է այն բանի մասի, որ «հայերը այս ընտրութեանը աղգային կերպարանք տուին, որպէս զի ընտրողների իսկական ցանկութիւնը կարողանան ծածկել և թշնամացնեն իրար հետ անմեղ ժողովուրդը. վրացիները և հայերը առանձին-առանձին չեն ընտրում իրաւասուներ. այլ ընտրում է քաղաքացիներ, ունեւորութիւնը և չքաւորութիւնը, այս նիւթական դրութիւնը երկու դասի բաժանեց ընտրողներին, հարուստները և խեղճները ընդհարում ունեցան և այս վերջինները ձեռք բերին մի քանի տեղ քաղաքային դումայի մէջ» (1891 թ. № 24.):

«Իվերիայի» խմբագրի կարծիքով հայերի և վրացիների իրարանցման մէջ ազգութիւնը ոչինչ դեր չէ խաղում, այստեղ գործում են քաղաքացիների շահերը. և որովհետև վրացիները աղքատ դասակարգ են, այդ պատճառով դրանց էլ առիթ տրուեց ուրիշ աղքատ դասակարգերի հետ քանդել հարուստ իրաւասուների խումբը և մտցնել իրանց մարդկանց: Այս առթիւ իշխ. Ճավճավաձէն ուրիշ ոչինչ չի գտել մինչև միւս ընտրութիւնները: Առհասարակ սա հայերի և վրացիների վերաբերմամբ սկսեց, խօսել 1891 թ., այն էլ ընտրութիւնների ժամանակ. հայերի և վրացիների յարաբերութիւնների մէջ նա մի հարց էր գտնում ուշադրութեան արժանի—ընտրութեան հարցը. ընտրեցէք վրաց իրաւասուներ և «Իվերիան» գոհ կը մնայ. նա կարծում է գործի էութիւնը քուէների մէջն է և ոչ տնտեսական-քաղաքական յարաբերութիւնների մէջ. ամեն մի ընտրութիւն՝ կեանքի իրաւաբանական կողմն է. դա դասակարգերի նիւթականի ծանրաչափն է: Դա է հասարակական գիտութեան այլուրենը. իսկ «Իվերիայի» առաջնորդը միայն ընտրութիւններ տեսաւ (թէև այս էլ ուշ) և սկսեց գոռալ. «աբա, վրացիք, մահնեք... դումա»: Իսկ միևնոյն ժամանակ այդ վրացիներին խորհուրդ էր տալիս թողնել քաղաքը, առետուրը և գնալ գիւղ ու ապրել գիւղ-

դուռ: Այսինքն, քաղաքից քշում էր գիւղ և միննոյն ժամանակ երանի էր տալի, որ մտնէին քաղաքային դուռման: Այդպէս էր իշխան Իլ. Ճավճաճլաձէի հրապարակախօսական հեռատեսութիւնը:

Հասնում է 1893 թ. իրաւասունների ընտրութեան ժամանակը և «Իվերիան» արթնանում է. պ. Քաղաքացին գրում է առաջնորդող, որտեղ, ի միջի այլոց չեչտում է այն տխուր երևոյթը, որ վրաց հասարակութիւնը իր մայրենի քաղաքի առաջադիմութեան մէջ համարեա չէ մասնակցել 17 տարուայ ընթացքում: Սրա պատճառը նրանումն է, որ վրաց ունեւոր հասարակութիւնը ձգտում էր առաջադիմել ծառայութեան մէջ—քանի որ այդ ճանապարհը սրանց համար բաց էր և լաւ պաշտօններ էին ստանում. մի և նոյն ժամանակ շատ քիչ կային ուսում առած և հեռատես մարդիկ. քաղաքային գործունէութիւնը մնաց վաճառականների ձեռքում, որոնք լծեցին գործի մէջ իրանց լուսաւորուած երիտասարդներին և ճշմարիտն ասած—չամաչացրին. մէկ կողմից ծառայութեան դռների փակուելը, իսկ միւս կողմից զարգացած երիտասարդների շատանալը վրաց հասարակութեան մէջ առաջ բերեց ցանկութիւն՝ մասնակցել քաղաքային գործունէութեան մէջ: Այս ցանկութեան արդիւնքն էր—քսան իրաւասունների ընտրութիւնը երկու տարի սրանից առաջ, որի վրայ տարաբախտաբար վատ աչքով նայեց հասարակութիւնը: Մեր մշտական ցանկութիւնն է եղել, որ միութիւն լինի մեր և հայերի մէջ. առանց այս միութեան ոչ մէկը սրանցից չեն կարող հեռու տանել քաղաքի առաջադիմութեան գործը. ամեն մի ընտրողի պարտականութիւնն է այնպիսի մարդ ընտրել, որ կարողանայ օգուտ տալ քաղաքին—լինի նա վրացի, հայ, ռուս, հրէայ, թէ ուրիշ» (1893 № 6):

Չը նայած այս քարոզներին, վրացիները առանձնացան և կազմեցին կանգիդատների ցուցակ ու խորհուրդ էին տալիս հայերին ընտրել իրաւասուներ այդ ցուցակից. ահա այդ ցուցակին համակրական յօդուած է նուիրում «Իվերիան». նա ասում է՝ «Ընտրութեան ժամանակ աչքի առաջ ունեցէք արժանաւորութիւնը և ընդունակութիւնը. ազնիւ, ճշմարիտ մարդը ձեր սերտակից բարեկամն է, իսկ այդպիսիներ կը գտնուեն և՛ ունեւորի, և՛ հայերի, և՛ վրացիների մէջ էլ: Այդ բանը հաստատում է վրաց խմբի կազմած ցուցակը...» (№ 100): Բայց այդ ցանկութիւնը մնաց ձայն բարբառոյ յանապատի, որովհետև վրաց խմբի պարագլուխները իրանք ոչնչացրին այդ Եթէ նրանք աչքի առաջ ունէին մարդու արժանաւորութիւնը և ոչ ծագումը, ցուցակ կազմելիս պէտք է հրաւիրէին բոլոր ազգութիւններին

պատկանող պատուաւոր մարդկանց. բայց նրանք այդ բանը չարին: Այս վերջին տեսակ ուղղութեանը համակրում էր Գ. Ծերեթեւլին. սա ցանկանում էր միանալ և միացնել հայ առաջնակարգ դասի հետ և միացած ոյժերով տապալել վաճառականներին դասը. այս առաջարկութիւնը ըմբռնելու փոխարէն «Իվերիան» սրան մատնիչ անուանեց և համայն աշխարհին յայտնեց, որ Գ. Ծերեթեւլին իր գլուխը հանեց վրացիութիւնից: Այսինքն «Իվերիան» ստուեր գցեց այն մարդու վրայ, որ իր գրական գործունէութեան առաջին օրից ծառայել է վրաց հասարակութեան իբր ճշմարիտ վրացի և միութիւն քարոզող: Այդպէս միշտ «Իվերիան» յեղաշրջում է ճշմարտութիւնը և ծաղրում սուրբ գաղափար ունեցողի վրայ:

1893 թ. ընտրութիւններին վրացիները պարտութիւն կրեցին, որովհետեւ «ցէնզաւորների» մեծամասնութիւնը կազմում էին հայերը: Վրացիների մէջ Գ. Ծերեթեւլին և «Կվալին» այս անշատման կողմնակից չէին: «Այս ազգային մրցումը, — ասում է «Կվալին» *), հնարած է միայն չահ ունեցողներից, ժողովուրդը մասնակից չէ. որ ե՛ր հայ, ե՛ր վրաց խմբի պարագլուխները իրանց անձնական շահերը կապեցին ազգութեան հետ և երբ մէկը մատնանիչ է անում զրանց վատ արարքների վրայ, վայ են տալիս, թէ նրանց հալածում են, որովհետեւ հայեր են. զրանով ժողովրդին զրգում են և կողմնակիցներ ձեռք բերում, որ քուէարկութեան ժամանակ չը սկանան. նոյն քաղաքականութեան են հետևում և վրաց խմբի պարագլուխները: Դրանով աւելի թշնամացրին այս երկու ազգութիւնները իրար հետ»:

Մի ուրիշ տեղ նոյն Գ. Ծերեթեւլին քննելով այս թըշնամութեան պատճառը, բացի վերոյիշեալից, մատնանիչ է անում վաճառականութեան վրայ. Վրաստանի և Կախէթի ամբողջ առևտուրը հայերի ձեռքին, է և սա առաջ բերեց վրացիների տրտունջը. այս բանը մատի փաթաթան չինեցին երկու ազգութեան պարագլուխները: «Ժամանակ է, որ նոր սերունդը, որ նոր է հրապարակ դուրս գալիս, աւելի մը տածուած գործի, քան գործում էր հին սերունդը. ժամանակ է, որ հայ-վրաց նոր սերունդը իրար ձեռք ձեռքի տան և սկսեն գործել՝ լաւագոյն զրութիւն գտնելու համար» (№ 15): Ուրեմն Գ. Ծերեթեւլին հայ-վրաց յարաբերութեանը նայում է այնպէս, ինչպէս առաջ. այս կռիւը նա բացատրում է շահախնդիր կուսակցութիւնների մրցումով, այդ պատճառով երկու ազգութեան

*) 1893, № 15.

նոր սերնդին խորհուրդ չէ տալիս մասնակցելու այս մրցման մէջ:

«Իվերիան» այդ կողմից բոլորովին չը շօշափեց հարցը. նա խօսքով միութիւն, հաշտութիւն էր քարոզում, իսկ գործով հակառակն անկացուցանում, և վրացիներն էլ պարտութիւն կրեցին: Ընտրութիւնները վերջացան, ամենքը լռեցին, «Իվերիան» էլ լռեց: «Կվալին» շարունակում էր քաղաքացիական գաղափարներ տարածել և մի քանի անգամ յարուցեց և արծարծեց հայ-վրացական հարցը: «Իվերիան» չընդունեց «Կվալի» նոր ուղղութիւնը և գիւղական իղէալներէն չը հեռացաւ: Այսպէս անցաւ 4 տարի և հասաւ 1897 թ. նոր ընտրութիւնները. այժմ «Իվերիան» նորից զարթնում է և գիւղիցը ուղղակի դալիս քաղաքային դուստն. — «Ինձ էլ ներս թողէք» կանչելով: Բայց այժմ նա մենակ չէ, նրան առաջնորդում է ուրիշը:

1897 թ. «**Кавказъ**» լրագրի խմբագիր նշանակուեց Վելիչկօն: Սա հրապարակապէս յայտնեց, որ հայերի զեղծումներին վերջ պիտի դնուի և սկսեց կռիւ հայերի դէմ: Այն, ինչի վրայ «Իվերիան» նայում էր առանց վրդովման, այժմ «Կավկազին» հետեւելով, ագիտացիայի նիւթ շինեց. այն, ինչ որ առաջ ինքը մերժում էր, այժմ դրեց իր դրօշակի վրայ: — Մի խօսքով «Իվերիան» ընդունեց «Կավկազի» ծրագիրը և դուրս եկաւ նոր դրօշակով, որ «Կավկազի» դրօշակն էր: «Իվերիայի» մէջ, ի միջի այլոց, իշխ. ձաւճավածէի առաջնորդողը ասում է. «ռուսաց լրագրները ձայն բարձրացրին այն անկանոնութեան դէմ, որ հայերը գրաւել են քաղաքային ինքնավարութիւնը և չեն թողնում ուրիշ ազգութեան մարդկանց, որոնք կազմում են բնակիչների 53⁰%. հակառակորդները ոչինչ չը կարողանալով անել, խնդրին ազգային կերպարանք տուին և մեղադրեցին «Կավկազի» խմբագրին նրանում, թէ սա ուղղում է խռովութիւն դրցել երկու ազգութեան մէջ: Մենք չենք խօսում ամբողջ հայութեան մասին, այլ տեղական հայերի, որոնք առանձնացել են և իրանց նշանաբանն են դարձրել՝ «մենք և ուրիշ ոչ ոք» և այլն: Այս երկար յօդուածից մենք իմանում ենք նախ՝ որ այս հարցը զարթեցրել է «Կավկազի» խմբագիր Վելիչկօն և ոչ իշխ. ձաւճավածէն:

Այդ ինչի նման է: Եթէ այդ տեսակ հարց դոյութիւն ունէր, ինչո՞ւ վրաց լրագիրը չը զարթեցրեց: Ուրիշին հետեւելը միթէ նշանակում է առաջնորդ լինել, բացականչում է ն. Ժօր-դանիան:

Երկրորդ՝ հարցը նրանումն է, որ քաղաքային դուստն «դաւ-

թեցին» հայերը և վրացիներին չեն թողնում: Տարօրինակ բան. ուր էր իշխ. Ճավճավաձէն այսօրան ժամանակ. քաղաքային ինքնավարութիւնը մտցնելու առաջին օրից «Իվերիան» այս հարցի մասին ոչինչ չէ գրել (բացի 1893 թ.): Միթէ այդ է հեռատեսութիւնը: Ինքը հասարակութեանը մոլորեցրեց և այժմ վրէժ է պահանջում հայերից գոչելով՝ «Ինչո՞ւ դուք էք նստած և ոչ մեկը»:—Նրա համար, պատասխանում է Ժօրդանիան, որ 17 տարի շարունակ վրացիները քնած էին, իսկ հայերը զարթոնւն: «Իվերիան» իր գիւղական քարոզներով հասարակութիւնը քնացնում էր և քշում էր դէպի գիւղ և այս բանի մէջ հայերն են մեղաւոր, որ նրանք էլ քնած չէին:

Երրորդ՝ իշխ. Ճավճավաձէն ասում է—մեկը տեղական հայերի ընդդէմ ենք և ոչ ամբողջ հայութեան: Բայց միթէ ամբողջ տեղական հայութիւնը «գաւթեց» քաղաքային դուման և ոչ նրանց ունևոր դասը, որոնց ցենզը 1500 ռուբլուց աւելի է. բայց կան ուրիշ հայեր, որոնք կանգնած են չքաւոր վրացիների հետ հաւասար և միատեսակ կողոպտւում են ունևոր դասից. դրանք են՝ մշակներ, արհեստաւորներ, խանութպաններ և ուրիշ մանր կարողութեան տէր մարդիկ: Ահա այդ մասը հայութեան մեծամասնութիւնն է և դուրս է քաղաքային գործերից վրացիների հետ միասին: Պարզ է որ դուման «ամբողջ» տեղական հայութեան ձեռքին չէ, այլ նրանց փոքրամասնութեան ձեռքին: Այս զանազանութիւնը միշտ տեսնում էր «Ղրօէբան». նոյնը ինքը Ճավճավաձէն էլ գեղեցիկ կերպով պատկերացրեց 1891 թ., ինչպէս տեսանք վերևը. իսկ այժմ նոյն Ճավճավաձէն, ուրիշին հետեւելով, բացասեց և քիչ էր մնում հայ ու վրացի խեղճ ժողովուրդները իրար թշնամացնէր, որոնք իրար հետ միշտ հաշտ են եղել: Իշխ. Ճավճավաձէն այս հարցը չէ ուսումնասիրել: Իշխանը աւելի հեռու գնաց. նա ոչնչացրեց հայ ինտելիգենցիան, ասելով թէ՝ գրօշ չարժեն, փաստ բերելով «Շաոււմովի սելեօդկան» և այստեղ կրկին ուրիշին հետեւելով: Այս հանգամանքը աւելի լարեց երկու ազգութեան յարաբերութիւնը: Եթէ վրացի արգիւնաբերող, առևտուր անող ժողովուրդը փոքրաթիւ է, նրանից ոչինչ չի դուրս գայ և կեանքի մէջ էլ թոյլ կը լինի. ուրեմն բանը նրանումն է, որ վրաց հասարակութեան մի մասը եթէ այս ճանապարհով ընթանայ և ամրանայ, այնուհետև նա ինքը կը մտնի դուման: Հայ-վրաց տարաձայնութիւնների մասին, աւելացնում է Ժօրդանիան, մեր կարծիքը յայտնեցինք դեռ 1896 թ. «Կվալի» № 13. (այն ժամանակ չը կային ոչ Վելիչկօն, ոչ իշխ. Ճավճավաձէի գտած՝ Շաոււմովի սելեօդկան): Այժմ էլ նոյնն ենք կրկնում—այս երկու ազգերի հարցը լոկ տնտեսական է: Վրաց

ժողովուրդը արտադրեց նոր մարդկանց մի դասակարգ, որ թողեց գիւղատնտեսութիւնը և սկսեց ապրել վաճառականութեամբ, առետուրով, և այդ դասակարգը ակամայից հանդիպեց հայ ժողովրդի նոյն դասակարգին: Հայերը մենակ էին, այժմ մրցում է նրանց հետ հարեան ազգը: Այս կռուի մէջ չահւում է դարձեալ վրացին, որովհետև մինչև այժմ այս ասպարէզի վրայ սրանք ոչինչ նշանակութիւն չունէին, իսկ այժմ մի բան են. ուրեմն նոր հոսանքը արդիւնք է տալիս, և եթէ սրանք դեռ չեն կարողանում հայերի հետ հաւասարուել, այդ այն պատճառով է, որ պատմութիւնը թուիչքներ չէ սիրում. դարձեալ հարկաւոր է մի քանի աստիճան, որ մի ազգի բուրժուազիան հասնի միւս ազգի բուրժուազիային: Այդ կը լինի, որովհետև պատմութեան երկաթէ կանոնը պահանջում է ամեն ժողովրդից, եթէ նա ժամանակակից ճանապարհով է ընթանում, հասնի մինչև վերջը և իր յատկութիւններով նմանուի եւրոպական ժողովրդին: Իսկ «Իվերիան» իր ընթացքով առաջ բերեց անհաւասար կռիւ այս երկու բուրժուազիայի մէջ, որոնցից դեռ մէկը կախումն ունի միւսից և աւելի դժուարացրեց նրա կացութիւնը. ուրիշին հետեւելով, «Իվերիան» գործեց այդ տեսակ անհեթեթութիւն:

«Իվերիան» չէ հետաքրքրւում վրաց բուրժուազիայի առաջադիմութեամբ. նա իր ուղղութեամբ քաղաքային արդիւնաբերութեան զարգացման հակառակ էր, ուրեմն և վրաց բուրժուազիայի երեւոյն հակառակ, և որովհետև գործնական ճանապարհը չէ տեսնում, այդ պատճառով բաւականանում է հասարակ երեւակայութեամբ: Թնդ հայերն ասեն, թէ Թիֆլիսը վրացոց քաղաք է, էլ ուրիշ ոչինչ հարկաւոր չէ: Ահա և փաստ. «միթէ Թիֆլիս քաղաքը ճիշտ նրանցն է» (հայերին), հարցնում է իշխ. Ճավճավաձէն 1897 թ. 56 № մէջ. և պատասխանում է՝ «Ո՛վ ասաց: Սուտ են ասում, իդուր են սեփականացնում. Թիֆլիսումը միայն սենեկ է նրանցը, իսկ քաղաքը, ներողութիւն, երբէք. քաղաքը դեռ ոսներինն է, իսկ յետոյ վրացոցը»:

Ի՞նչպէս էք հաւանում այդ դատողութիւնը.—տները հայերինն է եղել, իսկ քաղաքը մերը. բայց չէ որ կանոնադրութիւնը քաղաքի կառավարութիւնը յանձնեց տան տէրերին, ուրեմն Թիֆլիսն էլ յանձնել է հայերին, որովհետև տան տէրերը նրանք են: Իշխ. Ճավճավաձէն երեւակայում է ի հարկէ վրաց պատմական իրաւունքը և ոչ գործնականը. մենք ինչպէս գործնական իրաւունքների հետեւող, կ'ասենք իշխ. Ճավճավաձէին, որ Թիֆլիսը մինչ այն ժամանակ կը լինի հայ վաճառականների ձեռքին, քանի տները և արեւտրական գործերը նրանց ձեռքին մնայ, և որքան

Մալիա, 1901.

էլ մենք կանչենք թէ մերն է, դա լուկ ինքնախաբէութիւն կը լինի, ուրիշ ոչինչ: Միով բանիւ հայ և վրաց բուրժուազիայի մէջ ծագած վէճը—տնտեսական է, նրա լուծելն էլ կարելի է տնտեսականապէս և ոչ գրչով ու ուրիշին հետեւելով:

Միւս կողմից վրաց ազգից առաջ եկաւ բացի բուրժուազիայից նաեւ բանուոր ժողովուրդ. դրանք օրական հացի համար բանում են հայ և ուրիշ աղքատեան պատկանող բանուորների հետ. դրանք գործում են միասին մի յարկի տակ. գտնւում են միատեսակ պայմանների մէջ և հպատակւում են մէկին. ստանում են միատեսակ վարձատրութիւն—մէկ խօսքով ուրախութեան և տխրութեան մէջ միասին են. կենսական պայմանները ամենքին միացրել է և այդ պատճառով, ինչպէս ասաց Գ. Մերեթիւին՝ «միմեանց օգնելով կը հարստանան, միմեանց թշնամանելով կ'աղքատանան»: Այժմ ասացէք խնդրեմ. ծագելն էլ սրանց մէջ ազգային մրցումը, չի՞ նշանակի—թուլացնել, անջատել և քանդել սրանց: Վրացիներին և հայերին անպայման հակառոր է միութիւն և ոչ անջատումն, համաձայնութիւն և ոչ տարաձայնութիւն, և սրանք պէտք է քաշեն միատեսակ լուծ, սրանից դուրս փրկութիւն չունեն. բայց այդ չէ՞ նշանակում, թէ հայը պէտք է կորցնի հայութիւնը և վրացին՝ վրացիութիւնը. դա անհիմն զառանցանք է և դրանց իրարից բաժանել անկարելի է. գուցէ աջողեցնեն ժամանակաւորապէս, բայց ընդ միշտ՝ երբեք: Վերջը իրանք կը հասկանան այն պարզ ճշմարտութիւնը՝ թէ բաժանուելը թուլութիւն է, իսկ միանալը՝ ոյժ: Այս տեսակէտից այս հարցը նոր է մեր կեանքի մէջ, որքան շուտ կը դառնանք քաղաքացի, նիւթապէս և մտաւորապէս եւրոպացի ու չենք գնալ «Իվերիայի» ծրագրով, այնքան շուտ կ'ուժեղանանք և այս հարցն էլ շուտ կը վճռուի. միայն «Դրօշբայի» տեսակէտը, որին «Իվերիան» անվայել է վերաբերւում, երբեք չը պէտք է մոռանալ:

Մենք, չարունակում է ժօրգանիան, քննեցինք վրաց մամուլի գլխաւոր հոսանքը սկսուելու օրից և նկատեցինք հետեւեալը՝ առաջին շրջանի մէջ նա անկեղծ, անվախ և դիմադրող է, երկրորդ շրջանում նա կորցնում է իր այդ բոլոր յատկութիւնները և դառնում է երեսպաշտ, փոփոխամիտ ու ծածկամիտ: Առաջինը երիտասարդ, կեանքով և ուժով լի հոսանք է, այդ պատճառով նրա խօսքն էլ կտրիչ է և ուժեղ, երկրորդը—ծերացած, հողեւորք հոսանք է, ուստի խօսքն էլ կակուղ, երկչոտ և անդամալոյծ. առաջինը դիպչում է սրտին, պաշար է տալիս ուղեղին, արթնացնում և շարժում է մարդուն. իսկ երկրորդը՝ ընդհակա-

ռակը, դատարկում է սիրտն ու հոգին, քնեցնում ու ծանրացնում է միտքը, կաշկանդում է մարդուն: Առաջինի ուսուցիչն է «Դրօժբան», իսկ երկրորդինը «Իվերիան»: «Դրօժբայի» իշխանութիւնն է պրօգրէսի իշխանութիւնը, «Իվերիայինը» — բէականայի «Իվերիան» բացասեց մամուլի այն իդէալը, որ «Դրօժբան» մշակեց, և դրանով բացասեց ժամանակակից եւրոպական մամուլը. «Իվերիան» արմատախիլ արեց այն բարոյական գրականական աւանդութիւնը, ինչ որ սերմանեց «Դրօժբան». կենդանի և ժամանակակից մտքերը գրականութիւնից դուրս հանուեցին, մեռած, փռած հին մտքերը տարածուեցին. այդ բաւական չէ, «Իվերիան» վայր ձգեց առհասարակ վրաց մամուլի նշանակութիւնը մեղանում. նրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում. նա ոչ մի ժամանակակից հարցին ևս ուշադրութիւն չէ դարձնում. վախենում է իր սեփական կարծիքը յայտնել: «Իվերիան» չը կարողացաւ տեղական ուրիշ լրագրների հետ մրցել, այլ ընդհակառակը դարձաւ նրանց պոչը: «Իվերիան» ոչ միայն մեղ մտաւոր ճանապարհից շեղեց, այլև վրաց մամուլից սառնեցրեց. նա այսպէս էր ընթանում 1886—1892 թ., իբր միակ վրաց օրգան, և այժմ էլ նոյնն է գործում, իբր ամենօրեայ թերթ: Հարկաւոր է որ վրաց մամուլը ունենայ արժանաւոր ազդեցութիւն, գաղափարը նորոգուի, բարոյապէս բարձրանայ. իսկ այս բոլորը պէտք է կատարէ ժամանակակից, նոր մամուլը:

Ինչու՞ն է կայանում այս նոր մամուլը. ինչ բնորոշ յատկութիւններ ունի նա: Նոր մամուլը պէտք է առաջնորդէ նոր կեանք, իսկ նոր կեանքն առաջնորդել՝ կը նշանակէ կեանքը պարզել, քննել. նոր մամուլի հիմքը կը լինի նոր մտքեր: Մամուլը, որ կը հասկանայ իր ժամանակակից պահանջները և կ'առաջնորդէ, կը լինի ժամանակակից, նոր: Վրաց առաջին լրագիրը գէմօկրատիական էր. ինչից որ հրաժարուեց «Իվերիան» և քանդեց վրաց մամուլի տրադիցիան, նոր մամուլը պէտք է վերանորոգի այդ տրադիցիան և սրանով անցեալի ու ներկայի կըտորած թիւը նորից միացնի: Մէկ խօսքով՝ նոր մամուլը պէտք է միանայ անցեալի հետ, սա պէտք է իւրացնէ մեր հրատարակութիւնների լաւագոյն յատկութիւնները, նա պէտք է որոնէ իր աղբիւրը աղբային գրողների մէջ և այն ժամանակ նա կը դառնայ անցեալի իսկական զաւակը, ներկայի իսկական ուղիորդ և ապագայ ունեցող: Վրաց մամուլը ենթարկուեց հետեւալ փոփոխութիւններին. սկիզբում նա իր ընթացքով (ձգտումներով) առաջադիմական էր, հիմունքով պահպանողական («Դրօժբա»), իսկ վերջը նաև ընթացքով (ձգտումներով) և հիմունքով դարձաւ պահպանողական («Իվերիա»). բայց նոր մամուլը ան-

պատճառ պէտք է ընդունի «Իրօէրայի» առաջադիմական ուղղութիւնը և մերժի նրա պահպանողական հիմունքը, այսինքն հին ձեւը նոր բովանդակութեամբ, սա է նոր մամուլի ճանապարհը, նրա գաղափարական կողմը. սա իր հիմքը պէտք է գտնի նոր հոսանքի մէջ: Կեանքը բաժանեց հասարակութիւնը երկու մասի՝ մէկը առաջադիմական, որ քաղաքացիական ճանապարհով է ընթանում, երկրորդը յետամնաց, որ մնում է նախնական պայմանների մէջ: Առաջինն է կազմում մեր ազգութեան նոր ժողովուրդը: Այժմ ծագումը այլ ևս նշանակութիւն չունի, բոլորն էլ կազմում են մէկ հասարակութիւն, և վրաց նոր մամուլը պէտք է ծառայի այս հասարակութեան այն մասին, որ քաղաքացիական ասպարէզ է դուրս եկել և կամենում է ժամանակակից միջոցներով (ուսում, վաճառականութիւն, արհեստ, մշակութիւն և այլն) պահպանել իր գոյութիւնը: Նոր մամուլի պարտականութիւնն է այս առաջ ընթացող կարաւանի ճանապարհը հարթել, լուսաւորել և ոչնչացնել ամեն տեսակ խոչընդոտներ: Մի խօսքով՝ մամուլը պէտք է հետզհետէ զարգացնէ առաջադիմող ժողովուրդը, նրան ծանօթացնէ կեանքի պայմաններին հետ, ցածր աստիճանից տանէ մինչև բարձր աստիճանը, կազմակերպի հասկացող ղօրք—ահա նրա դրօշակը. այս շարժումն բոլորովին դէմօկրատիական է և մամուլն էլ պէտք է լինի դէմօկրատիական:

Այսպիսով նոր մամուլի նպատակն է—առաջնորդել մեր քաղաքացիական զարգացմանը, օգնել ժողովրդին գիտակցաբար մասնակցելու այս զարգացման մէջ. այս է նրա իրական հիմքը և այս նպատակին հասնելու համար անպայման հարկաւոր է անկեղծ քննադատութիւն, նոր միտք, կտրիչ խօսք: Միայն հին երկրի քննադատութեամբ կարելի կը լինի նոր երկիր հիմնել. միայն հին մտքերն ու գաղափարները ոչնչացնելով կարելի կը լինի նոր մտքեր տարածել և այս յօդուածիս նպատակն էլ միայն այդ է և ուրիշ ոչինչ, ասում է պ. Ժօրգանիան:

Գ. ՄԻՐԱՂԵԱՆ

ԴԱՆԴԱՂ ՍԱՀՈՒՄ ԵՆ...

(Ն Ի Կ Ի Տ Ի Ն Ի Գ)

Դանդաղ սահում են օրեր, տարիներ,—
Պահի՛ր յոյս, հաւաս սրտիդ խորքերում...
Անի՛ր, նո՛ր սերունդ, անվախ, աներեք,
Հա՛յն է քո ուղին գալիք օրերում:
Ահա՛ մեզ շողաց փայլակ լուսաւոր.
Նայէ՛ք, մենք նամբի ծայրին ենք կանգնած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ցանում էր սերմը կեանքում դարէդար,—
Խորո՛ւնկ է հողում նա արմատ արգել.
Կացնով կարող ես կըստեսել անտառ,—
Բայց չարն արմատով դրժուար է պոկել.
Եւ մեր պապերը այդ չարին սովոր,
Մանուկ օրից են մեզ ա՛յն պատուասած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ամօ՛ք, ով անխել զրկում է, ցաւում,
Տերեւ խրճալիս—համբին է նըման.
Փա՛ւք, ով նեմարսին սիրով ծառայում,
Նըրա՛ն է կեանքում զոհում ամեն բան:

Մենք ո՛ւր աչք բացինք, ո՛ւր տեսանք լոյս օր.
Դէ՛հ, փութա՛նք գործի միաշունչ խմբուած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Շո՛ւք արեւ, հողն է պատրաստ ու բերրի,
Սերմանէ՛ք, քանի փայլում է զարուն.
Շահաւէտ խօսքի, բարի գործերի
Ձէ՛ կորչում ցանած սերմը ապարդիւն:
Մենք հաշիւ կը տանք թռուներին մի օր—
Ո՛ւր եւ ի՞նչպէս ենք այդ սերմը նարած...
Մեռեալներն արդէն նիրհում են անդորր,
Գործն է մընացել կենդանի մարդկանց:

Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

II

Բանաստեղծութիւնը նոյն զիրքն ունի գրականութեան մէջ, ինչ որ կ'իկնը հասարակութեան մէջ.—նրանն է առաջին տեղը և առաջին ողջոյնը: Եւ ինչպէս ամենատղեղ կ'իկնը, այնուամենայնիւ, պատկանում է գեղեցիկ սեռին, այնպէս էլ ամենամեծամասնութիւնը ու ռոտանաւորը պատկանում են գեղարուեստական գրականութեան:

Անցեալ տարուայ ընթացքում առանձին գրքոյկներով տպուած ինքնուրոյն գեղարուեստական գրուածքները,—արտատպութիւնները և կրկնատպութիւնները մի կողմ ենթ թողնում, —կարելի է, բառի բուն նշանակութեամբ, հաշուել մասների վրայ.—1) Ա. Ահարոնեան. «Նորածինը» տպուած նրա «Պատկերներ» ժողովածուի մէջ, որի պարունակած միւս բոլոր պատմածքները հրատարակուած են 1900 թուից առաջ և արտատպուած են «Մշակից». 2) Սմբատ Մ. Գարագաշ. «Մեչադէ Եղիսաբէթ», վէպիկ. 3) Արամ Զարրգ. «Բանաստեղծութիւններ», որոնցից մի նշանաւոր մաս արտատպութիւն է. 4) «Զիւանուքնարը» հատ. I. 5) Ե. Բաղդասարեան. «Քնար մուղայի». 6) Գ. Զառափեան «Ոսկեհեր տղան և իմաստուն աղջիկը» հէքեաթ, և 7) Փառնակէս. «Նիսիա», վոդվիլ: Երկու վիպական գրուածք, երեք՝ բանաստեղծական, մի հէքեաթ և մի վոդվիլ, ընդամենը ոչ աւելի քան մօտ 550 փոքրագիր էջ,—ահա անցեալ տարուայ ռուսահայ գեղարուեստական գրականութեան ամբողջ հաշուելիքը, եթէ ի նկատի չունենանք պարբերական հրատարակութիւնները:

Սկսենք վիպականներից:

Պ. Ահարոնեանի «Նորածինը», որ գրուած է 1900 թուից առաջ, պատկանում է նրա այն գրուածքների շարքին, որոնց նիւթը վերցուած է թիւրքահայ գաղթականների կեանքից: Այդ գրուածքներն են կազմում պ. Ահարոնեանի գրական ժողովըր-

դականութեան հիմքը: Մեզ թւում է, թէ «Նորածինը» ոչինչ չի աւելացնի այդ ժողովրդականութեանը: Նա պատմուած է գաղթականի բերանից, բայց գրքի ոճով:

Պ. Ս. Մ. Գարագաշի «Մեշադի Եղիսարէթը», մի անգրագէտ գրուածք է, զուրկ որ և է գեղարուեստական արժանաւորութիւնից:

Բանաստեղծական գրուածքներից «Մուրճի» մատենախօսական բաժնում արդէն յայտնուել է «Մուրճի» խմբագրութեան կարծիքը պ. Արամ Չարդզի «Բանաստեղծութիւնների» մասին:

Ծանր տպաւորութիւն է գործում «Զիւանու Քնարը»: Երեք հատ աշող ոտանաւորներ—«Աշխարհը», «Խելքի աշեցէք», «Եղած չեղած մէկ հաշիւ է»,—մի ամբողջ հատոր անաջող, անհամ և անհոտ ոտանաւորների մէջ, որոնցից շատերը անիմաստութեան կողմից կարող են մրցել մեր նոր փետրաւորուած դէկադէնտների արձակ և անարձակ բանաստեղծութիւնների հետ: Ինչպէս գիտէք, պէտք չէ անպատճառ ճգնաւոր լինել արջի ծառայութիւններ ստանալու համար: Պ. Զիւանին յայտնի էր մինչև այժմ իբր համեստ, բայց համակրելի և բաւական ժողովրդականութիւն վայելող աշուղ: Գրքի հրատարակիչները ուզել են նրան ծառայութիւն մատուցանել, սկսելով տպել գրեթէ այն բոլորը, ինչ որ երբ և իցէ դուրս է եկել նրա բերանից, թէկուզ այդ նոյնքան իմաստ ունենայ և նոյնքան գեղարուեստական արժանաւորութիւն, որքան ժողովրդական դէկադէնտութեան կլասիկական երկտողը. «Ապէլսին, ապէլսին, Մուխթար փաշին խաբեցին»:

Ամբողջապէս նոյն դէկադէնտութեան արդիւնք է և պ. Ե. Բաղդասարեանի «Քնար մուգային»: Տարօրինակ մարդ է պ. Բաղդասարեանը.—նրա ծնունդը եղել է ոչ միայն սե, այլ և կապոյտ (ևր. 7), նա սիրել է «հրաւառ աշեր կենարար հոտով» (ևր. 5), նա «ցնորքներ է մտածում» (ևր. 6), նրա վշտերը շատ են և նրան միտիթարել «չեն կարող նոյն խոկ թևաւորք անթեք». նա լսում է թէ ինչպէս «երկիրն էլ յոգնած, քնած խռոմփում է» (ևր. 15) և ինչպէս «թռուցիկ հանդարտ, զովարար հովը սուլում էր հանգիստ» (ևր. 16). իր սիրունուն անիծելիս նա ուղղակի սարսափելի է. «Եւ հրէշաւոր որդեր և զեւեր կ'կըրծեն սիրադ երկար տարիններ»... «Հիւր, բոց, դժոխ, տանջանք անբաժան ահա քեզ բաժին, միշտ և յաւիտեան» (ևր. 31). Ընդհակառակը նա սաստիկ քնքոյչ է, երբ խօսքը երեխայի մասին է. նա գիտէ որ «լացի պատճառը միայն կաթն է և մօր քաղցրիկ շաղ ստինքներ», բայց նա գիտէ նոյնպէս, որ երեխան ոչ միայն կաթ է ուտում, այլ և ուտելուց յետոյ ուրիշ պէտքեր էլ է ըզ-

գում, և երբ երեխան կշտանալուց յետոյ նորից լաց է լինում, բանաստեղծը մեզ բացատրում է, թէ «նա», (հէնց այդպէս բռն-թով և ստորակէտով) մի ուրիշ հոքս էլ զգաց»...

Լաւ դայեակ կը լինէր պ. Բաղդասարեանը և եթէ նա դրա փոխարէն դարձել է վատ բանաստեղծ, մեղաւորը հայրն է, որ հեղինակի փոքր ժամանակը ամեն բան ասել է նրան (տես «Հայրս միշտ ինչ էր ասում մանուկ ժամանակս», եր. 12—15), բայց մոռացել է ասել, որ երեխայի «ուրիշ հոգսերը» ամենաանբանաստեղծական բանն են աշխարհումս և որ կան բառեր, որոնց իրարից ստորակէտով բաժանելը նոյնքան մեղք բան է, որքան մարդուն կնոջից բաժանելը: Հայրը մոռացել է այդ ասել և ահա պ. Բաղդասարեան մեզ զբաղեցնում է երեխայի ստամոքսային հարցերով և ստորակէտի գործածութիւնը հասցնում է մոլեռանդութեան: Երեւակայեցէք. «...որ քո շրթունքներ, արտասանէին, սուրբ սիրոյ խօսքեր». «Այժմ՝ կեանքիդ, ուրախ օրեր, քեզ ժպտում են, անդադար» «Եւ ես, հաւատում էի». «Դէպի յառաջ եմ, միշտ դիմում». և այլն և այլն:

Ես այդքան կանգ առայ այդ անմիտ գրքոյկի վրայ, որովհետեւ, ինչքան ինձ յայտնի է, նրա մասին չէ խօսուել ոչ մի տեղ, և, որ գլխաւորն է, նա շատ բնորոշ է մեր գրականութեան համար: Կան հոգեբանական հարցեր, որ հոգեկան հիւանդների վերայ պէտք է ուսումնասիրել, — որոշ, ընդհանուր պահասութիւններ նրանց մէջ արտայայտուած են լինում տիպային ձևով:

Գրեթէ նոյնքան անգրագէտ է գրուած և պ. Գ. Զառափեանի «Ոսկեհեր տղան և իմաստուն աղջիկը» հեքեաթը, որի մասին աւելորդ է խօսել:

Անաջող գրուածք է և պ. Փառնակէսի «Նիսիա» վոգելիլը, որ սակայն գրուած է գրագէտ լեզուով:

III

Տեանեմք այժմ, թէ ինչ են տուել մեզ պարբերական հրատարակութիւնները գրական տեսակէտից:

Սկսենք հին «Մուրճ»-ից, որովհետեւ «Մուրճը» միակ գրական ամսագիրն է, որ հրատարակում է ռուսահայ բարբառով, իսկ զուտ գրական նիւթ ամենից շատ պէտք է պարունակուի գրական ամսագրում:

Խօսքս «Մուրճի» անցեալ շրջանին է վերաբերում, երբ նա ուրիշ խմբագրութեան ձեռքին էր և ունէր ուրիշ բարոյական կերպարանք, ուստի և այժմեան «Մուրճում» նրա մասին խօսելը չը պէտք է անյարմար համարուի:

«Մուրճի» հին խմբագրութիւնը 1900 թուին հրատարակեց միայն վեց կամ, աւելի ճիշտ ասած, հինգ համար, որովհետեւ մայիս-յունիսեան միացեալ գրքոյլը ծաւալի կողմից քիչ տարբերութիւն ունի ոչ-միացեալ համարներէց: Այդ հինգ կամ վեց տետրերում կան ինքնուրոյն վիպական գրուածքներ և ամեն տեսակ ոտանաւորներ, որոնք բաւական տեղ են բռնում, բայց բոլորն էլ, բայցի պ. Պ. Պոօշեանցի «Յունօ»-ից, որ դեռ չէ վերջացել և որի մասին խօսել վաղաժամ ենք համարում, այնքան քիչ գեղարուեստական արժէք ունեն, որ, մեր կարծիքով, կը մնան ընդ միշտ թաղուած «Մուրճի» տետրերում:

Այդ անաջող գրուածքներից քննադատութիւնից ցած չեն, իմ կարծիքով, միայն պ. Լ. Մանուէլեանի ոտանաւորները, որոնք, ինչ պակասութիւն էլ ունենան, երբէք զուրկ չեն լինում իմաստից և միշտ լիովին գրականական են:

Պ. Լ. Մանուէլեանը հին «Մուրճի» վերջին տարուայ զբոլորէնքում ունի միայն երկու բանաստեղծութիւն՝ «Ես ձեզ ասում եմ» (№ 3) և «Սողոմոնի աղբիւրը» (№ 4):

«Ես ձեզ ասում եմ»... ոտանաւորի մէջ կայ և՛ համակրելի գաղափար, և՛ չափ, և՛ յանգ, բայց չը կայ զգացմունք, չը կայ տրամագրութիւն, չը կայ պատկեր, այսինքն այն, առանց որի ոտանաւորը «հնչող պղինձ» է միայն:

«Սողոմոնի աղբիւրը» հեղինակը անուանել է գրամատիկական պօէմա երեք պատկերով, բայց մէջը ոչ գրամատիկական գործողութիւն կայ, ոչ պօէմայի տրամագրութիւն և ոչ էլ որ և է պատկեր, այլ միայն անվերջ վիճաբանութիւններ և ճառեր այնպիսի մի հարցի մասին, ինչպէս մի զիւր աղբիւր բերելու հարցն է, որ չը նայելով իր ամբողջ կարևորութեանը գիւղացիների շահերի տեսակէտից, չէ կարող նիւթ տալ գրամատիկական գրուածքի համար: Աւելացրէք դրա վրայ և այն, որ պ. Մանուէլեանի հայ գիւղացիները խօսում են Արքայ Լիբի և Օտելլոյի սճով, և ձեզ հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ «Սողոմոնի աղբիւրը» տպաւորութիւն չէ գործում, չը նայելով որ գրուած է գեղեցիկ և ազատ անյանգ ոտանաւորով:

Իսկ պ. Աւետիք Իսահակեանը, որ մի ժամանակ յոյսեր էր տալիս, այժմ, գրաւուած դէկադէնտութեամբ, աշխատում է ապացուցանել, որ սխալուած են եղել իր ձիւրքի մասին լաւ կարծիք յայտնողները: Փոխանակ զգացմունք կամ պատկեր արտայայտելու, պ. Իսահակեանը զբաղուած է այժմ գրականական ժողովրդական գեղեցիկ, կարճ և մանաւանդ զուգորդ խօսքերով և թխում է ոտանաւորներ, որոնք կամ անհասկանալի ցնորաբանութիւններ են կամ վերին աստի-

ճանի քաղցր-մեղցր արտայայտութիւններ չինժու վշտերի: Իբր ցնորարանութեան մի նմուշ՝ մենք յարձնարարում ենք ընթերցողներին պ. Իսահակեանի «Երազ»ը (№ 3), որ կազմուած է իրար յաջորդող ոտանաւոր և արձակ տուներից, կամ նրա «Տիեզերական զանգը», որից իմանում ենք, թէ պ. Իսահակեանը լուռ թափառում է «ապատում և անապատում», «հոգին ծանրացած», բայց «տեսնում է», որ «տիեզերքը մի անհուն զանգ է» և իր հոգին «նրա լեզուակը վսեմ» և լսում է, որ «վեհ լուռութեան մէջ» «տիեզերքը խոր զօղանջում է» և անապատ «տիեզերական զանգի» «վսեմ լեզուակը», այսինքն պ. Իսահակեանի հոգին, «նոր կտակներով, նոր պատգամներով», «դանալիժութեամբ է դէպի ամբողջի հոգին, նրան խայթելու, և քարոզելու, և արտասուելու, և այրուելու»...

Վիպականների մէջից չնորհրով բան կարող էր լինել պ. Ա. Աթայեանի պատկերը («Անցեալից մի բեկոր» № 5—6), եթէ հեղինակը գրէր պարզ կերպով և չաշխատէր պօզանք ընդունել: Տեղ-տեղ պատկերում դուք զգում էք տրամադրութիւն, սկսում էք կենդանի կերպով երեակայել հեղինակի նկարագրածը, բայց իսկոյն տպաւորութիւնը փոխում է, սկսում են չինժու շեշտեր: Շինժու է հէնց պատկերի սկիզբը. «Ձեզնից ով է գիշերել դուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի սակ (մենք ենք ստորագծում): Ասում են՝ բանաստեղծութիւնը դատարկաբանութիւն է. ճշմարիտ, այդպէս ասողները իսկի չեն գիշերել դուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի սակ. եթէ նրանք գիշերած լինեին դուրսը, ջինջ օդի» և այլն:

Վատ փաստաբան կը լինէր պ. Աթայեանը, —այդ ոճով գրելով նա հէնց հաստատում է, որ բանաստեղծութիւնը դատարկաբանութիւն է, և յիրաւի, հին «Մուրճի» 1900 թուի ինքնուրոյն գեղարուեստական գրուածքների բաժինը, ընդհանուր առմամբ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ յաւակնոտ դատարկաբանութիւն:

IV

Երբ խօսում են գեղարուեստական գրականութեան մասին, առհասարակ շատ քիչ են ի նկատի ունենում լրագիրները, որովհետև նրանց էական նիւթը հրապարակախօսական հարցեր են, օրուայ չարիքները:

Անցեալ տարուայ ընթացքում «Մշակում» պ. Լէօն գրել է միայն երկու պատկեր՝ «Հայրօն» և «Այցելուն», իսկ պ. Ահարոնեանը միայն մի պատկեր և երկու պատմուածք՝ «Արձանի մօտ», «Ճաւը» և «Մարդագէլը»:

Պ. Լէօի «Հայրօն» և «Այցելուն» տօնօրեան—Ծննդեան և Զատիկի—պատկերներ են, որոնք, ընդունուած սովորութեան համաձայն, ֆանտաստիկական են լինում: Պ. Լէօն չէ սիրում ֆանտաստիկականը: Նա շատ է կապուած իրական հողի հետ, նա չէ մոռանում երբեք քաղաքայ կամ, աւելի ճիշտ ասած, հաշապաղօրեայ ցաւերը և նրա բէալիստ ու դեմօկրատ տաղանդը տօնից վերցնում է ոչ թէ նրա ուրախութիւնը, նրա անհոգութիւնը, այլ այն թշուառութիւնը, որ աւելի ևս աչքի է ընկնում այդ ուրախութեան կողքին, և այն ստուերը, որ աւելի ևս թանձրանում է տօնօրեայ ճրագների վառ լուսաւորութիւնից այն տեղերում, ուր չէ ընկնում նրանց լոյսը: Իսկ որքան շատ են այդ տեղերը և որքան լաւ ծանօթ հեղինակին: Պ. Լէօն շատ լաւ զգում է առօրեայ, դժգոյն, անէֆֆէկտ թշուառութիւնը և կարողանում է շատ բնական և ճշմարիտ շեշտով արտայայտել այդ թշուառութեան զայրոյթը աշխարհիս բախտաւորների դէմ:

Պ. Աւ. Ահարոնեանն էլ դէմօկրատ է ոգով, նրա տաղանդն էլ սիրում է թշուառութիւնը, բայց բանաստեղծական, հերոսական և մի քիչ էֆֆէկտուոս թշուառութիւնը, և եթէ նրա ոտքերը այնքան պինդ չեն կանգնած իրականութեան հողի վրայ, որքան պ. Լէօնը, դրա փոխարէն նա ունի թօրչքներ դէպի եթերը, որոնք, երբ աջողում են, մի ինքնուրոյն հրապոյր են տալիս նրա գրուածքներին:

Պ. Լէօն բէալիստ է, պ. Ա. Ահարոնեանը՝ բօմանտիկ: Մէկը գրաւում է զգացմունքի ոյժով, միւսը զգացմունքի գեղեցկութեամբ:

Երկուսի տաղանդն էլ հաւասարապէս գաղափարական են և վերին աստիճանի ողջախոհ:

Այն բէլլէտրիստական գրուածքները, որ պ. պ. Լէօ և Ահարոնեան տպել են անցեալ տարուայ ընթացքում, չէ կարելի ամենաաջողները համարել նրանց գրածների մէջ, բայց այնուամենայնիւ նրանք կարգացւում են հետաքրքրութեամբ և զուրկ չեն մեր վերը յիշած արժանաւորութիւններից:

«Մշակի» մասին այդ տեսակէտից մեր խօսքը վերջացնելու համար մենք պէտք է յիշենք պ. Համալի «Շուրա» երգիծաբանական պատկերը և պ. Գ. Բաշինջաղեանի «Ազնուականի յիշատակարանից» պատմածքը:

«Շուրան» մի թեթիւ պատկեր է, բայց նրա թեթիւ գծերումն էլ երևում է վարժ և տաղանդաւոր վրձին: Պատկերը գրուած է թիֆլիսի բարբառով և,—ինչպէս հասկացողները ա-

սում ևն—այնպէս, ինչպէս շատ քչերը գիտեն օգտուել այդ բարբառից:

Երգիծաբանական է և պ. Բաշինջաղեանի պատմածքը, որ կարդացւում է հետաքրքրութեամբ և թափանցուած է նոյն քնքշութեամբ, որ պ. Բաշինջաղեանը այնքան շնորհալի կերպով արտայայտում է իր նկարներում:

V

«Տարազ» չաբաթաթերթում տպուել են անցեալ տարի, ի միջի այլոց, երկու մինչև այժմ անտիպ ոտանաւորներ. մէկը Գամառ-Քաթիպայի «Տեսչութիւն վերին» (№ 9), որ արուեստակուած կամ, աշխարհաբար ասած, թխած ոտանաւոր է. միւսը՝ Միք. Նալբանդեանի «Տեղի տան տխրութիւնք» (№ 10), որ գրաբար է գրուած և, իմ կարծիքով, բոլորովին զուրկ չէ այնուամենայնիւ գրական արժանաւորութիւններից:

Կենդանի գրողների գրուածքներից «Տարազում» ամենահետաքրքրականը Պերճ Պոչեանցի պատմածքն է՝ «Ողջ կեանքն ուրիշին, մի օր իրան» (№ № 20—23), որ աչքի է ընկնում հեղինակին յատուկ արժանաւորութիւններով և պակասութիւններով: Պ. Պոչեանց չէ պատկերացնում, այլ լուսանկարում է, և նրա գրուածքները յաճախ տալիս են ձեզ գեղարուեստական ճշմարտութեան տեղ լոկ արձանագրութիւն, պրօփօկօլ, և ներքին արամաքանութեան տեղ՝ պատահական կապակցութիւն: Այդ է պատճառը, որ հեղինակին յաջողում է գլխաւորապէս վերարտադրել կեանքի արտաքին կողմը, նիստ ու կացը, սովորութիւնները, և դժուար է յաջողում թափանցել մարդկանց անհատական հոգեբանութեան մէջ: Եւ ճիշտ ասած, Պ. Պոչեանցին շատ քիչ է հետաքրքրում այդ հոգեբանութիւնը: Նա ուղում է արտայայտել ժողովրդական մի հայեացք ժողովրդական ոճով, և նա արտայայտում է գործող անձնաւորութեան բերնով, միևնոյն է, մահուան անկողնում լինի այդ անձնաւորութիւնը թէ իր կեանքի ամենատուրախ բոպէում, բոլորովին նոյնատեսակ բառերով, նոյն իսկ երբեմն կուտակելով իրար վրայ մի քանի համանիշ գարձուածքներ, որոնցից իւրաքանչիւրը իրական կեանքում բաւական է համարւում այդ միտքը արտայայտելու համար: Այդ բանը, ի հարկէ, առանձին հետաքրքրութիւն է տալիս Պ. Պոչեանցի գրուածքներին լեզուաբանական տէսակէտից, որովհետև դժուար է այժմ գտնել մի գրող, որ նրանից լաւ իմանայ մեր հիմնական, արարատեան բարբառը, բայց շատ վեասում է նրանց դեղարուեստական տեսակէտից, մտցնելով նրանց մէջ և՛ անբնա-

կանութիւն, և՛ ճապաղութիւններ: Աւելորդ է ասել, որ իբր պրօթօկօլիստ պ. Պռօշեանցը յարում է գրականութեան նատուրալիստական դպրոցին և երբ նկարագրում է մէկի, դիցուք, հագուստը, բայց չէ թողնում ոչ մի կոճակ, ինչպէս, օրինակ, «Տարազում» տպուած պատմաճշում կարծում է, թէ հետաքրքրական է ընթերցողների համար իմանալ, թէ որքան լաճն էր պատմաճքի հերոս զըզ-օզլան (հերմաֆրօդիտ) Օհանի վարտիքի ձագը:

Պ. Պռօշեանից յետոյ յիշելու է պ. Վրթ. Փափազեանին, որ տպել է «Տարազում» հինգ պատկեր—«Ըմբոստի մահը» (№ 9), «Քարոտ կրծքի երգը» (№ 15), «Մաղձերնիդ մի խառնէք» (48), «Ձայներդ կտրէք» (№ 49) և «Թաղիքից գլխարկ հանել» (№ 50): Առաջին երկուսը, որոնց մէջ զգացում են նիցչեական հովեր և դէկադէնտութեան շորշոփ, քնականաբար կարող են հետաքրքրութիւն ներկայացնել միայն մի ընթերցողի... իրան, հեղինակի համար, որովհետև այդպիսի բաները բարձր են սովորական մահկանացուների—իրանց սեփական գլխի վրայից յատկելու ցանկութիւն չունեցող ընթերցողներին—հասկացողութիւնից: Վերջին պատկերը հասկանալի է, բայց պատկզիւ տպաւորութիւն է գործում: Վատ չեն մնացած երկու պատկերները, որոնք «Անմահացնելու գործեր» ընդհանուր վերնագիրն են կրում: Լաւ է մանաւանդ դրանցից երկրորդը,—«Ձայներդ կտրէք»,—որ զբոսւած է բնութոյն ու աշխոյժ ոճով և համակրելի իւմօրով:

Ա. Իսահակեանը «Տարազում» էլ զբաղւում է գրական ժօնգլեօրութեամբ: Ահա մի բնորոշ նմուշ.

Ի՞նչ էլ որ լինիմ, ի՞նչ էլ որ լինիմ,—

Աղքատ էլ լինիմ, մահդ եմ էլի ես.

Ինչո՞ւ նամարդին գլուխ վեր բերեմ,

Ի՞նչ էլ որ լինիմ, թէկուզ ինչ լինիմ»:

Շատ բան ունի գրած «Տարազում» պ. Ջաւադ Բալուղեան կամ, ինչպէս ինքը սիրում է ստորագրել՝ Ջաւադ-բէկ Բալուղեան, որի բանաստեղծական շնորհքի և ճաշակի մասին կարող է գաղափար տալ նրա ոտանաւորներից մէկի հետեւեալ բնաբանը.

«Կողնուն զըրին խալիչին,

Թողլաւ, ընկաւ գետինին» (№ 31).

Ժողովուրդը ասում է.

«Կողնուն զըրին խալիչին,

Թող ըլաւ, ընկաւ գետինն»:

Բանաստեղծ Ջաւադ-բէկ Բալուղեան այդ առածը խմբա-

գրել է իր ոճով, հակառակ բանաստեղծութեան և նոյն իսկ քերականութեան տարրական պահանջներին:

Մեր երկտասարդ բանաստեղծներից մի ուրիշը,—պ. Յ. Յովհաննիսեան, որ տաղանդաւոր բանաստեղծական թարգմանիչ կարող էր լինել, բայց դարձել է տօնօրեայ ոտանաւորներ թխող, մի թոյլ ոտանաւոր է նուիրել պ. Ս. Մանգլիսեանին «Տարազի» № 9-ում:

Դրանով վերջացնում ենք մեր խօսքը «Տարազին» անցեալ տարի աշխատակցած գրողների մասին: Միւս գեղարուեստական գրուածքներից արժէ յիշել պ. Ոնոփրիոս Անտիեանի «Ծովի վիշտը» (№ 2), պ. Հրանտ-Վահէի «Մակոյկիս մէջ» (№ 36) և օր. Զ. Ալեանաքի «Ուլ ասողեր, ասողեր» (№ 44) քնարերգական ոտանաւորները, որոնց մէջ զգացւում է անկեղծ տրամադրութիւն, արտայայտուած գեղեցիկ ձևով, պ. Մ. Տէր-Դանիէլեանի «Թումօ» պօէմայի սկիզբը (№ 43), որ շնորհալի, բայց անփորձ հեղինակի գրուածք է թւում, և վերջապէս պ. Աթոսի երկու պատմածքները,—«Տէր Սուքեաս» (№№ 16—17) և «Տէր Եղեազ»,—որոնք աչքի են ընկնում մի քիչ կոպիտ, բայց ճշմարիտ իւմօրով և հիւթալից ու գունաւոր, թէև անմշակ ոճով:

Մնացածը,—մի քանի բացառութիւններով, որոնք գրական արժանաւորութիւններ չունենալով, այնուամենայնիւ հեշտ ընթերցանութեան 'սիւթ կարող են ներկայացնել,—կամ գէկադէնտական զառանցանքներ են, պ. Միք. Իսրայէլեանի «Կուրի ափին ցնորում եմ»-ի նման (№ 28), կամ այնպիսի բաներ, որոնք գրագէտ խմբագրութիւնները մէջ իրանց տեղը գտնում են զամբիւղի խորքում:

«Նոր-Դարի» անցեալ տարուայ համարներում մեր գեղարուեստական գրողներից հանդիպում ենք միայն պ. Պոօլեանցին, որ այդ լրագրի մի քանի համարներում տպել է մի «աւանդութիւն» «Եօթն եղբօր գերեզմաններ» վերնագրով: Հեղինակը երկար ու բարակ, ինչպէս ինքն ասում է, նաղլ է անում այդ աւանդութիւնից և ի վերջոյ ստացւում է մի թոյլ վէպիկ, որ սակայն հետաքրքրական է իր մանրամասնութիւնների մէջ:

«Լումայ» վեցամսեայ հանդէսի անցեալ տարուայ երկու գրքոյկների մէջ մենք գտնում ենք դարձեալ պ. Պոօլեանցի «Կնուճք» վէպիկը և պ. Յարութիւն Թումանեանցի «Մեկը-Իւսուփ» պատմական պօէման:

Պ. Թումանեանցի պօէման կարգացւում է հետաքրքրութեամբ և կարող էր համարուել մի գրուածք առանց մեծ արժանաւորութիւնների, բայց և առանց մեծ պակասութիւնների, այսպէս ասած՝ безъ особыхъ примѣтъ, եթէ հեղինակը երբեմն-

երբեմն չը մեղանչէր հայոց լեզուի և չափաբերական արուեստի կանոնների դէմ: Պատահում ենք նոյն իսկ ամբողջ տուններ, որոնք այդպիսի մեղանչումների մի շարք են. օրինակ XIII-րդը.

«Ամուսնու մահուան ցաւն ու կսկիծը
Դեռ չէր փարատուել նրա սրտիցը,
Երբ նենգ, ընչաքաղց Թամրազը դաժան՝
Շլացած փառքով մշտընջենական (?)՝
Յափըշտակել էր, կողոպտել եղբօր
Գոյքը սեփական, բարիքը բոլոր,
Հալածանքների մասնել Իւսուֆին,
Հարսահարում, ընկրնում ուրբին:
Իւսուֆի կեանքը Թամրազի համար
Անտանելի էր, դառնագին խապառ»:

Գեղեցիկ է մանաւանդ այդ ընկրնումը:

«Թատրոն»-ի անցեալ տարուայ դրքոյկում առաջին անգամ տպուած է մի հին դրամա, պ. Մուրացանի «Ռուզանը», որի մասին պ. Լ.-ի կարծիքը տպուեց «Մուրճի» № 3-ի մատենախօսական բաժնում:

VI

Գեղարուեստական թարգմանական զրականութիւնը նոյնպէս հարուստ չէ եղել անցեալ տարի: Ոչ մի կլասիկական գրուածք չէ թարգմանուել անցեալ տարի. չէ թարգմանուել նոյն իսկ ոչ մի մեծ գրուածք, եթէ չը հաշուենք Կամիլլ Ֆլամմարիօնի «Ուրանիա» աստղագիտական վէպը, որ թարգմանել է Ֆրանսերէնից պ. Հ. Առաքելեանը, և Սօզէ Էչէգարայի «Մարիանա» դրաման, որ թարգմանել է պ. Արսէն Կրասիլնիկեանը:

Ոչ գեղարուեստական գրուածքներից տարեկան տեսութեան մէջ յիշուելու արժանի են անցեալ տարի հրատարակուածներից միմիայն հետեւեալները—Արիստակէս արքեպիսոփոս Սեդրակեանի «Քահանայական ինդիքը» (տես «Մուրճ» № 1). 2) պ. Լէօի «Հայկական Տպագրութիւնը» (տես «Մուրճ» № 3). 3) պ. Երուանդ Շահաղիզի «Մկրտիչ էմիրն». 4) պրօֆ. Վինօգրազօվի «Ղասագիրքը ընդհանուր պատմութեան. մասն III. Նոր Դար». պ. Նիկ. Քարամեանի թարգմանութեամբ (տես «Մուրճ» № 3). 5) պ. պ. Կ. Կուսիկեանցի և Լ. Սարգսեանցի «Մայրենի խօսք» ձեռնարկը, որ, ազատ չը լինելով պակասութիւններից, այնուամենայնիւ բարձր է մինչև այժմ հրատարակուած նոյնանման ձեռնարկներից, և 6) պ. Լ. Սարգսեանցի «Հին ցաւ», որի

մէջ պարունակուած յօդուածներում,—որոնք արտատպուած են «Մշակի» 1895—98 թուականների համադրերից, բայց որոշ յաւելուածներով,—հեղինակը իրան յատուկ ուժեղ ոճով արտայայտում է, իմ կարծիքով, ամենաճիշտ հայեացքը մեր «Հին ցաւի»—հոգևոր դասակարգի մասին:

VII

Ահա և ուսահայերիս գրականութեան անցեալ տարուայ հաշուեկշիռը: Ողորմելի հաշուեկշիռ, կ'առէք ի հարկէ: Բայց զարմանալի կը լինէր, եթէ այդպէս չը լինէր:

Մեր գրականութիւնը նոր սկսուող գրականութիւն է. նա չունի հարուստ անցեալ, նա չունի բարոյական գրամագլուխ և այդ պատճառով ամբողջապէս կախուած է ներկայ հասարակական պայմաններից: Իսկ ինչ բարեյաջող պայմաններ է ներկայայնում այժմ ուսահայ հասարակութիւնը գրականութեան զարգացման համար:

Որպէս զի մի հասարակութեան գրականութիւն ծաղկի, պէտք է որ այդ հասարակութիւնը ներկայացնի մի քաղաքակիրթ ամբողջութիւն, որի մասերը սերտ կապուած լինէին միմեանց հետ ընդհանուր մտաւոր և բարոյական ինտէրէսներով, շահերով:

Ռուսահայերում հասարակութիւնը, ի հարկէ, փոքր ինչ քաղաքակիրթուել է անցեալի համեմատութեամբ, բայց նա քաղաքակիրթուել է միմիայն արտաքին կողմից. նրա մէջ սկսել է մուտք գործել կոլցուրան, այսինքն այն քաղաքակիրթութիւնը, որ չափուում է սապոնի գործածութեան աւելանալովը, բայց նա դեռ չէ դարձել քաղաքակիրթուած հասարակութիւն այդ բառի բարձր նշանակութեամբ, նրա մէջ դեռ մուտք չէ գործել ցիվիլիզացիան, այսինքն այն քաղաքակիրթութիւնը, որ չափուում է մտաւոր հորիզոնների լայնութեամբ, բարոյական պահանջների ոյժով, գեղեցկագիտական ճաշակի զարգացմամբ և ընդհանուր ձգտումների, իդէերի և երազների վսեմութեամբ, այսինքն այն բոլորով, որի արտայայտութիւնն է իսկապէս գրականութիւնը:

Բայց այդպիսով, կ'առարկեն դուրէ ինձ, մենք ընկնում ենք մի տեսակ կախարդուած շրջանի մէջ: Եթէ բարոյական շահեր, մտաւոր պահանջներ, վսեմ ձգտումներ չը կան, մենք աւում ենք, թէ գրականութիւնը չէ կարող զարգանալ, բայց չէ որ հէնց ինքը գրականութիւնն է, որ զարգայնում է հասարակութեան մէջ այդ պահանջները:

Այդ ճիշտ է: Եւ ինչքան էլ աղքատ լինի մեր գրականութիւնը, նա այնուամենայնիւ աշխատում է զարթեցնել այդպիսի պահանջներ, բայց որպէս զի նրա գործը յաջող զնայ, պէտք է. որ այդ գրականութեամբ հետաքրքրուողներ լինեն, իսկ այդպիսի հետաքրքրուողներ մեզնում չստ քիչ են:

Տ. Յ.

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն

(Առողջապահական ետիւդ)

XII

ՍԻՐՈՅ ԴԵՐԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Սիրոյ արտայայտութիւնները հմերի մէջ.—Նրա դերը ամուսնութեան ինկրում.—Հաճոյանալու բաղձանքը, իբրեւ բնագոյիւն զգացմունք.—Արդի հասարակութեան հայեացքը սիրոյ վրայ.—Հարուստ հարսնացուն.—Օժիտի անբարոյականացնող սլոքը.—Սէրը բաղաճում եւ գիւղում.—Հարուստ երիտասարդների պտակը.—Սէր եւ յափեսակում.—Սէրը կուրացնում է.—Նշանդրէֆի իմաստը.—Ամուսնացողների բնաւորութիւնների տարբերութիւնը.—Ծնողների դերը զաւակների ամուսնութեան մէջ.—Օջախը.—Պատակարգի, ծագման եւ զարգացման տարբերութիւնը ամուսնացողների մէջ:

Արդի հասարակութեան մէջ սէրը յետին տեղն է բռնում ամուսնութեան շարժառիթների շարքում, այն ինչ հին ժամանակներում նա ահագին, գերակշիռ դեր է խաղացած եղել այս հարցում:

Ի հարկէ այդ զգացմունքը ամեն դարերում եւ ամեն տեղ նոյնն է եղել, բայց նրա արտայայտուելու ձևերը տարբեր են եղած եւ կախուած ազգերի քաղաքակրթութեան աստիճանից:

Հնագոյն դարերում—իսկ մեր ժամանակները կիսավայրենի ազգութիւնների մէջ—աղջկայ առեւանգումն կամ զնուժն, որոնց մասին մենք սկզբում խօսել ենք, հիմնուած էր միմիայն սիրոյ զգացմունքի վրայ, այսինքն սիրած աղջկան տիրապետելու բաղձանքի վրայ:

Սիրած աղջկայ համար տղամարդը պիտի զոհաբերուէր անէր, որպէս զի արժանանար նրա սիրուն:

Այս զոհաբերութիւնը զանազան ձևեր էր ընդունում տարբեր երկրներում: Անսուտ կոչուած ցեղի մէջ ամուսնանալը մի շատ վտանգաւոր բան էր. հարսը պատկից յետոյ փախչում գնում էր ծնողների մօտ և փեսան պէտք է այնքան քաջ լինէր, որ զօռով մտնէր տուն և յափշտակէր նրան, ուշ չը դարձնելով գլխին տեղացող փայտի հարուածների վրայ: Մի ուրիշ տեղ նշանածը պէտք է ուղղակի կատաղի կռիւ մղէ իր հարսնացուի ու նրա ընկերուհիների հետ, որպէս զի մօտենայ իր կնոջը: Այս կռուի մէջ նա երբեմն սպանւում է, երբեմն կռիւը տարիներ է տևում, երբեմն էլ յաղթուած հաւանում է: Միջին դարերում ասպետները տուրնիրներ էին սարքում, մենամարտում էին իրար հետ, կեանքները զոհում, որպէս զի դուր գան սիրած էակին, կամ թէ չէ հաւաւոր երկրներ պատերազմի էին գնում—անուն վաստակելու և դուլցիմէին արժանի դառնալու համար:

Իբապէս սա նոյն դուր գալու ձևերն էին, որոնք մենք գտնում ենք կենդանիների մէջ ևս: Սիրամարգը փռում է իր պոչը, սոխակը գեղգեղում է իր դայլայլիկը որձերին հաճոյանալու համար:

Հաճոյանալ հաւանած էակին, սա մի բնազդային ձգտումն է, որ գտնւում է կենդանիների մէջ և որ մարդկային ցեղի մէջ իր գագաթնակէտին է հասել, ընդունելով իսկական բանական սիրոյ կերպարանը:

Սէրը այսպիսով տիրում է բնութեան մէջ, նրա հոգին է, նրա շունչը:

Սիրոյ մեծ ոյժով է կատարւում բնական ընտրողութիւնը, որով իրար հաւանում են ու միաւորւում այն էգերն ու որձերը, որոնք բնական յատկութիւններով միւսներից դեբաղանց են: Այսպէս է կենդանական աշխարհում, այսպէս է եղել առաջ և մարդկային ցեղի մէջ:

Բայց կեղծ քաղաքակրթութիւնը, որ խեղդել է կամ աղաւաղել մարդուս մէջ շատ բնազդային լաւ յատկու-

թիւններ, աշխատում է խեղդել և հէնց խեղդել է այս ամենասուրբ զգացմունքը ևս:

Այս, սէրը կորցրել է իր հրապոյրը, իր մեծ դերը: Արդի ամուսնութիւնը (այս կանոնաւորուած բնական ընտրողութիւնը) աւելի ուշադիր է դէպի կողմնակի հանգամանքները, քան սէրը, և սա մի մեծ չարիք է, մի ահագին անբախտութիւն, որ եկել է մարդկութեան գլխին:

Ժամանակակից հայերիս վերաբերմամբ ևս իրաւացի են բժիշկ Մինեկրելի խօսքերը.

«Մեր հասարակութիւնը, ասում է նա, հեռացել է ամուսնութեան իսկական նպատակից, և սա դարձել է ուղղակի մի աճուրդ: Ո՛չ ոք, նախ քան ամուսնանալը, չէ հետաքրքրւում իմանալու թէ ինչ բարոյականութեան, ինչ բնաւորութեան, ինչ յակումների տէր է այն անձը, որի հետ պէտք է յաւիտեան կապի իր կեանքը: Միակ հոգսը, միակ խնդիրը դառել է հարսնութիւնը, օժիսը, որ բոլոր առաքինութիւններից բարձր է դասուում»:

Եւ, յիրաւի, գլխաւոր դերը խաղում են օժիտը, հասարակական դիրքը և այլն, բայց ոչ սէրը: Այն ինչ սէրն է ընտանիքի բախտաւորութեան միակ երաշխաւորը. այն ինչ նա է, որ պիտի լուսաւորի, ազնուացնի, բանաստեղծական ոգի ներշնչի առօրեայ տաղտկալի կեանքին:

Շատերը, իբր թէ առաջաւոր գիտական գաղափարներով լցուած, սէրը համարում են հիւանդական երևոյթ: Եթէ մէկը սիրում է առոյգ սիրով, որին զօհում է ամեն բան, զօհում է իր հասարակական դիրքը, իր փայլուն ապագան, — շատերը կարծում են, թէ այդպիսիները փսիսօպատներ են, տխմարներ:

Գիտութիւնը, նրանց կարծիքով, միանգամայն հերքում է այս զգացմունքը: Չէ որ սէրը կիրք է, իսկ ամեն կիրք պիտի խեղդուի, հետեւաբար ամեն «խելօք» մարդ պիտի խեղդի իր մէջ սէրը:

Այս է իսկապէս այն գիտական կոչուած հի-

մունքը, որով սէրը աւելորդ բալլատ է համարուում ամուսնութեան խնդրի մէջ:

Բայց սէրը հերքողները ընդհանրապէս գիտնական լինելու հաւակնութիւն չունեն: Նրանք աւելի գործնական դիտումներով են, որ խուսափում են իսկական սիրուց: Հաշիւը, շահը ընտանիք կազմելու միակ պատուանդանը դարձած, անհրաժեշտաբար պիտի դարձնէր մարդուն փարիսեցի, ստախոս, պիտի ստիպէր նրան սիրահարուած ձեանալ, որպէս զի հարուստ կլին ուզելիս կարող լինի իր պրօզայիկ ձգտմանը բանաստեղծական աստառ կպցնել...

Անտարակոյս ոչինչ չը կայ զգուելի, քան այս կեղծումը, որ ստորացնում է մարդուս:

Ես չեմ մոռանալ այն խօսքերը, որ մի ֆրանսիական (Օգիւստ Վալըրի) պիէսի մէջ արտասանում է մի հարուստ աղջիկ, երբ հայրը զարմացած հարցնում է, թէ ինչի՞ է բոլոր փեսացուներին մերժում:

— Մի՞թէ կարծում ես, հայրիկ, որ իւղաներկ պատկերը ուրախ է, երբ փառահեղ չըշնանկի մէջ է դրուած: Ես համոզուած եմ, որ կան գրքեր, որոնք նախանձում են իրանց կազմին: Ես էլ օժիտիւ եմ նախանձում. նրա շնորհիւ են երիտասարդներն այցելում մեզ, նրա վրայ են սիրահարում: Նա վտանգաւոր ախոյեան է ինձ համար: Ես կը փափագէի արտաքսել նրան, աղքատ մնալ: Ո՛վ դիտի, գուցէ կայ մի ազնիւ երիտասարդ, որին ես հաճելի եմ, բայց նա չէ համարձակուում իր զգացմունքը արտայայտել, երկնչելով մի գուցէ կարծեն, թէ հարստութեան համար է: Իսկ եթէ մէկն էլ վստահութիւն է ունենում խօսելու, խօսում է այնպիսի խուլ ձայնով, որ նրա խօսքերը կորչում են մեր տանը շարժուող ոսկու աղմուկի մէջ: Լռեցրու ոսկու այդ աղմուկը, որպէս զի ես կարողանամ լսել նրանց ձայնը և լսածիս պատասխանել:

Ո՛րչափ հոգեբանութիւն կայ այդ մի քանի խօսքերի

մէջ, և որքան լրջահայեաց ու խելացի պիտի լինի աղջիկը, որ կարողանայ այդ դժուար հարցը վճռել:

Յաւակցաբար մեր օրիորդները այդչափ գիտակցութիւն չունեն, և օժիտը նրանց (կամ, աւելի ճիշտ ասած, նրանց ծնողներին) ձեռքին մի լաւ միջոց է «փեսայ որսալու»:

Եթէ կան «փեսայ որսողներ», աւելի ևս բազմութիւն են հարուստ հարսնացու ճանկողները:

Ի հարկէ, լինում են դէպքեր, երբ երիտասարդը հաւանում է ու անկեղծօրէն սիրում մի հարուստ աղջկայ, բայց ընդհանրապէս նա սիրում է օժիտը, նաւթաբաժինները և ամուսնանում է դրանց վրայ և ոչ թէ աղջկայ:

Այս դէպքում արդէն փեսան ստորանում է մինչև շողագործութիւն, ստութիւն, կեղծիք...

Օժիտի անբարոյականացնող ոյժը յայտնի էր հին դարերում ևս: Պատմում են, որ Սօլօնը (յունաց մեծ օրէնագիրը) նկատելով, որ կանայք փողով իրանց ամուսին են գնում և այդպիսով պսակը մի առևտուր դարձնում, հրամայեց, որ կինը իր հետ երեք ձեռք հագուստ միայն բերի և մի քանի էժան կարասիք:

Սօլօնի պատուէրը երևի արմատախիլ չարեց օժիտի սովորութիւնը, որ այսօր իր դադաթնակէտին է հասած և ամբողջովին խեղդել է դէպի ամուսնութեան միող միւս բոլոր շարժառիթները:

Մեզ նման մի կիսաքաղաքակիրթ ազգի մէջ այս պայմաններում կատարուած միութիւնը հազիւ թէ անվերդով ֆնայ: Եւ, յիշաւի, մեր մէջ հազուադէպ են հարուստ տղամարդիկ, որոնք իրանց աղքատ կնոջ չը յիշեցնեն մի օր օրիորդ ժամանակուայ չքաւորութիւնը:

Անողոր է քաղաքային հասարակական կեանքը դէպի իսկական սէրը, նստատող չէ այդ սիրուն նաև գիւղական կենցաղը:

Գիւղում սէրը «յետոյ է գալիս», պսակից յետոյ,

քանի որ պսակից առաջ աղջիկների ու տղաների մէջ յարաբերութիւնները որոշ հասակում արդէն կտրուում են, ճիշտ այն հասակում, երբ նրանք նոր ընդունակ են դառնում ճանաչելու և դնահատելու միմեանց: Երբ որ աղջիկը «հասած» է, նա հարսնացուների շարքն է անցնում և դադարում է տղաների հետ խօսելուց ու խաղալուց: Այսպիսով գիւղումն էլ սէրը անկարող է լինում զարգանալ. «հաւանում են» ծնողները, երեխաներին մնում է միայն—գնալ եկեղեցի իրանց այսօն ասելու, երբեմն հէնց այնտեղ էլ իրար հետ ծանօթանալու... Յայտնի է, որ մեր մէջ այսպիսի պսակները առօրեայ երևոյթ են, գոնէ գիւղերում, որտեղ տղայի մայրը տան «բան անող», իր համար օգնական է բերում տուն և ոչ թէ հարս, և որտեղ սակաւ չեն նաև բաշխարքմաները ծծիկեր երեխաների մէջ:

Այս է ահա սիրոյ վիճակը.—նա վռնդուած է հասարակութեան համարեա բոլոր խաւերի միջից:

Կայ սակայն մի դասակարգ, որ առերես իսկապէս ոչ մի ակնկալութիւն չպէտք է ունենար աղջկանից և որ կարող էր թոյլ տալ իրան այդ աւելորդ շքեղութիւնը—սիրային ամուսնութիւն. դա մեր հարուստ, միլիոնատէր երիտասարդների դասակարգն է: Եւ, իրօք, պատահում են դէպքեր, երբ մի հարուստ երիտասարդիկն է վերցնում աղքատ, անյայտ անից. բայց այս օրինակները ցաւակցաբար նոյնպէս բացառութիւն են: Այստեղ ևս դժուար է հաստատ ասել, թէ դա իսկական սէր է եղել: Յաճախ այսպիսի պսակները կատարում են զարմանալի արագութեամբ մի-երկու շաբաթուայ ընթացքում, որի միջոցին ի հարկէ անհնար է փոխադարձ յակման ծագումն ու զարգանումն: Աղջիկը գեղեցիկ է, բաւական է. այսպիսի զգացմունքը չէ կարող ի հարկէ երկարատե լինել.—չուտ թէ ուշ նա կ'անցնի, և լաւ է, եթէ նա փոխուի իսկական սիրոյ,—ցաւակցաբար յաճախ նա թողնում է իր ետեւից միայն զղումն: Իսկական սէրը ոչինչ առնչութիւն չունի յափշտակման հետ,

—Նա գոյանում է ու զարգանում նոյնչափ ուղեղի մէջ, որչափ սրտի, որովհետեւ խեղբի, բանակութեան կօնուրօլի տակ է կռում-կոփում առողջ սէրը:

Ջահէլ աղջիկները, սեռական հասունութեան մէջ յափշտակում են մի երիտասարդով, նրա մէջ գտնելով այն բոլոր յատկութիւնները, որոնք նա ուսումնասիրել է Շէկսպիրի Բոմէօյի, Գեթէի Հերմանի, Աբբայ Պրեփօյի Պօլի մէջ: Մանաւանդ որ ինքը ժիւլիետաւ, Դօրօթէան, Վերջինին է դառնում: Մատաղ աղջկայ վառ երեակայութիւնը, նրա բանաստեղծական հոգին իդէալացնում են սիրած երիտասարդին, աղնուացնում են նրա նոյն իսկ վատ կողմերը, կամ քողարկում են աչքեփց նրա պակասութիւններն ու արասները:

Այստեղ քննադատական ոգին կորած է, այստեղ «սէրը կուրացրել է» աղջկան: Սրա միակ իդէալն է— նուիրել, զոհել իրան այդ երիտասարդին, դառնալ նրա գերուհին,—միայն թէ մօտ լինէր նրան: Եւ այդպիսիները դցում են իրանց սիրած մարդու գիրկը, առանց տատանուելու, առանց քննադատութեան, և երջանիկ են զգում իրանց մինչև այն սոսկալի ժամը, երբ քօղը ընկնում է աչքներից ու անմխիթար, տղեղ իրականութիւնը բացւում է նրանց առջև իր բոլոր յուսահատեցնող անձոնիւթեամբ: Մեր դարը այնչափ «գործնական» է դարձել, որ ցաւակցաբար մենք պարտաւոր ենք զգուշացնել մեր օրիորդներին այրի երիտասարդների ստախօս ու վաղաքշտ լեզուից. բայց այդ չէ նշանակում ի հարկէ, թէ սրանց մէջ չը կան և անկեղծ մարդիկ:

Այնուամենայնիւ, անկեղծը կեղծից ջոկելու համար հարկաւոր է երկար ծանօթութիւն: Դա նոյնչափ կարևոր է աղջկայ համար, որչափ և տղայի, որովհետեւ աղջիկները նոյն չափով ձևացող են ու կեղծող: Երկար ծանօթութիւնը հնարաւորութիւն է տալիս աւելի սառնասիրտ վերաբերուելու դէպի մարդիկ, աւելի քննադատական աչքով նայելու նրանց վրայ:

Նշանդրէքը անտարակոյս նոյն նպատակն է ունեցել սկզբներում: Մօտեցնելով միմեանց փեսացուին ու հարսնացուին, նա միջոց էր տալիս նրանց աւելի մօտ ճանաչել իրար: Յաւակցաբար այս սովորութիւնը այժմ ծէս է դարձած և նշանածները այլևս անբաժան են համարում, թէև զղջացած լինէին: Այն ինչ նշանդրէքը մի իմաստ կ'ունենար, եթէ ամօթ չը լինէր, որ նշանդրածները հեռանային իրարից, երբ չեն հաւանում միմեանց: Ինչ և իցէ, ահագին կարևորութիւն ունի այն հարցը, թէ որչափ ժամանակ է անցնում նշանդրէքի ու պսակի մէջ: Չափազանց կարճ ժամանակամիջոցը բաւարար չէ նշանդրածներին իրար ճանաչելու համար, իսկ չափազանց երկար նշանդրած մնալն էլ սառնութիւն է գցում նրանց մէջ:

Եթէ նշանդրածները հիասթափուում են, հազար անգամ աւելի լաւ է ազնուաբար բաժանուել, քան թէ անբախտ ամուսնութիւն կազմել, երկնչելով «ինչ կ'սկսեն»-ից:

Մի հոգեգէտ շատ իրաւացի կերպով նկատում է, թէ ցանկալի չէ, որ ամուսինները միատեսակ բնաւորութիւն ու միատեսակ տեմպերամենտ ունենան: Ընդհակառակը կապը աւելի ամուր է այնտեղ, որտեղ բնաւորութիւնները միմեանց լրացնում են կամ, աւելի ճիշտն ասած, քիչ են հակառակ լինում: «Երկու կրքոտ և հեշտ բռնկուող բնաւորութիւններ նոյնչափ քիչ շանս ունեն երջանիկ լինելու, որքան երկու չափազանց հանդարտ ու անտարբեր անձինք»:

Տղամարդը պիտի բերի կամքի ոյժ, տոկունութիւն, դործնական խելք, առողջ, մեծ զգացմունքներ, իսկ կինը—հեղուութիւն, քաղցրութիւն, մեղմութիւն իր բոլոր դործերում:—Երկուսը ևս համբերողութիւն:

Անտարակոյս անբախտ ամուսնութիւնների մեղքը մեծ մասամբ, եթէ ոչ անբողջովին, ծնողների վրին է:

Նրանք, իբրև աւելի հմուտ մարդիկ, պիտի ղեկավարեն իրանց զաւակներին ընտրութեան գործում: Իրապէս ծնողների բոլոր բարեացականութիւնը կայանում է մեզ մօտ նրանում, որ իրանց որդու համար «լաւ հարսնացու» կամ «լաւ փեսացու» են ճարում: Իսկ «լաւ» ասելով նրանք հասկանում են հարուստ, լաւ դիրք, գեղեցիկ արտաքին ու լաւ կապեր ունեցողին:

Այս յատկութիւնները բաւարար են համարւում, քանի որ ներքին աշխարհը քողարկուած է պահւում դիտողի աչքից:

«Էլ չեն հարցնում, ասում է Դրբէն, թէ ինչ ձրգտումների, ինչ կրքերի, ինչ բնաւորութեան ու բարոյականութեան տէր է իրանց աղջկայ ձեռքն ուզողը: Ամենքի վրայ նայում են հարստութեան տեսակէտից և ի նկատի են առնում միայն այն դիրքը, որ փեսացուն կարող է տալ իր ապագայ կնոջ: Եւ, երբ որ այսպիսի շարժառիթներով մարդու տուած աղջիկը անբախտ է դուրս գալիս, այն ժամանակ ծնողները էլ խօսք չեն գտնում կշտամբելու ու հայհոյելու իրանց փեսային ու երես են դարձնում նրանից, մոռանալով, որ իրանք են խեղճ աղջկայ դժբախտութեան պատճառը: Ձէ՛ որ իրանք էին, որ ետ մղեցին այն աղքատ փեսացուն, որին սիրում էր աղջիկը և որ ազնիւ մարդ էր, և ետ մղեցին այն պատճառով միայն, որ աղքատ էր... Ծնողի հեղինակութիւնը իր զաւակի ամուսնութեան խնդրում ահագին է: Սակայն նա էլ պէտք է լուրջ նայի խնդրին և գիտակցօրէն վերաբերուի:

Բաղմամբիւ օրինակներից կարելի է դուրս բերել, մեր կարծիքով, այս ընդհանուր կանոնը.

Ծնողները կարող են և պարտաւոր են խանդարել ցանկացած ամուսնութիւնը (եթէ ի հարկէ անյարմար են համարում նրան), բայց երբէք չը պէտք է ստիպեն նրան ամուսնանալու իրանց (ծնողների) ընտրածի հետ:

Նրանք երբէք չը պէտք է մոռանան, որ փեսան

իրանց համար չէ, այլ իրանց աղջկայ համար է, որ իրանք կը մեռնեն, իսկ աղջիկը ստիպուած է յաւիտեան ապրելու իր ամուսնու հետ: Ես կարծում եմ, որ եթէ բոլոր ծնողները հասկանան այս տարրական բանը, այն ժամանակ զօռով չեն «կապի իրանց զաւակի վրին» մի փեսացու, որին աղջիկը չէ հաւանում և երբեք չի սիրելու:

Եթէ աղջիկը յափշտակուած է մի անարժան մարդով, ծնողների պարտքն է համոզել, խրատել ու մեղմութիւնով, սիրով ու բարեկամաբար ետ կանգնեցնել իրանց զաւակին սխալ քայլից. իսկ եթէ համոզմունքը չէ ազդում, յետաձգել պսակը երկար ժամանակով, միջոց տալ աղջկան լուրջ խորհելու, իր սիրածին ուրիշների հետ համեմատելու:

Իսկ եթէ աղջկայ ընտրած փեսացուն ամեն տեսակէտից արժանի անձնատրութիւն է, բայց միայն չքաւոր է կամ ծագում չունի և այլն, այն ժամանակ ծնողները բարոյական ոչ մի իրաւունք չունեն արգելելու այդ ամուսնութիւնը:

Թող յիշեն նրանք Թեմիստոկլէսի հռչակաւոր պատասխանը իր աղջկան ուղղղ երկու փեսացուներին, որոնցից աղջիկը աղքատին էր հաւանել. «Ես գերադասում եմ մարդուն առանց փողի, քան փողը առանց մարդու», կամ այն վաճառականի պատասխանը, թէ «ինձ աւելի հաճելի է, որ իմ աղջիկը երջանիկ լինի ոչ ազնուական մարդու հետ, քան գժբախտ—դքսուհու տիտղոսով»:

Բայց որպէս զի զաւակները ընդունակ լինեն լաւ ընտրութիւն անելու, ծնողների պարտքն է վաղօրօք հասկացնել նրանց, թէ ինչ է ամուսնական կեանքը, ինչ է ամուսինը, մայրը և ինչ են նրա պարտականութիւնները: Նրանք պիտի հասկանան, որ շատ անբախտութիւններ աղջկայ կեանքի մէջ հետեանք են այն անգիտութեանը, որի մէջ պահւում է «լաւ կրթուած»

«միամիտ» աղջիկը և որի պատճառով այս խեղճը նե-
տում է իրան առաջին փաղաքշողի գիրկը...

Շատ անբախտութիւններից է փրկում մեղ մեր
յարգանքը դէպի օջախը: Օջախը մեծ նշանակութիւն
ունի մեր մէջ հարս ու փեսայ ընտրելու հարցում: «Աղ-
ջիկը լաւ տնից է», և այդ հանգամանքն իրաւացի կեր-
պով համարւում է բաւարար գրաւական, որ նա բա-
րոյական կին կը լինի ու լաւ մայր: Ի հարկէ լաւ օջա-
խից զաւակ լինելը բացարձակ դարանաւիա չէ, բայց
ժառանգականութեան օրէնքին համաձայն, պէտք է
յուսալ, որ լաւ ընտանիքներում, աւելի հեշտ է դտնել
լաւ փեսացու ու լաւ հարսնացու, քան վատերում:

Մեր կիսակիրթ հասարակութեան մէջ ցաւակցա-
բար դեռ ևս կրթութիւնը, բարոյականութիւնը, ազնւ-
ւութիւնը չեն կարողանում մոռացնել տալ usnr ծա-
գումն: Մի արիստոկրատ կոչուած երիտասարդ միշտ
մի քանի աստիճանով բարձր է կարծում իրան իր
կնոջից, որ մի որ և է բազազի աղջիկ է, թէկուզ այդ
մեջանկաւն իրանից աւելի կրթուած, աւելի զարգա-
ցած լինէր: Եւ ընդհակառակը:

Այս տխուր երևոյթը ի հարկէ անբաղադրակրթու-
թեան նշան է, մտաւոր մակերևոյթի ցածութեան ար-
տայայտութիւն է, այնու ամենայնիւ ամուսնական
խնդրում նա պիտի հաշուի առնուի:

Բեմի վրայից յաճախ նշաւակուել է այս արատը.
շատ պիէսներում դուրս են բերուել այն դատարկա-
սիրտ ու դատարկազլուիս «արիստոկրատները», որոնք
«իրանց քայքայուած ֆինանսները դրստելու համար»
պսակւում են մի որ և է հարուստ մեշչանկայի վրայ,
և յետոյ արհամարհանքով, իրանց արիստոկրատութեան
բարձրութիւնից նայում նրա ու նրա ծնողների վրայ,
անդադար զգալ տալով, որ մեծ բարերարութիւն ու
պատիւ է արել նրանց...

Եթէ այդպիսի անախորժութիւնների, եթէ չստենք

ռազմակի անդադար կռիւների, առիթ են տալիս կարողութեան ու ծագման անհաւասարութիւնը, ինչ հետեանք պիտի ունենայ ընտանեկան կեանքում ամուսինների մտաւոր զարգացման տարբերութիւնը:

Այս խնդրի լուծումն չափազանց դժուար է, քանի որ այս տարբերութիւնը կարող է շատ մեծ լինել, հետեանար և տարբեր կերպով կարող է ազդել ընտանեկան երջանկութեան վրայ:

Եթէ, օրինակ, մարդը համալսարանական է, իսկ կինը գիմնազիան աւարտած աղջիկ, նրանք կարող են դադարակից լինել և հասկանալ միմեանց: Իսկ եթէ կինը բոլորովին ուսում չունի, իսկ ամուսինը մեծ ուսման տէր է, կամ ընդհակառակը. երբ մի լաւ կրթուած, ուսում առած աղջիկ (ի հարկէ աղքատ) մի դուռնիկ, անկիրթ ու անուսում տղայի (ի հարկէ հարուստ) կին է դառնում, այն ժամանակ նրանց մէջ բիշ վերեւ նկարագրուած յարաբերութիւններն են սահմանուում: Վերջին ձևի կապերը այժմ աւելի յաճախ են տեղի ունենում շնորհիւ այն զարմանալի երևոյթի, որ գիւղից եկած ու նոր տուէրները հանած երեկուայ հասարակ բանուորը, բախտի բերմունքով յանկարծ ահագին կարողութեան տէր է դառնում: Բագուն այդպիսի սիրպրիդներ սիրում է անել: Ի հարկէ այդպէս հարստացածը իր աղջկան էլ հասարակ մարդու չի տայ. — փողի զօռով և մեր երիտասարդների ստոր փողատիրութիւնից էլ օգտուելով, հեշտութեամբ իր աղջկայ համար մի ինժեներ, կամ մի բժիշկ կը ճարի: Մենք վերցրինք ծայրայեղ դէպքեր, բայց ոչ բացառիկ դիտող աչքը ամեն տեղ տեսնում է այդպիսի օրինակներ: Ընդհանրապէս ամուսինները այսչափ չեն տարբերում միմեանցից կրթութեամբ, և սիրող մարդը հեշտութիւնով կարող է կրթել-զարգացնել իր կնոջ և բարձրացնել-հասցնել նրան իր զարգացման մակերևոյթին: Գիւղական ազգաբնակչութիւնը այնչափ պահանջող չէ դէպի կինը. անուսում լինելը մի խոչընդոտ չէ լաւ

ընտանիք կաղմելու համար, բայց քաղաքային կեանքում արդէն մեր մէջ ևս սկսւում է ծագել հասարակական կրթութեան պահանջ:

Սէրը, փոխադարձ յարգանքը հաւասարեցնում է ամուսիններին, ինչ պասակարգի էլ պատկանէին նրանք, ինչ շրջանից էլ դուրս եկած լինէին: Ընդհակառակը, երբ այս փոխադարձ համակրութիւնը բացակայ է, այն ժամանակ ամենամանր անհարթութիւնները սարեր են դառնում, որոնք բաժանում են կենակիցներին միմեանցից:

Շատ միամիտ (յամենայն դէպս չափազանց մեծամիտ ու ինքնահաւան) է այն մարդը, որ կարծում է, թէ սլսակուելուց յետոյ իրան «սիրել կը տայ»: Յաճախ զուր կը լինի նրա ջանքերը.—դուցէ աղջիկը հեղ ու հնազանդ կին դառնայ և օրինակելի մայր, բայց նրա սիրտը միշտ սառը կը մնայ, ինչպէս դերեզման: Մի անդունդ յաւիտեան կը բաժանի երկուսի սրտերը, —անդունդ, որ անկարող կը լինեն լցնել աշխարհիս բոլոր աղամանդները...

XIII

Վ Ե Ր Ձ Ի Ն Խ Օ Ս Ք

Բնութեան կենսական ոյժը.—Հիւանդոս սերունդների վիճակը.—Ընտանիքների եւ ազգերի բարոյական անկումն.—Կենդանական ու բուսական ցեղերի ազնուացումն.—Վերջին խօսք:

Սքանչելի բնութիւնը անդադար բեղմնաւորւում է ու մայրանում: Կեանքի թելը չէ կտրւում երբեք: Նա անցնում է անհամար դարերի միջով, որովհետեւ հիւսուած է բնութեան անսպառ կենսական նիւթերից:

Կեանքը մահից է ծնւում:

Հինը, փտածը, քայքայուածը մեռնում է, ձուլւում մայր բնութեան հետ, և կեանքի այս փլատակների միջից բուսնում են նորանոր կեանքեր:

Եւ միայն կենդանիներն ու բոյսերը չեն, որ ապրում են ու բեղմնաւորում: Քարն ու հողը, ջուրն ու օդը նոյնպէս ապրում են բնութեան այն ոյժով, որ մահուան մէջ ևս կեանք է դրել: Եւ յրչափ մեծ է այդ ստեղծագործիչ ոյժը. ամեն կենդանի էակ, ամեն բոյս իր մէջ պարունակում է անհամար կեանքերի սաղմեր. նորածին աղջիկը կրում է իր մէջ 300,000 երեխայի սերմեր, տղան աւելի ևս:

Եթէ այս բոլոր սերմերը բեղմնաւորուէին, երկրի երեսը մի օրուայ մէջ կը ծածկուէր բոյսերով ու կենդանիներով:

Բայց այս սոսկալի աճումն խանգարում է կեանքի կռիւը:

Կեանքի կռիւը, ապրելու այս պայքարը կատաղի կերպով մղում է ամեն տեղ, բնութեան բոլոր անկիւններում, կենդանական ու բուսական էակների մէջ:

Ամեն էակ կռւում է այն զէնքով, որ բնութիւնը նրա ձեռքն է տուել: Այս անողորմ պատերազմի մէջ ընկնում, տապալւում, ոտի տակ տրորւում է տկարը, անզէնը: Այսպիսով անհետացել են, ու մեր աչքի առջև անհետանում են բուսական և կենդանական ցեղեր, մարդկային ամբողջ ազգեր:

Ասպարէզը մնում է ուժեղին, յաղթողը նա է, ով լաւ զինուած է այս կռուի համար, ով ստացել է բնութիւնից փիղիկական ու մտաւոր զօրեղ ոյժ, դիմացկոտութիւն, տոկունութիւն:

Ի՞նչ պատասխանատու դործ—ծնունդ տալ նոր էակի:

Այս էակը հիւսուած է մեր սեփական կաղմուածքի հիւթերից,—այսպիսով նա մեզ է նմանում: Նա ժառանգում է մեզնից իր փիղիկական և բարոյական յատկութիւնները:

Տկար ծնողները օր են տալիս տկար, ցաւադար ու արատաւոր սերնդի, որ անընդունակ է դիմանա-

լու կեանքի կռուին և խոնարհեցնում է իր գլուխը բախտի հարուածներին տակ... Այլասեռումն, ցեղի վատանումն, անուժանումն, ապրելու անկամութիւն և անկարելիութիւն:

Այո, պատասխանատու գործ է զաւակ ստեղծելը, գցել նրան կեանքի հնոցը անպաշտպան, անղէն, վատոյժ, այլասերուած և անպէտք կռուի համար:

Ինչ է այդ ողորմելի արարածի վիճակը:

Նա ոտի տակ է ընկնում, տրորւում, տապալւում կամ քարշ տալիս իր խղճուկ կեանքը, միշտ հասարակական ցած պատուանդանների վրայ մնալով, միշտ նախանձով ու ատելութեամբ նայելով ներքեւից վեր նրանց վրայ, որոնք տաղանդի, ընդունակութիւնների ու կամքի ոյժով բարձրացել են վեր, դէպի յաղթական պալատները...

Ինչ դառն, յուսահատեցնող վիճակ:

Ձգտել, փափագել հասնելու մի որ և է դրութեան, ուսանել ամբողջ տարիներ, նոյն իսկ համալսարան աւարտել և անդադար զգալ իր մարմնի խորքերում հիւանդական ժառանգական սաղմերի աճումն ու անդադար զարգանումն, որ կամաց-կամաց անողորմ կերպով բարակացնում է կեանքի թելերը:

Սարսափելի է, այո, տարիներով ճգնել մի արհեստ, գիտութիւն ձեռք բերելու, և երբ որ վաղեմի փափագին հասած, մարդ յուսալից սրտով պատրաստւում է ոտք դնել կեանքի մէջ, յանկարծ սոսկալի թորախտը տապալում է խեղճին ծաղիկ հասակում, կամ ժառանգական ներկայութիւնը մղում է դէպի խելագարութիւն և ինքնասպանութիւն:

Մեռնել, ոչնչանալ, երբ այդչափ կենսական ոյժ է զգում մարդ իր մէջ, երբ այդքան պայծառ է փայլում կեանքի արևը, անհետանալ հազիւ աչքերը բացած, հազիւ երկրի բարիքների համն առած, հազիւ իր երակների մէջ կեանքի հոսանքն զգացած: Անհետանալ, կորչել և այն էլ ծնողների մեղքից...

Ծնողներ. որչափ խղճալի են դրանք ևս. ինչ անմխիթար, սիրտ տոչորոզ կսկիծ, տեսնել ինչպէս աչքի առաջ հալւում են որդիքը, անվերջ տարիներ դիտել սիրած էակներին արատաւորուած, հիւանդոտ, այլանդակուած—մէկը խուլ-համր, միւսը ընկնաւոր և հիստերիկ, մի երրորդը անդլիական ախտով բռնուած, կուզիկ, ողնաշարը կորացած, յօդերն ուռած, ոսկորները փտած, մի ուրիշը սակաւարիւն, նիհար, կուրծքը խոր ընկած, նուազ, բարակ անդամներով, վզի խլերը բորբոքուած, թարախակալած, ու հազը, թոքախտի այդ սարսափելի նշանը, կրծքում...

Եւ եթէ մահը առժամանակ խնայում է այս տառապեալներին, այս այլասերուածներին, ծնողներին վիճակուած է ականատես լինել այս թոյլ էակների անյաջողութեանը կեանքի կռուի մէջ, նրանց ոստումները կեանքի ուղիում, նրանց անկամութեանը, նրանց տանջանքներին ու յուսահատութեանը, նրանց վերջնական տապալմանը:

«Այո, նոր էակի ստեղծելը մի ծանր գործ է, ասում է Կադալիս: Ստեղծել և ստեղծելիս նրա աչքերը կուրացնել, ականջները խլացնել, կամ դարձնել նրան անդամալոյծ, պակասաւոր, արատաւոր, կամ նրա ուղեղի վրայ այնպիսի դրոշմ դնել, որ երեխան ծնւում է անխելք, ապուշ, անբնական, վտանգալից թէ իր և թէ ուրիշների համար, ծանր բեռն թէ իր և թէ ուրիշների վզին,—ստեղծել, գցել նրան կեանքի մէջ, որտեղ նա իր արատաւոր կազմութեամբ, իր ներվային վրիպութիւններով պիտի հանդիպի ամենադժբախտ վիճակի»:

Ընտանիքը բաղկանում է անհատներից, ազգը ընտանիքներից:

Եթէ ընտանիքի անդամները տկար են, վատասերուած,—տկար ու վատասերուած է և ազգը:

Եթէ անհատները անընդունակ են դառնում իրանց

գոյութիւնը պահպանելու և կորչում են,—կորչում և անհետանում է նաև այն ազգը, որ այդպիսի անհատներից է բաղկացած:

Անողոր է այդ բնական օրէնքը, անդիմադրելի է այն սարսափելի հոսանքը, որ քչում տանում է վատասերուած ազգերը:

Մեր ազգը արդէն ընկած է, աւելի ընկած, քան թէ կարծում ենք: Պէտք է կոյր լինել չը տեսնելու համար այս արագ գլորումն, ազգային տոկուն դիմացկոտութեան փլատակուելը կեղծ բաղաքակրթութեան ազդեցութիւններից: Ազգերի ֆիզիկական կորստեանը առաջնորդում է բարոյական այլասեռումն, այո՛, ազգային ոգու, աւանդութիւնների, դարեւոր փայփայած ու մշակուած գանձերի կորցնելը ազգութեան կորստի առաջաւոր երևոյթներն են: Երբէք, մեր երկար պատմութեան ընթացքում, մեր ցեղը այսչափ մօտ չէ եղել ջընջման և երբէք մեր ժողովրդի բարոյական մակերևոյթը այնքան ստորացած չէ եղած, ինչպէս այսօր, այն ինչ երբէք նա չէր կարող այնչափ բարձր լինել, որչափ այսօր:

Այո՛, երբ շուրջը տեսնում ես միայն կեղծիք, երբ առևտուրը, աճուրդը սիրոյ ու համակրանքի տեղ են բռնում, երբ երեկուայ տրեխաւոր անգրագէտ, այսօր հարստացած գիւղացին ստորութիւն է համարում իր համագիւղացու աղջիկն ուղել, երբ համալսարան աւարտած, գիտութեան տաճարից նոր դուրս եկած երիտասարդը, վերագառնալով հայրենիք, որոնում է ոչ թէ սէր, այլ դիրք, այլ օժիտ, ինչ կրօնի և ինչ ազգութեան էլ պատկանէր այդ օժիտը, երբ մայրը իր ծրծկեր, դեռ ոչինչ չը հասկացող, մանկիկի ականջները լցնում է ամեն տեսակ հնչիւններով, միայն թէ մայրենի հնչիւններ չը լինեն նրանք, երբ մի ազգի մէջ կորել է ինքնաճանաչութիւնը, ինքնազգացումն, երբ отъ Бога отсталъ и къ черту не присталъ,—ճէ, այն ժամա-

նակ մօտ է այդ ազգի բարոյական անանկութիւնը, որին յաջորդելու է ֆիզիկական անհետանումն:

Մարդ սոսկում է, դիտելով այն սարսափելի ու անմիտ ինքնասպանութիւնը, որ կատարում ենք մենք մեր սեփական ձեռքով: Մի ամբողջ մարդկային ցեղ անձնասպանութիւն է գործում և այդ անում է կարծես գիտակցօրէն, համարեա համոզմունքով, որոշ պրօգրամով:

Միայն տխմարներն են կարծում, թէ մի ազգի բարոյական այլասեռումն անկախ է նրա ֆիզիկական ու առողջական դրութիւնից: Ո՛չ, բարոյական անկումն սերտ կապուած է ֆիզիկականի հետ և բարոյական արատի հիմքը ֆիզիկական պակասութիւնն է: Առողջ կազմուածքի, առողջ ուղեղի ու ներվերի տէր մարդը կ'ունենայ առողջ գիտակցութիւն, առողջ հայեացքներ, առողջ իդէալներ: Եւ այդ օրէնքը ամենքը կարող են ստուգել, նայելով իրանց շուրջը, դիտելով այն ընդհանուր ֆիզիկական ու բարոյական այլասեռումն, որ կլանել է մեր «ինտելիգենտ» կոչուած դասակարգը:

Եթէ ուսումնասիրենք «ինտելիգենտ գողի», նաւթախողովակներ ծակողի, կեղծ մուրհակներ գրողի ազգատոհմը, երևի մի օր և է ներվային արատ կը գտնենք:

Միայն ընտանիքները, լաւ կազմուած ընտանիքները կարող են փրկել մի ազգութիւն, և փրկութեան այդ զէնքն էլ գուլացել, փտել է:

Մարդիկ դարերի ընթացքում ձգտել են ազնուացնելու ձիերի, ոչխարների, նոյն իսկ կաքաւների ու շրների ցեղերը, ընտրելով ամենալաւ, ամենաառողջ անհատներ և միաւորեցնելով նրանց. այսինքն արել են *artificial selection* այն, ինչ որ բիւրաւոր դարերի ընթացքում բնականաբար անում է բնութիւնը: Այսպիսով համարեա ստեղծուել են նորանոր, աւելի դեղեցիկ, աւելի ուժեղ կենդանական ցեղեր:

Եւ մարդը, այդչափ հոգալով անասունների ազնուացման մասին, միանգամայն անուշադիր է մնացել դէպի իր ցեղի բարեխառնումն և նոյն իսկ կարծես ձրգտում է աւելի ևս վատացնելու նրան:

Նայեցէք ձեր շուրջը: Հարիւրաւոր գեղեցիկ, առողջ կաղմուածքի տէր օրիորդներ, որոնք կարծես հէնց մայրեր լինելու և յաղթանգամ, անարատ սերունդ տալու համար են ծնուած, սակայն օժիտի պակասութեան պատճառով տանն են մնացած. այն ինչ, ուրիշները, նուազ և այլասերուած արարածներ, ներվախտութեան ու տուբերկուօղի դաւալներ և թոքախտի թեկնածուներ, հեշտութեամբ մարդու են գնում, շնորհիւ նաւթային բաժնեթղթերի:

Իսկ տղամարդիկ, կորցրած ամօթն ու բարեխղճութիւնը, զինուած միմիայն սիրուն կին ունենալու եսամոլ ցանկութեամբ, ինչպէս նաև պապաւաւի դատած արժէթղթերով, ընտրւում է իր ճաշակի համեմատ աղջիկ, կարծես վարունգ ջոկելիս լինէր, և աղջիկը չլացած նրա հարստութեամբ, կամ բժշկի տիտղոսով ու ճարտարապետի կօկարդով, որոշում է կին դառնալ յաճախ մի անբարոյականի, մի սպառուածի, մի դատարկ այլասերուածի, որի առողջութիւնը գինեմներում ու հասարակաց տներումն է վատնուած, որի խեղքը թղթախաղի կամ ձիարշաւի մէջն է զարգացել և որի միակ արժանաւորութիւնն այն է, որ նա հարուստ հօր որդի է...

Գիտութիւնը այժմ կանոններ է սահմանել ամուսնութեան համար: Անտարակոյս հեռու չէ գուցէ այն օրը, երբ նա իբրև անվիճելի կօնարօլ յաղթանակով կը մտնի ամուսնութեան շրջանը ևս, ինչպէս մտել է արդէն հասարակական կեանքի միւս շրջանները: Անտարակոյս մի օր օրէնսդրութիւնը իր հսկողութեան տակ կ'առնի այս կենսական ակտը և կը հսկի, որ նա կ'աւարտուի գիտութեան ցուցմունքների համաձայն: Այն ժամանակ կը սկսուի մի նոր դար առողջապահու-

թեան համար: Այն ժամանակ միանգամից կը վերանան արատաւորների, վրիպածների ու այլասերուածների լեզիօնները, որոնց պահպանութեան ու բժշկութեան համար հասարակութիւնը ստիպուած է այժմ պահել բազմածախս հիւանդանոցներ, գժատներ, անկեղանոցներ և այլն:

Այո, մի օր հասնելու է այս երջանիկ ժամանակը: Բայց մինչև այդ ոսկեդարի հասնելը մենք կը ցանկանայինք բանալ ծնողների և ամուսնացող երիտասարդների ու աղջիկների աչքերը և հասկացնել նրանց, թէ որչափ մեծ ու լուրջ քայլ է ամուսնութիւնը և որքան չըջահայեցողութիւն ու զգուշութիւն է հարկաւոր այդ քայլն անելու համար:

Անտարակոյս, ապրուստի ապահովութիւնը մեծ նշանակութիւն ունի ընտանիքի մէջ, բայց նա երկրորդական է—համեմատելով յիշած առողջական պայմաններին: Առողջ տղամարդը և առողջ կինը չեն կորչի կեանքի մէջ, թե թեի տուած վստահ կ'ընթանան դէպի բարեկեցութիւն ու երջանիկ կեանք.—երջանիկ իրանց սեփական առողջութեամբ, երջանիկ զաւակների ֆիզիկական ու բարոյական բարգաւաճմամբ, երջանիկ այն համոզմունքով, թէ կարող եղան մի կաթիլ փրկարար բալզամ կաթեցնել մեր վշտերի ովկիանի մէջ...

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

XXVIII ԴԱՐՈՒՄ

ԳԼ. Գ.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

I

Վենետիկից և Կ. Պօլսից յետոյ ճրպիսի հակապատկեր է ներկայացնում Հայաստանի այն բաժինը, որ Պարսկաստանի տիրապետութեան տակ էր գտնուում: Այստեղ անփոփոխ ծանրացած է դարերի դժբախտ իրականութիւնը. մահմեդական սանձարձակ բռնակալութիւնը ճնշում է առաջուայ պէս. նոյն ստրուկները և նոյն կեղեքիչները: Այստեղից նայելով դէպի արևմուտք, մենք տեսնում ենք թէ որքան մեծ առաջադիմութիւն է Կ. Պօլսում և Վենետիկում սկսուած գրական շարժումը: Այստեղ ոչ ապարան է գործում, ոչ գրքեր են հեղինակուում կամ թարգմանուում: Այստեղ ոչինչ յարմարութիւն չը կայ որ մտաւոր առաջադիմութեան ճառագայթները թափանցեն պարսկական արիւնոտ իրականութեան ներսը: Ու արևելեան Հայաստանը տղէտ ու խեղճ է. նա յետ է մնում գրական գործում, մինչդեռ արևմտեան հայութիւնը առաջ է գնում թէև դանդաղ, բայց հաստատուն քայլերով:

Բայց այստեղ, պարսկական Հայաստանում, կայ մի ուրիշ շարժում, որի մասին հասկացողութիւն անգամ չունի արևմտեան հայութիւնը: Այստեղ արծարծւում է քաղաքական ազատութեան միտքը: Ահա թէ ինչ խոշոր գործ կարող էր Պարսկահայաստանը հակադրել թիւրքահայաստանի մտաւոր շարժման: Պատմութիւնը, բաժանելով հայերին երկու մասի, բաժանել է և այդ մասերի դերերը. արևմուտքում գրական շարժում, իսկ արևելքում քաղաքական շարժում—այսպէս է դրութիւնը տասնութերորդ դարում: Երկու շարժումները չը միացան միմեանց հետ.

պարսկա-թիւրքական սահմանադուլսը մի հզօր անջրպետ հանդիսացաւ զրանց մէջ. մի կողմում գրական շարժում առանց քաղաքական իդէալների, միւս կողմում—քաղաքական շարժում առանց գրական-մտաւոր շարժման:

Արեւելեան Հայաստանի սկսած գործն էլ իր խոշոր հանգամանքները, իր հերոսներն ունէր: Եթէ արեւմուտքում կար մի Միխիթար Սեբաստացի, որ հերոսական ջանքերով գրական գաղթականութիւն էր հիմնում, արեւելքում էլ գործում էր Իսրայէլ Օրին, որ նոյնպիսի հերոսական ջանքեր էր թափում հայերի մէջ մի ազատական շարժում ստեղծելու և կենդանացնելու համար: Տասնութերորդ դարի այս երկու խոշոր անունները—Միխիթար և Օրի—հաւասար իրաւունքներ ունին մեր ազգի երախտաւորներ կոչուելու, թէև մէկը խաղաղ վանական գործիչ էր, գրչի և դպրութեան մարդ, իսկ միւսը քաղաքական գործիչ էր, որ իր հայրենիքի բարօրութեան համար վառօդի և արիւնի գաղափարն էր քարոզում: Նրանք առաջացրին շարժումներ, որոնք հաւասարապէս անհրաժեշտ էին հայերին, որոնք աստիճանաբար զարգացան և դարձան մեր վերածնութեան նշանաբանը:

Օրին, ինչպէս գիտենք *), իր ծրագիրներով և հաւատարմաթղթերով Սիւնիքից ուղևորուեց Եւրօպա 1699 թուի զարնանը: Կ. Պօլսի վրայով նա անցաւ Գերմանիա, ներկայացաւ Պֆալցի կուրֆիւրստին: Նրա հետ էր Մինաս վարդապետ Տիգրանեան: Կուրֆիւրստը հիւանդ էր և Օրին ստիպուած էր վեց ամիս սպասել Դիւսէլդօրֆում: 1699-ի աշնանը Օրին ներկայացրեց կուրֆիւրստին մանրամասն գրութիւններ, որոնց մէջ նկարագրում էր իր ճանապարհորդութիւնը դէպի Հայաստան և պատմում էր թէ ինչպէս պէտք է գլուխ բերել հայերի ազատութեան սուրբ և մեծ գործը: Պֆալցի իշխանը, միանգամայն հաւանութիւն տալով այդ ծրագիրներին, ուղարկեց Օրինին Վիեննա, Լէօպոլդ I կայսրի մօտ, որի աջակցութեամբ պիտի գլուխ բերուէր հայերի ազատութիւնը:

Բայց Եւրօպայի քաղաքական հանգամանքները փոխուել էին և շատ աննպաստ էին հայկական դատի համար: Կայսրը սաստիկ զբաղուած էր իր համար աւելի կարևոր, աւելի մեծ և կնճռոտ հարցով: Սպանիայի թագաւորը մահամերձ գրութեան մէջ էր և անժառանգ: Վաղուց հարց էր ծագել թէ ով պիտի ժառանգէ նրա թագը և այդ հարցը դրաւել էր պետութիւնների ընդհանուր ուշադրութիւնը: Սպանիան այն ժամանակ մի ահազին պետութիւն էր, որ լայնատարած կալուածներ ունէր թէ

*) «Հայկ. Տպ.», I. գլ. XV.

Եւրօպայում և թէ մանաւանդ երկրագնտի միւս մասերում. առաժ էր դարձել թէ արեւը մայր չէ մտնում սպանիական պետութեան սահմաններում: Այդ մեծ հարստութեան ժառանգորդ էին հանդիսանում ֆրանսիական Լուդովիկոս XIV թագաւորը և աւստրիական Լէօպոլդ կայսրը, որոնք ազգակցական կապերով կապուած էին Սպանիայում թագաւորող տան հետ: Երկու ժառանգները թէև պայմանագրերով համաձայնութիւն էին կայացրել սպանիական ժառանգութիւնը բաժանելու համար, բայց այդ ժառանգութիւնը չափազանց չազ կտոր էր, չափազանց շատ էր ակորժակ գրգռում, ուստի և ամեն մէկը աշխատում էր առիւծի բաժին ստանալ: Սպանիական թագաւորը մեռաւ 1700 թուին, նա կտակով ժառանգ էր նշանակել Լուդովիկոսի թոռին, որ դնաց Սպանիա՝ զահ բարձրանալու համար: Բայց Լէօպոլդն էլ կամենում էր իր որդուն նստեցնել այդ գահի վրայ: Պատերազմը անխուսափելի էր. նա պատրաստուում էր վաղուց և պիտի վրձնէր ժառանգութեան հարցը յօդուտ այս կամ այն կողմի: Լէօպոլդը շտապեց խաղաղութեան դաշինք կապել թիւրքերի հետ, որպէս զի նրանց դէմ կռուող չորքերը նոր պատերազմի պատրաստուէն: Իսկ այդ նոր պատերազմը պիտի լինէր շատ մեծ, երկարատև: Սպանիական ժառանգութեան հարցի մէջ շատ կարևոր շահեր ունէին և Անգլիան ու Հոլլանդիան, որոնք և կայսրի դաշնակից հանդիսացան: Լուդովիկոս պիտի կռուէր համարեա Եւրօպայի կէսի դէմ և պատերազմի դաշուր շատ լայնատարած էր. նա բռնում էր Իտալիան, Հոլանդիա և փերը, Սպանիայի սահմանները:

Ահա այդ պատրաստութիւնների մէջ էր Լէօպոլդ կայսրը, երբ Իսրայէլ Օրին ներկայացաւ նրան՝ հեռու արևելքում տանջուող մի քրիստոնէայ ժողովրդի ազատութիւնը խնդրելու համար: Կայսրը, ի հարկէ, չէր կարող կատարել Օրիի խնդրքը, թէև նրանից խնդրում էին մի փոքրաթիւ բանակ: Բայց նա միանգամից չը մերժեց էլ հայերին ազատելու միտքը. ընդհակառակն, յուսադրական թուղթ գրեց հայ մէլիքներին, իսկ Օրիին խորհուրդ տուեց զիմել Ռուսաստանի օգնութեան, որովհետև, առաջ էր, առանց ուռապ թագաւորի համաձայնութեան և աջակցութեան չէ կարելի զօրք ուղարկել Կասպից ծովի ափերը: Լէօպոլդը թոյլ, անվճռողական մարդ էր. հայ պատգամաւորը նրանից լսեց միայն խոստումներ, բարի ցանկութիւններ, բայց որ և է դրական դործ, հաստատ գիտաւորութիւն նա չը կարողացաւ իմանալ, թէև քաղաքական աշխարհի դրութիւնը պարզ ցոյց էր տալիս, որ կայսրը չէ էլ կարող խոստումներից և բարի ցանկութիւններից մի քայլ առաջ գնալ:

Օրին պիտի մտածէր Ռուսաստան ճանապարհորդելու մասին: Հայերի բարերարը, Պֆալցի կուրֆիւրստը, այստեղ էլ չը խնայեց իր օգնութիւնը և մի նամակ գրեց ռուսաց Պետրոս թագաւորին, որին յայտնում էր հայ պատգամաւորներ խորհուրդը, իր համակրութիւնը հայերի գործին և խնդրում էր նրա աջակցութիւնը: Օրիի հետ կուրֆիւրստը մի նամակ էլ ուղարկեց Անգեղակոթի Մէլիք-Սաֆրազին և նրա ընկերներին: Այդ նամակի մէջ նա ամենադրական, ոգևորող խօսքերով յուսադրում էր հայ իշխաններին, թէ Օրիի բերած ծրագիրը անպատճառ կ'իրականանայ, թէ քրիստոնեայ զօրքեր կ'ուղարկուեն Հայաստան և նրանց օգնութեամբ հայերը կը թօթափեն պարսկական լուծը ու անկախութիւն, ազատութիւն և խաղաղութիւն կը հաստատեն իրանց երկրում: Սոստանում էր ամենամեծ գաղտնապահութիւն և հաւատացնում էր մէլիքներին, որ Աստուած Օրիին է ընտրել հայրենիքի մեծ և սուրբ գործը գլուխ հանելու համար:

Լէօպոլդ կայսրն էլ յանձնարարական նամակ գրեց Պետրոս թագաւորին: Հայ պատգամաւորութիւնը 1701 թուականի գարնանը ճանապարհուեց դէպի Ռուսաստան, յանձնարարական նամակ ստացաւ նաև Լեհաստանի թագաւորից ու յունիսի 30-ին մտաւ ռուսաց սահմանները: Սմոլենսկում նրան ընդունեցին իբրև Պֆալցի կուրֆիւրստի և կայսրի դեսպանութիւն: Օրիի և Մինաս վարդապետի հետ էր և Նազար Օրեխովիչ, որ հայաստանցի հայ էր, բայց ինչպէս երևում է, Լեհաստանում էր ապրում: սա էլ թարգմանի պաշտօն էր կատարում: Համեմտով Մոսկվա, Օրին իր հետևորդների հետ լաւ ընդունելութիւն գտաւ. ռուսաց կառավարութիւնը առանձին բնակարան յատկացրեց նրան և տալիս էր թէ նրա և թէ նրա հետ եղած մարդկանց ուտելիքի փողը: Յուլիսի 11-ին, տեղ համեմտուց չորս օր յետոյ, բօեարին Գօլովին հարցրեց Օրիից դեսպանութեան նպատակը: Սա պատասխանեց, թէ դա գաղտնիք է, որ բաց կ'անէ թագաւորի առաջ, որովհետև ինքը ռուսերէն չը գիտէ, իսկ թարգմանի միջոցով մանրամասն բացատրութիւններ տալը անյարմար է համարում: Սակայն Պետրոսը իսկոյն ունկնդրութիւն չը շնորհեց հայ պատգամաւորին: Նոյն Գօլովինը առաջարկեց նրան մի քանի հարցեր, որոնց Օրին յանձն առաւ պատասխանել գրաւոր կերպով:

Այսպէս սկսուեցին Օրիի հռչակաւոր բանակցութիւնները ռուսաց կառավարութեան հետ: Բայց այստեղ էլ աննպաստ հանգամանքներ և արգելքներ կային կանգնած հայոց հարցի առաջ: Ռուսաստանն էլ այդ ժամանակ խառնուած էր պատե-

բազմական գործողութիւնների մէջ, որոնք նրա համար կեանքի կամ մահուան նշանակութիւն ունէին: Սպանիական ժառանգութեան համար բացուած պատերազմի հետ միաժամանակ սկսուել էր և Հիւսիսային կոչուած պատերազմը: Նա ուղղուած էր չվեղական պետութեան դէմ և նրա հոգին Պետրոսն էր, որին մի կողմից Լեհաստանն էր օգնում, իսկ միւս կողմից — Նօրվեգիան: Կամենալով Ռուսաստանի սահմանները հասցնել ծովին, որպէս զի հեշտ լինի հաղորդակցութիւնը Եւրոպայի հետ, կամենալով, ինչպէս ասում է բանաստեղծ Պուշկին, պատուհան բաց անել դէպի Եւրոպա, Պետրոս Մեծը աչք էր դրել Բալտիկ ծովի արևելեան ափերի վրայ, ուր տիրապետում էին չվեղացիները: Պատերազմը սկզբում շատ անաջող էր ուսնների համար: 1700 թուականի նոյեմբերի 19-ին ռուսաց բանակը, թուով 35—40 հազար, որ պաշարել էր Նարվա քաղաքը, ենթարկուեց 8,500 չվեղացիների յարձակման, սաստիկ պարտութիւն կրեց և փախուստ դարձաւ: Պետրոսը, ինչպէս այդ յատուկ է մեծ հոգիներին, չը յուսահատուեց այդ պարտութիւնից, այլ խրատներ առաւ: Նա գիտէր, որ այդպէս էլ պիտի լինէր, որովհետև ռուսները դեռ անկիրթ են և, ուրեմն, չը պիտի կարողանան դիմանալ նոյն իսկ մի փոքրաթիւ եւրոպական զօրքի յարձակման: Հեռաւեա, խորաթափանց թաղաւորը յայտարարեց, որ ռուսները պատերազմել պիտի սովորեն իրանց յաղթող թշնամիներից և սկսեց եռանդով պատրաստութիւններ տեսնել. հաւաքեց նոր զօրքեր, կրթում, սովորեցնում էր նրանց, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ չվեղական թաղաւորը արշաւել էր Լեհաստան:

Այսպէս էր գործերի դրութիւնը այն միջոցին, երբ Օրին հասաւ Մոսկվա: Պետրոսին հարկաւոր էին յաղթութիւններ, որովհետև հարկաւոր էին Բալտիկ ծովի ափերը. բայց դեռ ոչ մի յաղթութիւն նա չէր տարել, դեռ մի ամի հող չէր զբաւել իր ցանկացած տեղերում, իսկ չվեղական Կարոլոս XII թաղաւորը ամեն ժամանակ կարող էր Լեհաստանից իր դէնքը դարձնել Ռուսաստանի դէմ: Այսպիսի մի լարուած դրութեան մէջ հայերի ներկայացուցիչը զօրք էր խնդրում իր խեղճ հայրենիքի ազատութեան համար: Անհնարին էր, ի հարկէ, այդպիսի գործ սկսել այժմ:

Բայց քանի որ հարցը Արեւելքին էր վերաբերում, Պետրոսը չէր կարող միանգամայն անտարբեր մնալ: Նրա մեծ խելքը վաղուց էր ըմբռնել թէ Ռուսաստանի բարեկեցութեան և տնտեսական առաջադիմութեան համար ինչ նշանակութիւն ունեն արևելեան երկիրները: Ազով բերդը թիւրքերից խլելուց

յետոյ, 1698-ին, Պետրոսը արդէն մտածում էր Ազովեան և Կասպից ծովերը մի ջրանցքով միացնելու մասին: Կասպից ծովի առևտրական և քաղաքական նշանակութիւնը նա շատ լաւ էր հասկանում, ապա ուրեմն պիտի հետաքրքրուէր և այդ ծովի շուրջը ապրող ազգերով: Արևելեան գործերի վերաբերմամբ թագաւորը ունէր իր ծրագիրներն ու դիտաւորութիւնները, սակայն այդ բոլորը նա թողնում էր յարմար ժամանակի, երբ չվեղական պատերազմը վերջացած կը լինէր այնպէս, ինչպէս ինքն էր ցանկանում:

Ահա այս պատճառներով Պետրոսը առանձին ուշադրութիւն դարձրեց Օրիւի վրայ: Թէև այժմ չէր կարելի իրագործել նրա ծրագիրները, բայց դրանք հարկաւոր էին ապագայի համար: Եւ ուսաց կառավարութիւնը սկսեց ամենայն հետաքրքրութեամբ լսել Օրիւին, որ իբրև լաւատեղեակ մարդ՝ լիովին տեղեկութիւններ էր տալիս պարսկական գործերի մասին: Հայոց պատգամաւորին առաջարկուած էին հետևեալ հինգ հարցերը. 1) Ո՞րքան զօրք է մտադիր տալ Պֆալցի կուրֆիւրստը. և առհասարակ ուրիշ ի՞նչ գերմանական իշխաններ պիտի օգնեն և որքան ղինուոր պիտի տան: 2) Այդ զօրքերը ի՞նչ ճանապարհով և ի՞նչ պատրուակով պիտի անցնեն Ռուսաստանի վրայով և ո՞վ պէտք է պաշար տայ նրանց: 3) Ռուսաց թագաւորի հողերով արշաւելիս զօրքերը չէն վնասի թագաւորի հպատակներին և ի՞նչպէս դրան հաւատալ: 4) Եթէ ամենակարող Աստուածը բախտ կը տայ և կը գրաւուեն տեղեր, ո՞ւր աւանդով պիտի պահուեն նրանք և ո՞ւր զօրքերը ի՞նչ քանակութեամբ պիտի մնան այդ տեղերում: 5) Զինուորական արշաւանքը վերջացնելուց յետոյ, որ տեղերում կը լինի զօրքերի ձմեռոցը և նրանք որտեղից և ո՞ւր հաշուով պաշարեղէն կը ստանան:

Յուլիսի 14-ին Օրիւն ուղարկեց Պետրոս թագաւորին իր առաջին գրաւոր յայտարարութիւնը: Դրա մէջ նա նախ և առաջ շնորհակալութիւն էր յայտնում այն ընդունելութեան համար, որին արժանացան Ռուսաց հողի վրայ թէ՛ ինքը և թէ՛ իր հետևորդները: Դիմելով ապա իր առաքելութեան նպատակին, Օրիւն ասում էր.

Յկանք մենք այստեղ, որպէս զի ընկնենք ձեր թագաւորական մեծութեան ոտները և մեզ այստեղ ուղարկողները խնդրենք ողորմութիւն, օգնել մեր խղճով ժողովրդին, որ սաստիկ տանջուած է անհաւատների բռնութեան տակ: Չենք կասկածում, որ ձեր թագաւորական մեծութեանը յայտնի է թէ հայոց երկրում սրանից առաջ, հին ժամանակներում, եղել են թագաւոր և քրիստոնեայ իշխաններ. բայց յետոյ, նրանց անմիաբանութեան պատճառով, տեղի ունեցաւ այն, որ հայոց այդ ամբողջ

Թագաւորութիւնը ընկաւ անհաւատներ լուծի տակ: Երկու հարիւր չխառն
և աւել տարիներ կան, ինչ այդ ամբողջ քրիստոնէութիւնը հեծում է
անհաւատների լուծի տակ. և ինչպէս Ադամի որդիները յուսով սպասում
էին Մեսիայի գալստեան, որ պիտի աղատէր նրանց յափտեանական մա-
հից, այնպէս էլ այս խեղճ ժողովուրդը միշտ ապրել է և այժմ ապրում
է այն յոյսով, թէ օգնութիւն կը ստանալ ձեր Թագաւորական մեծու-
թիւնից: Նրանց մէջ կայ նախագուշակութիւն թէ վերջին ժամանակնե-
րում անհաւատները կը դառնան սաստիկ կատաղած և կը սկսեն հարկա-
դրել քրիստոնեաներին ընդունել իրանց ամենագարշելի օրէնքը. և այն
ժամանակ կը գալ Մոսկվայի Օգոստոսիառ տանից մի մեծ իշխան, որ Ա-
լեքսանդր Մեծից էլ շատ քաջ կը լինի և կը վերցնէ հալոց Թագաւո-
րութիւնը ու կ'աղատէ քրիստոնեաներին: Այս մարգարէութեան հաւա-
տում էին մինչև այժմեան ժամանակը և հաւատում են այժմ էլ, որով-
հետև իսկապէս տեսնում ենք, որ անօրէնները այն աստիճան չարու-
թեան են հասել, որ քրիստոնեաներին մեծ հարկերով և բռնութեամբ
հարկադրում են ընդունել Մահմէդի հաւատը, իսկ միւս կողմից տեսնում
ենք այն բնական վառ ձգտումը, որ ունի ձեր Թագաւորական մեծու-
թիւնը քրիստոնէական հաւատը մեծացնելու և բազմացնելու համար,
ինչպէս նաև ձեր ճշմարիտ խոստմունքը պատերազմել անհաւատների
դէմ, որոնք երբեք այնքան թոյլ ոյժ չեն ունեցել, ինչպէս այժմ, որով-
հետև 70 և աւել տարիներ կան ինչ նրանք մի նշանաւոր պատերազմ
չեն ունեցել *):

Պատասխանելով իրան առաջարկած հինգ հարցերին, Օ-
րին ասում էր. 1) Կուրֆիւրստի գնդերը մեզ հարկաւոր չեն.
պատերազմի առաջին տարում հարկաւոր չեն ուրիշ զօրքեր,
բացի ուսուսաց զօրքերից: Եւ մենք զօրքեր չենք խնդրել կուր-
ֆիւրստից, այլ միայն օգնութիւն, քանի որ նա բարեկամու-
թիւն ունի եւրօպական շատ վեհապետների հետ. մենք օգնու-
թիւն խնդրեցինք, որպէս զի եթէ Թիւրքիան մեզ դէմ պատե-
րազմ սկսէ, Եւրօպան այդ ժամանակ օգնէ մեզ ծովի և ցամա-
քի կողմից: Բայց որովհետև կուրֆիւրստը այնպիսի իշխան է,
որ ուզում է մաս ունենալ այս փառաւոր գործի մէջ, ուստի
նա խոստանում է իր զօրքերը, և եթէ հաճոյ լինի ուսուսաց թա-
գաւորին, կը տայ օգնութիւն և ուրիշ բաներով: Բայց կուր-
ֆիւրստից և կայսրից, մենք գերմանական ուրիշ իշխաններին
չենք յայտնել մեր նպատակը: Իսկ կայսրն էլ խոստանում է
օգնութիւն, եթէ կամենայ Թագաւորը: 2) Զօրքերը Ռուսա-
տանի միջով անցնելիս, ամեն ինչ կ'առնեն փողով, կը վճարեն
նոյն իսկ ձուր գինն էլ. նրանք անցնում են ուսուսաց հողե-
րով ուսուսաց Թագաւորի անուան տակ: 3) Եթէ Թագաւորը
թոյլ տայ զօրքերին անցնել իր երկրով, ամեն տեսակ ա-
պահովութիւն կը տրուի որ բնակիչները ոչինչ վնաս չեն

*) Эзовъ—„Сношенія Петра Великаго съ арм. народомъ“, Եր.
75: Օրիի պատմութիւնը մենք ամբողջապէս վերցնում ենք այդ գրքից:

կրի, ընդհակառակն, օգուտ կը ստանան զօրքերից: 4) Եթէ Աստուած բախտ կը տայ, բոլոր գրաւուած բերդերը թագաւորի իշխանութեան տակ կը մնան և այնտեղ ռուսաց զօրքեր կը մնան: 5) Զինուորական արշաւանքը վերջացնելուց յետոյ թագաւորի զօրքերը կը ձմերեն հայոց թագաւորութեան մէջ և կը կերակրուեն հայերի հաշուով: Երկիրը այնքան պտղաբեր է և հարուստ, որ նրա իւրաքանչիւր նահանգը կարող է 100 հազար զինուոր կերակրել առանց դժուարութիւնների: Ամենազլխաւորն այն է, աւելացնում էր Օրին, որ թագաւորը ընդունէ մեր խնդիրքը ու համաձայնուի դառնալ մեր երկրի տէր: Յետոյ կ'իմանայ նորին մեծութիւնը թէ դրանից ինչ մեծ չափ կ'ունենայ: Բաւական է որ միանգամից 10 կամ 20 հազար զինուոր մտնէ անհաւատների երկիրը, և թագաւորը կը տեսնէ որ 10 օրուայ ընթացքում 100 հազարից աւել հայ կը մտնէ նրա իշխանութեան տակ: Մեծ պատրաստութիւններ հարկաւոր չեն, հայերը մեծ բանակ չեն պահանջում, այլ խնդրում են միայն 10—20 հազար զօրք, որովհետեւ իրանք էլ պատրաստ ունեն մեծ քանակութեամբ զինուած մարդիկ:

Ծրագիրը հրապուրիչ էր ամեն կողմից: Ռուսաց կառավարութիւնը աւելի ևս ուշադիր դարձաւ և սկսեց աւելի մանրամասն տեղեկութիւններ հաւաքել: Հարկաւոր էին բերանացի բայատրութիւններ էլ, և մենք տեսնում ենք որ յուլիսի երկրորդ կէսում հայոց պատգամաւորի և ռուսաց կառավարութեան մէջ յարաբերութիւնները աւելի ևս եռանդոտ ընաւորութիւն են ստանում: Օրին ամենից շատ աշխատում էր որ իր բանակցութիւնները գաղտնի մնան, որովհետեւ եթէ մահմեդական աշխարհին յայտնի դառնար այդ բանը, հայ ազգը մեծ վտանգի մէջ կ'ընկնէր: Զգուշութիւնը նա այն աստիճանին էր հասցնում, որ նոյն իսկ չէր հաւատում իր թարգման Օրեխովիչին, նկատի ունենալով նրա երիտասարդ հասակը: Այդ պատճառով ռուսաց կառավարութիւնը թարգմանի պաշտօնը յանձնեց Նիկոլայ Սպոթարիուսին, մի յոյնի, որ ծնուել էր Մօլդաւիայում, կրթութիւն էր ստացել Կ. Պօլսում և Իտալիայում, իսկ 1672 թուականից տեղափոխուել էր Մոսկվա, ուր ծառայում էր իբրեւ թարգման և գրական աշխատութիւններով էր զբաղւում: Սպոթարիուսն էլ մի ճնշուած և գերի ազգի զաւակ էր, միջնորդ էր հանդիսանում յունաց պատրիարքների և ռուսաց թագաւորների քաղաքական գաղտնի յարաբերութիւնների մէջ և ուշադրութեամբ հետեւում էր թէ ինչեր են կատարւում Օսմանեան պետութեան մէջ: Նրան վիճակուած էր կարեւոր դեր կատարել և այն գործի մէջ, որ սկսել էին հայերը:

Օրին նրա հետ խօսում էր թիւրքերէն, իսկ նա ռուսերէնի էր թարգմանում այդ խօսակցութիւնը: Մի շարք նիստեր տեղի ունեցան Օրինի, Սպօթարիուսի և մի ռուս պաշտօնեայի մասնակցութեամբ: Այդ նիստերի արձանագրութիւնները ցոյց են տալիս որ ռուսաց կառավարութիւնը աշխատում էր որքան կարելի է չատ մանրամասն և բազմակողմանի տեղեկութիւններ ստանալ հայկական շարժման մասին, մանաւանդ կամենում էր պարզել թէ ինչ դեր են կատարում այդ շարժման մէջ արեւմտեան Եւրօպայի վեհապետները: Օրինից պահանջւում էր ղիպլօմատիական մեծ նրբամտութիւն, որպէս զի ռուսների մէջ կասկած չը ծագէ թէ հայոց հարցը Եւրօպայի մէջ սարքուած մի բան է, որ կարող է Ռուսաստանի շահերին վնասել: Այդ պատճառով էլ Օրին աշխատում էր հաւատացնել որ հայերը իրանց յոյսը դրել են Ռուսաստանի վրայ, որ արեւմտեան քրիստոնեայ վեհապետների կողմից միայն համակրութեան ցոյցեր են եղել մինչև այժմ, իսկ գործից սպասուող բոլոր քաղաքական օգուտները միայն Ռուսաստանը պիտի քաղէ: Խօսք կար, ի հարկէ, և այն մասին թէ ինչո՞ւ հայ պատգամաւորութիւնը անմիջապէս չէ դիմել Մոսկվա, այլ նախ դնացել է Եւրօպա: Օրին այդ առիթով բացատրեց թէ պարսիկների ահը ստիպեց իրան այդպիսի ճանապարհ բռնել:

Համոզուած լինելով որ պատերազմական գործողութիւններ սկսելու ամենալաւ ժամանակն է, Օրին թախանձում էր որ իր զեկուցումները շուտ յայտնուեն թագաւորին, որ Պետրոսը ընդունէ հայերի խնդիրքը և խօսք տայ թէ յանձն է առնում գլուխ բերել նրանց ազատութեան գործը: Այդ անելուց յետոյ թագաւորը, ինչպէս խնդրում էր Օրին, պիտի կայսրի և կուրֆիւրստի նման յուսադրական թուղթ գրէ հայ մէլիքներին, որոնք սպասում են պատասխանի: Օրին մտադիր էր այդ բոլոր թղթերը յատուկ սուրհանդակի ձեռքով ուղարկել հայերին Աստրախանի վրայով: Իսկ պատերազմական գործողութիւնները, ասում էր նա, պէտք է սկսել իսկոյն Լեթ, նոյն տարուայ հոկտեմբեր ամսից ոչ ուշ: Եւ որովհետև չվեղական պատերազմը մեծ խոչընդոտ էր հանդիսանում այդ բանի դէմ, ուստի Օրին հաւատացնում էր թէ այդ պատերազմը ոչինչ արգելք չէ կարող առաջացնել, Ռուսաստանը կովկասին սահմանակից տեղերում ունի կօզակների զօրք, կարող է հաւաքել այդ զօրքը՝ չվեղական պատերազմի դաշտը ուղարկելու պատրուակով, բայց կարելի է յանկարծ դարձնել նրան դէպի Պարսկաստան և անախնակ կերպով, քամու նման, յարձակուել: Արշաւանքի խիստ արագութիւնը կը վճռէ գործի ելքը ամենաշատը

մի քանի օրում: Հարկաւոր է որ զօրքը ունենայ իր հետ ծանրոցքներ, բացի թնդանօթներից. ամեն ինչ՝ փող, պաշար, հագուստ առատ է և պատրաստ հայոց երկրում:

Բայց որքան էլ շտապէր Օրին, ոռոսաց կառավարութիւնը չէր կարող մի այդպիսի մեծ գործ սկսել առանց երկար ու բարակ մտածելու, միայն հաւատալով հայրենասէր հայի խօսքերին: Օրին տեսնում էր որ իր բացատրութիւնները բաւականաչափ մանրամասն և պարզ չեն և այդ պատճառով յաճախ աւելացնում էր, թէ ինքը պատրաստ է պատասխանել ամեն մի հարցի, որ կը տան իրան: Նա ներկայացրեց նաև ղինուորական արշաւանքի մանրամասն ծրագիրը: Մենք արդէն խօսել ենք այդ ծրագրի մասին, ցոյց ենք տուել թէ ինչ պակասութիւններ ունէր նա *): Այստեղ այդ բոլորը կրկնելու կարիք չը կայ և միայն մնում է աւելացնել որ Օրին երեւմի հակասութիւնների մէջ էլ էր ընկնում: Այսպէս, ոռոսներից խնդրած զօրքերի թիւը նա մէկ որոշում էր 10—20 հազար, մէկ 25 հազար, իսկ մի անգամ էլ ասաց թէ նոյն իսկ 5 հազար հոգին էլ բաւական է: Շատ հասկանալի է որ մի օտար պետութիւնից յանուն քրիստոնէութեան ազատութիւն հայցողը պիտի ամեն կողմից հեշտ իրադրոճելի ցոյց տար իր ներկայացրած դատը, բայց նա չէր նկատում որ չափազանց հեշտացնելը նոյնքան անհարկաւոր էր, որքան չափազանց դժուարացնելը:

Այդ բոլորը նախնական բանակցութիւններ էին: Օրին բոլոր զեկուցումները ներկայացրեցին Պետրոս Մեծին և միայն հոկտեմբերին Օրին տեղեկութիւն ստացաւ որ թագաւորը առանձին ունկնդրութիւն պիտի չնորհէ նրան: Այդ ունկնդրութիւնը տեղի ունեցաւ հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին: Օրին ներկայացաւ թագաւորին իբրև Պֆալցի կուրֆիւրստի դեսպան և մատուցեց ընծաներ: Ընդունելութիւնը միանգամայն գոհացրեց Օրինին: Իսկ նոյեմբերի 19-ին թագաւորի անունից յայտարարուեց նրան ոռոսաց կառավարութեան պատասխանը: Մի յուսադրական պատասխան էր դա: Ամենազլխաւորը, որ ուզում էր իմանալ Օրին, այն էր թէ արդեօք թագաւորը համաձայն է ընդունել հայերի գործը իր հովանաւորութեան տակ: Նրան յայտնեցին թէ թագաւորը «հակուած է», բայց չվեղական պատերազմը թոյլ չէ տալիս որ նա ամբողջ գործը իր վրայ վերցնէ: Ուստի առաջարկում էր Օրինին գրել կուրֆիւրստին, որ նա, ինչպէս խոստացել էր, ուղարկէ երեք կամ չորս գունդ ղինուորներ, որոնց ոռոսաց հողի վրայով անցնելու մասին առան-

*) «Հայ. Տպ. I, գլ. XV.

ձին կարգադրութիւն կ'անուի: Բայց ոռւսաց կառավարութիւնը չէր ուզում գործը հիմնել Օրիի տեղեկութիւնների վրայ: Դրանից առաջ Պարսկաստան էր ուղարկուել ոմն Վասիլի Գուշուկով՝ պարսկական գործերին մօտիկուց ծանօթանալու համար, ինչպէս երևում է, Գուշուկովի տուած տեղեկութիւնները այնպէս չէին ներկայացնում Պարսկաստանի դրութիւնը, ինչպէս ներկայացնում էր Օրին: Այդ պատճառով վճռուած էր, նախ քան գործ սկսելը, մի ուրիշ մարդ ուղարկել Պարսկաստան, վաճառականի անունով, աւելի մանրամասն և հաստատ տեղեկութիւններ հաւաքելու համար: Յանկալի էր որ այդ մարդու հետ գնար և մի եւրօպական հմուտ ինժեներ, որ կազմէր պարսկական բերդերի յատակադիծը և Օրինն առաջարկուած էր ինչդրել կուրֆիւրստից մի այդպիսի ինժեներ:

Այսպէս ահա, կուրֆիւրստից էր կախուած գործ սկսելը: Բայց Օրին չը կարողացաւ նրա կողմից հաստատ խոստումներ անել. հայերի բախտից էր որ այդ ժամանակ արդէն սկսուել էր պատերազմը սպանիական ժառանգութեան համար. կուրֆիւրստը պիտի մասնակցէր այդ պատերազմին, և, ի հարկէ, չէր կարող այժմ զօրք տալ: Յամենայն դէպս, Օրին յանձն առաւ. գրել կարֆիւրստին գնդեր ուղարկելու մասին, բայց ինժեներ ուղարկելը աւելորդ համարեց, ասելով թէ կուրֆիւրստը միայն իրան, Օրինն է հաւատում և մի ուրիշին չի յանձնի այդ գործը: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Պետրոս Մեծը, մինչև գործը սկսելը, չէր ուզում որ և է պաշտօնական թղթի մէջ խօսել հայերի ազատութեան մասին. և այդ պատճառով Օրինն բերանացի յայտնում էր թէ ոռւսաց կառավարութեան պատասխանը նա ինքը պիտի հաղորդէ թէ կուրֆիւրստին և թէ հայ մէլիքներին: Բայց ամենից կարևորը այն դեպքանութիւնն էր, որ ոռւսները ուզում էին ուղարկել Պարսկաստան: Դրա բերած տեղեկութիւնների հետ պիտի համաձայնեցնէր ոռւսաց կառավարութիւնը իր այն գործողութիւնները, որ խոստանում էր սկսել հայերին ազատելու համար: Օրին, լաւ հասկանալով այդ բանը, սկսեց միջնորդել որ իրան էլ ուղարկեն այդ դեպքանութեան հետ: Նա մտադիր էր փոխել իր աւանդը և ձիաներ առնելու պատրուակով շրջել ամեն տեղ: Մի ուրիշ մարդ, ասում էր նա, չէ կարող իմանալ այն ամենը, ինչ ինքը հեշտութեամբ կ'լմանայ, որովհետև քրիստոնեաները չեն հաւատալ ուրիշին և ահից ոչինչ են յայտնի նրան:

Բանակցութիւնների այդ դրութեան մէջ չվեղական պատերազմը յանկարծ կլանեց ոռւսաց կառավարութեան ամբողջ

ուշադրութիւնը: Դեկտեմբերին ռուսները առաջին յաղթութիւնը տարան, ջարդելով չվեղացիների մի բանակը: Օրին, ի հարկէ, ստիպուած է ընդհատել բանակցութիւնները: Առաջին բռնարին Գոլովինին գրած նամակներում նա շեշտում է թէ կառավարութիւնը այնքան զբաղուած է, որ ինքը չէ կարողանում երկար գրել իր գործի մասին: Միայն խնդրում էր որ իրան իմաց տրուի թէ ինչ դառաւ պարսկական զեսպանութեան միտքը, որովհետեւ եթէ ուղարկուի այդպիսի զեսպանութիւն, ինքն էլ անպատճառ պիտի գնայ նրա հետ. խնդրում էր նոյնպէս որ իրան թոյլ տրուի մարդիկ ուղարկել կուրֆիւրստի և հայ մէլիքների մօտ՝ ռուսաց կառավարութեան պատասխանը յայտնելու համար: Իսկ եթէ պարսկական զեսպանութիւնը պիտի ուշանայ, Օրին խնդրում էր, Մոսկվայում պարապ չը նստելու համար, ընդունել իրան զինուորական ծառայութեան մէջ և ուղարկել այն բանակը, որ գործում էր չվեղական զօրքերի դէմ:

1702 թուականի մարտին Պետրոսը հրամայեց նորից յուսադրել Օրինին որ չվեղական պատերազմը աջողութեամբ վերջացնելուց յետոյ ինքը անպատճառ իր ձեռքը կ'առնէ այն գործը, որի համար ուղարկուած է նա. այդ մասին Օրին կարող է հաղորդել իրան ուղարկողներին: Իսկ Օրին զինուորական ծառայութեան մէջ ընդունելու հարցը թողնում էր, մինչև որ թագաւորը կը վերադառնայ Արխանգելսկից, ուր գնում էր Սպիտակ ծովի ափերը ամրացնելու համար, որովհետեւ սպասում էին թէ չվեղացիները այդ կողմից պիտի յարձակուեն Ռուսաստանի վրայ: Օրին և Մինաս վարդապետը, լսելով թագաւորի այդ ողորմած խօսքերը, ինչպէս ասուած է պաշտօնական թղթի մէջ, «արտասուելով խոնարհ շնորհակալութիւն յայտնեցին նորին թագաւորական մեծութեան, որ նա չը մերժեց իրանց խնդիրքը, այլ թագաւորական խօսքով և խոստումով հաստատեց և ուրախացրեց իրանց»:

Այդ ուրախութիւնը Օրին շտապեց հաղորդել հայերի բարերար կուրֆիւրստին, նոյն մարտին նրա մօտ ուղարկելով իր թարգման Նազար Օրեխովիչին. իսկ ապրիլ ամսին Աստրախանի և Կասպից ծովի վրայով Հայաստան ուղարկեց Միրօն Վասիլևի անունով հային, որ պիտի մէլիքներին հասցնէր կարևոր թղթեր: Այս Միրօն Վասիլևիը 30 տարուց ի վեր քնակութիւն ունէր Մոսկվայում, ծառայել էր ռուսաց զօրքի մէջ, ստացել էր կապիտանի աստիճան, տան և ընտանիքի տէր մարդ էր. այդ համագամանքները Օրին համար լաւ երաշխաւորութիւն էին, որ Միրօնը հաւատարմութեամբ կը կատարէ իր պաշտօնը և կա-

րիտը զգուշութիւններ գործ դնելով կը յայտնէ հայերին թէ նրանց ազատութեան գործը գլուխ դալու վրայ է:

Կուրֆիւրստից Օրին պատասխան ստացաւ նոյն տարուայ աշնանը, իսկ Միրօն Վասիլևիլը Հայաստանից վերադարձաւ միայն 1703 թուականի գարնանը: Կուրֆիւրստը Օրինն ուղարկեց այն նամակը, որ ուղղել էր Պետրոս թագաւորին: Այդ նամակի մէջ Յովհանն-Վիլհելմ Ջերմագին շնորհակալութիւններ էր յայտնում ուսաց ինքնակալին այն ուշադրութեան համար, որին նա արժանացրել էր Օրինն ու նրա գործը և շատ խնդրում էր անպակաս անել այդ ուշադրութիւնը և ապագայում, հովանաւորելով տանջուող քրիստոնեաներին ազատելու փառաւոր ձեռնարկութիւնը: Իրան, Օրին, կուրֆիւրստը յայտնում էր իր բաւակաշուրթիւնը որ ուսաց մեծ թագաւորը բարեհաճութեամբ է ընդունել նրան. և իր ձեռքով աւելացնում էր այդ նամակին. «Ամբողջ սրտից խնդրում եմ Աստուծուն, որ նա օրհնէ ձեր սուրբ զիտաւորութիւնները. և ես ինձ բախտաւոր կը համարեմ, եթէ կարողանամ որ և է բանով օգնել այդ մեծ գործին. բայց որովհետեւ մենք այժմ պատերազմ ունենք Ֆրանսիայի, Սպանիայի և նրանց դաշնակիցների հետ, ուստի ես կարող եմ աջակցել իմ յանկուրթիւններով, միջնորդութեամբ և մի քանի բաների մէջ ծառայութիւններս մատուցանելով: Աղօթեցէք Աստուծուն, որ մենք յաղթական կերպով վերջացնենք պատերազմը. այն ժամանակ ես գործ կը դնեմ իմ բոլոր ջանքերը, որ օգնեմ ձեզ և ապացուցանեմ իմ անկեղծ յանկուրթիւնները»:

Այս սիրալիք նամակը Օրին առջև բաց էր անում տխուր անհրաժեշտութիւնը: Պէտք էր յետաձգել գործը: Եւրօպայում սկսուած երկու ահագին պատերազմները գալիս էին հայերի յոյսերը եթէ ոչ միանգամայն ջարդելու, զոհէ անյայտութեան մատնելու: Եւ այս հարուածը մի այնպիսի ժամանակ, երբ երեք քրիստոնեայ վեհապետներ անկեղծ կերպով պատրաստ էին օգնութեան ձեռք մեկնել դժբախտ հայերին: Այժմ ամեն տեղ աւսում էին թէ պէտք է սպասել մինչև որ կը վերջանային նրանք: Այն ժամանակները սաստիկ երկարատև էին պատերազմները: Եւ սակայն Օրին ինչպէս էր շտապում: Այն գործը, որին նա այդպէս նուիրուած էր, ոլտի կատարուէր արագութեամբ, մի յանկարծակի արշաւանքով: Իսկ հանգամանքները հարկադրում էին սպասել...

Պետրոսը ամենայն եռանդով աշխատում էր Բալտիկ ծովի ափերի վրայ: Պատերազմական բախտը նրա կողմն էր և չվեղացիները, պարտութիւններ կրելով, քայլ առ քայլ տեղի էին տալիս ուսաներին: Հէնց նոյն 1703 թուականին անխոնջ թագա-

ւորը, թշնամու կրակի տակ, Նեվայի գետաբերանի վրայ Պետերբուրգի հիմքն էր դնում: Օրին աւելի ևս համոզուում է որ պէտք է դեռ երկար իզուր սպասել Մոսկվայում և վճռում է անձամբ գնալ Պարսկաստան՝ գործերի դրութիւնը ուսումնասիրելու և ապագայ ապստամբութիւնը պատրաստելու համար: Բայց այս անգամ նա ծածուկ ճանապարհորդողի դերը չէ յանձն առնում. գնալ Եւրոպա, նորից խօսել կուրֆիւրստի և կայսրի հետ, հաւաքել իր շուրջը պատերազմի գործում հմուտ մասնագէտ անձանց և տանել նրանց Հայաստան, ցոյց տալ ամեն ինչ, որպէս զի նրանք որոշեն ապագայ արշաւանքի բոլոր հանգամանքը—ահա ինչ մտքի վրայ էր նա այժմ: Այդպիսի մի գործ կատարելու համար նա վճռում է մտնել Պարսկաստան իբրև դեսպան: Դեսպանութեան պատրուակն էլ պատրաստ էր. կայսրը, Հոռմի պապը պարսից Շահին թղթեր են գրում, որոնց մէջ խնդրում են քրիստոնեաների վիճակը բարւոքել և այդ թղթերը տեղ է հասցնում Օրին: Մինչև այդ Պարսկաստանը շատ էր տեսել այդպիսի յանձնարարութիւններ կատարող եւրոպական դեսպաններ. ուրեմն այժմ էլ Օրին դեսպանութիւնը ոչինչ կասկածներ չէր յարուցանի, իսկ նա, օգուտ քաղելով իր պաշտօնական դիրքից, կ'իմանար այն ամենը, ինչ պէտք էր իմանալ՝ նրա պաշտպանած գործը սկսելու համար: Եւ յայտնելով իր այդ դիտաւորութիւնները ռուսաց կառավարութեան, Օրին նոյեմբերին և դեկտեմբերին իր տուած թղթերով խնդրում էր թոյլ տալ որ ինքը վերադառնայ Եւրոպա: Դեսպանի պաշտօն ստանձնելու համար Օրին խնդրում է Պետրսիւն չնորհել իրան գնդապետի աստիճան: Դա հարկաւոր էր, որպէս զի նա Եւրոպայում զինագործների և զինուորական մարդկանց հետ բանակցութիւններ սկսէ ապագայ արշաւանքը պատրաստելու համար: Նա մտադիր էր, Պարսկաստանից վերադառնալուց յետոյ, Աստրախանում իր հաշուով մի ամբողջ գունդ կազմել և դնել թագաւորի տրամադրութեան տակ: «Ես չեմ խնդրում որ զինուորական մի գունդ յանձնուի իմ հրամանատարութեան, այլ խնդրում եմ միայն գնդապետի աստիճան, որպէս զի դրանով աւելի հեշտ լինէր դրդել մարդկանց շարունակել մեր գործը համաձայն վեհափառ Յարի մտքին,—գրում էր Օրին:—Գնդապետութեան աստիճան չնորհելու մէջ թէ հայերը, թէ օգոստափառ կայսրը և թէ պայծառափայլ կուրֆիւրստը կը տեսնեն թագաւորի ողորմածութեան և համակրութեան նշան»: Մի ուրիշ խնդրագրի հետ Օրին ներկայացրեց թագաւորին Հայաստանի քարտէզը: «Այս նկարից—ասում էր նա—կարելի է տեսնել, որ ոչ մի ուրիշ բերդ չը կայ ամբողջ պետութեան մէջ, բացի Երևանից. ամենաբարի Աստուածը թող չնորհ տայ ձեր

մեծութեան և ոյժ ձեր զօրքերին, որ նա նուաճուի և այն ժամանակ ամբողջ Հայաստանը և Վրաստանը կը հպատակեցնէք ձեզ»:

Ռուսաց կառավարութիւնը համաձայն էր այդ բոլոր առաջարկութիւններին: Պետրոսը տուեց գնդապետութեան աստիճան, նամակներ գրեց կայսրին և կուրֆիւրստին, որոնց յայտնում էր ակնարկներով թէ ընդունել է Օրբին, որ և բերանացի բացատրութիւններ կը տայ նրանց այն գործի մասին, որի համար եկել է:

Թողնելով իր ընկեր Մինաս վարդապետին Մոսկվայում, գնդապետ Օրբին Պետրոսի թղթերի հետ 1704 թուականի փետրուարի 10-ին ուղևորուեց Եւրօպա, ուր բացի հայրենիքի գործերից՝ նրան Դիւսէլդորֆում սպասում էր և ընտանիքը: Հարկաւոր է այստեղ ակեղացնել որ Օրբին իր սեփական միջոցներով էր այգքան ճանապարհորդում, աշխատում իր հայրենակիցների համար: Երբ նա Հայաստանից ճանապարհւում էր Եւրօպա, մէլիքները առաջարկեցին որ նա մի գումար վերցնէ իր հետ ծախսերի համար: Մինաս վարդապետը համաձայն էր այդ բանին, բայց Օրբին հրաժարուեց փող տանել իր հետ, պատճառ բերելով թէ ճանապարհին փտանդաւոր է փող ունենալը: Նա ծախեց Դիւսէլդորֆում ունեցած իր կալուածքը և այդպէս էր հայթայթում բոլոր ծախսերը: Եւ սակայն, նա երկու որդի ունէր: Դրանց ուզում էր բերել իր հետ Մոսկվա և սովորեցնել ռուսերէն լեզուն:

II

Իզուր չէր Իսրայէլ Օրբին այնքան շտապում, իզուր չէր նա այնքան հաստատ համոզուած որ Պարսկաստանին ամենախիստ հարուածներ հասցնելու յարմար ժամանակն է: Իրանը, ճիշտ որ, քանդուում ու քայքայւում էր արագ կերպով:

Շահ-Աբաս Մեծը քաղաքական մեծ փայլ տուեց Իրանին, դարձրեց նրան մի խիստ ուժեղ, աշխարհակալ պետութիւն: Բայց այդ փառքը նրա հետ գերեզման իջաւ: Ժառանգների կողմից շատ դժբախտ էր այդ ահարկու բռնաւորը, որ մի և նոյն ժամանակ և Պարսկաստանի վերանորոգիչն էր: Նրա մահից յետոյ պետութիւնը սկսեց արագ քայլերով դիմել զէպի անկում: Ճիշտ է, նրա ժառանգների մէջ եղան այնպիսիները, որոնք արիւնարբու բռնակալութեան մէջ դուրսէ գերազանցեցին էլ նրան, բայց պետութեան հարկաւոր են ոչ թէ այդպիսի արիւնարբուներ, այլ վեհապետներ, որոնք կարողանան զարգացնել երկրի

անտեսական ոյժերը: Ահա այդպիսի թագաւորներ չը տեսաւ իրանը Շահ-Աբասից յետոյ: Երկիրը սպառուկ էր իր բոլոր տնտեսական միջոցները, աղքատութեան ծայրն էր հասել, իսկ Սէֆէվի թագաւորները իրանց օրերը անց էին կայնում հարէմում և գինեխմութեան մէջ: Ոչինչ կարդ ու կանոն չը կար պետութեան մէջ՝ և մոռացութեան տալով պետական բոլոր շահերը, այդ թագաւորները իրանց ծախսերը ստանում էին ժողովրդից, դուրս ծծելով նրա վերջին հիւթերը:

Այդ անընդունակ, մեղի ու թոյլ թագաւորներից մէկն էր Հիւսէյն-Շահը, որ նստեց իրանի գահի վրայ 1694 թուին: Դա մի կրօնամոլ չիտ էր և վերին աստիճանի յիմար կառավարիչ: Արքունիքում տիրապետում էին մօլլաները, «որոնք, բարեպաշտաբար իրանց աչքերը դէպի երկինք ուղղած, մեծ բազմութեամբ չըջում էին պալատում» *): Հասկանալի է թէ որպիսի դժբախտութիւն էին պետութեան համար այդ տգէտ փանատիկոսները: Ողորմելի Հիւսէյնի թագաւորութեան ժամանակամիջոցը Պարսկաստանի պատմութեան ամենամուսայ էջերից մէկն է կազմում:

Աղուանից Եսայի կաթողիկոսը, Հիւսէյն-Շահի ժամանակակիցը, թողել է մի թերատ, անկատար, վայր ի վերոյ պատմութիւն **), որ, սակայն, գրութիւնը լուսաբանող մի քանի վառ նկարագրութիւններ է տալիս: Այդտեղից մենք իմանում ենք որ Հիւսէյնը և նրան չըջապատողները կաշառքներով էին ապրում: Ոչ մի քաղաքի կամ գաւառի կառավարիչ մի քանի ամսից աւել չէր կարողանում մնալ իր պաշտօնում, տեղերը վաճառւում էին, պաշտօնավարները փախւում էին տարին երկու-երեք անգամ: Եւ որովհետեւ ամեն մէկը կաշառքով էր ստանում իր տեղը, ուստի պաշտօնի մէջ մտնելուն պէս ընկնում էր ժողովրդի վրայ և կեղեքում էր նրան իր տուած փողերը յետ ստանալու համար: Բայց սա մի ընդհանուր չարիք էր Արևելքում. և Հիւսէյն Շահը տարբերւում էր միւս թագաւորներից երկի միայն նրանով, որ անհնարին չափազանցութեան էր հասցրել հարստութիւն ձեռք բերելու այդ բարբարոսական միջոցը: Կար աւելի սարսափելին: Պաշտօնեանների միջոցով հպատակների արիւն ծծելը բաւարարութիւն չէր տալիս մօլլաներով և ներքինիներով լցուած արքունիքի ծախսերին: Եւ Հիւսէյնը, առանց երկար ու բարակ մտածելու, հրամայեց նոր և նոր հարկեր դնել ժողովրդի վրայ:

*) Мюллеръ—«Исторія Ислама», т. III, СПб., 1896, стр. 409.

**) «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի». տպագրուել է երկու անգամ՝ Շուշում 1839 թուին և Երուսաղէմում 1868 թուին:

Այդ հրամանը սկսեց գործադրուել 1699 թուին, այսինքն այն տարին, երբ Իսրայէլ Օրին գնաց պարսկական Հայաստան և այնտեղ ազատութեան կայծեր տարածեց: Պարսիկ պաշտօնեաները սկսեցին ժողովրդագրութիւն: Ամեն տեսակ բռնութիւններով ժողովուրդը մտցնուեալ էր հարկատուութեան տուամարնների մէջ. ոչ ոք ազատ չը մնաց, մինչև իսկ եկեղեցականներն էլ, որոնք արտօնուած դատակարգ էին կազմում, ծանր հարկերի ենթարկուեցան: Ամեն ինչ, որ ապրուստի միջոց էր տալիս ժողովրդին՝ սկսած արտից և այգուց և վերջացրած տընային սնաստեաներով, հարկի տակ մտաւ: Հիւսէին-Շահի անընդունակ կառավարութիւնը միայն բաղմատեսակ ծանր հարկեր հնարելու մէջ ցոյց տուեց եռանդուն գործունէութիւն: Եւ յայտնի էլ էր որ այգալիսի կեղեքումներով ազգաբնակչութեան շունչը կտրող կառավարութիւնը մի առանձին ոյժի տէր չէ: Նախկին բռնակալների ազգած ահն ու սարսափն էր, որ հարկատուներին պահում էր հլու հնազանդութեան մէջ: Թէև ստրկատէրերը «թուլամորթ և կանաչի» *) էին, բայց ստրկութիւնը շարունակուեալ էր ինքն ու ինքը առաջ գնալ, մղուելով անցեալի ահեղ հարուածներից:

Եւ հէնց այդ էր պատճառը որ Թաւրիզի խանը, գնալով Ղարաբաղի և Գանձակի կողմերից կրկնապատկած և հնգապատկած հարկեր հաւաքելու, այն էլ երեք տարուանը միասին, ունէր իր հետ միայն հազար հարիւր մարդ: Ծանր էր լուծը, ժողովուրդը այն աստիճան աղքատութեան մէջ էր, որ նոյն իսկ պարսկական խժդօնութիւններն էլ սարսափ չէին պատճառում նրան և նա վճարելու անկարողութիւնն էր յայտնում: Ուստի հազար հարիւր մարդիկ տագնապ և արհաւիրքներ տարածեցին մի ահագին երկրում, ուր իւրաքանչիւր հարկահանի դէմ կարող էր մի ամբողջ գիւղ դուրս գալ: «Թուլամորթ և կանաչի» պարսիկները ջարդում, ծեծում էին, տանջանքների էին ենթարկում և ոչ ոք նրանց դէմ ծպուտ չէր հանում, այնքան բթացել էր ժողովուրդը իր զարհուրելի ստրկութեան մէջ: Եւ որովհետև պարսից կառավարութիւնը աշխատում էր ամեն մի հարկատուից հինգ կաշի քերթել, այդ պատճառով էլ այս հարկահանութեան ժամանակ ամենալայն չափերով գործադրուեալ էր այն վայրենի օրէնքը, որով մահմեդականացած քրիստոնեան իր բոլոր ազգականների կայքերին էր տիրանում: Բռնութեամբ դուրս էին քաշում տղաներին և աղջիկներին, յափշտակում էին նրանց, բռնութեամբ մահմեդականացնում և ապա այս միջոցով խլում քրիս-

*) Սուայի կաթողիկ., եր. 35.

տոնականների վերջին կարողութիւնը: Թշուառութիւնը ընդհանուր էր: Պատմիչը ոչ միայն Ղարաբաղում, այլ և Զուղայում ու Երևանում տեսել է բազմաթիւ մարդիկ, որոնք այդ միջոցով վերջին աղքատութեան էին հասցրուել:

Դրութիւնը աւելի ևս ճնշող, յուսահատական էր Ղարաբաղում: Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ այդտեղ աւելի քան մի ուրիշ տեղ սանձարձակ ու անզուրկ էին պարսիկ կեղեքիչները: Ո՛չ: Ղարաբաղի հայ մէլիքները ընդամենը մի երկու տարի առաջ յոյսեր էին ստացել որ մահմեդական բռնակալութեան վերջն է եկել: Իսրայէլ Օրին նրանց հասկացրել էր որ դառն լուծից ազատուելը հնարաւոր է և հեշտ: Ահա այդ մաքին սովորած մարդկանց համար մանաւանդ պիտի անտանելի լինէր դրութիւնը: Եւ չը գիտէին հայ մէլիքները թէ ինչ պիտի լինի: Օրին վաղուց էր գնացել, նրա հաշուով քրիստոնեայ զօրքերը դեռ 1700 թուին պիտի մանէին Հայաստան և աղատէին հայերին: Բայց անցաւ այդ ժամանակը, անցաւ մի աւելորդ տարի էլ, և Օրինի ոչ մի տեղեկութիւն: Այդ անյայտութիւնը բացատրում էին չար լեզուները, զանազան վատ բաներ խօսելով Օրինի մասին: Երևի նրանք ասում էին թէ Օրին ստախոս էր, թէ նրան հարկաւոր էին հայ մէլիքների թղթերը ինչ որ փառասիրական նպատակների համար: Եւ գործի գլուխ կանոնաձևները, ի հարկէ, պիտի հիաւթափուէին, գուցէ և եղած չը համարէին Եւրօպա գնացած պատգամաւորութիւնը:

Այս դրութեան մէջ էին հայերը, երբ 1702 թուականի ամառը Աստրախանից ճանապարհ ընկած ռուս և հայ վաճառականների հետ մի մարդ ափ իջաւ Կասպից ծովի Նիզովոյ նաւահանգստում, ուղևորուեց Շամախի և այդտեղից Գանձակ: Այդ մարդը Օրին պատգամաւոր Միրօն Վասիլեվն էր: Իր հետ բերած նամակներից մէկը նա պիտի յանձնէր Աղուանից Սիմէօն կաթողիկոսին, իսկ մյուսը—Էջմիածնի Նահապետ կաթողիկոսին: Բայց այդ յանձնարարութիւնից Միրօնը ուրիշ մի բան չը գիտէր. նրան նոյն իսկ յայտնուած չէր թէ նամակները ինչ բովանդակութիւն ունեն: Գանձակում Միրօնն իմացաւ որ Սիմէօն կաթողիկոսը գտնուում է Չարդաթլու տեղում, որ քաղաքից հեռու չէր: Կաթողիկոսը, կարգալով նամակը, յայտնեց Միրօնին թէ ինքը պատասխան կը գրէ, երբ նա վերադառնալիս կը լինի դէպի Ռուսաստան: Եւ Միրօնը ճանապարհուեց Էջմիածին՝ յանձնարարութեան միւս մասը կատարելու համար: Այդտեղ նա հիւանդացաւ և 2 1/2 ամիս պառկած մնաց:

Նամակները տեղ հասան, կարդացուեցան: Ի՜նչ նորութիւններ: Դարերով ստրկութեան մէջ չղթայուած երկրի վրայ

ծագում էր հրաշալի օրուայ արշալոյսը: Ո՛րքան սիրալուած էին Օրիի մասին վատ խօսողները: Մինաս վարդապետը գրում էր թէ ինչպէս է այդ մարդը անդադար աշխատում, օգնութիւն հայցում. իր հայրենիքի արտասուքները սրբելու համար նա մոռացել էր իր տունն ու երեխաններին, վաճառել էր իր կալուածքը: Եւ նրա ջանքերի հետեանքերը մէլիքների աչքի առջև էին: Կուրֆիւրստը, կայսրը յուսադրական թղթեր էին ուղարկել, բայց ամենից նշանաւորը այն էր, որ Մոսկվայի մեծ թագաւորը յանձնարարել էր Օրիին յայտնել հայերին թէ ինքը մենակ, առանց նոյն իսկ կողմնակի օգնութեան, պատրաստ է նրանց ազատել և թէ այդ դործը նա կը սկսէ՝ հիւսիսային պատերազմը վերջացնելուց յետոյ:

Այդ աւետիքը լսող մէլիքների թւում այլ ևս չը կար Անգլեզակոթի Մէլիք-Սափրազը, նա, որ Օրիի ձեռնարկութեան հոգին էր: Երևի այդ ժամանակ մէլիքը վախճանուած էր: Միրօնի էջմիածին ուղևորուելուց յետոյ վախճանուեց և Գանձասարի Սիւմէօն կաթողիկոսը: Մէլիքներից երկուսը գնացին էջմիածին, որպէս զի Նահապետ իրաւորիկոսի հետ գործեն: Բայց Նահապետը զժբախտութիւն չէր համարում պարսից լուծը և երկու մէլիքները նոյն ցրտութիւնն ու անհամակրութիւնը դտան ամենայն հայոց կաթողիկոսի մօտ, ինչ գտել էր Օրին 1699 թուականին: Նա պարսից Շահին տարէնը 20 հազար ռուբլու ընծաներ էր տալիս և բայի դրանից կաշառքներ էր մատուցանում տեղական խաներին ու բէկերին, մի բան, որ նրա նախորդները չէին արել: Մէլիքները հարկ են համարում իսկոյն պատասխան ուղարկել Օրիին վերադարձող Միրօն Վասիլեվի հետ: Բայց կաթողիկոսը չէ միանում նրանց հետ և նրա տեղ երկու մէլիքների հետ պատասխանին ստորագրում է մի ոմն Մինաս վարդապետ, որ իրան անուանում է Նահապետ կաթողիկոսի փոխանորդ: Այդ պատասխանը կազմուած էր շատ զգուշաւոր ոճով: «Մեր աչքերը օրն ի բուն նայում են փրկութեան ճանապարհին որ տեսնենք թէ երբ կը դայ և կը կատարուի այն ուրախ հարսանիքը»—գրում էին մէլիքները 1702 թուականի նոյեմբերի 7-ին: Թէև նամակը Ռուսաստան տանողը միանգամայն վստահելի մարդ էր, բայց և այնպէս գրողները վախնում էին երկար ու բարակ բացատրութիւններից, խոստանում էին չուտով աւելի մանրամասն գրել և խնդրում էին որ Օրին էլ մութ ու զժուար հասկանալի ոճ գործ ածէ իր նամակներում:

Զգուշութիւնները շատ էին հարկաւոր, լրտեսների և մատնիչների պակասութիւն հայոց աղգի մէջ երբեք չէ եղել. իսկ Օրին և մէլիքները այնքան հեռատես էին, որ ամենախիստ գաղաւ-

նապահութիւնը իրանց ձեռնարկութեան առաջին պայմանն էին ընդունել: Նրանք որոշել էին ապստամբութիւն բարձրացնել միայն այն ժամանակ, երբ քրիստոնեայ պետութիւններէ զօրքերը կը մտնեն Հայաստան. ուրիշ կերպ վարուել կը նշանակէր ժամանակից շատ առաջ զարթեցնել քնած թշնամուն և նրա ձեռքը սուր տալ որ կոտորէ անպաշտպան ժողովուրդը: Այդ բոլորը շատ լաւ յայտնի էր, և զգուշութիւնը, ինչպէս շատ անգամ տեսանք, գործադրուած էր միանգամայն խելացի կերպով: Բայց մէլիքները տեսան որ Նահապետ կաթողիկոսի համար զգուշութիւնը միայն պատրուակ էր. նա ոչ միայն չէր միանում հայերի ազատական շարժման, այլ և կարող էր շլուսել նրան: Ուստի մէլիքները հեռացան էջմիածնից, տանելով իրանց հետ հաստատ համոզմունք որ չարժէ այլ ևս որ և է դիմում անել հայոց ընդհանրական կաթողիկոսին այդ գաղտնի գործի առիթով:

Բարեբախտաբար, Գանձասարի վանքում Սիմէոնի տեղ կաթողիկոս նստեց Եսային, վերև յիշած մեր պատմագիրը: Եսային հոգով և սրտով նուիրուեց ազատական շարժման և նրա ժամանակից Գանձասարը, ուր Օրին այնքան սառն ընդունելութիւն էր գտել երեք տարի առաջ, դարձաւ այն միակ տեղը, ուր կենտրոնանում էին բոլոր քաղաքական բանակցութիւնները, ապրստամբական ծրագիրները: Գանձասարը հայկական գործի հոգին էր: 1703 թուականին մայիսին այդտեղ հաւաքուել էին երկրի հայ կառավարիչները: Դա առաջին գաղտնի ժողովն էր Գանձասարում. ներկայ էին ութ մէլիքներ, որոնցից եօթը Անգեղակոթի ժողովին մասնակցողներէն էին: Օրին և Մինաս վարդապետը մի քանի հարցեր էին դրել իրանց նախակներում և գաղտնի ժողովը զբաղուեց այդ հարցերի քննութեամբ: Նախ և առաջ պէտք էր գրել մի շնորհակալական թուղթ Պետրոս Թաղաւորին: Կազմուեց մի երկար գրութիւն, որ ստորագրուեց մայիսի 27-ին և որի մէջ մէլիքները իրանց խոնարհ շնորհակալութիւնն էին անում և սրտաշարժ խօսքերով աղաչում էին Պետրոսին չը մոռանալ գերի Հայաստանը: Մենք չենք կարող չը բերել այստեղ մի կտոր՝ լեռնցու պարզութեամբ գրած այդ աղերսագրից, որ միևնոյն ժամանակ լաւ ցոյց է տալիս թէ որքան էր գրագիտութիւնը տարածուած ազատութեան ոգով վառուած մարդկանց մէջ:

Սատուծոյ սիրեցեալ քաջ Թաղաւոր հաղար ամիցն մէջ, հաղարէն մին թէ որ պատահի այսպիսի շնորհալի մեծ հարկ զոր Սատուած քո ժամանական քեզ պատրաստեաց. Այսուհետեւ չունիմք այլ ուստեքէ ումուտ, ունիմք յերկինս զՍատուած և յաշխարհի գլխի, որ այս քանի ամ է որ կու լսենք քո մեծ քաջութիւնդ և ամեն ինչ բարի արարմութիւնդ նորա համար շոտով կը ցանկամք և կը շտապեմք որ քո ժամանակովն լինի անեա մեզ ճար, որ չի լինի թէ իւր չար նիւթովն զմեզ ընչիւք կորուսանէ և ամրա-

ցուցանէ զիւր թագաւորութիւնն, որ այլ ուստեքէ չիլնի մեզ հնարք, եթէ մեզանից և եթէ վրացոց մեծամեծաց և բազումս հնարիւք մոլորեցուց և ետ մեծութիւն, երկու հարիւր ամ այլ անլի է որ մեք գերի եմք, և այլ թագաւորաց այսպիսի առատ սրտիւ չաք զիմեր որ զխտակ էք սօղ չի լինիլի Սյսօր մեք մեզանից անցաք մեր յանձն առ քո թագաւորութիւնդ անձնեցաք այնպիսի հնարիւք կատարես որ մին տեղաց մեզի քնաս չի հասնի մինչև առ մեզ մտանելն:

Օրիի նամակներից երեւում էր և մի այլ բան. Մոսկվայի արքունիքում հայոց գործին շատ համակրում էր թագաւորի առաջին մինիստրը, բօւարին Գօլովին. իսկ Նիկօլայ Սպօթարիուս, իրրե թարգման, շատ օգնութիւններ էր մատուցանում գործին: Պէտք էր շնորհակալութիւն յայտնել այդ բարերարներին էլ: Մէլիքները վճռում են տալ Գօլովին 20 հազար ռսկի, իսկ Սպօթարիուսին 4000 ռսկի (բաշխելով) իրրե ընծայ: Այդ մաքով էլ շնորհակալութեան թղթեր են ուղարկում երկուսին: Եւ որովհետեւ այդպիսի մեծ գումարներ անվնաս և առանց ուշադրութիւն դրաւելու չէր կարելի ուղարկել Հայաստանից, ուստի մէլիքները իրանց ստորագրութիւններով և կնիքներով վաւերացրած մուրհակներ են ուղարկում այդ պաշտօնականներին, ապահովութիւն տալով որ նշանակուած գումարները ժամանակին կը վճարուեն *):

Փող ուղարկելու միևնոյն դժուարութիւնը հարկադրում է մէլիքներին անկատար թողնել և Մինաս վարդապետի նամակի աջն կէտը, որ վերաբերում էր հայ պատգամաւորութեան ծախսերի համար դրամ հասցնելուն: Մէլիքները լիազօրութիւն են տալիս որ Օրին ու վարդապետը Ռուսաստանում պարտք վերցնեն, որքան կամենում են, իրանք մեծ ուրախութեամբ կը վճարեն ամեն մի գումար, հէնց որ հնարաւորութիւն և ապահովութիւն կը լինի: Նրանք յոյս էին յայտնում որ այդ բանի մէջ հայ պատգամաւորներին կ'օգնեն Ռուսաստանում գտնուող հայ վաճառականները, մանաւանդ որ դրանցից մէկը (անունը յայտնի չէ) արդէն ինքնայոժար կերպով շատ օգնութիւն էր հասցրել Օրիին: Այս բարերարին էլ մէլիքները մեծ շնորհակալութիւն էին յայտնում:

Ուղարկելով այս թղթերը, մէլիքներին մնում էր գնալ իրանց տները և սպասել թէ այնուհետեւ ինչ լուրեր կը գան Օրիից: Եւ Օրին այս սնգամ էլ երկար սպասել տուեց նրանց:

Մոսկվայից նա գնաց Վիեննա, ուր այդ ժամանակ գտնւում էր և Պֆալցի կուրֆուրստը: Սպանիական ժառանգութեան

*) Սպօթարիուսին տուած մուրհակի վերաբերմամբ տ. Ю. Арсеньевъ—„Новыя данныя о службѣ Николая Спафарія въ Россіи“, М., 1900, էր. 57:

համար սկսուած պատերազմը 1704 թուականից ընդունեց նոր կերպարանք. ֆրանսիացիները ամեն տեղ պարտութիւններ էին կրում, աւստրիական կայսրի և նրա դաշնակիցների համար ըսկըսուել էր աւելի եռանդով գործելու և յաղթական արշաւանքները առաջ տանելու ժամանակը: Կուրֆիւրստը զեկուցում ներկայացրեց Լէօպոլդին Օրիի գործերի մասին: Օգնական զօրքեր ուղարկելը այժմ մանաւանդ անկարելի էր: Եւ կայսրն էլ համաձայն էր որ իրերի այդ զրութեան մէջ աւելի լաւ կը լինի որ Օրին առայժմ բաւականանայ պարսից Շահին մօտ թողթեր տանելով: Վիեննայից Օրին կուրֆիւրստի հետ գնաց Դիւսելդօրֆ. այդտեղ էլ գլուխ բերուեց նրա դեսպանութեան ամբողջ գործը:

Սպանիական պատերազմի հանգամանքները այնպիսի քաղաքական դրութիւն ստեղծեցին, որ անյարմար համարուեց Օրինի դեսպան ուղարկել կայսրի կողմից: Այդ պատճառով կուրֆիւրստ Յովհան-Վիլհելմ իր խոստովանահայր քահանային ուղարկեց Հռոմ այսպիսի յանձնարարութեամբ. պապը մի նամակով խնդրում է պարսից Շահին որ նա թոյլ չը տայ հարստահարել իր հպատակ քրիստոնեաներին և այդ նամակը նա ուղարկում է Պարսկաստան Օրիի հետ: Պապը կատարեց կուրֆիւրստի այդ խնդրքը և ուղարկեց խնդրած նամակը: Լէօպոլդ կայսրի կողմից նամակ չը պիտի գրուէր Շահին, այդպէս էր պահանջում աւստրիական քաղաքականութիւնը. բայց դրա փոխարէն կուրֆիւրստը, ինչպէս միշտ, չը խնայեց իր կողմից անել այն, ինչ հարկաւոր էր իր բարեկամ հայերի փրկութեան համար. նա էլ նամակ գրեց Շահին և կրկնեց նրա մէջ պապի խնդրքը: Օրին սկսեց պատրաստութիւններ տեսնել: Ինչպէս ասացինք, նա կամենում էր Աստրախանում կազմել մի հայկական դունդ, որ պիտի օգնէր ռուսներին պարսկական արշաւանքի ժամանակ: Գունդը բաղկացած պիտի լինէր 300—400 հոգուց: Նրա համար Օրին Ամստերդամում գնեց 15—20 հազար ռուբլու զէնքեր և ուրիշ հարկաւոր բաներ: 1705-ին նա պատրաստուում էր վերադառնալ Ռուսաստան, բայց մի անակնկալ դէպք պահեց նրան: Մայիսի 6-ին վախճանուեց Լէօպոլդ կայսրը, որին յաջորդեց Յովսէփ I: Հարկաւոր էր որ Օրին խնդրէ նոր կայսրին որ սա էլ, Լէօպոլդի նման, հովանաւորէ հայերին:

1706 թուականի հոկտեմբերին Օրին Մոսկվայումն է: Ռուսաց կառավարութիւնից նա խնդրում էր, որ հայկական զնդի համար Ամստերդամում իր գնած զէնքերը և իրերը առանց մաքսի մտցնուեն Ռուսաստան և ուղարկուեն Աստրախան: Նոյնպէս խնդրում էր, որ թոյլ տան իր երկու որդիներին (որոնց նա թողել էր Կեօնում) գալ Մոսկվա:

Դեսպանութիւնը բոլորովին պատրաստ էր: Մօտ 50 հոգուց բաղկացած մի չքախումբ պիտի հետևէր Հոսմի դեսպանին: Այդ խմբի մէջ կային զանազան ազգութիւնների պատկանող մարդիկ—հայ, ռուս, ֆրանսիացի, չվէյցարացի, գերմանացի, հօլլանդացի, լեհացի և այլն: Զանազան էին և այդ մարդկանց դիրքն ու պարապմունքները. կային զինուորականներ, դերձակներ, ծառայողներ. մէկը նոյն իսկ իր կնոջն էր տանում իր հետ: Ամենքի համար Օրին համազգեստներ էր կարել տուել. առհասարակ նա ոչինչ չէր խնայում, որ դեսպանութիւնը չքեղ լինի և արժանաւոր կերպով ներկայացնէ եւրօպական պետութիւնը պարսից արքունիքում: Ինչպէս երևում է, այդ դեսպանութեան հետ պիտի վերադառնար հայրենիք Թոմաս եպիսկոպոս Վանանդեցին, որի հետ, երևի, ծանօթացել էր Օրին Ամբաստերդամում: Հայագէտ Շրօդէր, ինչպէս գիտենք, եպիսկոպոսի հետ պիտի դնար Հայաստան՝ հայոց լեզուն ուսումնասիրելու համար*): Բայց հասնելով Մոսկվա, նա իմացաւ, որ եպիսկոպոսը վախճանուել է, ուստի միացաւ Օրին խմբի հետ: Յայտնի է, սակայն, որ նշանաւոր հայագէտը չը հասաւ Աստրախան և ստիպուած եղաւ վերադառնալ Եւրօպա: Օրին դեսպանութեան ծրագիրը վերջացնելու համար մեզ մնում է յիշել, որ նա, ինչպէս և ամեն մի դեսպանութիւն, ունէր իր առաջին և երկրորդ քարտուղարները, թարգմանները և այլն:

Պետրոս Մեծն էլ յանձնարարկան նամակ գրեց Հիւսէին-Շահին Օրին դեսպանութեան մասին, իր կողմից էլ ինդրելով որ Շահը թոյլ չը տայ նեղացնել քրիստոնեայ հպատակներին: Օրին բացի դրանից ինդրել էր, որ իր հետ Վրաստան ուղարկուի վրաց արքայորդի Արչիլը, որ մի քանի տարիներից ի վեր, ստիպուած լինելով հեռանալ հայրենիքից, բնակութիւն էր հաստատել Մոսկվայում: Այդ բանը Օրին հարկաւոր էր համարում այն պատճառով, որ վրացիներն էլ միանան հայերի հետ, երբ ռուսները արշաւանք կը սկսեն դէպի Պարսկաստան. պէտք էր Արչիլին հաստատել հայրենի գահի վրայ և այդ մասին յայտնել պարսից Շահին: Բայց ռուսաց կառավարութիւնը, որ առհասարակ ամեն բանի մէջ համաձայն էր Օրին հետ, ինչպէս երևում է, անկատար թողեց այս մի ինդիքը. գոնէ յայտնի է որ Արչիլը չը դնաց Վրաստան և վախճանուեց Մոսկվայում:

Վերջացնելով բոլոր պատրաստութիւնները, Օրին իր ահագին չքախմբի հետ ճանապարհ ընկաւ Մոսկվայից 1707 թուի յունիս ամսին: Մինաւ լարդապետը մնաց Ռուսաստանում. նրան

*) «Հալկ. Տպ.», I, եր. 350.

պիտի տեղեկութիւններ հաղորդէր Օրին՝ կառավարութեան ներկայացնելու համար:

Օրիի գեսպանութեան մասին շատ մանրամասնութիւններ չը կան: Յայտնի չէ թէ երբ հասաւ նա Պարսկաստանի սահմանադլիսի ամենանշանաւոր քաղաքը—Շամախի: Բայց յայտնի է որ Շամախում նա ստիպուած եղաւ երկար սպասել: Ահագին տպաւորութիւն գործեց այդ բազմամարդ գեսպանութիւնը, որի նմանը, գոնէ Շամախում, դեռ չէր տեսնուած: Բայց բազմամարդութիւնից աւելի ազդու և անսովոր էր այն հանգամանքը, որ գեսպանութեան գլուխը մի հայ էր, այն էլ պարսկաստանցի հայ: Եւ սակայն նա Սպահան էր գնում իբրև ուսաց (աւելի ճիշդ—Հոսմի) գեսպան, տանում էր իր հետ ուսաց թագաւորի, գերմանական թագաւորի և պապի նամակները: Տեսակտեսակ կասկածոտ շշուկներ տարածուեցան Շամախում, որոնք զանազան բացատրութիւններ էին առաջացնում: Մահմեդականները ուզում էին հասկանալ թէ ինչ իսկական նպատակ ունի գեսպանութիւնը, և նրանց համար խորհրդաւոր նշանակութիւն էր ստանում մանաւանդ այն հանգամանքը, որ ուսաց թագաւորի գեսպանը հասարակ հայ էլ չէ, այլ հին հայկական իշխանների տոհմից է: Շամախու խանը չտալեց հաղորդել Շահի կառավարութեան այս չքեղ գեսպանութեան հանգամանքները և խնդրեց կարգադրութիւն: Ինչպէս երևում է, խանը աւելորդ չը համարեց պարսից արքունիքին հասցնել և իր բոլոր կասկածները:

Օրիի գեսպանութեան առջև լուրջ արգելքներ էին ծագում: Սպահանում երկար ժամանակ չը գիտէին թէ ինչ պատասխան տան Շամախու խանին: Ինքը, Հիւսէյն-Շահն էլ, վախեց: Բոլոր հանդամանքներին նայած՝ պէտք էր արգելել Օրիի գեսպանութիւնը և հրամայել խանին որ նա յետ դարձնէ այդ վտանգաւոր հային: Այդպէս էլ կարծում էին պարսից արքունիքում. իսկ Սպահանում ապրող մի քանի եւրոպացիներ ամեն կերպ աշխատում էին սաստկացնել կառավարութեան կասկածները: Այսպէս, Լուդովիկոս XVI-ի կողմից Սպահան ուղարկուած մի ֆրանսիացի հաւատարմութեամբ էր թէ կեղծ են այն նամակները, որ բերում է իր հետ Օրին, որպէս թէ քրիստոնեայ թագաւորներից: Կային և այնպիսիները, որոնք բացարձակ մատնութեան դիմեցին: Նրանք ասում էին թէ հայերի մէջ զոյութիւն ունի մարգարէութիւն, որ նրանց թագաւորութիւնը պիտի վերանորոգուի մի քրիստոնեայ թագաւորի հովանաւորութեան տակ, այդ մարգարէութիւնը, ասում էին, կատարւում է հէնց այժմ, որովհետև Իսրայէլ Օրիի անուան մէջ կան այն բոլոր տառերը,

որոնք հարկաւոր են՝ «il sera roi» *) բառերը կազմելու համար՝ Տգէտ, նախապաշարուած պարսիկների համար այդ ծիծաղելի գուշակութիւնն էլ բաւական էր։ Արքունիքում տիրած չիտթութիւնից շատ գեղեցիկ կերպով օգտուեց մի ճարպիկ աւղանցի, որի մասին յետոյ կը խօսենք. նա էլ շահագործում էր Հիւսէյն-Շահի երկչոտութիւնը և դրանով իր համար բաց էր անում մի ճանապարհ, որ Պարսկաստանի համար ահագին դժբախտութիւն էր։ Բայց որքան էլ մեծ լինէին Սպահանի կառավարութեան վախերը, վերջ ի վերջոյ զալիս էր մի հարց. ինչ կը լինի, եթէ Պարսկաստանի սահմաններից յետ դարձնուի մի օտար պետութեան խաղաղ դեսպանութիւնը, որ բարեկամական նամակներ էր տանում իր հետ։ Ցաւը այնքան մեծ չէր լինի, եթէ այդ դեսպանութիւնը եւրօպական մի հեռուոր երկրից եկած լինէր։ Բայց Օրին Ռուսաստանից էր զալիս, որ սահմանակից երկիր էր, որի եռանդուն թագաւորը արդէն յաղթողի անուն էր հանել։ Ռուսաստանի ահը հարկադրեց մոռանալ «il sera roi»-ն և պարսից կառավարութիւնը կամայ կամայ թոյլ տուեց Օրին գնալ Սպահան։ Այդ բանը տեղի ունեցաւ 1709 թուականին, այսինքն Օրին ճանապարհուելուց երկու տարի յետոյ։

Ինչ էր անում Օրին Շամախում այդքան երկար սպասողութեան ժամանակ։—Յայտնի չէ։ Եւ սակայն շատ հետաքրքրական էր իմանալ թէ ինչ յարաբերութիւններ ունէր նա հայ մէլիքներին հետ, ինչպէս էր իրադարձում իր դեսպանութեան բուն նպատակը, որ Պարսկաստանի բոլոր հանգամանքները լաւ գննեն ու ուսումնասիրեն էր։ Բայց եթէ չը մոռանանք որ Օրին մեծ զգուշութիւններով էր տանում իր գործը և միշտ գիտէր որ զգուշութիւնն է այդ գործի աջողութեան առաջին, ամենակարեւոր պայմանը, —մենք պիտի ենթադրենք որ նա, երեւի, ամեն կերպ աշխատում էր քնայնել պարսից կառավարութիւնը, կասկածների տեղիք չը տալ, ուստի և ամեն ինչ կատարում էր զաղտնի կերպով։

Պարսկաստան գնալիս Օրին մտաւ Էջմիածին, այցելեց հայոց կաթողիկոսին։ Այդ ժամանակ կաթողիկոս էր Աղէքսանդր Զուղայեցին։ 1709 թ. յուլիսի 7-ին գրած մի թղթով նա յայտնում էր Պետրոս թագաւորին թէ Օրին գնաց Պարսկաստան։ Երեւի Օրին էր ինչդրել նրան գրել մի այդպիսի թուղթ։ Կաթողիկոսը օրհնում էր թագաւորին, բարեմաղթութիւններ էր անում և ապա աւելացնում էր թէ Օրին ամենքին մեծ զար-

*) «Նա թագաւոր կը լինի»։

մանք պատճառեց, այնքան շատ լաւ կերպով էր պահպանում թագաւորի պատիւը:

Հիւսէին-Շահը, չը նայած իր ներքին վարանումներին և դժգոհութեան, Օրիին ընդունեց մի օտարերկրացի դեսպանին վայելուչ պատիւներով: Պետրոս Մեծին գրած իր պատասխանի մէջ Շահն ասում էր. «Համաձայն ձեր յանկութեան՝ Իսրայէլ Օրիի դեսպանութեան կատարեալ աջողութեան համար մենք ցոյց տուինք նրան մեր ողորմած ուշադրութիւնը, օգնութիւնը և յարգանքը: Թող պարզ լինի ձեր պայծառ հայեացքին, որ թէև յիշեալ քրիստոնեայ ժողովուրդները մէջ կան տգէտներ, որոնք, մեր պետութեան արժանաւորութիւնը նկատի առնելով, պիտի արժանի պատիժը կրէին իրանց վատ արարքները կամ վատ ուղղութեան համար, բայց ձեր բարեկամական նամակը, որ ամրացնում է մեր մէջ վաղուց գոյութիւն ունեցող բարեկամութիւնն ու համաձայնութիւնը, հրաւիրում է մեզ գնալ ողորմութիւնների և մեր հպատակներին յարգելու մեր ընտրած ճանապարհով, և մենք վեհանձնաբար ներում ենք յիշեալ ժողովուրդների բոլոր արարքներն ու մեղքերը, այն պայմանով, որ նրանք այսուհետև այլ ևս այդպիսի սխալների մէջ չընկնեն»: Թէ ինչ են նշանակում այս ակնարկութիւնները, հաստատապէս ասել չէ կարելի, քանի որ չը գիտենք թէ ինչ խօսակցութիւն է տեղի ունեցել Շահի և դեսպանի մէջ: Ուշադրութեան արժանին այն գոռոզութիւնն է, որով պարսից ողորմելի բռնակալը բարեհաճում էր ներող և ողորմած հանդիսանալ: Շատ զարմանալի է, որ այնքան հարստահարուող քրիստոնեաները դեռ մեծ յանցաւորներ էին պարսից կառավարութեան առաջ և պէտք էր ռուսաց թագաւորի միջնորդութիւնը, որպէս զի Հիւսէին-Շահը ողորմածաբար ներէ իր անլեզու ստրուկներին: Շատ խղճալի պէտք էր համարել Օրիի դեսպանութեան հետևանքը, եթէ նա այս տեսակ մի թուղթ ստանալու համար գնացած լիւնէր Պարսկաստան:

Նա երկար չը մնաց Սպահանում: Երևում է, որ այնտեղ ամեն ինչ շտապով կատարուեց, որպէս զի հայ դեսպանը պարսից մայրաքաղաքում երկար նստելու հարկաւորութիւն չունենար: Նոյն 1709 թուականի սեպտեմբերին Օրին Շամախումն է և ռուսաց կառավարութիւնից նաւեր է խնդրում՝ Կասպից ծովով Աստրախան ճանապարհուելու համար: Այդ ժամանակ Շամախում մի ինչ-որ ապստամբութիւն է տեղի ունենում և Օրին զինում է իր մարդկանց՝ հարկաւոր գէպքում պաշտպանուելու համար: Հետաքրքրական է, որ նա ունէր իր հետ և 12 փոքրիկ թնդանօթ:

Ճանապարհորդութիւնը պիտի կատարուէր առաջիկայ տարուայ գարնանը: Բայց 1710 թուականն էլ Օրին հարկադրուած է լինում անցկացնել Շամախում, որովհետեւ այդ քաղաքում մեռած մի ուսւ վաճառականի դոքերը յափշտակողներին աղատելու համար նա երեք անգամ մարդ ուղարկեց Շահի մօտ՝ հարկաւոր հրամանները ստանալու համար: Վերջապէս նա դուրս է գնում Շամախուց և հասնում է Կասպին ծովի Նիզովոյ նաւահանգիստը: Այդտեղ նրան նոր դժուարութիւններ էին սպասում: Պէտք է իմանալ, որ Պետրոսի յանձնարարութեամբ Օրին իր հետ Ռուսաստան էր տանում 20 հայ ընտանիք, որոնք մետաքսից զանազան կտորներ գործել պիտէին: Այդ արհեստաւորների համար Օրին գնել էր մետաքս և այլ հարկաւոր իրեր: Բայց դրանից՝ նա տանում էր իր հետ ուրիշ զանազան ապրանքներ՝ ընծաների համար, նոյնպէս և 25 ձի, որոնք գնուած էին յատկապէս թագաւորին ընծայելու համար: Այդ բոլորը Աստրախան տեղափոխելու համար Օրին խնդրել էր ուղարկել չորս նաւ, բայց միայն երկու նաւ ուղարկուեցին Նիզովոյ: Օրին հարկադրուած եղաւ ձիաները ցամաքային ճանապարհով ուղարկել Աստրախան, իսկ ինքը և իր հետևորդները տեղաւորուեցան երկու նաւերում: Մէկը հասաւ Աստրախան, իսկ միւսը որի մէջ գտնուում էր ինքը, Օրին, փոթորիկի հանդիպեց և յետ մղուելով դէպի ափը, ջարդուեց: Օրին իր մարդկանց հետ ափ դուրս եկաւ և հարկադրուած էր ձմերել Նիզովոյի մէջ:

Ամբողջ ժամանակ նա չէր մոռանում այն գործը, որի համար այսքան աշխատութիւններ էր յանձն առել: Նա անդադար թղթակցութիւն ունէր Մինաս վարդապետի հետ, որ իր կողմից ամեն հարկաւոր բան իսկոյն հաղորդում էր ուսաց կառավարութեան: Դժբախտաբար, թէ Օրինի նամակների և թէ Մինաս վարդապետի հաղորդագրութիւնների մէջ մենք չենք գտնում մանրամասնութիւններ թէ ինչպէս Օրին կատարեց իր դեսպանութիւնը, ինչ ունէր հաղորդելու հայկական գործի մասին և գործողութիւնների ինչ եղանակ էր ցոյց տուել նրան այդ երկար ճանապարհորդութիւնը: Նա միշտ կրկնում էր թէ անձամբ կը զննուցանէ թագաւորին այն ամենը, ինչ տեսել է և արել է: Մի բան միայն միշտ անփոփոխ է այդ նամակների մէջ, դա այն մեծ յոյսն է, որ քրիստոնեաները դրել են ուսաց թագաւորի վրայ: Այդ յոյսը, ճիշտ որ, այնքան վառ էր, այնքան ոգևորիչ, որ հայերը Օրին վերադարձի ժամանակ նոյն իսկ մի քիչ մոռացան զգուշութիւնը: Դանձաւարի Եսայի կաթողիկոսը, տեսակցելով Օրինի հետ, այն աստիճան ոգևորուեց հայրենիքի աղատու-

թեան մտքով, որ իր միաբանութեան հետ ճանապարհուեց զեպանութեան հետ գէպի Ռուսաստան, որպէս զի սնծամբ Պետրոսին յայտնէ հայ ժողովրդի զդպրմունքները և աղաչանքները:

1710—1711 թուականները շատ նշանաւոր էին Ռուսաստանի համար: Դեռ 1709-ին չվեզացիները սարսափելի պարտութիւն կրեցին ռուսաց զօրքերից Պուտովա քաղաքի մօտ և նրանց թագաւոր Կարոլոսը փախաւ Թուրքիա: Պետրոսի տարած այդ մեծ յաղթութիւնը ահագին տպաւորութիւն գործեց Արևելքում: Թուրքիայի լուծի տակ հեծող քրիստոնեաները հրաւիրում էին Պետրոսին դալ և աղատել իրանց: Եւ թագաւորը, մի կողմ թողնելով իր սովորական զգուշութիւնը, ծրագրեց մի արշաւանք Թուրքիայի գէմ: 1710 թուականին պատերազմը համարեա թէ յայտարարուած էր: Ահա այդ ժամանակից Օրին տեղեկութիւններ էր հաղորդում այն բոլոր գէպերի մասին, որոնք տեղի էին ունենում Թուրքիայում և Պարսկաստանում: Թուրքիան եռանդով պատրաստում էր պատերազմի, իսկ Պարսկաստանը արդէն սկսել էր իր ընդհարումները Աւստրիացիների հետ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ այդպիսի ժամանակներում որքան կարեւոր էին այն տեղեկութիւնները, որ Օրին հաւաքում էր և ուղարկում Մոսկվա:

Մինչդեռ նա Նիզովոյում այդպիսի գործերով էր զբաղւած, Աստրախանի, լուր եկաւ թէ նրա ուղարկած ձիաները, ապրանքը տեղական իշխանութեան կողմից արդելքի տակ են դրուած և նրանց համար մաքս են պահանջում: Բացի դրանից, նրա չքաւորի այն մասը, որ արդէն հասել էր Աստրախան, մնալով այդ տեղ առանց օգնութեան, սկսել էր զանազան զանգատներ տանել: Օրին նամակ նամակի ետևից է հասցնում Մինաս վարդապետին՝ գրում է և կառավարութեան, զանգատուելով Աստրախանի իշխանութիւնների վրայ և մեղադրելով անբարեխիղճ պաշտօնեաներին: Այս անգամ նրա նամակները հայերէն են: Իրևի Եսայի կաթողիկոսը կամ նրա հետ եղած հոգևորականներից մէկն էր գրում: «Ես թագաւորի ամրովն եկեալ եմ Իրանու երկիրն,—գրում էր Օրին Նիզովոյից 1711 թուին մարտի 1-ին.— հիմա գլխով և ապրանքով էլի թագաւորին ծառայութեանն եմ դալիս. թագաւորին ոչ մին փրքագէն *) ինձ ապրանք չեն տուել, չեմ գիտում մեր ապրանքն ինչ կողմանէ են զաւթում»: Իսկ իր վրայ եղած զանգատների առիթով նա խնդրում էր. «Ահա խնդիրքս այն է ի քո մեծութենէդ, որ թէ տեղդ մեղ զարչուարդ տուող և կամ խօսք ասող լինի, այսպէս բանին թաշափուլ տայր

*) Приказъ.

և համբերէք մինչև մեք գամք և մեր ամենայն անոք և որպիսութիւնն քո մեծութեանդ արդ անեմք. այնուհետև ինչպէս կու հրամայես ամբ քոնն է»։ Աստրախանի ոռւս պաշտօնավարների թոյլ տուած անկարգութիւնը միանգամայն անպատուութիւն համարելով, Օրին գրում էր. «Աղուանից երկրի պատրիարհն մեզ հետ էր, պիտի որ դայ յերկրպագութիւն մեծի թաղաւորութեանդ. սա մեզ մօտ, և մեք հալայ Հայոց երկրումս, այս խօսքերս որ եկաւ մեզ մեծ ամօթանք և զաւ տեղս»։ Եւ իր գէմ եղած չարախօսութիւնների մասին գոնէ մի համառօտ բացատրութիւն տուած լինելու համար, Օրին ասում էր. «Ծառայդ Իրանու երկրումս ինչ որ արարեալ եմ և ասացեալ, ամենն պատճառով է և ատանց պատճառի բան չեմ արարեալ. հիմա չեմ կարող գրել, երբ որ ոտն համբուրելու հասայ, ամեն արդ կանեմ»։

Վերջապէս Օրին մի ինքպով համոռւմ է Աստրախան 1711 թուականի ամառը։ Մինչև այդ Մինաս վարդապետը մի չարք խնդրադրեր էր ներկայացրել կառավարութեան Օրին իրերը և սպրանքը ազատելու հրաման խնդրելով։ Ինքը, Օրին էլ, մի ամսի չափ մնալով Աստրախանում, աշխատում էր կարգի բերել անախնիալ պատահարների պատճառով իր խանգարուած գործերը, սրպէս զի որքան կարելի է շուտ ճանապարհուի Մոսկւա և դարձեալ նուիրուէ իր սիրած և փայլայած սուրբ գործին։

Բայց ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել. Հայաստանի աղաւտութեան դաժալարը մի սաստիկ հարուած ստացաւ. Օրին, այդ դաժալարի ստեղծողը և մարմնացումը, օղոտոտ ամսին վախճանուեց Աստրախանում։

Եսայի կաթողիկոսը, թաղելով նրան հայոց եկեղեցու բակում, տրտում վերադարձաւ Գանձասար։

Լ է Օ

(Եր Ժամանակով)

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

20) Абр. Гукасовъ. Основныя черты строенія Армянскаго нагорья. Съ картой. Тифлисъ, 1901 г. (отд. отт. изъ XXII-ой кн. „Записокъ“ К. О. И. Р. Г. О.)-

Երկրի անցեալը գրուած է նրա հաստ կեղևի շերտերում: Այդ հողային էջերի մէջ գրուած են բոյսերի և կենդանիների քարացած մնացորդներ, որոնց չնորհիւ երկրաբանը իմանում է երկրի գլխով միլիոնաւոր դարերի ընթացքում անցած-դարձածները: Այդ ահագին ժամանակաշրջանում մեր երկրի ոչ միայն օրգանական կեանքը, այլ և նրա մակերևոյթը անթիւ փոփոխութիւնների են ենթարկուել. այնտեղ, ուր այժմ ցամաք է, մի ժամանակ ծով է եղել և ընդհակառակը: Այնտեղ, ուր առաջ տափարակներ էին տարածուած—այժմ խրոխտ կանգնած են հսկայական լեռնաշղթաներ ձիւնափայլ զաղաթներով. իսկ մի այլ տեղ նախկին լեռները մաշուել, քայքայուել են և հարթ դաշտեր առաջացրել:

Երկրի իւրաքանչիւր կէտում կարելի է տեսնել նրա անհուն անցեալի հետքերը և նրա մակերևոյթի փոփոխութիւնները: Լեռների կնճիռներն ու նրանց խճճուած հանգոյցները ևս իրանց ուղղութիւնների մէջ որոշ կանոնաւորութիւն են ցոյց տալիս: Ահա գլխաւորապէս այդ վերջին հարցին է նուիրուած վերև յիշած գրքուկի նիւթը: «Այս գրութեան նպատակն է, ասում է հեղինակը, պարզել Հայկական լեռնաշխարհի կազմութեան հիմնական գծերը և ցոյց տալ նրա կապը հարեան երկրների հետ՝ գոյութիւն ունեցող երկրաբանական և տեղագրական նիւթերի, ինչպէս և անձնական գիտողութիւնների հիման վրայ»: Եւ հեղինակին որոշ չափով աջողուել է հասնել իր նպատակին, ինչպէս կարելի է համոզուել նաև նրա կազմած քարտէզից:

Դժբախտաբար գրուածքի լեզուն չոր ու ցամաք է, ծանր

ու նեղ մասնագիտական, այդ պատճառով դժուարութեամբ է կարգադրում, չը նայած անգամ բրօշիւրի փոքր ծաւալին (37 երես): Մեզ թւում է, որ գիտական լրջութիւնը կարելի է միայնակ ոճի պարզութեան և դիւրամատչելիութեան հետ. միայն այդ պայմաններում գիտութիւնը դադարում է մի քանի քուրմերի սեփականութիւն լինելուց:

Լ. Ս.

21) Отчетъ комиссіи присяжныхъ повѣренныхъ при Тифлисскомъ Окружномъ судѣ (съ 19 марта 1900 г. по 1-е марта 1901 г.)

Անցեալ տարի մարտ ամսին, Թիֆլիսի փաստաբաններին ձեռնհրէցութեամբ և տեղիս նահանգական դատարանի հաւանութեամբ հիմնուեց Թիֆլիսում մի համակրելի հաստատութիւն՝ երգուեալ հաւատարմատարներին մասնաժողով, իբրեւ դատարանին օժանդակիչ նկայուն օրգան:

Մասնաժողովի գործունէութեան չրջանը բացառապէս կազմում են երգուեալ փաստաբաններին և նրանց օգնականներին վերաբերեալ գործերը, որոնք առաջ քննւում էին միայն դատարանի ընդհանուր ժողովում, ինչպէս և ուրիշ տեղերում, ուր չը կայ երգուեալ հաւատարմատարների խորհուրդ: Հասկանալի է, որ դատարանը, իբրեւ պետական հաստատութիւն, ծանրաբեռնուած միայն իրան յատուկ պաշտօնական գործերով, ոչ բուականապէս ժամանակ և ոչ էլ միջոց ունի փաստաբանների գործունէութեան բարդ և փափուկ խնդրին հետեւելու: Այժմ այդ կարևոր և պատասխանատու գործը յանձնուած է նորերս կեսնաքի կանչուած հաստատութեան, իսկ դատարանին վերապահուած է բարձրագոյն ինստանցիայի դերը, ուր անցնում են մասնաժողովի որոշումները:

Պարզ է, որ զրանից փաստաբանական էտիկայի փափուկ խնդրին աւելի կը կանոնաւորուի և ցանկալի ուղղութիւն կը ստանայ, ինչպէս այդ տեսումն ենք այն դատաստանական չրջաններում, ուր շատ տարիներ գործում են երգուեալ հաւատարմատարների խորհուրդները:

Անցեալ մարտ ամսին լրացաւ Թիֆլիսի վերոյիշեալ մասնաժողովի գործունէութեան առաջի տարեշրջանը. այդ առիթով հրատարակուած տարեկան տեղեկագրից երեւում է, որ անցեալ տարի Թիֆլիսի նահանգական դատարանի չրջանում հաշւում էր 59 երգուեալ հաւատարմատար և դրանց 25 օգ-

նախնաներ. տարուայ ընթացքում ընդունուած են 11 երդ. հաւատ. և 16 օգնականներ: Մասնաժողովը բայի վարչական մասից գլխաւորապէս զբաղուել է փաստաբանների այլ և այլ պարտազանցութիւններից ծագած դործերով և իր վճիռներում տուել է փաստաբանական էտիկային վայել պատշաճաւոր հրահանգներ. յայտնի դէպքերում մասնաժողովը յանցաւոր ձանաչուած փաստաբաններին դատապարտել է, ենթարկելով նրանց նկատողութեան կամ աւելի ծանր դէպքում ղրկելով փաստաբանական պրակտիկայից սրու ժամանակով: Ընդհանրապէս այդպիսի դործերի թիւը տարուայ ընթացքում եղել է 35:

Անժխտելի է այդ հիմնարկութեան բարոյական ազդեցութիւնը փաստաբանական բարքերի բարւոյման վրայ. մասնաժողովի որոշումների հրահանգիչ ոգին, նրա իրական հսկողութիւնը փաստաբանների դործունէութեան վրայ այն հետեանքը կ'ունենայ, որ երդուեալ հաւատարմատարը, իբրեւ հասարակական պաշտօնեայ, աւելի գիտակցօրէն կը վերաբերուի իր դործին, և չի թոյլ տայ որեւէ գործողութիւն իր բարձր կոչման հակառակ, քաջ գիտենալով, որ նրա վրայ հսկող աչք կայ և թէ ինքը իւրաքանչիւր անպատեհ արարքի համար պէտք է պատասխան տայ ընկերական դատի առաջ: Յանկանք կատարեալ և յարստե աջողութիւն այդ համակրելի հաստատութեան:

ՅՈՎ. ՍՊ.

22) 1. ՄԱՍԵՐԵՆՆՅԱՆ. «Этюды по армянской диалектологии. Часть II, выпускъ I. Сравнительная морфология Мунского диалекта въ связи съ морфологіей грабара и среднеармянскаго.» (Ուսումնասիրութիւններ հայ բարբառաբանութեան մասին: Մասն Բ. պրակ Ե. Համեմատական ձևաբանութիւն Մշի բարբառի՝ գրաբարի և միջին հայերէնի ձևաբանութեան հետ կից): Մոսկւա, 1901, մեծագիր 8⁰, եր XXI+186.

Այս աշխատութեան առաջին մասը հեղինակը ապել է 1897-ին, իբրեւ մագիստրոսական շարադրութիւն («Մշի բարբառի համեմատական ձայնաբանութիւնը՝ գրաբարի ձայնաբանութեան հետ կից»): Այս առաջին մասի առաջաբանից տեսնում ենք, որ իր գրուածքի նիւթը հեղինակը անձամբ հաւաքել է 1894 և 1895 թուերին Անգրկովկասում ճանապարհորդելով, Բաթումում, Թիֆլիսում և Էջմիածնում գտած մէջիւրներից, որով հետեւ չէ կարողացել, ինչպէս ցանկալի էր, ուղեւորութիւն կատարել Տաճկահայաստան և բուն տեղում, Մուշ քաղաքում և չճշակայ գաշտում, ուսումնասիրել այդ բարբառը: Մշի բարբառ-

ուով տպագրուած նիւթերը նրան բաւարարութիւն չեն տուել, որովհետեւ չունեն հնչիւնների գրութեան այն ձառութիւնը, ինչ որ պահանջուած է լեզուագիտական պարագմունքի համար: Ուստի իր հաւաքած նիւթերից կազմել է Մշի բարբառի մի բառարան, որ պարունակում է աւելի քան 1000 բառ, և այս բառերը համեմատել է գրաբարի, մասամբ և ուրիշ բարբառների հետ: Իր ուսումնասիրութեան մէջ հետեւել է այն սխառմին, որին հետեւել են և ուրիշ հետազոտողներ, որոնք դատաւարաբար հնչիւնական երկոյթները համեմատում են գրաբարի հետ:

Այժմ լոյս տեսած՝ երկրորդ մասի առաջին պրակը, որ գրուած է իրրեւ շարագրութիւն գօղտօրական աւտիճան ստանալու համար, հետազօտում է Մշի բարբառի ձեւաբանութեան մի մասը, այսինքն այդ բարբառի բառակազմական մասնիկները և հոլովումը: Յաջորդ պրակը պէտք է պարունակէ զերանունների ու բայերի հոլովումն ու խոնարհումը, միւս մասն բանիների և մշերէնի բառակազմութիւնը: Այնպէս որ բոլոր աշխատանքը միասին վերցրած՝ կը տայ Մշի բարբառի քերականութեան այն մասը, որ կոչւում է ստուգաբանութիւն, գիտական սեռով մշակուած, հնչիւններն ու ձևերը համեմատելով հնդկիւնւրոպական լեզուների, գրաբարի, միջին հայերէնի և ուրիշ դատաւարաբանների համապատասխան ձևերին հետ:

Հայերէն բարբառների ուսումնասիրութեան կարեւորութեան վրայ առաջին ուշադրութիւն դարձնողն եղաւ հանգուցեալ Բ. Պատկանեանը (1864—1869), որ և մի քանի նմուշներ ու նիւթեր տուեց այդպիսի աշխատանքների (1875): Դուռ նրանից առաջ, 1852-ին, Գ. Հախվերդեանը Սայեաթ-Նօվայի հրատարակութեան առաջաբանում փորձել էր տալ Թիֆլիսի բարբառի քերականութիւնը, իսկ նրանից յետոյ կատարուեցին մասնագէտների ձեռքով բաւական թուով ուսումնասիրութիւններ, և այսօր մեր գաւառաբարբառներից շատերն արդէն հետազօտուած են, ինչպէս աղուկեցոյ, Լեհաստանի հայերի, Կիլիկիայի, Ախալցխայի, Թիֆլիսի, Ղարաբաղի և այլն: Այս ուսումնասիրութիւնների մէջ հետզհետէ մշակուել է գիտական մէթօդ հայերէն բարբառների հետազօտութեան, պարզուած են լեզուագիտական հայեցակէտներ, վճռուած են բաղմաթիւ բանասիրական հարցեր, որիէ բարբառի հնչիւններն և բառակազմական ու քերականական ձևերը համեմատուած են գրաբարի հետ, որ իր կողմից բաղմաթիւ հետազօտութիւնների է ենթարկուել և համեմատուել է հնդկիւնւրոպական լեզուների հետ: Այս այսպէս լինելով՝ հասկանալի է, որ մի նոր բարբառի ուսումնասիրութիւնը ներկայումս արդէն ոչ թէ մի ինքնուրոյն, չափիլ բայ անող աշխա-

տութիւնն կը լինի, այլ մի շարլօնական դործ—արդէն ձեռք բերուած պատրաստ եզրակացութիւնները յարմարեցնել ուսումնասիրութիւնը բարբառին, կամ սրա մէջ ևս գտնել այն՝ ինչ որ գտնուած է միւս բարբառների մէջ: Այս պատճառով կարծում ենք, որ ներկայումս որեւէ հայերէն բարբառի ուսումնասիրութիւնը, անկախ այն հարցից, թէ որչափ յաջող կամ անյաջող է կատարուած՝ ըստ ինքեան համապատասխան նիւթ չէ մագիստրոսական, մանաւանդ դոկտորական շարադրութեան համար:

Որովհետքի համոզիչ լինի մեր ասածը՝ մի համառօտ համեմատութիւն անենք: 1890 թուին Աղ. Տօմսօն իբրի դոկտորական շարադրութիւն տպագրեց իր Պատմական քերականութիւնը Թիֆլիսի այժմեան հայերէն լեզուի (Историческая грамматика современного армянского языка города Тифлиса): Այս աշխատութեան մէջ հեղինակը ամենայն մանրամասնութեամբ վերլուծել է ուսումնասիրած բարբառի հնչիւնները, մասնիկները, քերականական ձևերը և համեմատել է հնդիկ-եւրոպականի, զրաբարի, մասամբ և ուրիշ գաւառաբարբառների հետ. այս կերպով նա հիմք է դրել հայերէնի համեմատական քերականութեան՝ Թիֆլիսի բարբառի վերաբերմամբ: Այժմ պ. Մսերեանցը նոյնը անում է Մշի բարբառի վերաբերմամբ, բայց այն մեծ տարբերութեամբ, որ Տօմսօնը եղել է մէթօք ստեղծող, հետադօտող, ճանապարհ բացող, իսկ պ. Մսերեանցը՝ հարթուած ճանապարհով գնացող, հետևող: Օրինակ պ. Մսերեանցը համեմատել է մշերէնի 18 ածանցական մասնիկներ հնդիկ-եւրոպական մասնիկների հետ. բայց Տօմսօնը բոլոր այդ 18 մասնիկները արդէն դուրս է համեմատել է հնդիկ-եւրոպականի հետ և նրանց ծագման նոյնութիւնը ապացուցել: Ի՞նչ կը մնար ուրեմն պ. Մսերեանցին—ընդհանրապէս քայլ առ քայլ հետևել Տօմսօնին, գրեթէ կրկնել նրա տաածները, իսկ քիչ անգամ՝ շեղուել նրանից, հետևելով ուրիշ, նորագոյն գիտնականների կարծիքներին, որոնք Տօմսօնի աշխատութիւնը գրուելու ժամանակ դեռ յայտնի չէին: Բերենք մի ապացոյց:

«Վա», «վան» մասնիկների մասին պ. Մսերեանցը գրում է (եր. 46, § 64).

«Նոր հայերէնի վա, վան մասնիկները, որոնք կազմում են ածականների՝ երեսում են շատ բարբառներում, ինչպէս արեւմտեան (օր. Վ. Պօլսի), նոյնպէս և արեւելեան (Թիֆլիսի, Մշի և ալլն) խմբերում: Սրանք պէտք է նկատուին առաջացած սեռական հոլովից. նրանց մասին խօսք կը լինի գոյականների հոլովման բաժնում: Ուրեմն վա, վան մասնիկներով կազմուած բոտերի մեծ մասը ներկայացնում է եղակի սեռականի սկզբնական ձևեր, որոնք սկսել են գործածուել նաև ածականի նշանակութեամբ. նոյնպէս է

նալում սրանց կազմութեան վրայ պրօֆ. Տօմսօնը (Թիֆլ. քերակ. § 247)»։ Ապա բերում է 3 օրինակ—ամբողջ, ձըմբովա, երեկուան։

Նոյն մասնիկների մասին Տօմսօն գրում է ի միջի այլոց հետևեալը. (Պատմ. քերակ. Թիֆլիսի, եր. 113, § 237).

«Թիֆլիսի մասնիկը ուս, ուան։ Գրաբարում չէ պատահում այսպիսի մասնիկ։ Նա Թիֆլիսի բարբառում կազմում է զոյականներից ածականներ... Ախալցխայի և Ն. Պօլսի բարբառներում մենք գտնում ենք նոյնպիսի վերջաւորութիւն սեռական հոլովի... Սա պարզապէս սեռական հոլով է, որ շնորհիւ իր նշանակութեան... և մասնաւոր շնորհիւ մի քանի մակբայների, ինչպէս էրէկ, որի սեռականն է էրէկուայ, որ նշանակում է d'hier, ակօեց գործածուել ինչպէս մեր ածականները։ Նա պահպանել է սեռական հոլովի թէ՛ ձևը և թէ՛ գործածութիւնը...»։ Ապա բերում է 21 օրինակ Թիֆլիսի բարբառից, որոնց մէջ կան նաև՝ ամբողջ, ձմբովա, էրէկուա, նախապէս բացատրելով, որ առաւ և առանց գործ են ածում անխորաբար։

Այս երկու հատուածների համեմատութիւնից երևում է, որ պ. Մսերեանցի գրածի մէջ չը կայ և ոչ մի միտք՝ որ չը բղիշը Տօմսօնի գրածից. վերջինս դեռ այն առաւելութիւնն էլ ունի, որ առելի մանրամասն բացատրում է «ուս» կամ «ուան» մասնիկի յատկութիւնները (որոնք մենք գուրս թողինք, բաղմակէտներ գնելով) և բերում է հօթն անգամ առելի շատ օրինակ։ Ուրեմն պ. Մսերեանցը կրկնում է մէկերէնի վերաբերմամբ այն՝ ինչ որ առաջուց ասուած է Թիֆլիսի բարբառի վերաբերմամբ։ Եւ այս օրինակը մէկ հատիկ, բացառութիւն չէ, այլ ընդհանուր, տիրապետող երեւոյթ, այն փոփոխութեամբ, որ պ. Մսերեանցի աշխատանքի մի մասում նրան առաջնորդ է հանդիսանում Տօմսօնի Թիֆլիսի քերականութիւնը, իսկ մի ուրիշ մասում՝ Հիւրշմանի Հայերէն քերականութիւնը, մի շատ լուրջ գործ, որ լոյս տեսաւ Լէյպցիգում 1897 թուին։ Մենք չենք ուզում սրանով ասել, թէ Մսերեանցը արտագրել է ուրիշ հեղինակներից, թէ նա ինքն անխորոզ էր ինքնուրոյնաբար նոյն բանն անել, այլ ուզում ենք ասել, թէ հետազոտութեան նիւթ ընտրելով մի բարբառ՝ նա կամայ թէ ակամայ պէտք է հանդիսանար կրկնող ուրիշների ասածներին, իսկ այս դերը համապատասխան չէ այն մարդուն, որ ձգտում է գիտութեան բարձրագոյն աստիճան ձեռք բերելու և, ուրեմն, պէտք է անկասկածելի ապացոյցներ առն ինքնուրոյն աշխատելու լիակատար պատրաստութեան։ Դեռ կարելի էր հաշուել, եթէ պ. Մսերեանցը Մշի բարբառի ամբողջ քերականութիւնը (թէ տըսուած երկու հատորը և թէ տպուելիք պրակը) աւար մի անգամից՝ իբրեւ մագիստրոսական շարագրութիւն։

Գալով աշխատութեան ներքին յատկութեան՝ պէտք է նկա-

տենք, որ հեղինակը բաւականաչափ ծանօթ է իր ուսումնասիրած բարբառին, հեղինակօրէն է տիրապետում նրան, այլ գիտէ այնքան՝ որքան կարողացել է նիւթ հաւաքել երկու ամառուայ ընթացքում մշեցիներից Անդրկովկասում: Նա, ինչպէս տեսանք, էէ օգտուել մշեցիների բարբառով տպւած նիւթերից, որովհետեւ նրանց ուղղագրութիւնը ցանկալի ճշտութիւնը չունի: Եթէ պ. Մսերեանցը տիրապետէր մշերէնին, որչափ հաբկաւոր էր՝ նա անշուշտ կ'օգտուէր այդ նիւթերից, ուղղելով նրանց մէջ սխալ գրութիւնները, և այն ժամանակ նա կ'ունենար աւելի հարուստ բառամթերք և ձևեր՝ քան իր կազմած «աւելի քան 1000» բառը, որի կրկնապատիկը և եռապատիկը անտարակոյս գոյութիւն ունի մշեցոյ բարբառում: Հմտութեան և նիւթերի պակասութիւնը գրքում արտայայտուում է շատ անգամ.— որեէ մասնիկի կամ ձևի գոյութիւնը մշերէնում՝ հեղինակը յաճախ ապացուցանում է միայն մի օրինակ բերելով և խոստովանելով, թէ աւելի չունի, օրինակ՝ «այն», «ու», «ուն», «աւկան» և այլն մասնիկների համար. կամ պարզապէս ասում է («անի» մասնիկի մասին), թէ «մեր մշերէն բնագիրներում չենք գտնում (իսկ կայ թէ ոչ) համապատասխան ձև այս մասնիկին (եր. 29): Սյն-ինչ մշերէնը կատարելապէս գիտցողը շատ աւելի օրինակներ կը գտնէր բոլոր այդ մասնիկների համար: Մի և նոյն պատճառով պէտք է բացատրել հեղինակի մի քանի սխալներն էլ. օր.՝ որ մշեցոյ լեզուով լի (լիքը) բառը ասում է ընին (9) (եր. 25), կամ որ բազնիք, հարմնիք, բաշնիք և այլն հոլովւում են սովորական կանոնով և ք զիւրը միշտ պահպանում են (եր. 31): Եւ այլն:

Նոյն անտեղեկութիւնը պատճառ է դարձել, ինչպէս կարծում ենք, մի խոշոր թիւրիմացութեան: Հեղինակը քանի անգամ յայտնում է, հակառակ մինչև այժմ տիրող ընդհանուր կարծիքին, թէ մշերէնը, իր ձայնաբանութեան պատճառով, պատկանում է հայ դաւառաբարբառների արևելեան խմբին: (Արևելեան խմբին են պատկանում Թիֆլիսի, Աղուլիսի, Ղարաբաղի և այլն բարբառները): Նախ և առաջ՝ վտանգաւոր է որեէ բարբառի գիրքը միւս բարբառների մէջ՝ որոշել միայն նրա ձայնաբանութեան հիման վրայ, անտես անելով բերականական ձևերը, որոնք ինչպէս լեզուի, նոյնպէս և բարբառի գլխաւոր տիպն են կազմում: Բայց թողնելով այս՝ նոյն-իսկ մշերէնի ձայնաբանութեան մասին հեղինակի անպայման վկայութիւնը շատ տարակուսելի է. միթէ մշեցին «բան», «գարի», «արդար» բառերը նոյնպէս է արտասանում՝ ինչպէս օր. թիֆլիսեցին, աղուլեցին և այլն:—Այդպիսի նոր և քիչ հաւանական միտք

յայտնելու համար պէտք էր նախ կատարելապէս հետազօտել այդ բարբառը բուն տեղում, և այն էլ մեծ զգուշութեամբ. որովհետեւ անաւանական պատճառներով մշեցիք վաղուց ի վեր սովոր են պահպանելու Պօլիս, Թիֆլիս և ուրիշ տեղեր, և երկար տարիներ պահպանութեան մէջ մնալով՝ իւրաքանչիւր են օտար բարբառների հնչիւններ ու ձևեր և վերագառնալով իրանց զաւառը՝ որոշ չափով ազդում են իրանց բնիկ բարբառի վրայ: Ուրեմն նոյն-իսկ Մուշ քաղաքում և չրջակայքում ամեն մի մշեցու բարբառն ու հնչիւնը դեռ իսկական մշերէնը չէ. պէտք է երկար համեմատութիւններով դանել անխառն, իսկական մշերէնը և ապա միայն որոշել նրա դերքը՝ ըստ ձայնաբանութեան եւ ձեւաբանութեան:

Մի քանի խօսք էլ ասենք «միջին հայերէնի» մասին, որ պ. Մսերեանցը առաջին անգամ մտցրել է համեմատական ուսումնասիրութեան մէջ և որի կարեորութեան վրայ նրա ուշադրութիւնը դարձրել է պրօֆ. Ն. Մառը (կր. V, ծան. 2): Միտքը, անտարակոյս, շատ գեղեցիկ է, բայց իրագործութիւնը անբաւարար: Միջին հայերէն ասելով հեղինակը հասկանում է ամբողջ միջնադարեան գրականութեան լեզուն (եր. 2, ծան.). այսպէս հասկանալը հեշտ միջոց է, բայց լեզուադիտական նպատակի համար անպէտք: Միջնադարեան գրականութեան մէջ գործ են ածուած բազմախոսուն ձևեր ու հնչիւններ, որոնցից մի մասը ժամանակակից, կենդանի ձևեր ու հնչիւններ են այսինչ դարի համար, իսկ միւս մասը՝ արդէն մեռած, գրաբարի անկենդան մնացորդներ: Օրինակ՝ միջնադարեան հայերէնում պատահում են «առնել» և «այնել» (որից մեր այժմեան անել, էնել, ընել ձևերը). կամ՝ «եկն», «եկաւ», «երեկ»: Արդ՝ կարելի է այս ձևերը անխտիր կերպով միջին-հայերէն համարել այն պատճառով, որ դրանք պատահում են միջնադարեան գրականութեան մէջ, և ինչ հասկացողութիւն պէտք է կազմենք այս դէպքում միջին հայերէնի ձայնաբանութեան ու ձևաբանութեան մասին: Հեղինակը իրաւացի կերպով «նոր հայերէն» խօսքով հասկանում է «այժմեան բարբառների ամբողջութիւնը», այսինքն գրական լեզուն չէ խառնում «նոր հայերէնի» մէջ. պէտք էր ուրեմն, հետևողական լինելով, միջնադարեան գրականութեան մէջ էլ որոշել այն ժամանակի կենդանի լեզուն և բարբառները և նրանց հետ չը խառնել գրական և գրաբար լեզուի յատկութիւնները: Սրա համար հարկաւոր կը լինէր մի մեծ, նոր և ծանր աշխատանք յանձն առնել, որից սակայն խուսափել է հեղինակը:

Միջին հայերէնի համար ես շատ պակասաւոր են հեղինակի ազդիւրներն ու նիւթերը. նա ունեցել է ձեռքի տակ ընդա-

մենք 6 տպագրուած գիրք և մի անտիպ—քաղուածքներ կամ մենեցի հայոց դատաստանական գրքերից, որ հեղինակին մատակարարել է Ս. Յովհաննիսեան: Այն-ինչ կարելի էր այդ աղբիւրները տասնապատկել թէ տպագիրներով և թէ անտիպներով, ուրեմն և շատ աւելի նիւթ ունենալ: Հարկաւոր էր մանաւանդ օգտուել ձեռագիրների մէջ պատահող բաղմաթիւ յիշատակարաններից, որոնք, մեծ մասամբ կիսագրագէտ մարդկանց ձեռքով գրուած՝ հարազատ կերպով պատկերացնում են ժամանակի հրնչիւններն ու բառաձևերը և շատ հետաքրքրական նիւթ են մատակարարում հնչիւնների և ձևերի կազմութեան համար:

Մանրամասնութիւնների մէջ մտնել մեր յօդուածի ծրագրից դուրս է: Բաւականանալով վերը բացատրուած ընդհանուր նկատողութիւններով՝ տեսնում ենք, որ հեղինակը զօրախտաբար չէ դորձ գրել այն աշխատանքը՝ որ հարկաւոր էր մի լուրջ, գիտական և ինքնուրոյն գործ ստեղծելու համար:

Գրքի արժանաւորութիւնների մէջ առանձնապէս յիշելու է այն յատկութիւնը, որ հեղինակը բաղմաթիւ ծանօթութիւնների մէջ բերում է զանազան բանասէրների յայտնած կարծիքները այս կամ այն հարցի մասին, այսինքն բերում է այդ հարցին վերաբերեալ բոլոր մատենագրութիւնը, որ մի պարապողի համար դնահատելի դիւրութիւն է: Նոյնպէս նա սովոր է ամեն անգամ յիշել այն հեղինակներն ու աղբիւրները, որոնցից որեւէ կերպով օգտուել է:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ

23) Александръ Анянскій. Исторія Армянской Церкви. Кашиневъ, 1900, 307 стр. 8⁰, ц. 2 руб.

Ալեքսանդր Անյանսկի. Պատմութիւն Հայոց եկեղեցւոյ. Քիշինեվ, 1900, 306 էր. 8⁰, գինը 2 րուբլի:

Հայոց հին և նոր գրականութեամբ հետաքրքրուող ողու հեղինակներ չը կան: Պ. Անյանսկի մի բացառութիւն է կազմում: Այս գրքից առաջ նա հրատարակել է իր մի այլ աշխատութիւնը, որի մէջ քննում է թէ հին հայ պատմագիրները ինչ արժէք ունեն իբրև պատմական աղբիւրներ: Հեղինակը հայերէն չը գիտէ: Սա, ի հարկէ, մի շատ մեծ անյարմարութիւն է. բայց ի նկատի ունենալով որ համարեա բոլոր հայ պատմագիրները թարգմանուած են մասամբ եւրոպական և մասամբ ռուսաց լեզուով, պէտք է ընդունել, որ հայերէն չիմացող հետազօտողն էլ կարող է

ձեռքի տակ ունենալ գոնէ փաստերի առատութիւն: Պէտք է խոստովանել որ պ. Աննինսկի տեղեակ է մեր հին գրականութեան. նա կարգացել է բոլոր թարգմանութիւնները և այդ պատճառով կարողանում է փաստեր ու վկայութիւններ բերելով պատմել, դատողութիւններ անել: «Հայոց Եկեղեցու Պատմութիւնը» մի բաւական ընդարձակ և մանրամասն աշխատութիւն է, որի նմանը չը կայ ուստաց գրականութեան մէջ:

Ի՞նչպէս է նա գլուխ բերել այդ գործը: Նախ քան բուն աշխատութեան հասնելը, ընթերցողը առաջաբանում հանդիպում է հեղինակի խոստման, թէ ինքը պիտի խիստ անկողմնապահ մնայ իբրև հետազօտող: Գիրքը նշանակուած է գլխաւորապէս ոչ հայ ընթերցողների համար և պիտի բացատրէ, թէ որքան հիմնաւոր են այն մեղադրանքները, որոնք թափուել են հայոց եկեղեցու գլխին դարերի ընթացքում:

Դուք սկսում էք կարդալ և իւրաքանչիւր նոր երես ձեզ համոզում է, թէ որքան ծիծաղելի է «անկողմնապահութիւն» բառը, որ այնպիսի եռանդով շահագործել է հեղինակը առաջաբանում: Ամեն ինչ կայ այդ գրքի մէջ. միակ բանը, որ գոյութիւն չունի այդտեղ, հէնց անկողմնապահութիւնն է:

Առհասարակ կրօնական հարցերի և մասնաւորապէս եկեղեցիների պատմութեան մէջ բաւական չէ խօսք տալ, թէ անկողմնապահութիւն կը լինի: Անկողմնապահ կարելի է լինել միայն այն դէպքում, երբ հեղինակը անկախ, լուսամիտ մտածող է, իւրացրել է ժամանակակից առաջագէտ գիտութեան մէթօդները և հայեալքները. ամենագլխաւորը այն է, որ պատմաբանի, այսինքն երևոյթները լուսաբանողի ու քննադատողի դերը յանձն առած մարդը միանգամայն ազատ լինի դաւանական նախապաշարմունքներից, որ նրան չը ճնշեն աստուածաբանական բանաձևերը, որ կանխակալ միտումներ չունենայ այն առարկայի վերաբերմամբ, որի հետազօտութիւնն է յանձն առել:

Բայց պ. Աննինսկի իր գրքի առաջին տառը գրելիս աչքի առջև ունէր որ հայերը Քաղկեդոնի ժողովը չեն ընդունել: Մի Գիրքօն ուշադրութիւն չէ դարձրել այս հանգամանքի վրայ, քանի որ նա գիտէ թէ ինչ ճանապարհներով, ինչ միջոցներով է մշակուել այն օրթօգօքսիան, որով պարծենում են կաթոլիկ և յոյն եկեղեցիները: Բայց պ. Աննինսկի ճնշուած է այն հանգամանքի տակ, որ քաղկեդոնական օրթօգօքսիայի տեսակէտից հայերի վարմունքը հերետիկոսութիւն էր, մի սարսափելի յանցանք, որ չէ կարող որ և է արդարացում ունենալ: Այս պատճառով էլ հայոց եկեղեցին իր սկզբնաւորութեան օրից պարոնի առջև հանդիսանում է ոչ իբրև հաղար հինգ հարիւր տարի ան-

կախ, ինքնուրոյն կեանք վարած մի հիմնարկութիւն, այլ իբրև մի յանդաւոր, որի մեղքերը հաստատելու համար նա ամենայն խնամքով պրպտել է հայոց մատենագրութեան բոլոր քունձ ու պուջակները և ուր որ գտել է մի ակնարկութիւն, մի կարծեցեալ փաստ, հանել է ու մէջ է բերել նրան՝ ամբաստանողի հանգիսաւոր գոհունակութեամբ և աղմուկով:

Շնտ ափսոս: Դուրս է եկել ոչ թէ պատմութիւն, այլ վիճաբանութիւն, միակողմանի, նեղահայեաց, կուսակցական մի դատաստան: Այգալիսի գործ է պահանջում մեր ժամանակը:

—Ո՛չ: Գիտունը, ազատուելով աստուածաբանութեան և սխօլաստիկայի խնամակալութիւնից, նայում է մի ազգի եկեղեցու, հաւատալիքների վրայ իբրև այդ ազգի հոգու ստեղծագործութեան վրայ: Նոյն իսկ Մահմէդի կրօնն էլ, որ աշխարհը անթիւ անգամ ողողել է արիւնով, այժմ այն ֆանատիկոսական կատաղի ատելութիւնը չէ յարուցանում, ինչպէս դարեր առաջ: Այժմ աղաւ գիտութեան առաջ իսլամի հիմնադիրը շարլատան չէ, նեո չէ, սատանայի վիժուած չէ, ինչպէս համարում էր միջին դարերում, այլ կրօնական մի տաղանդաւոր վերանորոգիչ, որի արժանաւորութիւններն ու պակասութիւնները ունեն իրանց պատճառները, իրանց շրջանը, իրանց գոյութեան իրաւունքը: Անցել, անհետացել է այն ժամանակը, երբ կղերական եզով տոգորուած միտքը փարիսեցիաբար կարծում էր թէ մի ամբողջ ազգ, որ դաւանում է այս ինչ աւանդութեան կամ այն ինչ հեղինակութեան տեսակէտից ծուռ կրօն, բաղկացած է չարագործներից, որոնց պէտք է անխնայ կոտորել և ոչնչացնել, ինչպէս անում էր պապական ինքովիգիտիան: Այժմ, ընդհակառակը, իւրաքանչիւր կրօն սուրբ և յարգելի է, որովհետև ժամանակակից քաղաքակրթութիւնը իր հիմնաքարերից մէկն է ընտրել և խղճի, կրօնական համոզմունքի ազատութիւնն ու անբռնաբարեկրթիւնը: Հէնց այդ է պատճառը, որ կանխակալ նախապաշարմունքներից ազատ հետազօտութիւնը աշխատում է այս կամ այն կրօնի, եկեղեցու մէջ որոնել մի ազգի հոգեւոր աշխարհը, նրա հոգեբանութիւնը, նրա մտաւոր-կուլտուրական ընդունակութիւնները:

Այսպէս նայելով հայոց եկեղեցուն, պ. Աննինսկի կարող էր մի շատ ազնիւ, շատ հետաքրքրական գործ կատարել: Նա կը տեսներ Ասիայի գծախառն անկիւններից մէկը ընկած մի բուռն ժողովուրդ, որի նահապետական-կիսավայրենի դրութեան մէջ ահագին յեղափոխութիւն է մտցնում քրիստոնէութիւնը: Սա տալիս է այդ փոքրիկ, ցիրուցան, ներքին կապերից զուրկ ժողովրդին գիր և դպրութիւն, մտցնում է նրան քաղաքակր-

Թուող ազգերի շրջանը, առաջ է տանում մտաւոր ճանապարհով: Եկեղեցին հայի կեանքի մէջ այնպիսի դեր կատարեց, որպիսին չէ կատարել ոչ մի տեղ: Նա էր, որ գուրա մղեց քաղաքական իշխանութիւնը, նա էր, որ միապետութիւն հաստատեց մի այնպիսի ֆէոդալական երկրում, ուր միութիւն, ընդհանուր ցեղական դաշախար անկարելի էր լինում հաստատել իբրեւ քաղաքական գաւառանք: Եկեղեցին հպատակեցրեց մի քանի հարիւր նախարարական տները, մինչդեռ ոչ մի թագաւոր, ոչ մի հրամանատար չը կարողացաւ այդպիսի գործ կատարել: Եկեղեցին էր, որ կլանեց հայերի բոլոր մտաւոր ոյժերը, որ իր մէջ պարփակեց ամբողջ հայոց գրականութիւնը. մեր ժողովրդական ցաւերը երգող բանաստեղծներ չեղան, բայց քրիստոնէութեան բոլոր ծէսերը, բոլոր խորհուրդները անթիւ ու անհամար երգողներ և գրութաւորներ գտան մեր մէջ: Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը մնաց կրօնական համայնք, այս բառի ամենանեղ նշանակութեամբ. նա կորցրեց իր ազգութեան, իր քաղաքական կայութեան շահերի հասփացողութիւնը և տանջւում էր, արիւն էր թափում իր այդ եկեղեցու համար: Չորրորդ դարից սկսած հայ ժողովրդի վրայ բռնացած էր սոսկալի լուծ. սլարաբները, արաբները, բիւզանդացիները, սելջուկները մտնողները, թաթարական ցեղերը անխնայ կոխկռտում էին նրան, անխնայ սպանում, բայց նա չնչաւսպառ դարձած էլ չէր մեռնում. և այդ դիակի ձեռքը ամբողջ ժամանակ բռնած պահում էր եկեղեցին: Դա ազգայնացրած եկեղեցի էր, ազգայնացրած դեռ IV դարից: Ազգը ինչ որ լաւ, թանկագին բան ունէր, գրել էր այդ հիմնարկութեան մէջ: Եւ այդ պատճառով նա պահում էր իր այդ ազգային հաստատութիւնը մի յուսահատական եռանդով և ինքնամոռացութեամբ, որ յատուկ է ամեն ինչ կորցրած և վերջին յոյսից կպած մարդուն:

Ահա ինչ կողմից պէտք էր նայել հայոց եկեղեցուն: Այդ ժամանակ նրա պատմութիւնը կը լինէր մի ամբողջ ազգի աշխարհայեացքների սլաւութիւն. նրա մէջ կը տեսնէինք թէ ինչպէս են աշխատել սերունդները, ինչ են առաջացրել նրանք, կը տեսնէինք թէ ինչ է արել եկեղեցին ազգի առաջադիմութեան համար և ինչպիսի խոչընդոտներ է հանել այդ առաջադիմութեան գէմ: Մենք, ի հարկէ, չենք ասում թէ մեր եկեղեցականութիւնը անարատ ու անբիծ է եղել իր այնքան երկարատև կեանքում: Միջնադարեան խաւարը, այն, մեղ էլ սլաւոց կղերականների չնորհիւ, բարքերի ապականութիւն առաջ բերեց, իսկ ասիական վայրենի ազգերի անգութ տիրապետութիւնը փրկացրեց մեր արիւնը, ստրկութեան թոյնը խմացրեց մեզ մինչև

յատակը:—Այս բոլորը պարզաբանելը, լոյս հանելը, ի հարկէ, անչառ պատմութեան պարտաւորութիւնն է:

Բայց մեր հեղինակը գործ չունի այդպիսի բաների հետ: Նրան շարունակ տանջում է այն, որ հայերը Քաղկեդոնի ժողովը ընդունեցին: Բայց դա ինչ նորութիւն է, մանաւանդ ինչ մեղք է դա: Պ. Աննինսկի, ի հարկէ, շատ լաւ գիտէ թէ ինչպէս էին գումարւում եկեղեցական ժողովները, գիտէ որ այդտեղ այս կամ այն վճիռը ընդունել էր տալիս ոչ թէ ազատ, անբռնաբարելի կամքը, այլ Բիւզանդական կայսրի հրամանը, որ յենում էր զինուորական ոյժի և ոչ թէ համոզմունքի ոյժի վրայ: Մասնաւորապէս Քաղկեդոնի ժողովի վերաբերմամբ հօ յայտնի է, որ մի կայսր ստիպեց ընդունել փոքրամասնութեան կայացրած վճիռը, իսկ միւս կայսրները նոյն իսկ ջնջեցին, հալածեցին այդ վճիռը: Երկնքի գործերը Թագաւորների կամքով չեն վճուում: և հայերի համար ոչ մի մեղք չէր լինի, եթէ նրանք ոչ մի եկեղեցական ժողով էլ ընդունած չը լինէին: Միթէ երջանիկ, հաւատացող քրիստոնէայ չէ՞մեր ժամանակակից բողոքականը, որ հեղինակութիւններ չէ ճանաչում, որ իր հաւատը հասկանալու և գործադրելու համար ոչ Նիկիա է գնում, ոչ Եփեսոս, ոչ Քաղկեդոն: Մենք մեր նախնիքներով պարծենալ կարող էինք, եթէ նրանց աջողութիւնը կրօնական մի ինքնուրոյն, նշանաւոր վերանորոգութիւն կատարել, որի մէջ երեար մեր ցեղի հոգու և մտքի կարողութիւնը, Տարաբախտաբար, մենք այդ չը կարողացանք անել: Իբրև մտաւոր սահմանափակ կարողութեան տէր ազգ, մենք ինքնուրոյնութեան մի փոքրիկ շրջան ստեղծեցինք և այդտեղ էլ քարացած մնացինք: Լիւթէրները ամեն ազգի չեն շնորհում երկնքից: Բայց պ. Աննինսկի, ընդհակառակն, կարծես թէ կամենում է ամաչեցնել մեզ, որ մեր նախնիքները չեն հպատակուել հռոմա-բիւզանդական մտքին, այլ յանդգնել են իրանց սեփական կարծիքներն ունենալ և պահպանել: Ճիշտ է, սեփական կարծիքներ պահպանելը էժան չը նստեց մեզ, ճիշտ է, փանատիկոսութիւնը թէ մեր և թէ օտարների կողմից անթիւ տառապանքներ հասցրեց մեզ, բայց այդտեղ մեղաւորը կղերական ոգին էր: Մենք կարող ենք ողբալ այդ ոգու գործած չարիքները, կարող ենք մեծ դայրոյթով և յուզմունքով խօսել նրա մասին և անարգ սիւնին բեկուել նրա բոլոր չարագործութիւնները, բայց գաղափարը այդտեղ մեղք չունի, ինչպէս բուն քրիստոնէութիւնը մեղք չունի ալբիգեցիներին բնաջինջ անելու մէջ:

Այդ բոլորը շատ պարզ է իւրաքանչիւր ոչ նախապաշարուած մտքի համար: Յաւալի, շատ ցտալի է տեսնել թէ ինչպէս պ. Աննինսկի տանջւում է հայերին հակաքաղկեդոնական հերետի-

կոսութեան մէջ բռնելու համար: Մի կողմ թողնելով այն, որ դա միանգամայն ապարդիւն գործ է, չէ կարելի չը խղճալ մի մարդու, որ ահագին աշխատանք, մեծ ժամանակ է վատնում այդպիսի ծռտի-պռտի բաների վրայ: Չէ կարելի չը խղճալ մի մարդու, որ զոհուում է իր կուսակցական անհամբերողութեան, որ նա իր նպատակին հասնելու համար ոչ միայն հարկադրուած է ոտի տակ տալ պատմական իրողութիւնները, այլ և անբարեխղճութիւնների դիմել, ընկնել ողորմելի հակասութիւնների մէջ:

Մենք հարկադրուած պիտի լինէինք մի ամբողջ գիրք գրել, եթէ կամենայինք մի առ մի արձանագրել հեղինակի սխալ հայեացքները, աղաւաղումները, գիտաւորեալ անբարեխղճութիւնները, միակողմանի աղանդաւորական բացատրութիւնները և այլ այդպիսի «զարդերը», որոնք սկզբից մինչև վերջը վիտտում են այդ իբր թէ անկողմնապահ պատմութեան մէջ: Մի քանի նմուշներ բաւական կը լինեն՝ հեղինակի ինչ լինելը հասկանալու համար:

Հայերէն չիմանալ և հայերէնի մասին վճիռներ տալ—առնուազն տգիտութեան և անբարեխղճութեան նշան է: Տոյց տալու համար թէ հայերը տգիտաբար չընդունեցին Քաղկեդոնի ժողովը, պ. Աննինսկի հեղինակաւոր ինքնավստահութեամբ ասում է (եր. 67), թէ հայոց լեզուի մէջ «природа», «сущность» և «лице» հասկացողութիւնները արտայայտելու համար կայ միայն մի բառ—«բնութիւն»: Մինչդեռ յայտնի է որ природа=բնութիւն, сущность=էութիւն, лице=անձն, անձնաւորութիւն: Հեղինակը դատողութիւններ անելու համար բաւական է համարել այն նիւթերը, որոնք զսնուում են թարգմանուած մատենագրութիւնների մէջ, մինչդեռ ղաւանական վէճերը 1500 տարի է ինչ գոյութիւն ունին հայերի և յոյների կամ կաթողիկոսների մէջ. գոյութիւն ունի ահագին զրականութիւն, որ թարգմանուած չէ, ուրեմն և անյայտ է մնացել հեղինակին: Փոխանակ այդ աղբիւրին դիմելու, նա ղեկավարուել է այնպիսի առաջնորդներով, ինչպէս է Չամչեանը և ոչ միայն Չամչեանը, այլ և—O sancta simplicitas!—նոյն իսկ Կղեմէս Գալանոս անունով ֆանատիկոս կաթողիկէ քահանան: Երեւելի առաջնորդներ եկեղեցական հարցերի մէջ:

Յայտնի է որ հայերը դեռ չորրորդ դարի վերջում դուրս եկան Կեսարիայի յոյն եպիսկոպոսի իրաւասութեան տակից և կատարեալ անկախութիւն տուին իրանց եկեղեցուն: Պարոն հեղինակը ապօրէն է համարում այդ բաժանումը, ապստամբու-

թիւն է անուանում նրան: Իսկ երբ գալիս հասնում է վրացիներին՝ հայոց եկեղեցուց բաժանուելուն, այստեղ արդէն ասում է. «Անկասկած, վրացիների ազգային ինքնասիրութեան համար վրաւորական էր կախում ունենալ հայոց կաթողիկոսից և վրաց եկեղեցականութեան համար ախորժելի էր լինել միանգամայն անկախ» (Եր. 80): Միթէ հայերը, բաժանուելով Կեսարիայից, չէին կարող ունենալ նոյն այդ ազգային ինքնասիրութիւնը:—Պ. Աննինսկի վճռում է որ չը պիտի ունենային: Երբ խօսքը վրացիներին է գալիս, նա ընդունում է որ «զաւանական հայեացքների տարբերութիւնը զարթեցրեց վրացիների մէջ իրանց ազգային առանձնայատկութեան գիտակցութիւնը» (Եր. 81). Իսկ հայերի վերաբերմամբ նա շարունակ կուրծք է ծնծում, թէ ինչու մերժեցին Քաղկեդոնը: Չէ որ այդ մերժումն էլ կարող էր հայերի համար ազգային առանձնայատկութեան գիտակցութիւն լինել:—Ո՛չ, չը պիտի լինէր, ասում է «անկողմնապահ» Աննինսկի: Եւ անշուշտ դուք լաւ հասկանում էք նրա փորագաւը. հայերը բաժանում էին յունական եկեղեցուց, ուրեմն նրանք յանցաւորներ էին, իսկ վրացիները միանում էին յունական եկեղեցուն, հետեւաբար նրանք ամեն գովասանքի և խրախուսանքի արժանի էին: Ողորմելի պատմագրութիւն...

Հինգերորդ դարի կրօնական պատերազմը և գրական ու մտաւոր շարժումը պ. Աննինսկի ծաղրի առարկայ է դարձնում: «Եթէ լրջօրէն վերաբերուենք այս qnası-հերոսական շրջանի ջատագով պատմագիրների, Եղիշէի և Ղազար Փարպեցու ոգևորուած ճառերին, այն ժամանակ աշկարայ չափազանցութիւններ և ոգևորուած ճամբատակութիւնների ետևում կարելի է տեսնել գործերի իսկական գրութիւնը Հայաստանում, տեսնել դէպքերի ճշմարիտ պատճառները—կսամուլ, չահագիտական յատկութիւններ ունեցող այն մանր գրգռմաները, որոնք խնամքով թաղցնում էին հաւատի և եկեղեցու պաշտպանութեան ազնիւ հոգեկան շարժումների գիմակի տակ: Եղիշէի չափազանցացրած պատմութեան և Ղազարի քիչ չափազանցացրած, բայց էլի անչափաւոր պատմութեան մէջ անկողմնապահ ընթերցողը տեսնում է ոչ թէ ժողովրդական ոգու բարձրացումը, ոչ թէ հերոսութիւն, այլ տւելի շատ մարդկային ցեղի մանրացումը Հայաստանում, ժողովրդական ոգու ազնիւ կողմերի անկումը և հաւատի թուլութիւնը» (Եր. 45—46): Յաղկերտը հեղինակի համար մի խելօք և գործունեայ թաղաւոր է. նա իրաւունք ունէր հայերին կրակապաշտ դարձնելու, որովհետեւ պետութեան շահերը պահանջում էին միացնել, ձուլել բոլոր հպատակ ազգերը. իսկ հայերը, որոնք չէին կամենում ձուլուել, միանալ, ա-

պատամբներ (бунтовщия) էին, հայ հոգևորականները, այդ շարժման գլուխ անցնելով, նման էին մեր ժամանակի «անար-խիստներին» (ևր. 59), զաւաղիրներ էին, համարեա չարագործ-ներ: Ակամայ չես հաւատում թէ առջնդ զրուած գիրքը քրիս-տոնէական եկեղեցու պատմութիւն է, գրուած քրիստոնեայ մարդու ձեռքով: Գոնէ քրիստոնէութեան տեսակէտից փոքր ի չատէ յարգելի պիտի լինէին արեան այն առունները, որ թափեց Հայաստանը՝ քրիստոնէական կրօնը պաշտպանելու համար: Այդ էլ չը կայ: Եւ ընթերցողը ակամայ հարց է տալիս, այսքան թշնամական վերաբերմունքի պատճառը արդեօք այն չէ, որ եթէ չը լինէր հինգերորդ դարի կրօնական պատերազմը, հայերը կա-րող էին ընդունել Քաղկեդոնի ժողովը: Այո, ակամայ ստիպուած ես այդպիսի ենթադրութիւն անելու, որովհետեւ հեղինակի հա-մար միայն այդ հանգամանքը գոյութիւն ունի: Միայն ձեն է նրա համար քրիստոնէութիւն, միայն ծէսերն են ճշմարիտ հա-ւատի նշաններ, իսկ այնպիսի մի կենդանի գործ, ինչպէս էր մի ամբողջ ժողովրդի նահատակութիւնը հաւատի համար, ոչինչ է նրա աչքում...

Խիստ քննադատօրէն վերաբերուելով Եղիշէին և Փարպե-ցուն, ընդունելով որ նրանց նկարագրութիւնները գունաւոր-ուած են, որ իրողութիւնը այնպէս չէր, ինչպէս նրանք են պատ-մում, մենք, այնուամենայնիւ, պիտի ընդունենք իբրեւ անհրեքելի ճշմարտութիւն որ հինգերորդ դարը իբրեւ գաղափարական շարժ-ման, ազգային ինքնաճանաչութեան մի շրջան, չունի իր նմանը հայոց ամբողջ պատմութեան մէջ: Եւ երբ պ. Աննինսկի այդ-պէս է վերաբերում այդ շրջանին, հասկանալի է թէ ինչ կը լինի նա պատմական միւս շրջաններում: Հայ ազգը իր դարա-ւոր տանջանքների մէջ ոչ մի տեղ չէ արժանանում հեղինակի համակրանքին: Նոյն իսկ այն սե ժամանակներում, երբ սել-ջուկները, մօնգօլները աւերակ էին դարձնում հայոց երկիրը, հեղինակի բոլոր ջանքն էապաշտօնցանել որ հայերը հերետի-կոսներ են: Լէնկթիմուրի արշաւանքի մասին մի քանի խօսք է ասուած, այն էլ ինչ: Լէնկթիմուրը իբր թէ չէ վնասել հայոց եկեղեցուն: Ուրեմն և չեն եղել զարհուրելի կոտորածներ, եկե-ղեցիները, վանքերը չեն քանդուել... Կոտորուած էլ լինէր ժո-ղովուրդը, քարուքանդ եղած էլ լինէր երկիրը, հեղինակի համար ոչինչ նշանակութիւն չունի այդ բանը. չէ որ ամեն ինչ Հայաս-տանում հակաքաղկեդոնական էր...

Իբրեւ այդպիսի հեղինակ, պ. Աննինսկի, ի հարկէ, պիտի վերին աստիճանի անարդար, կողմնապահ դատաւոր հանդիսա-նայ այն վէճերի մէջ, որ հայերը ունէին յոյների հետ: Այդտեղ

արդէն ոչ մի բառ չը կայ յունական ֆանատիկոսութեան, ստոր ինտրիգների, հալածանքների մասին: Յոյները մաքրագոյն գառնուկներ էին, իսկ հայերը ֆանատիկոս միաբնակներ, անուղղելի հերետիկոսներ, որոնք միայն զգուանք կարող են յարուցանել: Ի՞նչպէս չը զգուել: Թովմա Արծրունին նկարագրում է Աղթամարի եկեղեցու շինութիւնը, ասում է թէ նրա պատերի վրայ ներսից նկարուած էին զանազան կենդանիների կռիւները, իսկ դրսից այդ պատերը զարդարուած էին խաղողի վաղերի, թռչունների և աղանձիների նկարներով: Պ. Աննինսկի այդ նկարները ընդունում է պատկերների տեղ և ընդհանրացնելով Աղթամարի այդ յատկութիւնը բոլոր հայ եկեղեցիների վերաբերմամբ, ասում է թէ սուրբերի նկարների հետ միասին կային և կենդանիների, թռչունների ու սողունների նկարներ: Կամ թէ Մովսէս Կազանկատուացին պատմում է որ Իսրայէլ եպիսկոպոսը շինել տուեց խաչ և զարդարեց նրանց «կենդանագիրներով»: այդ կենդանագիրը, որ պարզապէս պատկեր է նշանակում, պ. Աննինսկի կամ Կազանկատուացու թարգմանիչը դարձրել է «կենդանի» (ЖИВОТНОЕ) և դուրս է գալիս որ հայոց խաչերը կենդանիների պատկերներով էին զարդարուած, այսինքն թէ քրիստոնեայ հայերը երկրպագում էին և թռչուններին, սողուններին ու առհասարակ կերդանիներին (եր. 134): Ահա թէ որ աստիճանին է հասնում պ. Աննինսկու բարեխղճութիւնը...

Հաւատարիմ իր այդ տենդենցիային, հեղինակը մի տեղ (եր. 127) աշխատում է ստուեր գցել և Հայաստանում եղած սուրբերի մասունքների վրայ: Պաշտպանել ոսկորների պաշտամունքը մենք բոլորովին մտադիր չենք: Բայց արդարութիւնը ստիպում է ասել, որ այդ բանի մէջ հայերի ուսուցիչները յոյներն էին: Հօ յայտնի է, որ յոյն հոգևորականութիւնը մասունքների վաճառականութիւն էր անում արևմտեան Եւրոպայի հետ. հօ յայտնի է, որ բանը այնտեղին էր հասել, որ յոյն կղերը նոյն իսկ թիւրքաց սուլթանից էր աւնում վկայական, թէ այս ինչ մասունքը այս ինչ սուրբինն է և այդ վկայականը ուղարկում էր Եւրոպա՝ ապրանքի արժէքը հաստատելու համար:

Բայց պ. Աննինսկու համար բոլոր հայերը չեն պիղծ յանցաւորներ: Եզր կաթողիկոսը և բոլոր միւս քաղկեդօնականները նրա համար շատ լաւ մարդիկ են, ազնիւ, կրթուած, հասկացող. իսկ հակաքաղկեդոնականների համար նա պահած ունի ամեն տեղ մի ստէրէօտիպ անուն—«ֆանատիկոս»: Այս վերաբերմունքը, ի հարկէ, հասկանալի է ինքն ըստ ինքեան: Բայց ծիծաղելին այն է, որ մի տեղ պ. Աննինսկու մօտ ամբողջ հայ ժողովուրդն է քաղկեդոնականութեան պաշտպան, միւս տեղ

նոյն այդ ժողովուրդը չէ ուզում դաւաճանել իր նախնիքների հաւատին, այսինքն հակաքաղկեդոնական է: Թէ որպիսի թշնամութեամբ է նա լցուած այդ ժողովրդի դէմ, երևում է և նրանից, որ նա երկու տեղ ամենայն հաճութեամբ կրկնում և բացատրում է պարսից Պերոզ թագաւորի այն խօսքերը, թէ «չը կայ ասորու պէս վատ մարդ և կռուող, հայը ասորուց էլ վատ թար է»: Անկողմնապահ, խղճմտանքաւոր պատմագիրը աչքի առաջ կ'ունենար որ այդպէս վկայողը մի թագաւոր է, որի դէմ ապստամբուել էին հայերը. աչքի առաջ կ'ունենար մանաւանդ այն, որ հէնց այդ խօսքերի համար էր Վահան Մամիկոնեանը պատերազմներ մղում պարսիկների դէմ, ապացուցանում էր որ մի երկրի դժբախտութիւնը առհասարակ արքունիքից ուղարկուող վատ պաշտօնականներն են և կառավարիչները: Աննիսակի այդպիսի փաստերի հետ դորձ չունի: Զէ որ Պերոզի վկայութիւնն էլ մի լաւ ապացոյց է հակաքաղկեդոնի հայերի դէմ:

Վերջացնենք: XV դարից կաթողիկոսական աթոռը փոխադրւում է Էջմիածին և սկսւում են հայ եկեղեցու դժբախտութեան օրերը: Այդ չրջանի պատմութիւնը սլ. Աննիսակի բաց է անում այսպիսի տողերով. «Այդ խայտառակ խառնակութիւնները և այդ ստորացուցիչ կախումը (մահմեդականներից) կարծես Աստուծու պատիժն էին, ուղարկուած հայերին այն պատճառով, որ նրանք շատ անգամ խօսք տուին հաշտուել տիեզերական (յունական) եկեղեցու հետ, բայց դաւաճանեցին իրանց խօսքին, պատիժ այն պատճառով, որ նրանք յամառութեամբ խոյս էին տալիս այդ եկեղեցու վարդապետութեան ճանաչուած ճշմարտութիւնից: Մի և նոյն ժամանակ այդ խառնակութիւնները մի վրկայութիւն էին, թէ հայ քրիստոնեայ հասարակութիւնը, որ թշնամի էր ուղղափառ (յունական) եկեղեցուն և չէր հնազանդւում իր լաւագոյն հովիւներին ու օրինաւորապէս կազմուած ժողովներին, հեռու է Փրկչի ճշմարիտ եկեղեցուց»: Եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ նոյն այդ չրջանում Մէհէմէդ Զաթիհը ձի հեծած մտաւ Կ. Պօլսի ս. Ստիփայի եկեղեցին, հրատարակեց նրան մահմեդական մզկիթ. ինչո՞ւ ամբողջ Յունաստանը արիւնով ներկուեց, ինչո՞ւ սոսկալի դժբախտութիւններ թափուեցին յոյն ազգի վրայ: Զէ որ յունաց եկեղեցին Փրկչի ճշմարիտ եկեղեցին էր. չէ որ նա չը պիտի պատժուէր: Յունաց պատրիարքները Կ. Պօլսում դարձան թիւրքերի ստրուկները. նրանք փողով էին զնում իրանց պաշտօնը: Եւ ինչո՞ւ երկիրքը թոյլ էր տալիս այդպիսի ստորացումն այն եկեղեցու համար, որ ընդունում էր Քաղկեդոնի ժողովը:

Ո՛չ: Երկինքը գործ չունէր այդ դժբախտ գործերում, որոնք սոսկալի ստորացումն էին ամբողջ արեւելեան քրիստոնէութեան համար, առանց բացառութեան քաղկեդոնիկների և հակաքաղկեդոնիկների: Ամենքը մի և նոյն պղնձի մէջ էին տապալուում: Եւ եթէ դուք երկնքի մատն էք դնում այդ ողբալի, սև իրողութեան մէջ, այդտեղ պատմական ճշմարտութիւնը չէ խօսում, այլ ձեր փարիսեցիութիւնը...

Լ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

I

Ներկայ 1901 թուի յունուարի 1-ից Կովկասում տիրող հարկային դրուժիւնը ենթարկւում է լուրջ փոփոխութիւնների:

Այդ փոփոխութիւնների էութեան մասին կարելի է ծանօթանալ 1900 թ. յունիսի 12-ին հաստատուած տէրութեան օրէնքների և կարգադրութիւնների ժողովածուի 1621—1624 յօդուածներից (№ 73, ³/_{VII} 1900 տ.) հրատարակուած կանոնների իմաստով:

1) 1901 թ. յունուարի 1-ից վերացւում են Կովկասում գոյութիւն ունեցող ծխային ու այլ և այլ հողային հարկերը, որոնց փոխարէն սահմանւում են.

ա) «Պետական հողավարձ», կամ աւելի կարճ ասած՝ «պետական տուրք» (государственная оброчная подать) բոլոր գիւղացիների (բացի կոզակների) ձեռքին մշտապէս գտնուած արքունական հողերից և

բ) Պետական հողային տուրք (госуд. поземельный налог) բոլոր միացած հողերից (ի բաց առեալ տէրութեան անմիջական տրամադրութեան տակ գտնուած հողերը):

2) Տեղական բնակչութիւն կրող (земский) անուանեալ կարիքներին բաւարարութիւն տալու համար գիւղական հասարակութիւնների հողերի հետ հաւասար հարկի են ենթարկւում և մասնաւոր անձնակրութիւնների ու արտօնեալ (ազնուական և այլն) զստակարգերի հողերը:

Ամեն մի նահանգի վերաբերեալ պետական (հողավարձի) տուրքի քանակութիւնը որոշւում է 3 տարով պետական օրէնքների համար սահմանած նախադժով: Նոյն ժամանակամի-

ջոցով ու ձեռով հաստատուում է և հողային տուրքի աստիճանը ամեն մի նահանգի «միջակ» դեսեպտինի համար: Իսկ այդ տուրքի ընդհանուր քանակությունը (ֆինանսների մինիստրի հաստատություններ) որոշում է միջակ դեսեպտինի համար որոշուած չափի բազմապատկումով տուրքի ենթարկուող հողերի քանակություն վրայ:

Ամեն մի նահանգի համար որոշուած արքունական ու հողային տուրքի քանակությունը ինչպէս գաւառների, նոյնպէս և մի և նոյն գաւառի գիւղերի ու կալուածատէրերի մէջ նահանգական ու գաւառական յատուկ ատեանների միջոցով բաժանուում է հողի քանակութեան, յաւկութեան ու բերած եկամուտի համեմատ:

Նոյն հողի քանակությունը, յատկությունը և եկամուտը կազմում է հիմք և արքունական ու հողային տուրքերի չափը որոշելիս առանձին-առանձին նահանգների համար:

Նայած արքունական պալատի կազմած յատուկ ցուցակագրի*) «Անդրկովկասի հողերի քանակութեան, եկամուտի և արքունական ու հողային տուրքերի մասին» ամբողջ երկրում գրտնուած հողերի զուտ արդիւնքը հաշուում է՝

Հողերի դասակարգերը:	Հող. տարածութիւնը: հազ. դես.	Հողերի բերած զուտ եկամուտը: Ընդամենը 1 դես. հազ. ու. ուրլի:	
		հազ. դես.	1 դես.
Արքունական հողերի վրայ բնակուող գիւղացիներին	5,817	25,824	518
Այլ կարգերի գիւղացիներին (միւլքադարական, կապալով ապրող և այլն)	1,345	10,193	661
Մասնաւոր սեփականատէրերի (ազնուական և այլն)	3,341	11,660	354
Արքունական	5,011	897	018
Ընդամենը	11,516	47,677	395

Յիշեալ դասակարգի հողերից արքունական հողերի վրայ բնակուող գիւղացիների հողերը, որ միջակ տարին տալիս են զուտ արդիւնք 25,824,000 ու., վճարում են, ինչպէս ասացինք, արքունական հողավարձի տուրք, կամ կարճ ասած արքունական տուրք: Վերջինիս քանակությունը 1901—1903 եռամսակի հա-

*) Вѣдомость о количествѣ и доходахъ земель по губерніямъ и областямъ Закавказья съ исчисленіемъ контингентовъ госуд. позем. налога и оброчной подати.

մար ամեն մի տարին որոշուած է 3,099 հ. ո., այսինքն զուտ եկամուտի 120/0-ը, որից 2,582 հ. ո. (եկամուտի 100/0-ը) հաշուում է իբրև տասանորդ (օճքօճե), որ վերցնում է տէրութիւնը իր հողերի համար, իսկ 516 հազ. ո. (եկամուտի 200/0-ը) իբրև հողային տուրք:

Գիւղացիների այլ դասակարգերը, ինչպէս և մասնաւոր սեփականատէրերը՝ իրանց հողերից ստացած 10,193 և 11,660 հազ. ո. եկամուտի համեմատ վճարելու են միմիայն հողային տուրք, հողից ստացուող զուտ եկամուտի 20/0-ի հաշուով—204 և 233 հազ. ո.: Պարզ է, որ տէրութեան հողերի վրայ ապրող գիւղացիները (վճարելով հողից ստացուող եկամուտի 120/0-ը) համեմատած սեփականատէրերի հետ (որոնք վճարում են միմիայն եկամուտի 20/0-ը), 6 անգամ աւելի կը լինէին ծանրաբեռնուած տուրքերով, եթէ ձեռք չառնուէր որ և է միջոց այս անհաւասարութեան առաջն առնելու համար:

Վերջինիս համեմուտ համար օգտակար գտնուեց այլ կերպ դասաւորել տեղական տուրքերը (Земскія повинности): Առաջիկայ եռամեակի (1901—1903 թ.թ.) համար տեղական տուրքերի քանակութիւնը որոշուած էր 3,966 հազ. ո., որից՝

2,361 հազ. ո. վերակազմուած տեղական ոստիկանութեան համար.

- 477 » » ծանապարհների (խճուղու) համար.
- 402 » » բժշկական մասի համար.
- 121 » » ժողովրդական կրթութեան համար.
- 99 » » տեղական բանտերի ու էտապների համար.
- 48 » » բարեգործական հիմնարկութիւնների համ.
- 68 » » պահեստի գումարի համար:

Բայց քանի որ նոր ձևի տեղական ոստիկանութեան ու ժեղացման շնորհիւ, տեղական տուրքերը անցեալի հետ համեմատած զգալի կերպով բարձրանում էին, իսկ գիւղացիների վրայ բարդուած ապառիկների քանակութիւնը 832 հազ. ուրջուց (1895-ին) հասած էր 984 հազարի (1898-ին), օգտակար համարուեց տեղական տուրքերի մի մասը (1164 հազ. ո.) զցել նաւթային հողերի, քաղաքային շինութիւնների, առևտրական վկայագրերի և այլ ոչ-հողային արդիւնքների վրայ: Զանազան կարգերի հողերի վրայ բաժանուելիք տեղական տուրքի քանակութիւնը այսպիսով իջնում էր մինչև 2,796 հազ. ո.

Յիշեալ 2,796 հ. ո. տեղական տուրքերը և այլ և այլ կարգերի հողերի վրայ ծանրացող տուրքերը հաւասարեցնելու համար, որոշուեց այնպէս բաժանել, որ արքունական հողերի վրայ

ապրող գիւղացիները արքունական տուրքի (եկամուտի 120/0-ի) ամեն մի ուղբուն վճարեն 57 կոպ. (եկամ. 680/0) տեղական տուրք, իսկ մնացած հողերը, որ վճարում են 20/0 հողային տուրք, վերջինիս ամեն մի ուղբուն վճարեն 450 ուղբի (եկամուտի 90/0-ը) տեղական տուրք:

Այսպիսով, հողերի վճարելիք տուրքի ընդհանուր քանակութիւնը գարձաւ՝ արքունական հողերի վրայ ապրող գիւղացիների համար հողի եկամուտի 1880/0,

Մնացած հողատէրերի համար » » 1100/0:

Վերը բերած հաշուով որոշուած է Կովկասի զանազան շրջանների և դասակարգերի վճարելիք արքունական և տեղական տուրքերի քանակութիւնը:

Եթէ մի կողմ թողնենք տուրքի չափը—(եկամուտի 188 և 110/0), որ չէ կարելի ծանր չը համարել մեր աղքատ երկրի համար—անկասկած հողային տուրքի ամենախոշոր թերութիւնը կայանում է վերը բերուած անհաւասարութեան մէջ, որով գիւղացի աշխատող աղքատ դասակարգը վճարելու է հողի տուած զուտ արդիւնքի 18,80/0-ը, իսկ միւս հողատէրերը—միւրայն 110/0: Ծնորհիւ տուրքի անհաւասարութեան, մի և նոյն տեղում գտնուած երկու միատեսակ կալուածներ, որոնք օրինակի համար, բերում են 100-ական ուղբի զուտ արդիւնք, կը վճարեն 18,8 կամ 11 ուղբի, նայած թէ ում սեփականութիւն են կազմում՝ արքունական հողի վրայ ապրող գիւղացու, թէ ազնուականի, կամ մի այլ սեփականատիրոջ: Սա մի այնպիսի պայման է, որի հետեանքը տնտեսական մրցման մէջ կարող է լինել միմիայն արքունական գիւղացու ընկճումն ու խոնարհուելը ազնուականի ու սեփականատիրոջ առաջ:

Աւելի ես ծանր է այն գիւղացիների դրութիւնը (բէզերի, մէլիքների, միւլքաղարների, Վրաստանի ազնուականների հողերի վրայ ապրող), որոնք հողի տուած բերքի մի մասը— $\frac{1}{10}$, $\frac{7}{30}$ և նոյն իսկ $\frac{1}{4}$ —վճարում են հողատէրերին: Այդ $\frac{1}{10}$, $\frac{7}{30}$, $\frac{1}{4}$ մասը շատ տեղերում հաւասար է մշակող հողի զուտ եկամուտին (հողավարձին), ուստի և ակներև է դառնում, որ դրա համեմատ պակաս պէտք է լինէր և այդ դասակարգի գիւղացիների հողերի տուրքը, բայց դժբախտաբար, հարցի նորութեան պատճառով երևի, այդ սխալը մնում է առայժմ անուղղելի:

Խոշոր սխալներ կան նմանապէս և զանազան տեղերի հողերի զուտ եկամուտը որոշելու մէջ:

Ինչպէս երևում է օրէնքի էութիւնից, հողերը տուրքի են ենթարկւում համեմատ իրանց բերած զուտ եկամուտի, որ ընդհանրապէս հաւասար է այն գումարին, որով կարելի է հողը

վերցնել կամ տալ կապալով: Տնտեսական գիտություն մէջ զուտ եկամուտը համարուում է այն եկամուտը, որ մնում է, եթէ ընդհանուր մուտքից դուրս գանք բոլոր արուած ծախքերը: Օրինակ, եթէ Շիրակի դաշտում վարելահողի միջակ տարուայ բերքը դասեատինից հաշուելով.

50 պ. ցորեն, պուղը 80 կ. արժողութեամբ	40 ուրբի:
60 պ. յարդ, 5 կ. արժողութեամբ	3 »
Այսինքն 43 ուրբի	43 »
Իսկ ծախսը՝ վարելու	8 ուրբի:
Զթով անցնելը, ցանելը, տափելը	4 »
Սերմի արժէքը (12 պ.)	10 »
Հնձել-կապելը և դաշտից բերելը	7 »
Կալսելը	3 »
Ընդամենը	32 »

Մշակուող տարուայ եկամուտն է ուրեմն (43—32=) 11 ուրբի: Բայց այս 11 ո. միջակ տարուայ զուտ եկամուտը չէ: Շիրակում հողը երկու տարի մշակուելուց յետ մէկ տարի հանգըստանում է, և այդ հանգստացող հողը (խոզանը) տալիս է մօտ 5 ուրբու խոտ,—ուստի այդ չրջանի վարելահողերի միջակ տարուայ զուտ արդիւնքը կը լինի $(11 \times 2 + 5) : 3 = 9$ ուրբի:

9 ո. եկամուտ տուող հողը կը վճարէ մօտ 18,8⁰/₀ տուրք, այսինքն 1 ուրբի 69,2 կոպ. իսկ Ալեքսանդրապոլի գաւառում գտնուած 100,000 դես. դեմի վարելահողերը 169,200 ո.: Եթէ ի նկատի ունենանք, թէ ինչքան դժուար է որոշել միջակ տարուայ բերքի քանակութիւնը, միջակ տարուայ բերքի արժեքը, միջակ տարուայ այլ և այլ ծախսերը և որ այդ ամենը տարբերուում է ամեն մի փոքրիկ շրջանում, նոյն իսկ գիւղում, որոնց մասին չը կայ և ոչ մի ուշադրութեան արժանի հետազոտութիւն,— ականքն կը լինի՝ որքան դժուար և պատասխանատու պիտի լինի ամեն մի շրջանի, գաւառի զանազան բերքերի (այգի, բանջարանոց, դեմի վարելահող, ջրարբի վարելահող, խոտհարք, արոտ, անտառ) զուտ եկամուտի որոշելը:

Բնական պիտի համարել և այն բանը, որ այդ զուտ եկամուտը որոշող գաւառական ու նահանգական ատեսանների կողմից (մանաւանդ նախագահող գաւառապետից ու քարտուղար հարկային տեսչից) կախուած է շատ բան, եթէ չասենք աւելին:

Այն ատեսանները, որոնք տրամադրուած են մտնել հողագործ ժողովրդի նեղ սնտեսական վիճակի մէջ, որոնք զրդուած են աւելի բարի զգայմունքներով, միշտ հնաւորութիւն կը գտնեն պակաս նշանակել հողի եկամուտը (քանակութիւնը և արժէքը)

կամ աւելի՝ ծախսերը և այդպիսով պակաս դուրս բերել զուտ եկամուտը:

Հակառակ ուղղութեամբ կը գնան այն ատենները, որոնց գլխաւոր նպատակն է տուրքի աւելացնելը:

Թող վերը բերուած Շիրակի վարեւահողերի օրինակում միջակ բերքի քանակութիւնը 50 պուղի տեղ նշանակուէր 60 պուղ, կամ արժէքը 80 կ. փոխարէն 90 կ. և եկամուտը 43 ո. տեղ կը լինէր արդէն 48 ո., իսկ զուտ արդիւնքը 9 ո. փոխարէն 12₃—10₃ և գիւղացու միջակ դեսեատինից վճարելիք տուրքը 1 ո. 69 կոպէկից կը բարձրանայ մինչև 2,312—1,936 ո., իսկ ամբողջ Ալեքսանդրօպօլի դեմի վարեւահողերի տուրքը 1692 հազարից մինչև 2312—1936 հազար...

Նոյն հետեանքին կարելի է հասնել և ծախսերը պակասեցնելով՝ վարելու, ցանելու, սերմացուի արժէքը ցոյց տալով աւելի պակաս, քան նշանաշուած է վերը:

Ընդհակառակը, հաշուեցէք ցորենի միջակ գինը 65, 70 կոպ., ընդունեցէք, որ միջակ բերքը հաւասար է 40, 45 պուղի, կամ աւելի են վարի, ցանքսի ծախսերը—և Շիրակի վարեւահողերի բերած զուտ արդիւնքը կ'իջնի մինչև 5, 4, նոյն իսկ 3 ուղբու... Մէկ դեսեատինի վճարելիք տուրքը կը լինի 94, 75, 56 կոպ., իսկ ամբողջ գաւառի դեմի վարեւահողերինը—մինչև 94, 75, 56 հազարի:

Այս բոլոր թուերը՝ չափ փոփոխական են, բոլորն էլ որոշ սահմաններում ճիշտ և կախուած ամբողջովին որոշող ատենաների... բարեհայեցողութիւնից:

Դրանով էլ բացատրւում են այն խոշոր սխալները, որոնք նկատուում են տուրքերի բաժանման վերաբերմամբ զանազան նահանգների և գաւառների մէջ: Նայած վերը յիշուած «կովկասի հողերի քանակութեան և եկամուտի Ցուցակին», որի հիման վրայ որոշուած են զանազան նահանգների վճարելիք տուրքերը, երկրի զանազան մասերի միջակ հողերի զուտ եկամուտը, տէրունական գիւղացիների միջակ դեսեատինից վճարելիք բոլոր տուրքերը, ինչպէս և միւս կալուածատէրերի վճարելիք հողային տուրքը (առանց տեղական տուրքի) նշանակուած է՝

Նահանգների և շրջանների	Միջակ դե- սեատինի զուտ եկա- մուտը: Ուղբի.	Արքունական գիւ- ղաց. վճարելիք բոլոր տուրքերը միջակ դես.: կոպ.	Մասնաւոր սե- փականատէրերի վճարելիք հող. տուրքը միջ. դես. կոպ.
Թիֆլիսի . .	445	82	5
Ջաբաթալի . .	412	83	5

Քութայիսի .	416	91	5
Բագուի . .	515	85	5
Դաղստանի .	181	32	3
Երևանի . .	526	87	5
Գանձակի .	586	97	5
Կարսի . .	857	84	5
Սև ծովի . .	180	25	3
Միջին թուով.	454	80	

Յուցակից պարզ երևում է, որ մշտադալար ու խիտ կուլ-տուրական աղգաբնակութիւն ունեցող Քութայիսի նահանգի հողերը այն եկամուտն են բերում, ինչ որ Թիֆլիսի ու Գանձակի նահանգի հողերը. որ ցրտով պատած Կարսի բարձրավանդակը նոյն արժէքն ունի, ինչ որ Երևանի դաշտը իր հարաւի բերքերով... Այդ թուերի ռաւ լինելը պարզ է, կարծեմ, նաև առանց մանրամասն բացատրութիւնների:

Դրա մէջ չը կասկածելու համար, բաւական է յիշեցնել միայն, որ նայած Թիֆլիսի աւագ նօտարի տեղեկագրին*).

1879—88 թ. թ. ընթացքում բոլոր ծախուած կալուածքների միջակ դեռետառնի արժէքը եղել է.

Թիֆլիսի նահանգի . . . 22 ո. 88 կոպ.

Քութայիսի » . . . 113 » 49 »

Այսինքն, Քութայիսի նահանգում հողը ընդհանրապէս 5 անգամ աւելի արժէք ունի (և ուրեմն 5 անգամ աւելի եկամուտ է բերում), քան Թիֆլիսի նահանգում. այն-ինչ, վերը մենք տեսանք, որ այդ երկու նահանգների միջակ հողի եկամուտը, ինչպէս և հողի վճարելիք տուրքը որոշուած է հաւասար... Այդ տեսակ միմեանցից տարբերուող նահանգների հաւասարեցնելը եկամուտի և տուրքի վերաբերմամբ այն հետևանքը կ'ունենայ, որ աղքատ նահանգները կը ծանրաբեռնուեն հարուստների փոխարէն:

Եւ իսկապէս, միմիայն դրա նման սխալներով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ գլխահարկի տեղ հողային տուրք մտցնելուց յետոյ, արքունական գիւղացիների տուրքերը աւելացած են հետևեալ չափով.

Թիֆլիսի նահ. (Չաքաթալի չրջ. հետ) — 105%

Կարսի, Երևանի, Բագուի նահ. . . . 50, 48, 43%

Դաղստանի և Գանձակի 27, 25%⁰/₀

Քութայիսի (Բաթումի չրջ. հետ) 60%

*) Сборникъ Свѣдѣній о Землевлѣдѣніи въ 5 губ. Закавказ. края, Тифлисъ, 1899 г.

Նոյնամասն սխալներ կատարուած են և ամբողջ նահանգի տուրքը բաժանելիս զանազան գաւառների մէջ չնորհիւ այն բանի, որ զանազան կարգի հողերի եկամուտը զանազան գաւառներում որոշուած է սխալ կերպով:

Օրինակ, «Երևանի նահանգի 1901—1903 թ.թ. արքունական և հողային տուրքերի հաստատուած հաշուեցուցակին» նայած, այդինների ու բանջարանոցների զուտ եկամուտը զանազան գաւառներում հաշուած է.

Ալեքսանդրապոլի գաւառ	100 ռ.
Նոր-Բայազէթի »	11 »
Էջմիածնի . . . »	100 ⁷⁴ »
Երևանի . . . »	76 ³³ »

Այն-ինչ, ամեն մէկին յայտնի է, որ Նոր-Բայազ. բանջարանոցները ոչնչով չեն տարբերուած Ալեքսանդրապ. գաւառի բանջարանոցներից, իսկ Երևանի այգիները աւելի եկամուտ են բերում, քան Էջմիածնի գաւառի այգիները:

Դեմի վարելահողերի եկամուտը, որ բոլոր գաւառներում համարեա նոյնն է, նշանակուած է՝

Ալեքս., Նոր-Բայազէթի, Նախիջևանի գաւ.	55—5 ռ.
Երևանի և Էջմիածնի	» 75—85 »
Շարուրի և Սուրմալուի	» 102—111 »

Նոյն մեծ տարբերութիւնները տեսնում ենք և հարուստների զուտ եկամուտի վերաբերմամբ, չը նայած որ արօտների բերած եկամուտը, ընդհանուր առմամբ, բոլոր գաւառներում համարեա թէ նոյնն է: Այսպէս, վերև յիշուած հաշուեցուցակին նայելով, արօտների զուտ եկամուտը, ընդունուած է.

Ալեքսանդր., Նոր-Բայազ. և Նախիջ., գաւ.	60, 43, 50 կ.
Շարուրի և Երևանի	» 26 և 30 »
Սուրմալուի և Էջմիածնի	» 23 և 20 »

Որ Ալեքսանդրապոլի գաւառի արօտները չեն կարող 3 անգամ աւելի արգիւնաւէտ լինել, քան նրա հարևան Էջմիածնի գաւառի արօտները, կարծեմ, պարզ է ինքն ըստ ինքեան:

Սրա նման սխալների հետևանքը արտայայտուած է կողմընակի կերպով նրանում, որ Երևանի նահանգի այդ գաւառների արքունական գիւղացիների վճարելիք տուրքը, առաջուանի հետ համեմատած, աւելացած (+) կամ պակասած (—) է հետևեալ չափով.

Սուրմալուի և Էջմ. գաւ.	+ 109 և 79 ¹⁰ / ₀ :
Սուրմալուի և Շարուրի »	+ 287 » 249 ⁰ / ₀ :
Ալեքսանդրապոլի . . . »	+ 163 ⁰ / ₀ :
Նոր-Բայազ. և Նախիջ. » իջած են —	31 և — 312 ⁰ / ₀ :

Ամբողջ Երև. նահ. աւելացած է + 257⁰/₀:

Անշուշտ, այդ բոլոր սխալների գլխաւոր պատճառը ճիշտ տեղեկութիւնների բացակայութիւնն է, և այն, որ ամեն մի գաւառական ատեան ղեկավարուել է իր յատուկ հայեցակէտով, առանց ի նկատի առնելու միւս ատեանների տեսակէտը:

Նոյնանման թերութիւնների առաջն առնելու համար օրէնքը ձեռք է առնում որոշ միջոցներ, որոնցից, դժբախտաբար, մեր հասարակութիւնը չէ կարողանում օգտուել:

Օրէնքի 1622 յօդ. 6 կէտի համաձայն գաւառական հողային հարկը բաժանող ատեանը բաղկացած է՝ նախագահող գաւառապետից, քարտուղար հարկային տեսչից, արքունական, ուղեւի և ազնուականների ներկայացուցիչներից, հաշտարար միջնորդից և «հարկատուների ներկայացուցիչներից, թուով 6-ից ոչ աւել»: Այդ ներկայացուցիչները նշանակուում են գաւառապետի և հարկային տեսչի հայեցողութեամբ «կարողացածին չափ գաւառի զանազան խաւերից»: Քանի որ հարկատուների ներկայացուցիչները հաստատուում են նահանգապետի կողմից և ձայն ունեն ատեանում, որ իր որոշումները տալիս է ձայների մեծամասնութեամբ, ուստի և այդ ներկայացուցիչներին միջոց է տրուած թոյլ չը տալ, որ ատեանը հողերի միջակ եկամուտը նշանակէ իսկականից բարձր: Նամանաւանդ որ օրէնքի 14—18 կէտերի համաձայն հարկատուներին իրաւունք է տրուում բողոք ներկայացնել նշանակուած տուրքի դէմ և ապացուցել ինչքան զուտ եկամուտ են բերում հողերը... Այդ բողոքները նահանգապետն ատեանի միջոցով հասնում են մինչև կառավարչապետի խորհուրդը:

Դժբախտաբար հարկատուների «ներկայացուցիչները» մեծ մասամբ աւելի ձեռնառու են համարում իրանց լուրթեամբ ազդեցիկ անդամների հաճութիւնը վայելել, քան պաշտպանել գաւառի շահերը և ազատել հարկատուներին սխալ կերպով նշանակուած տասնեակ հազար տուրքերից: Հարկով ծանրաբեռնուած գիւղերի, գաւառների և նոյն իսկ նահանգների յոյսը մնում է հողային հարկերը դասաւորող ատեանների բարեխղճութեան և այն հասկացող տանուտէրերի և անհատների վրայ, որոնք, ղինուած իսկական թուանշաններով, հասարակութեան բողոքները կը հասցնեն մինչև այնտեղ, ուր նրանք կը դառնան լսելի:

Չը նայած վերը յիշուած թերութիւններին, անցեալ 1900 թ. յունիսի 12-ին հաստատուած օրէնքը ներկայանում է ամենախոշոր բեֆօրմներից մէկը, որոնք մայրուած են Կովկասում վերջի տասնեակ տարիների ընթացքում: Ինչպէս վերեւում ասուեց, նոր օրէնքը հարկի վերաբերմամբ հաւասարեցնում է

հասարակութեան բոլոր դասակարգերին—լինեն զբանք ուսմիկ գիւղացի, վաճառական քաղաքացի, արտօնեալ ագնուական, թէ նոյն իսկ կայսերական ընտանիք ու ինքը պետութիւնը:

Հաւասարեցնելով «հարկատու» դասակարգերը «ոչ-հարկատուներին» հետ, օրէնքը ոչնչացնում է ճորտութեան վերջին հետքը, որով աղքատ ամբոյսը պարտական էր իր ուսերի վրայ տանել երկրի ծախքերի ամբողջ ծանրութիւնը. իսկ աւելի հարուստ արտօնեալները հրաւիրուած էին միմիայն վայելել այն յարմարութիւններէ, որոնք ստեղծուած էին այդ հարկերով:

Եւ ճիշտ:

Անցեալ 1898—1900 թ. թ. ընթացքում Անդրկովկասի նահանգների կրած ուղղակի տուրքերը եղած են.

	Ընդամենը 1 դես. հազ. ու կոպ.
Ծխահարկ գիւղացիներից	24834 34
Ծխահարկ գիւղացիներից տեղական կարիքների համար	28488 39
Հող. հարկ մասնաւոր կալուածատէրե- րից տեղական պէտքերի համար	2673 8

Ընդամենը 55965 հազ. ու., որից գիւղացիները վճարում էին 53292 հ. կամ 952⁰/₀, իսկ մասնաւոր կալուածատէրերը 48⁰/₀: Այն-ինչ, ինչպէս մինք վերը տեսանք, Թիֆլիսի Արքու-նական Պալատի հաշուով երկրում գտնուած բոլոր հողերի 477 միլիօն ուղւի գուտ եկամուտից, գիւղացիների հողերը բերում են 36 միլ. և կամ 755⁰/₀, իսկ մասնաւոր կալուածատէրերինը և արքունականը—126 միլ. և կամ 245⁰/₀: Ինչպէս գիւղացիներից վերցրուած արքունական ծխահարկը, նոյնպէս և տեղական տուրքերը ծախսուած են ամբողջ երկրի կարիքների վրայ—ոստիկանութիւն պահելու, հաշտարար միջնորդների և այլ պաշտօնեաներին ոռձիկ վճարելու, խճուղի ճանապարհներ, կամուրջներ կառուցանելու, զբանց պահպանելու, հիւանդանոցներ հիմնելու, դպրոցներ բանալու և այլ այդ տեսակ երկրի համար հանրօգուտ ծախքեր կատարելու համար:

Որոշել առաջուց, թէ այդ հաստատութիւններից որ դասակարգերն են աւելի օգտուած և ուրեմն որ դասակարգերի վրայ պիտի ծանրանան այդ ծախքերը—գոյուար է, նոյն իսկ անհնարին:

Եթէ խուլ անկիւնում ընկած աղքատ գիւղացին ստանում է որ և է օգուտ ոստիկանութիւնից իր գետնափոր գոմն ու 10 ոչխարը ապահով զգալով, աւելի ևս օգտուած են նոյն ոստիկանութիւնից հարուստ հողատէրերն ու վաճառականները,

որոնք աւագակներից պաշտպանելու իրեր ունեն և չնորհիւ պետական լեզու գիտենալու և կրթութեան միշտ գիմում են ուտիկանութեան աջակցութեան:

Խճուղու ճանապարհներից, որ մինչև օրս միացնում են գլխաւորապէս քաղաքները միմեանց հետ, կամ Կօծօրի, Դարաչիչագի նման ամառանոցները քաղաքների հետ, նոյնպէս ծառայում են աւելի քաղաքացի վաճառականներին, պաշտօնեաներին և խոշոր հողատէրերին—լաւ ճանապարհը արժանացնում է հաղորդակցութիւնը, ամառանոց գնալը, զիւրութիւն է տալիս քաղաքացիների աժան դնով փոխադրել իրանց առնելիք բոլոր պիտոյքները, իսկ խոշոր կալուածատէրերի համար միջոց է աւելի բարձր գնով ծախել իրանց ստացած ծախու պիտոյքները:

Աղքատ գիւղացիները, որ իրանց ստացած բերքերից միայն մի չնչին մասն են ծախում ու անհրաժեշտ պիտոյքների չնչին մասն առնում. գիւղացիք, որ տաւարը ծախելիս ու աշխատանքի գնալիս չեն էլ օգտուում լաւ ճանապարհներից, ահագին ծախքեր պահանջող խճուղուց չունեն այն շահը, ինչ որ ստանում են վաճառականները, կալուածատէրերն ու քաղաքացիները:

Նոյնն են ներկայացնում հիւանդանոցները, դպրոցները, բանտերը և միւս հանրօգուտ հիմնարկութիւնները:

Գաւառական բժիշկները մեծ մասամբ յաճախում են կալուածատէրերին ու առևտրականներին, ուր կարող են մաքուր բնակարան գտնել և «մի բան էլ ոտճկից դուրս սպասել»: Դըպրոցները յաճախել կարող են գլխաւորապէս ունևորների տղաները: Յանցաւորները բանտարկւում են մեծ մասամբ ունևորների գոյքը պաշտպանելու համար. մնացած հանրօգուտ հիմնարկութիւնները բաց են աւելի լեզու գիտեցողների առաջ...

Չարմանալի չէ արդեօք, որ, չը նայած այս ամենին, բոլոր հարկերը մինչև օրս ծանրացած էին այն դասակարգի վրայ, որ ամենից աղքատն էր և ամենից քիչ օգտուողը այս բոլոր հիմնարկութիւններից: Նոր օրէնքի չնորհիւ այս անբնական դրութիւնը կնխարկւում է զգալի փոփոխութիւնների:

Թիֆլիսի Արքունական Պալատի հաշուեցուցակին նայած, մասնաւոր կալուածատէրերը և այլ՝ մինչև օրս արտօնեալ դասակարգերը (գլխաւորապէս հողերի եկամուտի համեմատ) 1901—1903 եռամեակին վճարելու են.

Կալուածատէրերը հող. հարկ 2332 հազ. ո.
» տեղական հարկ 7749 » »

Արքունական հոգերը տեղական հարկ . . 1717 » »

Քաղաքները անշարժ կալուածքներից . . 3828 » »

Վաճառականութեամբ ու արդիւնաբերու-

թեան զան. ճիւղ. պարապ. տեղ. հարկ 6154 » »

Ընդհանրապէս վերցրած, Անդրկովկասի գիւղացիների միջակ դեպքերից վճարելիք տուրքը 73 կոպէկից (մինչև 1901 թ.) բարձրանում է (1901 թ. սկսած) մինչև 83 կ., այսինքն 140/0-ով: Իսկ մասնաւոր կալուածատէրերի վճարելիքը—8-ից մինչև 30 կ., կամ աւելանում է մօտ 4 անգամ:

Անկասկած, ազնուականները և միւս մասնաւոր կալուածատէրերը կ'աշխատեն այդ աւելացած ծանրութիւնը գցել կապալով տրուող հոգերի վրայ, բայց... դա չի յաղողուի այն չափով, ինչ չափով բարձրացուած է տուրքը: Քանի որ ազնուականների կալուածքների կից չըջակայքում կան արքունական անտառներ, արօտներ, գիւղացիների վարկահողեր, որոնք տեղական բարդ պայմաններով սահմանուած արժեքի չափ ունեն, ո՞վ կը տայ կալուածատէրերին աւելին:

Կամ, եթէ այդ հոգերից մինչև օրս կարելի էր աւելի բարձր վարձ ստանալ, միթէ կալուածատէրերը չէին վերցնում... մեղքանալով գիւղացիներին:

Հաւանական է, կապալի վարձի գները 1901 թ-ուից մի քիչ կը բարձրանան, բայց դրա հետեանքը կը լինի ծախսուող գիւղական մթերքների (միս, պանիր) գների համեմատական բարձրանալը, և վերջ ի վերջոյ քաղաքացի սպառողները և կալուածատէրերը աւելի կը տուժեն, քան գիւղացիք:

Ուստի կալուածատէրերի վճարելիք հարկի բարձրացնելը ֆիկցիա չէ, այլ իրականութիւն, որ բարձրագոյն հրովարտակի ասելով, անպայման անհրաժեշտ էր «երկրի հարկատիրական զրութեան մէջ անհրաժեշտ արդարութիւն մտցնելու համար»:

Նոյն անհրաժեշտ արդարութեան «հիման վրայ» մենք յոյս ունենք կարծելու, որ մօտ ապագայում հարկատու գիւղացիների ուսից կը վերացունեն մինչև օրս գոյութիւն ունեցող զանազան օլամներն ու բեգարները:

Վերջիններս դրամի վերածուելով հաւասարապէս կը բաժանուեն բոլորի վրայ, համեմատ հողից ստացուած զուտ արդիւնքի: Ինչպէս լսուած է լրագիրներից, այդ բեֆօրմը իրագործելու համար ժողովուում են անհրաժեշտ տեղեկութիւններ:

Վերը ասածովս չեն վերջանում նոր հարկատուութեան ձեւի դրական կողմերը:

Ընդունելով հարկերի համար մի յենակէտ (объект) — այն է հողի բերած զուտ արդիւնքը, նոր օրէնքը միջոց է տալիս աւելի արդարացի կերպով բաժանել երկրի զանազան շրջանների ու անհատների կրելիք հարկերը, ազատում է հարկ վճարողներին պաշտօնեաների քմահաճութիւնից ու զեղծումներից: Գցելով հարկը հողից ստացուող զուտ արդիւնքի վրայ, նոր օրէնքը ազատում է տուրքից անձնաւորութիւնը, աշխատանքը և զրանով վերջ դնում թաթարներից մնացած գլխահարկին, որ անկասկած ամենաանճոռնի հարկային ձևերից մէկը պիտի համարել:

Ս. ԶԱԽԱՐԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

«ՊԷՊՕԻ» ԵՐԵՍՆԱՄԵԱԿԸ

Մինչև Գաբրիէլ Սունդուկեանցի «Պէպօ» կօմեդիան ռուսահայոց բեմի վրայ տիրապետում էին շինծու պատմական ողբերգութիւններ. այդ բոլոր «Սամուէլների», «Սանդուխտների» և «Արշակների» միակ արժանիքը այն էր, որ ժողովուրդը առիթ էր ունենում գոնեա բեմից հասկացողութիւն կազմել իր մոռացուած «Իսառաւոր» անցեալի մասին: Բայց եւրոպական գրականութեան համը առած երիտասարդութիւնը չէր կարող չը տեսնել այդ «ազգասիրութեան» միակողմանիութիւնը, որի շնորհիւ ոչ մի ուշադրութիւն չէր դարձնուում ներկայի վրայ, այսինքն այն իրական պայմանների վրայ, որոնց մէջ ապրում է այժմ ժողովուրդը:

Բայց մի խումբ երիտասարդ հայ թատերասէրներ նպատակ դրին բեմ հանել ներկայ կեանքը, սակայն աւելի ծիծաղեցնելու քան լուրջ հասարակական խնդիրներ արծարելու դիտաւորութեամբ: Այդ երիտասարդներից Միքայէլ Պատկանեան, Բժ. Միք. Տէր-Գրիգորեան և Փուղինեան հեղինակեցին մի շարք կօմեդիաներ, վօդեվիլներ և զաւեշտներ, ինչպէս «Միջի մարդ կամ մօցիքուլ», «Մէկը նշանած միւսը կին», «Պառաւնեւո՛ւն խրատ», «Պէպօի տկճուր», «Նինօյի նշնվիլը», «Խոտորնակին Խոտորնակ» և այլն:

Այդ թարմ հոսանքի շնորհիւ ժողովուրդը աւելի սերտ կապուեց մայրենի բեմին և կուշտ ծիծաղելով հանդերձ տեսաւ բեմ գուրս բերուած նաև իր կեանքի այլանդակ կողմերը: Այդ երիտասարդ թատերագիրների թուին էր պատկանում և Գաբրիէլ Սունդուկեանցը, որի առաջին գրուածքը, «Գիշիրվան սաբրը խէր է», պատկանում է վերև յիշած վօդեվիլների շարքին: Բայց Գաբրիէլ Սունդուկեանցի միւս գրուածքների մէջ, «Խաթաբալա» և «Էլի մէկ զոհ», ծիծաղի

հետ արդէն լուում էր և մի լուրջ նօս, հասարակական բարքերի քննադատութիւն: Այդ լուրջ նօսը աւելի ուժեղ և զեղարուեստօրէն յայտնուեց նրա «Պէպօ» կօմեդիայի մէջ, որ ներկայացրուեց 30 տարի առաջ:

«Պէպօն» առաջին և մինչև այժմ միակ ինքնուրոյն հայկական պիէսն է, որ իր զեղարուեստական ընթացիկութեամբ մի նոր էջ է սկսում հայոց գրականութեան մէջ և իր շօշափած հասարակական հարցով դուրս է գալիս նեղ ազգային շրջանից ու դառնում համալովկասեան և նոյն իսկ համամարդկային գրականութեան սեփականութիւն:

«Պէպօ» մէջ դուրս է բերուած մի ճնշուած աշխատանք, որ բողբոջում է իրան հարստահարող փողաւորի դէմ: Այդ սրտից բղխած մի ճիշ էր յանուն արդարութեան և այդ ճիշը համակրանք զարթեցրեց հասարակութեան մէջ, չը ջոկելով հային վրացուց եւ ուսուց: Մի այդպիսի գրուածք չէր կարող շարժում չառաջացնել ոչ միայն հայոց բնմի, այլ և մեր դարևոր հարեանների գրականութեան մէջ: «Պէպօն» թարգմանւում է վրացերէն և նրան հետեւելով վրացիներն էլ գրական կեանքից սկսում են կօմեդիաներ գրել. Յագարելին գրում է «Խանութ», «Յիմբիրելին», հայ գրողները՝ Գոռտաւ Քալանթարեանը, Պարունգեգեանը, նոյն թիֆլիսեցոյ կեանքից, նոյն բարբառով կօմեդիաներ են գրում («Քաղքի Աղաթ» առաջինի եւ «Օյինբազ» երկրորդի):

Այդպէս ահա մեծ էր Գաբրիէլ Սունդուկեանցի գլուխ դործոց «Պէպօ» նշանակութիւնը: Եթէ այդ գրուածքը չունենար զեղարուեստական մեծ արժանիքներ, նա չէր կարող 30 տարի մնալ բնմի վրայ. մինչդեռ այժմ իսկ նա շարունակում է անկեղծ հրճուանք առաջացնել հանդիսականների մէջ, ինչպէս այդ ցոյց տուին ապրիլի 28-ին, 29-ին և 30-ին տուած ներկայացումները և նրանց յաջորդող հանդէսները:

Մեր նպատակից դուրս է նկարագրել այդ հանդէսները, որոնց մանրամասնութիւնները յայտնի են ընթերցողներին լրագիրներից:

Նրան, որ աշխատել էր ժողովրդի համար, որի համակրանքը ժողովրդի զուակ՝ Պէպօյի կողմն էր, նախ մեծարեց ժողովուրդը:

Շաբաթ, ապրիլի 28-ին, վրաց ժողովրդական թատրոնի սեկցիան, Աւճալեան ժողովրդական թատրոնում, ներկայացրեց «Պէպօն» վրացերէն. դահլիճը զարդարուած էր դրօշակներով և կանաչեղէնով. առաջին կարգում դրած էր կանաչեղէնով ծածկուած բազկաթոռ՝ մեծ հիւրի համար: Ժողովուրդը հանդիպեց

իր սիրած գրամատուրգին «վաչա» բացականչութիւններով և նուագեց կովկասցիներին զուռնան: Ներկայացումը սկսուեց և վերջացաւ մեծ աշխոյժով. գերակատարները բոլորը թատերասէրներ էին, սրանց մէջ կային և արհեստաւորներ: Ներկայացումը վերջանալուց յետոյ վարագոյրը նորից բարձրացաւ. բեմը զարդարուած էր, իսկ մէջտեղում դրուած էր ծաղիկներից շինած մի մեծ քնար, որի վրայ գրուած էր «Պէպօ—XXX»: Քնարի շուրջը խմբուել էին գերակատարները: Սեկցիայի անդամներից մէկը բացատրեց ժողովրդին Սունդուկեանցի մատուցած ծառայութիւնը թատրոնին և գրականութեանը, այնուհետեւ բեմ բարձրացաւ ծերունի հեղինակը և շնորհակալութիւն յայտնեց թէ ժողովրդին և թէ խաղացողներին. մեծ հիւրին ճանապարհ զցեցին «վաչա» կանչելով և զուռնայով:

Երկրորդ գիշերը, ապրիլի 29-ին, «Պէպօի» 30-ամեակը տօնեց վրայ գրամատիկական կօմիտէտը ազնուականների թատրոնում: Թատրոնի դրսի ճակատը զարդարուած էր վեհազօրով, որի վրայ գրուած էր՝ «Տաղանդաւոր գրամատուրգ Գ. Սունդուկեանցին—1871—1901»: Թատրոնի ներսը զարդարուած էր դրօշակներով և պսակներով, որոնց մէջն էին Սունդուկեանցի պիէսների անունները: Խաղացուեց մեծ աջողութեամբ «Պէպօն»: Մասնակցում էին խմբի լաւագոյն ոյժերը. ներկայացումը վերջանալուց յետոյ կատարուեց հանդէսը: Կարգացած ուղերձներից ուշադրութեան արժանի են երկուսը: Պ. Օպօյինինը, որ պատգամաւոր էր եկած արքունական թատրոնի ղեկեցիայից, ասաց՝ «Մեծ պատիւ է ինձ համար, որ վիճակուեց ինձ՝ ոռւս բեմի ներկայացուցչին շնորհաւորել ձեզ՝ հայ գրամատուրգի՞ վրայ բեմի վրայ»: Այնուհետեւ նկարագրելով պ. Սունդուկեանցի մատուցած ծառայութիւնը հայ-վրաց-ռուս բեմերին, ցանկաց այս երեք ազգութիւնների միութիւնը. «Թէև թատրոնը մի կողմից, ասաց պարոնը, իբր ազգային հիմնարկութիւն պահպանում է լեզուն, սակայն միւս կողմից նա տարածում է իդէալներ, որոնք սեփականութիւն են ամբողջ մարդկութեան, և այս ընդհանուր զգայմունքներով միանում են ազգութիւնները. այս տեսակէտից Գ. Սունդուկեանցի տաղանդը հանգիսացաւ շաղկապ հայ-վրաց-ռուս ազգութիւնների մէջ»:

Միւս նշանաւոր ճառը ասաց գերազանց Ղիփիանին, որ մասնակցել էր «Պէպօի» վրացերէն առաջին ներկայացման, ինչպէս և այդ օրը. «Վրաց թատրոնը ունեցել է երկու շրջան. առաջինը, սկսուելու օրից հանդէս եկան Գ. Էրիսթօյը, Անտօնօյը (գօրեցի հայ), որոնք տուին վրաց թատրոնին մի շարք կենսական պի-

էսներ. այնուհետև վրայ թատրոնը քնեց խորը քնով. այդ դըրութեան մէջ էր նա 25 տարի: Այս ժամանակը հանդէս է գալի Գաբրիէլ Սունդուկեանցը. սա կազմում է նոր շրջան—վրայ թատրոնի վերածնութեան շրջանը. այս վերածնութեամբ վրայ թատրոնը պարտական է Սունդուկեանցին: Սա իր տաղանդաւոր երկերով զարթեցրեց հասարակութիւնը և թատրոնը, զարկ տուաւ նոր թատերական գրականութեանը, ունեցաւ հետևողներ վրայ գրողների մէջ, այդ պատճառով էլ Սունդուկեանցը մեծ տեղ է բռնում վրայ թատրոնի և գրականութեան մէջ:

Երրորդ գիշերը, ապրիլի 30-ին, հայ դերասանական խումբը տօնեց «Պէպօն» 30-ամեակը Թիֆլիսի Արտիստիկական ընկերութեան թատրոնում, ներկայացնելով «Պէպօն», որի դերը կատարում էր պ. Գ. Չմշկեանը, ինչպէս և 30 տարի առաջ, երբ առաջին անգամ ներկայացրուեց այդ հռչակաւոր գրութեանը: Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ շնորհաւորական մի սրտաբուլիս հանդէս: Բոլորից սիրուած ու յարգուած եօթանասունուհինգ ամեայ ծերունին հազուադիւս բախտ ունեցաւ. նա ականատես էր իր երկի առաջացրած շարժման. նա տեսաւ թէ ինչ ազնուացնող ազդեցութիւն արեց «Պէպօն»-ում պաշտպանուած գաղափարը աղգերի վրայ, շարժելով նրանց հոգու խորքերում կղբայրական սիրոյ և համերաշխութեան ձգտումները: Ուրեմն կեցցէ՛ ճնշուած Պէպօնների ջատագովն ու տաղանդաւոր արտայայտիչը. կեցցէ՛ Գաբրիէլ Սունդուկեանց:

Vox.

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մարդկային կեանքի երկու միջնավայր.—Արդի դարոցների վերաբերմունքը դէպի այդ միջնավայրերը.—Գարոցական նոր կարգերի անհրաժեշտութիւնը.—Նշանակութիւն՝ լուրջ ընթերցանութեան միջոցով.—Ազքատ գրականութիւն.—Միակողմանի հասկացողութիւն գիտութեան մասին.—Տնտեսական և հասարակական գիտութիւնների նշանակութիւնը.—Առևտրաարդիւնագործական չարաբերութիւնների զերիշխող դերը մեր դարում.—Վաղաքակրթուած գիշատողներ.—Տնտեսական տաղնապի բնորոշ պատկերը.—Արդիւնագործական տաղնապ հարաւային Ռուսաստանում.—Մոսկուա—Կըշտըմի երկաթուղային գիծը.—Նոր փոխառութիւն.—Նաւթագործական կրիզիս Բագում.—Տուժող դասակարգ.—Գաւառների թմրութեան պատճառներից մէկը.—Բանուորական անկարգութիւնների Քիֆլիսում.—Անկարգութիւններ Օբուխովի պողպատ-ձուլական գործարանում.—Բարձրագոյն հրովարտակ Պետական խորհրդին:

Բնութիւն և հասարակութիւն—ահա երկու միջնավայր, որոնց ենթակայ է մարդը իր ծնուած օրից մինչև մահը: Մարդկութիւնը իր գիտակցութեան առաջին օրից ահագին ջանքեր է գործ դնում ընդունելու թէ բնութեան և թէ հասարակութեան կեանքի բազմատեսակ երևոյթների պատճառները: Մարդկային մաքսոռումների ու որոնումների շնորհիւ այժմ աւելի գիտենք այդ խորհրդաւոր միջնավայրերի մասին քան կարող էր գուշակել հրէաների ամենասանձարձակ երևակայութիւնն անգամ: Մարդը այժմ իրան հպատակեցնելով բնութեան հզօր ոյժերը՝ նաև հասարակական չարիքների վրայ չէ նայում, ինչպէս ճակատագրական անհրաժեշտութիւնների վրայ, այլ հաւատալիք է, որ ինքը իր խելքով ու կամքով կարող է հասարակական կարգերին այնպիսի ձեւ տալ, որ մարդկային անարգարութիւնից բղխած հասարակական չարիքներին վերջ դնուի: Բնական և հասարակական գիտութիւնները այժմ մեր մտաւոր տեսութեան առաջ բանում են շատ լայն հորիզոններ և տալիս են մեզ զէնք աւելի աջող կերպով շարունակել թէ գոյութեան կոլւը և թէ մաքսոռումը չարիքների դէմ: Սակայն, դժբախտաբար, զսլորցական գործը մինչև այժմ այնպիսի հիմքերի վրայ է կրուած, որ

այդ գիտութիւնները եօթը կողպէքներով փակուած են մնում նոր սերունդից, իսկ նրա գլուխը լքնում են ամեն բանով, բայց ոչ իսկական գիտութիւնով: «Զարգացման վկայական» է տրուում հազարաւոր պատանիներին և օրիորդներին, որոնց հասկացողութիւնը իրանց չըջապատող բնական-հասարակական երեոյթների մասին չատ քիչ է տարբերուում Ադամի և Եւայի գիտցածներին: Ապագայում մարդիկ երեւի դժուարանալու են բացատրել այն մտաւոր տափակութիւնը, որի չնորհիւ բաւական էր համարուում կեանքի ահեղ կռիւ դուրս բերել ամբողջ սերունդներ, զինելով դրանց մի քանի կցկտուր տեղեկութիւններով և մեռած ու մեռցնող հին լեզուների քերականական բարբաջանքներով:

Բարեբախտաբար այդ խայտառակ իրականութիւնը փոխուելու վրայ է, և նոր տիպի դպրոցների ու նոր ծրագրների պահանջը արդէն արտայայտութիւն է գտել Բարձրագոյն հոգեւորտակի հետեւեալ խօսքերով. «Վերջին տարիների փորձը ցոյց տուեց մեր ուսումնական կազմակերպութեան մէջ այն աստիճան էական թերութիւններ, որ Ես բարեպատեհ համարեցի ձեռնամուխ լինել արմատապէս քննելու և բարեփոխելու այդ կազմակերպութիւնը»: Անշուշտ այդ արմատական բարեփոխման չնորհիւ վերջ կը դնուի այն տարօրինակ երեոյթին, որ «զարգացման վկայականը» ծոցում դրած երիտասարդներն ու օրիորդները ոչ մի զաղափար չունեն նոյն իսկ իրանց մարմնի կազմութեան մասին, ինչպէս և զուրկ են ճիշտ աշխարհայեցողութիւններից բնութեան ու հասարակական երեոյթների մասին:

Բայց մինչև ապագայ ծրագիրների իրականանալը նոր սերունդը պէտք է ինքնազարգացման մասին հոգ տանի և ինքը աշխատի սիստեմատիկ և լուրջ ընթերցանութեամբ լրացնել իր կրթութեան մէջ մնացած ահագին պակասները:

Թերի և սխալ հիմքերի վրայ դրած արդի կրթութեան հետեւանքներից մէկն էլ այն է, որ մեր մամուլը ստիպուած է շատ անգամ խոյս տալ լուրջ խնդիրների մասին մանրամասն խօսելուց, որովհետեւ ընթերցողների ահագին մասը, չիմանալով հասարակական գիտութիւնների այբուբենը անգամ, այսինքն՝ քաղաքական տնտեսութիւնը, չէ էլ հետաքրքրուում տնտեսական հարցերով, և աւելի մեծ սիրով զանազան ոտանաւորներ ու վէպիկներ է կարդում: Իսկ քանի-քանի երիտասարդներ իրանց թանկագին ժամանակն ու եռանդը վատնում են ոտանաւորներ մրոտելու կամ զանազան պատմութեանքներ թխելու վրայ, չունենալով ամենամիջակ մտաւոր զարգացում անգամ:

Եւ այդ բոլորը կրթութեան այլանդակ հիմքերի հետեանք է։ Սակայն, ինչպէս ասացինք ղարգացուցիչ ընթերցանութեամբ կարելի է լրացնել կրթութեան պակասը։ Ռուսաց զրականութեան մէջ վերջին տարիների ընթացքում նկատուում է ինքնազարգացման նիւթ մատակարարող հրատարակութիւնների մի ահագին հոսանք։ Միայն հայն է, որ շարունակում է պահպանել իր հին հասկացողութիւնը գիտութեան մասին. մագաղաթների, գերեզմանաքարերի կամ շատ-շատ նաև բղէզների մասին մանրակրկիտ չոր ու ցամաք գրուածքներին նա ահագին նշանակութիւն է տալիս, իսկ միանգամայն անտես առնում շրջապատող կեանքը իր կենսաթրթիւ խնդիրներով։ Տեսէք ի՜նչ հրճուանք, ի՜նչ իրարանցում է տիրում «հայկական կաճառներում», երբ մի տիրացու մի «նոր կարծիք» է յայտնում մագաղաթների կամ գերեզմանաքարերի չնչին խնդիրների վերաբերեալ. իսկոյն Վիեննայի, Վենետիկի, Էջմիածնի և Թիֆլիսի «գիտնական» հայերի գրիչների ճոճոցը, չափ ու սահման կորցրած, խլացնում է կեանքի կենդանի ձայները...

Կեանքը, իրականութիւնը գոյութիւն չունի զբանց համար և ամեն բան պէտք է փոշիով ու բորբոսով ծածկուի և փոփ, որ արժանանայ մեր գիտունների ուշադրութեան... Այդ է պատճառը, որ հայ ընթերցողը հայոց զրականութեան հետ միշտ սովոր է եղել կապել ազգասիրական ոտանաւորներ, հնախօսութիւն, տառակերութիւն, վանքային ինտրիգների ձանձրալի նկարագիրներ, անձնական հակառակութիւնների գարշելի ճովղոց, բայց ոչ հասարակական-տնտեսական հարցերի բազմակողմանի լուսաբանութիւն։ Եւ հայ ընթերցողը, եթէ էլ տիրապետում այլ լեզուի, պէտք է անառաջնորդ դեգերի առօրեայ կեանքի ժխտում, ոչինչ չը հասկանալով իր շուրջը կատարուող անցած դարձածից։

Միւս կողմից էլ, երբ փորձեր են լինում խօսել ժողովրդի հետ ընական կամ տնտեսական գիտութիւններից—այդ անում է այնպիսի ոճով, որ ստացւում է գերեզմանաքարերի մասին կատարած հեռագոտութիւնների նման մի բան և ընթերցողը գերադասում է զուր տեղը գլուխ չը կտրել իրան առաջարկուած անմարսելի մտաւոր սննդի վրայ։

Բայց թողնենք այդ և դառնանք մեր ներքին կեանքի այն տնտեսական տաղնապներին, որոնք վերջին ժամանակներում այնպէս խոր ցնցեցին մեր հասարակութեան առևտրա-արդիւնաբերական խաւերը։ Սակայն ներկայումս կա այդպիսի հասարակական մի որ և է մաս, որ մտած չը լինի այդ առևտրա-

արդիւնաբերական աշխարհի ազդեցութեան տակ: Չենք կարծում...

Ո՛չ հին փիւնիկեցին ու կարթագենացին, ոչ միջնադարեան Ջենովան ու Վենետիկը կարող էին երեւակայել առևտրի և արդիւնագործութեան այն վիթխարի չափերն ու դրամի չընթանալով Ռենեսանսի արագութիւնը, որ գոյութիւն ունի ներկայումս: Դեռ երբէք աշխատանքի բաժանումը չէր հասել այն կատարելութեան, ինչպէս այժմ, երբ կապիտալը ճնշող է դառել ոչ միայն իր հսկայական մեծութեամբ, այլ և իր ստեղծած հիմնարկութիւնների նուրբ կազմակերպութեամբ: Վերցրէք բանկերը, բօրսանքը, ակցիոներական ընկերութիւնները, վարկի կամ կրեդիտի ներկայ գործադրութիւնը և դուք կը տեսնէք, որ Նապոլէոնների ու նրա զօրքերի դերը այժմ կատարում են բօրսային և բանկային նապոլէոնները իրանցից կախում ունեցող ծառայողների լեզիոններով: այժմ գիտնականից սկսած մինչև բանուորը խոշոր կապիտալիստի հպատակներն են...

Ներկայումս կրեդիտով, առանց կանխիկ դրամի, ճարպիկ մարդիկ հնարաւորութիւն ունեն ստեղծել այնպիսի վիթխարի ձեռնարկութիւններ, որ այլ պայմաններում մատչելի էին միմիայն խոշոր դրամատէրերին: Իսկ վարկի շնորհիւ խոշոր դրամատէրերը հնարաւորութիւն ունեն հարիւրապատկել իրանց՝ կարողութեան ոյժը և մրցման մէջ աւելի ևս անյաղթելի դառնալ: Բօրսային և բանկային վարիչները այժմ գիտեն շատ տեսակ մանեօվրներ միամիտների գրպանները քաղաքավարի ձևերով մաքրազարդելու համար: Նրանք գիտեն հիմնել հարիւրաւոր խախուտ, վերուած ձեռնարկութիւններ, օգտուելով խեղճ մարդկանց շուտ հարստանալու տենչից: Ակցիաների գինը ճարպիկ խաղով բարձրացում են և տարածւում միամիտների մէջ, կորզելով դրանց չնչին խնայողութիւնները, իսկ փոխարէնը տալով գոյնզգոյն նկարուած և ոչինչ չարժող թղթեր: Անշուշտ Պարիզի վերջին տարազով հագնուած բանկային ու բօրսային այդ վարիչները, ձորերում թագնուած մռայլ հերոսների նման չեն և երբէք ոչ դրի վրայ բռնի ոյժ չեն գործ դնում, այլ ամեն բան անում է յօժար կամքով... մեր ցիլինդրաւոր ջնտելմենները ատրճանակով ու գաշոյնով հօ չեն պահանջում միամիտների քսակները, այլ... միայն ներկայ տնտեսական կազմակերպութեան հետեանք են այդ բանկային ու բօրսային գիշատումները, որոնք կը վերանան միայն այն ժամանակ, երբ կը վերստան նրանց ստեղծող պայմանները կամ առևտրա-արդիւնաբերական ներկայ կազմակերպութիւնը, որի հետեանք են և պարբերաբար կըրկընուող տնտեսական կրիզիսները:

Պահանջ և առաջարկ—ահա տնտեսական կեանքի առանցքը. բայց ներկայ պայմաններում արտադրողը համարեա չէ ճանաչում ոչ իր սպառողին, ոչ էլ իր մրցակցին, ուստի շատ դէպքում նա ստիպուած է բոլոր իր յոյսը բիսկի վրայ հիմնել: Այդ պայմաններում շատ բնական են առևտրի և արդիւնագործութեան ընթացքում խանդարումներ, գների սոսկալի անկումներ, ինչպէս և արուեստական խաղով առաջացրած բարձրացումներ:

Արդէն գների թէ՛ այդ անկումը և թէ՛ արտակարգ բարձրացումը գործերի ընթացքի անկանոնութեան հետեանք են և ինքն ըստ ինքեան գուշակել են տալիս անխուսափելի կրիզիսների մօտալուտ պայթումը:

Աւելորդ չէ մեզ թւում այստեղ առաջ բերել տնտեսական կրիզիսների բնորոշ կողմերը ընդհանրապէս:

Երբ զանազան հանգամանքների շնորհիւ մի տեղ աւելանում է որոշ տեսակ ապրանքների պահանջը՝ իսկոյն սկսւում է շուկայում յայտնի կենդանութիւն և ապրանքների գները կամացկամաց բարձրանում են. պահանջը աւելի է, քան առաջարկը: Շուկայի այդ «քաղցր» դրութիւնից իսկոյն օգտւում են ապրանքների գների փոփոխութիւններով շահուող սպեկուլանտները. դրանք զանազան ճարպիկ խաղերով արուեստական կերպով աւելի են բարձրացնում գները, քան այդ համապատասխան է առևտրի իսկական դրութեան: Այդ ընդհանուր տենդային ոգևորութեան շնորհիւ ազատ դրամը մտնւում է ձեռնտու համարուած սպեկուլեացիաների մէջ: Ընդարձակւում են և վարկի կամ կրեդիտի գործադրութեան չափերը: Բանկերը հեշտութեամբ են զեղչւում մուրհակներ, ամեն բան անւում է ապագայ մեծ օգուտների յոյսով: Մօդային դառած արդիւնագործութիւնը ընդարձակւում է և նոյն իսկ դերաման է հասնում: Բօրսայում բարձրանում են այդ մօդային արդիւնագործութեան ակցիաները: Բօրսային կատաղի խաղ է սկսւում, հարիւրապատկւում է ակցիաների իսկական արժէքը: Առաջ են գալիս ճարպիկ ձեռնարկուներ, նոր ընկերութիւններ նոր գործարաններ հիմնելու չափազանցած ծրագրերով: Միամիտ մարդիկ, որոնք տեսնում են թէ ինչպէս իրանց շուրջը մի քանի ժամում հարստանալու բաղմամբիւ. դէպքեր են տեղի ունենում, վարդազոյն յոյսերով շտապում են իրանց ունեցած—չունեցածը մայնել այդ նոր ձեռնարկութիւնների մէջ:

Նոր ձեռնարկութիւնների կազմակերպողներն ու հիմնադիրները ուրախութեամբ բաժանում են վերւն ձեռնարկութիւնների զեղեցիկ ակցիաներ այդ միամիտներին և նրանց գրպանի դեղին պարունակութիւնը միանգամից տեղափոխում իրանց

անդուկները: Այլ ևս չուկայում ազատ դրամ չէ մնում: Զգացւում է ամեն տեղ դրամի ճգնաժամ: Բանկիրները բարձրացնում են զեղջման տոկոսները: Կրեդիտը կրճատւում է: Հասնում է մուրհակներով պարտքեր վճարելու ժամանակը, փող չէ ճարւում: ստիպուած են ապրանքներն շուտ ծախել և վերածել դրամի: Իսկոյն ապրանքի առաջարկը գերակշռում է պահանջից: Սկսւում է ապրանքների և արժէթղթերի գների անկում: Այդ անկումն էլ այնպիսի ծայրայեղութիւններ է առաջացնում, ինչպէս բարձրացումը: Շուկայում տիրում է սարսափ, տեղի են ունենում անանկութիւններ, և այդ բոլորից օգտուողները դարձեալ խոշոր կապիտալիստներն են և այն ճարպիկ սպեկուլեանտները, որոնք ամուր կապեր ունեն բանկային վարիչների հետ: Վնասուածներն էլ ամեն բան վերագրում են բախտի բերմունքին և ճակատագրի տնօրինութեան ու նորից սկսւում է նոյն պատմութիւնը սկզբից:

Գնալ այժմ վերջին կրիզիսներին:

Հարաւային Ռուսաստանում ծաղկել է արուեստական միջոցներով և պետական պատուէրներ ստանալու մեծ յոյսերով երկաթագործական արդիւնաբերութիւնը: Այդ ձեռնարկութիւնների մեծ մասը անկանոն նախահաշիւներով է եղել սկսած և վերուն ու սնամէջ հիմունքների վրայ դրուած: Հիմնադիր-կազմակերպողները և բանկային ու բորսային սպեկուլեանտները նախ և առաջ, ի հարկէ, շտապել էին շուկայի կենդանի ժամանակը ծծել այդ հիմնարկութիւններից այն բոլոր հիւթերը, ինչ որ կարելի էր: Իսկ երբ փոխուեցին հանդամանքները, այլ ևս իսկութիւնը ծածկելու հարկ չը կար և երևան եկան այդ ձեռնարկութիւնների խախտու հիմքերը: Գործարանների մեծ մասը ստիպուած եղան կանգ առնել: Երկաթագործական ճգնաժամը իր հետ քաշեց և քարածխային կրիզիս: Տասնեակ հազարաւոր բանուորներ մնացին առանց վաստակի և անօգնական...

Մետաղագործները դիմեցին ֆինանսների մինիստրին, որ զանձարանը նոր պատուէրներով և զանազան մենաշնորհումներով պահպանի իրանց: Կառակարութիւնը պատուէր տուաւ կառուցող երկաթուղիների համար 10 միլիոն պուդ ըէլս, 200 շոգեկառք և 5000 վագօն: Բացի այդ երկաթուղային ընկերութիւնների հետ կապած պայմանագրութեան մէջ պարտաւորութիւն դրուեց, որ զրանք անպատճառ գործածեն ուսաց երկաթագործական գործարանների պատրաստած նիւթերը: Այդ պայմանով, օրինակ, պէտք է կառուցանուի այն զիծը, որ 6 տարուայ ընթացքում պէտք է վերջացնուի և միացնի Մոսկուան Կազանի վրայով Կըշտըմի հետ: Այդ գիծը ունենա-

լու է 1,602 վերստ երկայնութիւն և նրա չնորհիւ Մեծ Սիբիրեան երկաթուղին, որ սկսւում է Չելեաբինսկից, մօտենալու է Մոսկուային 270 վերստով, իսկ Ուրալեան լեռնագործական արդիւնաբերութեան կենտրոն Եկատերինբուրգը՝ 400 վերստով: (Կըշտըմը գտնւում է Եկատերինբուրգը Չելեաբինսկի հետ միացնող գծի համարեա մէջտեղում): Բացի այդ Րօտշիլդների միջնորդութեամբ Պարիզում անւում է 159 միլիօն ուուրլու փոխառութիւն, որի մի մասը յատկացնուելու է դարձեալ երկաթուղային ընկերութիւններին օգնելու գործին:

Այդ միջոցներով առժամանակ ի հարկէ կենդանութիւն կ'առնեն հարաւային Ռուսաստանի երկաթագործական և քարածխային արդիւնաբերութիւնները, բայց հիմնական բարւոքում անշուշտ չեն կարող առաջ գալ սխալ սկզբունքների վրայ դրուած ամբողջ մի տնտեսութեան մէջ:

Նոյնը կարելի է ասել և Բագուի ճգնաժամի մասին. մինչև որ տնտեսական գիտութիւնների պարզած հիմունքներով չը վերակազմուի ամբողջ արդիւնագործութիւնը՝ նա կը մնայ մեծամասնութեան համար չարիք և բարիք կը բերի միմիայն մի քանի անհատներին: Առևտրի և արդիւնագործութեան ներկայ կազմակերպութեան հէնց բնաւորութիւնից է բղխում պարբերաբար կրկնուող կրիզիսը, ուստի նաւթի գնի ցատկոտող բարձրացումը պէտք է վաղ թէ ուշ առաջացնէր այն սոսկորական երևոյթները, որոնք ընդհանուր են բոլոր նմանօրինակ ղէպերում, բոլոր տագնապնների ժամանակ:

Մեր ներքին տեսութեան մէջ (№ 2, եր. 289) մենք արդէն տեսանք թէ ի՞նչ դժուարութիւնների մէջ է առհասարակ դրամային շուկան Ռուսաստանում: Այդ պայմանը անկասկած պէտք է ճնշող ազդեցութիւն անէր ամեն մի արդիւնագործութեան վրայ, քանի որ դրամ կարելի էր ձարել միմիայն մեծ սոսկոսով: Դրան աւելացրէք և այն, որ արքունական հողերը կապալով վերցնելու համար պէտք էր գանձարանը մրտցնել ահագին՝ մի քանի միլիօն գումար, ուրեմն նոր ձեռնարկողները նախ պէտք է գանձարանի պահանջին գոհացում տային: Արդ, երևակայեցէք այնպիսի սլստիկ դրամատէր—ձեռնարկուների վիճակը, որոնք, բացի այն որ դժուարութիւններով ճարած դրամը պէտք է մոցնէին գանձարանը, պէտք է նորից դրամ ձարէին վերցրած հողերը շահագործելու համար: Եւ դեռ ի՞նչքան պէտք է գետնի տակ դրամ թաղէին մինչև նաւթ երեւալը: Ապագայի միլիօնների տենչով շատերը այնպիսի պուղաւժարով են վերցրել արքունական հողերը, որ գործին հմուտ ֆիրմաների միայն ծիծաղն է չարժոււմ: Պարզ է, որ դրամա-

կան այդ ճգնաժամին ստացուած նաւթը պատիկ ձեռնարկունե-
րը պէտք է շտապեն շուտ ծախել՝ խեղդող պարտքերից ազատ-
ուելու համար: Իսկոյն առաջարկը սկսում է գերակշռել պա-
հանջից: Մնացածը արդէն հասկանալի է:

Յաւը այն է, որ մեր անհեռատես պատիկ ձեռնարկող-
ների համար Բագուն նոյնն է, ինչ որ միլիների համար թակարդը.
Բագուից չեն կարող արտահանել շատ նաւթ, որովհետեւ Ան-
դրկովկասեան երկաթուղին չունի այնքան վազօն, որ բոլոր
պահանջը գոհացնի: Եւ մեր նոյն երկաթուղու վարչութեան չնոր-
հիւ էլ մեր նաւթագործները կերօսինատար խողովակներ չու-
նեն մինչև Բաթում: Եւ ահա հորերը արտավիժում են ահագին
քանակութեամբ նաւթ, բայց առնող չը կայ, պահելու տեղ չը
կայ, դէպի Բաթում արտահանելու յարմարութիւններ չը
կան, և Կասպից ծովով դէպի Աստրախան, Յարիցին՝ նոյնը:
Բացի այդ, յիշած տեղերում էլ բուն են դրել միջնորդներ,
որոնք գնում են նաւթ և յետոյ ծախում սպառողներին.
պարզ է, որ միջնորդը պէտք է ամենից շատ ուրախ լի-
նի գները ընկած դրութիւնից... Այդպիսով կրիդիտից կ'օգ-
տուեն միայն խոշորները, իսկ մեր այն արդիւնագործները,
որոնք խիզախեցին չնչին միջոցներով ահագին ձեռնարկու-
թիւններ սկսել, ընկան մի դրութեան մէջ, որից առանց հաշ-
մանդամ լինելու դժուար է պրծնել: Բայց անկասկած աւելի
եւս վատ է հազարաւոր բանուորների դրութիւնը: Այդ թըշ-
ուառները չունեն ինքնապաշտպանութեան համար ոչ մի կազ-
մակերպութիւն և ամեն մի ընդհանուր դժբախտութեան դէպ-
քում ամենից շատ տուժում են դրանք: Տաժանակիր աշխա-
տանքով ընտանիք պահող այդ թշուառները պէտք է վերա-
դառնան իրանց աղքատիկ խրճիթները, պէտք է վերադառնան
այն գաւառները, որոնց մէջ նոյն Բագուի չնորհիւ առանց
նկատելի զարգացման մնաց տնտեսական կեանքը, որովհետեւ
շուտ հարստանալու տենչը վարակիչ էր. մեծ ու փոքր, հա-
րուստ ու չքաւոր իրանց ունեցած-չունեցածը, որոնցով կարելի
էր գաւառներում առևտրական կամ արդիւնագործական ձեռ-
նարկութիւններ սկսել, փոխադրեցին Բագու, հետևապէս գա-
ւառների տնտեսական զարգացումը կանգ առաւ, իսկ Բագուի
շատ յոյսեր՝ փայլելով մի քանի վայրկեան՝ ցնդուեցին սապոնի
բշտիկների նման: Այն, շատ խոր դրամաներ կան թաղնուած
մարդկանց տնտեսական յարաբերութիւնների մէջ:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

«Кавказ» լրագրում սպուած է հետեւեալ հաղորդագրութիւնը.

Կիրակի, ապրիլի 22-ին, ամբողջ, որ առաւելապէս բաղկացած էր տեղական գործարանների և արհեստանոցների բանուորներից, անկարգութիւններ արաւ Թիֆլիսի Սօլդատսկի բազարում: Օգուտ քաղելով կիրակնօրեայ տօնավաճառի առիթով հաւաքուած ժողովրդի խումն բազմութիւնից, կարգը խանգարողները, թուով 300-ից մինչև 400 մարդ, առանձին-առանձին, զանազան ճանապարհներով, իբր ծախող և առնողներ, հաւաքուեցին Բաղարի հրապարակում: Առաւօտեան 11 ժամին մի քանի մարդիկ նրանց միջից, ցոյց անողներին միատեղ ժողովելու և հետաքրքրողների ուշադրութիւնը գրաւելու համար, սկսեցին աղմուկ հանել և ապա արդէն ամբողջ, միանալով և մետաքսեայ կտորից մի դրօշակ բարձրացնելով, շարժուեց «Վելիկոկենաթսկի Նօմերներ»-ից Սօլդատսկի բազարով դէպի Գօլօվինսկի պրօսպեկտը: Ոստիկանութիւնն առաջարկեց ամբոխին ցրուել, իսկ պրիստաւի օգնական Գէդէվանօվ ոստիկանական զինուորների հետ միասին փորձեց խլել դրօշակը, բայց դրան իբրև պատասխան տեղացին նրանց վրայ հարուածներ գաղտնի բերուած կարճ փայտերով և ծառի արմատածողերով: Ամբոխի մէջ եղած անձերից մի քանիսը մինչև անգամ դաշոյններ մերկացրին: Չը նայելով խռովարարների թուական անազին գերազանցութեանը, ոստիկանութեանը, այնուամենայնիւ, աջողուեց հէնց այդ տեղում պատռել և գրաւել դրօշակը: Յուզուած ամբողջ փորձեց առաջ գնալ, քարշ տալով հարուածներից ուշաթափուած Գէդէվանօվին և շարունակելով կատաղի պայքարը ոստիկանութեան դէմ: Շուկայում իրանց զործերով գտնուող զինուորները, զօրքի զանազան մասերից, և շատերը տեղացի բնակիչներից, տեսնելով ոստիկանների դժուար գրութիւնը, ինքնաբերաբար մի քանի մարդուց բաղկացած խմբեր կազմելով, սկսեցին եռանդով օգնել ոստիկանութեան: Տեղի ունեցաւ ընդհանուր խառնակութիւն և կոիւ, որոնց անխուսափելի հետեանքն եղան վնասուածներ թէ՛ մէկ և թէ՛ միւս կողմից: Այդ ժամանակ ցոյց անող ամբոխի միջից արձակուեցին ըէվօլուէրի վկց հարուածներ և ոստիկանական զինուոր Կիտանցեվ երկու գնդակով վէրքեր ստացաւ ազդրին և ուսին: Ոստիկանութեան և զինուորների միացած ջանքերով ամբոխի շարժումը այդ տեղում կանգ առաւ: Հեծեալ ոստիկանութեան զինուորների և ոստիկանական հեծեալ պահապանների հետ շտապով եկած ոս-

տիկանապետը դադարեցրեց կռիւը, ձերբակալեց գլխաւոր յանցաւորներին և վերջնականապէս ցրուեց ամբոխը: Անկարգութիւնների տեղը նոյն ժամանակ եկաւ և նահանգապետը, ձի հեծած, դաշտային ժանդարմների ուղեկցութեամբ, և սկսեց ղեկավարել կարգի վերջնական վերահաստատութեան համար ձեռնարկած միջոցները: Միաժամանակ հասան և նահանգապետի կողմից կանչուած կովկասեան սապեօրների առաջին բաժախօնը և խօպերեան զնդից 30 կօզակներ և իրանց ներկայութեամբ նպաստեցին այդ քաղաքամասի յուզուած ազգաբնակչութեան կատարեալ խաղաղացմանը: Անկարգութիւններն ընդհանրապէս, նրանց ծագման սկզբից մինչև շուկան խռովարար ամբոխից մաքրելը, տեկցին մօտ քառուրդ ժամ, իսկ այն ժամանակամիջոցը, երբ անկարգութիւնները սուր կերպարանք էին ստացել, տեկց ոչ աւելի քան ութ րոպէ:

Այն անձերից, որոնք ղեկավարող դեր էին խաղում անկարգութիւնների մէջ, ոստիկանութիւնը ձերբակալեց տեղիւ տեղը 41 հոգու, որոնց մեծ մասը բանուորներ են, մէկը՝ խարկօլի ուսանող և երեքը՝ կանանց բարձրագոյն կուրսերի ուսանողուհիներ, աքսորուած Պետերբուրգից վերջին անկարգութիւնների համար:

Մինչև այժմ պարզուած է, որ անկարգութիւնների միջոցին մեասուել են՝ ոստիկանապետ Կօվալեւ, որի ծուկկը ջարդեց և ոտնաթաթը դուրս գցեց այն ձին, որի վրայ նստած էր նա և որ վազ տալիս վայր ընկաւ, թէև այնուհետև նա շարունակում էր կատարել իր պարտաւորութիւնները դեռ էլի մի քանի ժամուայ ընթացքում. պրիստաւի օգնական Գէդէվանօվ, որ ստացել է ձեռքի և ձախ կողքի սաստիկ, բայց ոչ վտանգաւոր ջարդուածքներ, վերոյիշեալ ոստիկանական գինուոր Կիտանցեւ և մի քանի ուրիշները, որոնք ստացել են հարուածներ և թեթև վէրքեր:

Յոյց անող ամբոխի միջից մեասուել են լուրջ կերպով Մամալաձէ, որ բէվօլուէր էր արձակում, և թեթև կերպով՝ զրօշակը կրողներից մէկը. աւելի կամ պակաս չափով սաստիկ ջարդուածքներ ստացել են ձերբակալուածներից 9 հոգի:

Մայիսի 7-ին, ճաշի ժամանակուայ ընդմիջումից յետոյ, Օրուխօվի պողպատ-ձուլարանի գործարանում, Ալէքսանդրօվսկ գիւղում, Շլիսէլբուրգեան տրակտի վրայ, գործարանի զանազան բաժանմունքների մօտ 200 բանուորներ դադարեցրին աշխատանքը և գործարանի կառավարչի օգնական

փոխ-գնդապետ Իվանովին բացատրութիւններ տալու ժամանակ զանազան անհիմն պահանջներ արեցին: Փոխ-գնդապետ Իվանովի ապարդիւն յորդորներէյ յետոյ՝ սկսել աշխատանքը, բանուորները թափուեցին դէպի գործարանը, նշան տուեցին գործարանի սուլոցով դադարեցնելու աշխատանքները և ուժով սկսեցին կանգնեցնել մեքենաները: Փոխ-գնդապետ Իվանով, գործարանում ունենալով միայն 40 մարդուց բաղկացած զինուորական խումբ, խնդրեց ոստիկանութեան աջակցութիւնը: Կանչուեցին երկու էսկադրօն ժանդարմներ, հեծեալ ոստիկանութեան պահակախմբի բաժանմունքը և ոստիկանական պահեստի մօտ 200 ոստիկաններ, այդ միջոցին գործարանի բոլոր բանուորները, մինչև 3,600 մարդ, թողեցին իրանց գործը և աղմուկով ու սուլոցներով սկսեցին փողոց դուրս գալ: Բանուորներից մէկը դանակով մի քանի վէրքեր հասցրեց գործարանի դռների մօտ կանգնած պահապանին և այդտեղ էլ դէմքի վրայ վէրք ստացաւ ամբոխից արձակուած քարով թաղային վերակացուն: Բարուորների խումբը գրաւեց Շլիսէլբուրգեան տրակտի ամբողջ փողոցը և տների հարևան բազերը. ձիաքաշի երթևեկութիւնը կանգնեցրին նրանք: Ոստիկանապետ գնդապետ Պօլիբին, որի կարգադրութեան տակ էր դառնում եկած ոստիկանական զօրաբաժինը, երկիւղ կրելով հետագայ բարդութիւններից, հոգ տարաւ ամենից առաջ փողոցը այդ ամբոխից մաքրելու մասին: Երբ ապարդիւն անցաւ նրա պահանջը՝ ցրուել, նա ամբոխի վրայ ուղղեց հեծելախումբը և ժանդարմներին: Թէ ամբոխից և թէ մօտակայ շինութիւնների ցանկապատերից քարէ կարկուտ թափուեց ժանդարմների վրայ, և հեծեալ ոստիկանները ստիպուած էին յետ քաշուել դէպի Օբուխովի գործարանը: Այն ժամանակ գնդապետ Պօլիբին օգնութեան կանչեց գործարանի զինաւորուած պահակախումբը, որ արդէն կազմ և պատրաստ էր գործարանի բակում: Այդ պահակախմբի և ոստիկանների վրայ կրկին քարեր թափուեցին բանուորների կողմից, մի և նոյն ժամանակ ամբոխից մի քանի հրացանաձգութիւններ եղան, սակայն ոչ ոք չը վիրաւորուեց. այն ժամանակ գնդապետ Պօլիբին հրամայեց կրակ բանալ, յանձնարարելով այդ բանը բոցմանին՝ գործարանային պահակախմբի հրամանատարին: Երեք անգամ հրացանաձգութիւն եղաւ, որից սպանուեց մէկը և վիրաւորուեցին ութ բանուորներ: Դրանից յետոյ ամբոխը սկսեց ցիրուցան փախչել: Այդ ժամանակ հասան և օմսկեան հետևակ գնդի պահանջուած վաշտերը, որոնց աջակցութեամբ գնդապետ Պօլիբին կարգադրեց հեռացնել բանուորներին հարևան բակերից, որտեղից նրանք շարունակում էին քարեր արձակել զօրքի

վրայ: Այդ ժամանակ ձերբակալուեցին 100 մարդ: Բանուորներին հետ եղած ընդհարման ժամանակ գլխին և ոտքին քարի վէրք ստացաւ գնդապետ Պօլիբին, իսկ հասարակ ոստիկաններից քարերով վիրաւորուած են 11 ոստիկաններ, որոնցից եօթը աւելի ծանր և թաղային տեսուչը: Վիրաւորուածներից մի բանուոր մայիսի 8-ին վախճանուեց, իսկ մնացածները զետեղուած են հիւանդանոցում:

Բարձրագոյն հրովարտակ Պետական Խորհրդին

«Երջանկայիշատակ Կայսր Ալեքսանդր-Օրհնեայը, ոգևորուած բուռն ձգտումով դէպի հայրենիքի բարօրութիւնը, թաղաւորութեան առաջին օրերից իր հոգածութիւնների առարկայ դարձրեց օրինականութեան ամուր հաստատութիւնը կայսրութեան մէջ. այդ նպատակով 1801 թուի մարտի 30-ին, նա հիմնեց առանձին Խորհուրդ, Պետական անուանուած, Միապետի վստահութիւնը վայելող անձերից: 1801 թուի ապրիլի 5-ին Խորհուրդին տուած հրամանի մէջ որոշուած է նրան պատկանող նպատակը—դնել կայսրութեան ոյժը և բարօրութիւնը օրէնքի անսասան հիմքի վրայ: Խորհուրդը հաստատելու հէնց սկզբին որոշուած էր տալ նրան հաստատուն կազմակերպութիւն հետագայում, որ և իրագործուեց 1810 թուին նոր կազմակերպութեան հրատարակութեամբ: Կայսր Նիկօլայ I 1842 թուին շնորհեց Խորհրդին այժմ գործող հիմնարկութիւնը, որի մէջ պահպանուած են նախկինի հիմնական դժերը: Համարեա վաթսուց տարի անցնելուց յետոյ այդ օրէնսդրութիւնը ևս արդէն չէ համապատասխանում օրէնսդրական գործերի ընթացքի փոփոխուած պայմաններին, այդ պատճառով Մենք հրամայեցինք վերաքննել Խորհրդի հիմնարկութիւնը և պահպանել նրա մէջ այն գլխաւոր սկզբունքները, որոնք համապատասխան են Ռուսական Միապետութեան վարչութեան եղանակին, և լրացնել նրան մի քանի կանոններով՝ Խորհուրդը մտնող առանձնապէս նշանաւոր և բարդ նախագիծները կշռադատելու կարգի վերաբերմամբ: Այդ հիմունքների վրայ կազմուած օրէնսդրութիւնը Մենք բարեփոխեցինք հաստատել: Տալով Պետական Խորհրդին նրա հարիւրամեայ գոյութեան յիշատակին նուիրուած օրը նորոգուած կազմակերպութիւն, Մենք առանձին երախտագիտութեամբ դարձնում ենք Մեր ուշադրութիւնը Խորհրդի փառաւոր անցեալի վրայ՝ նրա հիմնարկութեան օրից սկսած: Չորս թաղաւորութիւններ մտան պատմութեան շրջանը. նրանց տեղողութեան ժամանակ կոչուած մասնակից լինելու Օրէնսդրի աշխատանքներին,

Պետական խորհուրդը, առանց չեղուելու, կատարում էր իր առաջ դրուած խնդիրները իր պատասխանատու ծառայութեան կարևորութեան կատարեալ պիտակցութեամբ: Խորհրդի իմաստուն և պետական փորձառութեամբ լի կարծիքներին լսում էին Մեր Թագակիր Նախահայրերը, երջանկայիշատակ Պապը և անմոռանալի Ծնողը: Նրանց Միահեծան կամքով, որ իրագործւում էր օրէնքների միջոցով, վերանորոգուած է պետութեան ամբողջ կազմը: Խորհրդի մասնակցութիւնը այս Միապետական գործողութիւններին, որոնք փառաւորեցին Ռուսաստանը և հաստատեցին նրա մէջ կանոնաւոր քաղաքացիականութիւն, չեն մոռացուի ապագայ սերունդներին մէջ: Թող սէրը դէպի հայրենիքը, պատիւը, հիմնուած արդարութեան վրայ, անընդհատ հոգացողութիւնը ժողովրդական բարօրութեան մասին, հաւատարմութիւնը պետական վարչութեան աւանդական հիմունքներին այստեհետե ևս ղեկավար լինեն խորհրդի գործիչների համար, ըստ անցեալ յոյժ գովելի աւանդի»:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Տնտեսական տարի, երաշտ, ժանտախտ, մորեխ.—Սխալքալաքի գաւառ.
օգնութիւն վնասուածներին, հասարակական նախաձեռնութիւններ, պետա-
կան նպաստ.—Սխալցիտալի պաշտարը, ծխականների կայացրած վճիռ-
ները.—Կաղղուանի պաշտարի վերջը.—Շուշու քաղաքագլխի ընտրութիւնը.
դարձեալ խնտելիգեցիա և դաւառները.—»Պէպօի« Երեսնամեակը դա-
ւառներում:

Գարունը այս տարի ամեն տեղ սովորականից շուտ սկը-
սուեց և շատ սպասնալից հանգամանքներ ունէր: Ձմեռը ձիւն
չատ քիչ եկաւ, իսկ ամբողջ մարտ ամիսը և ապրիլի կէսը սառ-
տիկ չորային էին. անձրևներ չը կային, բուսականութիւնը են-
թարկուած էր մեծ վտանգի: Մեր երկրի առանց այդ էլ քայ-
քայուող գիւղատնտեսութեան համար երկարատև երաշտը մի
կատարեալ աղէտ էր դառնում: Եւ դաւառներից տեղում էին
յուզիչ լուրեր. արտերը փչանում են, վաղաժամանակ բաց-
ուած ծառերը մի քանի տեղերում անալնկալ ցրտերից սաստիկ
վնասուեցան (օր. Գանձակում և Հին-Նախիջևանի գաւառում):
Բնութեան աղէտների հետ դալիս է և թանգութիւնը. նա հա-
մարեա ամեն տեղ դարձաւ օրուայ իրականութիւն և սաստիկ
վախեցնում էր ամենքին:

Մեր գիւղացու տնտեսութիւնը տարիներից ի վեր քայքայ-
ւում է և մի ուրիշ աղէտից. դա անասունների ժանտախտն է,
որ չէ հեռանում մեր երկրից, հիմնաւորապէս բոյն է զրել գիւ-
ղական աշխարհում և յանկարծակի բռնկւում է այս կամ այն
կողմում: Այսպէս են այժմեան ժամանակ Շիրակի գիւղերը:
Ժանտախտի դէմ, ի հարկէ, ձեռք են առնւում միջոցներ. հաս-
տատուում են կարանտիններ, արգելւում է հաղորդակցութիւնը
հարեան գիւղերի մէջ, հիւանդ անասունները հեռացնւում են
առողջներից: Դրանք միջոցներ են, որոնք չեն թոյլ տալիս որ
հիւանդութիւնը տարածուի. բայց այդ միջոցները մի և նոյն
ժամանակ նեղում են գիւղացուն, չեն թոյլ տալիս որ նա ա-

զատ պարապէ հողի մշակութեամբ, սահմանափակում են նրա արտի, ցանքսերի տարածութիւնը: Իսկ սա, ընդհանուր առմամբ, պիւղատնտեսական արդիւնաբերութեան նուազումն է առաջացնում:

Այս գարնանը մեր երկրի մի մեծ տարածութեան վրայ երևաց և զիւղատնտեսութեան մի այլ սոսկալի թշնամին—մորեխը: Դա էլ համարեա մշտական հիւր է: Կուրի և Արաքսի տափարակները մօտ ապրող ազգաբնակիւթեան առջև գրեթէ ամեն տարի այդ թշնամուն կոտորելու անհրաժեշտութիւնն է կանգնած: Կռուելու միջոցները նահապետական են և պահանջում են մեծ աշխատութիւն, գործող ձեռքերի ահագին քանակութիւն:

Ահա ինչ աննպաստ հանգամանքների մէջ էր մեր երկիրը սկսում իր տնտեսական տարին: Բայց երաշտը անցաւ, յորդ առատ անձրևների շրջան սկսուեց և հազիւ ստացաւ իրան հարկաւոր ջրի քանակութիւնը: Եւ այս երկնային բարիքը մի տեղի համար չէր միայն, այլ համատարած էր: Պէտք է յուսալ որ երաշտը այս տարուայ տնտեսութեան մէջ աղէտալի հետքեր չի թողնի: Մնում են միւս երկու հարուածները—ժանտախտը և մորեխը: Առաջինը, ինչպէս ասացինք, բոյն է դրել մեր երկրում տարիներից ի վեր. դա մի մշտական, դանդաղ գործող աւերումն է, որի հասցրած վնասները, անշուշտ, շատ մեծ են: Չը կան այդ վնասները պատկերացնող թուանշաններ, աղէտը ամեն տեղ տարածուած համաճարակ բնաւորութիւն չունի և այդ պատճառներով էլ համարեա աննկատելի է անցնում: Իսկ մորեխը այս տարի ահագին քանակութեամբ է երևացել Բագուի և Գանձակի նահանգներում: մորեխ կայ և Կարսի շրջանում: Նրա դէմ կռուելու համար ուղարկուեց մասնագէտ, բայց շատ ուշ: Ինչպէս յայտնի է, մորեխը այժմ ջարդւում է պարիզեան կանաչ անուանուած հեղուկի միջոցով: Բայց այդ միջոցը չէր կարելի գործադրել մեղանում այն պատճառով, որ մասնագէտ ուղարկուեց այն ժամանակ, երբ մորեխը թնաւորուել էր. իսկ այս շրջանում պարիզեան կանաչը անգործադրելի է: Մնում է սպասել թէ ինչ աւերանքներ կը գործէ զիւղատնտեսութեան այս հին, ահարկու թշնամին:

*
* *

«Մուրճի» առաջին համարում մենք ասում էինք որ Ախալքալաքի գաւառը այս տարի էլ պիտի հասարակական օգնութեամբ ապրէ: Այնուհետև մենք տուինք այդ գաւառի գրութեան մանրամասն նկարագրութիւնը, որի մէջ բացատրուած էին կա-

բօսողթեան չափերը, միջատներից վնասուածներին օգնութեան հասնելու միջոցները: Երկրաշարժի ժամանակակից գոյութիւն ունեցող երկու կօմիտեաները, որոնցից մէկը գլխաւորն է, Թիֆլիսում, իսկ միւսը տեղական—Ախալքալաքում, իր վրայ վերցրեց միջատներից վնասուածներին օգնելու գործն էլ: Ինչ որ արել են այդ երկու մարմինները, արդէն յայտնի է մեր ընթերցողներին: Եւ մեզ մնում է այստեղ արձանագրել միայն հասարակական օգնութեան չափերը: Այս անգամ էլ զժբախտացած գաւառի ցուր արձագանք գտաւ բարեսէր մարդկանց սրտում. ամեն կողմից նուէրներ են գալիս և «Մշակ» լրագիրը մինչև այժմ 5000 ռուբլուց աւել է հաւաքել քաղցած գիւղացիների օգտին: Այս անգամ էլ հասարակական օգնութիւնը նոյն բնաւորութիւնն ունի, ինչպէս երկրաշարժի ժամանակ. օգնում են համարեա բացառապէս հասարակութեան անապահով խաւերը, և Բագուի ու Թիֆլիսի դրամատէրները համարեա բոլորովին խուլ մնացին, թէև պակաս չէին մամուլի մէջ ոչ պերճախօս հրաւէրները, ոչ սրտաձմիկ նկարագրութիւնները:

Մեր կառավարարութիւնն էլ իր կողմից օգնութեան հասաւ Ախալքալաքի գիւղացիներին: Պետական գանձարանը փոխարինարար 40,000 ռուբլի բաց թողեց այն գիւղերին, որոնց ցանքսերը ոչնչացրել էին միջատները: Թէ արդեօք ձեռք առնուած միջոցները, հասարակութեան և կառավարութեան նպաստները կարող կը լինեն գոնէ մասամբ վերականգնել Ախալքալաքի գաւառի քայքայուած տնտեսութիւնը,—այդ առայժմ, ի հարկէ, չէ կարելի ասել: Յայտնի չէ մանաւանդ թէ այս տարի միջատները նորից երևան կը գան և աւերումներ կը գործեն թէ ոչ:

*
* *

Անցեալ տեսութեան մէջ մենք խօսեցինք Ախալցխայում ծագած երեսփոխանական հաշուետւութեան հարցի մասին և ասացինք որ դա էլ մէկն է այն բազմաթիւ երևոյթներից, որոնք անդադար կրկնում են մեր մէջ և ցոյց են տալիս թէ ժողովուրդը հասկացել է օրինականութեան պահանջը, իրաւունքների ու պարտաւորութիւնների գաղափարը և ընդհարում է իր հոգևոր իշխանութեան հետ, որ չէ կամենում կամ չէ կարողանում հետևել օրինականութեան ոգուն և շիտիթում է իրաւունքների և պարտաւորութիւնների սահմանները: Մի բան, որ ամբողջ սրտից պիտի ցանկայ ժողովրդական մամուլը, միայն այն կարող է լինել, որ մեր մէջ աւելի և աւելի արմատանայ ծխի ինքավարութեան սկզբունքը և ժողովրդի ինքնաձանաչութեան այդ նշանները յարատև լինեն: Ուստի մենք ու-

րախուժեամբ արձանագրում ենք որ Ախալցխայի հայ հասարակութիւնը շարունակում է իր սկսած պայքարը նոյն անշէջ եռանդով: Մի և նոյն ժամանակ նա մի կենդանի օրինակով ցոյց տուեց թէ որքան լաւ է, երբ եկեղեցու եկամուտները ժողովրդի իրաւունքի տակ են գտնուում: Ծխականների ժողովը որոշում կայացրեց՝ եկեղեցու արդիւնքներից 4000 ռուբլի տալ նպաստ քաղաքում բացուող հիւանդանոցին և 1200 ռուբլի էլ յատկացնել Ախալքալաքի գաւառի վնասուած ազգաբնակութեան: Այդ փաստը շատ լաւ հաստատում է որ ժողովրդական բարօրութեան տեսակէտից մի և նոյն չէ՝ ուր են գնում եկեղեցու եկամուտները: Մեր հնաւանդ սովորութիւններին նայած, այդ եկամուտները պէտք է որ անյայտանան երէցփոխների, առաջնորդների, գործակալների կամ այս ու այն աղայի ազգասիրական գրպաններում. բայց ինքնօգնութեան մեծ գաղափարը քարոզող մեր ժամանակը ուսուցանում է որ անհատների աւազակային հակումներին զոհ դարձող հասարակական գումարները կարող են շատ գեղեցիկ և հանրաշահ գործադրութիւն գտնել, երբ նրանց տէրն ու տնօրինողը ինքը ժողովուրդն է: Հրապարակով, ժողովրդի առաջ, գողութիւն անել չէ կարելի: Սա շատ ցաւալի է միայն գողերի տեսակէտից, մինչդեռ հասարակական բարեքը միայն հրճուել կարող է այդ հանգամանքից:

Մենք դեռ չը գիտենք թէ ինչպէս կը վերջանայ Ախալցխայի պայքարը: Բայց քանի որ հասարակութեան յուզուած մաքի մասին է մեր խօսքը, պիտի յիշենք և Կաղզուանը: Այդտեղ էլ, ինչպէս ասել էինք «Մուրճի» առաջին համարում, հասարակութիւնը իր իրաւունքների դատն էր պաշտպանում, մըրցելով մի աղայի ոսնձգութիւնների դէմ, որ հողերականութեան աջակցութիւնն էր վայելում և հէնց այդ պատճառով էլ իրան համարում էր ամեն տեսակ պատասխանատուութիւնից ազատ: Բացուած էր մի շատ հետաքրքրական տեսարան. մի կողմում կանգնած էր ժողովուրդը, միւս կողմում աղայի պաշտպան հողերականութիւնը ոչինչ չէր խնայում որ ապացուցանէ թէ ինքը հարուստ զրպանների ստրուկ է: Այսպէս, Սուքիաս ալքեպիսկոպոս Պարզեանը գնաց Կաղզուան, որպէս թէ գործը չընենլու համար, բայց Ջաքար աղա Ջանիփոլաղեանի կողմնակիցը դարձաւ և սկսեց հաւատացնել ժողովրդին, թէ անոն 26 հազար ռուբլի է ծախսել եկեղեցու շինութեան վրայ, ուրեմն եթէ ժողովուրդը կամենում է շարունակել շինութիւնը իր հաշուով, պիտի վերադարձնէ այդ գումարը աղային: Հաշիւ ու համար մէջ տեղ չը կար: Ժողովուրդը, այնուամենայնիւ, չը սարսափեց այդ գումարից և չը փախաւ ասպարէզից: Ի՞նչ պիտի լինէր այդ պայ-

քարի վերջը—յայտնի չէ: Վեհափառ կաթողիկոսը անձամբ միջամտեց այդ գործին և իր բազմաթիւ ճանապարհորդութիւններէց մէկն էլ գէպի Կաղզուան ուղղելով, անձամբ յորդորեց այնտեղ որ ժողովուրդը հաշտուի Զանփուլադեանի հետ: Ժողովուրդը կատարեց ամենայն հայոց ծերունի կաթողիկոսի այդ առաջարկութիւնը և չէր էլ կարող չը կատարել, քանի որ ինքը կաթողիկոսը, ասաց թէ ինքը մի հասարակ եպիսկոպոս չէ, որ ձեռնուռնայն վերադառնայ Կաղզուանից:

Այսպէս ահա խլացաւ և վերջացաւ այն գործը, որից Կաղզուանի ամբողջ հասարակութիւնը յուզուում էր այնքան երկար ժամանակ: Սակայն չէ կարելի ասել թէ պ. Զանփուլադեանը լիովին բաւարարութիւն չը լինի ստացած: Նրա պատճառով էջմիածինը Կարսի յաջորդ եղիշէ վարդապետ Մուրադեանին ուղարկեց Ախալցխա:

*
* *

Մեր անցեալ տեսութեան մէջ, մի պատահական գէպի առիթով, մենք յիշեցինք թէ մեր գաւառներում ինտելիգենտ ոյժերի ինչ մեծ սով է տիրում: Մենք այդտեղ միայն փաստը արձանագրեցինք, երևոյթը, ի հարկէ, խոշոր է, ունի իր պատմութիւնը, իր պատճառները: Պատճառների մէջ, ինչ ասել կ'ուզի, մեծ նշանակութիւն ունի նիւթական ապահովութիւնը: Բայց որ նիւթական ապահովութիւնը չէ սպառում ամբողջ հարցը, որ գաւառը անհրապոյր է ինտելիգենցիայի համար ոչ միայն այն պատճառով, որ լաւ վարձատրել չէ կարող,—դրա ապացոյց թող լինի այս անգամ գաւառական մի այնպիսի քաղաք, որպիսին է Շուշին: Երկու-երեք ամիս է, ինչ այնտեղ չեն կարողանում մի յարմար մարդ գտնել՝ քաղաքագլուխ ընտրելու համար: Մինչև այժմ այնտեղ եղել են երկու քաղաքագլուխ, երկուսն էլ հին զինուորական ծառայողներ: Բանը եթէ այդպիսի մարդկանց փոքր, մինչև այժմ Շուշին, ի հարկէ, քաղաքագլուխ ընտրած վերջացրած կը լինէր, քանի որ այնտեղ չքանչաններով զարդարուած պաշտօնաթող աստիճանաւորների մեծ առատութիւն կայ: Բայց ցաւն էլ հէնց այն է, որ Շուշին էլ ուզում է մի այնպիսի քաղաքագլուխ ունենալ, որ ուրիշ առաքինութիւնների հետ ունենար և բարձր ուսում, ուրիշ խօսքով—լինէր ինտելիգենտ մարդ: Ահա այդպիսի մի ընտրելի Շուշում Դիոգենեսեան լապտերով էլ չէ կարելի գտնել: Մի հատ յարմար թեկնածու են գտել, նա էլ հաստատ խօսք չէ տալիս և քաղաքի հայերը ստիպուած են յետաձգել ընտրութիւնը, որպէս զի կա-

րողանան պատրաստել իրանց թեկնածուին, այսինքն խնդրել, համոզել, հրապուրել...

Ահա իրողութիւնը: Եւ սակայն Շուշու քաղաքագլխի պաշտօնը այնքան էլ կորած ու անպէտք բան չէ, որ չը կարողանայ պատրաստուած, ինտելիգենտ թեկնածուներ գրաւել: Նա ապահովուած է տեղական պայմանների տեսակէտից բաւարար ռոճիկով, կարեւոր նշանակութիւն ունի գաւառական այդ խուլ անկիւնի համար, գործելու լայն ասպարէզ է բաց անում: Այդքան հրապույրներ, բայց ինչո՞ւ չը կան այնքան ցանկացողներ, որ շուշեցին կարող լինէր նոյն իսկ համեմատել թեկնածուների առակութիւնները, ընտրութիւն անել նրանց մէջ: Ո՛չ. նիւթական ապահովութիւնը դեռ միակ պատճառը չէ: «Ինտելիգենցիան կորցրել է գաւառները տանող ճանապարհները» — այս էինք ասում անցեալ անգամ և դա, զժբախտաբար, իրողութիւն է մնում նոյն իսկ այն դէպքերում, երբ նիւթական ապահովութեան հարց չը կայ: Կեանքի սահրապույր կողմեր, զժուարութիւններ գաւառում, այո՛, շատ կան: Բայց ո՞ր դիւթական ոյժը միանգամից պիտի վերացնէ այդ զժուարութիւններն ու արգելքները, որպէս զի մեծ քաղաքներում սպասող մեր ինտելիգենցիան վստահ քայլերով գաւառ դնայ: Եւրոպական գաղթականութիւնները, որոնք անցեալ դարերում տեղափոխուած էին Ամերիկա, պիտի միշտ նստէին ծովեզրին, եթէ սպասէին թէ երբ վայրենի երկիրը ինքն ու ինքը յարմարութիւններ կը պատրաստէ ու այդպիսով թոյլ կը տայ, որ գաղթականները անցնեն երկրի խորքը, մշակեն և ծաղկեցնեն նրան: Բայց նրանք այդպէս չարին: Հատ-հատ կամ փոքրիկ խմբերով նրանք առաջ դնացին, յամառ աշխատութիւն գործ դրին, արիւն-քրտինք թափեցին իրանց ոսկորները սիրեցին կուսական անտառներում և դաշտերում, մինչև որ կարողացան հաստատուել երկրում, մշակել նրան, դարձնել մարդկային աշխատանքով ստեղծուած մի գրախտ: Մարդկային առաջադիմութեան պատմութիւնն էլ նոյն այս պատկերն է ներկայացնում. ամբոխը, ժողովրդի մասսան միշտ այդպիսի պիօնէրների է սպասում. նա ինքը, իր սեփական միջոցներով չէ կարող խորդ ու փոսեր հարթել. ամեն մի չնչին քայլ, որ պէտք է անել առաջադիմութեան ճանապարհի վրայ, պէտք է ունենայ առաջնորդներ, ղեկավարներ: Եւ պատրաստուած մարդկանցից միշտ զոհաբերութիւն է պահանջուել: Առանց զոհի, առանց զրկանքների գաղափարական գործիչներ չեն եղել: Ընդգծենք այս խօսքը — գաղափարական, այս ընդգծումը մեղ կ'օգնէ հասկանալու թէ

ինչո՞ւ Շուշին չէ կարողանում իր համար քաղաքագլխացու գտնել:

*
* *

Թող այդպէս լինի: Բայց մեծ է և գաւառների Աստուածը: Ահա եկաւ հասաւ «Պէպօի» երեսնամեակը և մեր գաւառները նոյն իսկ Թիֆլիսից առաջ սկսեցին տօնել այդ գրական յօբելանսը: Աստրախանը, Նոր-Նախիջևանը, Սդնախը, Ալէքսանդրօպօլը ներկայացումներ սարքեցին, ուրախացան որ «Պէպօն» և՛ բեսուն տարի չարունակ բեմից արտասանում է «Գնա, Պէպօ» մօնօլօզը. շատ տեղերում դեռ պատրաստում են տօնելու, շատ տեղեր էլ այնքան անօգնական են և խեղճ, որ պիտի միայն նախանձեն տօնողներին: Մեր գաւառական տարեգրութեան մէջ սա թէ և շատ հազուադէպ, բայց լուսաւոր և յուսատու երևոյթներից մէկն է:

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դիպլոմատիան իբրև եւրոպական կեանքի բացասական կողմերի արտայայտութիւն. — Եւրոպական ազգերի ներքին կեանքը բնորոշող հոսանքը. — Արտաքին հանգամանքների մոցրած խանգարումը անգլիական ներքին կեանքի մէջ. — Հիկս-Բիչի և Բրոդրիկի ծրագրների ընդունելութիւնը համայնքների ժողովում. — Ազատական կուսակցութեան ճնշումը զրութիւնը. — Աւստրալիական պարլամենտի ծնունդը. — Արտաքին հանգամանքների ճնշումից ազատ անգլոսակոնական գաղութներ:

Եթէ եւրոպական ազգերի կեանքի վրայ նայելու լինենք միմիայն քաղաքական կամ դիպլոմատիական խաղերի տեսակէտից, պէտք է այն ժամանակ համաձայնուենք յոռետեսների կարծիքների հետ, որոնք տեսնում են մարդկային կեանքի միայն բացասական կողմերը, որովհետև դիպլոմատիան կուպիտոյժի, ճարպիկ խաբեբայութիւնների ու նենգութեան վրայ է հիմնուած: Այլ սլատկեր է ներկայանում դիտողին, երբ նա հետաքրքրուում է եւրոպական ազգերի ներքին կեանքով. այդտեղ ակներև է զառնում մարդկային յեղի անընդհատ և աստիճանական առաջադիմութիւնը թէ բնական միջավայրի ուսումնասիրութեան մէջ և թէ հասարակական միջավայրը բարեփոխելու հարցում:

Եթէ հաշուի չառնենք Թիւրքիան, որ մի սարսափելի կոշմար է կուլտուրական բոլոր ազգերի համար, ամենայնաւաճառ եւրոպական ազգերի ներքին կեանքում անգամ ակնյայտնի է ղեմօկրատիական հոսանքների օրէցօր ուժեղանալը: Մարդ չէ կարող չը տեսնել, որ առաջադիմական հոսանքը զիտակցական որոշ ծրագրով քայլ առ քայլ վերանորոգում է հասարակական կարգերը, աւելի և աւելի մօտեցնելով նրանց հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան իդէալներին: Այդ անընդհատ աշխատանքը երբեմն կանգ է առնում, ինչպէս կանգ է առնում հիւանդացած մարմնի աճումը: Հիւանդութեան բացասական չեքը այդ դէպքերում կատարում են այն արտաքին աննպատ հանգամանքները, որոնք կուտակւում են ազգերի զլխին, նրանց վարիչների անհեռատեսութեան և վատ հակումների շնորհիւ:

Այդպիսի անբարեյաջող արտաքին հանգամանքներ ստեղծեցին անգլիական ազգի համար նրա վարիչները—Չեմբերլէն և ընկերութիւնը։ Այդ պարոնների չնորհիւ այժմ անգլիական ազգի ներքին կեանքը խոշոր հարուածներ է կրում, ներքին կեանքի շատ կարևոր վերանորոգութիւններ յետաձգւում են մինչև որ չանցնի ազգի հիւանդոտ դրութիւնը։

Ահա տարի ու կէս է տնում հարաւ-աֆրիկական պատերազմը, որ աւերեց ոչ միայն երկու փոքրիկ հերոսական հանրապետութիւններ, այլ և ահագին վնաս պատճառեց և կապի անգլիական զաղութի տնտեսական առաջադիմութեան։ Այդ դժբախտ պատերազմը խլեց անգլիական ազգից հազարաւոր կենսաթրթիւ ոյժեր, խլեց 11/2 միլիարդ ռուբլի, աւելացրեց նրա ազգային պարտքի քանակութիւնը և դեռ շատ զոհաբերութիւններ է պահանջելու նրանից։ Սովորական ծախքը 94 միլ. ֆ. ստերլինգից հիմա հասաւ 184 միլիոնի և տարին վերջացաւ ահագին պակասով, այն է՝ 53 միլ. ֆ. ստերլինգ զեֆիցիտով։ Այդ պակասը լրացնելու համար ֆինանսների մինիստր Հիկս-Բիչը ստիպուած էր այնպիսի ֆինանսական միջոցների դիմել, որոնք հակառակ են մինչև այժմ անգլիացիների ընդունած սկզբունքներին. հարկերը պէտք է աւելացնուեն, ներմուծուող չաքարի, ինչպէս և արտահանուող քարածուխի վրայ մաքս է դնւում, և որովհետև չը նայած այդ արտակարգ յաւելումներին, այնու ամենայնիւ զեֆիցիտի մեծ մասը մնում է բաց՝ Անգլիան ստիպուած է փոխառութեան էլ դիմել։

Նոյն հարաւ-աֆրիկական պատերազմը ստիպեց Անգլիային իր մի այլ սկզբունքը ևս զոհել, իր շլիքի վրայ վերցնելով միլիտարիզմի լուծը. զինուորական մինիստր Բրօդրիկը առաջարկեց աւելացնել զօրքի թիւը 126 հազարով և հիմնական վերակազմութեամբ աւելի ուժեղացնել Անգլիայի ցամաքային ոյժը։ Եւ նշանաւորը այն է, որ բրիտանական ներկայ վարիչների անհեռատեսութեան չնորհիւ պետութիւնը այնպիսի փափուկ հանգամանքների մէջ է ընկել, որ ազատական կուսակցութիւնը հարկադրուած է պարլամենտում շատ չափաւոր դիրք բռնել, որ Չեմբերլէնը իր ընկերների հետ ստիպուած չը լինեն հրաժարուել և պատերազմի բոլոր հետևանքները փաթաթել իրանց հակառակորդների վզին։ Այդ է պատճառը, որ թէ ֆինանսների մինիստրի ելևմտական ծրագիրը և թէ զինուորական մինիստրի զօրքի վերակազմութեան նախագիծը անցան համայնքների ժողովում ահագին մեծամասնութեամբ։

Այդ պայմաններում դժուար է սպասել, որ համայնքների ժողովը ներքին օրէնսդրական մեծ հարցերով զբաղուի։ Այդպէս

ահա անաջողութիւնները կանգնեցնում են ազգերի արտաքին ազատ զարգացումը: Այլ կերպ չէ կարելի բացատրել, թէ ինչպէս ազատ խօսքի հայրենիք Անգլիան թոյլ տուեց բանտարկել Կապեան գաղութում անգլիական թերթի մի խմբագրին միայն այն պատճառով, որ նա համարձակուել է արհայտել իր թերթում Լոնդոնի Times-ից մի նամակ, որի մէջ ասուած է, թէ Կիտչենէրը հրամայել էր գերի չը վերցնել, եթէ Դէվլետը անձնատուր լինի:

Իսկ այնտեղ, ուր չը կան դիպլոմատների ստեղծած այդ արտաքին աննպաստ հանդամանքները, անգլո-սակսոնական տարրը շարունակում է հասարակական կեանքի մէջ մտցնել ամենաազատամիտ սկզբունքներ: Այժմ հեռաւոր Աւստրալիայում, ուր անգլիական գահաժառանգը նորերս բացեց Աւստրալիական դաշնակցութեան առաջին պարլամենտը, այնպիսի հասարակական թարմ հոսանքներ են թագաւորում և կեանքի մէջ այնպիսի հասարակական ծրագիրներ են իրականանում, որոնք հին Եւրոպայի կեանքում միմիայն ամենակատաղի մաքառումից յետոյ են ընդունւում...

Այսպիսով Աւստրալիան և Նոր-Զելանդիան կամայ-կամայ դառնում են այն երկիրները, որոնց մէջ փորձեր են անւում խաղաղ ճանապարհով մտցնել տնտեսադէտ ուտօպիստների երազածները և միտիթարական այն է, որ այդ փորձերը իրանց աջողութեամբ աւելի ևս հաւատ են ներշնչում եւրոպական նրմանօրինակ շարժումների ղեկավարներին...

Լ. Ս.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմավեպ, մայիս: «Մեր Կեանքը» խմբագրականի մէջ շօշափուած են մի քանի փաստեր մեր աղգային և գրական կեանքից: Դրանք թռուցիկ տեսութիւններ են, թռուցիկ լուսարանութեամբ: Յանկալի էր որ ամառգրի խմբագրականները աւելի որոշ և յայտնի նիւթեր տային. շատ անգամ դրանց մէջ լոկ անհասկանալի ակնարկներ ենք տեսնում: Հրապարակախօսութիւնը ազդու և զօրաւոր է, երբնա վերցնում է փաստերը իրանց իսկական անուններով, երբ ընթերցողը դիտէ թէ ինչի մասին է խօսքը: Հրապարակախօսական տարբը նոր է մտցրած «Բազմավեպի» մէջ և հաշոց այս ամենից շատ հասակաւոր ամառգիրը դեռ նորիւրով պատանհի է հրապարակախօսութեան մէջ: Յանկալով որ այդ տարբը որքան կարելի է շուտ և լաւ զարգանայ, մենք չենք կարող խորհուրդ չը տալ Միթթարեան հայրերին, որ երբ նրանք գրում են օրուայ անցքերի և դէպքերի մասին, չը բաականանան ընդհանուր դատողութիւններով, այլ, որքան կարելի է, պարզ և խօսեն, անուններ տալով: Այսպէս ներկայ յօդուածի մի մասը խօսում է մեր ժամանակակից լրագրութեան մասին: Այդտեղ մենք տեսնում ենք այսպիսի կտորներ. «Յաղթանակը զօրաւորինն է. ազատ գաղափարի տէր, ընկճեալին և սովեալին ձեռնառու, ոչ մոլեռանդ, համալսարանական աշխատակիցներով կազմուած կուսակցութիւնը՝

կ'աշխատի բոլորովին նուաճելու և ընկճելու լրագրական ողորմելի և վատահամբաւ գործիչները: Գրական ասպարէզը մի տեղ միայն ազատամիտ և ուղղամիտ տիրապետութեան ենթարկուեցաւ: Այս յաղթանակը ուրախութեամբ պիտի ողջունէր, եթէ այդ գործիչներու (չենք ուզեր վերաւորել բացառութիւն կազմողներն) մէջ անձնական եսը՝ խռպուտ ու գոռոզ խըշըտոց մը և վըլտոց մը չի շէր. բայց զարմանք չէ. վասն զի մեր մէջ գիտութիւնը համեստութեան հետ շատ քիչ անգամ կը զուգընթանայ: Տեսութիւնը, գոռոզութիւնը՝ ներքին երկպառակութեամբ վերջերս փշրեց ու տապալեց լրագրական կուսակցութիւն մը, որուն ամենէն լուրջ անդամներն միայն դեռ կը տոկան ու կապրեն գրական ասպարիզի վրայ, այն կուսակցութիւնը ծնեւ էր դատարակի մը քսանըհինգամեայ կրթական և գրական գործունէութիւնը կործանելու նպատակաւ. բայց ներկայիս ազգը նոյն լեզուագէտ դատարակին չորեքեանը հանդիսապէս տօնելու պատրաստութիւնը կը տեսնէ. և մի և նոյն ատեն հակառակորդ կուսակցութիւնը գիրար խարաղանելու, անուանարկելու և շանթահարելու կը պարապի: Եւ այսպէս շարունակ. չը կայ ոչ տեղի անուն, ոչ լրագրի, ոչ կուսակցութեան, ոչ յօդուածի տօնող դատարակի անուններ. և անկարելի է համեմատել թէ, ո՛ր ի՛նչ է կատարուում: Առանց որոշ, անուա-

նական ցուցմունքների ոչինչ տպատրուծին չեն թողնի այդպիսի դատողութիւնները, թէ և նրանք կարող են միանգամայն ճիշտ և արդարացի լինել:—Իբրև հակապատկեր՝ վերցնենք մի այլ կտոր նոյն լուրացմանը. «Թրքահայ լրագիրները տարածելով տեղւոյն ս. Փրկիչ որբանոցի մէջ որբերու թոքախտի բժշկ., որբասիրաց սիրտը լուրացելով բարակեց: Թոքախտը որբանոցի՝ մէջ. խեղճ որբեր, նոյն խել հոգաբարձուներու խնամքի տակ, ողբալի ճակատագրէն կարող չեն պրծիլ. բայց կըսուի թէ այդ ահաբեկիչ ղէպքը անհոգութենէ ծագած է, և ծանր պատասխանատուութիւնը կը ճնշէ ու կը ճզմէ երեք կրեսոսներ՝ որոնց յանձնուած էր որբերու նիւթականին խնամակալութիւնը: Այս տեսակ ղէպքեր ճիշտ է որ կը պատահին նոյնիսկ պալատական ընտանեաց մէջ. բայց այս պարագայիս այդ ղէպքը բնաւ չարդարանար, քանի որ ժամանակին որբերու վերատեսուչը, ուր որ պէտք էր, յայտնած էր որբանոցի վտանգատուր վիճակը. բայց անոր ձայնը չէր լսուած: Եւ այս ղէպքը կը պատահի Կ. Պօլսոյ որբախնամ յանձնաժողովին բիբերուն անմիջապէս մօտ: Եսկ հեռաւոր, խոր զաւառներու մէջ ինչեօր արդեօք... Ահա այս կտորը մենք հասկանում ենք: Եւ հասկանալով ասում ենք. ամօ՛թ Կ. Պօլսի յանձնաժողովներին, ափսոս միայն որ չարագործ երեք կրեսոսների անուններն էլ չեն յայտնուած: Այդպիսի անունները պիտի դատապարտուեն հրապարակի մէջ, որովհետեւ ուրիշ տեսակ վարմունքի արժանի չեն նրանք իբրև յանցաւորներ...»

Հանդէս Ամսօրեայ, մարտապրիլ: Այս միացած համարների մէջ ուշադրութեան արժանի է դժուոր Վահրամ Թորգոմեանի մի կենսագրական ուսումնասիրութիւնը բը-

ժիշկ Բէստէնի մասին: Մեղանում շատ յայտնի է Բէստէնի «բժշկականը», բաղկացած երկու հատորից, որ տպագրուած է Վենետիկում 1822 թուին: Բայց ո՞վ էր ինքը, Բէստէնը: Շատերը կարծում էին թէ դա մի օտար հեղինակի անուն է, թէ և գրքի վրայ յիշուած է որ այդ Բէստէնը կոչուած է և Տէր-Պետրոսեան: Դժուար. Թորգոմեանի մանրամասն կենսագրութիւնից, որ դեռ պիտի շարունակուի, մենք իմանում ենք այդ նշանաւոր հայ բժշկի գործունէութիւնը: Բէստէնը Պատկանեանների տոհմից էր, կրթութիւն էր ստացել Մխիթարեանների մօտ. Եւրոպայում բժշկութիւն սովորած առաջին հայերից մէկն էր դա. նշանաւոր է նրանով, որ իր սովորած գիտութիւնը հայերին մատչելի դարձնելու համար գրեց այդ երկու հատորը: Շատ հետաքրքրական հանգամանքներ կան այդ կենսագրութեան մէջ. յայտնի է թէ հայ բժիշկների դասակարգը ինչքան շատ բաներ է արել իր մայրենի գրականութեան համար: Բժիշկ Բէստէն, իբրև այդ հայ բժիշկների մէջ առաջիններից մէկը, անշուշտ արժանի է մեր ուշադրութեան և երախտագիտութեան: — Բանասէրների համար ուշադրութեան արժանի է և Եզնիկի Կողբացու. «Եզնիկի Կողբացու գրքի գերմաներէն թարգմանութեան կցած ճերմածութիւնը: Եզնիկի նշանաւոր գիրքը նորերս լոյս տեսաւ գերմաներէն լեզուով: Թարգմանել է կանոնիկոս Շմիդ, որ և առաջարան է գրել. այդ առաջարանի թարգմանութիւնն է այժմ տալիս «Հանդէսը»:—Իբրև զուարճալիք (լուրջ կերպով նայել չէ կարելի) յիշենք այն, որ Վիեննայի Մխիթարեան հայրերը այս համարում կամեցել են գրչի մի հարուածով և մի քանի տողերով ոչնչացնել աշխարհահռչակ Դարվիկի հեղինակութիւնը: Շատ խղճալի տպատրուծին է

թողնում այն քափնու փրփուրը, որով հայ վանականները կամենում են տապալել XIX դարի վիթխարի խելքը, որ չեղտփոխութիւն մտցրեց գիտութեան մէջ: Իսկ և իսկ դաճածների կռիւ մի հսկայի դէմ: Ահա ինչ շանթեր են արձակում հայ վարդապետները հռչակաւոր անգլիացու դէմ. «Նշապի առաջապեղական բաղրաջմանց վրայ բարձրացած շաղկապիւն հաստատութեան մը հիմնաքարը կացուցանող վարդապետութիւն՝ ինչպէս վերը տեսանք, «գոյութեան կռիւ» ըստած մտացածին թատրը, որուն մէջ զերը խաղաղողներն են՝ երազատես ու ցնորական մտաց հնարել կրցած միլիոնատր ու միլիարդատր եղջերուաքաղներ, որոնք բանդադուշողին խելապատակին մէջ միայն իրանց զոյւթեան աստղը կը ճառագայթեցնեն: Նշուհետե կրնանք մեր սիրտը հանդարտեցնել որ, աշխարհի զարեւելի վեր տեղի ունեցած «գոյութեան կռուով» աշխարհային աստիճանի բարդաւածած ու կատարելագործուած է որ, այլ ևս այնպիսի աշխարհաւեր պատերազմաց մարտամարտի օրերը տեսնելու երջանկութիւնն ըսեմ թէ—դժբախտութիւնը պիտի չունենանք... Ո՛րպիսի բարկութիւն, բայց և ո՛րպիսի չքնաղ ոճ, ո՛րքան հրաշալի աշխարհաբար լեզու Նրկնում ենք, աշխարհի կտորները կարելի է բերել իբրեւ զուարճալիք, որ ամենաշատը կարող է պատկերացնել կղերական մտքի ամբողջ սարսափը Դարվինի հանճարեղ գիտելի առաջւ ճշմարտացիութիւնը: Եւ շատ սրտառուչ է այդ կղերական մորմոքը, որ ասում է. «Ճառալի է տեսնել որ աշխարհի նորահնար ու մտացածին ենթադրութիւն մը գիտութեան զբօղին տակ հայ հասարակութեան ևս կը ներկայացուի: Ամենեկին մի՛ ցաւէք, վերապատուելի հայեր, Դուք մնացէք ձեր աւանդական Մայիս, 1901.

«ասաց և եղև»-ի հետ, իսկ հայ ժողովուրդը, ինչպէս և ամեն մի ժողովուրդ աշխարհի վրայ, կը կարգացն ու կը հասկանայ Դարվինին: Փառք Աստուծու, հիմա հայ ժողովուրդը այլ ևս ձեր գրական խնամակալութեան կարօտ չէ. նա առանց ձեզ էլ կարող է թարգմանել և կարգալ այն ամենը, ինչ գիտութեան պարծանքն է կազմում, բայց ինչի հետ չէ հաշտում և չէ կարող հաշտուել վանական պահպանողականութիւնը...

—
„Вѣстникъ Европы“, ապրիլի Ա. կաղերիկ Նիւքսէյ Վեսեյովսկի ղեկավարել է մի յօդուած „Բայցօնը Վենետիկում“ վերնագրով: Ինչպէս չափանի է, անգլիական հռչակաւոր բանաստեղծը Վենետիկում բարեկամութիւն հաստատեց և մեր Միթթարեանների հետ, և պ. Վեսեյովսկին էլ իր յօդուածի մի երկու երեսը նուիրում է այդ բարեկամութեան: Ահա ինչպէս է ռուս գիտնականը նկարագրում ս. Վազարի կղզին. „Հետու դէպի առաջ է անցել, դէպի ծովը, san Lazzaro փոքրիկ կղզեակը, կարծես Վենետիկի պահականոցը լինի. հորիզոնի ծայրին ափտակին է տալիս նրա շինութիւնների խումբը ծառերի մէջ, որոնց վրայ բարձրացած է զանգակատան սուր ծայրը,—XVIII դարի սկզբից դա հայ Միթթարեան վանական միաբանութիւնն է, վանականների մի գաղթականութիւն և մի և նոյն ժամանակ կուտուրացի օջախ. մի հանդարտ ապաստանարան, ուր չեն հասնում Վենետիկի ոչ ազմուկը, ոչ գալթակղութիւնները. մի ճղնատրական ննջարան չէ դա, այլ կրթական և ազգային—քաղաքական (?) պրօպագանդայի կենտրոն, ուր ամբողջ եղբայրութիւնը մինչև համեստ փոքրատրը կամ սեմինարիատ աշակերտը, երկու զար շարունակ աշխատում է Թիւրքիայում

ապրող իր հեռաւոր ցեղակիցների լուսաւորութեան համար, գրում է, սպում է, պատրաստում է ուսուցչութեան և քարոզչութեան: Քէ երկար, ծածկուած միջանցքի կամարների տակ, ուր տիրող զաւութիւնը գրաւում է մարդուն զէպի իրան, թէ հակաջ, հինաւորաց մագնօլիայով պսակուած վանական արփու ստուերում, թէ ծովափի ծալքին, ալիքների մօտ, ձիթենիների տակ, որտեղից բացում է լազունայի, կղզիների և Վենետիկի տեսարանը,— մարդու վրայ ալստեղ իջնում են խաղաղութիւն և հանդարտութիւն, մտքեր և խոհեր: Նրա մօտ, առանց աղմուկի, անլուռ աշխատանքն է գործում գրադարանի մէջ, խուցերում կամ գրաշարանոցում, բայց այդ աշխատանքն էլ ոչ չունի խանդարելու լուրջ չուզմունքների և անհանգստութիւնների երջանիկ հանդարտացումը և հոգեկան հաւասար հանգստութիւնը: 1816 թուի զեկտեմբերին Բայրօնը տեսաւ այդ տեղը և այնքան գրաւուեց որ մնաց կղզում ամբողջ օրը: Միթիարեանները հրաւիրեցին նրան էլի գնալ իրանց մօտ և Բայրօնը ոչ թէ մի անգամ գնաց, այլ ամբողջ ձմեռուայ ընթացքում համարեա կանոնաւոր կերպով անց էր կացնում կղզու վրայ կէս օր: Նա դուրս էր գալիս վաղ առաւօտեան տանից, որ գնալ հայկական կղզին, զրոյց անէ գիտնական և հիւրասէր վարդապետների հետ և սովորէ նրանց ամենազովոյս լեզուն: Շուտով նա գերեց ամբողջ միաբանութիւնը իր քաղցր, բարեկամական վարմունքներով: Նոթանաւանական թուականների սկզբին մի անգլիացի հետազօտող, որ հաւաքում էր նիւթեր բանաստեղծի կենսագրութեան այն մասի համար, որ հայերի հետ ունեցած յարաբերութիւններին էր վերաբերում, գտաւ (Վենետիկի վանքում) այն ժամանակներից կեն-

դանի մնացած մի վարդապետ, որ կուրացել էր ծերութիւնից: Հէնց որ հարցրին՝ չէ՞ լիշում նա արդեօք Բայրօնին, ծերունին փայլեց. «Bironi»—բացականչեց նա—«՛, խոսեցէք ինձ հետ Bironi-ի մասին»: Երբ հարցրին՝ գեղեցիկ էր նա, վարդապետը ողևորուած պատասխանեց. «Նա անսովոր գեղեցիկ էր, ինչպէս սուրբ, բայց զէմքով գեղին էր, սարսափելի գեղին»: Սպաւ նա տուեց այցելուին իր պահած պահպանած զանակը, որով Բայրօնը ինձոր էր կոտորում և մի անգամ, որպէս թէ, ասաց. «Ահա՛ այժմ ես ինձոր եմ կոտորում, բայց այսպէս կը կամենայի ես կարել և թիւրքերի գլուխները»: Բայրօնը մանաւանդ շատ մօտիկ քարեկամացաւ հ. Ալեքեւեանի հետ: Միջ մօտիկ ծանօթութեան նպաստեց մանաւանդ այն, որ զրանից առաջ Ալեքեւեանը երկու տարի ապրել էր Անգլիայում: Այս պատճառով էլ նրա համար հեշտ էր ծանօթացնել բոնաստեղծին Քիւրքիայի հայերի դրութեան, հայոց պատմութեան հետ և այն փորձերի հետ, որ անում էին հայոց գրականութիւնը վերականգնելու և լեզուն մշակելու համար: Այստեղից արգէն մի քայլ էր մնում, որ Բայրօնը առաջարկէ, որ իրան սովորեցնեն հայոց լեզուն: Սկսուեց գործը և Բայրօնը եռանդով կպաւիր դասերին, թէև յաճախ, սիրահարուելով մի օր և է «գատարկ կնոջ վրայ», ընդհատում էր իր պարապմունքները, չը նայած, որ Հ. Ալեքեւեանը հաւատարմութեամբ էր նրան թէ գրախորդ պէտք է որոնել չալատանում: Ճիշդ էս որոնում էր զրախորդ Աստուած գիտէ թէ ուր,— նկատում է Բայրօնը—Գոռայ արդեօք նրան: Մի մի գտնում էի, մի ակնթարթով, երկու բուպէով: Բայց և այդպէս Բայրօնը այնքան սովորեց հայերէն, որ թարգմանութիւն-

ներ էր անում: Նա Ազերեանին ստիպեց կազմել անգլիական քերականութիւն հայերի և հայերէն քերականութիւն անգլիացիներին համար, եռանդով օգնում էր նրան, զտաւ առաջինի համար հրատարակիչ, իսկ երկրորդի հրատարակութեան համար 1000 ֆրանկ ծախսեց: Բայրօնը գրեց և առաջարան, որ, սակայն, լոյս չը տեսաւ և միայն չհտոյ զտնուեց նրա թղթերի մէջ: Ճշգր առաջարանի մէջ նա համակրանքով և շնորհակալութեամբ էր չիշում, թէ ինչ էր նրա համար դժուար լուսններին այդ հանդարտ մենաստանը, որ ընդունակ է նախապաշարուած աշխարհակալին գործով ցոյց տալ թէ կայ ճիւղ որիչ լաւ բան նոյն իսկ աշխարհային կեանքի մէջ: Իր բարեկամ վարդապետներին նա անուանեց «ալիւ և ստրկացրած ժողովրդի քահանայութիւն», բարձր գնահատեց Հայաստանի հին պատմութիւնը և մի քանի տեղամ խիստ լիկուով խօսեց Պարսկաստանի և Թիւրքիայի հարստահարութիւնների մասին, որոնք հաւասարեցրել են հայերի վիճակը հրէաների և լուսնների վիճակին: Բողոքը այդ հարստահարութիւնների դէմ շփոթեցրեց Ազերեանին և միաբանութիւնը իր խստութեամբ, և նրանք դժուարացան տպագրել առաջարանը: Բայրօնը դժգոհ մնաց և, ասում են, բացականչեց. «Դուք վախենում էք ձեզ հարստահարողների մասին չալանած խիստ կարծիքից: 0, խորամանկ տորուկներ, դուք արժանի էք խստասիրտ տէրերի. դուք արժանի չէք այն մեծ ժողովրդին, որից գոյացել էք: Թալանի է, որ մեծ բանաստեղծը ճիշտ որ շատ աշխատեց թիւրքական լուծի տակ տառապող քրիստոնեաներին ազատելու համար. նա մեռաւ ծունստանում, ուր գնացել էր կոռուելու յունական ազա-

տութեան համար: Վենետիկում Բայրօնը երկար չը մնաց. համահարակ հիւանդութիւնը հարկադրեց նրան տեղափոխուել Հռոմ: Բայց Հ. Ազերեանը պատմում էր, թէ Ս. Ղաղարի կղզում է Բայրօնը իր «Մանֆրէդի» երրորդ գործողութիւնը նոր խմբագրել:

«Кавказский Вестник», մալիս Յայտնի է, որ Ներսէս հինգերորդը, կաթողիկոս ընտրուելուց չեւոյ, Քիշինեովից գնաց Պետերբուրգ՝ Նիկօլայ կայսրին ներկայանալու համար, լայց ալդտեղ 1843 թուին սաստիկ հիւանդացաւ և երկար ժամանակ ստիպում էր անկողնում մնալ: Սամազրի այս համարում տպուած են հետաքրքրական տեղեկութիւններ թէ այդ հիւանդութեան և թէ բժշկութեան մասին: Հիւանդութիւնը կաթուած էր. ակըրում հիւանդի զրութիւնը այնքան ծանր էր, որ լոյս չը կար թէ Ներսէսը կ'առողջանայ: Նրան խնամում էին Յովհաննէս և Խաչատուր Լազարեանները: Սրանց առաջարկութեամբ հիւանդին սկսեցին բժշկել մազնետիղմով: Վիսկովատովա անունով մի կին մազնետական քնի մէջ դուշակութիւններ էր անում, թէ ինչպէս պէտք է բժշկել ամենայն հալոց կաթողիկոսին: Գրի են տոնուած այդ դուշակ կնոջ բոլոր խօսքերը, որ նա արտասանում էր քնի մէջ: Ինչպէս էլ եղած լինի այդ բժշկութիւնը, հետաքրքրական է, որ բժշկ Պերսօն ամբողջ լոյսը դրած էր իւր դեղերի վրայ և երբ լսեց թէ ուղում են թողնել նրա գրած դեղերը ու դիմել մազնետիղմին, ասաց, որ կաթողիկոսը կը վախճանուի 24 ժամից չեւոյ: Բայց Ներսէսը զրանից չեւոյ ապրեց ամբողջ 14 տարի և, ինչպէս յայտնի է ամեն մէկին, ժիր ու եռանդոտ մարդ էր, չը նաչած նոյն իսկ իր մեծ հասակին: — Մատենախոսու-

թեան բաժնում տպուած է մի փոքրիկ քննութիւն բժ. Սիմէօն Շահ-նազարեանցի մի բւօշիւրի մասին, որի վերնագիրն է «Մարդասիրութեան և աշխատանքի ազնիւ զինուորը Իւրի Սլեքսեկվիչ Վեսելովսկի»։ Քննադատող գտնում է, որ այդ գիրքը, ուր նկարագրուած է երիտասարդ գրող Իւրի Վեսելովսկու կենսագրութիւնը և գրական գործունէութեան տասնամեակի տօնախմբութիւնը, վատ տպաւորութիւն է թողնում իւրի ներդրեան։ Բժիշկ Շահնազարեան այնպէս է նկարագրում այդ յօդուածը, որ կարծես մի համեստ գրողին չէին չարգում, այլ համաշխարհային հրեշտակ ունեցող մի հանճարի։ Պ. Վեսելովսկու համար այդ գեաղայական փառաբանութիւնները արջի ծառայութիւն են։ Բերում ենք ռուս ամսագրի այս վկայութիւնը հետեւեալ պատճառով. «Մուրճի» անցեալ համարներէն մէկում մենք խօսելով պ. Վեսելովսկու մի յօդուածի մասին, որ տպուած էր „Кавк. Вѣст.“ ամսագրում և որ վերաբերում էր Եղիշէի պատմագրութեան, ցոյց էինք տուել թէ ինչ պակասութիւններ ունի այդ աշխատութիւնը։ Նոյն բժիշկ Շահ-նազարեան, որ, ինչպէս երևում է, պ. Վեսելովսկու անկոչ փաստաբանի դերն է ուզում կատարել, մի յօդուած տպեց մեզ դէմ, ողորմելի դատողութիւնների մի ողորմելի հաւաքածու, որի մէջ ասում էր թէ մենք իրատունք չունէինք խօսել մի գրական յօդուածի պակասութիւնների մասին, որովհետեւ երբ պ. Վեսելովսկի բարեհաճում է խօսել հայերի մասին, բոլոր հայերը պարտաւոր են միայն գլուխ տալ նրան և փառաբանել։ Բժ. Շահ-նազարեանի մլթօնական ազգասիրութիւնը «Մուրճից» միշտ հեռու կը մնայ. մենք ազատ և համարձակ քննադատութիւնը ամենից բարձր

ենք դասում։ Քննադատութիւնը, այո՛, ազնիւ, վաստակաւ քննադատութիւնը, որ կարող է շատ խիստ լինել, բայց երբէք չը պիտի դուրս գայ գրական վայելչութեան սահմաններէն։ Բժ. Շահ-նազարեանի յօդուածը մենք ժամանակին անտես արինք, որովհետեւ ուրիշ կերպ չէր կարող վարուել մի գրական օրդան, որ ունի իր որոշ հասկացողութիւնները քննադատութեան մասին։ Այս ակամայ բացատրութիւնն էլ մենք գրում ենք այն պատճառով, որպէս զի միանգամից ընդ միշտ որոշենք մեր գիրքը մեզ դէմ գրող յօդուածների վերաբերմամբ։ Մենք ուշադրութիւն պիտի դարձնենք միայն այնպիսի յօդուածների վրայ, որոնք գրուած են լրջութեամբ, շօշափում են սկզբունքի հարցեր և որոնք հասարակական հետաքրքրութիւն են ներկայացնում։ Գրական ծածկածութիւնները մեղ չեն հետաքրքրում և երբէք չեն հետաքրքրի։

—

«Вѣстникъ Всѣмірной Исторіи», ապրիլի Տպուած է հանդուցեալ ակադեմիկ Միկէշինի թղթերի մէջ գտնուած մի գրութիւնը, որի մէջ նա պատմում է իր մի տեսակցութիւնը հանդուցեալ կոմս Լօռիս-Մէլիքովի հետ։ Ընչպէս չալտնի է, վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ Ռուսաստանում սկըսուեց քաղաքական շարժում, որի նպատակն էր փոփոխել գոյութիւն ունեցող պետական կարգերը։ Այդ շարժման արտայայտութիւններն էին այն մի շարք փորձերը, որ անում էին քաղտնի լեզալուխական կազմակերպութիւնները կայսր Ալեքսանդր II-ի կեանքի դէմ։ Տխուր ժամանակներ էին, հասարակութիւնը յուզուած էր։ Ալեքսանդր կայսրը առաջ քաշեց ռուս-թիւրքական պատերազմի հերոս Լօռիս-Մէլիքովին, որին շնորհել էր ի-

մատուցեալն տիրոջս նա կոմսին լանձնեց պատասխանատու, կարեւոր պաշտօններ, և Լօռիս-Մէլիքով իր խելացի կարգադրութիւններով, իր քաղաքական դասանանքներով, մանաւանդ իր մեղմ և սիրալիր բնավորութեամբ ժողովրդականութիւն վաստակեց: Խալկովի ընդհանուր նահանգապետի պաշտօնից Լօռիս-Մէլիքով կանչուեց ամելի մեծ պաշտօնի. նա զարձաւ «ծաշ-րադոյն կարգադրիչ կօմիտէտի նախագահ» և ստացաւ Ռուսաստանում դեռ չը տեսնուած լայն և մեծ լիազօրութիւններ: Գոմար այդ պաշտօնում աշխատում էր խելացի և ազատամիտ ընթրիքներով գրաւել հասարակութեան վստահութիւնը, ամրացնել պետութեան հեղինակութիւնը և առհասարակ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական առաջադիմութեան զարկ տալ ժամանակի պահանջների համաձայն: Նա նշանակուեց ներքին գործերի մինիստր: Ահա այս պաշտօնում էր նա, երբ չայտնի ռուս քանդակագործ ակադեմիկ Միկէլին ներկայացաւ. նրան 1880 թ. դեկտեմբերի 24-ին, երեկոյեան: Ընդունելութեան և խօսակցութեան տեսարանը, որ նկարագրում է Միկէլին, շատ զեղեցիկ տպատրութիւն է թողնում: Այդտեղ երևում է թէ որքան պարզ, մատչելի, ուշադիր մարդ էր հանդուցեալ կոմսը իր բարձր պաշտօնում, որքան շատ էր նա աշխատում, որքան քիչ հանգստութիւն ունէր: Եւ Միկէլին դնացել էր նրա մօտ ոչ թէ իր մասնագիտութեան վերաբերուած մի գործի համար, այլ տարեւ էր նրա մօտ իր մի ծրագիրը թէ ինչպէս պէտք է ռուս գիւղացիների տնտեսական դրութիւնը բարձրել և ինչ պէտք է անել, որ նրանք ազատուն պարկերաբար կրկնուող սովերից: Զը

նայած որ մինիստրը բոլորովին ժամանակ չունէր, չը նայած որ անդադար նրան թղթեր էին մատուցանում ստորագրելու համար, բերում էին հաստ ծրարներ, որոնց մէջ զանազան հարցերի մասին զեկուցումներ էին դրում, Լօռիս-Մէլիքով ուշադրութեամբ լսեց ալիքներ, նշանակած կէս ժամից անկ խօսեց նրա հետ, վիճում էր, ապացուցանում էր, համաձայնում էր: «Այդ անկեղծութիւնը և մարդկայնութիւնը ինձ հրճուանք էին պատճառում», ասում է Միկէլին: Եւ հետանալով մինիստրի ընդունարանից, նա թարմ տպատրութեան տակ, իսկույն և եթ գրում է, թէ ինքը իր կեանքում շատ է յարաբերութիւններ ունեցել մինիստրներին և ուրիշ բարձրաստիճան անձանց հետ, բայց այդ չարաբերութիւնները ոչ ոքի հետ «չը սկսուեցին այնքան պարզ և մարդավարի կերպով, ինչպէս հիացուցիչ Միխայիլ Տարիելովիչ Լօռիս-Մէլիքովի հետ: Նրա մէջ զգում ես կրակ, եռանդ... Նկատելի է, որ նրա ամպից հեշտ կարող են դուրս թռչել թէ՛ որոտներ, թէ՛ կայծակներ և թէ ճառագայթաւէտ արեգակ կարող է փայլել: Բոլորովին ոչ մի բան չեմ սպասում նրանից անձնապէս ինձ համար: Զը գիտեմ, գուցէ այն գործը, որ այժմ ինձ մօտեցրեց նրան, չի էլ արժանանալ նրա հովանաւորութեան, և սա ինձ համար դառն տպատրութիւն կը լինէր. բայց մի և նոյն է, զրանից իմ կարծիքը նրա մասին չի փոխուի, իսկ կարծիքս այն է, որ եթէ մեղ (Ռուսաստանին) պէտք է մէկից մի լաւ բան սպասել, դա միմիայն նա է... Ռուսաց գրականութեան մէջ շատ են ալսպիսի լաւ կարծիքներ Լօռիս-Մէլիքովի մասին. այսպէս են օրինակ, Բժիշկ Բելօգոլովի չիռողութիւնները:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

I

Թիֆլիս, 4 Մայիս.

Իմ «Պէպօ» կասկերգութեանս երեսնամեակի
սօնախմբութեան առթիւ՝ թէ՛ վրաց եւ թէ հայոց թա-
րոններում, եւ պատիւ ունեցայ ստանալու բազմաթիւ
ենօրհաւորութիւններ այլ եւ այլ անձերից, ընկերութիւն-
ներից ու հաստատութիւններից, թէ՛ Թիֆլիզի միջից եւ
թէ Ռուսիայի զանազան ծայրերից, մինչեւ անգամ ար-
սասահմանից:

Աւելասելով երկու հայրենակից, ինձ միապէս սիրե-
լի՝ վրացի եւ հայ բեմերի համար, պատկերացնելով ընդ-
հանուր մարդկային զգացմունքներ ու գաղափարներ,
եւ չափազանց զգացուած եմ ինձ ուղղուած խօսքերից
ու հառերից, ստացածս Ենօրհաւորական նամակներից,
հեռագիրներից եւ ուղերձներից:

Ո՛չ պակաս զգացուած եմ եւ այն անձանց աւ-
խասանքից ու հոգածութիւնից, որոնք կազմել էին եռ-
օրեայ սօնախմբագական հանդէսներ՝ ժողովրդական,
վրաց ազնուականաց եւ գեղարուեստական ընկերու-
թեան թատրոններում:

Թո՛ղ տուէք ինձ, «Մուրն» ամսագրի միջոցով յայ-
նելու իմ խորին Ենօրհակալութիւնս եւ անսահման ե-
րախտագիտութիւնս այն ամեն անձանց, որոնք այդպիսի
բարձր ուշադրութեան ինձ արժանացրին:

Ընդունեցէ՛ք, եւ այլն:

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

II

26 Ապր. 1901 թ., Բագու:

«Մուրն» ամսագրի № 4-ի մեջ «Գաւառական կեանքի» նկարագրողը յարձակում է բժիշկների վրայ, որ «ներանք չ'իսխչում են գիւղերից եւ բափում են Բագու ու Թիֆլիս եւ գործ ու աշխատանք են որոնում, մինչդեռ գիւղերում ամեն տեսակ հիւանդութիւններ եւ համանարակներ լին են եւ օգնութիւն հասցնող չը կայ»: Եւ զտնում է որ այդ տխուր երեւոյթի պատճառը այն է, որ գիւղը «ոչ չաղ ռոնիկ կարող է լայ, ոչ առաջ զնալու, հըռչակուելու ասպարեզ ունի, ոչ հարուստ հարսնացուներ»:

Այս առիթով խնդրում եմ քոյլ տալ ինձ մի քանի բացատրութիւնների մէջ մտնել *): Իսկապէս, ի՞նչպէս բացատրել որ Թիֆլիսում ապրող «օրուայ հացի կարօտ բժիշկները, ինչպէս յօդուածագիրն է ասում, չեն ուզում գաւառները զնալ»... Նախ եւ առաջ ինձ քնում է թէ հիմնովին սխալ է այն միտքը, որ բժիշկները չեն ուզում գաւառները զնալ... Գաւառներում չը նայելով ծառայութեան ծանր պայմաններին, ոչ մի բժեկական պատճօն չը կայ, որ բափուր մնար. ընդհակառակը, մի հաս պատճօնի համար միշտ մի քանի խնդրատուներ են լինում: Ինձ յայտնի են հայ բժիշկներ, որոնք չեն ուզում գաղափում մնալ եւ տարիներով սպասում են գիւղական բժեկի պատճօնի, որ ապրեն գիւղում, ժողովրդի մէջ, եւ չեն կարողանում հասնել իրանց նպատակին: Նրանք ստիպուած մնում են գաղափներում, ուր տարուհակում են գոյութեան կռիւր աննպաստ պայմանների մէջ: Գուցէ յօդուածագիրը կարծում է, թէ կարելի է ապրել գիւղերում առանց ռոնկի եւ պարապել ազատ պրակտիկայով: Նա չարաչար սխալում է: Կովկասում շատ քիչ կը գտնուեն այնպիսի հարուստ եւ մեծ գիւղեր, որտեղ բժիշկը կարողանար բնակուել առանց որ եւ է ռոնկի եւ ապրել բժեկական աշխատանքով: Այդպիսի գիւղերից ինձ միայն յայտնի է Վերին-Ագուլիսը, որտեղ 1886 բուականից սկսած միշտ

*) Յանկալի է լսել այս հարցի վերաբերմամբ և ուրիշ բժիշկների կարծիքները:

մի բժիշկ գտնուել է: Բացի Վ. Ազուլիսից ո՞ր գիւղն է որ ունի բժիշկ եւ չի գտել:

Ես այդպիսին չը գիտեմ:

Ինչ վերաբերում է նահանգական կամ գաւառական ֆաղաֆներին, այդ տեղերում, բացի գաւառական զինուորական եւ գիւղական բժիշկներից, երբ պահանջ է եղել եւ մասնաւոր բժիշկների, միշտ այդպիսիները գտնուել են: Վերցրե՛ք Դանձակ, Նրեւան, Գորի, Սղնախ, Ալեքսանդրապոլ, Ախալցխա եւ այլն, այդ տեղերում դուք կը գտնե՛ք մի կամ երկու մասնաւոր բժիշկներ: Ինձ պատմել է մի երեւանցի բժիշկ, որ իր հայրենիքում ապրել է մի ամբողջ տարի՝ մասնաւոր պրակտիկայով պարապելու դիտարութեամբ, եւ աշխատանքի բացակայութեան պատճառով ստիպուած է եղել հեռանալ այնտեղից:

Երբ այդպէս է Նրեւանը, ի՞նչ պէտք է տան բժշկին հասարակ, աղֆասիկ գիւղերը... Մեր գիւղերում մասնաւոր պրակտիկայի համար մշտական գործ չը կայ:

Ես մի տարուայ փորձառութեան հիման վրայ Վ. Ազուլիսում կարող եմ պնդել, որ գիւղերում երկարատեւ հիւանդութիւն ունեցողներ շատ սակաւ են, եղածներն էլ սկի փող էլ չեն ծախսի բժշկուելու համար: Գիւղերում հիւանդութիւններ լինում են համանաւականների ժամանակ, երբ տիֆ, կամ ֆուքս, կամ բզացաւ, կամ ծաղիկ եւ այլն միանգամից տարածուում են գիւղացիների մէջ: Ուրեմն բժիշկը ամիսներով ձեռքերը ծալած պիտի նստի եւ սպասի համանաւականների, երբ նրա բժշկական գիտութիւնը կարող է պէտք գալ ժողովրդին: Ապրել գիւղում այդպիսի հանգամանքներում կը լինէր ինքնագոհուիւն բժիշկի կողմից. ինքնագոհութիւն, որ, ուսանց կարծիքով, գուցէ եւ շատ զովելի լինի, բայց այնու ամենայնիւ դա իբրեւ ինքնագոհութիւն կը մնար անհասական ֆալ եւ հասարակական խնդիր դառնալ չէր կարող: Բժիշկը, իբրեւ բժիշկ, չէ կարող գիտական կամ բարոյական բաւականութիւն ստանալ այդպիսի երբեմնակի գործունեութեամբ: Իսկ ընդհանուր առողջապահական գործը ժողովրդի մէջ, որ աւելի նպատակայարմար է, նրա անհատական ոյժերից շատ վեր է: Նիւթականի կողմից, ինչ ասել կ'ուզի, որ մեր գիւղերը, նոյնիսկ գիւղաֆաղաֆները, մի քանի բացառութեամբ, ապահովել ազատ պրակտիկայով պարապող բժիշկներին չեն կարող: Երբ բժիշկը փորձի բնակուել մի որ եւ է գիւղում եւ պարապել պրակտիկայով, նրա դրութիւնը նոյնը կը լինի, ինչ որ մեր ֆահանգների դրութիւնը, որ անկասկած անօրմալ է... Ի՞նչպէս կարելի է ցանկալ որ համալսարանականը, հազար տեսակ զրկանքների ենթարկուելով գիւղում, ընկնի նոյն դրութեան մէջ, որ անյարմար

է համարում հազիւ ծխական ուսումնարանի կրթութիւն ստացած ֆահանայի համար: Եւ, վերջապէս, ի՞նչպէս բժիշկը պարապի բժշկութեամբ այնպիսի տեղեւում, ուր դեղատուներ անգամ չը կան...

Ես հաւատացած եմ, որ դէպի գիւղը գնալու հոսանք չի կարող տեղծուել արուեստական կերպով, փարոգներով, այլ առաջ կը գայ բնականաբար, տնտեսական պահանջների շնորհիւ, երբ ֆաղադներում այլեւս տեղ չի լինի բժիշկների համար, իսկ գաւառներում բժիշկների պահանջը կը սասկանայ եւ նրանց գործունեութիւնը նւթականապէս կը վարձատրուի: Դա ժամանակի հարց է: Եւ այդ ժամանակը կը գայ առանց մեզ հարցնելու եւ առանց մեր կոչումների: Այլ բան կը լինէր, եթէ մենք ունենայինք գեմսվոներ...

Թո՛ղ մտցնուին մեր երկրում գեմսվոյի նման հիմնարկութիւններ, քո՛ղ բացուեն գիւղական հիւանդանոցներ, քո՛ղ հիմնուեն բնկերութիւններ, որոնք մի որոշ ռոնկով բժիշկներ ուղարկէին գիւղերը, ինչպէս այդ Շվեյցարիայում է կատարւում, եւ դուք կը տեսնէք թէ ինչպէս մեր գաւառները կը լցուեն թէ՛ բժիշկներով եւ թէ ուրիշ ինքնաշնորհ ոյժերով:

Շատ ցաւալի է որ Թիֆլիսում ինչպէս եւ ուրիշ մեծ քաղաքներում «օրուայ հացի կարօտ բժիշկները չեն ուզում գնալ գաւառները»: Դրա պատճառները աւելի խոր են: Հենց իր՝ հասարակութեան տրոհութիւնն է դրա պատճառներից մէկը: Մեր ժողովուրդը հաւատ չէ բնծայում բժշկին իբրեւ գիտութեան ներկայացուցիչի. նա շատ ժամանակ իր կողքին ապրող բժիշկին քողմելով, ֆաղափի միւս ծայրից է բժիշկ հրաւիրում հիւանդի համար, որովհետեւ նա «հոչակուած է»: Նորէկ բժիշկը, եթէ բեկլամներից խուսափում է, տնայնաւոր է իր պրակտիկան զարգացնել աստիճանաբար, հետզհետէ միայն հասարակութեան հաւատը գրաւելով: Այդպէս չէ արտասահմանում. այնտեղ պրակտիկան կապուած չէ այնքան անունի հետ, որքան տեղի, քաղի հետ: Եւրոպացին չէ նայում թէ գիտութեան ներկայացուցիչը ո՞վ է—Մարկոսը թէ Կիրակոսը, նա դիմում է իր քաղում ապրող բժշկին:

Մեր մեծ քաղաքներում (Բագու, Թիֆլիս) էլ տեղացի բժիշկների համար բաւականին գործ կայ, միայն այդ տեղերում դրանք տնայնաւոր են բաժանել պրակտիկան հեռու տեղերից եկած գաւառական բախտախնդիրների հետ, որոնք չեն փաշտում ամօթալի բեկլամներից... (Տե՛ս «Կապիձ» առաջի երես):

ԲԺ. ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր խմբագրութեան հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ արդարեւ միանգամայն անտեղի են եղել «Մուրճի» այս տարուայ յունուարի համարում Պարսկաստանից տպուած մի նամակի այն խօսքերը, որոնք արդէն հիմնովին հերքուած են երկրորդ №-ում գետեզուած Խորէն վ. Տէր-Վարդանեանի նամակով: Խմբագրութիւնս շատ ցաւում է, որ աւանդայ այդ սխալմունքի մէջ է ընկել: Ինչպէս գիտուար չէ եղբակա-
ցնել «Մուրճում» լոյս տեսած յօդուածներից՝ մեր խմբա-
գրութիւնը Պարսկաստանի բարօրութեան և առաջադի-
մութեան նախանձախնդիր է և անկեղծ համակրանքով է վերաբերում այն բոլոր ձեռնարկութիւններին, որոնք ներկայումս սկսւում են Պարսկաստանում ազգաբնակչու-
թեան բարոյական և մտաւոր վերանորոգութեան համար:

Տպագրելով «Մուրճի» ներկայ համարում պ. Շիր-
վանդադէի պատմութեան, մենք այդ առիթով պարտք
ենք համարում յայտնել հետեւեալը. ի նկատի ունենա-
լով, որ մեր ինքնուրոյն գեղարուեստական գրականու-
թեան մէջ աշխատողների թիւը շատ չէ, «Մուրճը» մի-
միայն իր բեղբայրստական բաժնում կ'ընդունէ՝ ա-
ռանց գրական ուղղութիւնների հարց յարուցանելու
այնպիսի գրութեան, որոնք բաւարարութիւն են տա-
լիս խմբագրութեան պահանջներին և որոնք չեն պա-
րունակում իրանց մէջ մեր ամսագրի ուղղութեան և
աշխարհայեցողութեան հակառակ տենդենցիա կամ ոգի:

«Մուրճ» ամսագրի այս տարուայ յունուար և փետ-
րուար ամիսների համարները սպառուած են, ուստի
նոր բաժանորդներին այսուհետեւ ուղարկուելու են հա-
մարները միայն մարտից սկսած: Մեր խմբագրութիւնը
երկրորդ հրատարակութեամբ լոյս կ'ընծայի «Մուրճի»
յունուարի եւ փետրուարի համարները միայն այն դէպ-
քում, երբ այդ համարները ցանկացող արեւկան բաժա-
նորդների թիւը կը հասնի 100-ի:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Կոնսսանցյա. Բ. Ը. Վ.—30 ֆր. ստացանք: Համարները ուղարկուած են: **Քուրէե.** Ընթերցարան հաշոց.—Բաժանորդագիրն 30 ֆրանկ է. ուղարկուած են №№ 1—4:

Փիլիպպոպոլ. Գրասիրաց Եղբայրական Վարչութեան.— Պիտի ուղարկէք ամբողջ բաժանորդագիրն:

Շուշի. Ա. Զ. Նիւթի շատութեան պատճառով դեռ ժամանակ չենք ունեցել ծանոթանալ:

Մոսկուա. Պ. Ս. Շահազիզեան.—Ձեր 10 ռուբլով ուղարկում է «Մուրճ» Նշտարակի գիտական դատարանին:

Կրեմա. Ա.—Դօ.—Ստացուել են: Սնյարմար են:

«Մուրճի» հին բաժանորդներին.—1900 թուի բաժանորդները թո՛ղ բարեհաճեն շուտով լրացնել բաժանորդագրի մնացորդը, որպէս զի խմբագրութիւնը վաղօրօք իմանայ իր տարեկան բաժանորդների թիւը:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» ապրիլի համարում մտել են ի միջի այլոց հետևեալ վրիպակները.

երեսող	սպաւած է	պէտք է լինի
102 28	Նրանք ունենում էին	Նրանք երբ ունենում էին
107 38	գիրաւի պատմութիւններով	սխալի պատմութիւններով
109 27	զսպելու	զսպուելու
112 20	են ենթարկում	է ենթարկում
119 17	երկուան էր	երկուան էլ

Հրատարակիչ Եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻՆՆԻԿԵԱՆ

L n j u s h u a l

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

աշխատութիւնը:

Գրքի երեսը զարգարուած է նկարիչ Վ. Սուրէնեանցի նկարով:

Գինն է 50 ԿՈՊԷԿ

Դիմել հեղինակին՝ Москва, Садовая-Каретная, меб.
ком. Носальскаго, Ал. Цатуряну. 1—3«Մուրճի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և
«Գուտտենբերգ» գրավաճառանոցներում ծախուում է
նոգէ էջէգաւալի՝**„Մ Ա Ր Ի Ա Ն Ա“**

դրաման, թարգ. Արսէն Կրասիլնիկեանի:

Գինն է 1 ՌՈՒԲԼԻ

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է
«Եղբայրական օգնութեան»:

1—3

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՆՈՑՈՒՄ

վաճառում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,
ատլասներ և այլ տեսակ հրատարակութիւններ: Վնեւտիկում,
Վիեննայում, Կ. Պոլսում և Զմիւռնիայում տպուած գրքերից
ցանկացողներին կարող ենք ուղարկել: Գումարով գնողներին
գիջումն կը լինի:Գրավաճառանոցը ընդունում է վաճառելու համար
գրքեր:Գրավաճառանոցի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝
Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Галусту
Галустяну. 3—1

իշխող զերը մեր դարում. — Քաղաքակրթուած գիշատող-
ներ. — Տնտեսական տաղնայի բնորոշ պատկերը. — Ար-
դինազործական տաղնայ հարաւային Ռուսաստանում.
— Մոսկրա-Վըշաքմի երկաթուղային գիծը. — Նոր փո-
խառութիւն. — Նաւթադործական կրիդիա ճաղում. —
Տուժող դասակարգ. — Գաւառներ թմրութեան պատ-
ճառներից մէկը. — Բանտորական անկարգութիւններ
Թիֆլիսում. — Անկարգութիւններ Օբուխովի պողոտա-
ձուլական զործարանում. — Բարձրագոյն հրովարտակ
Պետական խորհրդին, **Լ. ԼԱՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ** 284

18. **ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՔ.** Տնտեսական տարի. երաշտ, ժան-
տախտ, մորեխ. — Ախալքալաքի դաւառ. օգնութիւն
Ֆլատտոտղներին, հասարակական նուիրատուութիւններ,
պետական նպատ. — Ախալցխայի պաշարը. ձխական-
ների կալացրած վճիռները. — Կաղզուանի պաշարի
վերջը. — Շուշու քաղաքագլխի ընտրութիւնը. դարձեալ
լնտելիդենցիա և գաւառները. — «Պէպօի» երեսնամեա-
կը գաւառներում, **Ս.** 197

19. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.** Դիպլոմատիան իրրև եւրոպական
կեանքի բացասական կողմերի արտայայտութիւն. — Եւ-
րոպական ազդերի ներքին կեանքի բնորոշող հոսան-
քը. — Արտաքին հանգամանքների մոցրած խանդա-
րումը անգլիական ներքին կեանքի մէջ. — Հիկս-Բիչի և
Բրօդրիկի ձրադիրների ընդունելութիւնը համայնքնե-
րի ժողովում. — Ազատական կուսակցութեան ճնշում
դրութիւնը. — Աստրալիական պարլամենտի ծնունդը. —
Արտաքին հանգամանքների ճնշումից ազատ անգլոսակ-
սոնական զաղութներ, **Լ. Ս.** 304

20. **ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** 307

21. **ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ** 314

22. **ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.** 318

23. **ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ** 319

24. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** 320

25. **ՅԱԻՆՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՎԷԱԼ Լ. Տօլստօի, թարգմ.**

Ց. Յովհաննիսեանի 113—128

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ:

«ՄՈՒՐՃ» ամսագիրն ունենալու է հետևեալ բաժինները.

1. Վէպեր, պատմություններ, դրամա. 2. Բանաստեղծություններ. 3. Գրական-պատմական և հրապարակախոսական լուրսածներ. 4. Քննադատություն և Մատենախոսություն. 5. Նորություններ ռուսաց և արտասահմանեան գրականությունից. 6. Գիտություն, գեղարվեստի և տեխնիկայի աշխարհից. 7. Ցընտեսական հարցեր. 8. Ներքին տնտեսություն. 9. Դատական կեանք. 10. Արտաքին տնտեսություն. 11. Նամակներ արտասահմանից. 12. Պարբերական հրատարակություններ. 13. Յայտարարություններ ամեն լեզուով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 ար. Արաստահման՝ 30 ֆրանկ.

կէս տարին 6 " 16 "

1 ամսան 1 " 3 "

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը (Մրհանեան հրապարակ, տ. Նարայեանի):

Կայսրութեան այլ ձեղերից պէտք է գիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Արաստահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

Շանթութիւն. Ով դժուարանում է տարեկան բաժանարարներ (10 ա.) վճարել միանգամ, կարող է տալ մաս-մաս (սկզբում՝ 5 ա., մարտի 1-ին 3 ա. և մայիսի 1-ին 2 ա.):

Հասցեն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ զեկեղելու համար պէտք է վճարել.

Մի երես ընող յայտարարութեան համար . 15 ա.

1/2 " " " " . 8 "

1/4 " " " " . 4 "

ԱՊԱՌԻԼԿ ԿԱՄ ԶՐԻ ոչ ոքի չէ ուղարկում «Մուրճ»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրություններ խնդրում է լուրսածագիրներից՝ գրել պարզ և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Զընդունուած մեծ լուրսածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր լուրսածներն ու բանաստեղծությունները չեն վերադարձնում: Ձեռագիրը լիստ ստանալու համար պէտք է ուղարկել անապարհամատ:

3. Գրողաձեռքերի վարձատրութեան համար որոշում է Խմբագրությունը:

4. Խմբագրությունը իրան է վերապահում ուղարկուած լուրսածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը: